

ՄԱՌԻՆՍԿԱՆԻՅԵ

ԿԱՌԱՅՈՒՄ

ԿՈՐԾԱՆԷ՛ ԱՅՆ,
ԻՆՉ ՈՐ ՔՈՒ ՈՒԺԸ ԿԸ ԽԼԷ

ԺՈՆ
ՊԻՎԻՐ

Թանկագի՛ն Ընկեր,

Այս գիրքը նուէր է ձեզի, եւ ես կ'աղօթեմ, որ այս էջերուն մէջ գրուած ուղերձը յաւիտեան փոխէ ձեր կեանքը:

Ես կը հաւատամ, որ մենք կ'ապրինք վերջին օրերուն մէջ՝ աշխարհի մը մէջ, ուր գոյութիւն ունի իրական հոգեւոր քրիստոնաքար, որ ամէն օր կը փորձէ խլել մեր՝ քրիստոնեաներու ուժը:

Անթիւ քրիստոնեաներ կը հիասթափին եւ ուժասպառ կը դառնան՝ կրկին ու կրկին փորձելով ազատիլ այն ամենէն, ինչ որ ետ կը պահէ զիրենք: Աստուած չէ ծրագրած, որ կեանքը այդպիսին ըլլայ: Ան նախատեսած է, որ դուք յաղթող ըլլաք ձեր կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ, եւ աւելին՝ Ան կու տայ ձեզի զօրութիւն, որ յաղթահարէք այն ամենը, ինչ որ կը հակառակի ձեզի:

Ես ձեր հետ պիտի բաժնեկցիմ իմ անձնական պատմութիւնով այն ընթացքին մասին, որ ճեղքում բերաւ իմ կեանքին մէջ, եւ ցոյց պիտի տամ որոշ բանալի աստուածաշնչեան ճշմարտութիւններ, որոնք յաւիտեան փոխեցին իմ կեանքը: Դուք նոյնպէս կրնաք մտերիմ եւ սերտ յարաբերութիւններ ունենալ Աստուծոյ հետ: Դուք կրնաք ունենալ կենդանի եւ հզօր հաւատք, որ ազդեցութիւն կը ձգէ ձեզ շրջապատող մարդոց վրայ: Բայց առաջին կարգին պէտք է յաղթահարէք ձեր հոգեւոր քրիստոնաքարը:

Այս ուղերձով եւ CloudLibrary.org կայքին մէջ գտնուող այլ առցանց նիւթերով դուք կրնաք ազատօրէն բաժնեկցիլ անոնց հետ, որոնց կը ճանչնաք:

Ձեր եղբայրը Քրիստոսի մէջ՝



Շոն Դիվիո

JohnBevere@ymail.com



MESSENGER
INTERNATIONAL
MessengerInternational.org

සුඛකාමසුඛයා

පාඨමාලාව

«Ճոն Պիվիրը գործնական մօտեցում ունեցող մերօրեայ մարգարե է: Ան կը սորվեցնէ յաղթահարել մեղքը մեզ գօրացնող շնորհքով: Իր նոր գիրքին մէջ, որ կը կոչուի «Կործանել քրիստոնաքարը», ան ցոյց կու տայ, որ բոլորիս կեանքին մէջ կայ քրիստոնաքար, որ կարելի է միայն Աստուծոյ սիրով յաղթահարել: Գոհութի՛ւն Աստուծոյ՝ այս յայտնութիւնը ճոնին տալու համար»:

ՌՈՊԵՐԹ ՄՈՐԻՍ

«Կէյթուէյ Չըրչ» եկեղեցւոյ հիմնադիր, ասագ հովիւ (Տալլաս-Ֆորթ Ուորթ, Թեքսաս)

«Օրհնուած կեանք», «Աստուած, Որուն ես չէի ճանչնար», «Ճշմարտապէս ազատ» եւ «Յաճախականութիւն» գիրքերու հանրաճանաչ հեղինակ

«Այս ուղերձը հրատապ կոչ է Քրիստոսի մարմինին՝ այլեւս չբաւարարուիլ քիչով, այլ ձգտիլ այն ամէնուն, ինչ որ Աստուած պատրաստած է իրենց համար: Ես կը հաւատամ, որ ճոնին Աստուածաշնչեան խորաթափանցութիւնը եւ անոր նպատակը, որն է՝ օգնել հաւատացեալներուն ճշմարտապէս ապրելու Աստուծոյ համար, պիտի փոխեն այն մարդոց, որոնք ի սրտէ կ'ընդունին այս ուղերձը»:

ՃՈՅՍ ՄԱՅԵՐ

Աստուածաշունչի ուսուցիչ եւ հանրաճանաչ հեղինակ

«Կործանել քրիստոնաքարը» գիրքին մէջ Ճոն Պիվիրը պարզօրէն ցոյց կու տայ այն ամրութիւնները, որոնք կրնան խոչընդոտել Քրիստոսի մէջ մեր ներուժը ամբողջութեամբ իրագործելուն: Այս գիրքը ազդեցիկ եւ անմիջական է եւ պիտի օգնէ ընթերցողներուն երես առ երես բախելու իրենց կեանքի քրիստոնաքարին»:

ՃԵՆԹԵՉԷՆ ՖՐԱՆՔԼԻՆ

«Ֆրի Չեփըլ» եկեղեցւոյ ասագ հովիւ

Հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նիւ Եորք Թայմզ» ամսագիրին

«Ճոն Պիվիրի յայտնութիւնները Աստուածաշնչեան սկզբունքներու մասին, անոր ուսմունքները եւ սէրը մարդոց հանդէպ տասնամեակներ շարունակ կառուցած են թէ՛ առանձին անհատներու կեանքերը, թէ՛ Աստուծոյ Թագաւորութիւնը: Անոր գիրքերը կը հասնին աշխարհի բոլոր ծայրերը, եւ անոր ազդեցութիւնը չափազանց մեծ է: Ես շնորհակալ եմ անոր ընկերութեան համար, անոր ծառայութեան համար եւ այն տեւական հնազանդութեան համար, որմով գրի կ'առնէ իր ուղերձները»:

ՊՐԱՅԱՆ ՀԻՄՅԹՈՆ

«Հիլտնկ Չըրչ» համաշխարհային եկեղեցւոյ հիմնադիր եւ աւագ հովիւ

«Համոզիչ: Հոգիով լեցուն: Ազդեցիկ: «Կործանել քրիստոնաքարը» գիրքը կը քանդէ արդէն սովորական դարձած մեղքի դանդաղօրէն սեղմուող օղակը՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ բորբոքած աւիւնով: Համոզուած եմ, որ այս գիրքը պիտի օգնէ առաջնորդելու սերունդ մը, որուն համար ճշմարտութիւնը յարաբերական է, իսկ հնազանդութիւնը՝ չլսուած բան, դէպի բերկրանքը այն Աստուծոմով, Որ կը ձգտի տալ մեզի միայն լաւագոյնը: Եւ Անոր լաւագոյնը մեզի համար Անոր մէջ ազատութիւն ունենալը եւ Անոր անձնատուր ըլլալն է»:

ԼՈՒԻ ԿԻԿԼԻՈՅ

«Փեշըն Սիթի Չըրչ» եկեղեցւոյ հովիւ, «Փեշըն» համաժողովներու հիմնադիր

«Գողիաթը պէտք է պարտուի» գիրքի հեղինակ

Որքան ալ Ճոն Պիվիրի գիրքերը հրաշալի են, այս գիրքը շատերուն անակնկալի պիտի բերէ: Ոչ թէ այն պատճառով, որ ան շեղած է կարեւորագոյն խնդիրներուն անդրադառնալու իր եզակի կարողութենէն: Ընդհակառակը՝ այն շնորհքը, որմով ան խորապէս կը բացայայտէ ճշմարտութիւնը իր գիրքերուն մէջ, ա՛լ աւելի արտայայտիչ դարձած է: Շատերը անակնկալի պիտի գան, քանի որ ան կը բացայայտէ այնպիսի բան մը, որ անմիջապէս մեր կողքին է, սակայն բոլորովին աննկատ է մեզի համար: Ըսել, որ այս գիրքը անհրաժեշտ է մեզի, կը նշանակէ՝ ոչինչ ըսել: «Կործանել քրիստոնաքարը» գիրքը պէտք է ըլլայ այս օրերուն ապրող հաւատացեալներու պարտադիր ընթերցանութեան ցանկին մէջ:

ՊԻԼ ԾՈՆՍԸՆ

«Բեթէլ Չըրչ» եկեղեցի, Ռետինկ, Գալիֆորնիա

«Աստուած բարի է» գիրքի հեղինակ

ԵՍՆԻՆՆԱՆՍԵՎԵՐ ԿՈՄՊՈՍԻՏ

「ԿՈՐԾԱՆԷ՛ ԱՅՆ,
ԻՆՉ ՈՐ ՔՈՒ ՈՒԺԸ ԿԸ ԽԼԷ」

ՃՈՆ
ՊԻՎԻՐ

Killing Kryptonite by John Bevere, Western Armenian

© 2019 Messenger International

www.MessengerInternational.org

Originally published in English as Killing Kryptonite

Additional resources in Western Armenian by John Bevere are available for free download at: www.CloudLibrary.org

To contact the author: JohnBevere@ymail.com

«Կործանել քրիստոնաքարը», Ճոն Պիվիր, արեւմտահայերէնով

© 2019 Messenger International

www.MessengerInternational.org

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէնով,

«Killing Kryptonite» վերնագիրով:

Ճոն Պիվիրի այլ հեղինակային նիւթեր արեւմտահայերէնով կրնաք անվճար ներբեռնել հետեւեալ կայքէջէն. www.CloudLibrary.org

Հեղինակին հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Այս գիրքը կը նուիրեն
«Մեսինճըր ինթերնեշնլ»-ի խումբի անդամներուն:

Աստուծոյ շնորհքով, միասին Յիսուս Քրիստոսի
Աւետարանը հասցուցած ենք միլիոնաւոր
մարդոց: Ասիկա անկարելի պիտի ըլլար առանց
ծեր հաւատքին, տաղանդներուն, անձնուրաց
նուիրատուութիւններուն եւ մեծ աշխատանքին:

Լիզան եւ ես կը պատուենք ձեզ, հաճոյքով
կ'աշխատինք ձեզի հետ եւ կը սպասենք այն
Օրուան, երբ Յիսուս յաւիտեան պիտի վարձատրէ
ծեր հաւատարիմ ծառայութիւնը:

*«Քանզի ո՞վ է մեր յոյսը կամ ուրախութիւնը կամ
մեր պարծանքին պսակը, եթէ ոչ դուք՝ մեր Տիրոջ
Յիսուս Քրիստոսին առջեւ, Անոր գալու ժամանակ:
Որովհետեւ դուք էք մեր փառքը եւ ուրախութիւնը»:*
Ա. Թեսաղոնիկեցիս 2. 19,20

Շնորհակալ եմ ձեզի, 2019 թուականի «Մեսինճըր»-ի խումբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածություն.....	13
-------------------	----

ԲԱԺԻՆ 1. Մէկի զօրութիւնը

1. Հարցում, որմէ կը խուսափին.....	19
2. Ի՞նչ է քրիպտոնաքարը	29
3. Մէկ	39
4. Վարակիչ քրիպտոնաքար	47
5. Փոփոխութիւն բերէ՛ք	57
6. Մեր դրդապատճառը	67
7. Մէկի զօրութիւնը	77

ԲԱԺԻՆ 2. Գտնել քրիպտոնաքարը

8. Ամուսնական ուխտ	89
9. Շնութիւն Աստուծոյ դէմ	97
10. Ի՞նչ պահուած է կռապաշտութեան ետեւը	107
11. Հաւատացեալի կռապաշտութիւնը	119
12. Թեթեւցնել ճնշումը	129
13. Քրիպտոնաքարը.....	137
14. Մեղք.....	145

ԲԱԺԻՆ 3. Քրիստոնաքարի ազդեցությունը

15. Մեղքի ուժը (Մաս 1)	155
16. Մեղքի ուժը (Մաս 2)	165
17. Մոլորուած	175
18. Կեղծուած Յիսուս	183
19. Սկզբնակէտը	193
20. Ապաշխարութիւն	205
21. Երեք թագաւորները	217

ԲԱԺԻՆ 4. Կործանել քրիստոնաքարը

22. Առերեսում	229
23. Հանդուրժողականութիւն.....	239
24. Սէր եւ ճշմարտութիւն.....	249
25. Կործանել քրիստոնաքարը	259
26. Մեղք, որ մեղք չէ	269
27. Խնճոյքի դուռը	279
28. Բարձրացէ՛ք	289
Հարցումներ քննարկումի համար.....	299
Յաւելուած	309

ԱՅՍ ԳԻՐՔԻ ՄԱՍԻՆ

«Կործանել քրիպտոնաքարը» գիրքը կարելի է կարդալ սկիզբէն մինչեւ վերջ, ինչպէս որեւէ գիրք: Այնուամենայնիւ, այն նոյնպէս բաժնած եմ կարճ գլուխներու, որոնց ընթերցանութեան համար կը պահանջուի ոչ աւելի, քան տասէն տասնհինգ վայրկեան: Իւրաքանչիւր գլուխի մէջ դուք պիտի գտնէք «Գործնական քայլ» կոչուող բաժին, որ պիտի օգնէ ձեզի կիրառելու ատոր մէջ ներկայացուած ճշմարտութիւնները: Կը խնդրեմ, մի՛ կորսնցնէք գործնական քայլերը, քանի որ ատոնք այս գիրքի շատ կարելոր բաժինը կը կազմեն: Ասիկա է պատճառը, որ կ'առաջարկեմ ձեզի կարդալու օրական ընդամենը մէկ գլուխ: Այս կերպով դուք կրնաք ընել անհրաժեշտ քայլը, մինչեւ յաջորդ գլուխին անցնիլը:

Գիրքի վերջաւորութեան նոյնպէս պիտի գտնէք քննարկման հարցումներ անոնց համար, որոնք «Կործանել քրիպտոնաքարը» գիրքը պզտիկ խումբերու մէջ պիտի ուսումնասիրեն:

Եթէ դուք այս գիրքը կարդաք որպէս «Կործանել քրիպտոնաքարը» դաւընթացքի մաս, ես կ'առաջարկեմ ձեր պզտիկ խումբին մէջ դիտել կամ լսել այն վիտիոյ կամ օտիոյ դասերը, որոնք դուք կրնաք գտնել գիրքի վերջաւորութեան կցուած DVD սկաւառակին մէջ կամ CloudLibrary.org կայքին մէջ, նաեւ պատասխանել գիրքի վերջաւորութեան գտնուող քննարկման հարցումներուն: Այնուհետեւ խնդրեցէ՛ք ձեր պզտիկ խումբի իւրաքանչիւր անդամէն կարդալ գիրքի համապատասխան գլուխները մինչեւ ձեր յաջորդ հանդիպումը:

Այս ամէնը ձեզի՛ համար է:



Ճոն

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Թերեւս զարմանաք, բայց ես շատ անգամներ ուզած եմ անաւարտ ձգել այս գիրքը, քան իմ հեղինակային գիրքերէն որեւէ մէկը, եւ շուտով կը բացատրեմ, թէ ինչու: Իսկ մինչ այդ, ի՞նչ կապ ունի «Կործանել քրիստոնաքարը» վերնագիրով գիրքը Քրիստոսի հետեւորդներուն հետ: Թոյլ տուէք կարճ բացատրել:

Շատերս ծանօթ ենք «քրիստոնաքար» բառին Սուվորիերոսի մասին յօրինուած պատմութենէն: Այս պատմութիւնը, որ փաստօրէն դարձաւ Ամերիկայի ժողովրդական հեքիաթը, գրուած էր դպրոցական ընկերներ ճերի Սիկըլի եւ Ճօ Շուսթըրի կողմէն, եւ առաջին անգամ հրատարկուած էր ծաղրաշարի (զուարճանկարի, քոմիկսի) տեսքով 1938 թուականի Յունիսին: Պատմութիւններու շարքը գերուժեր ունեցող բարեգործ սուվորիերոսի մասին կատարեալ հակամիջոց էր նացիական բռնապետութեան ժամանակաշրջանին: Սուվորիերոսի պատմութիւնը արագօրէն մեծ համբաւ ձեռք ձգեց, եւ ի վերջոյ պատմուեցաւ ոչ միայն տպագիր հրատարակութիւններու միջոցով, այլեւ ռատիոյով, հեռուստատեսութեամբ եւ ֆիլմերու միջոցով, որոնք մեծ յաջողութիւն ունեցան:

Կարճ ժամանակ յետոյ այդ պատմութիւնները քիչ մը ծանծրալի դարձան. պատճառը անիկա էր, որ Սուվորիերոսը անխոցելի էր: Այնպէս որ, 1940-ական թուականներուն հեղինակները յօրինեցին յայտնի դարձած քրիստոնաքարը՝ նիւթ մը Սուվորիերոսի մոլորակէն, որ կրնար չէզոքացնել անոր գերուժերը: Քրիստոնաքարի ազդեցութեան տակ Սուվորիերոսը կը տկարանար՝ դառնալով սովորական մարդու մը պէս:

Մեր՝ քրիստոնեաներուս կեանքին մէջ գոյութիւն ունի «քրիստոնաքար», որ կը չէզոքացնէ այն զօրութիւնը եւ բնաւորութիւնը, որոնք Աստուած տուած է մեզի: Ի՞նչ է այն: Ինչպէ՞ս բացայայտել այն: Ինչպէ՞ս այն կ'ազդէ մեր վրայ՝ թէ՛ անհատապէս, թէ՛ հաւաքականօրէն: Որքանով այն կը խոչընդոտէ մեր արդիւնաւէտութեան եւ կորսուածներուն հասնելու կարողութեան: Ինչէ՞ն մենք կը գրկուինք աստոր պատճառով: Ինչո՞ւ այն այդքան դիւրին կը քօղարկուի: Ահա քանի մը հատ այն հարցումներէն, որոնց կը պատասխանէ այս գիրքը:

Ասիկա քսաներորդ գիրքն է, որ գրած եմ Սուրբ Հոգիին օգնութեամբ եւ առաջնորդութեամբ: Ինչպէս արդէն նշեցի, հինգ կամ վեց անգամ ուզած եմ անաւարտ ձգել այս գիրքը: Պատճառը անիկա էր, որ այն գրելու ըն-

թացքին դեմ առ դեմ կը բախտի իմ կեանքի մէջ առկայ այնպիսի խնդիրներու, որոնք չէի կրնար անտեսել: Ես պէտք է հարցնէի ինքզինքս. «Արդեօ՞ք ես կը բաւարարուիմ աւելի ցած կեանքով, քան այն, ինչչին համար ստեղծուած եմ: Արդեօ՞ք մենք՝ որպէս եկեղեցի, ճշմարտապէս կը վերապահինք Աստուծոյ ներկայութիւնը եւ գորութիւնը, որոնցմով կրնանք փոխել մեր բնակավայրերը»: Իրականութեան մէջ, քանի մը անգամ ես նոյնիսկ արթնցած եմ այսպիսի բառերով. «Հա՛յր, համոզուած չեմ, որ այս գիրքը հաճելի է ինձի համար: Ես չեմ ուզեր շարունակել այն»:

Եւ ամէն անգամ ես խիստ «ոչ» կը զգայի Սուրբ Հոգիէն: Երբ տեղի ունեցաւ վերջին նման դէպքը, Ան վստահեցուց ինձի, որ այս ուղերձը անսահման կարելոր յայտնութիւններ պիտի տայ, որոնց շնորհիւ աշխարհով մէկ պիտի կառուցուին առանձին մարդիկ, ընտանիքներ եւ եկեղեցիներ, եւ որ այս գիրքի սկզբունքները կրնան ամբողջ քաղաքներ փոխել:

Այդ խոստումէն յետոյ ես հաւատքով շարունակեցի գրել: Հասնելով այս գիրքի եզրափակիչ բաժինին՝ վերջին եօթը գլուխներուն, ինձի համար պարզ դարձաւ, թէ որքան օգտաւետ է այն: Ես ոչ միայն հասկցայ, թէ որքան իմաստութիւն կայ այս ուղերձին մէջ, այլեւ տեսայ, թէ որքան հրատապ է այն: Այսօր ես կը համարեմ, որ ասիկա ամենակարելոր ուղերձներէն մէկն է, որ լոյս տեսած է իմ հեղինակութեամբ:

Այժմ, գիտնալով, որ այս ուղերձին օգտաւետութեան մասին գրուած է գիրքի վերջաւորութեան, թերեւս դուք գայթակղութիւն ունենաք ընթերցելու անմիջապէս վերջին բաժինէն: Առիթ տուէք զգուշացնելու ձեզ, որ չընէք ատիկա: Եթէ դուք կորսնցնէք առաջին երեք բաժինները, չորրորդ բաժինի ազդեցութիւնը զգալիօրէն թոյլ պիտի ըլլայ: Պատկերացուցէք, որ սինեմա կը մտնէք, երբ ֆիլմի աւարտին մնացած է ընդամենը քսան վայրկեան: Եզրափակիչ տեսարաններու ազդեցութիւնը ձեզի համար կ'ըլլայ շատ աւելի թոյլ, քան՝ եթէ ֆիլմը սկիզբէն դիտէիք: Անոնք, որոնք նստած էին սինեման ֆիլմի սկիզբէն, կու լան, կը պոռան կամ կ'որախանան: Իսկ ձեր քով հարց մը կը ծագի՝ կ'արժե՞ր ընդհանրապէս դիտել այդ ֆիլմը:

Այս գիրքը բաղկացած է քսանութ գլուխներէ՝ չորս բաժիններու մէջ գետեղուած, որոնցմէ ամէն մէկը կը պարունակէ եօթը գլուխ: Այս ձեւով բաժնելով՝ փափաքած եմ օգնել զբաղած ընթերցողներուն: Դուք կրնաք ամէն օր տասնէն տասնհինգ վայրկեան տրամադրել եւ կարդալ մէկական գլուխ չորս շաբթուան ընթացքին, կամ՝ կրնաք շաբաթական մէկ գլուխ կարդալ եւ գիրքը աւարտել մօտաւորապէս վեց ամսուան մէջ: Դուք կրնաք կարդալ նաեւ ձեր նախընտրած ձեւով: Մեր նպատակն է՝ յարմարցնել այս ուղերձը ձեր ընթերցանութեան ժամացանկին:

Ի վերջոյ, այս ուղերձը պէտք է դիտարկել որպէս ընթացք, որ կը պաշտպանէ ձեզ քրիպտոնաքարէն եւ կը սորվեցնէ ազդեցութիւն ձգել

ծեզ շրջապատող մարդոց վրայ: Մինչեւ սկսիլը, աղօթենք եւ խնդրենք Սուրբ Հոգիէն, որ բանայ մեր աչքերը, որպէսզի տեսնենք երկնային իմաստութիւնը, որ զօրութիւն կու տայ մեզի՝ այս երկրին վրայ մեր կոչումը կատարելու համար:

«Հայր, Յիսուսի անունով, բացիմ աչքերը, ականջները եւ սիրտը, որպէսզի տեսնեմ, լսեմ եւ հասկնամ Քու կամքը իմ կեանքին մէջ: Սո՛ւրբ Հոգի, սորվեցո՛ւր ինձի Յիսուս Քրիստոսի ճանապարհները այս ուղերձը կարդալու ընթացքին: Ես կը նայիմ Քեզի՝ որպէս իմ Ուսուցիչ: Խօսի՛ր հետս այս գիրքի ամէն մէկ նախադասութեան ընդմէջէն: Եւ թող, որ իմ կեանքը յաւիտեան փոխուի: Ամէ՛ն»:

ՄԷԿԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

「ԲԱԺԻՆ ՄԷԿ」

ՀԱՐՑՈՒՄ, ՈՐՄԷ ԿԸ ԽՈՒՍԱՓԻՆ

Յատուկ նշում հեղինակէն.

Սիրելի՛ ընթերցող, եթէ տակաւին չէք ընթերցած «Ներածութիւն» բաժինը, կ'առաջարկեմ ձեզի անպայման ընել ատիկա: Այն պիտի օգնէ նախապատրաստուիլ այս ուղերձին: Հաճելի ընթացք մը կը մաղթեմ:

«Կործանել քրիպտոնաքա՞րը»: Այս գիրքը Սուփըրհերոսի մասի՞ն է: Ո՛չ, բայց անոր պատմութեան եւ մեր հաւատքի կեանքին միջեւ ապշեցուցիչ զուգահեռներ կան:

Սուփըրհերոսը այս աշխարհէն չէ. Աստուծոյ զաւակները այս աշխարհէն չեն:

Ան ունի գերբնական ուժ, որ յատուկ չէ սովորական մարդոց. մենք ունինք գերբնական զօրութիւն, որմէ զուրկ են այս աշխարհի մարդիկ:

Ան կը պայքարի չարին դէմ. մենք կը պայքարինք չարին դէմ:

Ան կը պաշտպանէ ճնշուածները եւ կ'ազատէ զանոնք չարագործներէն. մենք կը հոգանք տկարներու մասին եւ ազատ կ'արծակենք կապուածները:

Ան ուժ կը ստանայ արեւէն. մենք ուժ կը ստանանք Աստուծոյ Որդիէն:

Գոյութիւն ունի միայն մէկ բան, որ կրնայ կեցնել Սուփըրհերոսը. քրիպտոնաքարը՝ յօրինուած ռատիոյաքթիւ նիւթը, որ Սուփըրհերոսի մոլորակէն է: Նմանապէս, գոյութիւն ունի «քրիպտոնաքար», որ յառաջացած է մեր հեռաւոր բնակավայրին մէջ եւ կրնայ անզօր դարձնել Աստուծոյ զաւակները: Այո՛, անիկա չէ յառաջացած այս երկրին մէջ, այլ կազմուած է

հոն, ուր մեր երկնային տունն է: Քրիստոնաքարը ոչ միայն կը չէզոքացնէր Սուփըրհերոսին գերութերը, այլեւ սովորական մարդէն աւելի թոյլ կը դարձնէր զինք: Մեր քրիստոնաքարը նոյնը կ'ընէ:

Ո՞րն է մեր քրիստոնաքարը: Մինչեւ այն բացայայտելը, ես պէտք է նախապատրաստեմ ձեզ: Քրիստոնաքարի մեծ առաւելութիւնը Սուփըրհերոսի հանդէպ այն էր, որ այդ նիւթը դիւրին չէր ճանչցուեր: Ասիկա կը նշանակէ, որ ան կրնար ենթարկուիլ քրիստոնաքարի ազդեցութեան՝ նախքան այն յայտնաբերելը: Նոյն ձեւով, հաւատացեալի քրիստոնաքարը կը տկարացնէ թէ՛ անհատները, թէ՛ Քրիստոսի մարմինը, եւ շատերուն համար անիկա տակաւին ճանաչելի չէ: Այս գիրքին նպատակն է՝ յայտնաբերել քրիստոնաքարը, ցոյց տալ, թէ ինչպէս կարելի է կործանել քրիստոնաքարը եւ հեռացնել ատոր ազդեցութիւնը մեզմէ՝ թէ՛ անհատական, թէ՛ հաւաքական առումով: Այնպէս որ, սկսինք հետեւեալ հարցումէն:

Մեծագոյն ցանկութիւնը

Ո՞րն է մեր մեծագոյն ցանկութիւնը: Ես կ'ըսեմ «մեր», քանի որ, եթէ անկեղծ ըլլանք, իւրաքանչիւրս կը ձգտի միեւնոյն բաներուն: Մենք կ'ուզենք ըլլալ յաջողակ, ըլլալ լաւագոյնը մեր բնագաւառին մէջ, ըլլալ յայտնի, ունենալ երջանիկ ամուսնութիւն եւ հրաշալի ընկերներ, ապրիլ ծաղկուն բնակավայրի մէջ, ըլլալ քաջառողջ եւ ունենալ բաւականաչափ միջոցներ՝ ընելու համար այն, ինչ որ մեր մտքէն կ'անցնի:

Բոլոր նշուած նպատակները գրաւիչ են, եւ ատոնց մեծ մասը նոյնիսկ անհրաժեշտ է, բայց արդեօ՞ք մենք ամէնէն շատ ճիշդ այդ բաները կը ցանկանք: Մի՞թէ մենք չենք գիտեր այնպիսի մարդիկ, որ այդ ամէնը ունին, սակայն դատարկութիւն կը զգան: Մի՞թէ մենք պատմութիւններ չենք լսեր հոլիուտեան դերասաններու, խոշոր ընկերութիւններու գործադիր տնօրէններու, արհեստավարժ մարզիկներու, պետական պաշտօնեաներու եւ այլ մարդոց մասին, որոնք հասած են այն բանին, ինչ որ հասարակութիւնը կը համարէ յաջողութեան գագաթնակէտը այս կեանքին մէջ, սակայն անոնց կը թուայ, թէ իրենք ինչ որ բան է մը զուրկ են: Իրենց դատարկութեան պատճառով, ոմանք կը սկսին թմրանիւթեր կամ խմիչք օգտագործել, կը զբաղին տարաշխարհիկ հանգիստով կամ սիրավէպեր կը սկսին: Միւսները կը դիմեն կրօնին, արդի հաւատալիքներուն կամ խորհրդապաշտութեան (occultism)՝ յուսալով լրացնել այն դատարկութիւնը, որ կը կրծոտէ իրենց ներսը:

Եթէ անկեղծ ըլլանք, մեր սրտին խորքէն բոլորս ալ գիտենք, որ աւե-

լին կայ: Ճշմարիտ բաւականութիւնը, որուն կը ձգտի իւրաքանչիւրը՝ թէ՛ կին, թէ՛ տղամարդ, կարելի է գտնել՝ միայն ունենալով մտերիմ յարաբերութիւններ մեր Արարիչին հետ: Անկախ այն բանէն, թէ ինչ կարծիք ունիք Աստուծոյ մասին՝ ձեր սիրտը խորապէս կը ձգտի Անոր: Այն գոհունակութիւնը եւ բաւականութիւնը, որուն մարդիկ կը ձգտին, հնարաւոր է գտնել միայն կրկին միանալով մեր Արարիչին:

Ճշմարտութիւնը այն է, որ Աստուած «դրած է յաւիտենութիւնը մարդու սրտին մէջ» (Ժողովող 3.11, NLT): Եթէ խաբէութիւնը չ'իշխեր մեր սրտերուն մէջ, մենք բնագործն կը ձգտինք «յաւիտենութեան Թագաւորին» (տե՛ս Ա. Տիմոթէոս 1.17): Աստուծոյ Խօսքը կ'ըսէ իւրաքանչիւր մարդու մասին.

«Անոնք գիտեն ճշմարտութիւնը Աստուծոյ մասին, քանի որ Ան ակնյայտ դարձուցած է այն անոնց համար... Այն ամէնուն միջոցով, ինչ որ Աստուած ստեղծած է, անոնք կրնան պարզօրէն տեսնել Անոր անտեսանելի յատկանիշները՝ Անոր յաւիտենական զօրութիւնը եւ Աստուածային բնութիւնը» (Հռովմայեցիս 1.19,20, NLT):

Աստուած ոչ ոքի համար անյայտ է: Եթէ մարդիկ բոլորովին անկեղծ ըլլան, անոնք պիտի խոստովանին, որ իրենց կեանքէն ինչ որ պահ մը Աստուծոյ ճանչնալու խորունկ ձգտում ունեցած են: Բոլորս ալ բնագործն գիտենք, որ Ան ամենագէտ է, ամենակարող է եւ ամենագոյ է:

Անոնք, որոնք կը սկսին հաղորդակցիլ Անոր հետ, կը հասկնան, որ Անոր ներկայութիւնը, զօրութիւնը, փառքը եւ մեծութիւնը անիմանալի եւ անզուգական են: Ան այնքա՛ն հզօր է, որ տիեզերքի ամենազօրեղ էակներէն մէկ քանին, որոնք սերովբէներ կը կոչուին, մշտապէս Անոր ներկայութեան մէջ Երկինքը կը գտնուին եւ երկիւղածութեամբ ու բարձր ձայնով կը կանչեն իրար՝ ազդարարելով Անոր զարմանալի մեծութիւնը: Այդ հսկայ արարածները կ'ընեն ատիկա այնպիսի՝ եռանդով եւ ուժով, որ անոնց ձայները կը դողացնեն Երկինքը գտնուող առեւի սրահի դռներու սիւները, որ, հաւանաբար, կրնայ տեղաւորել մէկ միլիառէն աւելի էակներ:

Աստուծոյ իմաստութիւնը, հասկացողութիւնը, ստեղծարարութիւնը, հանճարը եւ գիտելիքը այնքա՛ն լայն են, որ ատոնք անիմանալի են: Դարեր շարունակ ամենախելացի գիտնականները որոնած եւ ուսումնասիրած են Անոր արարչագործութեան գաղտնիքները, սակայն այդպէս ալ բոլորովին չեն ըմբռնած ատոր բարդութիւնը եւ սքանչելիութիւնը:

Ոչ մէկ մարդ դեռ լիովին խորամուխ եղած է Անոր սիրոյն, բարութեան եւ գթասրտութեան ու լիարժէք կերպով վերապրած է ատոնք: Անոր սէրը անսահման է:

Արդեն քառասուն տարի է՝ կը վայելեմ Անոր հետ յարաբերութիւն ունենալու արտօնութիւնը, սակայն վերջերս ես բոլորովին համակուած էի զգացումներով՝ մտածելով այն մասին, որ մեր Արարիչը փրկած է մեզ այն դատապարտութենէն, որ մենք մեր վրայ բերած էինք: Ան տուաւ մարդկութեան ամբողջ իշխանութիւնը այս երկրի վրայ, սակայն մենք տուինք այն Անոր ռիսկին՝ թշնամիին՝ սատանային, եւ անոր դիւային զօրքերուն: Նախապէս գիտնալով մեր դաւաճանութեան մասին՝ Աստուած պատրաստակամօրէն որոշեց վճարել այն աներեւակայելի գինը, որ անհրաժեշտ էր մեզ ստրկութենէն եւ բանտարկութենէն ազատ արձակելու համար: Մենք մեզ դատապարտեցինք, բայց Ան զոհեց Ինքզինքը՝ մեզ ազատ արձակելու համար: Ան ըրաւ ատիկա՝ առանց խախտելու Իր Խօսքը, ինչ որ հնարաւոր էր միայն մէկ պարագայի՝ եթէ Ան մարդ դառնար:

Քանի որ Աստուած մարդուն տուած էր երկիրը, Ան չէր կրնար ետ ստանալ այն՝ որպէս Աստուած. անհրաժեշտ էր, որ մարդու Որդին ետ պահանջէր այն: Ահա թէ որն էր Յիսուսի կուսական ծնունդի խորհուրդն ու իմաստութիւնը: Ան դարձաւ հարիւր տոկոսանոց մարդ, բայց քանի որ Անոր Հայրը Աստուծոյ Հոգին էր, Ան ազատ էր այն ստրկացնող բնութենէն, որուն մէջ յայտնուած էր ամբողջ մարդկութիւնը: Յիսուս մարմինով յայտնուած Աստուած էր: Ան գիտէր այն սարսափելի չարչարանքներուն մասին, որոնք պէտք է կրէր՝ մեզ փրկելու համար, սակայն Անոր սէրը մեզի հանդէպ այնքան մեծ եւ կատարեալ էր, որ Ան յօժարութեամբ որոշեց վճարել մեր ազատութեան գինը:

Այս գիրքը ամբողջութեամբ եւ անթիւ այլ գիրքեր կարելի էր նուիրել միմիայն Անոր բարութիւնը, զարմանալի սէրը, զօրութիւնը եւ մեծութիւնը նկարագրելուն: Այնուամենայնիւ, գոյութիւն ունի հարց մը, որ դարձած է այս գիրքը գրելու պատճառը:

Հարցում, որմէ կը խուսափին

Քանի որ մենք նման զարմանալի Աստուծոյ կը ծառայենք, պարզ տրամաբանութիւնը կ'ենթադրէ, որ մենք պէտք է գերբնական կեանք ունենանք: Բացի տրամաբանութենէն՝ Աստուածաշունչը նոյնպէս կը սատարէ այս գաղափարը: Մեզի խոստացուած է այս ամէնը.

- Անոր Աստուածային բնութիւնը,
- անձնուրաց բնաւորութիւն,
- անպայմանական սէր եւ ներում,
- աննկարագրելի ուրախութիւն եւ խաղաղութիւն,

- գերբնական զօրութիւն,
- բարեկեցութիւն,
- կենսունակութիւն,
- առողջութիւն,
- ապահովութիւն եւ կայունութիւն:

Եւ ասիկա տակաւին ամէնը չէ. կայ աւելին: Աստուածաշունչը նաեւ կը խոստանայ մեզի.

- Աստուածային իմաստութիւն,
- գիտելիք,
- հասկացողութիւն,
- հանձար,
- խորաթափանցութիւն եւ ստեղծարարութիւն:

Այս ամէնուն նպատակն է՝ պտղաբեր եւ յաջողակ դարձնել մեզ: Կարճ ըսելու համար՝ մեզի խոստացուած են երկնային յատկանիշներ: Յիշեցէ՛ք, որ Յիսուս ազդարարեց, որ Իր Թագաւորութիւնը մեր ներսն է, եւ նպատակը այն է, որ Անոր կամքը կատարուի երկրի վրայ այնպէս, ինչպէս որ Երկինքն է:

Այնուամենայնիւ, կը թուայ՝ այս յատկանիշները չեն դրսեւորուիր ո՛չ համընդհանուր, ո՛չ ալ անհատական մակարդակի վրայ: Եթէ անկեղծօրէն գնահատենք ներկայ իրավիճակը, կրնա՞նք ըսել, որ զգալի տարբերութիւն կը տեսնենք Աստուծոյ ժողովուրդին եւ այս աշխարհի մարդոց միջեւ: Արդեօ՞ք մենք՝ Յիսուսի հետեւորդներս, ակնառու մարդիկ ենք: Արդեօ՞ք մենք լոյս կու տանք այս խաւար սերունդին մէջ: Մտածեցէ՛ք ամուսնալուծութիւններու վիճակագրութեան մասին. կա՞յ արդեօք աչքի զարնող տարբերութիւն եկեղեցւոյ եւ այս աշխարհին միջեւ: Թէ՞ մենք նոյնպէս կը տառապինք նախանձէն, բամբասանքէն, չարախօսութենէն եւ երկպառակութիւններէն, որոնց արդիւնքը խաթարուած յարաբերութիւններն են: Արդեօ՞ք մենք կը դրսեւորենք այնպիսի բնաւորութիւն, անկեղծութիւն եւ բարոյական չափանիշներ, որոնք բեւեռային կերպով կը տարբերին մեր երկրի ապականութենէն: Կա՞յ արդեօք տարբերութիւն հաւատացեալներու եւ անհաւատներու միջեւ առողջութեան եւ բարեկեցութեան առումով: Մենք կրնա՞նք հոգալ մարդոց կարիքները եւ ազդարարել Քրիստոսի Աւետարանը ամբողջ աշխարհի տարածքին ապրող իւրաքանչիւր մարդու:

Այս ամէնը չափազանց վե՞հ կը թուայ: Մտածեցէ՛ք այն մասին, որ Հին ուխտի ներքոյ կար ժամանակ, երբ արծաթը քարի պէս պարզ էր եւ արժէք չունէր՝ խիստ բարձր կենսամակարդակի պատճառով (տե՛ս

Գ. Թագաւորաց 10.21,27): Այժմ՝ Նոր ուխտի ներքոյ, յաճախ կը հանդիպիմ առաջնորդներու, որոնք դժուարութիւններ կը կրեն սահմանափակ միջոցներու պատճառով, եւ հովիւներու, որոնք կը կամենան օգնութիւն ցուցաբերել այն բնակավայրերուն մէջ, ուր որ կ'ապրին, սակայն չեն կրնար՝ մարդկային ուժի, նիւթական եւ այլ միջոցներու բացակայութեան պատճառով: Արդեօ՞ք երկու պարագային ալ ատիկա կարելի է անուանել «երկրի վրայ՝ ինչպէս որ Երկինքն է»:

Յիսուս խոստացաւ մեզի, որ երբ փնտռենք Իր Թագաւորութիւնը եւ արդարութիւնը, այն ամէնը, ինչին կարիքը որ մենք ունինք, պիտի տրուի մեզի: Չէր եղած նոյնիսկ մէկ դէպք, որ միջոցներու պակասը խանգարէր Յիսուսին ընելու այն, ինչ որ պէտք է ընէր: Դժբախտաբար, եկեղեցւոյ մէջ եղած են ծայրայեղ ուսմունքներ հարստութեան եւ բարգաւաճման մասին: Այդ ոչ հաւասարակշռուած ուսմունքներու պատճառով մարդիկ սկսած են հաւատալ, որ առատութիւնը վատ բան է: Սակայն մենք ի՞նչ կրնանք տալ, եթէ ոչինչ ունինք:

Երբ թոյլ կու տանք, որ ձգտումը Աստուծոյ Թագաւորութեան հանդէպ կլանէ մեզ, Ան կը վստահի մեզի անհրաժեշտ միջոցներ՝ Իր կամքը այս երկրին վրայ տարածելու համար: Աստուած վատ առաջնորդ չէ. Ան չի խնդրեր Իր հետեւորդներէն կատարել Իր կամքը՝ առանց տալու անոնց անհրաժեշտ գործիքներ: Եւ աւելի կարեւոր փաստ մը՝ Աստուած բարի Հայր է: Ան կը ցանկայ օրհնել Իր զաւակները, սակայն չի կամենար, որ ունեցուածքը տիրէ մեզի: Ամէն տեսակի չարիքի արմատը ոչ թէ դրամն է, այլ՝ սէրը դրամին հանդէպ:

Հին Իսրայէլի մէջ ժամանակ մը կար, երբ ամբողջ երկրին մէջ չկար նոյնիսկ մէկ աղքատ մարդ: Գրուած է. «Սողոմոնի բոլոր օրերուն մէջ Յուդա ու Իսրայէլ՝ Դանէն մինչեւ Բերսաբէէ, իւրաքանչիւր մարդ իր որթատունկին ու իր թզենիին տակ ապահովութեամբ կը նստէր» (Գ. Թագաւորաց 4.25): Դանը Իսրայէլի ամենահիւսիսային քաղաքն էր, իսկ Բերսաբէէն՝ ամենահարաւայինը, եւ Աստուածաշունչը կը յայտնէ, որ ամբողջ ազգին մէջ չկար նոյնիսկ մէկ մարդ, որ խնամքի կարիք ունենար. ոչ մէկ անհատ կամ խումբ պետական աջակցութեան կարիք ունէր: Ի՞նչը այդ երկրին մէջ նման առատութեան պատճառ դարձաւ:

Իրականութեան մէջ, ասիկա միակ դէպքը չէ: Եթէ ուսումնասիրենք Աստուծոյ ժողովուրդի պատմութիւնը Հին կտակարանին մէջ, բազմաթիւ սերունդներ ապշեցուցիչ կերպով կը բարգաւաճէին՝ տնտեսական, հասարակական եւ ռազմական առումներով: Անոնք ունէին բնական պաշարներու, սնունդի եւ ունեցուածքի առատութիւն: Անոնք պարտութիւն չէին կրեր թշնամիներու յարձակման ժամանակ, ընդհակառակը,

ամէն անգամ կը յաղթին: Անոնց կենսամակարդակը կը զարմացնէր դրացի երկիրները: Եւ մտապահեցէ՛ք, որ ասիկա տեղի կ'ունենար Հին ուխտի ժամանակ, որ աւելի ցած է Նոր ուխտէն:

Յիսուս աւելի լաւ ուխտի Միջնորդ է, որ հաստատուած է աւելի լաւ խոստումներու հիման վրայ (տե՛ս Եբրայեցիս 8.6): Նայելով Անոր կեանքին՝ կը տեսնենք, որ կառավարիչները, պետական պաշտօնեաները (հարկահաւաքները), ազնուականները, մարմնավաճառները, գողերը, հարուստները եւ աղքատները, պարզ ըսելով՝ բոլոր տեսակի մարդիկ կը ձգտէին Անոր: Յիսուս փոփոխութիւն կը բերէր հոն, ուր որ կ'երթար: Ան երբեք պակասութիւն չունէր եւ կրնար ամբողջացնել որեւէ կարիք: Երբ Անոր խումբը յարձակումներու կ'ենթարկուէր, ոչ ոք վնաս կը կրէր, եւ յաճախ վատ իրավիճակները կը վերածուէին զարմանալի յաջողութիւններու:

Առաջին եկեղեցւոյ անդամներուն կ'անուանէին «աշխարհը տակնուվրայ ընողներ» (Գործք 17.6, NKJV): Անոնք նոյնպէս կարիքներ չունէին, քանի որ գրուած է. «Աստուծոյ օրհնութիւնը բոլորին վրայ էր: Անոնց միջեւ չկային կարիքաւոր մարդիկ» (Գործք 4.33,34, NLT): Անոնք այն աստիճան իւրայատուկ էին, որ յաճախ պէտք է համոզէին զինուորական սպաներուն կամ բնակավայրերու ղեկավարներուն, որ իրենք Աստուածներ չէին եւ իրենց պէտք չէր երկրպագել: Անոնց շրջապատող մարդիկ իրենց սերունդի գերմարդիկ կը համարէին զանոնք: Անոնք կը հեռացնէին հիւանդութիւնները եւ տկարութիւնները տառապեալներու կեանքէն: Անոնք պայծառ լոյս էին խաւար սերունդին մէջ:

Թոյլ տուէք կրկին հարցնել՝ արդեօ՞ք մեր կեանքը զգալիօրէն կը տարբերի մեր հասարակութենէն: Արդեօ՞ք մեր լոյսը այնքան վառ է, որ մարդիկ Աստուծոյ առանձնայատուկ ժողովուրդը կը համարեն մեզ: Թէ՞ մենք արդարացումներ ներկայացուցած ենք եւ փոփոխած ենք մեր աստուածաբանութիւնը՝ հեռանալով Սուրբ գիրքի պարզ ուսմունքէն, որպէսզի բացատրենք, թէ ինչո՞ւ այն խոստումները, որոնք նախատեսուած են Նոր կտակարանի ժամանակաշրջանին համար, այլեւս չեն կատարուիր: Նոր կտակարանի հեղինակները ունին պատասխաններ, բայց մենք կը խուսափինք այս բարդ հարցումներուն պատասխանել:

Ի՞նչ պիտի կատարուի, եթէ մենք իսկապէս լսենք, թէ ինչ կ'ըսէ Աստուածաշունչը:

Իմ նպատակը յանդիմանութիւնը չէ. ես ընդամէնը կը խնդրեմ, որ դուք ձեզի հարցնէք հետեւեալ հարցումը. արդեօ՞ք այն, ինչ որ կը կատարուի այսօր, հետեւեալ խօսքերուն իրականացումն է՝ «Գայ Քու արքայութիւնը, ըլլայ Քու կամքը, ինչպէս Երկինքը, նոյնպէս ալ երկրի»

վրայ»: Մենք չենք կրնար անտեսել Յիսուսին խօսքերը. «Աստուծոյ Թագաւորութիւնը ձեր ներսիդին է» (Ղուկաս 17.21): Անոր Թագաւորութիւնը հոս է՝ Քրիստոսի մարմինին մէջ: Արդեօ՞ք մենք կ'ապրինք մեր սերունդին մէջ այնպէս, ինչպէս Յիսուսը՝ Իր սերունդին մէջ: Արդեօ՞ք խօսքը չի տրվեցներ մեզի. «Անոնք, որոնք կ'ըսեն, որ կ'ապրին Աստուծոյ մէջ, պէտք է ապրին այնպէս, ինչպէս Յիսուսը» (Ա. Յովհաննէս 2.6, NLT):

Արդեօ՞ք մենք նոյնքան արդիւնաւէտ ենք, որքան առաջին Եկեղեցին՝ Աւետարանը տարածելու հարցին մէջ: Արդեօ՞ք մենք ակնաւատես կ'ըլլանք այն բանին, որ բոլոր տարածաշրջանները կը լսեն Աւետարանի լուրը ընդամենը երկու տարուան մէջ (տե՛ս Գործք 19.10): Յիշեցէ՛ք, որ անոնք չունէին համացանց, Դիմատետր (Ֆէյսպուք) կամ այլ ընկերակցական ցանցեր, հեռուստատեսութիւն, եւ նոյնիսկ՝ ռատիոյ: Սակայն ամէն մէկը, ոչ թէ պարզապէս քաղաքի մը կամ երկրի մը մէջ, այլ ամբողջ տարածաշրջանի մը մէջ լսեց Աւետարանը:

Արդեօ՞ք այսօր կը կատարուի նոյնը: Եկէ՛ք անկեղծօրէն գնահատենք իրավիճակը:

Մենք կ'անտեսենք ակնյայտ խնդիրը՝ ըսելով. «Աստուած այլեւս այդպէս չի գործեր»: Մենք այնպէս կը ներկայացնենք Աւետարանը, որ այն համապատասխանէ մեր վիճակին: Կը թուայ՝ մենք կ'ընկրկինք, իսկ երբեմն, նոյնիսկ, կ'արհամարհենք որեւէ բան, ինչ որ առնչութիւն ունի իշխանութեան, ուժի, յաջողութեան, առատութեան, պտղաբերութեան եւ առողջութեան հետ: Մենք կ'ըսենք, որ նման ուղերձը ծայրայեղ, անհաւասարակշռուած եւ շահադիտական է: Այսպէս վարուելով՝ մենք, փաստօրէն, կը պաշտպանենք մենք մեզ, որպէսզի ստիպուած չըլլանք պատասխանելու շարք մը ծանր հարցումներու, եւ կ'արդարացնենք մենք մեզ այն բանին համար, որ Աւետարանին միջոցով ազդեցութիւն չենք ձգեր մեզ շրջապատող մարդոց վրայ:

Այնպէս որ, իմ առաջադրած հարցումը մեր անարդիւնաւէտութեան մասին այն է, ինչին շուրջ կը մտորեն շատերը, եթէ ոչ՝ բոլորը: Սակայն ինչո՞ւ մենք չենք տար այս հարցումը: Ինչո՞ւ մենք չենք փնտռեր պատասխանը: Արդեօ՞ք մենք կը վարանինք, քանի որ այս հարցը բարձրացնելը կրնայ ի յայտ բերել այնպիսի խնդիրներ, որոնցմով մենք չենք ուզեր զբաղիլ: Այնուամենայնիւ, եթէ չտանք այս հարցումը եւ չվարուինք ատոր պատասխաններուն հիման վրայ, մենք պիտի մնանք շատ աւելի ցած մակարդակի վրայ, քան այն, ինչ որ խոստացուած է մեզի եւ ինչի համար որ կանչուած ենք:

Աւելի քան երեսունհինգ տարի ծառայութեան մէջ ըլլալէն յետոյ եւ մօտենալով իմ վաթսունամեակին՝ ես պատրաստ եմ եւ կ'ուզեմ խօսիլ

այս հարցին մասին: Իրականության մէջ այս խնդիրը հրատապ է: Ես կը հաւատամ, որ եթէ անկեղծօրէն փնտռենք այս հարցումին պատասխանը Անոր Խօսքին մէջ, այն կեանքի լիութիւնը, որուն համար մենք կանչուած ենք, ի յայտ պիտի գայ:

Եթէ դուք, ինչպէս եւ ես, կ'ուզէք պատասխաններ ստանալ, եկէք միասին անցնինք այս Աստուածաշնչեան ընթացքը: Այն արագ պիտի չըլլայ եւ երբեմն ցաւոտ պիտի ըլլայ՝ նման այն բանին, ինչ որ տեղի կ'ունենայ, երբ հմուտ վիրաբոյժը բարդ վիրահատութիւն կը կատարէ: Բժիշկը հոգ կը տանի իր հիւանդին մասին եւ կը կատարէ անհրաժեշտ գործողութիւնները՝ անոր կեանքը փրկելու համար:

Սուրբ Հոգին աւելի շատ կը հոգայ մեր մասին, քան ոեւէ վիրաբոյժ՝ թէ՛ անհատական, թէ՛ հաւաքական առումով: Մտապահեցէ՛ք ասիկա, երբ հասնինք աւելի ծանր գլուխներու: Վերջաւորութեան դուք պիտի ստանաք ուժ, առողջութիւն, կեանք, սէր եւ կենսունակութիւն: Ես կը հաւատամ, որ այս պատասխանները կրնան փոխել մեր կեանքին, բնակավայրերուն եւ այս սերունդին ընթացքը:

Եթէ դուք ինձի հետ էք, գացի՛նք:

գործնական քայլ

Աստուած կը զգուշացնէ մեզ Յակոբոս 2.12-ին մէջ. «Խօսքը ընդ՝դ եղէք, եւ ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով»: Ասիկա կը նշանակէ, որ եթէ մենք խօսք կը լսենք Աստուծմէ (Աստուածաշունչէն, Սուրբ Հոգիէն կամ ինչ որ մարդէ մը, որ ողջամիտ ուսմունք կը քարոզէ), բայց չենք կատարեր, մենք արդէն մենք մեզ խաբած կ'ըլլանք:

Մեր հաւատքի ապացոյցը ոչ թէ սորվեցուցածին համաձայնիւն է, այլ՝ կատարելը: Այնպէս որ, ամէն գլուխի վերջաւորութեան գտնուող այս գործնական քայլերը անսահման կարելոր են: Ատորմէ ամէն մէկը խթան է, որ կ'օգնէ անմիջապէս գործի դնելու այն ճշմարտութիւնները, որոնք դուք կը սորվիք հեթական գլուխը ընթերցելու ժամանակ: Ներկայացուած առաջադրանքները ծաւալուն չեն, եւ կատարելու համար երկար ժամանակ չի պահանջուիր:

Եթէ ժամանակ յատկացնէք՝ իւրաքանչիւրը կատարելու համար, դուք շատ աւելին պիտի ստանաք այս գիրքէն, եւ ձեր կեանքը խորապէս պիտի փոխուի:

III

Կան հարցումներ, որոնցմէ բոլորը կը խուսափին, եւ ատոնք հարցնելը նման է ատամնաբոյժի քով երթալուն՝ ակռայի բաց խոռոչը փակելու համար: Այնուամենայնիւ, մենք պէտք է որոշում կայացնենք խիզախ ըլլալ եւ բախիլ այդ հարցերուն՝ տեւական օգուտ ստանալու համար:

Ինչո՞վ ձեր կեանքը աչքի կ'իյնայ՝ այս աշխարհին համեմատ: Մարդիկ կրնա՞ն ըսել, որ դուք Յիսուսին պէս կ'ապրիք: Մի՞ խուսափիք այս հարցումէն. անպայման պատասխանեցէք: Որքանո՞վ ձեր կեանքը պիտի փոխուէր, եթէ ապրէիք Յիսուսին պէս: Ի՞նչ սովորութիւններ դուք ձեռք պիտի ձգէիք: Ինչպէ՞ս աստիկա պիտի փոխէր ձեր յարաբերութիւնները այն մարդոց հետ, որոնց հետ մշտապէս կը հաղորդակցիք: Ինչպէ՞ս պիտի փոխուէր ձեր վարքը ձեր ընտանիքին մէջ:

Ժամանակ յատկացուցէ՛ք, որ գրի առնէք ձեր մտքերը այս հարցերուն վերաբերեալ: Օգտագործեցէ՛ք Աստուծոյ Խօսքը՝ որպէս ուղեցոյց: Այն ցոյց պիտի տայ, թէ ինչին դուք պէտք է ձգտիք: Հազիւ որ որոշ մտքեր գրի առնէք, աղօթեցէ՛ք ատոնց հիման վրայ: Խնդրեցէ՛ք Սուրբ Հոգիէն, որ մէկ բան ցոյց տայ ձեր պատասխաններէն, որուն ուղղութեամբ Ան յատկապէս հիմա աշխատանք կը տանի ձեր կեանքին մէջ: Խնդրեցէ՛ք Անորմէ կեանքի կոչել աստիկա այնպէս, որ փոխուելու գօրութիւն ստանաք:

Ի՞ՆՉ Է ՔՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Առաջին գլուխին մէջ մենք *փորձեցինք* խօսիլ Աստուծոյ մեծութեան մասին: Ես կ'օգտագործեմ «փորձել» բառը, քանի որ որքան ալ վսեմ կամ ճարտար բառեր օգտագործենք, մենք նոյնիսկ չենք մօտենար Անոր վեհութիւնը նկարագրելուն: Ան անգերազանցելի է: Ոչ ոք կրնայ նոյնիսկ համեմատուիլ Անոր հետ. Աստուած անզուգական է եւ կ'իշխէ յաւիտենական անցեալէն մինչեւ յաւիտենական ապագան: Ան զարմանալի է:

Ըլլալով Անոր զաւակները՝ բոլորովին տրամաբանական է, որ մեր կեանքը պէտք է արտացոլէ Անոր, եւ Աստուածաշունչը պարզ կը խօսի ասոր մասին: Աստուծոյ Խօսքը կը յայտնէ Անոր որդիներուն եւ դուստրերուն մասին. «Ինչպէս է Ինք, նոյնպէս ալ մենք ենք այս աշխարհի մէջ» (Ա. Յովհաննէս 4.17): Յովհաննէս առաքեալը չըսաւ. «Ինչպէս է Ինք, նոյնպէս ալ մենք պիտի ըլլանք յաւիտենութեան մէջ»: Ո՛չ, ան կը պնդէ, որ ինչպէս է Ան, նոյնպէս ալ մենք ենք *ճիշդ հիմա այս աշխարհին մէջ*: Ասիկա պարզապէս մտքէ վեր է: Կրկին, գրուած է.

«Անոր փառքի եւ գերազանցութեան շնորհիւ Ան տուած է մեզի մեծ եւ թանկ խոստումներ: Ասոնք այն խոստումներն են, որոնք կարողութիւն կու տան մեզի բաժնեկցելու *Անոր Աստուածային բնութեան*» (Բ. Պետրոս 1.4, NLT):

Մտածեցէ՛ք ասոր մասին: Մեզի տրուած է *Անոր Աստուածային բնութիւնը*: Ոչ թէ երկրի վրայ երբեք ապրած ամենաակնառու մարդու մը բնութիւնը, այլ՝ *Աստուծոյ* բնութիւնը: Պետրոսը որեւէ թիրըմբռնումէ խուսափելու համար կ'աւելցնէ «Աստուածային» բառը: Յունարէնին

մէջ անիկա «թոս» բառն է, որ կը սահմանուի որպէս «այն, ինչ որ եզակի է Աստուծոյ համար եւ կը բխի Անորմէ» («Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան»): «Բնութիւն» բառը յունարէնին մէջ «ֆուսիս» բառն է, որ կը սահմանուի որպէս «ծնիլ, յառաջացնել, էութիւն, էութեան յատուկ բնաւորութիւն եւ յատկանիշներ» («Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան»): Միացնելով այս երկու բառերը՝ պիտի ստանանք հետեւեալը. «Ասոնք այն խոստումներն են, որոնք կարողութիւն կու տան ձեզի բաժնեկցելու այն ամէնուն, ինչ որ յատուկ է միմիայն Աստուծոյ:

Մենք ճշմարտապէս ծնած ենք Աստուծմէ

Ես կը մտահոգուիմ, երբ ծառայողները հետեւեալ բանը կ'ըսեն. «Իրականութեան մէջ, ոչ մէկ տարբերութիւն կայ քրիստոնեային եւ մեղաւորին միջեւ. պարզապէս քրիստոնեաները ներուած են»: Ասիկա հերձուածութիւն է, որ երկու զարհուրելի հետեւանք ունի: Առաջինը՝ այն կ'արժեզրկէ Աստուծոյ աշխատանքը, որ Ան կատարեց մեզի համար Յիսուսին միջոցով, եւ երկրորդը՝ այն անարդիւնաւէտ կը դարձնէ Աստուծոյ խոստումը, եւ Անոր զաւակները կը շարունակեն ստրկացած մնալ այս աշխարհի մեղսալի ցանկութիւններէն յառաջացած ապականութեան:

Նոյնիսկ բնութիւնը հակառակ է նման հերձուածութեան: Դուք երբեք լսա՞ծ էք, որ առիժէն սկիւռ ծնի, կամ, որ զտարին արշաւածիէն անձրեւորդ ծնի: Գրուած է. «Սիրելիներ՛ր, հիմա [ոչ թէ յետոյ, երբ Երկինք երթանք] Աստուծոյ որդիներ ենք» (Ա. Յովհաննէս 3.2):

Որպէս Անոր սիրելիներ՝ մենք պէտք է դրսևորենք անձնուրաց բնաւորութիւն, անպայմանական սէր, անասելի ուրախութիւն, խաղաղութիւն, որ մտքէ վեր է, գերբնական զօրութիւն, բարեկեցութիւն, կենսունակութիւն, ստեղծարարութիւն, Աստուածային իմաստութիւն, խորաթափանցութիւն, բարձր գիտելիքներ եւ մեծ ըմբռնողութիւն, եւ այս ցուցակը տակաւին կարելի է շարունակել: Աստուածաշունչը կը խոստանայ նմանատիպ յատկանիշներ տարբեր բնագաւառներուն մէջ. այնպէս որ, կրկին, իմ հարցումը հետեւեալն է. «Ինչո՞ւ մենք չենք տեսներ ասիկա ո՛չ անհատական, ո՛չ ալ ընդհանուր եկեղեցական մակարդակի վրայ»:

Մինչեւ անդրադառնալը այս եւ նմանատիպ հարցերուն, կ'ուզեմ պատմել ձեզի այս գիրքի կառուցուածքին մասին: Հնարաւոր է, որ յաջորդ քանի մը զլուխները բացասական եւ կոպիտ թուան ձեզի, սակայն կը խոստանամ, որ ատոնց պիտի հետեւին գոհացուցիչ պատասխաններ:

Պատկերացուցե՛ք, որ բժիշկը ճշդօրեն մեխանոմա (մաշկի քաղցկեղ) կ'ախտորոշէ վաղ շրջանի մէջ, եւ կ'առաջարկէ լուծում՝ կարճատեւ բուժարանային շտապ վիրահատութեան տեսքով, քանի որ այդ գոյացութիւնը սկիզբէն չարորակ կը թուայ: Հիւանդը կրնայ մտածել. «Որքա՛ն սարսափելի է: Ես քաղցկե՛ղ ունիմ: Ես չեմ ուզեր լսել այս մասին, ո՛չ ալ ինչ որ միջոցներու դիմել՝ այս հիւանդութենէն ազատելու համար: Բայց ես պիտի ընեմ ատիկա, որպէսզի փրկեմ իմ կեանքը»: Այնուամենայնիւ, պատկերացուցե՛ք ուրիշ տարբերակ մը. եթէ բժիշկը անտեսէ հիւանդին խնդիրը եւ ընդամենը ցուցմունք տայ անոր առողջ ապրելակերպի մասին՝ սորվեցնելով պատշաճ կերպով սնուիլ, կանոնաւոր մարզուիլ, դրական վերաբերմունք ունենալ եւ խուսափիլ լարուած վիճակներէն ու ճնշումներէն, մեխանոման (մաշկի քաղցկեղը) կը շարունակէ աճիլ, մինչեւ որ անկարելի կը դառնայ վիրահատել այն, եւ հիւանդը կը մահանայ:

Աստուած չափազանց շատ կը սիրէ մեզ եւ այդ պատճառով ալ կ'ախտորոշէ այն, ինչ որ ետ կը պահէ մեզ եւ նոյնիսկ կրնայ մեր մահուան պատճառը դառնալ: Ան գիտէ, որ այն, ինչ որ կը սահմանափակէ մեզ, չի հեռանար դրական ապրելակերպի միջոցով: Փոխարէնը, մենք պէտք է հակառակինք ասոր եւ հեռացնենք մեր կեանքէն: Ան Հայր է, Որ խորապէս մտահոգուած է մեր առողջութեամբ եւ բարեկեցութեամբ:

Այնպէս որ, կարդալով յաջորդ գլուխները, մտապահեցե՛ք, որ ախտորոշումը անհրաժեշտ է, որպէսզի հնարաւոր ըլլայ վիրահատական գործողութիւններ կատարելը: Վերջնական արդիւնքը պիտի ըլլայ այն անգուգական իրականութիւնը, որ նկարագրուած է Աստուծոյ Խօսքին մէջ:

Անդրադարձ իմ հարցումին

Եթէ Անոր Թագաւորութիւնը մեր մէջ է, ինչո՞ւ Անոր կամքը չի կատարուիր երկրի վրայ այնպէս, ինչպէս որ Երկինքն է: Ինչո՞ւ որոշ հինկտակարանեան հաւատացեալներ, որոնք կը գտնուէին «պակաս գերազանց» ուխտի մէջ՝ հիմնուած աւելի «ցած» խոստումներու վրայ, կ'ապրէին շատ աւելի գերազանց կեանքով, քան այն, ինչ որ մենք կը տեսնենք այսօր: Աստուածաշունչը շարունակ կը պատասխանէ այս հարցումին: Այդ պատասխաններէն մէկը գրուած է կորնթացիներուն ուղղուած Պօղոսի նամակին մէջ.

«Ահա թէ ինչո՛ւ պէտք է դուք ծեզ քննէք մինչեւ այս հացը ուտելը եւ այս բաժակը խմելը: Որովհետեւ եթէ դուք կ'ուտէք այս հացը եւ կը խմէք այս բաժակը՝ առանց պատուե-

լու Քրիստոսի մարմինը, դուք կ'ուտեք եւ կը խմէք Աստուծոյ դատաստանը ձեր վրայ: *Միա թէ ինչո՛ւ ձեզմէ շատերը տկար եւ հիւանդ, եւ ոմանք նոյնիսկ մահացած են:* Բայց եթէ մենք մեզ քննէինք, այս ձեւով չէինք դատուեր Աստուծոյ կողմէն: Սակայն երբ կը դատուինք Տիրոջ կողմէն, մենք կը խրատուինք, որպէսզի չդատապարտուինք այս աշխարհին հետ» (Ա. Կորնթացիս 11.28-32, NLT):

Մենք կը տեսնենք կորնթացիներու աներկիւղ վերաբերմունքը Տիրոջ ընթրիքի ժամանակ, որուն հետեւանքները շատ ատելի խորունկ էին, քան անոնցմէ շատերը կը գիտակցէին: Իրականութեան մէջ, անոնք կը կատարէին Տիրոջ ընթրիքը լիարժէք ճաշկերոյթի տեսքով՝ սեղանի շուրջ, ինչ որ շատ կը տարբերէր մեր ժամանակակից ծիսական մօտեցումէն: Մեր ուսումնասիրութեան ընթացքին մենք պիտի տեսնենք, որ հիմնական խնդիրը, որուն պատճառով անոնց կեանքին մէջ դատաստան եկած էր, հետեւեալն էր. անոնք կը գիտակցէին, որ անհնազանդ էին Աստուծոյ, սակայն կը շարունակէին այդպէս վարուիլ:

Այս հատուածին մէջ թուարկուած է անոնց վարքի երեք հետեւանք՝ տկարութիւն, հիւանդութիւն եւ ֆիզիքական մահ: Վերջին երկուքի իմաստը պարզ է, իսկ ի՞նչ կրնանք ըսել առաջինին մասին: «Տկարութիւն» բառի սահմանումներէն են «ուժի կամ առոյգութեան բացակայութիւնը» եւ «անկարող կամ անզօր ըլլալը»: Այս բառը կրնայ վերաբերիլ կեանքի բազմաթիւ բնագաւառներուն: Ընդհանուր առմամբ, այն կը նշանակէ, որ մենք անկարող ենք ըլլալ այնպիսին, ինչպիսին ստեղծուած ենք:

Վերադառնանք Սուփըրհերոսին: Քրիպտոնաքարը վտանգ կը ներկայացնէր անոր համար. այն կը խլէր անոր ուժերը եւ անզօր կը դարձնէր զինք: Սուփըրհերոսին կարողութիւնները այս աշխարհէն չէին: Ան կրնար գերբնական սխրանքներ գործել եւ ունէր գերմարդկային գիտելիքներ, գերզարգացած զգայարաններ, արտասովոր ուժ եւ հաստատակամ բնաւորութիւն: Այնուամենայնիւ, քրիպտոնաքարի ազդեցութեան տակ Սուփըրհերոսը կը տկարանար՝ դառնալով ատելի թոյլ, քան սովորական մարդը: Եթէ ատոր ազդեցութիւնը երկար ժամանակ մնար անոր կեանքին մէջ, ան կրնար նոյնիսկ մահանալ:

Ըստ էութեան, Պօղոս առաքեալը կը բացայայտէ եկեղեցւոյ քրիպտոնաքարը: Այն կը տկարացնէ մեզ՝ թոյլ չտալով ապրիլ այն զօրութեամբ, որ յատուկ է Աստուածային բնութեան:

Դաւիթ թագաւորը հառաչելով խոստովանեցաւ դէպք մը իր կեանքէն,

երբ ինքը չէր ապաշխարած եւ չէր խոստովանած իր մեղքը. «Իմ զօրութիւնը շոգիացաւ՝ ինչպէս ջուրը ամրան տաքուն» (Սաղմոս 32.4, NLT): «Ուղերձ» թարգմանութիւնը, որ շրջասութեան կ'ենթարկէ Աստուածաշնչեան թեքսթը, այսպէս կը ներկայացնէ անոր խօսքերը. «Իմ կեանքի բոլոր հիւթերը չորցան»: Ուրիշ խօսքի մը մէջ գրուած է. «Մեղքը չորցուց իմ ուժը. ես կը վերջանամ ու կը հիւծիմ իմ ներսէն» (Սաղմոս 31.10, NLT):

Յակոբոսը այսպէս կը գրէ. «Մեղքը, երբ որ կատարուի, մահ կը ծնի: Մի՛ խաբուիք, իմ սիրելի՛ եղբայրներս» (Յակոբոս 1.15,16): Յակոբոսը պարզօրէն կը խօսի հաւատացեալներուն հետ եւ կը զգուշացնէ գանոնք չխաբուիլ մեղքով: Եթէ մեղքը չհեռացուի, այն պիտի ընէ հաւատացեալին հետ նոյնը, ինչ որ քրիստոնաքարը՝ Սուփըրհերոսին հետ, շուտով մինչեւ մահուան հասցնելը: Նոյն ձեւով Պօղոսը, որպէս սիրող հոգեւոր հայր, հոգեւոր քրիստոնաքարի ազդեցութեան մասին կը զգուշացնէ ինչպէս Կորնթոսի եկեղեցին, այնպէս ալ մեզ:

Խիստ զգուշացում

Առաջին բանը, ինչ որ պէտք է շեշտադրել այս սուրբգրային հատուածներուն վերաբերեալ, հետեւեալ զգուշացումն է: Պօղոսը չ'ըսեր. «Ասիկա *միակ* պատճառն է, որ ձեզմէ շատերը տկար եւ հիւանդ են, եւ ոմանք նոյնիսկ մահացած են»: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ ան չ'ըսեր, որ բոլոր նեղութիւնները, հիւանդութիւնները եւ մահերը մեղքի պատճառով են: Յաճախ մենք՝ հաւատացեալներս, կը պայքարինք դժուար իրավիճակներու հետ, քանի որ կ'ապրինք անկում ապրած աշխարհի մը մէջ, եւ գոյութիւն ունին բնական եւ դիւային ուժեր, որոնց մենք պէտք է հակառակինք:

Օրինակ, անգամ մը Յիսուսը եւ աշակերտները տեսան մարդ մը, որ ծնած օրէն կոյր էր: Աշակերտները հարցուցին. «Որո՞ւնն է մեղքը, ասո՞ր, թէ՞ իր ծնողքին, որ անիկա կոյր ծնաւ» (Յովհաննէս 9.2): Ըստ անոնց՝ այդ մարդը կրնար ըլլալ նման վիճակի մը մէջ միայն մեղքի պատճառով:

Յիսուս անմիջապէս պատասխանեց. «Ո՛չ ատորն է մեղքը, ո՛չ ալ իր ծնողքին»: Յիսուս արագօրէն եւ վճռականօրէն վերջ դրաւ այս սխալ եւ զարհուրելի մտածելակերպին: Բոլոր հիւանդութիւնները, տկարութիւնները եւ վաղաժամ մահերը չէ, որ մեղքի հետեւանք են:

Ճիշդ այս մտածելակերպին պատճառով էր, որ Եղիփազը, Բաղդատը եւ Սոփարը կը քննադատէին Յոբը: Ըստ անոնց մեղադրանքներուն՝ Յոբին տառապանքներու պատճառը անոր մեղքերն էին (տե՛ս

Յոբայ 5.17, 8.4-6, 11.13-15, 22.1-11): Սակայն անմիջապէս Յոբի մեղութիւններէն առաջ Աստուած պարծեցաւ. «Երկրի վրայ անոր պէս կատարեալ եւ արդար, աստուածավախ ու չարութենէ ետ քաշուող մարդ չկայ» (Յոբայ 1.8): Յոբի տառապանքները որեւէ կապ մը չունէին մեղքի կամ կեղծաւորութեան հետ: Աստուած որոշ ժամանակ լուռ մնաց, բայց ի վերջոյ Եղիփազին ըսաւ. «Ես բարկացած եմ քու եւ քու երկու ընկերներուն վրայ, որովհետեւ դուք ճշդօրէն չխօսեցաք Իմ մասին» (Յոբայ 42.7, NLT): Երբ Աստուծոյ այնպէս կը ներկայացնեն, ըսես Ան կը պատժէ ինչ որ մէկը մեղքի համար (այնինչ իրականութեան մէջ այդպէս չէ), ատիկա լուրջ մեղադրանք է Անոր բնաւորութեան դէմ:

Տարիներ առաջ, երբ ես նորահաւատ էի, բազմաթիւ եկեղեցական շրջանակներուն մէջ մարդոց մեղաւոր կը համարէին, եթէ անոնք մեղութիւններ կը կրէին: Այս մտածելակերպը դեռեւս գոյութիւն ունի, սակայն, բարեբախտաբար, այնքան տարածուած չէ, որքան անցեալին մէջ: Սուրբգրային ուսուցումը եւ հրաշալի առաջնորդները մեծ մասամբ այս սխալմունքը հեռացուցած են եկեղեցիէն: Նման մտածելակերպի պատճառով, որոշ մարդոց հետ կը հաղորդակցէին խիստ վիրաւորական ձեւով՝ դատապարտութեամբ եւ ասելութեամբ լեցուած: Ցաւոք, այս ուսմունքը նոյնիսկ ոմանց հաւատքէն հեռացուց:

Միւս կողմէն, մենք նոյնպէս պէտք է յիշենք Յիսուսին խօսքերը այն մարդուն, որ բժշկուեցաւ երեսունութ տարի տեսող տկարութենէն. «Ահա բժշկուեցար. ալ մեղք մի՛ գործեր, որ ա՛լ աւելի չար բան չպատահի քեզի» (Յովհաննէս 5.14): Մենք չենք մերժեր այն փաստը, որ Յիսուսին խօսքերով՝ մեղքը դուռ կը բանայ ծանր հետեւանքներու եւ մեղութիւններու համար: Յիսուս այնքան սիրեց այդ մարդը, որ Իր կեանքը տուաւ անոր համար: Եւ Ան զգուշացուց զինք՝ Իր ջերմեռանդ սէրէն դրդուած:

Մենք չունինք ճշմարիտ սէր, եթէ խուսափինք զգուշացումներէն: Բացառելով որեւէ բան, որ սխալմամբ կրնայ չար, մեղադրական կամ դատապարտող համարուիլ՝ մենք յաճախ կը յայտնուինք միւս ծայրայեղութեան մէջ, այսինքն՝ ընդհանրապէս չենք զգուշացներ զանոնք: Այնուամենայնիւ, մենք տակաւին կը գտնուինք այնպիսի վիճակի մը մէջ, որ նկարագրեց Պօղոսը. շատերը անզօր են, հիւանդ են եւ ժամանակէն շուտ կը մահանան: Մի՞թէ ասիկա է սէրը: Մի՞թէ ասիկա է ճշմարիտ հոգատարութիւնը:

Մենք պատասխաններ ունինք մարդոց համար, սակայն չենք արտայայտեր ատոնք, քանի որ չենք ուզեր սխալ հասկցուած ըլլալ: Եկէք անկեղծ ըլլանք: Ինչի՞ն ուղղուած է մեր սէրը: Արդեօ՞ք մեր սէրը ուղղուած է եկեղեցւոյ: Արդեօ՞ք մենք մարդոց կը քարոզենք ճշմարտութիւնը,

ինչպէս Յիսուսը եւ Պօղոսը, թէ՞ կենդրոնացած ենք մեր անձին եւ համբաւին վրայ ու կը վախճանք կորսնցնել մեր համակիրները կամ սխալ հասկցուած ըլլալ:

Իմ ընթացքը

Իմ ծառայութեան առաջին տարիներուն ես մշտապէս կը քաջալերէի բոլորը: Չափէն աւելի դրական վերաբերմունք կը ցուցաբերէի ինձի շրջապատող մարդոց հանդէպ: Ես կը խուսափէի առերեսումէն՝ ինչպէս ժանտախտէն: Երբեմն, նոյնիսկ կը ստէի ատոր համար, եւ փոխարէնը կ'ոգտուրէի մարդոց: Բոլորը կ'ըսէին ճոն Պիվիի մասին. «Ան այնքա՛ն բարի է: Ան ամենասիրող անձնաւորութիւնն է ամբողջ եկեղեցւոյ մէջ»: Անոնց խօսքերը կը հասնէին ինձի եւ սրտանց ուրախութիւն կը պատճառէին:

Անգամ մը աղօթքի ժամանակ Աստուած հետս խօսեցաւ. «Մարդիկ կ'ըսեն, որ դուն ամենասիրող անձնաւորութիւնն ես եկեղեցւոյ մէջ, ճի՞շդ է»:

«Այո՛», - պատասխանեցի ես: Ես կը մտածէի, որ ատիկա հաճելի էր Աստուծոյ, բայց այն, թէ ինչպէս Սուրբ Հոգին տուաւ այդ հարցումը, ցոյց կու տար, որ Ան ուրիշ բան պիտի ըսէր ինձի:

Այն, ինչ որ ես լսեցի, հաստատեց իմ մտահոգութիւնը: Ան ըսաւ. «Որդի՛ս, դուն չես սիրեր այս եկեղեցւոյ մարդիկը»:

Ես ցնցուած պատասխանեցի. «Ի՞նչ: Ես կը սիրեն զանոնք, եւ յատկապէս անոնք կը խօսին ատոր մասին»:

Ան շարունակեց. «Գիտե՞ս, թէ ինչո՞ւ դուն միայն դրական եւ ոգեշնչող խօսքեր կ'ըսես մարդոց»:

«Ինչո՞ւ», - զգուշօրէն հարցուցի ես:

«Քանի որ կը վախճաս, որ անոնք մերժեն քեզ», - պատասխանեց Ան:

Այս պատասխանը անսպասելի էր եւ ապշեցուցիչ: Շփոթեցայ եւ խօսքեր չունէի:

«Եթէ դուն իրականութեան մէջ սիրէիր զանոնք, - շարունակեց Ան, - պիտի ըսէիր անոնց ճշմարտութիւնը, նոյնիսկ եթէ գիտնայիր, որ հնարաւոր է՝ անոնք մերժեն քու ըսածը կամ՝ յատկապէս քեզ»:

Ինձի համար ատիկա շրջադարձային պահ էր: Ես անմիջապէս փոխուեցայ, սակայն անցայ միւս ծայրայեղութեան: Այժմ ես կը խօսէի ճշմարտութիւնը, սակայն՝ առանց նրբազգացութեան եւ գթասրտութեան, քանի որ իմ ներսը տակաւին չկար ամենակարեւոր բաղադրիչը՝

Ճշմարիտ սերը: Այդ ժամանակ ես շրջիկ քարոզիչ էի: Կը ծառայէի փոքրիկ եկեղեցիներու մէջ եւ, ցաւոք, կը ծեծէի գառնուկները: Ետ նայելով՝ ես կը ցաւիմ այն մարդոց համար, որոնց միայն կը յանդիմանէի՝ առանց որեւէ կերպով խրախուսելու, եւ անոնց հովիւներուն համար, որոնք ստիպուած էին շտկելու իմ անկարգութիւնները:

2001 թուականին ես ծառայեցի խոշոր համաժողովի մը մէջ, որ տեղի կ'ունենար Եւրոպայի մէջ գտնուող մեծ եկեղեցւոյ մը մէջ: Քանի մը ամիս յետոյ երեք տարբեր աշխարհամասերու մէջ գտնուող մարդոցմէն իմացայ, որ այդ եկեղեցւոյ հովիւը ըսած էր ազդեցիկ առաջնորդներուն, որ ես խիստ էի եւ կը ծեծէի գառնուկները: Եւ ան ճիշդ էր:

Այդ լուրը յուսահատութեան հասցուց եւ ծունկի բերաւ զիս: Ես կ'աղօթէի, աւելի շուտ՝ կ'աղաղակէի, ինչպէս երբեք չէի աղաղակած, որ Աստուած լեցնէր իմ սիրտը Իր սիրով եւ գթասրտութեամբ Իր ժողովուրդին հանդէպ: Եւ Ան պատասխանեց ինծի: Առաջին անգամ կեանքիս մէջ ես հասկցայ, թէ ինչ կը նշանակէր ճշմարտապէս սիրել այն մարդիկը, որոնց ես կը ծառայէի:

Ոչ թէ ոմանք, այլ շատերը

Յիշեցե՛ք հետեւեալը. Պողոսը կը սիրէր Կորնթոսի եկեղեցին: Այս մասին կը վկայեն անոր խօսքերը. «Ինչո՞ւ. որովհետեւ չե՞մ սիրեր ձեզ: Ատիկա Աստուած գիտէ [որ կը սիրեմ]» (Բ. Կորնթացիս 11.11):

Նոյն նամակին ուրիշ հատուածի մը մէջ ան կը գրէ. «Վասնզի շատ նեղութենէ եւ սրտի տազնապէ ես ձեզի գրեցի շատ արցունքով. ոչ թէ որպէսզի դուք տրտմիք, հապա որպէսզի ճանչնաք այն սերը, որ ես առատօրէն ունիմ ձեր վրայ» (Բ. Կորնթացիս 2.4): Այս եկեղեցին ճիշդ չէր հասկնար զինք: Անոնց կարծիքով, անոր շտկումները եւ զգուշացումները սիրոյ բացակայութեան նշան էին եւ, անկասկած, հնարաւոր է, որ թէ՛ եկեղեցւոյ մէջ, թէ՛ այլ միջավայրի մէջ նման դէպքեր ըլլան: Շատերը ինծի պէս՝ խիստ, կոպիտ եւ կտրուկ են, առանց սիրոյ, հոգատարութեան եւ գթասրտութեան: Թերեւս այդպիսի մարդիկ ազդեցիկ են եւ համարձակ յայտարարութիւններ կ'ընեն, բայց ատիկա կը բխի ճիշդ ըլլալու ցանկութենէն: Շատերը իշխանութեան այդպիսի չարաշահման զոհ դարձած են: Այնուամենայնիւ, ասիկա չի նշանակեր, որ որեւէ շտկում եւ զգուշացում այսպիսին է: Պողոսին խօսքերը երբեմն ազդեցիկ, շտկող եւ յանդիմանական էին, սակայն ատոնք կը բխէին ջերմեռանդ սիրով լեցուն սրտէն:

Աւելի ուշ նոյն նամակին մէջ Պողոսը կը գրէ. «Ես ուրախութեամբ պի-

տի ծախսեմ անձս եւ իմ ամբողջ ունեցուածքը ձեր անձերուն համար, թէեւ կը թուայ, թէ որքան շատ կը սիրեմ ձեզ, այնքան քիչ դուք կը սիրէք զիս» (Բ. Կորնթացիս 12.15, NLT): Անոր հիասթափութիւնը ակնյայտ էր: Անոր սէրը եւ խորունկ մտահոգութիւնը անոնց բարեկեցութեամբ սխալ կ'ընկալուէր, եւ անոր սկսած էին վերաբերիլ որպէս խիստ առաջնորդ, որ, այսպէս ըսած, կ'ուզէր զանոնք կանոններու տակ պահել:

Այնպէս որ, կը խնդրե՛մ, հասկցե՛ք, որ թէեւ Պօղոսին խօսքերը այդ թանկ հաւատացեալներէն շատերու տկարութեան, նեղութիւններու, առողջական խնդիրներու եւ նոյնիսկ վաղաժամ մահերու պատճառի մասին խիստ էին, ատոնք կը բխէին այդ մարդոց հանդէպ ջերմեռանդ սէրէն:

Անոր խօսքերը շատ աւելի դիւրին պիտի ըլլար ընդունիլ, եթէ ան գրէր «ոմանք», բայց ան յատուկ շեշտեց՝ «շատերը»: Ինչպէ՞ս կրնանք անտեսել այն ճշմարտութիւնը, որ ան կը յայտնէ մեզի: Եթէ ատիկա կը վերաբերէր անոնց, մի՞թէ ատիկա չի վերաբերիր նաեւ մեզի: Մի՞թէ Աստուծոյ Հոգին Սուրբ գիրքին մէջ կը գրէր այդ մասին, եթէ ատիկա պարզապէս առանձին իրադարձութիւն մը ըլլար: Այդ խօսքերը կը վերաբերի՞ն մեզի այսօր: Պատասխանն է՝ անկասկած, այո՛:

Եւ վերջինը՝ այս հատուածին մէջ Պօղոսը պարզապէս չի խօսիր եկեղեցւոյ մէջ հաղորդութիւն ընդունելու մասին: Այս հատուածին մէջ կայ շատ աւելին, եւ մեզմէ շատերը (նաեւ ես՝ տարիներ շարունակ) բոլորովին չենք հասկցած այն: Մենք աւելի խորունկ պիտի ուսումնասիրենք անոր խօսքերուն իմաստը յաջորդ գլուխին մէջ:

գործնական քայլ

Կրկին կարդացե՛ք այս գլուխին սկիզբը, որպեսզի վերյիշե՛ք ձեր ներուժը: Յիշեցե՛ք այն յայտարարությունը, որ կ'ամփոփե՛ ձեր կոչումը. «Ինչպէս է Ան, նոյնպէս ալ մենք ենք այս աշխարհին մէջ» (Ա. Յովհաննէս 4.17): Դուք կանչուած էք Աստուծո՛մէ, որ Յիսուսին պէս այսօր ապրիք, ոչ թէ հանդերձեալ կեանքին մէջ:

Ինչպէ՞ս այս իրողութիւնը կը փոխէ ձեր մտածելակերպը ձեր առօրեայ կեանքին մասին: Թերեւս նախկինին, երբ տակաւին չէիք գիտակցեր ձեր ներուժը Աստուծոյ մէջ, դուք չէիք մտածեր, որ տկար էք: Այնուամենայնիւ, հիմա, երբ կը հասկնաք ատիկա, դուք կը համարէք, որ տկա՞ր էք, թէ՞ զօրաւոր: Եթէ ձեր պատասխանը՝ «տկար» է, դուք իմաստուն գնահատական տուիք ձեզի: Որովհետեւ Աստուած կ'ըսէ, որ Իր զօրութիւնը կը գործէ մեր տկարութեան մէջ (տե՛ս Բ. Կորնթացիս 12.9):

Աստուած պիտի վերածէ մեր տկարութիւնները զօրութեան, միայն եթէ խոնարհի՛նք Անոր առջեւ (տե՛ս Ա. Պետրոս 5.5): Խնդրեցե՛ք Աստուծո՛մէ խօսիլ ձեզի ձեր տկարութեան պատճառներուն մասին: Գրի առէք այդ պատճառները եւ խնդրեցե՛ք Անորմէ ցոյց տալ, թէ ինչպէս կրնաք ազատիլ ասորմէ: Ժամանակ յատկացուցե՛ք եւ գրի առէք Աստուծոյ ցուցմունքները ձեր տկարութիւնը զօրութեան վերածելու մասին:

ՄԷԿ

Կրկին կարդանք Պողոսին խօսքերը՝ ուղղուած իր սիրելի եկեղեցիին.

«Ահա թէ ինչո՛ւ պէտք է դուք ձեզ քննէք մինչեւ այս հացը ուտելը եւ այս բաժակը խմելը: Որովհետեւ եթէ դուք կ'ուտէք այս հացը կամ կը խմէք այս բաժակը՝ *առանց պատուելու Քրիստոսի մարմինը*, դուք կ'ուտէք եւ կը խմէք Աստուծոյ դատաստանը ձեր վրայ: Ահա թէ ինչո՛ւ ձեզմէ շատերը տկար ու հիւանդ, եւ ոմանք նոյնիսկ մահացած են: Բայց եթէ մենք քննէինք մենք մեզ, այս կերպով չէինք դատուեր Աստուծոյ կողմէն» (Ա. Կորնթացիս 11.28-32, NLT):

Այս գլուխին մէջ պիտի կեդրոնանանք Պողոսին՝ «առանց պատուելու Քրիստոսի մարմինը» խօսքերուն վրայ: Այս հատուածին մէջ կայ անմիջական հետաքրքրութիւն ներկայացնող երկու հանգամանք, որոնք կ'ուզեմ մատնանշել: Առաջինը՝ անոր խօսքերն ուղղուած չէին առանձին մարդոց: Ան այդ եկեղեցւոյ մէջ բոլորին կը դիմէր, այսինքն՝ կ'ուղղէր իր խօսքը Կորնթոս քաղաքի բոլոր հաւատացեալներուն:

Անցած քանի մը տասնամեակներուն ընթացքին մենք մեծ շեշտ դրած ենք Յիսուս Քրիստոսին հետ անձնական յարաբերութիւններու վրայ: Անկասկած, ասիկա քրիստոնէութեան անսահման կարեւոր եւ իրական կողմերէն մէկն է: Այնուամենայնիւ, մենք նոյն չափով չենք շեշտադրած մէկ մարմին ըլլալու հաւաքական իրողութիւնը՝ այն, որ բոլորս մէկ ենք Քրիստոսի մէջ: Կարեւոր է հաշուի առնել երկու ճշմարտութիւններն ալ՝ առանց անտեսելու մէկը կամ միւսը:

Երկրորդը՝ Աստուածաշունչի «Նոր Քինկ Ճէյմս» թարգմանութեան մէջ այս խօսքը քիչ մը ուրիշ ձեւով գրուած է: Շատերուն տկար ու հիւանդ ըլլալու եւ վաղաժամ մահուան պատճառը անիկա է, որ անոնք չեն «որոշեր (կամ՝ զանազաներ) Տիրոջ մարմինը» (խս. 29, NKJV): Երկու թարգմանութիւնները միասին դիտարկելը աւելի յստակ կը դարձնէ Պօղոսին ըսելիքը:

Այս հատուածը հասկնալու համար մենք պէտք է մէկ գլուխ ետ շրջինք Ա. Կորնթացիս գիրքին մէջ եւ կարդանք Պօղոսին նկարագրութիւնը Իսրայէլի՝ Եգիպտոսէն ազատելու եւ անապատին մէջ ըլլալու մասին: Իր պատմութեան կէսէն ան կը գրէ, թէ այս մասին ինչո՞ւ կորնթացիներուն կը յիշեցնէ. «Այդ բաները կատարուեցան անոնց հետ՝ որպէս օրինակներ մեզի համար: Ատոնք գրուեցան, որ *զգուշացնեն մեզ՝ դարերու վերջաւորութեան ապրողներուս*» (Ա. Կորնթացիս 10.11, NLT): Պօղոսը պարզապէս պատմութեան դաս չի տար. ան արդիական զգուշացում կ'ընէ՝ մեզ վերահաս դատաստանէն պաշտպանելու համար:

Առաքելը կը պատմէ անապատին մէջ Իսրայէլի փորձառութեան մասին, նախ՝ նկարագրելով այն ամէնը, ինչ որ Աստուած կ'ընէր անոնց համար Իր ուխտին հիման վրայ: Ան կը պնդէ, որ *բոլորը* կ'առաջնորդուէին Աստուծոյ Հոգիով (ամպով), *բոլորը* փրկուեցան Եգիպտոսէն (որ աշխարհի խորհրդապատկերն է), *բոլորը* մկրտուեցան (մենք մկրտուեցանք մէկ մարմինի մէջ), *բոլորը* կերան նոյն հոգեւոր կերակուրը, եւ *բոլորը* խմեցին նոյն հոգեւոր ջուրը (Աստուծոյ խօսքը). այս հատուածին մէջ ակնյայտօրէն կը շեշտադրուի «բոլորը» բառը: Ատորմէ յետոյ ան կ'ամփոփէ՝ ըսելով, որ այն վէմը, որ կ'երթար անոնց հետ, Քրիստոսն էր: Անոր ըսելիքը ակնյայտ է. անոնք մէկ մարմին էին եւ կը պատկանէին մէկ Աստուծոյ, Որ ուխտ կնքած էր անոնց հետ եւ կը պահէր այդ ուխտը: Մենք կը տեսնենք ակնյայտ զուգահեռներ մեր՝ Քրիստոսի մարմինին հետ:

Այնուհետեւ Պօղոսը տրտմութեամբ կը գրէ. «Աստուած չհաւնեցաւ անոնցմէ շատերը, եւ անոնց մարմինները ցրուած ինկան անապատին մէջ» (10.5, NLT): Աստուած խորապէս կը սիրէ մեզ՝ շատ աւելի, քան հնարաւոր է պատկերացնել: Ճշմարտութիւնը այն է, որ մենք երբեք չենք կրնար ինչ որ բան մը ընել, որ ստիպենք Ձինք աւելի շատ կամ աւելի քիչ սիրելու մեզ: Ասիկա գիտնալով հանդերձ՝ կարելոր է նշել նաեւ, որ մենք պատասխանատու ենք այն բանին համար, թէ որքանով Ան կը հաւնի մեզ, կամ որքանով մենք կը հաճեցնենք Ձինք: Ահա թէ ինչո՞ւ Պօղոսը ուրիշ խօսքի մը մէջ կը պնդէ, որ «մեր նպատակը Ձինք հաճեցնելն է» (Բ. Կորնթացիս 5.9, NLT): Ասիկա պէտք է ըլլայ ձեր, իմ եւ իւրաքանչիւր հաւատացեալի գերագոյն նպատակը:

Ինչո՞ւ այդ մարդիկ, որոնք կ'ապրեին Հին կտակարանի ժամանակաշրջանին մէջ, մահացան՝ չմտնելով այն խոստումներուն մէջ, որոնք Աստուած տուած էր անոնց: Պօղոսը կը մատնանշէ հինգ մեղք, որոնք դարձան անոնց անկման պատճառը: Չար բաներ ցանկալը (յամառօրէն կամենալ այն, ինչ որ Աստուծոյն չէ կամ չի մտներ Անոր մատակարարման մէջ), կռապաշտութիւնը, սեռական անբարոյութիւնը, զԱստուած փորձելը եւ տրտունջը: Քանի մը խօսք յետոյ Պօղոսը կը գրէ.

«Դուք ողջամիտ մարդիկ էք: Անձամբ դո՛ւք որոշեցէք, թէ արդեօ՞ք այն, ինչ որ ես կ'ըսեմ, ճիշդ է: Երբ կ'օրհնենք Տիրոջ սեղանի բաժակը, մի՞թէ մենք չենք բաժնեկցիր Քրիստոսի արեան: Եւ երբ կը կոտորենք հացը, մի՞թէ մենք չենք բաժնեկցիր Քրիստոսի մարմինին: Ու *թէեւ մենք շատ ենք*, բոլորս կ'ուտենք մէկ հացէ՝ ցոյց տալով, որ *մենք մէկ մարմին ենք*: Մտածեցէք Իսրայէլի ժողովուրդին մասին: Չէ՞ որ անոնք *մէկ* էին, երբ կ'ուտէին զոհերը զոհասեղանին քով» (Ա. Կորնթացիս 10.15-18, NLT):

Այս հատուածին մէջ Պօղոսը կրկին կը խօսի Տիրոջ Ընթրիքին կամ հաղորդութեան մասին, եւ ակնարկով ամբողջական ձեւով ցոյց կու տայ այն խնդիրը, որուն մասին կը խօսի Ա. Կորնթացիս 11-րդ գլուխին մէջ՝ *Տիրոջ մարմինը չորոշելը*: Ան կ'ընդունի, որ եկեղեցին բաղկացած է բազմաթիւ անհատներէ, եւ որ իւրաքանչիւրս անձնական յարաբերութիւն ունի Աստուծոյ հետ Յիսուս Քրիստոսի միջոցով: Այնուամենայնիւ, այլ առումով, Աստուծոյ համար մենք *մէկ* ենք: Ասկա Պօղոսին առանցքային փաստարկն է: Մենք Քրիստոսի *մարմինն* ենք. մենք *մէկ* ենք, ինչպէս Իսրայէլը:

Այնպէս որ, այժմ պէտք է հարցնենք. «Արդեօ՞ք տկար, հիւանդ եւ վաղաժամ մահուան դատաստանը կը վերագրուէր ամէն մէկ հաւատացեալի, որ մեղք գործած էր, թէ՞ Կորնթոսի մէջ գտնուող Քրիստոսի ամբողջ մարմինը կը կրէր այդ հետեւանքները՝ իր անդամներէն մէկ քանիներու արարքներուն պատճառով: Սխալ մի՛ հասկնաք ինձի. ես կ'ուզեմ յստակ շեշտել, որ գիտակցաբար գործուած մեղքին համար գոյութիւն ունին ծանր անձնական հետեւանքներ: Այնուամենայնիւ, այժմ մենք պէտք է կեդրոնանանք այն ճշմարտութեան վրայ, որ Պօղոսը կը յայտնէ: Ան կը դիմէ հաւատացեալներուն՝ որպէս մարմին, որպէս եկեղեցի, որպէս մէկ ժողովուրդ:

Այս պարագային, խօսքը Կորնթոս քաղաքին մէջ գտնուող Քրիստոսի մարմինին մասին էր:

Մէկ մարդու ազահութենէն դրդուած արարքը

Վերադառնանք իսրայէլցիներուն, որոնք օրինակ են մեզի համար: Սակայն մէկ սերունդ առաջ երթանք եւ խօսինք Յեսուի կողմէն առաջնորդուող ժողովուրդին մասին: Հաւատացեալներու այս մարմինը խիզախօրէն անցաւ Յորդանան գետը եւ գնաց դէպի իրենց խոստացուած երկիրը: Անոնց սկզբնական առաջադրանքը վիթխարի Երիքով քաղաքը կործանելն էր: Կը թուար՝ ատիկա անկարելի էր, սակայն Աստուած մէկ անգամ եւս ցոյց տուաւ Իր մեծ զօրութիւնը: Աստուած յստակ ցուցմունք տուաւ Յեսուին, որոնցմէ մէկը հետեւեալն էր.

«Երիքովը եւ ամէն ինչ աստոր մէջ պէտք է ամբողջութեամբ կործանի՝ որպէս զոհաբերութիւն Տիրոջը... Մի՛ վերցնէք որեւէ բան այն ամէնէն, ինչ որ առանձնացուած է կործանման համար... Այն ամէնը, ինչ որ պատրաստուած է արծաթէ, ոսկիէ, պղինձէ եւ երկաթէ, պէտք է սուրբ ըլլայ Տիրոջ համար, պէտք է տարուի Անոր գանձարանը» (Յեսու 6.17-19, NLT):

Երիքովի աւարը ամբողջութեամբ պէտք է նուիրաբերուէր Տիրոջ գանձարանին: Այն բացարձակապէս կը պատկանէր Անոր, եւ աստոր ոչ մէկ մասը պէտք է ծառայէր ինչ որ մէկու մը շահերուն:

Յարձակումը սկսաւ, եւ իսրայէլցիները անպարտելի էին: Անոնք սուրով անցուցին ամէն ինչ այդ քաղաքին մէջ՝ տղամարդոց եւ կանանց, երիտասարդներուն եւ ծերերուն, խոշոր եղջերաւոր անասուններուն, ոչխարներուն, այծերուն եւ աւանակներուն: Ապա այրեցին ամբողջ քաղաքը եւ ամէն ինչ աստոր մէջ՝ բացի ոսկիէ, արծաթէ, պրոնզէ եւ երկաթէ իրերէն, որոնք պահուեցան Տիրոջ գանձարանին համար: Չարմանալի է, որ Իսրայէլցիներէն ոչ ոք սպաննուեցաւ եւ վիրաւորուեցաւ:

Մենք պէտք է յիշենք, որ Երիքովը այն քաղաքներէն էր, որ նախորդ սերունդը լրտեսած էր, եւ որուն մասին անոնք զեկուցած էին Մովսէսին. «Այն երկրին մէջ բնակող ժողովուրդը զօրաւոր է, եւ քաղաքները պարսպաւոր եւ խիստ մեծ են» (Թուոց 13.29): Այդ սերունդի երեխաները, որոնք մեծցած էին, յարձակեցան այս պարսպաւոր քաղաքին վրայ եւ լիովին կործանեցին այն, նոյնիսկ մէկ մարդ Իսրայէլի բանակէն չսպաննուեցաւ: Իսրայէլը օժտուած էր գերբնական զօրութեամբ: Այդուհանդերձ, գրուած է.

«Բայց *Իսրայէլը* խախտեց հրահանգները Տիրոջ համար առանձնացուած իրերուն վերաբերեալ: Աքար անունով մարդ մը գողցաւ այդ ընծայուած իրերէն քանի մը հատ, եւ Տէրը շատ բարկացաւ *իսրայէլցիներուն* վրայ» (Յեսու 7.1, NLT):

Ուշադրութիւն դարձուցէք, որ գրուած չէ. «Բայց *Աքար անունով մարդ* մը խախտեց հրահանգները»: Ո՛չ, այլ գրուած է. «*Իսրայէլը* խախտեց հրահանգները»: Եւ հետաքրքրական է, որ կրկին գրուած է. «Տէրը շատ բարկացաւ *իսրայէլցիներուն* վրայ»: Գրուած չէ. «Տէրը շատ բարկացաւ *Աքարին* վրայ»: Իսրայէլը մէկ էր, եւ երբ անդամներէն մէկը մեղանչեց՝ ազահութեան պատճառով խախտելով Աստուծոյ հրահանգները, պատասխանատուութիւնը դրուեցաւ ամբողջ Իսրայէլի վրայ:

Այդ արարքին ողբերգական հետեւանքը շուտով յստակ երեւցաւ: Յաջորդ քաղաքը, որ պէտք էր գրաւել, Գային էր: Այն շատ աւելի փոքր էր, եւ առաջնորդները ըսին. «Բոլոր ժողովուրդը պէտք չէ վեր ելլէ, միայն երկու կամ երեք հազար մարդ կը բաւէ Գային զարնելու համար: Բոլոր ժողովուրդը հոն տանելով մի՛ յոգնեցներ, քանզի անոնք քիչուոր են»: Ուստի ժողովուրդէն երեք հազարի չափ մարդ հոն գացին» (Յեսու 7.3,4):

Երիքովի պատերազմին մէջ ներգրաւուած էր մօտաւորապէս վեց հարիւր հազար զինուոր: Ասիկա ցոյց կու տայ, թէ որքան աննշան էր Գայի քաղաքը Երիքովին համեմատ: Այնուամենայնիւ, գրուած է.

«Բայց Գայիի մարդոց առջեւէն փախան: Եւ Գայիի մարդիկը անոնցմէ երեսունվեց մարդու չափ զարկին, քանզի զանոնք դրանը առջեւէն մինչեւ Սեբարիմ հալածեցին ու զառիվայրին վրայ զանոնք զարկին» (Յեսու 7.4,5):

Արդեօ՞ք ասիկա նոյն ժողովուրդը չէր, որ կարճ ժամանակ առաջ կործանեց շատ աւելի կարեւոր եւ ազդեցիկ Երիքովը, եւ նոյնիսկ մէկ զոհ չունեցաւ: Այնուամենայնիւ, իսրայէլցի զինուորները դարձան տկար, նահանջող եւ պարտուած: Անոնք ենթարկուած էին քրիպտոնաքարի ազդեցութեան:

Ցաւօք, սպաննուեցաւ երեսունվեց մարդ, այնինչ Երիքովի մէջ անոնք տկար չէին. ոչ ոք նահանջեց, եւ ոչ ոք վիրաւորուեցաւ ու սպանուեցաւ:

Եկէ՛ք մտածենք այս մասին: Աքարը մեղանչեց, բայց անոր եւ անոր ընտանիքին ոչինչ պատահեցաւ: Սակայն Գայի քաղաքի մարտէն յետոյ եօթանասուներկու ծնողներու որդիները տուն չվերադարձան, երեսունվեց կանայք մնացին առանց ամուսիններու, եւ բազմաթիւ երե-

խաներ՝ առանց հայրերու: Եւ ասիկա տեղի չունեցաւ անոնց որդիներուն, ամուսիններուն եւ հայրերուն արարքին պատճառով. անոնք չէին մեղանչած: Ասիկա տեղի ունեցաւ ուրիշ ընտանիքի մը պատկանող տղամարդու մը արարքին պատճառով:

Իսրայէլը վախէն կաթուածահար եղած էր: Յետուն եւ բոլոր առաջնորդները երեսնիվայր ինկան Աստուծոյ առջեւ: Կրնա՞ք պատկերացնել: Անոնք շփոթած էին, տարակուսանքի մէջ էին եւ կ'աղաղակէին. «Ինչո՞ւ համար այս ժողովուրդը Յորդանանի ասդիի կողմը անցուցիր, որպէս զի մեզ Ամօրհացիներուն ձեռքը մատնես ու մեզ կորսնցնե՞ս» (Յեսու 7.7):

Լսեցէ՛ք Աստուծոյ պատասխանը. «Ոտքի վրայ ելի՛ր. ինչո՞ւ համար այսպէս երեսիդ վրայ ինկեր ես. Իսրայէլ մեղք գործեց, եւ Իմ հրամայած ուխտս զանց ըրին» (Յեսու 7.10,11):

Աստուած չ'ըսեր. «Ձեր մէջ մարդ մը կայ, որ մեղանչած է»: Ո՛չ, Ան կրկին կը յայտարարէ. «Իսրայէլը մեղք գործեց»: Ոչ ոք գիտէր, որ Աքարը մեղք գործած էր: Ոչ ոք յանցակից եղած էր անոր ազահութեան: Այնուամենայնիւ, ամբողջ ժողովուրդը՝ որպէս մէկ մարմին, վնաս կրեց Աքարին հոգեւոր քրիպտոնաքարէն: Յետուն յայտնաբերեց մեղանչողը եւ ընդդիմացաւ անոր: Աքարը պատասխանեց.

«Իրացնէ ես Իսրայէլի Տէր Աստուծոյն դէմ մեղք գործեցի. ահա ասանկ ու անանկ ըրի: Այսինքն աւարին մէջ աղուոր բանուած Բաբելոնի վերարկու մը ու երկու հարիւր սիկլ արծաթ եւ յիսուն սիկլի ծանրութեամբ ոսկի լեզու մը տեսայ ու ցանկանալով առի»: (Յեսու 7.20,21):

Յետուն եւ առաջնորդները արագօրէն պատժեցին Աքարին յանցանքը, եւ անմիջապէս յետոյ գրուած է. «Տէրը իր սաստիկ բարկութենէն դադրեցաւ» (Յեսու 7.26):

Մէկ օրինակ

Այս հինկտակարանեան միջադէպը կը նկարագրէ Պօղոսին ուղերձը Կորնթոսի եկեղեցիին: Ան կը գրէ. «Ահա թէ ինչու ձեզմէ շատերը տկար ու հիւանդ են, եւ ոմանք նոյնիսկ մահացած են»: Յաջորդ գլուխին մէջ մենք պիտի տեսնենք, որ քանի մը մարդոց կողմէն գործուած մեղքը ընդհանուր եկեղեցիին վրայ կ'ազդէր, եւ ոչ միայն՝ մեղանչողներուն:

Երբեք հարց մը ծագա՞ծ է այն մասին, թէ ինչո՞ւ բազմաթիւ հաւատա-

ցեալներ մեր եկեղեցիներուն մէջ տկար են եւ ինչո՛ւ մշտապէս կը տառապին հիւանդութիւններէ ու տկարութիւններէ: Այդ թանկագին մարդիկ չեն կրնար բժշկուիլ իրենց ախտերէն, իսկ ոմանք նոյնիսկ ժամանակէն շուտ կը մահանան: Ի՞նչն է պատճառը, որ մեր եկեղեցական համայնքներուն մէջ կան այդքան շատ միայնակ մայրեր, որոնք կ'ապրին սնունդի կտրօններով եւ հազիւ կրնան իրենց կարիքները հոգալ: Ինչո՞ւ այդքան շատ հաւատացեալներ գործազուրկ են, ինչո՞ւ անոնք կ'ապրին խիստ սակաւ միջոցներով եւ ինչո՞ւ կախուածութեան մէջ են կառավարութեան օժանդակութենէն:

Այս նեղութիւններու ցուցակը անկարելի է ամբողջացնել, քանի որ ատոնք գրեթէ անթիւ են:

Սողոմոնի օրերուն չկար նոյնիսկ մէկ մարդ, որ անապահովութեան նպաստ կը ստանար կամ գործազուրկ էր: Գործք առաքելոց գիրքին մէջ ոչ մէկ կարիք կար, եւ մարդիկ արագօրէն կը բժշկուէին ախտերէն, հիւանդութիւններէն եւ տկարութիւններէն: Ինչո՞ւ նոյնը տեղի չ'ունենար այսօր: Հնարաւո՞ր է, որ քանիներու մեղքերը կ'ազդեն շատերուն վրայ: Հնարաւո՞ր է, որ տեղի կ'ունենայ նոյնը, ինչ որ Իսրայէլին հետ կատարուեցաւ Գայի քաղաքին մէջ:

Կրկին, կարեւոր է շեշտել, որ գիտակցաբար գործած մեղքը հետեւանքներ ունի: Ի վերջոյ, Աքարը դատաստանի ենթարկուեցաւ, սակայն անոր մեղքին պատճառով ամբողջ Իսրայէլը հոգեւոր քրիպտոնաքարի բախեցաւ: Յոյսով եմ, որ մինչ մենք կը շարունակենք բացայայտել այս իրողութիւնը, գիտակցումը այն մասին, որ դուք մարմինի անդամ էք, պիտի աւելնայ եւ պիտի դառնայ նոյնքան ուժգին, որքան գիտակցումը այն մասին, որ դուք ունիք անձնական յարաբերութիւններ Յիսուսին հետ, եւ դուք պիտի հասկնաք, որ ձեր գործողութիւնները՝ որպէս մարմինի անդամ, մարմինի միւս անդամներուն համար կրնան բերել կա՛մ օրհնութիւններ, կա՛մ բացասական հետեւանքներ:

Մինչեւ ւարտելը, կրկին կ'ուզեմ շեշտել, որ ազատագրող ճշմարտութիւնները յաճախ կրնան բացասական թուալ, եւ հարցում մը կրնայ դիւրաբար սողոսկել մեր միտքը. «Կ'արժէ՞ արդեօք անդրադառնալ այս թեմային»: Սակայն, ի վերջոյ, երբ ճշմարտութիւնը կը յայտնուի, այն ազատ կ'արձակէ եւ ազատութիւն կը բերէ հոն, ուր նախկինին խռչնդոտներ կային:

Ինչպէս Յիսուս ըսաւ. «Եւ ճշմարտութիւնը պիտի ճանչնաք, եւ ճշմարտութիւնը պիտի ազատէ ձեզ» (Յովհաննէս 8.32):

գործնական քայլ

Հաւանաբար, դուք դիտած էք «Կլատիաթըր» ֆիլմը եւ կը յիշէք, թէ ինչպէ՛ս հրամանատար Մաքսիմուսը պոռաց՝ «միասի՛ն մնացէք, մէկ մարդու պէս», եւ տեսաք այդ ռազմավարութեան յաղթանակները: Գաղտնիք չէ, որ ամենաարդունաւէտ զինուորական ռազմավարութիւնը «պառակտելն ու տիրելն» է:

Յիսուս շատ լաւ գիտէր ասիկա. Ան կը սորվեցնէր, որ բաժնուած տունը կանգուն չի մնար (տե՛ս Մատթէոս 12.25): Երբ Քրիստոսի մարմինը պառակտուած է նուիրման բացակայութեան պատճառով, այն կը տկարանայ՝ որպէս մէկ ամբողջութիւն: Կը նշանակէ՝ մեծագոյն բաներէն մէկը, որ դուք կրնաք ընել համաշխարհային չափանիշով եկեղեցիին վրայ ազդելու համար, ձեր կեանքը բոլորովին Յիսուսին գործին նուիրելն է, ինչ որ կը նշանակէ՝ ձեր առօրեայ գործերը Աստուծոյ նուիրել՝ որպէս երկրպագութիւն:

Աստուած կ'ուզէ ձեր ամբողջ կեանքը, ոչ թէ միայն ձեր կիրակի առաւօտները: Եթէ դուք չէք ապրիր ձեր ամբողջ կեանքը (աշխատանքը, ընտանիքը, նախասիրութիւնները եւ այլն)՝ որպէս Աստուծոյ երկրպագութիւն, ապաշխարեցէ՛ք այսօր: Խնդրեցէ՛ք Յիսուսէն, որ ցոյց տայ ձեզի, թէ ինչպիսին կրնայ ըլլալ երկրպագուի մը կենսաոճը ձեզի համար: Գրի առէք այն, ինչ որ Ան ցոյց կու տայ կամ կ'ըսէ ձեզի: Խնդրեցէ՛ք Աստուծոյ Հոգիէն նորովի լեցնել ձեզ եւ ամբողջութեամբ նուիրեցէ՛ք ձեր կեանքը Անոր:

ՎԱՐԱԿԻՉ ՔՐԻՊՏՈՆԱՔԱՐ

«Այն, թե ինչպես Աստուած կազմած է մեր մարմինները, օրինակ է, որուն միջոցով մենք կրնանք հասկնալ մեր միասնական կեանքը՝ որպէս եկեղեցի» (Ա. Կորնթացիս 12.25, MSG):

Մտածեցէք ձեր մարմինն մասին. բոլոր մասերը կապակցուած են իրար հետ, նոյնիսկ եթէ ատոնք անմիջապէս իրար կողքին չեն: Ձեր ոտքի ճկոյթը կապակցուած է ձեր քիթին հետ, ձեր լեարդը կապակցուած է ձեր ողնաշարին հետ եւ այլն: Գոյութիւն չունի մարմնի այնպիսի մաս, որ կրնայ գոյատեւել առանց միւսներուն: Այլապէս աստիկա ձեր մարմնի մասը չէր ըլլար:

Երբ ձեր մարմնի մասերէն մէկը կը ցաւի, մի՞թէ միւս անդամները չեն տառապիր ատոր հետ: Եթէ մարդը կը վարակուի հարբուխով կամ ինչ որ վիրուսով, ի վերջոյ հիւանդութիւնը կ'ազդէ անոր ամբողջ մարմինն վրայ՝ ախորժակի կորուստի, ուժերու պակասի, մշուշոտ մտքի եւ ցաւերու տեսքով: Իսկ եթէ մարմնի մէկ մասը պատիւ կը ստանայ, կ'ուրախանան բոլոր մասերը: Մէջքի կամ գլուխի մաշկի մերսման վերջաւորութեան մարմինը ամբողջութեամբ թեթեւութիւն եւ հաճոյք կը զգայ. աստիկա հաճելի է ամբողջ մարմինն:

Որպէս եկեղեցի՝ մենք մէկ ենք: Իսրայէլը, որ օրինակ է մեզի համար, մէկ էր, եւ Աքարի միտումնաւոր գործած մեղքը ազդեց ոչ միայն անոր վրայ, այլեւ ամբողջ ազգին: Իսրայէլի բանակը անպարտելի էր Երիթովի դէմ պատերազմելու ժամանակ, սակայն ընդամէնը քանի մը օր յետոյ նոյն բանակը տկարացաւ, ջախջախիչ պարտութիւն կրեց, նա-

հանջեց իր թշնամիէն եւ ցաւալի կորուստներ ունեցաւ: Փոխաբերական իմաստով, ազգը յայտնուեցաւ հոգեւոր քրիպտոնաքարի ազդեցութեան ներքոյ: Մի՞թէ նոյնը չէր կատարուեր Կորնթոսի եկեղեցւոյ մէջ: Աւելի մանրամասն ուսումնասիրութիւնը կը յայտնէ մեզի պատասխանը:

Ինչպէս ես արդէն հպանցիկ կերպով նշեցի, առաջին եկեղեցւոյ Տիրոջ ընթրիքը տեղի կ'ունենար բոլորովին ուրիշ ձեւով, քան այսօր: Անոնց ժամանակ այն աւելի շատ ճաշկերոյթի կը նմանէր, իսկ այսօր՝ արարողութեան: Այնպէս որ, այն վարուելակերպը, որուն մասին կը խօսի Պօղոսը, խիստ կը տարբերէր մեր ներկայ սովորութիւններէն: Այդուհանդերձ, կարելորդ այդ վարուելակերպի արմատն էր:

Խնդիրը հետեւեալն էր. որոշ մարդիկ Կորնթոսի եկեղեցւոյ մէջ չէին սպասեր բոլոր անդամներու գալուն: Աւելի կանուխ եկողները կերուխում կ'ընէին եւ կը զինովնային՝ հաւանաբար, օգտուելով լաւագոյն սնունդէն եւ զինիէն, իսկ ուշ եկողներուն կը հասնէին մնացորդները: Աստուածաշունչի ուսուցիչներէն եւ աստուածաբաններէն շատերը համոզուած են, որ կ'անտեսուէին աւելի աղքատ եւ ցած խաւի մարդիկ: Իսկ հիմա, կարդացէ՛ք Պօղոսին խօսքերը.

«Որովհետեւ ձեզմէ *ոմանք* կ'աճապարեն ուտելու իրենց կերակուրը՝ առանց բաժնեկցելու միւսներուն հետ: Վերջաւորութեան, ոմանք անօթի կը մնան, մինչդէռ միւսները կը զինովնան... Որովհետեւ եթէ դուք կ'ուտէք այս հացը եւ կը խմէք այս բաժակը՝ առանց պատուելու Քրիստոսի մարմինը, դուք կ'ուտէք եւ կը խմէք Աստուծոյ դատաստանը ձեր վրայ: Ահա թէ ինչու ձեզմէ *շատերը* տկար ու հիւանդ, եւ ոմանք նոյնիսկ մահացած են» (Ա. Կորնթացիս 11.21,29,30, NLT):

Վերոյիշեալ խօսքին մէջ ընդգծած են երկու բառ՝ *ոմանք* եւ *շատերը*: Ակնյայտ է, որ Պօղոսը կը խօսի *ոմանց* մեղքի մասին (խօսք 21), որուն հետեւանքը, սակայն, այն էր, որ *շատերը* տկար էին, հիւանդ էին եւ վաղաժամ կը մահանային (խօսք 30): Այս իրավիճակը նոյնն էր, ինչ որ Աքարի պարագային. մարդիկ, որոնք միտումնաւոր անհնազանդ չէին Աստուածային հրահանգներուն, կրեցին այն դատաստանը, որ եկաւ մէկ մարդու գիտակցուած անհնազանդութեան պատճառով:

«Մին»՝ Նոր կտակարանի մեկնութիւնը կը նշէ.

«Պէտք չէ ենթադրել, որ հիւանդները եւ մահացողները անձամբ ինչ որ մեղք մը գործած էին, այլ հնարաւոր է, որ, հինկտակարանեան պատուհասներու մեծամասնութեան

պէս, անոնք կու գային Աստուածային դատաստանի հետեւանքով, այս պատուհասը նոյնպէս եկած էր ամբողջ համայնքին վրայ՝ առանց խտրութեան»:

Նմանատիպ իրադարձութիւն

Աւելի վաղ Կորնթացիներուն ուղղուած նամակին մէջ Պօղոսը կը խօսի ուրիշ մեղքի մը մասին, որ նոյնպէս կ'ազդէր ամբողջ եկեղեցական համայնքին վրայ: Ան կը սկսի՝ ըսելով. «Հաւատալս չի գար այն լուրին, որ ձեր միջեւ սեռական անբարոյութիւն կայ» (Ա. Կորնթացիս 5.1, NLT): Իրավիճակը հետեւեալն էր. մարդ մը, որ կը դաւանէր, թէ Յիսուս Քրիստոսի հետեւորդ էր, այսինքն՝ Աստուծոյ զաւակ, եղբայր Քրիստոսին մէջ եւ Քրիստոսի մարմինի անդամ, կ'ապրէր սեռական մեղքի մէջ:

Պօղոսի յանդիմանութիւնը ուղղուած չէր միայն այդ մեղքը գործող մարդուն: Ամբողջ եկեղեցական համայնքը եղբայր եւ եկեղեցւոյ անդամ կը համարէր զինք, սակայն առաջնորդները զինք չէին յանդիմաներ մեղքի մէջ, այլ կ'անտեսէին ատիկա:

Ինչո՞ւ անոնք կ'անտեսէին այդ մարդուն վարքը: Ամենայն հաւանականութեամբ, չէին ուզեր վիրաւորել զինք՝ յանդիմանելով անոր մեղքը: Թերեւս այդ մարդը ազդեցիկ անձնաւորութիւն էր, պետական պաշտօնեայ, հանրայայտ մարզիկ կամ խոշոր նիւթական նուիրատուութիւններ կ'ընէր: Կորնթոսը մեծ ու ազդեցիկ քաղաք մըն էր, եւ արուեստի խոշոր կեդրոն էր: Հնարաւոր է, որ ան սիրուած դերասան էր իրենց «Հոլիուտի մէջ», հանրայայտ երգիչ էր, որուն երգերը կը գրաւէին առաջին հորիզոնականները, կամ մեներգիչ էր՝ եկեղեցւոյ փառաբանութեան խումբի զլխաւոր անդամներէն մէկը: Այս խօսքին մէջ նման բան գրուած չէ, բայց մենք կրնանք ենթադրել, որ անոր հեռանալը բացասաբար պիտի ազդէր եկեղեցւոյ վրայ:

Թերեւս կային այլ պատճառներ: Հնարաւոր է՝ անոնք կը մտածէին, որ եթէ ան հեռանար, այլեւս չէր լսեր Աստուծոյ խօսքը: Անոնց փաստարկը կրնար ըլլալ հետեւեալը. «Աւելի լաւ է՝ ան մեզի հետ մնայ եւ լսէ Աւետարանը, քան աշխարհ երթայ եւ ընդհանրապէս ոչինչ լսէ»: Թերեւս անոնց զլխաւոր նպատակը եկեղեցի յաճախողներու թիւը չպակասեցնելն էր, եւ այդ մարդուն յանդիմանութիւն ուղղելը պիտի խանգարէր այդ նպատակը: Անոնք կրնային ունենալ փաստարկ մը եւս. «Ան մանուկ քրիստոնէայ է: Եկէք ժամանակ տանք անոր»: Համոզուած եմ՝ անոնք յոյս ունէին, որ ի վերջոյ ան «պիտի հասկնար» ամէն ինչ եւ պիտի ձգէր մեղքը:

Պօղոսը անտարակոյս կը պատուիրէ Կորնթոսի եկեղեցւոյ առաջնորդներուն՝ հեռացնել այդ մարդը: Թոյլ տուէք թուարկել անոր պնդումները.

- Դուք պէտք է հեռացնէք զինք ձեր միջէն (Ա. Կորնթացիս 5.2, NLT):
- Դուք պէտք է վտարէք զինք (Ա. Կորնթացիս 5.5, NLT):
- Մէկ կողմ ձգեցէ՛ք հին խմորը՝ հեռացնելով այդ չար մարդը ձեր միջէն (Ա. Կորնթացիս 5.7, NLT):
- Դուք պէտք է հեռացնէք չար մարդը ձեր միջէն (Ա. Կորնթացիս 5.13, NLT):

Պօղոսը մէկ փոքրիկ գլուխի մը մէջ չորս անգամ խիստ արգելք կը դնէ այս հարցին վերաբերեալ: Մտածեցէ՛ք այս մասին. Ա. Կորնթացիս 5-րդ գլուխին մէջ միայն չորս անգամ առաքեալը կը պատուիրէ այս հաւատացեալներուն՝ հեռացնել եկեղեցիէն այդ մարդը, եւ մէկ անգամ ան խստօրէն կ'ըսէ. «Վտարեցէ՛ք զինք»: Ինչպիսի՞ խիստ խօսք: Յիշեցէ՛ք, որ Պօղոսը կը սիրէր այդ եկեղեցին, եւ նոյնպէս՝ այդ մարդը:

Թերեւս վիճարկէք ատիկա. «Արդեօ՞ք ան կը սիրէր այդ մարդը: Չեմ կարծեր»: Բայց մենք գիտենք, որ ան կը սիրէր այդ մարդը, քանի որ Աստուածաշունչին մէջ ոչինչ կրնայ գրուիլ՝ առանց սիրոյ դրդապատճառի: Աստուած ոգեշնչած է ամբողջ Սուրբ գիրքը, եւ Աստուած սէր է (տե՛ս Բ. Տիմոթէոս 3.16 եւ Ա. Յովհաննէս 4.8):

Կը խնդրեմ յիշել, որ այս պատուէրը ուղղուած չէր միայն Կորնթոսի եկեղեցւոյ առաջնորդներուն, այլ՝ ամբողջ եկեղեցիին: Պօղոսը հետեւողականօրէն կը պատուիրէր, որ իր նամակները ընթերցուէին ամբողջ եկեղեցիին համար: Ինչո՞ւ Պօղոսը այդքան անդրդուելի եւ խիստ էր այս հարցին մէջ: Պատասխանը հետեւեալ պնդման մէջ է. «Զէ՞ք հասկնար, որ այս մեղքը նման է փոքրիկ թթխմորի, որ կը տարածուի ամբողջ խմորին մէջ» (Ա. Կորնթացիս 5.6, NLT): Անգամ մը եւս մենք կը տեսնենք, որ այդ մեղքի հետեւանքը ամբողջ համայնքը պիտի կրէր, ոչ թէ միայն այդ մարդը: Կարդացէ՛ք ատոր յաջորդող խօսքերը.

«Ազատեցէ՛ք հին «թթխմորէն»՝ հեռացնելով այս չար մարդը ձեր մէջէն: Այդ պարագային դուք պիտի ըլլաք թարմ խմորի պէս՝ պատրաստուած առանց թթխմորի, ինչպիսին որ իրականութեան մէջ էք: Քրիստոսը՝ մեր *Ձատիկի Գարնուկը*, զոհաբերուած է մեզի համար: Այնպէս որ, եկէք նշենք այս տօնը ոչ թէ անօրինութեան եւ չարի հին հացով, այլ՝ անկեղծութեան եւ ճշմարտութեան նոր հացով» (Ա. Կորնթացիս 5.7,8, NLT):

Պօղոսը կրկին կը խօսի հաղորդութեան մասին, որ անոր գլխաւոր թեման էր: Իսրայէլի Չատիկի տօնը կը կառուցուէր զոհաբերուող գառնուկին շուրջ, իսկ մեր անբիծ զոհաբերուող Գառնուկը Յիսուսն է: Ինչպէս որ առաջին Չատիկը կը մատնանշէր Իսրայէլի ազատութիւնը Եգիպտոսի ստրկութենէն, այնպէս ալ Քրիստոսի անձնագոհի մահը, որ Տիրոջ Ընթրիքի իմաստն է, կը մատնանշէ մեր ազատութիւնը մեղքի ստրկութենէն:

Կային նաեւ այլ տօներ՝ Երախայրիներուն տօնը, Պէնտէկոստէն, Փողեբու տօնը, Քաւութեան օրը եւ Տաղաւարներու տօնը: Այնուամենայնիւ, այս տօները քրիստոնէական կեանքի աւելի հասուն ոլորտներու խորհրդապատկերներն են: Պարզ ըսելու համար՝ Չատիկը փրկութեան տօնն է: Այնպէս որ, գրելով այդ մասին՝ Պօղոսը նկատի ունի Աստուծոյ Թագաւորութեան մէջ մուտք գործելը: Ան կը նշէ, որ Չատիկը կարելի չէր տօնել «անօրինութեան եւ չարի հին հացով»: Կը նշանակէ՝ «մանուկ քրիստոնէայ» ըլլալը սխալ փաստարկ էր թէ՛ անոր, թէ՛ մեզի համար: Յաճախ այս տրամաբանութեամբ է, որ մենք կ'անտեսենք «մեղքին յանձնուած» մարդը: Այս պատճառաբանութիւնը խաբուսիկ եւ մոլորեցնող է, քանի որ եկեղեցւոյ մէջ տեղ չկայ գիտակցաբար գործուող մեղքին համար. (յաջորդ գլուխներէն մէկուն մէջ ես պիտի բացատրեմ «գիտակցաբար գործուող մեղքի» եւ «մեղքի մէջ իյնալու» միջեւ տարբերութիւնը):

Երկրորդը՝ ուշադրութիւն դարձուցէք հետեւեալին վրայ. Պօղոսը կ'ըսէ, որ այդ մարդուն մեղքը նման է թթմորին (կամ խմորիչին): Թթմորը զանգուած մըն է, որ կը տարածուի ամբողջ խմորով եւ կը բարձրացնէ գայն: Չատիկի տօնին վերաբերեալ Իսրայէլին խիստ զգուշացում մը տրուած էր. «Տօնին առաջին օրը հեռացուցէ՛ք թթմորի ամէն մէկ հետք ձեր տուներէն: Ուեւ մարդ, որ թթմորով պատրաստուած հաց կ'ուտէ այս տօնի եօթը օրերուն ընթացքին, *պիտի կտրուի* Իսրայէլի հասարակութենէն» (Ելից 12.15, NLT): «Կտրուիլ» բառը յստակ է, ինչպէս եւ Պօղոսին հրահանգը: Աստուած ըրաւ ասիկա՝ ցոյց տալու համար թէ՛ Իսրայէլին, թէ՛ մեզի, որ երբ մենք ուխտի մէջ կը մտնենք Անոր հետ, մեր համայնքին մէջ ոչ ոք կրնայ «մեղքին տրուած» ըլլալ: Այն մարդիկ, որոնց կեանքին մէջ կայ գիտակցուած եւ շարունակական անհնազանդութիւն Աստուծոյ խօսքին, պէտք է ապաշխարեն: Հակառակ պարագային, անոնք պիտի բերեն մեղքի թթմորը եւ ասոր հետեւանքները իրենց եկեղեցական համայնքներուն մէջ:

«Սիւն» Նոր կտակարանի մեկնութիւնը կը նշէ.

«Պօղոսը կը շեշտէ (յունարէն բառերու իմաստային յաջորդականութեան միջոցով), որ եթէ չարի դէմ արգելք չդրուի, այն անխուսափելիօրէն՝ դանդաղ, բայց հաստատուն կերպով, եկեղեցւոյ միայն մէկ «փոքր» մասի, եւ նոյնիսկ մէկ մարդու միջոցով պիտի տարածուի ամբողջ եկեղեցական համայնքին մէջ: Եկեղեցւոյ մէջ գիտակցաբար գործուող մեղքի օրինակը կրնայ լուրջ հետեւանքներ ունենալ: Հացի մէջ գտնուող թթմորի պէս՝ մեղքը, որուն հակառակ չեն կեցած, կը տարածուի ամբողջ եկեղեցիին մէջ եւ անդամալիօրէն կը փոխէ այն»:

Այս մեկնութեան մէջ ես չէի համաձայներ միայն մէկ բանի հետ: Ուսումնասիրելով թթմորը՝ յայտնաբերեցի, որ այն *դանդաղ* չի տարածուիր. այն կը տարածուի *արագ*: Սակայն, անկասկած, այս մեկնութիւնը ճշդօրէն կը նշէ, որ այն *հաստատուն կերպով* կը տարածուի ամբողջ եկեղեցական համայնքին մէջ:

Արդեօ՞ք ասիկա կը նշանակէ, որ ոեւէ մարդ, որ գիտակցաբար մեղք կը գործէ, մենք պէտք է արգիլենք մեր հաւաքոյթներուն մասնակցիլ: Անշուշտ ո՛չ: Մեր հաւաքոյթներուն պէտք է ներկայ ըլլան բազմաթիւ անհաւատ մարդիկ, սակայն անոնք պէտք չէ եկեղեցւոյ *անդամներ* ըլլան, եւ ո՛չ ալ պէտք է *մտածեն, որ իրենք անդամներ են*, քանի տակաւին չեն ապաշխարած իրենց գիտակցաբար գործած մեղքերէն եւ լիովին չեն տուած իրենց կեանքը Յիսուս Քրիստոսին: Պօղոսը յստակ կը գրէ այս մասին.

«Երբ նախկինին գրեցի ձեզի, ես պատուիրեցի չհաղորդակցիլ այն մարդոց հետ, որոնք կը տրուին սեռական մեղքին: Բայց ես չէի խօսեր *անհաւատներու* մասին, որոնք կը տրուին սեռական մեղքին, կամ ազահ են, կամ մարդիկը կը խաբեն, կամ կ'երկրպագեն կուռքերուն: Դուք ստիպուած պիտի ըլլայիք հեռանալու այս աշխարհէն՝ այդպիսի մարդոցմէ խուսափելու համար» (Ա. Կորնթացիս 5.9,10, NLT):

Մեզի՝ Քրիստոսի հետեւորդներուս, պատուիրած է երթալ աշխարհով մէկ, հասնիլ այս աշխարհի մարդոց եւ հրաւիրել զանոնք միանալու մեր հաւաքոյթներուն, որպէսզի լսեն Աստուծոյ խօսքը, ոչ թէ փոխզիջման ենթարկուած կամ ոչ լիարժէք ճշմարտութիւնը իրենց հոգեւոր վիճակի մասին: Մենք պէտք է շարունակ հասնինք անհաւատներուն, ընկերանանք եւ հաց կիսենք անոնց հետ, սիրենք եւ ծառայենք անոնց, ինչպէս Յիսուսը:

Այնուամենայնիւ, Պօղոսը բոլորովին այլ պատուէր կու տայ այն մարդուն վերաբերեալ, որ կը դաւանի, որ հաւատացեալ է.

«Ես նկատի ունէի, որ դուք պէտք չէ հաղորդակցիք այն մարդուն հետ, որ կը պնդէ, թէ հաւատացեալ է, սակայն կը տրուի սեռական մեղքին, կամ ազահ է, կամ կ'երկրպագէ կուռքերուն, կամ կռուարար է, կամ գինով է, կամ մարդիկը կը խաբէ: Նոյնիսկ հաց մի կիսէք նման մարդոց հետ» (Ա. Կորնթացիս 5.11, NLT):

Ակնյայտ է, որ Պօղոսը չի խօսիր այն հաւատացեալին մասին, որ «ինկած է մեղքի մէջ», այլ՝ անոր, որ ինքզինքը հաւատացեալ կը համարէ, բայց «տրուած է մեղքին»: Ինչո՞ւ այս եկեղեցիին հայրը այսքան խստօրէն կը շեշտէ ասիկա: Պատճառը անիկա է, որ ան ճշմարտապէս կը սիրէ եկեղեցին: Ան չ'ուզեր, որ ամբողջ եկեղեցին վնաս կրէ՝ *համարելով, որ կը պաշտպանէ* այն «հաւատացեալին», որ կը շարունակէ մեղքի մէջ մնալ:

Մտածեցէ՛ք այս կերպով. եթէ ինչ որ մէկը վարակիչ հիւանդութիւն ունի՝ այնպիսին, որ կրնայ փոխանցուիլ օդի միջոցով, ինչպէ՞ս կը վարուին այդ բնակավայրին մէջ ապրող մարդիկ: Անոնք կը մեկուսացնեն այդ հիւանդը՝ այդկերպ պաշտպանելով ամբողջ բնակչութեան համաճարակէն: Հակառակ պարագային, վարակը պիտի տարածուի անտառային հրդեհի պէս. ամբողջ բնակչութիւնը պիտի տառապի այդ հիւանդութենէն եւ պիտի կրէ ատոր հետեւանքները: Իսկ ինչպիսի՞ն պիտի ըլլան համաճարակի լայն հետեւանքները. թափուր աշխատատեղեր, արդինաւէտութեան կորուստ, համայնքին մատուցուող ծառայութիւններու ընդհատում եւ տնտեսական խնդիրներ՝ ահա այդ հետեւանքներէն քանի մը օրինակ:

Պօղոսը կը շարունակէ խօսիլ մեղքին տրուած մարդուն մասին.

«Եւ դուք պէտք է վռնտէք այս մարդը եւ յանձնէք զինք սատանային, որպէսզի անոր մեղաւոր բնութիւնը կործանի, իսկ ան փրկուի այն օրը, երբ Տէրը վերադառնայ» (Ա. Կորնթացիս 5.5, NLT):

Այդ եղբօրը կը սպառնար յաւիտեան կորսուելու զարհուրելի վտանգ, եթէ չփոխուէր: Ասիկա է պատճառը, որ քիչ առաջ ես օգտագործեցի «համարելով, որ կը պաշտպանէ» արտայայտութիւնը: Ըշմարտութիւնը անիկա է, որ ինքնակամ մեղանչող մարդը ատելի մեծ վտան-

զի մէջ է, եթէ անոր առիթ տրուի մնալ եկեղեցական համայնքին մէջ, քանի որ ան կ'ենթադրէ, որ ճիշդ դիրք ունի Աստուծոյ առջեւ, եւ իր կորսուած վիճակը միայն դատաստանի օրը կը բացայայտէ, բայց արդէն ուշ կ'ըլլայ:

Այն նեղութիւնները, որոնք ան կը կրէ, երբ զրկուի Աստուծոյ պաշտպանութենէն, հաւանաբար կը դրդեն զինք ուշքի գալու, արթննալու եւ վերադառնալու Յիսուսին ամբողջ սրտով եւ անձով, ինչ որ կատարուեցաւ այդ մարդուն հետ (այդ մասին գրուած է Կորնթացիներուն ուղղուած երկրորդ նամակին մէջ): Նեղութիւնները կարծես կ'արթնցնեն մեզ: Մենք կը տեսնենք ասիկա անառակ որդիին պատմութեան մէջ: Ան տուն վերադարձաւ, երբ տեսաւ իր մեղսալի ճանապարհի արդիւնքը: Եթէ հայրը հաւանութիւն տար անոր եւ շարունակէր միջոցներ ուղարկել, որդին երբեք չէր գիտակցեր իր ապստամբութիւնը:

Ինչպէս որ Երկինքն է...

Վերադառնանք մեր հիմնական թեմային: Վերջին երկու գլուխներուն մէջ յստակ տեսանք, որ մենք միասնաբար Քրիստոսի մարմինն ենք, եւ որպէս մարմին՝ բոլորս ալ օգուտ կը ստանանք ամէն մէկ անդամի ներդրումէն եւ վնաս կը կրենք ամէն մէկ անդամի գիտակցաբար գործած մեղքէն:

Մենք չենք կրնար անտեսել այս ճշմարտութիւնը: Յաւոք, այն անտեսելու հետեւանքները արդէն չափազանց երկար ժամանակ է՝ կը դրսեւորուին Քրիստոսի մարմինին մէջ: Եւ այդ հետեւանքները չեն հեռանար, եթէ մենք ոչինչ ձեռնարկենք:

Եկէք խիզախ ըլլանք եւ երես առ երես հակառակինք ատոնց: Ամբողջ Երկինքը կը խրախուսէ մեզ, որ քայլ ընենք: Մենք կանչուած ենք որպէս յաղթական եկեղեցի՝ Քրիստոսի մարմինը, որուն, ինչպէս եւ Յիսուսին, անկարելի է կանգնեցնել: Հիւանդութիւնը, տկարութիւնը, աղքատութիւնը, նիւթական միջոցներու պակասը եւ թշնամիին մնացած բոլոր գործերը պէտք է խոնարհին Տիրոջ եկեղեցիին առջեւ:

Մեր կոչումն է՝ թագաւորել եւ լեցուած ըլլալ գերբնական զօրութեամբ, որպէսզի երկնային թշնամիներուն դնենք մեր ոտքերուն տակ: Եւ ասիկա հնարաւոր պիտի դառնայ միայն, եթէ չվախնանք հակառակելէ այն բարդ խնդիրներուն, որոնք արդէն իսկ մեծ վնաս հասցուցած են մեզի:

Մենք պէտք է համարձակինք հաւատալ, որ կրնանք ընել ատիկա երկրի վրայ՝ ինչպէս Երկինքի մէջ:

գործնական քայլ

Այս խնդիրը խիստ կարելու է, սակայն, դժբախտաբար, հազուադեպ կարելի է գտնել այնպիսի ժամանակակից եկեղեցի, որ կը շեշտադրէ այս ճշմարտութիւնները: Մտածեցէ՛ք հետեւեալին մասին. առաջին հերթին Աստուած կը կանչէ ձեզ, որ ապրիք առանց մեղքի եւ լիովին նուիրուիք Իրեն: Երկրորդը՝ երբ հաւատացեալները այդպէս չեն վարուիր, վնաս կը հասցնեն ոչ միայն իրենց, այլեւ Քրիստոսի ամբողջ մարմինին:

Ժամանակ տրամադրեցէ՛ք, որ մտորէք այս ամէնուն շուրջ: Թոյլ մի՛ տաք, որ այս ճշմարտութիւնները պարզապէս մնան որպէս լաւ գաղափարներ, իսկ դուք շարունակէք ձեր սովորական կեանքը: Խորհրդածեցէ՛ք այս ճշմարտութիւններուն շուրջ: Աղօթեցէ՛ք այս ճշմարտութիւններուն հիման վրայ եւ անձամբ հարցուցէք Աստուծոյ այս մասին: Թոյլ տուէք, որ այս ճշմարտութիւնները իսկապէս թափանցեն ձեր սրտին մէջ եւ կարելու դառնան ձեզի համար, ինչպէս որ Պօղոսին համար էին:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԲԵՐԷ՛Ք

Ես սերունդի մը ներկայացուցիչ եմ, որուն աւելի շատ սորվեցուցած են Յիսուսի հետ մեր անձնական ընթացքի մասին, քան՝ որ մենք՝ հաւատացեալներս, մէկ մարմին ենք: Միայն վերջերս այս իրողութիւնը սկսաւ աւելի պարզ դառնալ ինծի համար: Ես չեմ ուզեր, որ դուք սխալ պատկերացում կազմէք այս մասին: Անկասկած, անցեալին մէջ ես ինչ որ չափով կը հասկնայի այս ճշմարտութիւնը, բայց ոչ այն չափով, որով կը հասկնամ հիմա:

Այն ընթացքին մէջ, երբ Սուրբ Հոգին կը բացայայտէր այս իրողութիւնը ինծի համար, ես յաճախ կը մտածէի ռազմածովային նաւատորմի այն ջոկատներու մասին, որոնք սովորաբար յայտնի են «ծովային փոկեր»* անուանումով:

Ես ընկեր մը ունիմ, որ արդէն տասնհինգ տարի է՝ կը ծառայէ այդ յատուկ զօրքերուն մէջ, եւ ներկայիս կ'աշխատի որպէս հրահանգիչ: Որոշ ժամանակ մտածելով այս ճշմարտութիւններուն եւ Քրիստոսի մարմինին մասին՝ որոշեցի զրուցել անոր հետ: Ես գիտէի, որ ծովային փոկերը սերտ եղբայրական յարաբերութիւններ ունին եւ որոշեցի աւելի գիտնալ այդ մասին: Ջանգաւարեցի անոր եւ սկսայ հարցումներ տալ. «Ծովային փոկերը ինչպէ՞ս իրար հետ կը հաղորդակցին: Անոնք ինչպէ՞ս այդպիսի սերտ եւ միաբան խումբեր կը ձեւաւորեն: Եւ ի՞նչ կ'ընդգրկէ անոնց ուսուցումը»:

Առաջին հերթին ան ըսաւ.

* յատուկ նշանակութեան զօրքեր ամերիկեան ռազմածովային նաւատորմին մէջ, որոնց անուան յապաւումը (SEAL) նման է անգլերէն «փոկ» բառին:

– Վերջին մարդը, որուն մասին ծովային փոկը կը մտածէ, ինքն է:

Ես շատ հաւնեցայ անոր պարզ եւ սեղմ ձեւակերպումը: Ես գիտէի, որ շատ քաներ պիտի հասկնայի այդ հեռախօսազանգի վերջաւորութեան. այնպէս որ, լուռ մնացի եւ թոյլ տուի անոր շարունակել:

– Մենք կը գնահատենք մեր կողքին գտնուող եղբայրը աւելի, քան մենք մեզ: Մենք կարիք չունինք մտածելու՝ արդեօ՞ք մեր թիկունքը պաշտպանուած է, քանի որ մեր եղբայրները կը պաշտպանեն մեզ:

Այդ պահուն ան սկսաւ «քարոզել» ինձի.

– Եթէ կարդաս Եփեսացիներու վեցերորդ գլուխը, պիտի տեսնես, որ Աստուծոյ սպառազինութիւնը ամբողջութեամբ մարմինի առջեւի մասին համար է, եւ ոչինչ կը ծածկէ մեր թիկունքը: Պատճառը անիկա է, որ Աստուած ամէն մէկուս համար նախատեսած է այն, ինչ որ կ'ընեն ծովային փոկերը, որ մենք ծածկենք մէկս միւսին թիկունքը եւ մտածենք որպէս մէկ միաւոր, մէկ մարմին: Եթէ այդպիսին չըլլանք, իմ թիկունքը պիտի պաշտպանէ միայն մէկ մարդ՝ ես: Իսկ եթէ բոլորս գործենք մէկ խումբի պէս, իմ թիկունքը պիտի պաշտպանէ ամբողջ դասակը (ռազմավարական փոքր խմբաւորում):

Ան շարունակեց.

– Որպէս ծովային փոկ՝ ես կ'ընեն ամէն ինչ իմ կողքին գտնուող եղբոր համար: Մենք կը հաւատանք ասոր մեր էութեան խորքէն: Մեզի սորվեցուցած են չմտածել մէկս միւսին մասին՝ որպէս անհատներ, այլ՝ որպէս մէկ միաւոր: Թէեւ մենք մասնագիտացած ենք տարբեր բնագաւառներու մէջ՝ ակնանհատներ, կապաւոր-հետախոյզներ, դիպուկահարներ, բժիշկներ, օդաչուներ, գէնքերով յարձակողներ, տարբեր զինատեսակներու մասնագէտներ, սակայն կը գործենք որպէս մէկ միաւոր: Մենք երբեք չենք երթար որեւէ առաքելութեան այսպիսի մտածելակերպով. *«Թերեւս մեզմէ ոմանք չվերադառնան»*, կամ *«Միայն քառասուն տոկոսը կը վերադառնայ»*: Ո՛չ, մենք կը մտածենք. *«Մենք կ'երթանք հարիւր տոկոսով եւ պիտի վերադառնանք հարիւր տոկոսով»*:

Ես կլանուած կը լսէի անոր: Ի վերջոյ, հարցուցի.

– Ինչպե՞ս կը ձեւաւորէք այս վերաբերմունքը նորակոչիկներու մէջ:

– Այն անկարելի է ձեւաւորել, - պատասխանեց ան: - Ծովային փոկերու մարզումը ամենածանր եւ ամենադժուար զինուորական մարզումը կը համարուի: Ծովային փոկերուն հաւաքագրուողներուն մօտաւորապէս իննսուն տոկոսը կա՛մ կը ձգէ մարզումը, կա՛մ կը հեռացնեն զանոնք: Կը մնայ միայն ուժեղ եւ բարձր պատրաստուածութիւն ունեցող մարդոցմէ բաղկացած խումբ մը: Անոնցմէ ամէն մէկը կ'արժեւորէ իր կողքինը իրմէ աւելի, եւ պատրաստ է մահանալու գործի մը համար, որ աւելին է, քան ինքը:

Այնուհետև ան ըսաւ.

– Ճո՛ւն, երանի՛ եկեղեցին այսպիսին ըլլար: Ի՞նչ պիտի կատարուէր այդ պարագային:

Յաւոք, ես միայն կրնայի համաձայնիլ: Սակայն իրականութեան մէջ մենք ունինք ներուժ՝ այսպիսին ըլլալու համար: Այս դիրքորոշումը այն *Աստուածային բնութեան* մասն է, որ տրուեցաւ մեզի, երբ մենք վերստին ծնանք: Այն քարոզները եւ ուսուցումները, որոնք կը ստանանք, այսինքն՝ *մեր* մարզումը, պէտք է բացայայտեն այս դիրքորոշումը եւ ընդլայնեն այն: Սակայն եթէ մենք լսենք միայն Աւետարանի սպառողական տարբերակը, մեր մէջ պիտի զարգանայ այն, ինչ որ պէտք չէ զարգանայ՝ մեր չփրկագնուած մարմնական բնութիւնը: Ահա թէ ինչու ժամանակակից եկեղեցին նման վիճակի մէջ է: Մեզմէ շատերը միայն կը ցանկան խրախուսուիլ, ոչ թէ մարտահրաւէրներ ընդունիլ: Մենք այնքա՛ն շատ բան կը կորսնցնենք:

Իմ ընկերը զինուոր է, սակայն ան նոյնպէս կը գիտակցի ժամանակակից եկեղեցւոյ տկարութիւնը: Ան գիտէ, որ եթէ ծովային փոկերու դասակի զինուորներէն մէկը թուլանայ, փոխզիջման երթայ կամ ձգէ իր դիրքը, խումբի բոլոր անդամները վնաս պիտի կրեն կամ պիտի մահանան՝ մէկ մարդուն ծուլութեան կամ անձեռնահասութեան պատճառով: Որպէս Քրիստոսի մարմնի անդամներ՝ մեր գիտակցութեան մէջ պէտք է աւելցնենք այս իրողութիւնը, որ արմատացած է անոր ներսը:

Փոփոխութի՛ւն բերէք

Արդեօ՞ք այս ամէնուն մէջ դրական կողմ կայ: Անշո՛ւշտ. Աստուծոյ հետ միշտ դրական կողմ կայ:

Ես կը հասկնամ, որ դուք կրնաք բացասաբար դիտարկել նախորդ գլուխին մէջ ներկայացուած ճշմարտութիւնները եւ յուսահատիլ: Միտքը այն մասին, որ այլ մարդոց արարքները կրնան անբարենպաստ ազդեցութիւն ձգել ձեր կեանքին վրայ, կրնայ վիատեցնող ըլլալ: Այնուամենայնիւ, ես կը խօսիմ այս ճշմարտութեան մասին, որպէսզի մենք միասնաբար առաջ շարժինք եւ տեսնենք անոր մեծութիւնն ու զօրութիւնը այն չափով, որոնով ատոնք երբեք չեն յայտնուած մեր սերունդին մէջ: Ոչ մէկ փոփոխութիւն տեղի կ'ունենայ, քանի որ տակաւին մենք ուրիշ ձեւով չենք հաւատար եւ ուրիշ ձեւով չենք վարուիր: Իմաստը հետեւեալն է. *այդ փոփոխութիւնը կրնաք բերել դո՛ւք*: Եթէ այն չսկսի ձեզմէ եւ ինձմէ, ապա ինչպէ՞ս այն պիտի սկսի: Աստուած կանչած է մեզ փոփոխութիւն բերելու համար:

Պուք երբեք տեսա՞ծ էք, թե ինչ տեղի կ'ունենայ, երբ զգայուն խիղճ ունեցող անձնատիրությունը, որուն վարքը արտաքուստ քիչ մը անվերահսկելի է, յանկարծ պատասխանատուութիւն ստանձնէ այլ մարդոց համար: Յաճախ ի յայտ կու գան անոր լաւագոյն յատկանիշները: Օրինակ, պատկերացուցէք երիտասարդ աղջիկ մը, որ մայր դարձած է: Ան քիչ մը անզուսպ էր, թեթեւամիտ, նոյնիսկ քիչ մը անմիտ էր, երբ տակաւին անուսնացած չէր: Անոր արարքները միայն անոր կեանքին վրայ կ'ազդէին, եւ ուրիշ ոչ ոքի: Սակայն ան կը սիրահարուի, կ'ամուսնանայ եւ երեխայ կ'ունենայ: Եւ այս աղջիկը, որ ժամանակ մը անվերահսկելի էր, կը կարգաւորէ իր կեանքը: Ան գիտէ, որ եթէ ինքը շարունակէ անմիտ, անվերահսկելի եւ վտանգաւոր կերպով վարուիլ, ասիկա պիտի ազդէ ոչ միայն իր կեանքին վրայ, այլեւ իր սիրելի ամուսինին եւ երեխային:

Ահա թէ ինչպէ՛ս պէտք է իւրաքանչիւրս վերաբերի եկեղեցիին: Մենք պէտք է խորապէս սիրենք մէկս միւսին: Պէտք է գիտակցինք, որ, ամենայն հաւանականութեամբ, միայն մենք չէ, որ վնաս պիտի կրենք, եթէ անհնազանդ ըլլանք Աստուծոյ Խօսքին: Մենք մէկ մարմնի մաս ենք: Թերեւս ասիկա է պատճառը, որ Պօղոսը, քննարկելով Տիրոջ ընթրիքը Կորնթոսի եկեղեցիին հետ, կը գրէ հետեւեալ պատուէրը.

«Պուք կ'ըսէք. «Ինձի ամէն ինչ կարելի է», բայց ամէն ինչ չէ, որ օգտակար է ինձի: Մի՛ մտածէք ձեր շահին մասին, այլ՝ միւսներու շահին» (Ա. Կորնթացիս 10.23,24, NLT):

Կրկին, Պօղոսը կը գրէ Փիլիպպէի եկեղեցիին.

«Թող ամէն մէկը համարէ միւսները իրմէ աւելի լաւը եւ աւելի գերազանց [մտածեցէ՛ք աւելի բարձր մէկը միւսին մասին, քան՝ ձեր մասին]... Թող նոյն վերաբերմունքը եւ մտադրութիւնը եւ [խոնարհ] միտքը ըլլայ ձեր մէջ, որ Քրիստոս Յիսուսին մէջ էր» (Փիլիպպեցիս 2.3,5, AMPC):

Ասիկա այն մտածելակերպն էր, որ Յիսուս ունէր, այն սրտի վերաբերմունքը, որ դրդեց Ձինք այս աշխարհ գալու եւ մեզի համար Իր կեանքը զոհաբերելու: Ան կրնար փրկել Իր անձը: Ան կրնար հրեշտակներու լեզուն (զօրագունդ) կանչել, որոնք պիտի փրկէին Ձինք Իր դահիճներէն, սակայն Ան մեր մասին կը մտածէր: Ան աւելի շատ հոգ կը տանէր մեր բարեկեցութեան մասին, քան՝ Իր:

Ահա բարի լուրը: Եթէ մենք հնազանդ ենք Աստուծոյ Խօսքին, ի վեր-

ջոյ մենք օրհնուած պիտի ըլլանք: Թերեւս մեր կեանքին մէջ ըլլան անյարմարաւէտ եւ նոյնիսկ դժուար ժամանակահատուածներ՝ մարմինի մէջ գտնուող այլ հաւատացեալներու անհնազանդութեան պատճառով, սակայն, ի վերջոյ, մենք պիտի բարգաւաճինք:

Եղիան այլ մարդոց արարքներուն պատճառով նեղութիւններ կրող մարդու օրինակ է: Աքաաբի եւ Յեզաբէլի շարունակական մեղքի, ինչպէս նաեւ՝ Իսրայէլի անտարբերութեան պատճառով երեք տարի երկրի վրայ անձրեւ չէր տեղար: Եղիան առատօրէն չէր սնուեր, ինչպէս Դաւիթ եւ Սողոմոն թագաւորներու օրերուն ապրող մարդիկ: Քանի մը տարի շարունակ ան ագռաւներու կողմէն բերուող հացն ու միսը կ'ուտէր, ինչ որ այնքան ալ հաճելի չէր: Ատիկա միապաղաղ սննդակարգ էր՝ առանց բանջարեղէնի, մեղրի, հիւթերու եւ շատ այլ համեղ կերակուրներու, որոնք հասանելի են առատութեան ժամանակ: Ան նեղութիւն կը կրէր այլ մարդոց արարքներուն պատճառով: Բայց Եղիան մէկ ազգի, մէկ ժողովուրդի եւ մէկ մարմինի մաս էր: Անոր հնազանդութիւնը ի վերջոյ բերաւ փոփոխութիւն եւ... անձրեւ: Անոր հնազանդութիւնը ի վերջոյ օրհնեց իր ազգը, եւ անձամբ ինքը նոյնպէս օրհնուած եղաւ:

Խաղաղութեան ուխտ

Դիտարկենք ուրիշ իրադարձութիւն մը, որ տեղի ունեցած էր Եղիայի օրերէն շատ առաջ, երբ *շատերը* վնաս կրեցին *քանի մը անձերու* արարքներուն պատճառով: Իսրայէլը անապատն էր եւ կեցած էր Սատիմի մէջ: Գրուած է.

«Անոնց տղամարդոցմէ *մէկ քանին* պղծեցին իրենք զիրենք՝ սեռական յարաբերութիւններ ունենալով տեղացի մովաբացի կանանց հետ: Այդ կանայք հրաւիրեցին զանոնք մասնակցելու իրենց աստուածներու զոհերուն, եւ իսրայէլցիները խնձոյքներու մասնակցեցան անոնց հետ եւ երկրպագեցին Մովաբի աստուածներուն: Այս կերպով Իսրայէլը միացաւ Փէոլիի Բահաղի երկրպագութեան, եւ Տիրոջ բարկութիւնը բռնկեցաւ Իր ժողովուրդին դէմ» (Թուոց 25.1-3, NLT):

Կրկին, ուշադրութիւն դարձուցէք «մէկ քանին» բառին: Աստուած պատուիրեց Իր ժողովուրդին չերկրպագել այլ աստուածներու, չմօտենալ օտարազգի կանանց եւ սեռական անբարոյութիւն չգործել: Այնուամենայնիւ, *մէկ քանիի* անհնազանդութիւնը դատաստան բերաւ ամբողջ ժողովուրդին վրայ, եւ մենք կրկին կը տեսնենք, որ դատաստանի

պատճառով վնաս կրեցին ոչ թե *մէկ քանին*, այլ *շատերը*:

«Տէրը տուաւ Մովսէսին հետեւեալ պատուէրը. «Բռնէ՛ բոլոր այդ բանը հրահրողները եւ մահապատժի ենթարկէ զանոնք Տիրոջ առջեւ օրը ցերեկով, որպէսզի Անոր խիստ բարկութիւնը հեռանայ Իսրայէլի ժողովուրդէն»» (Թուոց 25.4, NLT):

Կրկին, մենք կը տեսնենք, որ այդ ամէնը հրահրողները (մէկ քանին) յառաջացուցին Տիրոջ նախանձոտ բարկութիւնը ամբողջ Իսրայէլի դէմ: Անոնք մէկ ազգ, մէկ ժողովուրդ եւ մէկ մարմին էին:

Մօտաւորապէս նոյն ժամանակ, երբ Մովսէսը հրամայեց մահապատժի ենթարկել այդ ամէն բան հրահրողները, Ջամբրի անունով իսրայէլցի Քազբի անունով մադիանացի կին մը բերաւ իր վրանը Մովսէսի եւ ամբողջ ժողովուրդի աչքին առջեւ: Ասիկա գիտակցուած եւ անընդունելի անհնազանդութիւն էր Աստուծոյ խօսքին: Փենէհէսը՝ Եղիազարի որդին եւ Ահարոնի թոռը, անմիջապէս նիզակ վերցուց, շտապեց դէպի այդ մարդուն վրանը եւ նիզակով հարուածեց ոչ միայն անոր, այլեւ Քազբիին՝ սպաննելով երկուքն ալ մէկ հարուածով: Գրուած է. «Եւ հարուածը Իսրայէլացիներու դէմ դադրեցաւ, բայց միայն 24.000 մարդ մահանալէն յետոյ» (Թուոց 25.8,9, NLT): Կրկին, շատերը մահացան. շատերը վնաս կրեցին. շատերը տուժեցին *մէկ քանիի* արարքներու պատճառով: Աստուծոյ համար ամբողջ ազգը *մէկ* էր:

Ատոնցմէ յետոյ Աստուած յայտարարեց. «Ահարոն քահանայի որդի Եղիազարի որդի Փենէհէս ետ դարձուց Իմ զայրոյթը Իսրայէլի զաւակներէն, որովհետեւ անոնց հանդէպ ան նախանձաւոր էր Իմ նախանձաւորութեամբ, որ Ես Իմ նախանձաւորութեամբ չկործանէի իսրայէլցիներուն զաւակները» (Թուոց 25.10,11, NKJV): Փենէհէսը կը ցանկար նոյնը, ինչ որ Աստուած՝ ամբողջ ազգի բարօրութիւնը: Փենէհէսը փոփոխութիւն բերաւ ամբողջ ազգին մէջ: Ատոր համար պէտք չէին շատերը, այլ միայն մէկ մարդ:

Պօղոսը կը ցանկար նոյնը Կորնթոսի եկեղեցիին համար, ինչ որ Աստուած: Ան փոփոխութիւն բերաւ այդ եկեղեցիին մէջ՝ խիզախօրէն հակառակելով անոնց ճշմարտութեամբ: Ան վերցուց Աստուծոյ խօսքը՝ Հոգիին սուրը, եւ «խոցեց» մարդու մը գործերը, որ կ'ապրէր սեռական անբարոյութեան մէջ: Հին կտակարանին մէջ օգտագործուեցաւ նիւթական նիզակ. Նոր կտակարանին մէջ եւ այսօր այդ «նիզակը» ի յայտ կու գայ, երբ մենք ոտքի կ'ելլենք եւ կը խօսինք ճշմարտութիւնը, նոյնիսկ այն պարագային, երբ միւսները կը փակեն իրենց ականջները եւ աչքերը, երբ մէկը կամ մէկ քանին եկեղեցւոյ մէջ գիտակցաբար կը մեղանշեն:

Վերջին մարդը, որուն մասին Պօղոսը կը մտածէր, ինքն էր: Ան կը վարուէր իմ ընկերոջս պէս, որ ծովային փոկ է: Ան վեր կը դասէր միւսներու բարօրութիւնը իր յարմարաւէտութենէն եւ համբաւէն: Ան մեծ վտանգի կ'ենթարկէր ինքզինքը, քանի որ Կորնթոսի եկեղեցին կրնար նոյնիսկ բոլորովին մերժել զինք: Ան նախանձաւոր էր անոնց հանդէպ, նոյնիսկ երբ կը պարզուէր, որ Պօղոսը աւելի շատ կը սիրէր զանոնք, քան անոնք՝ Պօղոսին:

Փենէհէսը չէր հոգար իր մասին. ան գիտէր, որ զինք կրնային մեղադրել խիստ, դաժան, անկարեկից, հետամնաց կամ հնաոճ ըլլալու եւ ծայրայեղ համոզմունքներ ունենալու մէջ: Ան միակն էր, որ քայլ ըրաւ. ուրիշ ոչ ոք ոչինչ կ'ընէր: Ի՞նչ կը մտածէին, պիտի ըսէին կամ պիտի ընէին մարդիկ: Այդ ամէնը կարելոր չէր: Սաղմոսերգուն կը գրէ. «Փենէհէսը միջամտելու համարձակութիւն ունէր» (Սաղմոս 106.30, NLT): Ան նախանձաւոր էր Աստուծոյ եւ Անոր համար կարելոր ամէն բանի, մանաւանդ Անոր ժողովուրդին հանդէպ: Ան կը սիրէր իր համայնքը եւ նախաձեռնեց փոփոխութիւնը:

Կարդանք, թէ Աստուած ինչ կ'ըսէ անոր մասին.

«Ասոր համար ըսէ, թէ ահա Ես անոր կու տամ Իմ *խաղաղութեան ուխտս*, եւ անոր ու անկէ ետքը անոր սերունդին յաւիտենական քահանայութեան ուխտ մը ըլլայ, որովհետեւ իր Աստուծոյն համար նախանձախնդիր եղաւ ու Իսրայէլի որդիներուն համար քաւութիւն ըրաւ» (Թուոց 25.12,13):

Այս պնդումը տարիներ շարունակ գրաւած էր իմ ուշադրութիւնը Աստուածաշնչեան ուսումնասիրութեանս ընթացքին: Այս մասին ոչ միայն Մովսէսը գրեց. յետագային՝ գրեց նաեւ սաղմոսերգուն՝ շեշտադրելով անոր վարձատրութիւնը.

«Ետքը Փենէհէս ելաւ ու բարեխօսեց, եւ ժանտամաղ դադրեցաւ: Այս բանը անոր արդարութիւն սեպուեցաւ՝ ազգէ մինչեւ ազգ, յաւիտեան» (Սաղմոս 106.30,31):

Ես կը յիշեմ, թէ ինչպիսի՛ երկիւղածութիւն զգացի, երբ տեսայ այս երիտասարդի մեծ վարձատրութիւնը, որ վտանգը արհամարհեց՝ ոտքի ելլելով եւ պաշտպանելով այն, ինչ որ հաճելի էր Աստուծոյ: Ան ստացաւ ոչ թէ ժամանակաւոր, այլ յաւիտենական վարձատրութիւն, որ ուխտով կնքուեցաւ: Յիշեցէ՛ք, որ Աստուած երբեք չի խախտեր Իր ուխտերը: Այդ վարձատրութիւնը այնքա՛ն մեծ էր, որ ազդեցութիւն ձգեց ոչ

միայն անոր վրայ, այլև անոր զաւակներուն, անոնց զաւակներուն եւ բոլոր ապագայ սերունդներուն վրայ, *նոյնիսկ՝ մինչեւ օրս*: Անոր բոլոր սերունդները վարձատրութիւն կը ստանային, քանի որ ան պատրաստ էր պաշտպանելու այն, ինչ որ Աստուած ճիշդ կը համարէր:

Տեսնելով Փենէիէսի օրինակը՝ ես որոշում կայացուցի, որ մշտապէս ճշմարտութիւնը պիտի խօսիմ, նոյնիսկ եթէ անոր հետեւանքով կորսնցնեմ մարդոց սէրը, ինչպէս Պօղոսը: Ես կը տեսնէի ատոր մեծ վարձատրութիւնը ոչ միայն իմ, Լիզային եւ մեր որդիներուն համար, այլեւ մեր բոլոր զաւիք սերունդներուն: Ես պիտի ստանայի խաղաղութեան ուխտ, որ երբեք չէր դադրեր, եւ օրհնութիւն, որ պիտի մնար սերունդէ սերունդ:

Այսօր ես ցնցուած եմ՝ տեսնելով, թէ ինչպիսի ջերմեռանդութեամբ մեր որդիները կը ծառայեն Աստուծոյ: Երբ անոնք կը մեծնային, ես կը ճամբորդէի՝ տարուան մեծ մասը քարոզելով Աւետարանը, սակայն կը թուայ՝ Աստուծոյ խաղաղութեան ուխտը, որ կը տրուի փոփոխութիւն բերողներուն, պահուած է նաեւ մեր երեխաներուն համար: Ես կ'ակնկալեմ նոյն օրհնութիւնը նաեւ մեր թոռներուն համար:

Արդեօ՞ք կայ այնպիսի օրհնութիւն ճշմարտութիւնը պահելու համար, որ մենք տակաւին չենք բացայայտած: Այո՛: Այդ օրհնութիւնը *խաղաղութեան ուխտն* է, որ խոստացուած է ոչ միայն ձեզի, այլեւ ձեր սերունդներուն, եթէ դուք ծայն կը բարձրացնէք՝ փոփոխութիւն բերելու համար, եւ եթէ դուք նախանձաւոր էք Աստուծոյ ճանապարհներուն համար, նոյնիսկ եթէ միւսները այդպիսին չեն:

Արդեօ՞ք մենք կը սկսինք հասկնալ, որ աւելի լաւ է ձայն բարձրացնել՝ ըլլալով սէրէ դրդուած եւ օգտագործելով Հոգիին սուրը, քան լուռ նայիլ, թէ ինչպէ՛ս մեղքը կը շատնայ ու կը տարածուի մեր եկեղեցական համայնքին մէջ:

Ինծի համար պատասխանը ակնյայտ է, բայց ես առիթ պիտի տամ, որ անձամբ դուք որոշում կայացնէք:

գործնական քայլ

Ահա այն բարի լուրը, որուն կը սպասէիք: Եթէ դուք անվարան կանգնիք ճշմարտութեան համար եւ ընէք ատիկա գԱստուած եւ Անոր ժողովուրդը սիրելու պատճառով, դուք պիտի գիտնաք այն մարդիկը, որոնք օրհնութեան խոստում ստացան Աստուծմէ՝ հիմնուած յաւիտենական ուխտի վրայ, որ որոշեց ոչ միայն անոնց, այլեւ անոնց սերունդներուն ապագան:

Մի՞թե դուք կրնաք աւելի մեծ բան մը ընել ձեր ժառանգներուն համար: Ոչ մէկ աշխարհիկ եւ նիւթական ժառանգութիւն նման խոստում մը ունի: Դրամը կրնայ վատնուիլ մէկ կամ երկու սերունդի ընթացքին: Ոչ մէկ գիտելիք կամ իմաստութիւն կրնայ փոխանցուիլ այդքան շատ սերունդներու: Այդպիսի տեսական ազդեցութիւն կրնայ ձգել միայն Աստուծոյ խոստումին վրայ հիմնուած ժառանգութիւնը, քանի որ Աստուած հաւատարիմ է:

Ի՞նչ ժառանգութիւն կը ցանկաք փոխանցել ապագայ սերունդներուն: Ինչպէ՞ս կը ցանկաք, որ ձեզ յիշեն այս երկրին վրայ եւ ճանչնան Երկինքը: Մեծագոյն բանալին այս ցանկութիւնները իրականացնելու համար այն է, թէ որքան հաստատ էք դուք կանգնած սիրոյ եւ ճշմարտութեան համար ձեր կարճ երկրային տարիներու ընթացքին:

ՄԵՐ ԴՐԴԱՊԱՏՃԱՌԸ

Վերջերս հետս դէպք մը տեղի ունեցաւ: Ես չէի կրնար թեքսթեր ուղարկել իմ «iPhone»-ով: Կը փորձէի ամէն ինչ՝ այդ խնդիրը լուծելու համար. կը փակէի ծրագիրները, կը վերագործարկէի հեռախօսս եւ նոյնիսկ հարկադրաբար կ'անջատէի այն ծրագիրները, որոնք կը դադրէին աշխատելէ: Ապա կ'անցնէի ակտիվ բարդ քայլերու, բայց չէի կրնար ազատիլ այդ վրդովեցնող խնդիրէն:

Այդ դէպքը հաստատեց, թէ որքան մենք կախուած ենք մեր սմարթֆոններէն, եւ որքան կարելորդ են ատոնք մեզի համար այսօր: Մեր կրտսեր որդին կը քարոզէր Հնդկաստանի մէջ տեղի ունեցող համաժողովի մը մէջ եւ գիրքեր կը բաժնէր հովիւներուն ու ւաւագներուն: Ան որոշ դժուարութիւններու բախած էր եւ հաղորդագրութիւն ուղարկած էր ինծի այդ մասին, սակայն ես ժամեր շարունակ չէի կրնար պատասխանել անոր հարցումներուն իմ հեռաձայնի յանկարծակի անսարքութեան պատճառով: Ինծմէ կը պահանջուէր ակտիվ քան տասնհինգ վայրկեան՝ մէկ-երկու նախադասութիւն գրելու համար, իսկ յետոյ իմ հեռաձայնը յանկարծակի կ'անջատէր ծրագիրը՝ չպահպանելով գրածս, եւ ես ստիպուած էի կրկին սկսիլ: Չորս ժամուան ընթացքի մէջ կրցայ միայն շատ կարճ հաղորդագրութիւն մը ուղարկել: Ես կ'ուզէի ակտիվ ըսել անոր, բայց չէի կրնար: Հասկնալի է, որ ես խիստ յուսահատած էի:

Ի վերջոյ, հեռաձայնս տարի մասնագէտներու քով, որոնք շատ ակտիվ լաւ գիտէին, թէ ինչպէ՛ս կ'աշխատէր այն: Քանի մը օր փորձեցի լուծել այդ խնդիրը, բայց նոյնիսկ տասնհինգ վայրկեան չանցած, անոնք գտան անսարքութեան պատճառը: Քանի մը ժամ յետոյ ես արդէն հաղորդագրութիւններ կ'ուղարկէի՝ առանց որեւէ խնդիրի: Պարզուեցաւ,

որ ես պատահաբար այնպիսի բան մը ըրած էի, ինչ որ ծանրաբեռնուած էր հեռաձայնի գործավար համակարգը (operating system):

Ի՞նչ պիտի ըլլար, եթէ ես չփնտռէի այդ խնդիրին լուծումը: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ ժամանակ չյատկացնէի՝ մասնագէտներուն դիմելու համար: Ես պիտի օգտագործէի իմ հեռաձայնը իր հնարաւորութիւններէն շատ աւելի ցած մակարդակով եւ, ցաւօք, շատ ժամանակ պիտի վատնէի ու պիտի չկարենայի հաղորդակցիլ իմ ընտանիքին, խումբի անդամներուն եւ ընկերներուն հետ:

Մէկ քայլ առաջ երթանք: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ ոչինչ գիտնալի թեքթային հաղորդագրութիւններու մասին: Երեսուն տարի առաջ ես ոչինչ գիտէի նման հաղորդագրութիւններու մասին, առաւել եւս՝ սմարթֆոններու: Ընդամենը հարիւր տարի առաջ նոյնիսկ միջմայրցամաքային հեռախօսակապ չկար. այն պարզապէս գոյութիւն չունէր: Այդ ժամանակ ես ուրախ պիտի ըլլայի չորս ժամ անցընել՝ Հնդկաստան գտնուող իմ որդիին պարզապէս մէկ ակնթարթային հաղորդագրութիւն մը ուղարկելու համար: Որեւէ տեսակի կապը շատ աւելի լաւ տարբերակ պիտի ըլլար, քան կապի բացակայութիւնը:

Առանց գիտնալու, թէ ինչ ունիմ՝ ես այդքան ջանասիրաբար լուծում չէի փնտռեր եւ չէի անցներ բոլոր դժուարութիւններով, որոնք յառաջացան իմ ճանապարհին: Բայց ես գիտեմ իմ «iPhone»-ի առաւելութիւնները, եւ յատուկ այդ գիտելիքն էր, որ մեծ վիատութիւն յառաջացուց մէջս:

Երբ մենք չենք գիտեր մեր ներուժը, մեր մէջ պիտի չըլլայ ինչ որ բանի մը հասնելու ցանկութիւն եւ ձգտում: Մեզմէ շատերը չեն գիտեր, թէ ինչ ուժ ունի միաբան զինուորական դասակը, ինչպէս որ գիտէ իմ ընկերս, որ ծովային փոկ է: Պատկերացուցէք, որ անոր դասակին մէջ ինչ որ խնդիր մը յառաջանար, որ կրնար պարտութեան պատճառ դառնալ: Ատիկա պարզապէս չէր վրդովեցներ զինք. հաւանաբար, ան պիտի զրկուէր իր կեանքէն:

Վերոյիշելով մեր հինկտակարանեան պատմութիւնը՝ կրնա՞ք պատկերացնել, թէ որքա՞ն բարկացած էր ամբողջ Իսրայէլը Աքարին դէմ: Անոնք մեծ յաջողութիւն ունեցան Երիթրովի դէմ պատերազմելու ժամանակ, բայց Գայիէն յետոյ անոնք թաղեցին իրենց երեսունվեց մտերիմ ընկերները եւ պէտք է մխիթարէին այդ մահացած զինուորներուն ընտանիքները:

Կը պատկերացնէ՞ք Պօղոսին վիատութիւնը, երբ կը տեսնէր, որ իր սիրելի կորնթացիները կը կոչին հոգեւոր քրիպտոնաքարի սարսափելի հետեւանքները՝ տկարութիւն, անբուժելի հիւանդութիւններ եւ վաղաժամ մահեր: Ան քաջատեղեակ էր այդ մարդոց ներուժին, բայց անոնք

չէին գիտակցեր ատիկա: Անոնց անձնական նախընտրութիւնները ւաւելի կարեւոր էին իրենց համար, քան եկեղեցական համայնքի բարօրութիւնը:

Իսկ ի՞նչ կ'ըսէք ձեր մասին: Ի՞նչ կ'ըսէք ձեր քրիստոնէական համայնքին մասին: Կը կարծեմ՝ դուք կը կարդաք այս մարտահրաւեր նետող ուղերձը, քանի որ ձեր սրտի խորքէն գիտէք, որ քրիստոնէական կեանքը *աւելին* է: Աստուած դրած է այս ցանկութիւնը ձեր ներսը: Դուք ւաւելի շահագրգռուած էք, որ ունենաք լիարժէք կեանք Անոր ներկայութեան մէջ եւ ձեր համայնքին մէջ ականատես ըլլաք գործուն հոգեւոր վերափոխման, քան խուսափիք ժամանակաւոր անյարմարութենէն, որ կը յառաջանայ ճշմարտութեան հետեւելու պատճառով:

Ձեր լոյսը եկած է

Ուսումնասիրելով այս գիրքը՝ դուք պիտի ստանաք երկու մեծ առաւելութիւն: Առաջինը՝ ձեր եկեղեցական համայնքը արդիւնաւէտ պիտի գործէ, եւ երկրորդը՝ ձեր անձնական կեանքը պիտի ընդլայնի. դուք պիտի դառնաք ւաւելի պտղաբեր, ւաւելի կայացած եւ ւաւելի մտերիմ Աստուծոյ հետ (մինչեւ այս պահը կեդրոնացած ենք եկեղեցական համայնքին վրայ, բայց մենք պիտի անդրադառնանք նաեւ ձեզի՝ որպէս անհատ):

Ինչպիսի՞ն պէտք է ըլլայ մեր տեսիլքը մեր համայնքին վերաբերեալ: Ինչպէս եւ իմ «iPhone»-ի օրինակի պարագային, այս հարցումին պատասխանը պիտի բորբոքէ մեր ցանկութիւնը եւ պիտի դրդէ, որ շարունակենք բացայայտել ու շտկել այն ամէնը, ինչ որ առիթ չի տար գործելու մեր ամբողջական ներուժով:

Եսայեան կը մարգարէանայ.

«Ելի՛ր, լուսաւորուէ՛. քանզի քու լոյսդ եկաւ, ու Տէրոջը փառքը քու վրադ ծագեցաւ: Վասնզի ահա խաւարը պիտի ծածկէ երկիրը, եւ մառախուղը՝ ազգերը. բայց քու վրադ Տէրը պիտի ծագի, եւ Անոր փառքը քու վրադ պիտի երէնայ» (Եսայի 60.1,2):

Առաջին բանը, որ կ'ուզեմ մատնանշել այն է, որ Եսայեան չի խօսիր երկինքի մասին: Եւ ան նոյնպէս չի խօսիր Քրիստոսի հազարամեայ Թագաւորութեան մասին՝ այն ժամանակաշրջանին, երբ Յիսուս հազար տարի պիտի թագաւորէ այս երկրին վրայ, ինչպէս որ գրուած է Յայտնութեան գիրքին մէջ: Մարգարէն չի խօսիր նաեւ նոր երկինքի եւ նոր երկրի մասին, որոնց գալը կանխասուած է Պետրոսի եւ Նոր կտակա-

րանի այլ հեղինակներու կողմէն: Ո՛չ, ան կը նկարագրէ այն ժամանակաշրջանը, երբ խաւարը պիտի ծածկէ ամբողջ երկիրը: Անշուշտ, այս մարգարէութիւնը կրնայ վերաբերիլ մեր օրերուն, եւ ես կը հաւատամ, որ այդպէս է:

Մարգարէին խօսքերով՝ խաւարը պիտի ծածկէ ազգերը ոչ թէ ինչ որ աշխարհագրական հատուածներ, այլ ամբողջ աշխարհին մէջ: Մենք կ'ապրինք այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ խաւարը հետզհետէ կը թանձրանայ: Մենք աւելի ու աւելի կը հեռանանք մեր Արարիչի սրտէն: Ես չեմ խօսիր միայն աթէիսթներու, ակնոսթիքներու (agnostics) եւ աղանդաւորներու մասին, այլեւ շատերու, որոնք կը դաւանին, որ քրիստոնէայ են: Ասիկա այն ժամանակն է, որուն մասին Պօղոսը կը գրէ. «Մարդիկ այլեւս չեն լսեր առողջ եւ ողջամիտ ուսմունքը: Անոնք կը հետեւին իրենց ցանկութիւններուն եւ կը փնտռեն այնպիսի ուսուցիչներ, որոնք կ'ըսեն այն, ինչ որ իրենց մարմաջող ականջները կ'ուզեն լսել» (Բ. Տիմոթէոս 4.3, NLT): Այնուհետեւ ան հառաչանքով կը գրէ. «Եւ իրենց լսելիքը ճշմարտութենէն ետ պիտի դարձնեն» (խօսք 4):

Եսայեան կը գրէ, որ այս ժամանակաշրջանին ճշմարիտ հաւատացեալները պիտի լուսաւորեն կամ աչքի պիտի իյնան: Պատկերացուցէք ատիկա հետեւեալ կերպով. եթէ մտնէք մութ սենեակ մը եւ միացնէք լոյսը, խաւարը անմիջապէս պիտի ցրուի: Խաւարը չի կրնար յաղթել լոյսին. դուք երբեք լսած էք խաւար արծակող լապտերի մասին: Ո՛չ, լապտերը միայն լոյս կ'արծակէ, քանի որ, որքան ալ խաւար ըլլայ, լոյսը կը յաղթէ եւ կը ցրէ խաւարը:

Յիսուս ըսաւ, որ մենք այս աշխարհի լոյսն ենք: Մենք պէտք է լուսաւորենք, մենք պէտք է ըլլանք աւելի զօրաւոր, քան խաւարը, բայց ինչպէ՞ս ասիկա պէտք է տեղի ունենայ: Եսայեայի խօսքերով՝ մենք պէտք է այնպէս լուսաւորենք, որ անհաւատները տեսնեն Անոր *փառքը*:

«Փառք» բառը եբրայերէնի մէջ «քավոդ»-ն է, որ կը նշանակէ «շքեղութիւն, մեծութիւն, հարստութիւն, կարողութիւն, առատութիւն, պատիւ, վեհութիւն եւ ծանրութիւն»: Պահ մը մտածեցէք այս բառերուն մասին: Երբ Աստուածաշունչը կը խօսի Աստուծոյ փառքին մասին, նկատի ունի Աստուծոյ շքեղութիւնը, Աստուծոյ մեծութիւնը, Աստուծոյ հարստութիւնը, Աստուծոյ կարողութիւնը, Աստուծոյ առատութիւնը, Աստուծոյ պատիւը, Աստուծոյ վեհութիւնը: Այս սահմանումի վերջին բառը՝ «ծանրութիւնը» կամ «կշիռը» ցոյց կու տայ, որ մնացած յատկանիշները ոչ թէ սահմանա-

փակ են, այլ առկայ են առաւելագոյն չափով: Պարզ ըսելու համար՝ խօսքը Անոր մեծութեան կշռի մասին է:

Պօղոս կը գրէ, որ գիտելիքը այս մասին Աստուած դրած է «մեր սրտերուն մէջ, որ մենք ճանչնանք Աստուծոյ փառքը» (Բ. Կորնթացիս 4.6, NLT): Ան կը շարունակէ.

«Այս լոյսը կը շողայ մեր սրտերուն մէջ, բայց մենք նման ենք փխրուն կաւէ անօթներու, որոնք կը կրեն այս մեծ գանձը: Այս կերպով պարզ կը դառնայ, որ *մեր մեծ զօրութիւնը* Աստուծմէ է, ոչ թէ մեզմէ» (Բ. Կորնթացիս 4.7, NLT):

Ուշադրութիւն դարձուցէք «մեր մեծ զօրութիւնը» բառերուն: Աստուծոյ շքեղութիւնը, մեծութիւնը, հարստութիւնը, կարողութիւնը, առատութիւնը, պատիւն ու վեհութիւնը կը շողան մեր սրտերուն մէջ ամբողջ ուժով: Ահա թէ ինչն՝ ան կը պնդէ. «*մեր մեծ զօրութիւնը* Աստուծմէ է, ոչ թէ մեզմէ»: Այն զօրութիւնը, որուն մասին մենք կը խօսինք, կրնայ թափանցել որեւէ խաւարի մէջ, որ կը փորձէ կենալ մեր առաքելութեան ճանապարհին:

Երբ ծովային փոկերու դասակը առաքելութեան կ'երթայ, անոնք չեն ծրագրեր, որ պարտութեամբ պիտի վերադառնան, եւ սովորաբար ատիկա տեղի չունենար: Մենք ունինք անելի հաստատ խոստում, քան անոնք: Եւ այդ խոստումը ապահովուած է շատ անելի մեծ զօրութեամբ, որ թոյլ կու տայ մեզի յաջողութեան հասնելու:

Մինչեւ այս գիրքին աւարտը ես յաճախ պիտի օգտագործեմ «Անոր փառքը» արտայայտութիւնը՝ «Անոր մեծութիւնը» իմաստով (բայց մտապահեցէ՛ք նաեւ վերոյիշեալ սահմանումի միւս բառերը):

Եսայեան կը պնդէ, որ Անոր մեծութիւնը *պիտի ծագի* մեր վրայ, ոչ թէ *պիտի իջնէ* մեր վրայ: Ուրկէ՞ այն պիտի ծագի: Մեր սրտերէ՛ն: Յիշեցէ՛ք՝ «այս գանձը ունինք հողէ (կաւէ) անօթներուն մէջ» (խօսք 7):

Այսպիսով, հարցումս հետեւեալն է. «Ինչն՞ Անոր մեծ զօրութիւնը մեզմով չի յայտնուիր մեր հասարակութեան: Ո՞րն է պատճառը, որ մեզմէ շատերը տկար են, հիւանդ են եւ նոյնիսկ վաղաժամ կը մահանան: Արդեօ՞ք պատճառը այն է, որ մենք կը յանդուրժենք հոգեւոր քրիպտոնաբարը»:

Համայնքի ներուժը

Ինչպիսի՞ն կրնայ ըլլալ համայնքի ներուժը: Մտածեցե՛ք այն ժամանակուան մասին, երբ եկեղեցին սկիզբ առաւ: Պէնտէկոստէի օրը աշակերտները, որոնց թիւը մօտաւորապէս 120 էր, պահուըտած էին վայրի մը մէջ: Գրուած է, որ անոնք միաբան էին: Ո՞րն էր անոնց միաբանութեան պատճառը: Երբ Յիսուս յարութիւն առաւ մեռելներէն, պատուիրեց ամուսնացնել հինգ հարիւր հաւատացեալներու երթալ վերնատուն եւ սպասել Հօր խոստումին (տե՛ս Ա. Կորնթ. 15.6 եւ Դուկ. 24.33-53): Ինչո՞ւ ընդամէնը տաս օր յետոյ հոն 120 մարդ մնաց: Ինչո՞ւ բոլորը չսպասեցին, եւ ի՞նչ եղաւ մնացած 380 մարդոց հետ: Անոնց մասին այլեւս ոչինչ կը յիշատակուի՝ բացի այն բանէն, որ անոնցմէ մէկ քանին տակաւին ողջ էին մ.թ. 56 թուականին, երբ Պօղոսը կը գրէր Կորնթացիներուն ուղղուած իր նամակը: Մէկ բան մենք հաստատ գիտենք. անոնք չէին սպասեր Հօր խոստումին Երուսաղէմի մէջ՝ Յիսուսի պատուէրին համաձայն (տե՛ս Գործք 1.1-15):

Հնարաւոր է, որ այդ 380 մարդիկ համարեցին, որ պարտադիր չէր կատարել Անոր յանձնարարութիւնը, կամ՝ որ այն պարզապէս լաւ առաջարկ էր: Թէ՞ այդ մարդիկ մտածեցին, որ Անոր խնդրանքը կատարելը շատ դժուար էր: Թերեւս անոնք կը հաւատային, որ կրնային ծառայել Անոր իրենց ուզած ձեւով: Համոզուած եմ, որ վերնատունէն երթալէն յետոյ անոնցմէ ոմանք նոյնիսկ կը քարոզէին Անոր յարութեան մասին:

Այնուամենայնիւ, Աստուծոյ Հոգին, Որ նոյնպէս կը կոչուի *Փառքի Հոգի* (տե՛ս Ա. Պետրոս 4.14), չլեցուց զանոնք: Աստուծոյ մեծութեան Հոգիով մկրտուեցան այն 120 մարդիկ, որոնք մնացած էին: Ի՞նչը մէկ դարձուց զանոնք: Անոնք չվարուեցան ըստ իրենց կարծիքներու, ինչպէս միւս 380 մարդիկ: Ես կը հաւատամ, որ պատճառը անոնց վճռական հնազանդութիւնն էր Աստուծոյ Խօսքին, որ, իրենց կարծիքով, պէտք էր ճշդօրէն կատարել:

Աստուծոյ փառքը (որ կ'ընդգրկէ նաեւ Անոր զօրութիւնը) լեցուց զանոնք, եւ այդ օրը աւելի քան երեք հազար մարդ վերստին ծնաւ: Անոնք թռուցիկներ չէին բաժներ, գովազդներ չէին տեղադրեր հրէական ամսագրերուն մէջ, չէին կիրառեր զանգուածային ռազմավարութիւն ընկերակցական ցանցերուն մէջ եւ չէին գրուէր ռատիոթերթերը գովազդներով: Անոնք նոյնիսկ չէին ծրագրեր իրենց հաւաքոյթը: Այնուամենայնիւ, Աստուծոյ մեծութիւնը յայտնուեցաւ ամբողջ քաղաքին:

Կարճ ժամանակ յետոյ եւս հինգ հազար մարդ՝ չհաշուած կիներն ու երեխաները, վերստին ծնաւ այն բանէն յետոյ, երբ կաղ ծնած մարդ մը

վեր ցատկեց տեղէն եւ վազելով մտաւ տաճար: Այս բազմութեան դարձի գալը զարմանալի էր այն բանով, որ Պետրոսը եւ Յովհաննէսը նոյնիսկ չհասցուցին փրկութեան կոչ ընել, քանի որ անոնց ձերբակալեցին:

Ամբողջ Երուսաղէմ քաղաքը իրարանցման մէջ էր տեղի ունեցող իրադարձութիւններուն պատճառով: Բոլորը կը լսէին ուժգին քամիի ձայնը: Քաղաքի բնակիչները կը լսէին, թէ ինչպէ՛ս աշակերտները հրաշալի կերպով կ'ազդարարէին Աստուծոյ գործերը օտար լեզուներով եւ բարբառներով, որ անոնք չէին սորված: Բոլորը տեսան ակնառու հրաշքներ, որոնք եղան Յիսուսի անունով:

Քանի մը օր յետոյ բոլորը միաբան կ'աղօթէին, եւ այն շէնքը, ուր անոնք հաւաքուած էին, ցնցուեցաւ: Աստուածաշունչը չի չափազանցներ: Եթէ գրուած է, որ շէնքը ցնցուեցաւ, վստահ եղէք, որ այն դրդացած էր: Այս հաւատացեալներէն կը ճառագէր զօրութիւն, առատութիւն եւ բժշկութիւն:

Գրուած է. «Անոնց մէջ կարօտութիւն մը քաշող չկար» (Գործք 4.34): Գրուած է, որ Պետրոս կը քալէր փողոցներով, ոչ թէ մէկ փողոցով, այլ՝ փողոցներով, եւ բոլոր հիւանդներն ու տկարները, որոնց կը պառկեցնէին փողոցներուն մէջ, ընդամէնը պէտք է գտնուէին անոնցմէ շողքի մը հեռաւորութեան վրայ, եւ գրուած է. «Ամէնքն ալ կը բժշկուէին» (Գործք 5.16): Ասիկա է Աստուծոյ մեծութիւնը: Պատկերացուցէք, որ մէկ հաւատացեալ կը քալէ ինչ որ հիւանդանոցի մը միջանցքով ու կը բժշկէ բոլոր հիւանդները:

Աստուածաշունչը նոյնպէս կը յայտնէ, որ մարդ մը իր կնոջ հետ, հաւաքոյթներէն մէկուն ժամանակ աներկիւղ ստեցին հովիւին եւ մահացած իյնկան: Այդ մահերու մասին լուրը տարածուեցաւ ամբողջ քաղաքով եւ «մեծ ահ» յառաջացուց բոլոր լսողներուն մէջ, սակայն մարդիկ բարձր կարծիք ունէին հաւատացեալներու մասին (տե՛ս Գործք 5.1-13): Այս առողջ երկիւղը չհեռացուց մարդոց. ընդհակառակը, աւելի շատ մարդիկ կը միանային անոնց. «Տէրոջը հաւատացողները ա՛լ աւելի կը շատնային, այրեր եւ կիներ բազմութեամբ» (Գործք 5.14):

Այս երեւոյթը չէր սահմանափակուեր Երուսաղէմով: Յիսուսի հետեւորդները համարձակ կը վկայէին, եւ ամբողջ քաղաքներ կը փրկէին ու կը բժշկէին: Փիլիպպոսը, որ կը սպասարկէր այրիներու սեղանները ճաշարանին մէջ, գնաց Սամարիա քաղաքը: Գրուած է. «Վասնզի շատ դիւահարներէ պիղծ հոգիները մեծածայն աղաղակելով կ'ելլէին: Եւ շատ անդամալոյծներ ու կաղեր կը բժշկուէին: Մեծ ուրախութիւն եղաւ այն քաղաքին մէջ (Գործք 8.7-9): Շատ յայտնի կախարհ մը «զարմացած էր այն նշաններով եւ մեծ հրաշքներով, որոնք Փիլիպպոսը կը գոր-

ծէր» (Խօսք 13, NLT): Ամբողջ քաղաքը կա՛մ գիտցաւ Յիսուսին մասին, կա՛մ ընդունեց Ջինք եւ փրկուեցաւ:

Մենք կը կարդանք եւս դէպք մը այն մասին, որ Պետրոսը ակնթարթօրէն բժշկեց անդամալոյծ մարդը, որ ութ տարի զամուած էր անկողինին մէջ: Աստուածաշունչը կ'ըսէ, որ «Լիւդդիայի ու Սարօնի ամբողջ բնակչութիւնը տեսաւ, որ Ենիան կը քալէր, եւ անոնք դարձան Տիրոջ» (Գործք 9.35, NLT): Ոչ թէ մէկ քաղաք, այլ՝ երկու, եւ յատկապէս գրուած է, որ փրկուեցաւ «ամբողջ բնակչութիւնը»:

Յուպպէի մէջ Այծեմնիկ անունով կին մը յարութիւն առաւ մեռելներէն, եւ այդ մասին լուրը տարածուեցաւ ամբողջ քաղաքով. եւս բնակավայր մը ամբողջովին կրեց Աւետարանի ազդեցութիւնը:

Պետրոսը ձերբակալուեցաւ, բայց կէսգիշերին հրեշտակ մը եկաւ խստօրէն հսկուող բանտը եւ ազատեց զինք:

Իշխան մը մահացած իյնկաւ, եւ որդերը սկսան ուտել զինք՝ Աստուծոյ փառք չտալու համար: Աստուծոյ մեծութիւնը կը բացայայտէր ամբողջ ազգի խաւարը: Այդ լոյսէն պարզապէս անկարելի էր փախչիլ:

Հրաշքները, մեծ զօրութիւնը եւ փրկուած մարդիկը սկսան տարածուիլ հեթանոս համայնքներուն եւ քաղաքներուն մէջ: Նոյնիսկ գրուած է դէպքի մը մասին, երբ «Ասիայի բոլոր բնակիչները՝ հրեաները եւ յոյները, Տիրոջ Խօսքը լսեցին» (Գործք 19.10): Խօսքը հոս քանի մը գիւղերու կամ քաղաքներու մասին չէ, այլ՝ ամբողջ տարածաշրջանի: Եւ լսեցին *բոլորով*: Անոնք չունէին ընկերակցական ցանցեր՝ «Ֆէյսպուք», «Ինսթակրամ» եւ «Թուիթըր»: Չկային համացանցային կայքեր, արբանյակային կապ, հեռուստատեսութիւն եւ ռատիոյ: Չկային ինքնաշարժներ եւ նոյնիսկ հեծանիւներ, որ մարդիկ կարենային դիւրաբար հաւաքուիլ: Այնուամենայնիւ, բոլորը ամբողջ տարածաշրջանին մէջ լսեցին Տիրոջ Խօսքը: Ահա թէ ինչ տեղի կ'ունենայ, երբ ամբողջ եկեղեցին մէկ կը դառնայ, եւ երբ Աստուծոյ Խօսքը նախապատուութիւն կը ստանայ մեր քրիստոնէական համայնքներուն մէջ:

Աստուածային մեծութիւնը յայտնուեցաւ առաջին եկեղեցիին մէջ: Այնուամենայնիւ, յաջորդ գլուխին մէջ պիտի տեսնենք, որ Աստուծոյ ծրագիրը մեր սերունդին համար նոյնիսկ ավելին է: Այն, ինչ որ վերապրեցաւ առաջին եկեղեցին, նոյնիսկ մօտ չէ այն Աստուածային մեծութեան եւ զօրութեան, որ պիտի յայտնուի մեր Տէր եւ Թագաւոր Յիսուս Քրիստոսի վերադարձէն առաջ:

գործնական քայլ

Տեսնելով անհաւատալի հրաշքներ Նոր կտակարանին մէջ՝ մենք կրնանք դիւրաբար մտածել. «Հրաշալի էր, որ անոնք կ'ընէին աստիկա, բայց ինձի պէս մարդը երբեք չի կրնար այդպիսի բաներ ընել»: Ահա թէ ինչու այս գլուխը կարելոր է. հրաշքները եւ նշանները տեղի չէին ունենար այն պատճառով, որ այդ մարդիկ իւրայատուկ էին: Ատոնք տեղի կ'ունենային, քանի որ այդ սովորական մարդիկ պարզապէս կը հաւատային եւ կը հնազանդէին, որուն հետեւանքով Աստուծոյ մեծութիւնը կը ծագէր անոնց ներսէն:

Եթէ Աստուծոյ մեծութիւնը կրնայ բարձրանալ անոնց մէջ՝ աղմկոտ, անկիրթ, երիտասարդ, անվորձ եւ կանխակալ մարդոց կողմէն, որոնք ծանծրալի, սովորական աշխատանքներ ունէին, ապա մենք կրնանք վստահ ըլլալ, որ ոչ մէկ չափանիշ կայ, որ կը որակաւորէ մեզ՝ երկնային մեծութիւնը կրելու համար: Պարզապէս հարցը այն է, թէ արդեօ՞ք մենք հաւատարմօրէն կը հաւատանք եւ կը հետեւինք Աստուծոյ Խօսքին:

Դուք կը հաւատա՞ք, որ կարելի է կրկին տեսնել այդ հրաշքները, նոյնիսկ՝ ատելին: Եթէ ձեր եկեղեցին սկսի նման բաներ վերապրիլ, դուք անմիջապէս կը միանա՞ք ասոր: Կ'ուզէ՞ք ստանալ այն, ինչ որ Աստուած կը կամենայ տալ ձեզի: Արտայայտեցէ՛ք այս պատասխանները Աստուծոյ ուղղուած աղօթքով: Իսկ յետոյ ապաշխարեցէ՛ք, որ անհամապատասխան կամ որակազրկուած համարած էք դուք ձեզ այդպիսի կեանքի մը համար: Յանձնեցէ՛ք ձեր մտահոգութիւնները Աստուծոյ եւ նուիրեցէ՛ք ձեր անձը Անոր, որպէսզի Ան կատարէ ձեր կեանքին մէջ այն ամէնը, ինչ որ որոշած է:

ՄԷԿԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Խաչուելէն առաջ Յիսուս հնարաւորութիւն ունէր վերջին անգամ աղօթելու ոչ միայն Իր խումբի, այլեւ բոլորիս համար: Ան կը սկսի Իր խնդրանքը հետեւեալ խօսքերով. «Ես կ'աղօթեմ ոչ միայն այս աշակերտներուն համար, այլեւ անոնց, որոնք յետագային պիտի հաւատան Ինծի անոնց ուղերձին միջոցով» (Յովհաննէս 17.20, NLT): Անժխտելի է, որ Ան կը խօսէր ձեր եւ իմ մասին: Մենք ճանչցանք Յիսուսը անոնց ուղերձներուն միջոցով՝ կա՛մ կարդալով ատոնք, կա՛մ լսելով ինչ որ մէկէ մը:

Յիսուսը մարդու Որդին է. կը նշանակէ՝ Ան իշխանութիւն ունի խնդրելու, որ Հօր կամքը կատարուի այս երկրին վրայ այնպէս, ինչպէս որ այն երկինքն է: Ահա թէ ինչ կ'աղօթէ Ան.

«[Ես կ'աղօթեմ...] Որպէսզի ամէնքն ալ *մէկ* ըլլան, ինչպէս Դո՛ւն, ո՛վ Հայր, իմ մէջս, ու ես Քու մէջդ, որպէսզի անոնք ալ Մեր մէջ *մէկ* ըլլան եւ աշխարհը հաւատայ, թէ Դուն ղրկեցիր Զիս: Այն *փառքը*, որ Դուն Ինծի տուիր, Ես անոնց տուի, որպէսզի *մէկ* ըլլան՝ ինչպէս Մենք *մէկ* ենք (Յովհաննէս 17.21,22):

Ան կ'աղօթէր, որ մենք *մէկ* ըլլանք, որպէսզի աշխարհը հաւատայ, որ Յիսուս Քրիստոսը ամբողջ մարդկութեան Փրկիչն է: Ի՞նչը կը հասցնէ այս ուղերձը մեզ շրջապատող մարդոց: Գոյութիւն ունի միայն մէկ պատասխան՝ Անոր *փառքը*: Այս ճշմարտութիւնը վճռորոշ է մեր առաքելութեան համար: Ան պահած է Իր փառքը (Իր յայտնուած մեծութիւնը)

անոնց համար, որոնք մէկ են, բայց ահա թէ ինչպէս. *մէկ Անոր մէջ, ինչպէս որ Ան մէկ է Հօր հետ:*

Իսկ ինչպէ՞ս կ'արտայայտուէր Անոր մէկութիւնը Հօր հետ: Ան շարունակ այսպիսի պնդումներ կ'ընէր. «Ես... Իմ կամքս չեմ փնտռեր, հապա Անոր կամքը, որ Ձիս ուղարկեց» (Յովհաննէս 5.30), «Ես Երկինքէն իջայ՝ ո՛չ թէ Իմ կամքս ընելու, հապա Անոր կամքը, որ Ձիս դրկեց» (Յովհաննէս 6.38), եւ կրկին՝ «Ես հոս եմ, որ կատարեմ ամէն ինչ Քու ձեւով, ո՛վ Աստուած՝ այնպէս, ինչպէս նկարագրուած է Քու Գիրքին մէջ» (Եբրայեցիս 10.7, MSG): Ան մէկ էր Հօր հետ, քանի որ կը փնտռէր եւ կը կատարէր այն, ինչ որ կ'ուզէր Իր Հայրը, նոյնիսկ երբ ատիկա ընդունուած ու յարմարաւէտ չէր:

Նոյնը կարելի է ըսել առաջին աշակերտներու մասին: Բոլորը *միաբան* էին այն օրը, երբ Աստուած անոնց միջոցով յայտնեց Իր մեծութիւնը ամբողջ յայտնի աշխարհին: Խօսքը Անոր 120 հետեւորդներու մասին է, ոչ թէ այն տասնեակ հազարաւորներու, որոնք կը լսէին Յիսուսին խօսքերը Իր ծառայութեան երեք տարուան ընթացքին: Խօսքը նաեւ այն 380 աշակերտներու մասին չէ, որոնք տեսան Ձինք յարութիւն առած մարմինով, սակայն համարեցին, որ պարտադիր չէր հետեւիլ Անոր պատուէրին. խօսքը հաւատքով միաբանուած մարդոց մասին է:

Պօղոս կը խնդրէ, եւ նոյնիսկ կ'աղաչէ բոլորիս. «Ամէն ջանք ըրէ՛ք, որ միաբան մնաք Հոգիին մէջ» (Եփեսացիս 4.3, NLT): Այնուհետեւ ան կը նկարագրէ այն պարգեւները, որոնք Յիսուս անձամբ տուած է եկեղեցիին՝ առաքելներ, մարգարէներ, աւետարանիչներ, հովիւներ եւ ուսուցիչներ: Անոնց պարտականութիւնն է՝ կառուցել եկեղեցին յստակ առաքելութեամբ.

«Ասիկա պիտի շարունակուի, մինչեւ որ բոլորս հասնինք այնպիսի միաբանութեան մեր հաւատքի եւ Աստուծոյ Որդիին ճանաչողութեան մէջ, որ հասուն ըլլանք Տիրոջ մէջ եւ համապատասխանինք Քրիստոսի լիարժէք եւ կատարեալ չափանիշին» (Եփեսացիս 4.13, NLT):

Մեր առաքելութիւնը կամ նպատակը նոյնն է, ինչպէ՛ս որ առաջին եկեղեցիին մէջ էր. ըլլալ մէկ եւ ատոր հետեւանքով դառնալ Աստուծոյ մեծութիւնը (փառքը) յայտնողը: Չկայ այլ միջոց: Մեր սերունդը պէտք է մէկ դառնայ՝ միաբան հաւատքով եւ գիտելիքով: Միակ ուղին դէպի ճշմարիտ միաբանութիւնը նոյնն է, ինչպէս Յիսուսին եւ աշակերտներուն պարագային էր. հնազանդութիւնը՝ Աստուծոյ Խօսքին:

Մտածեցէ՛ք այս մասին. երբ Իսրայէլը մէկ էր, այն լիակատար պար-

տուրքեան մատնեց Երիքով քաղաքը: Երբ Իսրայելը մէկ էր Սողոմոնի թագաւորութեան ներքոյ, այն անպարտելի էր՝ որպէս ազգ, եւ իւրաքանչիւրը յաջողակ եւ գոհունակ կեանք ունէր՝ այնպիսին, որ տեսած էին ընդամէնը քանի մը սերունդներ: Կան նաեւ այլ օրինակներ, սակայն իմաստը հասկնալի է:

Դիտարկենք հակառակը: Անդրադառնալով Կորնթոսի մէջ գտնուող հոգեւոր քրիստոնաքարին՝ Պօղոս սկսաւ իր ուղերձը հետեւեալ խօսքերով. «Առաջինը՝ ես կը լսեմ, որ ձեր միջեւ հակառակութիւններ կան, երբ դուք կը հաւաքուիք որպէս եկեղեցի» (Ա. Կորնթացիս 11.18, NLT): Ակնյայտ է, որ անոնք *մէկ* չէին: Հարց կը ծագի. ի՞նչը թոյլ չէր տար անոնց մէկ ըլլալու: Պատճառը անոնց սիրախաղերն էին քրիստոնաքարի հետ՝ անոնց անհնազանդութիւնը Աստուծոյ Խօսքին: Նոյն ձեւով, Աքարի անհնազանդութեան պատճառով Իսրայելը այլեւս մէկ չէր եւ անպարտելի չէր, երբ յարձակեցաւ Գայիի վրայ:

Յանկարծ Պօղոս կը մօտենայ իրավիճակին այլ կողմէն եւ մէկ պնդում կ'ընէ, որ անտրամաբանական կը թուայ.

«... եւ ինչ որ չափով ես կը հաւատամ ատոր: Բայց, անշուշտ, ձեր միջեւ պէտք է բաժանութիւններ ըլլան, որպէսզի դուք, որ ունիք Աստուծոյ հաւանութիւնը, ճանչցուիք» (Ա. Կորնթացիս 11.18,19, NLT):

Ինչո՞ւ կարելոր է, որ ճանչցուին Աստուծոյ հաւանութիւնը ունեցող մարդիկ: Քանի որ այս կերպով կը բացուի ճանապարհը դէպի միասնութիւնը հաւատքի եւ Աստուծոյ Որդին ճանչնալու մէջ: Ասիկա նոյնքան կարելոր է, որքան մեծամասնութեան հնազանդութեան եւ Աքարի անհնազանդութեան բացայայտումը՝ յանուն Իսրայելի ժողովուրդի եւ անոր առաքելութեան: Անչափ կարելոր էր, որ 120 անսասան եւ հնազանդ աշակերտները առանձնացուէին այն 380-էն, որոնք վարուեցան իրենց ուզածին պէս: Նոյնը պէտք է տեղի ունենար Կորնթոսի եկեղեցւոյ մէջ: Հնազանդ *մեծամասնութիւնը* եւ *քանի* մը անհնազանդ մարդիկ պէտք է առանձնացուէին. հակառակ պարագային, ճանապարհը դէպի միասնութիւնը կը փակուէր, եւ Աստուծոյ փառքը (մեծութիւնը) չէր յայտնուեր Կորնթոսի մէջ: Ասիկա նոյնպէս կարելոր էր՝ բժշկութիւն բերելու համար այն անմեղ մարդոց, որոնք աներկիւղ չէին Տիրոջ Ընթրիքին հանդէպ, սակայն տառապանքներ կը կրէին (անոնք տկար էին, հիւանդ էին եւ վաղաժամ կը մահանային) մէկ քանիի պատճառով, որոնց վերաբերմունքը անյարգալից էր:

Պօղոս լաւ գիտէր, թէ որքան կարելոր է միաբանութիւնը առաջնա-

հերթ դարձնելը: Ան գիտէր, թէ ինչ կատարուեցաւ Երուսաղէմի, Սամարիայի, Անտիոքի եւ այլ քաղաքներու մէջ, որոնք ամբողջովին կրեցին Աստուծոյ մեծութեան ազդեցութիւնը: Այդ պատճառով, միաբանութեան մասին ան կը խնդրէր ոչ միայն Կորնթոսի եկեղեցիէն, այլեւ Եփեսոսի, Փիլիպպէի եւ Կողոսիայի մէջ գտնուող հաւատացեալներէն, ինչպէս նաեւ՝ բոլորէս այսօր: Յիսուսի օրինակով մենք գիտենք, որ միաբանութեան միակ ճանապարհը հնազանդութիւնն է Աստուծոյ Խօսքին:

Աւելի մեծ

Իսկ ի՞նչ կարելի է ըսել մեր օրերու մասին: Արդեօ՞ք միաբանութիւնը հաւատքի մէջ՝ մեր նպատակն է: Թոյլ տուէք սկսիլ՝ բաժնեկցելով աղօթքի ժամանակ ստացած փորձառութեամբ մը, որ երբեք չէմ մոռնար: Ես այնքան պարզ լսեցի. «Որդի՛ս, Գործք ամաքելոց գիրքը մանկական խաղ կը թուայ այն բանին համեմատ, ինչ որ Ես կը պատրաստուիմ ընելու եկեղեցիին մէջ եւ եկեղեցւոյ միջոցով՝ մինչեւ Իմ Որդիին վերադարձը»:

Ես ցնցուած էի: Իրականութեան մէջ, չհաւատացի իմ լսածին: Ես ընդդիմացայ՝ ըսելով. «Հայր, ինձի պէտք է երեք տարբեր յղում Աստուածաշունչէն՝ այս Խօսքին հաւատալու համար: Հետաքրքրական է, որ ես չզգացի տհաճութիւն, երբ խնդրեցի այս մասին: Մենք պէտք է *ամէն բան փորձենք* (տե՛ս Ա. Թեսաղ. 5.21): Բացի այդ՝ գրուած է. «Երկու եւ երեք վկաներու բերանով ամէն բան կը հաստատուի» (Բ. Կորնթացիս 13.1):

Ահա այն յղումներէն մէկը, որ Ան ցոյց տուաւ ինձի.

«Որովհետեւ այսպէս կ'ըսէ Ջօրքերու Տէրը. «Եւս մէկ անգամ (քիչ մը ժամանակ յետոյ), Ես պիտի շարժեմ երկինքը եւ երկիրը, ծովը եւ ցամաքը, եւ Ես պիտի շարժեմ բոլոր ազգերը, եւ անոնք պիտի գան Բոլոր Ազգերու Փափաքի մօտ, եւ Ես պիտի լեցնեմ այս տաճարը փառքով», - կ'ըսէ Ջօրքերու Տէրը: - «Այս վերջին տաճարի փառքը աւելի մեծ պիտի ըլլայ, քան նախորդինը», - կ'ըսէ Ջօրքերու Տէրը» (Անգեայ 2,6,7,9, NKJV):

Փոքրիկ պատմական տեղեկութիւն մը. տարիներ շարունակ Իսրայէլը գերութեան մէջ էր, սկիզբը՝ բաբելացիներու տիրապետութեան ներքոյ, իսկ յետոյ՝ պարսիկներու: Աստուած դրաւ Պարսից Կիրոս թա-

գաւորի սրտին մէջ ազատ արձակել այն հրեաները, որոնք կ'ուզէին վերադառնալ իրենց հայրենիքը եւ վերակառուցել այն տաճարը, որ կործանեց Նաբուգոդոնոսորը իր բաբելական բանակին հետ: Շատերը վերադարձան եւ խանդավառութեամբ սկսան կառուցել, սակայն որոշ ժամանակ յետոյ կորսնցուցին իրենց հետաքրքրութիւնը՝ անձնական շահերու եւ տեղացիներու կողմէն խիստ հակառակութեան պատճառով: Անգէ եւ Ջաքարիա մարգարէներու եւ այլ առաջնորդներու մարգարէութիւնները կրկին բորբոքեցին Աստուծոյ տունը միաբան կառուցելու ցանկութիւնը ժողովուրդի մէջ:

Այնուամենայնիւ, ամենակարեւոր հարցը հետեւեալն է. արդեօ՞ք մարգարէն կը խօսէր այն տաճարին մասին, որ անոնք, ի վերջոյ, աւարտեցին, թէ՞ ան կը խօսէր այլ տաճարի մը մասին: Յետագային Յիսուս ըսաւ. «Քանդեցէ՛ք այս տաճարը, եւ երեք օրուան մէջ զանիկա պիտի կանգնեցնեն» (Յովհաննէս 2.19): Թէեւ այդ պահուն Ան կանգնած էր տաճարին մէջ, բայց ատոր մասին չէր խօսեր, այլ՝ Իր մարմնի տաճարին: Կարելի՞ է արդեօք նոյնը ըսել նաեւ Անգէի մարգարէութեան մասին:

Աստուածաշունչի մեկնիչները եւ պատմաբանները կը տեղեկացնեն, որ Իսրայէլի եօթանասունամեայ գերութենէն յետոյ վերակառուցուած տաճարը չէր գերազանցեր Սողոմոնի տաճարի մեծութիւնը՝ թէ՛ իր տեսքով, թէ՛ Աստուծոյ յայտնուած ներկայութեամբ: Ինչ կը վերաբերի տաճարի արտաքին տեսքին, նոյնիսկ հարիւրաւոր տարիներ յետոյ, երբ Հերովդէսը գեղեցկացուց տաճարը, այն, միեւնոյն է, Սողոմոնի կառուցած տաճարէն աւելի փառաւոր չէր համարուէր: Եւ ինչ կը վերաբերի Աստուծոյ ներկայութեան, երբ Սողոմոնը ընծայեց իր կառուցած տաճարը, Աստուծոյ փառքը այնքա՛ն մեծ էր, որ թաւ ամպ մը լեցուց ամբողջ շինութիւնը, եւ քահանաները չկրցան շարունակել իրենց ծառայութիւնը: Պատմութիւնը ոչինչ կ'ըսէ մեզի Աստուծոյ ներկայութեան այդպիսի ուշագրաւ դրսեւորման մասին վերակառուցուած տաճարին մէջ:

Փարիսեցիները սխալ հասկցան Յիսուսին խօսքերը տաճարը կործանելու եւ երեք օրուան մէջ վերականգնելու մասին, քանի որ անոնք կ'ենթադրէին, որ խօսքը կառուցուած տաճարի մասին է: Նոյն կերպով, եթէ մենք սահմանափակենք Անգէի խօսքերը՝ վերագրելով ատոնք կառուցուած տաճարին, սխալ պիտի հասկնանք ատոնց իմաստը:

Ի՞նչ տաճարի մասին ան կը խօսի, եւ ո՞ր ժամանակահատուածի: Պողոս կը յայտարարէ. «Մի՞թէ դուք չէք հասկնար, որ *բոլորդ միասին* Աստուծոյ տաճարն էք, եւ որ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կ'ապրի» (Ա. Կորնթացիս 3.16, NLT): Նոյն Հոգին, որ լեցուց Սողոմոնի տաճարը, կ'ապրի մեր մէջ Իր լիութեամբ՝ հաւաքական առումով: Ես համոզուած եմ, որ

Անգէն կը գրէ ճիշդ այս տաճարի մասին, եւ որ վերջին տաճարը եկեղեցին է: Ատոր փառքը (Աստուծոյ ներկայութեան եւ զօրութեան մեծութիւնը) աւելին է անցեալին կառուցուած տաճարի փառքէն: Պօղոս կը գրէ.

«Եթէ այն օրէնքը, որ անյայտացաւ, եկած էր փառքով, ապա այս նոր ճանապարհը... շատ աւելի մեծ փառք ունի» (Բ. Կորնթացիս 3.11, NCV):

Մտածեցէ՛ք այն փառքի (մեծութեան, զօրութեան) մասին, որը յայտնուեցաւ Հին կտակարանին մէջ: Մովսէսին երեսը այնպէս կը փայլէր Աստուծոյ մեծ փառքի շնորհիւ, որ ան պէտք է քող կրէր՝ այդ փայլը ծածկելու համար: Երբ կառուցուեցաւ խորանը, Աստուծոյ ներկայութիւնը յայտնուեցաւ այնքան զօրաւոր կերպով, որ ոչ ոք կրնար մօտենալ: Երբ Սողոմոնը կառուցեց եւ ընծայեց տաճարը, Աստուծոյ յայտնուած ներկայութիւնը կրկին այնքան մեծ էր, որ քահանաները չկրցան շարունակել իրենց ծառայութիւնը: Անոր փառաւոր ներկայութիւնը զարմանալի եւ ակնածալի էր: Այնուամենայնիւ, Պօղոսին խօսքերով՝ «Այդ առաջին փառքը ընդհանրապէս փառաւոր չէր՝ նոր ճանապարհի փառքի մեծութեան համեմատ» (Բ. Կորնթացիս 3.10, NLT):

Իսկ ո՞ր ժամանակաշրջանի մասին է խօսքը: Արդեօ՞ք Անգէն կը խօսի եկեղեցւոյ ամբողջ ընթացքի մասին՝ սկիզբէն մինչեւ վերջ, այսինքն՝ Յիսուսի համբարձումէն մինչեւ երկրորդ գալուստը:

Կրկին կարդացէք Աստուծոյ այն խօսքերը, որոնք գրի առած է Անգէ մարգարէն.

«Եւս մէկ անգամ (քիչ մը ժամանակ յետոյ), Ես պիտի շարժեմ երկինքը եւ երկիրը, ծովը եւ ցամաքը, եւ Ես պիտի շարժեմ բոլոր ազգերը, եւ անոնք պիտի գան Բոլոր Ազգերու Փափաքի մօտ, եւ Ես պիտի լեցնեմ այս տաճարը փառքով» (Անգէ 2.6,7,9, NKJV):

Այն փառքը, որուն մասին Ան կը խօսի, կը յայտնուի նոյն ժամանակ, երբ Ան շարժէ ամէն ինչ: Եբրայեցիներու թուղթի հեղինակը կը հաստատէ ասիկա. «Ան եւս մէկ խոստում կու տայ. «Եւս մէկ անգամ Ես պիտի շարժեմ ոչ միայն երկիրը, այլեւ երկինքը»: Ասիկա կը նշանակէ, որ արարչագործութիւնը ամբողջութեամբ պիտի շարժի եւ պիտի հեռացուի, որպէսզի մնան միայն անշարժ բաները» (Եբրայեցիս 12.26,27, NLT):

Եբրայեցիներու թուղթը գրուած էր մ.թ. 68 թուականին՝ շատ աւելի

ուշ այն իրադարձություններին, որոնք ես նկարագրեցի նախորդ գլուխին մէջ, այսինքն՝ այն, որ հիւանդները կը դնէին Երուսաղէմի փողոցները, ամբողջ քաղաքներ կու գային Տիրոջը, ամբողջ տարածաշրջաններ կը լսէին Աստուծոյ Խօսքը, եւ այլն: Կը նշանակէ՝ Եբրայեցիներու թուղթին մէջ գրուած խոստումը չի վերաբերիր Գործք առաքելոց գիրքի ժամանակահատուածին. այն կը վերաբերի ապագային՝ աւարտին մօտ ժամանակահատուածին, երբ արարչագործութիւնը ամբողջութեամբ պիտի շարժի: Խօսքը վերջին սերունդի մասին է, որ պիտի տեսնէ Տէր Յիսուս Քրիստոսի վերադարձը:

Գոյութիւն ունի հաստատուած օրինաչափութիւն մը, որ կարելի է տեսնել ամբողջ Աստուածաշունչին մէջ. *Աստուած միշտ կը պահէ լաւագոյնը վերջաւորութեան համար*: Գրուած է. «Բանի մը վախճանը լաւ է անոր սկիզբէն» (Ժողովող 7.8): Յիսուս ցոյց կու տայ այս օրինաչափութիւնը Կանայի հարսանիքի ժամանակ՝ պահելով լաւագոյն գինին վերջաւորութեան համար: Աւելի ուշ Ան կը յայտարարէ. «Ինծի հաւատացողը, այն գործերը, որ Ես կը գործեմ, ան ալ պիտի գործէ, եւ անոնցմէ ա՛լ աւելի մեծ բաներ պիտի գործէ» (Յովհաննէս 14.12): Ինչո՞ւ «աւելի մեծ»-ը պէտք է տեղի ունենար այն բանէն յետոյ, երբ Յիսուս Երկինք համբարձէր: Որովհետեւ Ան միշտ կը պահէ լաւագոյնը վերջաւորութեան համար:

Նոյնը ճշմարիտ է եկեղեցիին պարագային. վերջը աւելի լաւ պիտի ըլլայ, քան սկիզբը: Գործք առաքելոց գիրքը ցոյց կու տայ ակնառու սկիզբ. մի՞թէ մենք պէտք է հաւատանք, որ եկեղեցւոյ ժամանակաշրջանի աւարտը երկրի վրայ պիտի ըլլայ պակաս փառաւոր, պակաս զօրաւոր եւ պակաս ազդեցիկ, քան սկիզբը: Յիշեցէք, որ Պօղոսը վճռորոշ կերպով կը պնդէ. «Որ ձեր հաւատքը մարդոց իմաստութեամբ չ'ըլլար, այլ՝ Աստուծոյ զօրութեամբ», եւ կրկին՝ «Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը ոչ թէ խօսքով է, այլ՝ զօրութեամբ» (Ա. Կորնթացիս 2.5 եւ 4.20): Զօրութիւնը՝ այս երկրի վրայ յայտնուած Աստուծոյ Թագաւորութեան կարեւորագոյն յատկանիշներէն մէկն է:

Վերականգնում

Սուրբ Հոգին աւելի շատ Աստուածաշնչեան հատուածներ ցոյց տուաւ ինծի, բայց նոյնիսկ համաձայն այն քանի մը հատուածներուն, որոնցմով բաժնեկցեցայ ձեր հետ, ակնյայտ է, որ մեր՝ հաւատացեալներու տեսիլքը պէտք է ընդլայնի, եւ նոյնիսկ՝ գերազանցէ այն, ինչ որ մենք կը կարդանք Գործք առաքելոց գիրքին մէջ: Հետաքրքրական է

նշել, որ Պետրոս առաքեալը, լեցուած Սուրբ Հոգիով, ազդարարեց.

«Ան կրկին պիտի ուղարկէ ձեզ Յիսուսին՝ ձեր նշանակուած Մեսիային: Որովհետեւ Ան պէտք է մնայ Երկինքը, մինչեւ ամէն ինչին վերջնական վերականգնման ժամանակը, ինչպէս որ Աստուած շատ վաղուց խոստացած է Իր սուրբ մարգարէներու միջոցով» (Գործք 3.20,21, NLT):

Աւելի ուշադրութեամբ դիտարկենք այս խօսքերը: Առաջինը՝ Յիսուս պէտք է մնայ Երկինքը, մինչեւ որ ինչ որ բան մը տեղի ունենայ: Կը նշանակէ՝ Ան չի կրնար վերադառնալ, քանի որ տակաւին չէ կատարուած Հօր խոստումը: Ո՞րն է այդ խոստումը, որուն մասին կը խօսէին նաեւ մարգարէները: Ատիկա տաճարի վերականգնումն է: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ Աստուծոյ շքեղութիւնը, մեծութիւնը, հարստութիւնը, կարողութիւնը, առատութիւնը, պատիւը եւ վեհութիւնը այլեւս սակաւ չեն ըլլար այս երկրի վրայ, այլ կը յայտնուին ամբողջական կերպով՝ Իր տաճարին մէջ եւ Իր տաճարին միջոցով:

Արդեօ՞ք ասիկա տեղի կ'ունենայ մեր օրերուն: Արդեօ՞ք եկեղեցին այնքան զօրաւոր է, որ մենք ականատես կ'ըլլանք ամբողջ քաղաքներու եւ տարածաշրջաններու փրկութեան: Արդեօ՞ք հիւանդանոցները կը պարպուին: Արդեօ՞ք կոյր աչքերը կը բացուին, կաղ ծնածները կը ցատկաբար եւ զԱստուած կը փառաբանեն: Արդեօ՞ք շէնքերը կը ցնցուին մեր աղօթքներու ուժէն: Արդեօ՞ք մենք ունինք այնպիսի առատութիւն, որ ծառայութիւնները եւ եկեղեցիները առանց արգելքի կրնան հասնիլ կորսուածներուն որեւէ երկրի մէջ: Արդեօ՞ք եկեղեցւոյ մարդիկը չունին կարիքներ: Թերեւս ճիշդ ասիկա է պատճառը, որ Անգէ մարգարէն կը հարցնէ.

«Ինչ որ մէկը կը յիշէ՞ այս տունը՝ Տաճարը՝ նախկին շուքով: Ինչպիսի՞ն է այն ձեզի համար հիմա՝ նախկինի համեմատ: Կ'երեւի թէ, այն *ոչինչի* պէս կը թուայ» (Անգէ 2.3, NLT):

Անգէն այս հարցումը կու տայ իր առջեւ կանգնած մարդոց, սակայն այսօր Աստուած նոյն հարցումը մեզի կու տայ: Եկէք անկեղծ ըլլանք. Գործք առաքելոց գիրքի համեմատ, Անոր յայտնուած ներկայութիւնը, որ կը վերապրինք այսօր, *ոչինչի* պէս կը թուայ: Եթէ մենք չհասկնանք այս ճշմարտութիւնը, ջերմեռանդօրէն չենք ձգտիր, որ Անոր մեծ զօրութիւնը վերականգնուի եկեղեցիին մէջ: Փոխարէնը, մենք պիտի բաւարարուինք անզօր եկեղեցի ըլլալով:

Արդեօ՞ք կրնանք առիթ տալ մեզի հանդուրժել միասնութեան բացակայութիւնը, որուն պատճառը մեզ տանջող քրիպտոնաքարն է: Կը խնդրե՛մ, կը խնդրե՛մ, լսեցե՛ք զիս. մենք պէտք է ձգտինք մէկ ըլլալու Անոր մէջ, եւ աստիկա կրնայ տեղի ունենալ, միայն եթէ հաւատանք եւ հնազանդինք Անոր Խօսքին:

Այժմ, երբ յստակ տեսանք մեր նպատակը, վերադառնանք քրիպտոնաքարի բացայայտման, որ կը խոչընդոտէ մեր առաջընթացին՝ թէ՛ անհատապէս, թէ՛ որպէս հաւատացեալներու համայնքի:

գործնական քայլ

Քանի տակաւին չենք գիտեր, թէ ինչը հնարաւոր է մեզի համար, մենք չենք դժգոհիր այն քիչին պատճառով, որ սովորական կը համարենք: Բայց այժմ՝ այս գլուխը կարդալէն յետոյ, դուք գիտէք, թէ ինչ կրնաք ունենալ: Այնպէս որ, դուք պէտք է յստակ որոշում կայացնէք. կա՛մ ընդունիլ այն թոյլ, անգոր եւ ազդեցութենէն զուրկ կեանքը, որ ծանօթ է եկեղեցւոյ մեծամասնութեան, կա՛մ շարունակ ձգտիլ այն զօրաւոր կեանքին, որ կը յայտնէ Յիսուս Քրիստոսի ամբողջական եւ բացայայտ մեծութիւնը:

Քանի տակաւին վստահ չէք, որ այս ամէնը հնարաւոր է, դուք ոչինչ կը ձեռնարկէք: Սակայն եթէ ոչինչ ընէք, դուք կ'ապրիք յարաբերական անզօրութեան մէջ: Կը նշանակէ՝ առաջին քայլը դէպի գործողութիւնը այն է, որ դուք որոշում կայացնէք վստահիլ Աստուծոյ Խօսքին եւ այն տեսիլքին, որ Ան տուած է ձեզի:

Եփեսացիներու թուղթին մէջ գրուած է, որ Յիսուս կը մաքրէ մեզ Իր Խօսքով: Մենք կրնանք օգտագործել մեր խօսքերը, որպէսզի համագործակցինք Անոր հետ մեր մաքրման ընթացքի մէջ: Գրեցե՛ք հռչակումներ այն զօրաւոր կեանքի մասին, որուն համար դուք կանչուած էք, օրինակ՝ «Յիսուս լեցուց զիս Իր զօրութեան Հոգիով՝ զիս շրջապատող մարդիկը փոխելու համար», կամ՝ «Աստուած կը բարձրացնէ Իր մեծութիւնը իմ ներսէն՝ կորսուածներուն հասնելու համար», կամ՝ «Ես օծուած եմ, որ ազդեցութիւն ձգեմ իմ աշխատակիցներուն վրայ եւ փոխեմ իմ աշխատավայրը»: Սկսէք հռչակել այս ճշմարտութիւնները ձեր կեանքին մէջ ամէն օր: Դուք պիտի տեսնէք, որ գործելու վստահութիւնը օրէօր պիտի աւելնայ ձեր մէջ:

ՇՄՈՒՆՆԱԿԱՆ ԳՐԱՆՈՒՄ

「ԲԱԺԻՆ 2」

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՈՒՒՏ

Յաջորդ քանի մը գլուխներուն մէջ կրնայ թուալ, թէ մենք քիչ մը կը շեղինք մեր ընթացքէն, բայց կը վստահեցնենք ձեզի՝ այն բանէն յետոյ, երբ հաստատենք քանի մը կարելոր ճշմարտութիւն, մենք պիտի շարունակենք խօսիլ այն հոգեւոր քրիպտոնաքարին մասին, որ կը կեղեքէ եկեղեցին:

Սովորական ամուսնութիւն

Դիտարկենք պատմութիւն մը, որ, համոզուած եմ, կը նկարագրէ մեր սուրբ եւ բացառիկ յարաբերութիւնները Աստուծոյ հետ շատ աւելի լաւ, քան որեւէ ուրիշ օրինակ, որ կրնամ մտաբերել:

Ճասթին անունով երիտասարդ մը արդէն մէկ տարի է կը հանդիպի Անժելա անունով աղջկայ մը հետ: Ճասթինին կարծիքով, այդ աղջիկը գեղեցիկ եւ հրաշալի անձնաւորութիւն է: Ան լրջօրէօն սիրահարուած է անոր եւ կը ցանկայ ամբողջ կեանքը անոր հետ անցընել:

Ճասթինը յատուկ երեկոյ մը կը կազմակերպէ: Երբ կու գայ որոշեալ պահը, ան ծունկի կ'իջնէ եւ կը բանայ շքեղ ադամանդով մատանիին փոքրիկ տուփը:

Անժելան կը համակուի զգացումներով: Յուզուած՝ ան կը ծածկէ երեսը, եւ ուրախութեան արցունքները կը հոսին անոր այտերուն վրայէն: Չկարենալով զսպել զգացումները՝ ան լուռ, բայց ոգեւորութեամբ գլուխով համաձայնութեան նշան կ'ընէ: Քիչ մը հանդարտելով՝ ան ուրախութեամբ կ'ըսէ. «Այո՛, այո՛, այո՛, ես կ'ամուսնանամ հետդ»:

Հեքիաթային հարսանիքը տեղի կ'ունենայ քանի մը ամիս յետոյ: Ատոր կը հետեւի մեղրամիսը՝ լի սիրով, ծիծաղով, արկածներով եւ ապագայի մասին երազանքներով: Անոնք ունին այն ամէնը, ինչ որ կրնայ երագել երիտասարդ գոյգը, եւ նոյնիսկ՝ աւելին:

Ժամանակը կ'անցնի, եւ ճասթինը կը յայտնաբերէ, որ Անժելան շատ աւելի զարմանալի անձնաւորութիւն է, քան ինքը կը կարծէր: Անոր հաճելի են արկածները, ան կը սիրէ զուարճանալ, ունի արտակարգ հումորի զգացում: Ան հրաշալի յարաբերութիւններ ունի ճասթինի ընտանիքին հետ եւ հաշտ է գրեթէ բոլորին հետ: Ան խելացի է, սրամիտ, եւ կը թուայ՝ միշտ մէկ քայլ առաջ է ճասթինէն: Ան ստեղծարար է, արուեստասէր է եւ վառ երեւակայութիւն ունի: Ճասթինը ցնցուած է այն գեղեցիկ փոփոխութիւններով, որոնք շարունակ տեղի կը կատարուին իրենց տունին մէջ: Անժելան շատ աւելի լաւ խոհարար է, քան ինքը: Եւ մէկ հրաշալի առաւելութիւն ունի՝ ան կոկիկ է եւ կազմակերպուած: Աւելորդ է ըսել, որ ճասթինը հաճոյքով կ'ընդունի անոր ներդրումը իրենց նորաստեղծ միութեան մէջ: Անոնց ապագան շատ պայծառ կը թուայ:

Կ'անցնին ամիսներ: Անոնց ամուսնական կեանքը արդէն կայուն ընթացքի մէջ կ'իյնայ: Օր մը երեկոյեան ճասթինը աշխատանքէն տուն կը վերադառնայ եւ կը սպասէ, որ պիտի հանդիպի Անժելային ու պիտի ստանայ անոր՝ արդէն աւանդական դարձած գրկախառնութիւնը եւ համբոյրը: Ան կը որոնէ Անժելային, սկիզբը՝ հիւրասենեակը, յետոյ՝ խոհանոցը, տան ետնամասի բակը, եւ վերջապէս՝ ննջասենեակը, ուր կը գտնէ զինք:

Այնպիսի տպաւորութիւն է, որ ան կը պատրաստուի դուրս ելլելու տունէն: Սենեակով մէկ տարածուած է ռոմանթիք երաժշտութիւնը եւ արդէն ծանօթ դարձած օծանելիքի բուրմունքը: Ի զարմանս ճասթինին, Անժելան ամբողջովին շպարուած է եւ հագած է գեղեցիկ զգեստ մը, որ ան կրած է մէկ անգամ, երբ ճասթինը հրաւիրած էր զինք իրենց սիրելի ճաշարաններէն մէկը:

Անժելան մէջքով կանգնած է ամուսինին եւ դեռ չէ տեսած, որ ան սենեակ մտած է: Ճասթինը խուճապի մէջ է. *«Արդեօ՞ք մենք ծրագրած էինք ընթրել այս երեկոյ, իսկ ես մոռացած եմ: Ես պէտք է ծաղիկի խառութ մը երթայի եւ վարդերու փունջ մը գնէի անոր համար»:*

Ան կը խախտէ լռութիւնը:

– Ողջո՛յն, թանկագինս:

Քիչ մը զարմանքի եկած՝ Անժելան կը պատասխանէ.

– Ողջո՛յն, սիրելիս:

Ան կը սկսի խոստովանութեամբ.

– Թերեւս ես ինչ որ բան մը մոռացած եմ: Մենք ծրագիրնե՞ր ունէինք այս երեկոյ:

– Ո՛չ, սիրելիս, - անմիջապէս կը պատասխանէ ան:

Քիչ մը շփոթուած՝ Ճասթինը արագօրէն կը փորձէ գնահատել իրավիճակը: Ան կ'եզրակացնէ, որ Անժելան անակնկալ պատրաստած է իրեն համար: Ան կը մտածէ. «Թերեւս մենք յատուկ ընթրիք մը պիտի ունենանք տունը, կամ անակնկալ երեկոյ՝ քաղաքէն դուրս»: Մինչ այդ Անժելան արդէն լիովին կ'աւարտէ իր հագնիլը եւ միւս պատրաստութիւնները:

– Սքանչելի տեսք ունիս այս երեկոյ, - կը հաճոյախօսէ Ճասթինը:

– Շնորհակալութիւն, սիրելի՛ս, - կը պատասխանէ ան:

Ճասթինը, տակաւին չհասկնալով, թէ ինչ տեղի կ'ունենայ, կը հարցնէ.

– Կ'ուզես, որ ես նո՞յնպէս հագնիմ:

Անժելան, արդէն քիչ մը իրար անցած, կը պատասխանէ.

– Կրնաս, եթէ կ'ուզես:

Ճասթինը, տակաւին փորձելով հասկնալ, թէ ինչ տեղի կ'ունենայ, կ'ըսէ.

– Ես պէտք է նոյնքան լաւ տեսք ունենամ, որքան դուն: Ես չեմ ուզեր ըլլալ իմ աշխատանքային հագուստով, երբ դուն այդքան գեղեցիկ հագած ես:

Ի վերջոյ, Անժելան, փարատելու համար այդ անյարմար խօսակցութիւնը, կ'ըսէ.

– Սիրելի՛ս, ես պայմանաւորուած եմ այս երեկոյ:

– Ես գիտեմ, եւ այդ պատճառով ալ կ'ուզեմ հագնիլ քեզի համար, - Ճասթինը արդէն բոլորովին շփոթուած է:

Փորձելով պարզաբանել իրավիճակը՝ Անժելան կ'ըսէ.

– Ո՛չ, սիրելիս, ես պայմանաւորուած եմ թոնիին հետ: Մենք պիտի ընթրենք, սինեմա պիտի երթանք եւ պիտի գիշերենք պանդոկի մէջ: Ես կը վերադառնամ մինչեւ վաղը կէսօր:

– Ո՞վ է թոնին, - կը բացականչէ Ճասթինը:

– Ան իմ զուգընկերը եղած է բարձր դասարաններու մէջ, - գործնական ոճով կը պատասխանէ ան:

– Ի՞նչ: Դուն չե՛ս կրնար հանդիպման երթալ անոր հետ:

– Ինչո՞ւ չեմ կրնար:

– Որովհետեւ մենք ամուսնացած ենք. մենք նուիրուած ենք մէկս միւսին եւ չենք ժամադրուիր ուրիշ մարդոց հետ:

– Դու՛ն լո՞ւրջ կը խօսիս, - կ'առարկէ Անժելան, - կան շատ տղաներ, որոնց հետ ես տակաւին մտերիմ եմ: Քու կարծիքով, ես պէտք է ձգեմ իմ յարաբերութիւնները անոնց հետ, միայն որովհետեւ մենք ամուսնացա՞ծ ենք:

– Այո՛, ամուսնացած մարդիկ ճիշդ այդպէս կը վարուին: Անոնք կը նուիրուին միայն այն մարդուն, որուն հետ ամուսնացած են, - կը պատասխանէ Ճասթինը վիրաւորուած եւ բարկացած ձայնով:

– Սպասէ՛, սիրելի՛ս, - կ'ըսէ Անժելան՝ փորձելով ե՛ւ պարզաբանել, ե՛ւ հանդարտեցնել իրենց առաջին լուրջ անհամաձայնութիւնը: - Դուն առաջինն ես իմ կեանքին մէջ: Ես կ'անցընեմ իմ ժամանակի մեծամասնութիւնը հետդ: Ես կը սիրեմ քեզ շատ աւելի, քան իմ բոլոր հին զուգընկերները: Բայց դուն չես կրնար ակնկալել, որ այլեւս պիտի չհանդիպիմ անոնց: Ես տարիներ շարունակ մտերիմ եղած եմ անոնց հետ: Ես տակաւին կը սիրեմ զանոնք եւ կ'ուզեմ ժամանակ անցընել անոնց հետ: Արդեօ՞ք ատիկա սխալ է:

Հաւանաբար, դուք հասկցաք, որ այս պատմութիւնը լաւ աւարտ չունեցաւ:

Համեմատութիւն

Ես գիտեմ, որ այս պատմութիւնը անհեթեթ կը թուայ, բայց, ի պաշտպանութիւն Անժելայի փաստարկին՝ թոյլ տուէք քանի մը հարցում հարցնել: Չէ՞ որ Ճասթինը առաջինն է անոր կեանքին մէջ: Չէ՞ որ ան կը սիրէ Ճասթինը աւելի, քան իր միւս զուգընկերները: Արդեօ՞ք ան բարձր չի գնահատեր իրենց յարաբերութիւնները: Արդեօ՞ք ան չ'անցըներ իր ժամանակին մեծամասնութիւնը անոր հետ: Արդեօ՞ք ան հրաշալի կին չէ շատ առումներով:

Մտածեցէ՛ք այս կերպով. Ճասթինը կրնար ամուսնանալ անփոյթ աղջկայ մը հետ, որ հոգ չէր տաներ իրենց տան մասին եւ կերակուր պատրաստել չէր գիտեր: Աղջկայ մը հետ, որ կեանքին մէջ չէր ունենար շարժառիթ մը եւ աւանդ մը՝ իրենց միութեան մէջ: Արդեօ՞ք ան կ'ակնկալէր, որ Անժելան պէտք է կատարեալ ըլլար ամէն ինչի մէջ: Ան պարզապէս պէտք է ժամանակ առ ժամանակ կիսէր զինք այլ տղամարդոց հետ: Ան կը ստանար Անժելայի ժամանակի իննսուն տոկոսը: Ինչո՞ւ ան այդքան կը բարկանար:

Անշուշտ, մեծամասնութեան համար այս հարցերը անհեթեթ են:

Այնպիսի տպաւորութիւն է, որ Անժելային ոչ ոք պատմած էր ամուսնութեան հիմնարար սկզբունքներուն մասին: Ան չէր գիտեր, որ ամուս-

նութիւնը ուխտ է տղամարդու եւ կնոջ միջեւ, որուն էութիւնն է՝ նուիրուիլ միմիայն մէկը միւսին: Ան ամուսնացաւ՝ ունենալով այնպիսի պատկերացումներ, որոնք կը տարբերէին ճասթինի պատկերացումներէն: Անժելային կը թուար, թէ իր դիրքորոշումը հաճելի, օգտակար եւ գործնական էր: Ան հրաշալի կեանք պիտի ունենար իր տունին մէջ եւ պիտի պահպանէր իր միւս յարաբերութիւնները՝ որպէս առաւելութիւն: Սակայն անոր դիրքորոշումը կը խախտէր ամուսնութեան սուրբ ուխտը:

Աւելի յստակացնենք այս ճշմարտութիւնը: Երբ կինը գեղեցիկ հարսանեկան զգեստ կը հագնի եւ կը քալէ նստարաններու շարքով՝ եկեղեցիին մէջ կամ ուրիշ վայրի մէջ, ուր տեղի կ'ունենայ ամուսնական արարողութիւնը, ան կարելի էր քան մը կ'ըսէ ատոր միջոցով. ան հրաժեշտ կու տայ մտերիմ յարաբերութիւններուն այս երկրին վրայ ապրող ռեւէ տղամարդու հետ: Ան վերջ կը դնէ բոլոր նախկին յարաբերութիւններուն այլ զուգընկերներու հետ, ինչպէս նաեւ կը յայտարարէ, որ այդ օրուընէ ի վեր պիտի չունենայ նոր յարաբերութիւն: Նոյնը կ'ըսէ այն տղամարդը, որ կը սպասէ անոր:

Օգտագործենք միեւնոյն օրինակը մեր կեանքին մէջ: Ինչպէ՞ս դուք պիտի վարուէիք, եթէ ըլլայիք նման իրավիճակի մը մէջ, որ յայտնուած էր ճասթինը: Կամ եթէ այն անձնաւորութիւնը, որուն հետ կը պատրաստուիք ամուսնանալու, ըսէր ձեզի նախօրոք՝ երբ դուք տակաւին նշանադրուած էք, որ այդպէս պիտի վարուի ձեզի հետ միաբանելէն յետոյ: Դուք կ'ամուսնանայի՞ք անոր հետ:

Չեմ կարծեր: Դուք կ'ըսէիք. «Ո՛չ մէկ պարագայի»:

Ո՞րն է ձեր միանշանակ պատասխանի պատճառը: Այն, որ դուք չէիք ուզեր ուխտի մէջ մտնել այլ պայմաններով: Դուք չէիք կամենար ձեր կեանքը ամբողջութեամբ նուիրել այնպիսի յարաբերութեան, որուն մէջ ձեր կողակիցը լիովին նուիրուած պիտի չըլլայ ձեզի:

Այսպիսով, դուք ոչ մէկ պարագայի կ'ամուսնանայիք այդպիսի պայմաններով, եւ չէիք անտեսեր այդ անընդունելի վարքը ամուսնանալէն յետոյ: Եկէ՛ք անկեղծ ըլլանք եւ տանք հետեւեալ հարցումը. «Կրնա՞նք արդէօք հաւատալ, որ Յիսուսը պիտի վեղադառնայ Անժելայի պէս հարսի մը համար»: Պահ մը կանգնեցէ՛ք եւ մտածեցէ՛ք այս մասին. Յիսուսի եւ մեր յարաբերութիւնները կը համեմատուին ամուսինի եւ կնոջ յարաբերութիւններուն հետ:

«Ինչպէս որ Սուրբ գիրքը կ'ըսէ. «Տղամարդը կը ձգէ իր հայրն ու մայրը եւ կը միանայ իր կնոջը, եւ երկուքը կը միանան՝ մէկ դառնալով»: Ատիկա մեծ արեղծուած է, բայց

ատիկա օրինակ է, որ ցոյց կու տայ, որ Քրիստոսը եւ եկեղեցին մէկ են» (Եփեսացիս 5.31,32, NLT):

Աստուած ամենասկիզբէն հաստատեց ամուսնական ուխտը, որպէսզի նկարագրէր մեր յարաբերութիւնները Իրեն հետ: Նոր կտակարանին մէջ Յիսուս նկարագրուած է որպէս փեսա, իսկ եկեղեցին՝ որպէս Քրիստոսի հարս: Այդ պարագային, ո՞րն է պատճառը, որ մենք ոչ միայն կ'արդարացնենք Անժելայի վարքը յիշեցնող վերաբերմունքը մեր Փեսային հանդէպ, այլեւ երբեմն կը խրախուսենք այն: Յակոբոս առաքեալը կը գրէ այս մասին: Հետեւեալ քանի մը խօսքերուն մէջ ան կը դիմէ միայն անոնց, որոնք կը դաւանին, որ քրիստոնէայ են:

«Ձեր շարժառիթները բոլորովին սխալ են. դուք կ'ուզէք միայն այնպիսի բաներ, որոնք հաճոյք կը պատճառեն ձեզի: *Շնացողներ*: Չէ՞ք հասկնար, որ ընկերութիւնը այս աշխարհին հետ Աստուծոյ թշնամին կը դարձնէ ձեզ: Ես կը կրկնեմ. եթէ կ'ուզէք ընկեր ըլլալ այս աշխարհին, դուք Աստուծոյ թշնամին կը դարձնէք դուք ձեզ: Կը կարծէք՝ Սուրբ զիրքերը անհմատ են: Ատոնց մէջ գրուած է, որ Աստուած նախանձաւոր է, որ այն Հոգին, որ Ան դրած է մեր մէջ, հաւատարիմ ըլլայ Իրեն: Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ Աստուած կը մօտենայ ձեզի: Լուացէ՛ք ձեր ձեռքերը, մեղաւորներ. մաքրեցէ՛ք ձեր սրտերը, որովհետեւ ձեր նուիրուածութիւնը բաժնուած է Աստուծոյ եւ այս աշխարհի միջեւ: Թող արցունքներ ըլլան ձեր ըրածին համար: Թող տրտմութիւն ու խոր վիշտ ըլլայ» (Յակոբոս 4.3-5,8,9, NLT):

Այս խօսքերը խիստ են: Մեր ժամանակներուն մէջ, երբ անհաւատարմութիւնը փոխյարաբերութիւններու մէջ լայնօրէն տարածուած է, կը թուայ՝ ատոնք շատ կտրուկ են, եւ նոյնիսկ՝ չափազանցուած: Երբ դեռահաս էի, ես *չափազանցելու* վատ սովորութիւն ունէի: Կը չափազանցէի գրեթէ ամէն ինչ: Վերջաւորութեան, իմ ընտանիքի անդամները եւ ընկերները այլեւս լուրջ չէին վերաբերիր ինձի:

Կը կարծեմ՝ բոլորս մեղաւոր եղած ենք ասոր մէջ՝ այս կամ այն չափով: Ծնողները յաճախ կ'ըսեն իրենց փոքրիկ երեխաներուն. «Եթէ կրկին այսպէս վարուիս, պիտի պատժուիս»: Թերեւս ատիկա կ'ազդէ առաջին կամ երկրորդ անգամ, բայց ի վերջոյ երեխան կը շարունակէ չինազանդիլ եւ կը պարզէ, որ այդ խօսքերուն ոչինչ կը հետեւի: Վերջաւորութեան, երեխան կը դադրի լրջօրէն վերաբերիլ իր ծնողներու ըսածին: Նոյնը տեղի

կ'ունենայ դպրոցին, աշխատավայրին, կառավարութեան, ընկերական շրջապատին եւ ընտանիքին մէջ: Չափազանց յաճախ մենք թեթեւօրէն կը վերաբերինք այն զգուշացումներուն, որոնց նպատակը մեզ պաշտպանելն է:

Յաւոք, Աստուածաշունչի զգուշացումներուն կը ցուցաբերենք միեւնոյն վերաբերմունքը: Մենք պէտք է յիշենք, որ Աստուած կ'ըսէ այն, ինչ որ նկատի ունի, եւ Ան նկատի ունի այն, ինչ որ կ'ըսէ: Կարելոր է յիշել, որ Սուրբ գիրքը ամբողջութեամբ ոգեշնչուած է Աստուծմէ (տե՛ս Բ. Տիմոթէոս 3.16): Կարդալով Յակոբոսին գրածը՝ մենք պէտք է հաշուի առնենք, որ ատիկա Աստուծոյ Խօսքն է:

Եթէ իսկապէս լրջօրէն կը վերաբերինք այս հատուածին, այն առողջ երկիրդ պիտի յառաջացնէ մեր մէջ: Այն քրիստոնեան, որուն նուիրումը բաժնուած է Աստուծոյ եւ այս աշխարհին միջեւ, *շնացող* է: Սսիկա խիստ բառ է: Գոյութիւն ունին շատ մեղքեր, որ կողակիցներէն մէկը կրնայ գործել միւսին հանդէպ՝ բամբասելը, ստելը, գողնալը, բարկանալը, պոռալը, կոպիտ վերաբերիլը եւ այլն: Ատոնցմէ ամէն մէկը կործանարար ազդեցութիւն կը ձգէ փոխյարաբերութիւններուն վրայ, եւ ատոնց կարելի չէ թեթեւօրէն վերաբերիլ, սակայն չկայ աւելի ծանր մեղք, քան շնութիւնը: Ահա թէ ինչու ճասթինը այդքան ցնցուած եւ բարկացած իր կնոջ վրայ: Անժելան գործած էր ամենածանր մեղքը անոր դէմ, սակայն իր վարքը բոլորովին սխալ չէր համարեր:

Յակոբոս առաքեալը կը շարունակէ՝ ըսելով, որ հոգեւոր շնութիւն գործելու ժամանակ մենք մեզ Աստուծոյ թշնամին կը դարձնենք: Ասիկա սարսափելիօրէն լուրջ իրավիճակ է, եւ յատկապէս մենք կը յառաջացնենք այն: Աստուած չի կամենար, որ մենք Իր թշնամիները ըլլանք, քանի որ Ան խորապէս կը սիրէ մեզ: Այնուամենայնիւ, երբ մեր սէրն ու նուիրումը կ'ուղղենք այս աշխարհի իրողութիւններուն եւ ճանապարհներուն, մենք յօժարաբար կը կենանք Անոր թշնամիներու շարքին:

Կարելի՞ է արդեօք թեթեւօրէն վերաբերիլ այս Խօսքերուն: Կարելի՞ է արդեօք ձեւացնել, որ Յակոբոսին թուղթի այս հատուածը Նոր կտակարանին մէջ չէ, եւ անտեսել այն: Յակոբոսը միակ հեղինակը չէր, որ կը գրէր այս մասին: Մենք պիտի տեսնենք, որ այս մասին կը գրէր Պօղոսը, որուն յայտնութիւնը շնորհքի մասին աւելին էր, քան Նոր կտակարանի միւս հեղինակներունը: Այս մասին կը գրէր նաեւ սիրոյ առաքեալ Յովհաննէսը: Պետրոսը եւ Յուդան նոյնպէս կը գրէին այս մասին: Բայց ամենակարեւորը՝ յարութենէն յետոյ Յիսուս կ'ըսէր նոյնը Ասիայի եկեղեցիներուն:

Յաջորդ գլուխներուն մէջ մանրամասնօրէն ցոյց պիտի տանք, թէ

ինչպէս հոգեւոր շնութիւնը մեզ Աստուծոյ թշնամին կը դարձնէ: Մենք պիտի տեսնենք, որ այս վերաբերմունքը եւ վարքագիծը ճիշդ այն քրիպտոնաքարն է, որուն մասին կը խօսինք:

գործնական քայլ

Աստուած նախանձաւոր է: Մեզմէ շատերը վաղուց գիտեն, որ Աստուածաշունչը կը սորվեցնէ այս մասին: Այնուամենայնիւ, շատ քրիստոնէաներ ժամանակ չեն յատկացուցած, որ մտածեն այս մասին, կամ ալ կը հաւատան, որ այս ճշմարտութիւնը կը վերաբերի միայն Հին կտակարանին: Ատիկա բացայայտ սուտ է: Ընդհակառակը՝ Յիսուսին զոհը լաւագոյնս ցոյց կու տայ, որ Անոր սէրը մեզի հանդէպ նման է հատարիմ փեսայի սիրոյն:

Անկասկած, անձամբ կը ցանկանք, որ Աստուած սիրէ մեզ նախանձաւոր կերպով, ոչ թէ անտարբերութեամբ, եւ մենք պէտք է խնդրենք Անորմէ շնորհք տալ մեզի, որ սիրենք Ձինք նոյն եռանդով եւ ընծայումով: Միայն այս պարագային հնարաւոր է մտերմութիւն ունենալ:

Քննեցէ՛ք ձեր սիրտը այսօր: Արդեօ՞ք ջերմեռանդօրէն կը սիրէք Յիսուսը: Խնդրեցէ՛ք Սուրբ Հոգիէն ցոյց տալ որեւէ ձգտում ձեր կեանքին մէջ, որ կը սպառնայ վերածուիլ Աստուծոյ դէմ շնութեան: Եթէ Ան ինչ որ բան մը կը յայտնէ ձեզի, անհրաժեշտ փոփոխութիւններ ըրէք: Նորովի մտորեցէ՛ք ձեր եւ Յիսուսին բացառիկ յարաբերութիւններուն շուրջ եւ կրկին նուիրեցէ՛ք ձեր անձը Անոր՝ կարծես կը նորոգէք ձեր ամուսնական երդումները:

ՇՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԴԷՍ

Յակոբոս առաքելի խօսքերը («Շնացողներ՝ Զէ՞ք հասկնար, որ ընկերութիւնը այս աշխարհին հետ՝ Աստուծոյ թշնամին կը դարձնէ ձեզ») խիստ են այն աստիճան, որ դուք հազուադէպ կը լսէք ատոնք եկեղեցական հաւաքոյթներուն եւ համաժողովներուն ընթացքին, ինչպէս նաեւ հաւատացեալներուն հետ հաղորդակցելու ժամանակ: Սակայն ինչպէ՞ս մենք կրնանք անտեսել ատոնք: Այնպէս չէ, որ այս պնդումը մեկուսի է Սուրբ գիրքին մէջ. ընդհակառակը, այս թեմային յաճախ կը հանդիպինք Աստուածաշունչին մէջ:

Եթէ ուսումնասիրենք Յակոբոսին խօսքերը եւ ականջ դնենք ատոնց մէջ գտնուող զգուշացման, մենք պիտի հեռացնենք որելէ շփոթմունք եւ վախ՝ կապուած ատոնց հետ: Եկէք կրկին կարդանք այս հատուածը.

«Շնացողներ՝ Զէ՞ք հասկնար, որ ընկերութիւնը այս աշխարհին հետ՝ Աստուծոյ թշնամին կը դարձնէ ձեզ: Ես կը կրկնեմ. եթէ կ'ուզէք ընկեր ըլլալ այս աշխարհին, դուք Աստուծոյ թշնամին կը դարձնէք ձեզ» (Յակոբոս 4.4, NLT):

Առաջինը՝ Աստուած չէ, որ մեր թշնամին կը դառնայ. մենք կը թշնամանանք Անոր հետ: Երկու տարբերակներն ալ, մեղմ ըսելու համար, մտահոգիչ են, սակայն ատոնց մէջ կայ տարբերութիւն:

Բոլորս տեսած ենք բախումներ, որոնք յառաջացած են մէկ կողմի պատճառով: Ուրիշ ձեռով ըսելու համար՝ կողմերէն մէկը կը սկսի բախումը, եւ միւսը ակամայ կը ներքաշուի ատոր մէջ, թէւ կը նախընտրէր չըլլալ ատոր մէջ: Օրինակ՝ 1941 թուականին Ճափոնցիները որոշեցին

մբակոծել Փըրլ Հարպըրը, եւ ատով իսկ իրենք զիրենք դարձուցին Միացեալ Նահանգներու թշնամին: Ամերիկան չէր որոշած եւ չէր ուզեր ներքաշուիլ այդ բախումին մէջ: Այնուամենայնիւ, իր սադրանքի պատճառով Ճափոնը կրեց աւելի մեծ պետութեան զայրոյթը:

Յակոբոսը կը խօսի ճիշդ այս մասին: Աստուած չ'ուզեր դուրս ելլել մարդոց դէմ, առաւել եւս՝ Իր գաւազներուն, բայց Ան չի խուսափիր բախումէն, եթէ մենք յամառօրէն նոյնանանք այս աշխարհի հետ: Այս հատուածին մէջ երկու անգամ կ'օգտագործուի «թշնամի» բառը: Յունարէնի մէջ այդ բառերը համապատասխանաբար «էխթարա»-ն եւ «էխթրոս»-ն են: Ատոնք ունին միեւնոյն իմաստը. միակ տարբերութիւնը այն է, որ առաջին բառը գոյական է, իսկ երկրորդը՝ ածական:

Հնարաւոր է, որ անգլերէնի թարգմանիչները չափազանց խիստ բառ օգտագործած են: Թերեւս բնագիրին մէջ «թշնամի» բառը աւելի մեղմ իմաստ ունի: Իրականութեան մէջ, ո՛չ: Յունարէն բառարան մը այս բառերը կը սահմանէ որպէս «թշնամի, թշնամանք եւ ռիսերիմութիւն» (*«Աստուածաշնչեան բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան»*): Մէկ ուրիշ բառարանի մը մէջ գրուած է՝ «ապրիլ թշնամանքով ինչ որ մէկուն հետ» (*«Հին յունարէնի Աստուածաշնչեան բառարան»*), եւ մէկ ուրիշ սահմանում՝ «ինչ որ մէկուն հետ թշնամութեան վիճակ» (*«Լուվ-Նայտայի յունարէն-անգլերէն բառարան»*): Ես ցոյց կու տամ սահմանումներ երեք հեղինակաւոր բառարաններէն, որպէսզի հաստատեմ այն փաստը, որ «թշնամի» բառը այս Աստուածաշնչեան խօսքին մէջ չ'արժէր փոխարինել այլ բառով: Անչափ կարեւոր է, որ մենք հասկնանք այս խօսքին լրջութիւնը:

Այնուամենայնիւ, կայ եւս մէկ փաստ, որն ա՛լ աւելի լրջութիւն կը հաղորդէ այս հատուածին: Այն, որ Յակոբոսը գրի կ'առնէ այս զգուշացումը, իսկ յետոյ կը կրկնէ, կը նշանակէ, որ անոր ըսածը խիստ կարեւոր է: Անոր կողմէն իր պնդումը կրկնելը հին հրեաներու քով ընդունուած գրական ձեւ էր: Թէեւ մենք թարգմանած ենք Նոր կտակարանի ձեռագրերու մեծ մասը յունարէնէն, առաքեալները, որոնք գրած էին ատոնք, հրեայ էին:

Ժամանակակից լեզուներուն մէջ գոյութիւն ունին քանի մը միջոցներ՝ բառը կամ արտայայտութիւնը շեշտադրելու համար: Մենք կրնանք գրել թեքսթը թաւատառով, շեղագիրով կամ ընդգծել այն, օգտագործել միայն զլիսատառեր, նաեւ բացականչական նշան կամ շեշտ աւելցնել: Մենք կ'օգտագործենք բոլոր այս միջոցները, որպէսզի ուղղենք մարդոց ուշադրութիւնը կարեւոր բառերուն կամ արտայայտու-

թիւներուն: Հրեայ հեղինակները կրկնակի կը գրէին շեշտադրուող բառը կամ արտայայտութիւնը, եւ անոնք մշտապէս զգուշութեամբ կ'օգտագործէին իրենց բառերը՝ որեւէ բան չչափազանցնելու համար:

Այսպիսով, բացի այն, որ Յակոբոսի զգուշացումը լուրջ եւ խիստ է՝ այն նաեւ շեշտադրուած է, որպէսզի մենք կարելոր համարենք այն: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ մենք չենք կրնար անտեսել անոր զգուշացումը:

Շնացող կանայք

Այսպիսով, ի՞նչ նկատի ունի Յակոբոսը՝ օգտագործելով «շնացողներ» բառը: Առաջինը՝ այս հատուածին մէջ ան չի խօսիր ամբողջ մարդկութեան մասին, այլ՝ միայն հաւատացեալներու: Մենք գիտենք ասիկա, քանի որ ան շարունակաբար կը նշէր իր նամակին մէջ. «Իմ սիրելի՛ եղբայրներ (եւ քոյրեր)»: Երկրորդը՝ անհաւատը ոչ մէկ պարագայի կրնայ շնութիւն գործել Աստուծոյ դէմ, քանի որ ան ուխտի մէջ չէ Աստուծոյ հետ:

Օրինակ՝ ես ամուսնացած եմ Լիզա Պիլիբիի հետ եւ չեմ կրնար անհաւատարիմ ըլլալ Ճէյն Սմիթին, քանի որ ամուսնական ուխտ չեմ կնքած անոր հետ:

Աստուծոյ դէմ կրնան շնութիւն գործել միայն անոնք, որոնք ընդունած են Յիսուս Քրիստոսը՝ որպէս իրենց Տէրն ու Փրկիչը: Մնացած բոլորը օտար են Աստուծոյ համար, հեռու են Անորմէ եւ չունին ուխտ Անոր հետ:

«Շնացող» բառը յունարէնի մէջ «մոյխօս»-ն է: Յունարէնի մէջ այս բառը օգտագործուած է իզական սեռով, սակայն, որպէս կանոն, կը թարգմանուի արական սեռով: Աւելի ճիշդ պիտի ըլլար թարգմանել այն որպէս «շնացող կանայք»: Աստուածաշունչի որոշ թարգմանութիւններուն մէջ («KJV», «NKJV») փորձ եղած է մեղմել այս անհամապատասխանութիւնը՝ թարգմանելով այն որպէս «շնացող տղամարդիկ եւ կանայք»: «Նոր կենդանի թարգմանութեան» («NLT») եւ միւս յայտնի թարգմանութիւններու թարգմանիչները, կը թուայ, դժուարացուցած են այս բառը իզական սեռի առումով. թերեւս անոնք չեն փափաքած, որ ընթերցողները մտածեն, որ Յակոբոսը կը խօսէր միայն կանանց մասին: Այնուամենայնիւ, կարդալով անոր նամակի համաթէքսթը ամբողջութեամբ, ակնյայտ կը դառնայ, որ Յակոբոսը կը դիմէ բոլոր հաւատացեալներուն: Աստուածաշունչի մեկնիչները համաձայն են, որ Յակոբոսը չի խօսիր միայն կանանց մասին, սակայն թէ

ինչու այս բառը չէ թարգմանուած իզական սեռով, առեղծուած է ոչ միայն ինծի համար, այլև՝ Աստուածաշունչի մեկնիչներուն:

Ասիկա ա՛լ աւելի առեղծուածային է այն պատճառով, որ «շնացող կանայք» ձեւակերպումը աւելի շատ կը համապատասխանի Աստուածաշունչի ընդհանուր համաթեքսթին: Աստուած յաճախ կը խօսի Իր ժողովուրդին հետ՝ օգտագործելով ամուսնութեան փոխաբերութիւնը եւ անուանելով Ինքզինքը մեր ամուսինը, իսկ մեզ՝ Իր կինը:

Հին կտակարանի մարգարէները յաճախ կը դիմէին այս փոխաբերութեան: Եսային կը գրէ. «Որովհետեւ քու Արարիչը քու Ամուսինն է. Երկնքի զօրքերու Տէր է Անոր անունը» (Եսայի 54.5, NLT): Հետեւաբար, երբ Իսրայէլի հաւատարմութիւնը Աստուծոյ հանդէպ ի չիք կը դառնար կռակաշտութեան պատճառով, ան կը մեղադրուէր շնութեան մէջ: Եզեկիէլը կը գրէ. «Ես պիտի պատժեմ քեզ քու... շնութեան համար» (Եզեկիէլ 16.38, NLT): Աստուած կը խօսի Երեմիային միջոցով. «Իրաւունք, ո՛վ Իսրայէլի տուն, Ինչպէս կին մը իր էրկանը անհաւատարիմ կ'ըլլայ, այնպէս ալ դուք Ինծի անհաւատարիմ եղաք,- կ'ըսէ Տէրը» (Երեմիա 3.20):

Ովսէ մարգարէի ծառայութիւնը ամբողջութեամբ կը նկարագրէ կնոջ անհաւատարմութիւնը իր ամուսինին հանդէպ: Ան պատուէր ստացաւ ամուսնանալ մարմնավաճառի հետ: Այն ուղերձին մէջ, որ Ովսէն քարոզեց իր կեանքով, ան կը խորհրդանշէր Տիրոջը, իսկ անոր կին Գոմերը՝ Աստուծոյ ժողովուրդին: Նպատակը այն էր, որ Իսրայէլը տեսնէր, որ իրենց շնութիւնը ոչինչով կը տարբերէր այն կնոջ արարքէն, որ անհաւատարիմ է իր ամուսինին, այն ալ ոչ թէ մէկ, այլ՝ քանի մը սիրեկաններու հետ: Իսրայէլը «շնացող կին» էր:

Յովհաննէս Մկրտիչը նոյնպէս կ'օգտագործէ ամուսնութեան փոխաբերութիւնը՝ ըսելով. «Ան որ հարսն ունի, փեսան անիկա է, բայց փեսային բարեկամը, որ կը կենայ ու կը լսէ անոր, մեծապէս կ'ուրախանայ փեսային ծայնին համար» (Յովհաննէս 3.29):

Կրկին, Յիսուս Փեսան է, իսկ Աստուծոյ ժողովուրդը՝ հարսը:

Յիսուս նոյնը կ'ընէ, երբ կ'անուանէ Աստուծոյ ժողովուրդը «չար եւ շնացող ազգ» (տե՛ս Մատթ. 12.39, 16.4): «Շնացող» բառը, որ Ան կ'օգտագործէ, կրկին իզական սեռով է, ոչ թէ՛ արական:

Պողոս առաքեալը կը շարունակէ օգտագործել այս փոխաբերութիւնը՝ ըսելով, որ մենք հարսն ենք, իսկ Յիսուսը՝ Փեսան (Եփեսացիս 5.31,32): Այսպիսով, Աստուածաշունչին մէջ շարունակաբար կը տեսնենք, որ թէ՛ Հին, թէ՛ Նոր կտակարաններուն մէջ մենք՝ Աստուծոյ ժո-

ղովուրդս, կը նկարագրուինք որպէս կին՝ Աստուծոյ հետ մեր յարաբերութիւններուն մէջ: Ասիկա է պատճառը, որ Յակոբոսը կ'օգտագործէ «շնացողներ» բառը իգական սեռով, ինչ որ կը համապատասխանէ հաստատուած Աստուածաշնչեան օրինաչափութեան:

Կռապաշտութիւնը շնութիւն է

Հին կտակարանի յիշատակումները այն մասին, որ Յուդան եւ Իսրայէլը շնութիւն կը գործէին Աստուծոյ դէմ, մշտապէս կը վերաբերէին կռապաշտութեան: Պարզ ըսելու համար՝ մարդիկ անհաւատարիմ էին Աստուծոյ: Մտածելով կռապաշտութեան մասին՝ մենք կը պատկերացնենք տարբեր աստուածներու համար արծաններ, զոհասեղաններ եւ տաճարներ կառուցելը: Այնուամենայնիւ, երբ Յիսուսը շնացող անուանեց մարդոց, նկատի չունէր, որ անոնք կ'երկրպագէին այլ աստուծոյ քանդակած պատկերին: Ան ըսաւ ասիկա, երբ մարդիկ խնդրեցին, որպէսզի իրենց նշան ցոյց տայ՝ ապացուցելով, որ Ինքը Մեսիան է:

Թէեւ Յակոբոսը Աստուծոյ ժողովուրդին անուանեց շնացող կանայք, միեւնոյնն է, մենք չենք տեսներ, որ անոնք արծաններ, զոհասեղաններ եւ տաճարներ կառուցէին: Հետաքրքրական է, որ Յակոբոսը կը խօսէր գրեթէ նոյն բանի մասին, ինչի մասին որ Պօղոսը կը գրէր Կորնթոսի եկեղեցիին՝ խտրականութիւն եղբայրներու եւ քոյրերու հանդէպ (Յակոբոս 2.1-13), չարախօսութիւն կամ մարդոց մասին բացասաբար խօսիլը (Յակոբոս 3.1-12), նախանձի, խանդի եւ եսասիրական դրդապատճառներու դրսեւորում (Յակոբոս 3.13-18) եւ սեփական հաճոյքներուն ձգտիլը (Յակոբոս 4.1-3): Բոլոր այս արարքները հոգեւոր շնութեան նշաններ են:

Մի՞թէ Աստուածաշունչի յաջորդականութիւնը կը խախտի: Մի՞թէ Աստուծոյ ժողովուրդը կը մեղադրուի շնութիւն գործելու մէջ, այնպիսի բանի մը պատճառով, ինչ որ կռապաշտութիւնն է: Պարզ պատասխանն է՝ «Ո՛չ»: Այս ամէնը փոխկապակցուած է:

Ճիշդ այս պատճառով է, որ ժամանակակից եկեղեցին ըսես կ'անտեսէ Յիսուսը, Պօղոսի, Յակոբոսի եւ Նոր կտակարանի այլ հեղինակներու զգուշացումները: Մենք կը սահմանափակենք կռապաշտութիւնը՝ վերագրելով այն միայն օտար աստուածներուն նուիրում արծաններուն, զոհասեղաններուն եւ տաճարներուն: Ճշմարտութիւնը այն է, որ կռապաշտութիւնը կը վերաբերի նաեւ ժամանակակից Արեւմուտքի քրիստոնէութեան: Եւ հաւանական է, որ կռապաշտութիւնը շատ աւելի

տարածուած է մեր քով, քան այն երկիրներուն մէջ, ուր արծաններ, գոհասեղաններ եւ տաճարներ կը կառուցուին:

Իմ նպատակն է ցոյց տալ ձեզի, որ կռապաշտութիւնը ոչ միայն լայնօրէն տարածուած է մերօրեայ մշակոյթին մէջ, այլեւ նոյն քրիստոնաքարն է, որ թոյլ չէր տար Յուդային եւ Իսրայէլին յաջողութեան հասնելու. նոյն քրիստոնաքարն է, որուն մասին Պօղոսը կը գրէր Կորնթոսի եկեղեցիին. նոյն քրիստոնաքարն է, որուն մասին կը խօսէին Յակոբոսը եւ Նոր կտակարանի միւս հեղինակները: Այսօր նոյն քրիստոնաքարը առիթ չի տար, որ առանձին հաւատացեալները եւ եկեղեցին յաջողութիւն ունենան՝ յայտնելով Աստուծոյ մեծութիւնը մեր կորսուած եւ մահացող աշխարհին:

Այս աշխարհի շարժառիթը

Մինչեւ կռապաշտութեան մասին խօսիլը, շարունակենք ուսումնասիրել Յակոբոսի համարձակ յայտարարութիւնը: Ան վճռականօրէն կը պնդէ. «Դուք կ'ուզէք միայն այնպիսի բաներ, որոնք հաճոյք կը պատճառեն ձեզի», իսկ յետոյ կը կապակցէ այդ շարժառիթը «այս աշխարհին» հետ: Ան ցոյց կու տայ սկզբունք մը, որ հետեւողականօրէն ներկայացուած է Նոր կտակարանին մէջ. այս աշխարհի շարժառիթը եսակեդրոն ցանկութիւններն են: Յովհաննէս առաքեալը կը ձեւակերպէ ասիկա հետեւեալ կերպով.

«Որովհետեւ այս աշխարհը կ'առաջարկէ միայն ձգտում մարմնական հաճոյքներուն, ձգտում այն ամէնուն, ինչ որ մենք կը տեսնենք, եւ հպարտութիւն՝ մեր ձեռքբերումներուն եւ ունեցումներին պատճառով: Այս բաները Հօրմէն չեն, այլ՝ այս աշխարհէն» (Ա. Յովհաննէս 2.16, NLT):

Այս հատուածին մէջ Յովհաննէսի խօսքերը համընդգրկուն են, այսինքն՝ կը վերաբերին *ամէն ինչին* այս աշխարհին մէջ: Գոյութիւն ունին բազմաթիւ կուռքեր, սակայն բոլորն ալ կը վերաբերին այս խօսքին մէջ նշուած կարգերէն մէկուն: Այս աշխարհին հետ շնութիւն գործելը կը նշանակէ *առաջնորդուիլ սաստիկ ցանկութեամբ* այնպիսի բաներու հանդէպ, որոնք հաճոյք կը պատճառեն ձեր մարմինի հինգ զգայարաններուն կամ կը կառուցեն ձեր ինքնագնահատականը՝ առանց Աստուծոյ, այսինքն՝ *ձեր հպարտութիւնը*:

Աստուածաշունչի «Ուղերձ» շրջասութեան մէջ գրուած է. «Կը ցան-

կաք ամէն ինչ ձեր ուզած կերպով, կը ցանկաք ամէն ինչ ձեզի համար եւ կը ցանկաք կարելոր թուալ»: Ահա եւ այս աշխարհի շարժիչ ուժը: Այն կ'արտայայտուի հետեւեալ դիրքորոշմամբ. «Ես գիտեմ, թէ ինչն է լաւագոյնը ինձի համար, եւ ես կ'ուզեմ ատիկա»:

Ջաւեշտական է, որ Աստուած Ինքը կը ցանկայ, կը փափաքի եւ կը ձգտի տալ ձեզի լաւագոյնը: Իւրաքանչիւրս պէտք է ի սրտէ հաւատայ այս ճշմարտութեան: Ատիկա անչափ կարելոր է, քանի որ այս աշխարհը նման է ուժգնօրէն գայթակղեցնող սիրեկանի, որուն նպատակն է՝ հեռացնել մեզ Աստուծմէ: Այս աշխարհը կը հրապուրէ մեզ՝ համոզելով, որ իր առաջարկած տարբերակը շատ աւելի լաւ է, քան Աստուծոյնը: Ահա թէ ինչու Յակոբոսը համարձակ կը պնդէ.

«Ուրեմն, մի՛ խաբուիք, իմ եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր: Այն ամէնը, ինչ որ բարի եւ կատարեալ է, պարգեւ է, որ կ'իջնէ մեր քով մեր Հայր Աստուծմէ» (Յակոբոս 1.16,17, NLT):

Յակոբոսը կը սկսի՝ պատուիրելով մեզ չխաբուիլ, չմոլորուիլ կամ չտարուիլ այս աշխարհի հրապուրանքով: Անոր ըսելիքը հետեւեալն է. «Ձեզի համար չկայ ոչ մէկ բարի բան՝ առանց Աստուծոյ»: Եթէ ի սրտէ հաւատաք այս ճշմարտութեան, ձեզի անկարելի կ'ըլլայ հեռացնել Աստուծմէ: Կարելոր չէ, թէ որքան լաւ կը թուայ ինչ որ բան, որքան օգտակար դուք կրնաք համարել ատիկա, որքան ատիկա կ'ուրախացնէ ձեզ, որքան ծիծաղելի, զուարճալի կամ ընդունելի է ատիկա մեր հասարակութեան համար, որքան ողջամիտ տեսք ունի կամ որքան յայտնի կամ հարուստ կը դարձնէ ձեզ: Եթէ ատիկա հակառակ է Աստուծոյ գրուած Խօսքին, ատիկա բարի չէ ձեզի համար: Ի վերջոյ, ատիկա կը տանի ձեզի հոն, ուր չէք ուզեր ըլլալ. դուք կը պարզէք, որ յայտնուած էք մահուան ճանապարհին: «Կայ ճանապարհ, որ ճիշդ կը թուայ մարդուն եւ ուղիղ կ'երեւի անոր առջեւ, բայց ատոր վերջը մահուան ճանապարհն է» (Առակաց 14.12, AMPC):

Ամէն մարդու առջեւ կրնան ըլլալ տարբեր ճանապարհներ, որոնք կը տանին այս աշխարհի հետ շնութեան, բայց բոլորն ալ մէկ ընդհանրութիւն ունին: Ատոնք ճիշդ կը թուան, այսինքն՝ բարի, օգտակար, շահաւէտ, ընդունելի եւ իմաստուն: Այնուամենայնիւ, եթէ այդ ճանապարհները հակառակ են Աստուծոյ Խօսքին, ատոնք կ'աւարտին մահուամբ:

Ես համոզուած եմ, որ ճիշդ այս պատճառով Աստուած կը զգուշացնէ մեզ.

«Եւ հիմա, որդիներ՝ ըստ ինձի, եւ ուշադրութիւն ըրէք իմ բերանի խօսքերուն: Թող սիրտդ չխտորի դէպի այս աշխարհի ճանապարհները, եւ մի՛ մոլորուիր այս աշխարհի շաւիղներուն մէջ: Որովհետեւ այս աշխարհը շատերուն խոցտած ու վար նետած է, եւ բոլոր այս աշխարհի սպաննածները զօրաւոր էին: Դժոխքի ճանապարհները այս աշխարհի տունն է, որ կ'իջնէ մահուան սենեակները» (Առակաց 7.24-27, եւ փոխարինած եմ «ան» եւ «անոր» բառերը «այս աշխարհը» բառակապակցութեամբ):

Սողոմոնը կը գրէ այս խօսքերը՝ որպէս զգուշացում սեռական անբարոյութենէն, սակայն այս հատուածին մէջ աւելի խոր մարգարէական ուղերձ կայ. զգուշացէ՛ք այս աշխարհի գայթակղեցնող հնարներէն, որոնք խիստ հրապուրիչ են: Ինչպէ՞ս է, որ այդքան ազգեր՝ Իսրայէլի եւ Յուդայի հետ մէկտեղ, դիւրաբար կ'իջնեն այս աշխարհի մահուան սենեակները: Մի՞թէ կրնանք այնքան միամիտ ըլլալ, որ մտածենք, որ այդ ուժերը այլեւս գոյութիւն չունին: Սկսած յաջորդ գլուխէն՝ մենք պիտի բացայայտենք, թէ որքան իրական եւ ազդեցիկ են ատոնք:

գործնական քայլ

Ոչ ոք կ'ամուսնանայ՝ ծրագրելով, որ շնութիւն պիտի գործէ: Թէեւ ամուսնական երդումները կրնան քիչ մը վախճնող ըլլալ, ամուսնական զոյգերը ջանք չեն խնայեր՝ ատոնք պահելու համար: Այդ պարագային, ինչո՞ւ այդքան շատ ամուսնութիւններ կը ձախողին, ի թիւս այլոց՝ նաեւ անհաւատարմութեան պատճառով: Պատասխանները բազմաբնոյթ են, բայց բոլորին հիմքը այն է, որ մարդիկ կը դադրին պաշտպանուիլ իրենց յարաբերութիւնները կործանող ուժերէն:

Ձեր փոխյարաբերութիւնը Աստուծոյ հետ բառացիօրէն ձեր կեանքն է: Առանց Աստուծոյ՝ կեանք գոյութիւն չունի: Այնուամենայնիւ, այս աշխարհը կը փորձէ գայթակղեցնել ձեզ, որ շնութիւն գործէք Անոր դէմ: Ձեր կեանքը հսկելու լաւագոյն միջոցը ամբողջ սրտով Աստուծոյ ձգտիլն է:

Ի՞նչ կրնաք ընել՝ համոզուելու համար, որ բոլորովին ընծայուած էք Աստուծոյ:

Ինչպէ՞ս կը ծրագրէք ձեր կեանքը: Դուք կը պաշտպանէ՞ք ձեր ժամանակը Աստուծոյ հետ՝ խօսքը կարդալու, աղօթելու եւ ծոմեր պահե-

լու ձեր ժամանակը: Դուք կը փնտռե՞ք Աստուծոյ ծառայելու հնարաւորութիւններ ձեր եկեղեցիին, աշխատավայրին կամ բնակավայրին մէջ: Դուք կը կատարե՞ք ձեր աշխատանքը՝ ինչպէս երկրպագութիւն Աստուծոյ: Որոշեցե՞ք, թէ շնութենէն ինչպէս պիտի պաշտպանէք ձեր յարաբերութիւնները Աստուծոյ հետ: Կազմեցե՞ք ձեր ծրագիրը, գրի՛ առէք այն եւ սկսե՛ք կատարել:

Ի՞նչ ՊԱՀՈՒԱԾ Է ԿՈՒՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԵՏԵԻԸ

Մենք պէտք է բացայայտենք առեղծուածը կռապաշտութեան մասին: Ատիկա ո՛չ արագ, ո՛չ ալ դիրին կ'ըլլայ, սակայն կռապաշտութիւնը քողագերծելը բազմաթիւ յայտնութիւններ եւ մեծ օգուտ կու տայ մեզի տարբեր բնագաւառներուն մէջ: Մեծագոյն առաւելութիւնը այն է, որ մենք կը սորվինք բացայայտել այն մեր կեանքին մէջ, ինչ որ թոյլ պիտի տայ մեզի դիրաբար ճանչնալ հոգեւոր քրիպտոնաքարը: Եկէք սկսինք՝ խօսելով կռապաշտութեան արմատներու մասին:

Այս գիրքին առաջին գլուխին մէջ նշեցինք, որ Աստուած «դրած է յափտենութիւնը մարդուն սրտին մէջ» (Ժողովող 3.11, NLT): Ամէն մարդ այս մոլորակին մէջ ծնած է այս ներյատուկ յատկանիշով: Պօղոսը կը հաստատէ այս ճշմարտութիւնը՝ գրելով. «Նոյնիսկ հեթանոսները (անհաւատները), որոնք չունին Աստուծոյ գրուած օրէնքը, ցոյց կու տան, որ գիտեն Անոր օրէնքը, երբ բնագոյրէն կը հնագանդին օրէնքին՝ նոյնիսկ առանց այն լսելու: Անոնք ցոյց կու տան, որ Աստուծոյ օրէնքը գրուած է իրենց սրտերուն մէջ, որովհետեւ իրենց խիղճը եւ մտքերը կա՛մ կը մեղադրեն իրենց, կա՛մ կ'ըսեն, որ իրենք ճիշդ կը վարուին» (Հռովմայեցիս 2.14,15, NLT):

Ասիկա ճշմարտութիւն է. ամէն մարդ բնագոյրէն գիտէ Աստուծոյ ճանապարհները, քանի որ ատոնք գրուած են մեր խիղճին վրայ՝ մեր ծնելու պահէն: Լիզան եւ ես հասկցանք ասիկա, երբ կը դաստիարակէինք մեր չորս որդիներուն: Մանուկ հասակին, երբ անոնք կը հարուածէին իրենց եղբայրներէն մէկուն, կը շարտէին ուտելիքը, կը բարկանային իրենց ծնողներուն վրայ կամ այլ վատ բաներ կ'ընէին, անոնց հայեացքը մեղքի զգացում կ'արտայայտէր, թէեւ անոնց տակաւին չէին

սորվեցուցած, որ այդպէս վարուիլը սխալ է:

Քացի այն, որ գիտելիքը Աստուծոյ մասին կը գտնուի ամէն մարդուն սրտին մէջ՝ այն նաեւ ակնյայտօրէն կ'երեւի արարչագործութեան միջոցով.

«Անոնք գիտեն ճշմարտութիւնը Աստուծոյ մասին, որովհետեւ Ան *ակնյայտ* դարձուցած է այն անոնց համար... Այն ամէնուն միջոցով, ինչ որ Աստուած ստեղծած է, անոնք կրնան *պարզօրէն տեսնել* Անոր անտեսանելի յատկանիշները՝ Անոր յաւիտենական զօրութիւնը եւ Աստուածային բնութիւնը: Այնպէս որ, անոնք *արդարացում չունին*՝ զԱստուած չճանչնալու համար» (Հռովմայեցիս 1.19,20, NLT):

Մտածեցէ՛ք այս հաստատօն մէջ ընդգծուած բառերուն վերաբերեալ. *ակնյայտ* ըլլալու եւ *պարզօրէն տեսնելու* արդիւնքը մարդիկ *արդարացում չունին*: Իրականութիւնը հետեւեալն է. այն մարդը, որ անտեղեակ է Աստուծոյ մասին, չունի ոչ մէկ արդարացում: Իսկ Աստուած յայտնած է Ինքզինքը իւրաքանչիւրին, որ անկեղծ է եւ կը ցանկայ իմանալ ճշմարտութիւնը:

Երբեք լսա՞ծ էք նման հարցեր. «Ի՞նչ կը կատարուի Ափրիկէի անհասանելի տարածքներուն մէջ ապրող մարդուն հետ, որ երբեք չէ լսած Աստուծոյ մասին: Ինչպէ՞ս ան կրնայ փրկուիլ: Եւ ինչպէ՞ս Աստուած կրնայ դատապարտել զինք»:

Այսպիսի հարցերը, որոնք յաճախ նման են բողոքի, արդարացումներ են՝ հիմնուած այն իրողութիւններուն վրայ, որոնք մարդիկ արդէն գիտեն, կամ որ անոնք չեն ուզեր գիտնալ: Քանի որ անոնք խիղճ ունին, անոնք գիտեն, որ Աստուած իրական է, բայց կը մերժեն այդ ճշմարտութիւնը: Անոնք չեն ուզեր խոստովանիլ հետեւեալը. գիտելիքը Աստուծոյ մասին՝ հասանելի է իւրաքանչիւրին, որ կը փնտռէ ճշմարտութիւնը: Եթէ լիովին անկեղծ ըլլանք, նման հարցեր տուող մարդիկ պէտք է խոստովանին, որ կը մերժեն Ձինք: Սաղմոսերգուն կրկին կը հաստատէ, որ արարչագործութեան անդադար ծայնը կ'ազդարարէ Աստուծոյ մասին.

«Երկինքները կ'ազդարարեն Աստուծոյ փառքը:

Երկինքը կը ցուցադրէ Անոր վարպետութիւնը:

Օր օրէ անոնք կը շարունակեն խօսիլ, գիշեր գիշերէ յետոյ անոնք յայտնի կը դարձնեն Ձինք:

Անոնք կը խօսին առանց ծայնի եւ բառերու,

Անոնց ծայնը բնաւ չի լսուիր:

Սակայն անոնց ուղերձը տարածուած է երկրով մէկ, եւ

անոնց բառերը՝ ամբողջ աշխարհով» (Սաղմոս 19.1-4, NLT):

Գիտելիքը Աստուծոյ անսահման մեծութեան մասին շարունակաբար կը տարածուի ամբողջ աշխարհով՝ ամէն տարի, ամէն օր, ամէն ժամ եւ ամէն վայրկեան: Մի՞թէ այն չ'ընդգրկեր նաեւ Ափրիկէի անհասանելի տարածքներուն մէջ ապրող «անտեղեակ» մարդուն: Մարդը կրնայ այնպիսի կեցուածք ընդունիլ, ըսես ինքը անտեղեակ է Աստուծոյ գոյութենէն, բայց ճշմարտութիւնը ոչ միայն դրուած է անոր սրտին մէջ՝ ծնելու պահէն, այլեւ շարունակ կը խօսի անոր հետ՝ ամէն օր եւ ամէն գիշեր: Քանի տակաւին մարդը չէ հերքած ասիկա տարբեր պատճառաբանութիւններով, չէ համոզած ինքզինքը հակառակը եւ, ի վերջոյ, չէ այրած իր խիղճը՝ անմտութեան հասնելով, ան չի կրնար ժխտել այն իրողութիւնը, որ Աստուած գոյութիւն ունի:

Շրջադարձային պահը

Շրջադարձային պահը տեղի կ'ունենայ այն ժամանակ, երբ մարդը կա՛մ կ'որոշէ փնտռել կենդանի զԱստուած, կա՛մ «կը բաւարարէ» այս ցանկութիւնը՝ դիմելով ոեւէ *աստուծոյ* կամ *աստուածներու*, որպէսզի թեթեւցնէ իր խիղճը: Թերեւս մտածէք. *«Ես Արեւմուտք կ'ապրիմ, եւ մեր մշակոյթին մէջ աստուածներ չկան: Մենք չունինք արձաններ, սրբապատկերներ, տաճարներ եւ նմանատիպ բաներ»*: Կը խնդրե՛մ, համբերատար եղէք, եւ ես ցոյց պիտի տամ, որ Արեւմուտքի, ինչպէս եւ որեւէ այլ մշակոյթի մէջ, կան բազմաթիւ աստուածներ:

Ինչպէ՞ս կը յառաջանան այս *աստուածները*: Մենք պէտք է մտապահենք, որ բոլոր *աստուածներուն* կամ *կուռքերուն* ստեղծած է մարդկութիւնը: Մարդը կը ձգտի բաւարարել իր բնածին գիտակցումը Աստուծոյ գոյութեան մասին, նաեւ՝ ունենալ ճիշդ դիրք Անոր առջեւ: Երբ կը ստեղծուի աստուածութեան այլ տարբերակ, այն պատրաստողը կ'որոշէ, թէ ինչը անհրաժեշտ է այդ Աստուծոյն հաճեցնելու համար: Բացի այդ՝ անոր պատրաստած աստուածը կը տրամադրէ կամ թոյլ կու տայ այն, ինչ որ կ'ուզէ զինք յօրինողը՝ միեւնոյն ժամանակ բաւարարելով այդ մարդուն մէջի երկրպագութեան ներքին ցանկութիւնը: Իսկ հիմա կարդացէ՛ք Պողոսին խօսքերու շարունակութիւնը.

«Այո՛, անոնք ճանչցան զԱստուած, բայց չուզեցին երկրպագել Անոր որպէս Աստուած, կամ նոյնիսկ՝ գոհանալ Անորմէ: Եւ սկսան յօրինել անմիտ գաղափարներ այն մասին, թէ ինչպիսին է Աստուած: Վերջաւորութեան, անոնց

մտքերը խաւար եւ շփոթուած դարձան: Պնդելով, որ իմաստուն են, փոխարէնը՝ բացարձակ անմիտներ դարձան: Եւ փառաւոր, յաւիտեան ապրող Աստուծոյ երկրպագելու փոխարէն, անոնք երկրպագեցին կուռքերու» (Հռովմայեցիս 1.21-23, NLT):

Պատկերներ (կուռքեր) պատրաստելը այս հատուածին մէջ ներկայացուած գլխաւոր խնդիրը չէ. այն ընդամէնը աւելի մեծ խնդրի հետեւանք է, որ՝ *Անոր որպէս Աստուած չերկրպագելն է*: Այս պահուն անչափ կարեւոր է ցոյց տալ, թէ ինչ է ճշմարիտ «երկրպագութիւնը»: Եթէ պատկերացնենք այն որպէս *դանդաղ երգ*, որ կ'երգէ եկեղեցւոյ փառաբանութեան խումբը, մենք բոլորովին սխալ պիտի հասկնանք այս հատուածին ըսելիքը: Ճշմարիտ երկրպագութեան սահմանումը երաժշտութիւնը եւ երգը չէ, այլ՝ *հնազանդութիւնը*:

Որպէս շարք մը գիրքերու հեղինակ՝ ես սորված եմ, որ երբ ոչ շատ ծանօթ բառ կամ հասկացութիւն կը ներկայացնեն որեւէ գիրքի մը մէջ, պէտք է տամ ասոր հիմնական սահմանումը առաջին իսկ անգամէն՝ կա՛մ անմիջապէս սահմանելով այն, կա՛մ այնպէս օգտագործելով այդ բառը, որ ասոր իմաստը հասկնալի դառնայ: Այսպէս կը վարուին բոլոր հեղինակները, եւ Աստուած բացառութիւն չէ:

Աստուածաշունչի լայնօրէն տարածուած թարգմանութիւններուն մէջ «երկրպագութիւն» բառը առաջին անգամ կը հանդիպի Ծննդոց 22.5-ին մէջ: Աբրահամը կը դիմէր իր ծառաներուն՝ ըսելով, թէ ինչ կը պատրաստուէին ընել Իսահակն ու ինքը լերան վրայ: Ահա անոր խօսքերը. «Ես եւ տղան մինչեւ հոն երթանք եւ *երկրպագութիւն* ընենք»: Ան ի՞նչ պիտի ընէր հոն: Ան դանդաղ ե՞րգ մը պիտի երգէր Աստուծոյ, թէ՞ եկեղեցւոյ երկրպագող երաժիշտներուն եւ երգիչներուն պիտի տանէր իր հետ: Բնա՛ւ: Ան կ'երթար հոն՝ հնազանդելու այն խօսքին, որ Աստուած ըսած էր իրեն երեք օր առաջ, այսինքն՝ զոհաբերելու իր միակ որդին:

Հռովմայեցիս 1.21-ին մէջ տարբեր թարգմանութիւններ կ'օգտագործեն «երկրպագել», «փառաւորել» եւ «պատուել» բառերը: Այս բառերը կապակցուած են: Մենք կը փառաւորենք եւ կը պատուենք զԱստուած կամ ոեւէ այլ իշխանութիւն ունեցող, երբ կը հնազանդինք: Եւ մենք կ'արհամարհենք եւ կ'անպատուենք, երբ չենք հնազանդիր: Մենք կրնանք շուրթերու ծառայութիւն մատուցել Աստուծոյ, պարծենալ եւ գովաբանել Ձինք, երգեր գրել Անոր մասին եւ այլն, բայց եթէ չենք կատարեր այն, ինչ որ Աստուած կ'ուզէ, մենք կ'անարգենք Ձինք, ինչ որ երկրպագութեան կամ պատիւի հակառակն է:

Անգամ մը Աստուած ըսաւ Իր ժողովուրդին. «Ես կ'ատեն ձեր ամբողջ ցուցադրանքը եւ կեղծաւորութիւնը... հեռացուցէ՛ք ձեր աղմկոտ փառաբանութեան երգերը: Ես չեմ լսեր ձեր տաւիղներուն երաժշտութիւնը: Փոխարէնը՝ կ'ուզեմ տեսնել արդարադատութեան մեծ հեղեղ, արդար կեանքի անվերջ գետ» (Ամովս 5.21,23,24, NLT): Արդար կեանքը Անոր իշխանութեան հնազանդիլն է, ոչ թէ այն, ինչ որ մենք Աստուածապաշտութիւն կ'անուանենք:

Հին ուխտի ներքոյ Աստուած հրահանգներ տուաւ Մովսէսին Իր համար ընդունելի զոհերուն վերաբերեալ: Կային տարբեր զոհեր, որոնք Իր ժողովուրդը կրնար մատուցել Իրեն՝ որպէս երկրպագութիւն. գառան զոհաբերութիւն (տե՛ս Ելից 29.39-41), ցուլի զոհաբերութիւն (տե՛ս Ելից 29.10-14), հացի ընծայ (տե՛ս Ելից 29.41) եւ շատ ուրիշ բաներ: Նոյնպէս, անոնք կրնային սուրբ խունկ այրել խորանին մէջ կամ տաճարին մէջ՝ որպէս երկրպագութեան տեսակ (տե՛ս Ղեւտ. 2.2): Սակայն օր մը Աստուած ըսաւ.

«Ես կ'օրհնեմ զանոնք, որոնք խոնարհ եւ կոտրուած սրտեր ունին, որոնք կը դողան Իմ Խօսքէն: Բայց իրենց ճանապարհները ընտրողներուն... զոհաբերութիւնները չեն ընդունուիր: Երբ նման մարդիկ *ցուլ* կը զոհաբերեն, ատիկա նոյնքան անընդունելի է, որքան մարդկային զոհաբերութիւնը: Երբ անոնք գառնուկ կը զոհաբերեն, այնպէս է, ըսես շուն զոհաբերած են: Երբ անոնք հացի ընծայ կը մատուցեն, նոյն ձեւով կրնային խոզի արիւն մատուցել: Երբ կնդրուկ կ'այրեն, այնպէս է, ըսես կուռք կ'օրհնեն» (Եսայի 66.2,3, NLT):

Ան կը սկսի՝ ցոյց տալով, թէ որոնք կը ստանան Իր օրհնութիւնները. անոնք, որոնք կը *դողան Իր Խօսքէն*: Այդպիսի մարդոց համար հնազանդութիւնը խիստ կարեւոր է: Նման մարդիկ Աստուծոյ ուշադրութեան կեդրոնն են:

Անկէ ետք Ան կը խօսի այն մարդոց մասին, որոնք իրենց ուզած ձեւով կ'երկրպագեն (կը հնազանդին) Իրեն: Անոնց երկրպագութիւնը ոչ միայն անընդունելի է, այլեւ հաւասարագօր է մարդկային զոհաբերութեան (սառնասրտօրէն կատարած սպանութեան), շուն զոհաբերելուն, խոզի արիւն մատուցելուն եւ կուռք օրհնելուն: Այս արարքները գարշելի են Աստուծոյ համար: Եթէ ինչ որ մէկը իրականութեան մէջ այդպիսի գարշելի զոհեր մատուցէր կամ սպանութիւն գործէր, զինք կը հեռացնէին Իսրայէլի ժողովուրդէն կամ մահապատիժի կ'ենթարկէին: Այս յայտարարութիւնը խիստ է եւ վճռական: Ակնյայտ է, որ անոնց երկրպա-

գութիւնը բնաւ երկրպագութիւն չէր, թէւ այն կը համապատասխանէր Ելից եւ Ղեւտացիներու գիրքերու ցուցմունքներուն:

Աստուածաշունչի «Ուղերձ» շրջատութեան մէջ գրուած է հետեւեալը. «Ձեր երկրպագութեան գործերը մեղսալի արարքներ են»:

Յիշեցէ՛ք, որ խօսքը այն ժողովուրդի մասին էր, որ ուխտի մէջ էր Աստուծոյ հետ եւ ստացած էր Անոր խոստումները: Ինչո՞ւ անոնք այդպիսի զգուշացումներ կը լսէին: Որովհետեւ անոնք կ'երկրպագէին Աստուծոյ իրենց ուզած ձեւով եւ չէին հնազանդէր Անոր: Նոյնը կը վերաբերի մեզի: Մենք կրնանք երգեր երգել Աստուծոյ, յաճախել երկրպագութեան հաւաքոյթներու, դաւանիլ, որ հաւատարիմ ենք Անոր, նոյնիսկ՝ համաձայն Նոր կտակարանին մէջ սահմանուած միջոցներու: Բայց եթէ մեր հիմքը հնազանդութիւնը չէ, մեր երկրպագութիւնը անօգուտ է: Չէ՞ որ գրուած է. «Դուք պէտք է ապրիք՝ որպէս Աստուծոյ հնազանդ զաւակներ» (Ա. Պետրոս 1.14, NLT):

Միւս հիմքային խնդիրը, որուն մասին կը խօսի Պօղոս առաքեալը, Աստուծո՛մէ չզոհանալն է կամ անշնորհակալ ըլլալը: Եթէ մենք համոզուած ենք, որ պէտք է որոշակի կենսամակարդակ ունենանք, որ արժանի ենք որոշ նիւթական իրերու, կամ եթէ կը ձգտինք որոշակի կարգավիճակի, մենք կը դառնանք եսակեդրոն եւ, հետեւաբար, անշնորհակալ: Չէ՞ որ մենք շատ աշխատած ենք, ծրագրած ենք մեր կեանքը, նպատակներ որոշած ենք եւ երազած ենք այն ամէնուն մասին, ինչ որ իրականացուցած կամ ստեղծած ենք, եւ մենք կը հպարտանանք մեր գործերով:

Հետեւանքային վարքագիծ

Երբ հնազանդելու, պատուելու եւ զոհանալու ցանկութիւնը կ'ուղղուի այլ բաներու՝ Աստուծո՛մէ բացի, կը յառաջանայ կռապաշտութիւն առանձին անհատի, ամբողջ համայնքի կամ ազգի մէջ: Պօղոսը կը շարունակէ.

«Այնպէս որ, Աստուած ձգեց զանոնք այն բոլոր ամօթալի բաներուն, որոնց փափաքեցան անոնց սրտերը: Վերջաւորութեան անոնք զարշելի եւ նուաստացուցիչ բաներ ըրին միմիանց մարմիններու հետ: *Աստուծոյ մասին ճշմարտութիւնը փոխեցին սուտի հետ*: Անոնք երկրպագեցին եւ ծառայեցին Աստուծոյ ստեղծածներուն, անձամբ Ստեղծողին ծառայելու փոխարէն, որ արժանի է յաւիտենական փառքի: Ամէ՛ն» (Հռովմայեցիս 1.24,25, NLT):

Յիշեցէք, որ այս ամէնուն հիմքը Աստուծոյ չինազանդիլն ու Անոր շնորհակալ չըլլալն է: Այժմ մենք կ'երկրպագենք (կը հնազանդինք) մեր անկում ապրած բնութեան ցանկութիւններուն: Մենք կը հպատակինք ստեղծուած բաներուն, որոնք այժմ ապականուած են եւ անէծքի տակ են: Մեր բարոյական կողմնացոյցը շեղած է, եւ *ճշմարտութիւնը փոխարինուած է սուտով*: Այսօրուան թուացեալ իմաստութիւնը իրականութեան մէջ յիմարութիւն է: Այն, ինչ որ բնական կը համարուի այս աշխարհին կողմէն, իրականութեան մէջ անբնական է: Վերջաւորութեան այն, ինչ որ իրականութեան մէջ *բարի* է, ներկայիս կը պիտակուի որպէս *չար*, եւ այն, ինչ որ իրականութեան մէջ *չար* է, *բարի* կը կոչուի: Մենք կը շարունակենք կարդալ.

«Ահա թէ ինչու Աստուած ձգեց զանոնք իրենց ամօթալի ցանկութիւններուն...» (Հռովմայեցիս 1.26, NLT):

Այս պնդումին հետեւող քանի մը խօսքերուն մէջ (137 բառ անգլերէն «NLT» թարգմանութեան մէջ) Պողոսը կը թուարկէ քսաներկու յանցանք Աստուծոյ դէմ: Որպէս ամփոփում՝ ատոնց կարգին են սպանութիւնը, քննադատութիւնը, ատելութիւնը, ազահութիւնը, ծնողներու հանդէպ անհնազանդութիւնը եւ համասեռամոլութիւնը: Ակնառու է, որ Պողոսը կը գործածէ այս 137 բառերէն յիսունինը (մօտաւորապէս քառասուներեք տոկոսը)՝ խօսելով համասեռամոլութեան մասին, սակայն մէկ-երկու բառով կ'անդրադառնայ մնացած քսանմէկ յանցանքներէն ամէն մէկուն: Ո՞րն է ատոր պատճառը: Մի՞թէ Աստուած կ'առանձնացնէ համասեռամոլութիւնը եւ թոյլ կու տայ վերաբերիլ համասեռամոլներուն որպէս աւելի մեծ մեղաւորներու, քան մնացած քսանմէկ յանցանքները գործողներուն: Անշուշտ՝ ո՛չ: Փոխարէնը, Ան պարզօրէն ցոյց կու տայ, որ համասեռամոլութեան նկատմամբ հակուածութիւնը ամենաճշգրիտ ցուցանիշներէն մէկն է, որ հասարակութիւնը սրընթաց կ'իյնայ կռապաշտութեան մէջ: Վերադառնանք Պողոսի խօսքերուն.

«Ահա թէ ինչու Աստուած ձգեց զանոնք իրենց ամօթալի ցանկութիւններուն: Նոյնիսկ կանայք շրջուեցան սեռական յարաբերութիւններ ունենալու բնական ճանապարհէն եւ փոխարէնը տրուեցան սեռական յարաբերութիւններու մէկը միւսին հետ: Եւ տղամարդիկ, կանանց հետ բնական սեռական յարաբերութիւններ ունենալու փոխարէն, կիրքով բորբոքեցան մէկը միւսին հանդէպ: Տղամարդիկ ամօթալի բաներ ըրին այլ տղամարդոց հետ, եւ իրենց մեղքի

հետեւանքով իրենց ներսը կրեցին այն պատիժը, որուն արժանի էին» (Հռովմայեցիս 1.26,27, NLT):

Այն հասարակութիւնը, որ կը դադրի Աստուծոյ գոյութիւնը ընդունիլ, Անորմէ գոհանալ եւ Անոր հնազանդիլ, հակուած կ'ըլլայ ընդունելու, հաստատելու (հաւանութիւն տալու) եւ, ի վերջոյ, ծափահարելու (կամ՝ խրախուսելու) սեռական այլասերութեան, յատկապէս՝ համասեռամոլութեան: Պօղոսը այս վարքը կ'անուանէ ամօթալի եւ անբնական:

Ճշմարտութիւնը կը փոխուի սուտին հետ, ինչ որ, ի վերջոյ, կը յանգեցնէ սեռային (ճենտըրային) խառնաշփոթի:

2017 թուականի Յունուարին «Նեշնըլ Դէոկրաֆիք» ամսագիրը իր ամսական թիւը նուիրեց թեմայի մը, որ անուանեց «Սեռային (ճենտըրային) յեղափոխութիւն»: Խմբագիրները հաւաքած էին խումբ մը մարդիկ, որ կը ներկայացնէր տարբեր սեռական (սեքսուալ) կամ սեռային (ճենտըրային) կողմնորոշումներ, որոնք մահկանացու մարդը ստեղծած է: Այդ ամսագիրը խորհրդատուութիւն ստացած էր մարդկային սեռական կեանքը ուսումնասիրող առաջատար մասնագէտներէն, որոնք տարբեր համալսարաններու ներկայացուցիչներ էին: Ահա որոշ թերմիններ, որոնք օգտագործուած էին՝ նկարագրելու համար սեռական (սեքսուալ) եւ սեռային (ճենտըրային) նախընտրութիւնները. անսեռ, համասեռական, երկսեռ, թրանսճենտըր, ինքնասեռ, համաճենտըրային, միջսեռային, հեթերոսեքսուալ, միջսեռային անզոյգ, թրանստոյգ, թրանսաղջիկ եւ այլն: Թէեւ ասիկա կրնայ տպաւորիչ թուալ, այս ամէնը պարզապէս յիմարութիւն եւ խաբէութիւն է: Նման թերմիններ օգտագործող մարդոց կը համարեն խելացի, կրթուած եւ արդիական փորձագէտներ: Ի՞նչ կը կատարուի մեր հասարակութեան հետ, եթէ այն առաջնորդուի այս մտածելակերպով: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներու կառավարութիւնը ծախսած է աւելի քան երկու հարիւր միլիարտ տոլար սեռային ինքնութեան եւ համասեռամոլութեան հետ կապուած խնդիրներուն համար*: Կրնա՞ք պատկերացնել, թէ որքան հնարաւորութիւններ կրնային ստեղծուիլ այդ միջոցներով: Ատոնք կարելի էր ուղղորդել՝ բարելաւելու համար դպրոցական շինութիւնները, ամրապնդելու ուստիկանութեան ուժերը, վերանորոգելու օդակայանները եւ այլ հանրային շինութիւններ, եւ ամենակարելորդ՝ օգնելու անտուն մարդոց, առանձին մայրերու եւ հաշմանդամներու: Այնուամենայնիւ, այս անասելի գումար-

* Մէթ Սթեյվըր. «Համասեռամոլութիւնը տասնեակ միլիարտաւոր տոլարներ կը խլէ կառավարութենէն», Պրայըն Թէշմըն, (Ապրիլի 16, 2015թ., ժ. 00:40, <http://www.rightwingwatch.org/post/mat-staver-homosexuality-costs-the-government-tens-of-billions-of-dollars/>):

րը ծախսուած է՝ ընտրելու համար այնպիսի սեռական կողմնորոշում, որ հակառակ է այն բանին, թէ ինչպէս Աստուած ստեղծած է մարդը: Ճիշդ ամենասկիզբէն Աստուածաշունչը կ'ազդարարէ. «Աստուած ստեղծեց մարդը... արու եւ էգ ստեղծեց զանոնք» (Շննդոց 1.27): Ան կ'որոշէ մեր սեռը. Ան գիտէ, թէ ինչն է լաւագոյնը, քանի որ կը սիրէ մեզ:

Այս ամէնը տեղի կ'ունենայ իմաստուն ըլլալու քողի ներքոյ, այնինչ իրականութեան մէջ մարդիկ յիմարաբար միջոցներ կը վատնեն: Ամենավատը այն է, որ աստիկա կը խրախուսէ սխալ վարքը եւ կը պահէ մարդիկ այնպիսի կենսաառճի գերութեան տակ, որուն համար անոնք ստեղծուած չեն:

Որպէս հասարակութիւն՝ մենք խաբուած ենք այն սուտին, որ ասիկա «մարդու իրաւունքներու» խնդիր է, եւ ատով իսկ առիթ տուած ենք մարդոց շատ փոքրիկ տոկոսի մը վերագրելու այս հարցը ռասայական կամ սեռային (ճենտրրային) խտրականութեան: Մենք պէտք է պայքարինք մարդու իրաւունքներուն համար, սակայն աստիկա չի վերաբերիր այն մարդոց, որոնք հակառակ են այն էութեանը, որմով իրենք ստեղծուած են:

Ասիկա անհեթեթ վարքագիծ է, որ, ըստ Պօղոսի մարգարէութեան, կը տարածուի, եթէ դադրինք ճշմարտապէս երկրպագել (հնազանդիլ) Աստուծոյ եւ գոհանալ Անորմէ: Այնպէս որ, ինչո՞ւ հաւատացեալները չեն բարձրածայներ եւ չեն բացայայտեր այս մոլորուած համոզմունքներն ու ջանքերը: Մենք սկսած ենք վախճալ ճշմարտութենէն եւ ընդունած ենք սուտերն ու խաբէութիւնը: Մենք ինկած ենք կռապաշտութեան մէջ, եւ այն հաստատուած է մեր երկրին մէջ:

Թերեւս հասարակութիւնը առաջընթաց անուանէ ասիկա, բայց իրականութեան մէջ ասիկա ետընթաց է դէպի յիմարութիւն: Պօղոսի վաղուց գրուած խօսքերը կը բացայայտեն, որ սեռական (սեքսուալ) եւ սեռային (ճենտրրային) այլասերութեան հիմքը կռապաշտութիւնն է: Ան կը շարունակէ՝ թուարկելով այլ հետեւանքներ.

«Քանի որ անոնք անմտութիւն համարեցին ընդունիլ Աստուծոյ գոյութիւնը, Ան ձգեց զանոնք իրենց անմիտ մտածողութեան եւ առիթ տուաւ ընել այնպիսի բաներ, որոնք երբեք պէտք չէր ըլլային: Անոնց կեանքերը լեցուեցան ամէն տեսակի չարութեամբ, մեղքով, ազահութեամբ, ատելութեամբ, նախանձով, սպանութեամբ, վէճերով, խաբէութեամբ, չարամիտ վարքով եւ բամբասանքով: Անոնք քննադատողներ են, զԱստուած ատողներ, ամբարտաւան, հպարտ եւ պարծենկոտ: Անոնք կը յօրինեն մեղանչելու նոր ձեւեր եւ անհնազանդ են իրենց ծնողներուն: Անոնք կը հրաժարին հասկնալէ, կը խախտեն իրենց խոստումները, ան-

սիրտ են եւ ողորմած չեն» (Հռովմայեցիս 1.28-31, NLT):

Պէտք չկայ շատ ուշադիր նայելու, թեման բնութագրող ուսումնասիրութիւն կազմակերպելու կամ ընկերբանական հետազօտութիւն (social studies) անցընելու՝ այս վարքագիծերը մեր հասարակութեան մէջ բացայայտելու համար: Ատոնք լայնօրէն եւ անվերահսկելիօրէն տարածուած են եւ կը կործանեն անհատներ, ընտանիքներ եւ ազգեր: Այս այլասերուած վարքագիծերը եւ ատոնք ընդունիլը հասարակական ճգնաժամերու, փոխարարբերութիւններու խզման եւ բոլոր տեսակի պատերազմներու պատճառն է:

Եթէ այս ամէնը տակաւին բաւականաչափ ողբերգական չի թուար, կարդացէ՛ք Պողոսին ամփոփումը.

«Անոնք գիտեն, որ համաձայն Աստուծոյ արդարադատութեան՝ այդ բաները ընող մարդիկ արժանի են մահուան, սակայն անոնք, միեւնոյնն է, կ'ընեն ատոնք: Աւելի վատը այն է, որ անոնք նաեւ կը խրախուսեն այլ մարդիկ՝ ընելու այդ բաները» (Հռովմայեցիս 1.32, NLT):

Կառավարութիւնը, զանգուածային լրատուամիջոցները, հեռուստատեսութիւնը, ֆիլմարտադրողները, ընկերային ծառայողները, առաջնորդները, ազդեցիկ մարդիկ եւ ամբողջ հասարակութիւնը քաջատեղեակ է, որ նման վարքը հակառակ է մեր Արարիչին, սակայն անոնք կ'անտեսեն այն, ինչ որ կ'ըսէ իրենց խիղճը եւ կ'ազդարարէ ամբողջ արարչագործութիւնը: Եւ իրենց խիղճը թեթեւցնելու համար անոնք կը խրախուսեն այլ մարդիկ եւս ընելու նոյնը՝ յուսալով, որ ասիկա պիտի լռեցնէ ճշմարտութիւնը իրենց սրտերուն մէջ:

Վերոյիշեալ թուարկուած բոլոր վարքագիծերը կռապաշտութիւն կոչուող հիմքային խնդիրի արդիւնքն են. մարդիկ չեն տար Աստուծոյ այն երկրպագութիւնը (պատիւը եւ հնազանդութիւնը) եւ գոհութիւնը, որոնց արժանի է Ան: Մենք պէտք է ընդունինք Աստուծոյ գոյութիւնը մեր վարքով, ոչ թէ պարզապէս մեր շուրթերու ծառայութեամբ: Ասիկա կը վերաբերի ամբողջ մարդկութեան. այնուամենայնիւ, ուղղենք մեր ուշադրութիւնը այն բանին, թէ ինչպէս կռապաշտութիւնը կ'արտայայտուի այն մարդու կեանքին մէջ, որ արդէն ունի յարաբերութիւններ Աստուծոյ հետ:

գործնական քայլ

Երկրպագութիւնը Աստուծոյ հնազանդելու, պատուելու եւ Անորմէ գոհանալու որոշում է: Երբ կ'անտեսենք ճշմարիտ երկրպագութեան տարրերէն որեւէ մէկը, մենք խոցելի կը դառնանք այն խաբէութեան համար, որ կռապաշտութեան կը տանի մեզ: Ասիկա ճշմարիտ է թէ՛ անհատական, թէ՛ մշակութային առումով:

Առաջին երկրպագութեան դէպքը Աստուածաշունչին մէջ այն էր, երբ Աբրահամը հնազանդեցաւ Աստուծոյ եւ գնաց՝ զոհաբերելու Իսահակը: Ի՞նչ պատուիրած է Աստուած ձեզի: Թերեւս Սուրբ Հոգին ինչ որ բան մը պատուիրած է ձեզի, երբ դուք Աստուածաշունչ կարդացած էք, կամ, թերեւս, Ան յատուկ առաջադրանք մը տուած է ձեզի:

Ինչպէ՞ս այս գլուխը փոխեց ձեր կարծիքը այդ առաջադրանքին մասին: Պահ մը հարցուցէք Աստուծոյ, թէ ի՞նչ քայլեր կրնաք ձեռնարկել այսօր, որպէսզի կատարէք այն, եւ անպայման գոհացէք Անորմէ, որ Ան ընտրեց ձեզ՝ այդ առաջադրանքը կատարելու համար, որ Ան խօսեցաւ ձեզի հետ, եւ որ Ան ձեզի հետ պիտի ըլլայ, երբ ընէք ձեր երկրպագութեան քայլը՝ հնազանդելով Անոր:

ՀԱՒԱՏԱՑԵԱԼԻ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Այս աշխարհի մարդոց կեանքին մէջ կռապաշտութիւնը խիստ վատ է, սակայն կենդանի Աստուծոյ հետ ուխտ ունեցող մարդոց կեանքին մէջ այն զարհուրելի է:

Յակոբոսը շնութիւն կ'անուանէ կռապաշտութիւնը: Պատճառը այն է, որ մենք ուխտ ունինք Աստուծոյ հետ. ուստի երբ մենք կը տրուինք կռապաշտութեան, անհաւատարիմ կ'ըլլանք մեր Փեսային՝ Տէր Յիսուս Քրիստոսին, ինչպէս անհաւատարիմ կողակիցը:

Սաւուղ թագաւորը եւ ամաղէկացիները

Սկսինք Հին կտակարանէն, ապա անցնինք Նոր-ին: Իսրայէլի ժողովուրդը ուխտ ունէր Աստուծոյ հետ, որ սկիզբ առած էր իրենց հայր Աբրահամէն: Սամուէլ մարգարէի միջոցով Աստուած տուած էր Իսրայէլի Սաւուղ թագաւորին հետեւեալ յանձնարարութիւնը. «Ուստի հիմա Տիրոջ Խօսքը լսէ՛» (Ա. Թագաւորաց 15.1): Անկասկած՝ ատիկա Աստուծոյ կամքն էր: Ատիկա յստակ եւ որոշակի էր: Թագաւորը հրաման ստացաւ բոլորովին ոչնչացնել ամաղէկացիները՝ իւրաքանչիւր տղամարդ, կին, երեխայ եւ ամէն կենդանի: Ատիկա Աստուծոյ վրէժն էր, քանի որ Ամաղէկը յարձակած էր Իսրայէլի վրայ, երբ ժողովուրդը կը փախչէր Եգիպտոսէն եւ անպաշտպան էր: Սաւուղ թագաւորը անմիջապէս զօրահաւաք կատարեց՝ Ամաղէկի վրայ յարձակելու համար: Այնուամենայնիւ, գրուած է.

«Սաւուղ զարկաւ Ամաղէկը Եւիլայէն մինչեւ Սուրը ու Ամաղէկի թագաւորը Ագազը ողջ բռնեց ու բոլոր ժողովուրդը սուրի բերնով ջարդեց: Բայց Սաւուղ ժողովուրդին հետ Ագազը եւ ոչխարներուն ու արջառններուն աղէկներն ու գէրերը եւ գառներն ու ամէն պատուական բաները խնայեցին եւ չուզեցին զանոնք ջարդել, միայն բոլոր անարգ ու անպիտան անասունները ջարդեցին» (Ա. Թագաւորաց 15.7-9):

Շատերը Իսրայէլի մէջ կը մտածէին, որ Սաւուղը հնազանդած էր Տիրոջ Խօսքին, սակայն անմիջապէս անկէ ետք գրուած է. «Տէրոջը խօսքը Սամուէլին եղաւ՝ ըսելով. «Սաւուղը թագաւոր ընելուս զղջացի, քանզի Ինձմէ ետ դարձաւ ու Իմ խօսքերս չկատարեց» (Ա. Թագաւորաց 15.10,11): Սաւուղը չտուաւ Տիրոջը այն երկրպագութիւնը՝ այն հնազանդութիւնը, որուն Ան արժանի էր: Ան հաւատարիմ չէր Աստուծոյ:

Ես կը յիշեմ շփոթած հայր մը, որ զիս կը վստահեցնէր, թէ իր ամենամեծ դժուարութիւնը դեռահաս որդիին հետ այն էր, որ ան մասնակի կը կատարէր իրեն տրուած բոլոր յանձնարարութիւնները, իսկ յետոյ կ'երթար իր ուզածը ընելու, ինչ որ, որպէս կանոն, իր ընկերներուն հետ հաղորդակցին էր: Երբ հայրը կը յանդիմանէր զինք, որդին սովորաբար բարկացած կը պատասխանէր. «Հայրի՛կ, հերի՛ք է խիստ ըլլաս հետս: Ես ըրի քու ըսածին իննսուն տոկոսը: Ինչո՞ւ այդքան պահանջկոտ ես»: Ինչո՞ւ չես նայիր իմ ըրած իննսուն տոկոսին, այլ կը տեսնես միայն այն տասը տոկոսը, որ *չեմ ըրած*»: Այդ մարդը սրտնեղած էր:

Ես ըսի անոր. «Աստուած նոյնպէս պահանջկոտ է»: Յիշեցուցի այս պատմութիւնը անաղէկացիներուն մասին: Ես ըսի, որ Սաւուղը, հաւանաբար, սպաննած էր առնուազն հարիւր հազար տղամարդ, կիներ եւ երեխաներ: Համոզուած եմ, որ ան սպաննած էր աւելի շատ ոչխարներ, այծեր եւ խոշոր եղջերաւոր անասուններ, քան խնայած էր: Այնպէս որ, մենք կրնանք համոզուածութեամբ ըսել, որ Սաւուղը կատարած էր Աստուծոյ պատուէրի աւելի քան իննսուն տոկոսը, սակայն Աստուած ըսաւ, որ Սաւուղը չէր հնազանդած Իրեն, իսկ յետագային, խօսելով Սաւուղի վարքին մասին, օգտագործեց «ապստամբութիւն» բառը (Խօսք 23):

Այս Աստուածաշնչեան օրինակը օգնեց այդ մարդուն հասկնալ, որ ան ճշդօրէն կը զգար, որ իր որդիին վարքը սխալ էր:

Իրականութեան մէջ, ես համոզուած եմ, որ Սաւուղ թագաւորը մօտ էր Աստուծոյ պատուէրի իննսունինը տոկոսը կատարելուն: Ինչո՞ւ Աս-

տուած չնայեցաւ Սաւուղի բոլոր գործերուն, այլ տեսաւ այն մէկ տոկոսը, որ ան չէր կատարած: Շատերուն կարծիքով ասիկա խիստ պահանջկոտութիւն է, սակայն Աստուծոյ համար մասնակի հնազանդութիւնը եւ, նոյնիսկ, գրեթէ ամբողջական հնազանդութիւնը բնաւ հնազանդութիւն չէ, այլ՝ ապստամբութիւն: Այն կը նշանակէ՝ չտալ Աստուծոյ այն պատիւի եւ երկրպագութեան դիրքը, որուն արժանի է Ան:

Սամուէլը յանդիմանեց Սաւուղը, որ իր խաբէութեան պատճառով բացարձակապէս մերժեց անոր մեղադրանքը, սակայն Սամուէլը մատնացոյց ըրաւ զոհաբերուող կենդանիներուն: Սաւուղը փորձեց մեղաւորութիւնը բարդել ժողովուրդին վրայ, բայց Սամուէլը շտկեց զինք. «Ո՛չ, դո՛ւն ես անոնց առաջնորդը, եւ դո՛ւն անհնազանդ եղած ես Աստուծոյ» (շրջասութիւն): Երբ Սաւուղը հարկադրուած ընդունեց մարգարէին յանդիմանութիւնը, Սամուէլը զարմանալի ճշմարտութիւն մը յայտնեց կռապաշտութեան վերաբերեալ.

«Քանզի ապստամբութիւնը կախարդութեան մեղքին *պէս*, ու անհնազանդութիւնը (կամ՝ կամակորութիւնը, յամառութիւնը) կռապաշտութեան *պէս է*: Որովհետեւ դուն Տիրոջը Խօսքը մերժեցիր, Ան ալ քեզ մերժեց, որպէսզի թագաւոր չըլլաս» (Ա. Թագաւորաց 15.23):

Այս պահուն պիտի խօսիմ երկրորդ պնդումին մասին. «Յամառութիւնը... կռապաշտութեան *պէս է*»: «Յամառիլ» բառը այս խօսքին մէջ կը նշանակէ «հրել» կամ «ճնշել»: Սաւուղը կը հրէր իրմէ ճշմարտութիւնը եւ լիակատար հնազանդութիւնը:

«Պէս» բառը այս խօսքին մէջ շեղագիրով գրուած է, ինչ որ կը նշանակէ, որ այն կը բացակայի բնագիրէն: Այդպիսի բառ չկայ եբրայերէնի մէջ, եւ թարգմանիչները աւելցուցած են այն՝ թեքսթը ընթեռնելի դարձնելու համար: Աւելի ճիշդ կ'ըլլայ այս հատուածը թարգմանել այսպէս. «Յամառութիւնը... կռապաշտութիւն է»:

Իրականութեան մէջ, երբ ինչ որ մէկը գիտէ ճշմարտութիւնը, գիտէ Աստուծոյ կամքը, գիտէ, թէ Աստուած ինչ ըսած է, սակայն կը հրէ ատիկա իրմէ ու չի հնազանդիր, ատիկա կռապաշտութիւն է: Ինչո՞ւ մարդիկ այդպէս կը վարուին: Քանի որ անոնց կամքը, երազանքները եւ ցանկութիւնները աւելի կարելոր են իրենց համար, քան Աստուծոյնը: Այդ ամէնը իրենց կեանքին մէջ աւելի մեծ առաջնահերթութիւն է, քան Ան, իսկ կուռքը այն է, ինչ որ մենք Աստուծոմէ աւելի կարելոր կը համարենք:

Սաւուղը կը հաւատար եւ նոյնիսկ կը դաւանէր. «Ես հնազանդեցայ Աստուծոյ», բայց քանի որ ան բոլորովին չէր հնազանդած Աստուծոյ,

այլ որոշած էր կարելորել ժողովուրդին ցանկությունները (աւելի ճիշդ՝ իր ցանկությունները) աւելի, քան Տիրոջ Խօսքը, ատիկա կռապաշտութիւն էր: Այն կուրցուց զինք՝ թոյլ չտալով տեսնել իր արհամարհանքը Տիրոջ հանդէպ:

Այն, ինչ որ կը վերաբերէր ամբողջ մարդկութեան Հռովմայեցիս թուղթին մէջ, ճշմարիտ է նաեւ Սաւուղի պարագային: Սաւուղի կռապաշտութեան հիմքը արծաններ, արծանիկներ, զոհասեղաններ եւ տաճարներ չէին: Խնդիրը այն էր, որ ան պատշաճ երկրպագութիւն չէր տար Աստուծոյ, այսինքն՝ չէր հնազանդէր այն բանին, ինչ որ Աստուած յայտնած էր: Այս վարքագիծի պատճառով մարդը անգիտակցաբար կը փոխէ ճշմարտութիւնը սուտի հետ: Վերջաւորութեան Սաւուղը տրուեցաւ խաբէութեան: Խաբէութիւնը դրդեց զինք «անմիտ մտածողութեան», եւ ան սկսաւ ընել «այնպիսի բաներ, որոնք երբեք պէտք չէր ըլլային»: Սաւուղի կռապաշտութիւնը ողբերգական արդիւնք ունեցաւ. անոր կեանքը աւելի ու աւելի լեցուեցաւ չարութեամբ: Ան դարձաւ նախանձոտ, պահանջկոտ եւ անխոհեմ. ան լեցուեցաւ բարկութեամբ, սկսաւ յարձակիլ Աստուծոյ ծառաներուն վրայ՝ ատելութեամբ լեցուած, սպաննեց անմեղ մարդիկ, եւ նոյնիսկ դիմեց վիուկի՝ Աստուծոյ դիմելու փոխարէն: Ահա Սաւուղի բնաւորութեան գիծերէն մէկ քանին, որոնք ձեւաւորուեցան կռապաշտութեան պատճառով:

Յաճախ մարդիկ, որոնք յարաբերութիւններ ունին Աստուծոյ հետ, սակայն իրենց ցանկությունները կը գերադասեն այն բանէն, ինչ որ Ան պարզօրէն յայտնած է Աստուածաշունչին մէջ, չեն նկատեր իրենց անհնազանդութիւնը: Ինչպէս որ Սաւուղի պարագային, կռապաշտութիւնը կը կուրցնէ մեզ՝ ճշմարտութիւնը տեսնելու համար: Մենք կը փոխենք ճշմարտութիւնը խաբէութեամբ եւ կը հաւատանք, որ Աստուած մեր կողմն է: Մենք կը կարծենք, որ Ան կը հասկնայ մեր սիրտը, եւ այդ պատճառով կը հաշտուի մեր վարքին հետ ու հաւանութիւն կու տայ մեր կեանքին, այնինչ, փաստօրէն մենք հակառակ ենք Աստուծոյ եւ դարձած ենք Անոր թշնամին:

Գոհունակութիւն

Ես կը ներկայացնեմ կռապաշտութեան յաջորդ կողմը՝ սահմանելով երկու բանալի բառ: Առաջինը «գոհունակ» («գոհունակութիւն») բառն է: «Մերիամ-Ուեպսթըր» բառարանը կը սահմանէ այն որպէս «զգալ կամ ցուցաբերել բաւականութիւն՝ սեփական ունեցուածքով, կարգավիճակով կամ իրավիճակով»: Նոր կտակարանին մէջ այս իմաստով

ամենն յաճախ օգտագործուող յունարէն բառը «արքեօ»-ն է, որուն սահմանումն է. «բաւարարել, բաւական ըլլալ, գոհացնել եւ փոխաբերական իմաստով՝ ըլլալ ուժեղ եւ ի վիճակի՝ ինչ որ մէկուն օգնելու» («Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան»):

Մենք չենք կրնար պատշաճ կերպով ծառայել, եթէ գոհունակ չենք: Եթէ այս առաքինութիւնը մեզմէ կը բացակայի, մենք կը դիտարկենք իրավիճակները մեր անձնական շահի տեսանկիւնէն: Մեր գործողութիւնները եւ խօսքերը արտաքուստ կրնան անեսասէր եւ նոյնիսկ անձնագոհ թուալ, սակայն եթէ ատոնք հիմնուած չեն գոհունակութեան վրայ, ապա պիտի բխին շահամոլութենէն:

Պօղոսը եկեղեցիի մը կը գրէ. «Ոչ թէ, որ ես կը խօսիմ կարիքի մասին, որովհետեւ ես սորված եմ, ինչ վիճակի մէջ ալ որ ըլլամ, գոհ ըլլալ» (Փիլիպպեցիս 4.11, NKJV): Անշուշտ, ան ունէր կարիքներ. այնուամենայնիւ, այս խօսքերէն առաջ ան ըսաւ այն մարդոց, որոնց ինքը կը ծառայէր, որ չէր ուզեր անոնց նուէրը իր օգտին համար, այլ՝ անոնց օգտին: Ան չէր կրնար ստել կամ չափազանցնել՝ գրելով Սուրբ գիրքը. այնպէս որ, մենք գիտենք, որ ճիշդ ատիկա էր անոր իրական շարժառիթը, եւ որ ատիկա «քաղաքականապէս ճիշդ» արտայայտութիւն չէր: Անոր շարժառիթները կրնային այդ աստիճան անձնուրաց ըլլալ միայն մէկ պարագայի. եթէ ան լիովին գոհունակ ըլլար, նոյնիսկ լուրջ կարիքներ ունենալու պարագային:

Ասիկա է պատճառը, որ Աստուածաշունչը կ'ըսէ մեզի՝ հաւատացեալներուս. «Աստուածապաշտութիւնը գոհունակութեան հետ՝ մեծ շահ է: Եւ ունենալով կերակուր եւ հագուստ՝ ասոնցմով պէտք է գոհ ըլլանք» (Ա. Տիմոթէոս 6.6,8, NKJV): Գոհունակութեան մէջ «մեծ շահ» կայ, սակայն այդ շահը միշտ չէ, որ կ'արտայայտէ մեր կեանքին մէջ: Գոհունակութիւնը կ'օգնէ մեզի հաստատուն ըլլալ եւ ջանձնուիլ՝ մինչեւ մեր աղօթքի պատասխանը ստանալը:

Անգամ մը աղօթքի մէջ ես հարցուցի Տիրոջը, թէ ինչպէս Ան կը սահմանէ գոհունակութիւնը: Եւ իմ սրտին մէջ լսեցի. «Լիարժէք բաւականութիւն Իմ կամքին մէջ»: Մեր Տէր Յիսուսին կեանքը գոհունակութեան լաւագոյն օրինակն է: Մենք շարունակաբար կը լսենք Անոր խօսքերուն մէջ. «Իմ կերակուրս այն է, որ Ես Ջիս Դրկողին կամքը ընեմ եւ Անոր գործը կատարեմ» (Յովհաննէս 4.34): Անոր գոհունակութիւնը Աստուծոյ կամքով եւ նուիրումը Աստուծոյ կամքին ակնյայտ է մեսիական սաղմոսներէն մէկուն մէջ. «Ես բերկրանք կը զգամ՝ Քու կամքը կատարելով, ո՛վ Իմ Աստուած, եւ Քու օրէնքը Իմ սրտին մէջ է» (Սաղմոս 40.8, NKJV):

Անոր համար գոյութիւն չունէր ցանկութիւն մը կամ ձգտում մը՝ Աստուծոյ կամքէն դուրս: Ան կը ձգտէր կատարել Իր Հօր ցանկութիւնները:

Գոհունակութիւնը պէտք չէ շփոթել ինքնագոհութեան հետ, քանի որ իմաստային առումով ատոնք կը տարբերին: Դուք պիտի տեսնէք, որ Յիսուս կը մատուցէր «սաստիկ գոչումով ու արցունքով աղօթք եւ աղաչանք» (Եբրայեցիս 5.7): Ան տակնուվրայ ըրաւ դրամ փոխողներու սեղանները եւ Իր չարչարանքներուն նախորդող գիշերը մեծապէս կը փափաքէր ընթել առաքեալներուն հետ: Ան գոհ չէր՝ տեսնելով կապուած, հիւանդ եւ կորսուած մարդիկ: Ան կը պայքարէր ճնշուածներուն համար: Այնուամենայնիւ, երբ հերթը կը հասներ Իր կարիքներուն ու ցանկութիւններուն, Ան գոհունակ էր: Ան կ'ուղղէր խնդրանքները Իր Հօրը եւ կը հաւատար, որ Ան պիտի մատակարարէ:

Անոր գոհունակութենէն ծնան հետեւեալ խօսքերը. «Ես կենդանի եմ Հօր համար»: Այս համոզումը յառաջացուց այնպիսի արտասովոր ապահովութիւն եւ կայունութիւն, որ Ան համարձակ յայտարարեց. «Ես գիտեմ, թէ ո՛րկէ կու գամ, եւ թէ ո՛ր կ'երթամ» (Յովհաննէս 6.57 եւ 8.14, NLT): Ասկա է պատճառը, որ Անոր անկարելի էր կեցնել կամ մոլորեցնել, եւ որ Ան Աստուծոյ կատարեալ Ծառան էր:

Ազահութիւն

Երկրորդ բանալի բառը, որ կ'առնչուի կռապաշտութիւնը սահմանելու հետ, «ազահ» («ազահութիւն») բառն է, որ «գոհունակ» բառի բոլորովին հակառակ իմաստը ունի: Սահմանենք այս բառը, որպէսզի աւելի լաւ հասկնանք այն Աստուծոյ խօսքին մէջ:

Սկսինք բացատրական բառարանի սահմանումէն: «Ուեպսթըրի բառարանի» սահմանումներէն մէկն է. «որոշակի ենթադրեալ բարիք ձեռք բերելու եւ ունենալու ուժգին ցանկութիւն»: Այս բառի յունարէն համարժէքի սահմանումը շատ աւելի նկարագրական է: Բայց մինչեւ այն ներկայացնելը, կարդանք Պօղոսին խօսքերը Կողոսացիներու թուղթին մէջ: Այս խօսքերը կը նախորդեն հատուածի մը, որուն մէջ ան նոյնպէս կը յիշատակէ *ազահութիւնը*:

«Ուրեմն, եթէ դուք յարութիւն առած էք Քրիստոսի հետ, *փնտռեցէ՛ք* այն բաները, որոնք վերն են, ուր Քրիստոսը՝ նստած է Աստուծոյ աջ կողմը: *Ուղղեցէ՛ք* ձեր միտքը վերը գտնուող բաներուն վրայ, ոչ թէ՛ այս երկրին մէջ եղածներուն: Որովհետեւ դուք մահացաք, եւ ձեր կեանքը պահո-

լած է Քրիստոսին հետ Աստուծոյ մէջ: Երբ Քրիստոսը, Որ մեր Կեանքն է, յայտնուի, դուք նոյնպէս պիտի յայտնուիք Անոր հետ փառքով» (Կողոսացիս 3.1-4, NKJV):

Պօղոսը կու տայ մեզի *գոհունակ* վիճակի մէջ մնալու բանալին: Երբ բոլորովին կը գիտակցինք, որ ուխտի մէջ ենք Ամենակարող Աստուծոյ հետ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, մենք կը հասկնանք, որ ոչինչի պակաս ունինք՝ բացարձակապէս ոչինչի: Յիսուս կ'ըսէ, որ «Թագաւորութիւնը մերն է», եւ եթէ մենք փնտռենք Անոր Թագաւորութիւնը առաջին, ոչ թէ՛ երկրորդ կամ երրորդ հերթին, այն ամէնը, ինչին կարիքը որ մենք ունինք, պիտի տրուի մեզի:

Ճիշդ ասոր ուղղուած էր թշնամիին առաջին մեծ յարձակումը Յիսուսին դէմ: Անապատին մէջ փորձուելու ժամանակ սատանան փորձեց այնպէս ընել, որ Յիսուսը մատակարարում փնտռէր՝ Իր Հօրմէն առանձին: Պայմանները վիատեցնող էին. քառասնօրեայ ծոմէն յետոյ Յիսուսը խիստ անօթի էր: Թշնամին յոյս ունէր, որ պիտի համոզէր Յիսուսը անցում կատարելու գոհունակութենէն դէպի ազահութիւն, բայց Յիսուս հրաժարեցաւ: Կարճ ժամանակ յետոյ հրեշտակները եկան եւ կերակրեցին Յիսուսը երկնային կերակուրով: Թշնամիին ծրագիրը ձախողեցաւ Յիսուսի պարագային, բայց ատիկա չի նշանակեր, որ ան պիտի չօգտագործէ նոյն ռազմավարութիւնը մեր դէմ: Անոր նպատակն է՝ համոզել մեզ, որ դադրինք գոհունակ ըլլալէ Աստուծոյ թագաւորութեան մատակարարմամբ եւ մենք մեզի մատակարարում փնտռենք:

Պօղոսը կ'ըսէ, որ անոնք, որոնք կը *փնտռեն* զԱստուած, ոչ թէ պարզապէս զԱստուած կ'օգտագործեն, որ Անորմէ ստանան իրենց ուզածը, այլ ամբողջ էութեամբ կը փափաքին ճանչնալ Անոր սիրտը եւ հաճելի ըլլալ Անոր, կը հասնին այնպիսի վիճակի, որուն մէջ իրենց միտքը *ուղղուած* է վերին իրողութիւններուն: Այս վիճակին մէջ մենք կը դառնանք Յիսուսին պէս. մեր փափաքն է՝ կատարել Անոր կամքը, որ կ'ուղարկէ մեզ: Այս վիճակի անհաւատալի արդիւնքը այն է, որ այժմ մեզի, ինչպէս եւ Յիսուսին, անկարելի է կեցնել կամ մոլորեցնել. մենք իրաւամբ կրնանք կոչուիլ Աստուծոյ թագաւորութեան ճշմարիտ ծառաներ: Պօղոսը կը շարունակէ.

«Ուստի ձեր երկրաւոր անդամները սպաննեցէ՛ք. պոռնկութիւնը, պղծութիւնը, անսանձ կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահութիւնը, որ կռապաշտութիւն է: Որոնց համար Աստուծոյ բարկութիւնը անհնազանդութեան որդիներուն վրայ կու գայ» (Կողոսացիս 3.5,6):

Կարդացե՛ք Պողոսի խօսքերը՝ «ագահութիւնը, որ կռապաշտութիւն է»: Ահա մեր յաջորդ բանալին՝ հասկնալու համար, թէ իրականութեան մէջ ինչ է կռապաշտութիւնը: Այն կարելի է դիւրաբար տեսնել հեթանոս երկիրներուն մէջ, ուր կառուցուած են արծաններ, զոհասեղաններ եւ տաճարներ, բայց անհրաժեշտ է հասկացողութիւն եւ զանազանութիւն՝ այն «քաղաքակիրթ մշակոյթին մէջ» նկատելու համար: Պողոսը կ'ըսէ, որ երբ անցում կը կատարենք գոհունակութենէն դէպի ագահութիւն, մենք կը ձգենք մտերիմ յարաբերութիւնները Աստուծոյ հետ եւ կ'ընդունինք կռապաշտութիւնն ու շնութիւնը:

Այժմ դիտարկենք յունարէն «*փլէոնէքսիա*» բառը, որը թարգմանուած է այս խօսքին մէջ «ագահութիւն» բառով: Թոյլ տուէք առաջարկել երեք սահմանում հեղինակաւոր աղբիւրներէ.

«Սին» Նոր կտակարանի մեկնութիւն. «Անպատշաճ ցանկութիւն՝ աւելին ունենալու համար»:

«Հին յունարէնի Աստուածաշնչեան բառարան». «Այնպիսի վիճակ, երբ մարդը կը ցանկայ աւելի, քան հասանելի է իրեն»:

«Քրիստոսակեդրոն մեկնութիւն». «Սեփական անձը կուռքի վերածող, ագահ մտածելակերպ»:

Ուշադրութիւն դարձնենք վերջին սահմանումին վրայ. «սեփական անձը կուռքի վերածող, ագահ մտածելակերպ»: Երբ մեր զգացումները ուղղուած չեն Երկնքի թագաւորութեան, քանի որ մենք առաջին հերթին չենք փնտռած այն, ապա կը յայտնուինք «գոյատեւման ռեժիմի (կենսածելի, սահմանակարգի) մէջ»:

Մենք կը սկսինք կառչիլ այն ամէնէն, ինչ որ, մեր համոզումով, պէտք է մեզի՝ բաւականութիւն ունենալու համար: Մենք կը փնտռենք հաճոյք, հարստութիւն եւ նիւթական շահ, հռչակ, կարգավիճակ, դիրք, համբաւ, ընկերակցութիւն, բաւականութիւն, իշխանութիւն, հեղինակութիւն, կիրք եւ շատ այլ բաներ, որոնք մարդը կը ցանկայ սեփական անձը կուռքի վերածելու պարագային: Մենք կը յայտնուինք այս վիճակին մէջ, երբ գոհունակ չենք: Մենք կը ձգտինք այդ ամէնուն, քանի որ չունինք խաղաղութիւն եւ անդորր այն ամէնով, ինչ որ Աստուած տուած է մեզի: Մենք լարուածութիւն կը զգանք այն ծրագրին կամ ընթացքին հանդէպ, որ Աստուած որոշած է մեզի համար:

Անկասկած՝ գոհունակութիւնը եւ ագահութիւնը հակադիր ուժեր են: Գոհունակութիւնը կը հեռացնէ մեզ կռապաշտութենէն եւ կը մօ-

տեցնել Աստուծոյ սրտին, իսկ ազահութիւնը կը հեռացնէ մեզ Աստուծո՛մէ եւ կ'ուղղորդէ դէպի կռապաշտութեան զոհասեղանները: Ատոնք հակառակ իմաստներ ունեցող բառեր են, ինչն ա՛լ աւելի ցոյց կու տայ ատոնց տարբերութիւնը: Այժմ կրնանք դիւրաբար հասկնալ, թէ ինչու Եբրայեցիներու թուղթի հեղինակը համարձակ կը գրէ հետեւեալը.

«Բարքերնիդ արծաթասէր չըլլա՛յ, բաւական սեպեցէք որ-
չափ բան որ ծեռքերնիդ կայ. վասնզի Ինք ըսաւ, թէ՝ «Բնաւ
քեզ պիտի չթողում ու բնաւ քեզ երեսէ պիտի չծգեմ»: Այն-
պէս որ կը համարձակինք ըսելու. «Տէրը իմ Օգնականս է,
ուստի ես պիտի չվախնամ. մարդը ինձի ի՞նչ պիտի ընէ»
(Եբրայեցիս 13.5,6):

Յաջորդ գլուխին մէջ պիտի բացայայտենք, որ Աստուածային զոհու-
նակութիւնը վստահութիւն կը հաղորդէ մեզի որեւէ նեղութեան մէջ: Գո-
հունակութիւնը թոյլ չի տար մեզի իյնալ այն որոգայթներուն մէջ, որոնք
այս աշխարհը կը լարէ հաւատացեալներուն դէմ: Գոհունակութեան մէջ
կայ մեծ շահ եւ խաղաղութիւն, որ վեր է մարդկային մտքէն:

Ի հակադրութիւն ասոր՝ ազահութիւնը անհանգստութիւն կը յառա-
ջացնէ մեր մէջ, որ կը բորբոքի անդադար ցանկութիւններով եւ կիրքե-
րով: Նման վիճակի մէջ ե՛ւ խաբէութիւնը, ե՛ւ կործանումը անխուսափե-
լի են:

գործնական քայլ

Անչափ կարեւոր է, որ մենք յստակ հասկնանք Աստուծոյ Խօսքի
ճշմարտութիւնը: Այն գրուած է մեզի համար, եւ այդ պատճառով մենք
արդարացում չունինք: Ոչ ոք կրնայ կանգնիլ Աստուծոյ առջեւ եւ ըսել.
«Տէ՛ր, ես չէի գիտեր»: Ան կը յայտնէ Ինքզինքը բոլոր ազգերուն՝ արար-
չագործութեան միջոցով, եւ այդ պատճառով անոնք արդարացում չու-
նին: Նոյն կերպով, Ան կը յայտնէ Իր կամքը մեզի՝ Սուրբ գիրքին միջո-
ցով, եւ մենք նոյնպէս արդարացում չունինք:

Որքան ալ դժուար ըլլայ լսելը, որ մասնակի հնազանդութիւնը նոյնն
է, ինչ որ կռապաշտութիւնը, մենք պէտք է շնորհակալ ըլլանք, որ գիտ-
ցանք այս մասին: Եթէ գիտենք, թէ ինչ պիտի ըլլայ քննութեան ժամա-
նակ, մենք կրնանք յանձնել այն ամէն անգամ: Ասիկա է Աստուծոյ բա-
րութիւնն ու ողորմութիւնը:

Քանի որ անչափ դիւրին է չնկատել այն բնագաւառները, որոնց մէջ

մենք մասնակիորեն հնազանդած ենք Աստուծոյ կամ յամառ եւ ազահ եղած ենք, խնդրեցէ՛ք Սուրբ Հոգիէն յայտնել ատոնք ձեր կեանքին մէջ: Ապաշխարեցէ՛ք ամէն մէկ բնագաւառի համար, որ Ան ցոյց կու տայ ձեզի, եւ խնդրեցէ՛ք Անորմէ մաքրել ձեզ: Եւ, ի վերջոյ, խնդրեցէ՛ք Անորմէ՝ լեցնել ձեր կեանքը թարմութեամբ եւ զօրացնել ձեզ, որ ի սրտէ հնազանդիք Անոր:

ԹԵԹԵԻՑՆԵԼ ՃՆՇՈՒՄԸ

Նախորդ գլուխին մէջ ես ներկայացուցի կռապաշտութեան երկու կողմ՝ յամառութիւնը եւ ազահութիւնը: Այժմ ի մի բերենք այդ երկուքը, քանի որ ատոնք միասնաբար կը գործեն, եւ ատոնց գործելակերպը բացայայտելը պիտի օգնէ մեզի աւելի լաւ հասկնալու, թէ ինչու հաւատացեալը ընկալունակ է քրիստոնաբարի հանդէպ:

Բարդ սենարիօ (բեմագրութիւն)

Կրկին անդրադառնանք Սաւուղ թագաւորին: Ան գոհ չէր Աստուծոյ կամքին մէջ մնալէն: Իր յամառութեան պատճառով ան բաց էր ազահութեան համար: Անոր առաջին սխալը ամաղէկացիներուն հետ կապուած դէպքը չէր. այն տեղի ունեցած էր անոր թագաւորութեան սկիզբը՝ փղշտացիներուն հետ բախման ժամանակ: Իսրայէլի թշնամիները ահռելի բանակ հաւաքեցին: Այն բաղկացած էր երեք հազար կառքէ, որոնք այդ օրերուն հրասայլերու (tanks) պէս էին, եւ բաւականին շատ հետեւակային զօրքէ, որ կը թուար՝ զինուորները ծովափի աւազահատիկներու պէս շատ էին: Անոնք բանակ տուին Մաքմասի մէջ եւ պատրաստ էին յարձակման:

Սաւուղին բանակը ոչ մէկ ձեռով կը համեմատուէր անոնց հետ. այն նորաստեղծ էր եւ դեռեւս կազմաւորման փուլին մէջ էր: Գրուած է.

«Երբ Իսրայէլի մարդիկը զիրենք նեղութեան մէջ տեսան, ժողովուրդը տագնապած քարայրներու թուփերու, ժայռերու,

աշտարակներու ու փոսերու մէջ պահուեցան: Եւ Յորդանանի հունը կտրելով Գադի ու Գաղաադի երկիրը անցան. բայց Սաւուդ դեռ Գաղգաղայի մէջ էր ու բոլոր ժողովուրդը դողալով անոր ետեւէն կ'երթային» (Ա. Թագաւորաց 13.6,7):

Կը պատկերացնէ՞ք, թէ ինչպիսի ճնշման ներքոյ կը գտնուէր Սաւուդը: Դուք ամառնորդն էք, հրամանատարը եւ թագաւորը, եւ ձեր երիտասարդ բանակի ամօքեւ կանգնած է աւելի փորձառու, հզօր եւ մեծաքանակ ռազմական ուժ: Սաւուդը կը տեսնէր իր վատագոյն մղծաւանջը. իր բանակի մէջ դասալքութիւն կը սկսէր: Այնուամենայնիւ, օգնութիւնը ճանապարհին էր. աւագ մարգարէ Սամուէլը պէտք է գար այդ օրը եւ զոհ մատուցէր Տիրոջը: Կերջաւորութեան մարդոց վստահութիւնը Սաւուդին հանդէպ կը վերականգնուէր, եւ անոնք խիզախութիւն կը ստանային մարտին մասնակցելու համար: Այնուամենայնիւ, խնդիր մը յառաջացաւ.

«Անիկա Սամուէլին որոշած ժամանակին չափ եօթը օր սպասեց, բայց Սամուէլ Գաղգաղա չեկաւ, ու ժողովուրդը անոր քովէն ցրուեցաւ: Ու Սաւուդ ըսաւ. «Ողջակէզը ու խաղաղութեան զոհը իմ մօտ բերէք»: Ինք ողջակէզը մատուցանեց» (Ա. Թագաւորաց 13.8,9):

Մէկու մը համար գաղտնիք չէր, որ Սաւուդը Աստուծոյ կողմէն լիագօրուած չէր զոհ մատուցելու համար: Այդ գործառոյթը վերապահուած էր քահանային (Սամուէլը ե՛ւ մարգարէ էր, ե՛ւ քահանայ): Անշուշտ, նման լարուած իրավիճակին մէջ Սաւուդը եւ անոր օգնականները կրնային մտածել. «Յուսահատ պահերը յուսահատ քայլեր կը պահանջեն»: Այնուամենայնիւ, շուտով Սամուէլը պիտի փարատէր որեւէ կասկած այդ հարցին վերաբերեալ:

«Երբ անիկա ողջակէզը մատուցանելը լմնցուց, այն ատեն Սամուէլ եկաւ, եւ Սաւուդ ելաւ զանիկա դիմաւորելու ու բարեւելու: Սամուէլ ըսաւ. «Ի՞նչ ըրիր»: Սաւուդ ըսաւ. «Տեսայ, թէ ժողովուրդը իմ քովէս կը ցրուի, ու դուն քու որոշած օրերուդ մէջ չեկար, ու Փղշտացիները Մաքմասի մէջ հաւաքուած են, ըսի. «Փղշտացիները հիմա իմ վրայ Գաղգաղա պիտի իջնեն, ու ես Տէրոջը ամօքեւ աղօթք չեմ ըրած». ուստի ստիպուած ողջակէզը մատուցանեցի»: Սամուէլ ըսաւ Սաւուդին. «Յիմարութիւն ըրիր, որ քու Տէր Աստուծոյդ քե-

զի պատուիրած պատուիրանքը չպահեցիր: Տէրը քու թագաւորութիւնդ Իսրայէլի վրայ մինչեւ յաւիտեան պիտի հաստատէր, բայց հիմա քու թագաւորութիւնդ հաստատ պիտի չըլլայ: Տէրը Իրեն համար Իր սրտին համեմատ մարդ մը կը փնտռէ» (Ա. Թագաւորաց 13.10-14):

Մարգարէները կը փարատեն որեւէ կասկած՝ վերադարձնելով մեզ Տիրոջ յանձնարարութիւններուն: Դժուար պահերուն մարդիկ դիւրաբար կրնան մոռնալ, թէ Աստուած ինչ կը կամենայ: Սաւուդի անվստահութենէն եւ դժգոհութենէն բխող քայլերը կ'ըսէին Իսրայէլին, որ դժուար պահերուն մենք մեզի կրնանք որոշել՝ հնազանդի՞լ Աստուծոյ, թէ՞ ոչ: Սակայն ատիկա ճիշդ չէ: Տիրոջը հնազանդիլը մշտապէս ամենակարեւոր բանն է՝ անկախ հանգամանքներէն:

Սաւուդի անվստահութիւնը պարզապէս ցոյց տուաւ, որ ան գոհունակ չէր: Ան կ'ուզէր վերահսկել իր շուրջը կատարուող ամէն բան, սակայն հանգամանքները այլ էին: Այդ ճնշումը անտանելի էր անոր համար, եւ ան որոշեց թեթեւցնել այն: Իր դժգոհութեան պատճառով ան սկսաւ ձգտիլ իր ցանկալի հանգստութեան:

Գոյութիւն ունի ճշմարտութիւն մը, որ մենք պէտք է ընդունինք. Աստուծոյ ծառայելու ժամանակ յաճախ կը բախինք նեղութիւններու, դժուարութիւններու եւ փորձութիւններու: Յիսուս կ'երաշխաւորէ ասիկա. «Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք» (Յովհաննէս 16.33): Նեղութիւնը ցոյց կու տայ մեր հաւատքի չափը: Եթէ տեսնենք, որ մեր հաւատքը թոյլ է, եթէ չունինք հաւատքի անհրաժեշտ չափը, ժամանակն է աղաղակել Աստուծոյ, ուսումնասիրել Անոր Խօսքը եւ սպասել Անոր Հոգիին: Եթէ այսպէս վարուինք, մենք դուրս պիտի ելլենք նեղութենէն աւելի մեծ հաւատքով, քան ունէինք նախկինին:

Մեր հաւատքը թանկ է՝ աւելի թանկ, քան որեւէ բան, որ կայ այս աշխարհին մէջ: Մտածեցէ՛ք այսպէս. եթէ ինչ որ մէկը առաջարկէր ձեզի հարիւրտոկոսանոց գործարար ծրագիր եւ միջոցներ՝ այդ ծրագրին մէջ ներդրում կատարելու համար, ի՞նչ պիտի ընէիք: Մի՞թէ դուք պիտի տրտնջայիք եւ պիտի ըսէիք. «Ատիկա շատ բարդ եւ աշխատատար է»: Թէ՞ անմիջապէս պիտի օգտուէիք այդ հնարաւորութենէն եւ անշեղօրէն պիտի իրագործէիք այդ ծրագիրը: Անշուշտ, մենք անմիջապէս գործի կ'անցնէինք եւ կը սպասէինք մեծ շահոյթներու:

Նոյնը տեղի կ'ունենայ ամէն անգամ, երբ դուք կը բախիք դժուարութիւններու, որոնք աւելի մեծ են, քան դուք, եւ հաւատացէք ինձի. Աստուած այնպէս կ'ընէ, որ դուք ունենաք նման հնարաւորութիւններ: Ան

չ'ուզեր յուսահատութեան հասցնել ձեզ. Անոր նպատակն է, որ դուք ստանաք *աւելի մեծ հաւատք՝ որպէս վարձատրութիւն:*

Ուրիշ բարդ սենարիօ (բեմագրութիւն)

Այժմ խօսինք Ղաւիթի մասին, որ Սաւուդի հակապատկերն էր: Ան բախեցաւ շատ աւելի վիատեցնող իրավիճակի:

Ան եւ այն վեց հարիւր մարդիկ, որոնք տակաւին հաւատարիմ էին իրեն, մերժուեցան: Այդ օրը լաւ օր չէր, բայց վատագոյնը տակաւին առջեւն էր: Անոնք վերադարձան իրենց տուն՝ Սիկելակ, եւ յայտնաբերեցին, որ մինչ իրենք տունը չէին, ամաղէկացիները յարձակած էին եւ յաւիշտակած այն, ինչ որ արժէքաւոր էր իրենց համար՝ իրենց կիները, երեխաները եւ ունեցուածքը, իսկ մնացածը այրած էին: Ոչինչ մնացած էր:

Կը պատկերացնէ՞ք, թէ ինչ կը զգար Ղաւիթը: Ան տասներկու տարիէն աւելի պահուրտած էր Իսրայէլի անապատներուն եւ տափաստաններուն մէջ: Ամբողջ այդ ընթացքին ան չէր հանդիպած իր ընտանիքի անդամներուն եւ մանկութեան ընկերներուն, չէր գացած երկրպագութեան հաւաքոյթներու անոնց հետ եւ չէր մասնակցած հասարակական կամ համազգային որեւէ իրադարձութեան: Ան ստիպուած էր պահուրտիլ, իսկ երբեմն՝ փախչիլ Իսրայէլի լաւագոյն գինուորներէն, որոնք կը հետեւէին եւ կը հետապնդէին զինք:

Ի վերջոյ, իրավիճակը այնքան վտանգաւոր դարձաւ, որ ան, անոր գինուորները եւ անոնց ընտանիքները հարկադրուած էին հեռանալ իրենց երկրէն: Արդէն երկու տարի է, ինչ որ անոնք ապաստան գտած էին օտար երկրի մէջ: Որքա՞ն ժամանակ ատիկա պիտի տեսէր: Ո՞ր էր անոնց վարձատրութիւնը Աստուծոյ ծառայելու համար: Քանի մը անգամ Ղաւիթը կրնար ինքնակամ վարուիլ եւ սպաննել Իսրայէլի առաջնորդը, որուն Աստուած իր ղեկավարը նշանակած էր: Ատիկա կը թեթեւցնէր Ղաւիթին ճնշումն ու նեղութիւնը: Բայց ան հաւատարիմ մնաց, յարատեւեց եւ պահպանեց գոհունակութեան վիճակը տասնչորս տարի շարունակ:

Պահ մը կանգնեցէք եւ մտածեցէք: Պատահա՞ծ է, որ ուզէիք յանձնուիլ երեք շաբաթ տեւող նեղութենէ մը յետոյ: Իսկ ի՞նչ պիտի ըսէիք երեք ամսուան կամ երեք տարուան մասին:

Երեք տարին երկար ժամանակ է՝ մշտապէս նեղութիւններ կրելու համար, սակայն ատիկա ոչինչ է այն բանին համեմատ, ինչ որ Ղաւիթը կրեց: Սաւուդը պէտք է դիմանար գրեթէ մէկ շաբաթ, սակայն տեղի տուաւ: Ան որոշեց անհնազանդ ըլլալ Աստուծոյ, որպէսզի արժանանար իր

ենթականերու յարգանքին եւ ամրապնդէր իր դիրքը: Ան ընտրեց այն-պիսի վարք, որ ե՛ւ պիտի թեթեւցնէր իր վիճակը, ե՛ւ պիտի բարձրացնէր իր հեղինակութիւնը: Ան չսպասեց այն յառաջխաղացման, որ կու գայ միայն Աստուծմէ:

Վերադառնալով Ղաւիթի պատմութեան՝ ան եւ անոր զինուորները վերադարձան Սիկելակ եւ պարզեցին, որ այն ամէնը, ինչ որ թանկ եւ արժէքաւոր էր իրենց համար, այլեւս չկար: Տեսնելով ատիկա՝ Ղաւիթը եւ անոր զինուորները այնքան լացին, մինչեւ որ ուժասպառ եղան: Ղաւիթը կրնար մտածել, որ աւելի վատ բան այլեւս չէր կրնար պատահիլ, բայց ատով ամէն ինչ չաւարտեցաւ: Անոր աւելի մեծ նեղութիւն մը կը սպասէր: Անոր զինուորները՝ անոր վերջին վեց հարիւր ընկերները այն-քա՛ն բարկացան անոր վրայ, որ կ'ուզէին զինք սպաննել:

«Ղաւիթ մեծ տագնապի մէջ էր, քանզի ժողովուրդը զանկա քարկոծել կ'ուզէր, որովհետեւ բոլոր ժողովուրդին սիրտը կը կսկծար իրենց տղոցը ու աղջիկներուն համար»
(Ա. Թագաւորաց 30.6):

Սաւուղի ձգնաժամային իրավիճակին մէջ անոր զինուորները դիմեցին դասալքութեան: Ան առանձին զգաց ինքզինքը եւ սկսաւ յուսահատօրէն ձգտիլ հաւանութեան, յարգանքի եւ պատիւի: Ան հասաւ իր նպատակին՝ փոխզիջման ենթարկելով Աստուծոյ պատուէրը:

Ի հակադրութիւն ատոր՝ Ղաւիթին մարդիկը չէին փախչէր, այլ կ'ուզէին սպաննել զինք: Ղաւիթին իրավիճակը աւելի բարդ էր, քան Սաւուղինը: Սաւուղին դժգոհութիւնը զինք դրդեց թուլցնելու լարուածութիւնը՝ Աստուծոյ վստահելու եւ Սամուէլին սպասելու փոխարէն: Ղաւիթին արծագանգը միանգամայն ուրիշ էր.

«Բայց Ղաւիթ իր Տէր Աստուծոմով զօրացաւ: Ղաւիթ Աքիմելէքի որդիին, Աքիաթար քահանային ըսաւ. «Եփուտը մօտեցուր ինձի»: Ու Աքիաթար եփուտը Ղաւիթին մօտեցուց: Ղաւիթ Տէրոջը հարցուց ու ըսաւ. «Այս գունդը հալածե՞մ, անոնց կը հասնի՞մ»: Տէրը ըսաւ անոր. «Հալածե՛, քանզի անշուշտ պիտի հասնիս ու բոլորը պիտի ազատես»» (Ա. Թագաւորաց 30.6-8):

Ղաւիթը չփորձեց համոզել զանոնք՝ իր կեանքը փրկելու համար, եւ ո՛չ ալ որեւէ արկածախնդիր ծրագիր առաջարկեց: Ան չըսաւ. «Հերի՛ք է: Ի՞նչ օգուտ, որ ես հաւատարմօրէն ծառայեցի Աստուծոյ: Ես տուի

Անոր իմ լաւագոյն տարիները: Ան էր, որ դրեց զիս նման բռնակալի ենթակայութեան ներքոյ: Եւ Ան իմ դժոխային կեանքի պատճառն է»:

Դաւիթը երբեք չմեղադրեց զԱստուած: Նոյնպէս, ան չէր ձգտեր յայտնուիլ պալատին մէջ: Իր նեղութեան ընթացքին Դաւիթը կրնար վրէժ լուծել՝ սպաննելով Սաւուղը, եւ հասնիլ այն գահին, որ Աստուած խոստացած էր իրեն: Սակայն ան սպասեց Աստուծոյ, իսկ Սաւուղը՝ ոչ: Դաւիթը պահպանեց իր գոհունակութիւնը եւ որոշում կայացուց Աստուծոյ հարցնել նախքան ինչ որ բան ձեռնարկելը:

Աստուծոյ փրկութիւնը եւ մատակարարումը մշտապէս կու գան, սակայն ոչ մինչեւ այն պահը, երբ Անոր Խօսքին անհնազանդ ըլլալու հնարաւորութիւն կ'ընծեռնէ: Ասիկա նման է Յիսուսի փորձութեան անապատին մէջ, ուր սատանան առաջարկեց Անոր ազատիլ Իր նեղութենէն նախքան հրեշտակներուն գալը եւ Անոր ծառայելը: Գրեթէ միշտ ճիշդ այսպէս ալ կ'ըլլայ: Գոհունակ վիճակին մէջ մնալը կ'օգնէ, որ մենք մեզի համար մատակարարում եւ յառաջխաղացում չփնտռենք:

Վերադարձ ամաղէկացիներուն

Շարունակելով ուսումնասիրել Սաւուղի կեանքը՝ եկէք անդրադարձնա՞նք ամաղէկացիներուն հետ կապուած պարագային, որ, անշուշտ, տեղի ունեցած էր փղշտացիներուն հետ պատերազմելէն ետք:

Ինչո՞ւ այս անգամ Սաւուղը չհնազանդեցաւ: Ինչո՞ւ ան խնայեց Ամաղէկացիներու թագաւորին կեանքը եւ պահպանեց լաւագոյն կենդանիները, թէւ Աստուծոյ յանձնարարութիւնը շատ պարզ էր: Կրկին, պատճառը պարզապէս Սաւուղի ազահութիւնն էր, որ կը բխէր անոր անվստահութենէն եւ Աստուծոյ կամքէն դժգոհ ըլլալէն:

Առաջինը, ինչո՞ւ խնայել թագաւորին կեանքը: Որեւէ երկիր գրաւելը մեծ ձեռքբերում էր, եւ այդ ժամանակներուն մէջ, երբ թագաւորները յաղթանակ կը տանէին պատերազմին մէջ, անոնք սովորաբար պարտուած թագաւորները իրենց պալատը կը բերէին: Պարտուած երկրի թագաւորը կենդանի յաղթանշան էր: Ամէն անգամ, նայելով անոր, կարելի էր յիշել անոր երկիրը ամբողջութեամբ պարտութեան մատնելու մասին: Ամէն անգամ, նայելով անոր, թագաւորին ծառաները կը յիշէին, թէ որքան հզօր առաջնորդի մը կը ծառայէին: Ասիկա եսասիրութեան, ինքնավստահութեան աղբիւր էր եւ մեծ ձեռքբերում էր, յատկապէս՝ անվստահ առաջնորդի մը համար:

Երկրորդը՝ ինչո՞ւ պահպանել լաւագոյն ոչխարները, այծերը, խոշոր եղջերաւոր անասունները, գեր հորթերն ու գառնուկները: Կրկին, պատ-

ճառը նույնն էր. Սաւուղը կ'ուզէր յարգանք եւ պատիւ ստանալ իր զինուորներէն եւ ժողովուրդէն: Եթէ ան տար մարդոց ամառէկացիներուն լաւագոյն կենդանիները, անոնք կը յիշէին, թէ որքան լաւ առաջնորդ էր ինքը: Յետագային անոնք կը պարծենային անոր ուժով, ռազմավարութեամբ եւ իմաստութեամբ, որոնցմով ան յարծակեցաւ այդ երկրին վրայ եւ պարտութեան մատնեց: Ժողովուրդը կը տեսնէր, որ Աստուած անոր հետ է, եւ ոչ մէկ պարագային կը վիճարկէր անոր իշխանութիւնը:

Իր անվստահութեան պատճառով Սաւուղը մշտապէս կը ձգտէր ամրապնդել դիրքը: Ան նոյնիսկ արծան մը կանգնեցուց իրեն համար այդ յաղթանակէն յետոյ: Երբ մարգարէն յանդիմանեց զինք անհնազանդութեան համար, ան աւելի մտահոգուած էր այն բանով, թէ ինչ կը մտածէին իր մասին իր ենթակաները եւ քաղաքացիները, քան՝ որ ինքը չէր հնազանդէր Աստուծոյ (տե՛ս Ա. Թագ. 15.30): Սաւուղին կարծիքով, եթէ Իսրայէլի ամենապատուելի մարգարէն՝ Սամուէլը, անոր հետ չվերադառնար ժողովուրդին քով, աստիկա պիտի վնասէր իր հեղինակութիւնը, յատկապէս այն պատճառով, որ քիչ առաջ Սամուէլը յանդիմանած էր զինք: Ան կարիք ունէր հաստատելու իր իշխանութիւնն ու հեղինակութիւնը, թէեւ հետաքրքրական է, որ Աստուած տուած էր անոր այդ իշխանութիւնը: Ան կը ձգտէր յարգանքի, պատուի, մեծութեան եւ իշխանութեան աւելի, քան որեւէ այլ բանի, ինչին պատճառով ալ յամառօրէն չէր հնազանդէր Աստուծոյ առաջնորդութեան:

Պարզ ըսելու համար՝ Սաւուղը գոհունակ չէր Աստուծոյ կամքին մէջ:

Աղբիւր

Այժմ հասկնալի է, որ կուռքը ինչ որ բանի աղբիւր կը դառնայ մեզի համար՝ կատարելով մեր անհագ ցանկութիւնները: Ասիկա կրնայ տեղի ունենալ մեր կեանքի ամէն մէկ բնագաւառին մէջ: Կուռքը կը գրաւէ այն տեղը, որուն արժանի է Աստուած: Այն կրնայ ըլլալ միջոց, որուն միջոցով մենք կը ստանանք երջանկութիւն, մխիթարութիւն, խաղաղութիւն, մատակարարում, իշխանութիւն, յարգանք եւ այլն: Աստուած կ'ըսէ. «Ղուք ձեզի համար... կուռքեր չշինէ՛ք» (Ղեւտացիս 26.1): Մենք ենք կուռք շինողները, եւ կուռքը միշտ չէ, որ կը շինուի քարով, փայտով կամ թանկարժէք մետաղներով: Կուռքը ուժ կը ստանայ մեր սրտէն:

Կուռքը կրնայ ըլլալ որեւէ բան, ինչ որ մենք կը կարելորենք աւելի, քան Աստուծոյ: Կուռքը այն է, ինչ որ կը սիրենք եւ ինչ որ հաճելի է մեզի, ինչին մենք կը վստահինք, ինչ որ կը ցանկանք եւ ինչին աւելի շատ ուշադրութիւն կը դարձնենք, քան Տիրոջը: Տէրը յայտնեց իմ կնո-

ջը՝ Լիզային, որ կուռքը այն է, ինչէն դուք ուժ կը ստանաք կամ ինչին կու տաք ձեր ուժերը: Հաւատացեալը կը յայտնուի կռապաշտութեան մէջ, երբ թոյլ կու տայ, որ իր սիրտը դժգոհութիւն զգայ եւ բաւականութիւն փնտռէ Աստուծոյ կամքէն դուրս: Այդ բաւականութիւնը կրնայ ըլլալ որեւէ անձնաւորութեան, առարկայի կամ գործունէութեան մէջ:

Յոյսով եմ՝ այժմ ձեզի համար պարզ է, որ կռապաշտութիւնը շատ աւելին է, քան արծանիկները, արծանները, զոհասեղանները եւ տաճարները: Քանի որ հասկացութիւնը կռապաշտութեան մասին յաճախ սահմանափակուած է նման բաներով, շատերը ուշադրութիւն չեն դարձնելու Աստուածաշունչի կարեւորագոյն զգուշացումներուն: Յաջորդ գլուխներուն մէջ կը շարունակենք բացայայտել կռապաշտութեան ճշմարիտ էութիւնը եւ ցոյց կու տամ, թէ որքան տարածուած եւ կործանարար է այն մեր քսանմէկերորդ դարի Արեւմուտքի մշակոյթին մէջ:

գործնական քայլ

Կռապաշտութիւնը, ըստ էութեան, այն է, որ գոյութիւն ունի ինչ որ առարկայ, երեւոյթ կամ անձնաւորութիւն՝ Աստուծմէ բացի, որմէ դուք ուժ կը ստանաք եւ որուն կու տաք ձեր ուժերը: Կուռքը ինչ որ բանի աղբիւր կը դառնայ մեզի համար: Մենք չենք իյնար ծայրայեղութեան մէջ՝ ըսելով, որ մարդիկ պէտք է ձգեն իրենց աշխատանքը, քանի որ անոնք պէտք է վստահին, որ իրենց կարիքները կը լրացնէ Աստուած, ոչ թէ իրենց գործատուն: Այնուամենայնիւ, մենք պէտք է հասկնանք, որ Աստուած կը լրացնէ մեր կարիքները՝ մեր աշխատանքին միջոցով:

Մենք կը հասկնանք, որ Աստուած սէր կու տայ մեզի մեր ընտանիքի անդամներուն միջոցով, եւ մենք կը սիրենք զանոնք ի պատասխան, բայց կը գիտակցինք, որ Աստուած է մեր Աղբիւրը, եւ կը պատուենք Ձինք՝ որպէս այդպիսին: Ամենակարեւորը այն է, որ մենք պատուենք զԱստուած որպէս մեր կեանքի Աղբիւրը, եւ մերժենք որեւէ բան, ինչ որ կը հեռացնէ մեզ Անորմէ:

Յոյսով եմ՝ արդէն կը սկսիք հասկնալ, որ կռապաշտութիւնը աւելին է, քան արծաններու առջեւ խոնարհիլը: Խնդրեցէ՛ք Աստուծմէ ցոյց տալ ձեզի, թէ ինչպիսի ազդեցութիւն ունի կռապաշտութիւնը ձեր քաղաքի կամ բնակավայրի վրայ, եւ բարեխօսեցէ՛ք այդ բնագաւառներուն համար: Աղօթեցէ՛ք, որ Աստուած ուղարկէ Իր ճշմարտութեան լոյսը այդ բնագաւառներուն մէջ, ուղարկէ Իր զաւակները՝ որպէս Իր լոյսը, եւ յայտնէ Ինքզինքը՝ որպէս բոլորին Տէրը:

ՔՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Եկէք արագ ամփոփենք այն, ինչ որ սորվեցանք վերջին քանի մը գլուխներուն մէջ:

Կռապաշտութեան էութիւնը արձանները, արձանիկները, զոհասեղանները եւ տաճարները չեն: Կռապաշտութիւնը այն է, երբ մարդկութիւնը կ'անտեսէ Աստուծոյ ուզածը, որպէսզի բաւարարէ սեփական կիրքերն ու ցանկութիւնները, որոնք հակառակ են Անոր կամքին:

Ցանկասիրութեան պատճառով մարդոց կարծիքը Աստուծոյ մասին կը խեղաթիրուի: Հետեւաբար, երբ մարդը կռապաշտ կը դառնայ, Աստուած կը հեռանայ եւ այդ մարդուն կը յանձնէ անոր անարգ կիրքերուն, որ ան ամօթալի բաներ գործէ՝ ըստ իր ապականած բնական ցանկութիւններուն: Բաւականութիւնը, հաճոյքները եւ ձգտումները ի վերջոյ կը տանին այնպիսի բաներու, որոնց արդիւնքը մահն է, ոչ թէ կեանքը:

Նոյնը կրնայ տեղի ունենալ հաւատացեալի կեանքին մէջ: Քրիստոնեան կը յայտնուի կռապաշտութեան մէջ, երբ կ'անարգէ այն, ինչ որ Աստուած յստակ յայտնած է, որպէսզի ձեռք բերէ այն, ինչ որ սաստիկ կերպով կը ցանկայ: Այնպէս որ, ըստ էութեան, կռապաշտութիւնը *գիտակցուած անհնազանդութիւնն է* Աստուծոյ կամքին: Բոլորովին այլ բան է, երբ հաւատացեալը *մեղքի մէջ կ'յինայ* եւ կ'ապաշխարէ: Կռապաշտութիւնը այն է, երբ հաւատացեալը *կը տրուի մեղքին*: Այդ անձնաւորութիւնը բարձրացուցած է իր ցանկութիւնը Աստուծոյ կամքէն վեր. ան կուրք շինած է:

Կռապաշտութիւնը *հոգեւոր քրիպտոնաքարն է*:

Եթէ ետ նայինք եւ յիշենք այն բազմաթիւ օրինակները, որոնք բերինք նախորդ գլուխներուն մէջ, կարելի է եզրակացնել, որ ատոնց մէջ նկարագրուած բոլոր յանցանքներուն մէջ կար մէկ ընդհանրութիւն: Աքարը պարզօրէն լսած էր, որ ամբողջ աւարը, որ մարդիկ պիտի վերցնէին Երիթովէն, պէտք է նուիրաբերուէր Տիրոջը: Սակայն անոր յանցանքը բացայայտելէն յետոյ ան խոստովանեցաւ. «Աւարին մէջ... տեսայ, եւ անոնց *ցանկալով առի*» (Յեսու 7.21): «NLT» թարգմանութեան մէջ գրուած է. «Ես խիստ ցանկացայ ատոնք»:

Աքարին համար շատ աւելի կարեւոր էր իր ցանկութիւնը, քան Աստուծոյ պահանջը: Ան չունէր Աստուածային երկիւղ, եւ գիտակցաբար անհնազանդ գտնուեցաւ: Անոր միտումնաւոր գործած մեղքը ոչ այլ ինչ էր, քան *կռակաշտութիւն* կամ այն, ինչ որ մենք սահմանեցինք որպէս *հոգեւոր քրիպտոնաբար*: Անոր կռակաշտութիւնը ոչ միայն դատաստան բերաւ իր եւ իր ընտանիքին վրայ, այլեւ թուլցուց ամբողջ ժողովուրդը: Իսրայէլը տկարացաւ, եւ այլեւս չէր կրնար պարտութեան մատնել այլ ազգեր:

Կորնթացիներու եկեղեցին յաճախ կը գոհացնէր սեփական մարմնական ցանկութիւնները՝ անտեսելով այն, ինչ որ Աստուած յայտնած էր անոնց: Պօղոսը նոյնիսկ կը գրէ անոնց. «դուք դեռ կը վերահսկէք ձեր մեղաւոր բնութեամբ» (Ա. Կորնթացիս 3.3, NLT): Անոնք կը նախանձէին, պառակտուած էին, կը վիճէին իրար հետ, շնութիւն կը գործէին եւ կ'անտեսէին այդ մեղքը, դատի կու տային մէկը միւսին, եւ երբ կը հաւաքուէին Տիրոջ ընթրիքին համար, անոնք իրականութեան մէջ չէին յիշեր Յիսուսը, այլ կը գոհացնէին իրենց մարմնական ախորժակը: Այս կերպով անոնք գիտակցաբար անհնազանդ էին Աստուածային պատուէրներուն: Ասիկա է պատճառը, որ Պօղոսը ի վերջոյ կը գրէ. «Այսպիսով, իմ թանկագին եղբայրներ եւ քոյրեր, երբ դուք կը հաւաքուիք Տիրոջ ընթրիքին համար, սպասեցէ՛ք իրար: Եթէ իսկապէս անօթի էք, ճաշեցէ՛ք տունը, որ դատաստան չբերէք մէկդ միւսին վրայ, երբ միասին կը հաւաքուիք» (Ա. Կորնթացիս 11.33,34, NLT): Անոնց ազահութեան (կռակաշտութեան) պատճառով շատերը տկար ու հիւանդ էին եւ ժամանակէն շուտ կը մահանային: Անոնք չէին ապրեր որպէս Երկնքի դեսպաններ:

Նոյնը կը վերաբերէր այն հաւատացեալներուն, որոնց կը գրէր Յակոբոսը: Անոնք դառնօրէն կը նախանձէին իրարմէ, կը վարուէին եսասիրական շարժառիթներով, նաեւ կը վիճէին ու կը կռուէին իրար հետ: Յակոբոսը կը մատնանշէ. «Կը ցանկաք եւ չունիք» (Յակոբոս 4.2): Կրկին, մենք կը տեսնենք, որ հաւատացեալները կը մեղանչէին՝ իրենց եսասիրական ցանկութիւնները կատարելու համար: Անոնք կոչուեցան

«շնացող կանայք», քանի որ կռապաշտութեան մէջ ինկած էին: Այնպէս չէ, որ անոնք արծաններ, արծանիկներ, զոհասեղաններ եւ տաճարներ կը կառուցէին: Թէեւ այս մասին գրուած չէ, այնուամենայնիւ, այն հոգեւոր քրիստոնաքարը, որ անոնք կը հանդուրժէին, ամենայն հաւանականութեամբ, թոյլ չէր տար անոնց ապրելու գերբնական կեանքով:

Կռապաշտութիւնը պարզ մեղք չէ. այն *միտումնաւոր* կամ *գիտակցուած* մեղք է: Ըստ էութեան, մենք պիտի պահենք եւ կատարենք այն, ինչ որ կարելու կը համարենք՝ անկախ այն բանէն, թէ Աստուած ինչ ըսած է այդ մասին:

Ահա թէ ինչպէս ամէն ինչ սկսաւ Եդեմի պարտէզին մէջ: Ադամը եւ Եւան ուզեցին այն, ինչ որ բարի, շահաւէտ, օգտակար եւ հաճելի կը թուար, եւ ինչ որ իմաստուն պիտի դարձնէր զանոնք: Անոնք միտումնաւոր չինազանդեցան այն բանին, ինչ որ Աստուած յստակ ըսած էր:

Այն պահէն, երբ մենք կ'ընտրենք այս ճանապարհը, մեր ներսը խաբէութիւն կը ձեւաւորուի: Մենք սրտանց կը հաւատանք, որ դեռ արդար դիրք ունինք Աստուծոյ առջեւ, այնինչ, իրականութեան մէջ այդպէս չէ: Այդ ժամանակ Աստուած ստիպուած կ'ըլլայ ուղարկելու ինչ որ մէկը՝ առաքեալ, մարգարէ, հովիւ, կամ ընկեր, որ կը սիրէ մեզ եւ այնքան կը հոգայ մեր մասին, որ պատրաստ է ըսելու ճշմարտութիւնը: Այնուամենայնիւ, մինչեւ այդ պահը խաբէութիւնը մեր ներսը արդէն կը վերածուի ամբողջութեան, ու թէեւ այդ ամբողջութիւնը կարելի է քանդել, սակայն անկէ ազատիլը դժուար է: Հռովմայեցիս 1-ին գլուխը կը պնդէ, որ նման վարքագիծ ձեռք բերող մարդիկ «կը ճնշեն ճշմարտութիւնը իրենց անօրինութեամբ» (խօսք 18): Մարդիկ իրենցմէ կը հեռացնեն ճշմարտութիւնը Աստուծոյ մասին եւ Անոր ճանապարհները, որուն պատճառով ատոնք զգալն ու հասկնալը աւելի ու աւելի դժուար կը դառնայ: Հետեւաբար, խաբէութեան մէջ գտնուող մարդիկ կը սկսին «յօրինել անմիտ գաղափարներ այն մասին, թէ Աստուած ինչպիսին է: Վերջաւորութեան անոնց մտքերը խաւարեցան եւ շփոթեցան: Պնդելով, որ իմաստուն են՝ անոնք բացարձակ անմիտներ դարձան» (Հռովմայեցիս 1.21,22): Ճշմարտութիւնը կը հեռանայ այդ մարդոցմէն, եւ անոնք կը կազմեն խեղաթիրուած ուսմունքներ Աստուծոյ բնութեան մասին, որոնք հաւանութիւն կու տան մեղքին եւ կ'աղաւաղեն կեանքի ճանապարհը:

Նոյն կերպով կռապաշտութեան մէջ կ'իյնայ հաւատացեալը: Ահա թէ ինչ կը գրէ Յակոբոսը. «Խօսքը կատարեցէ՛ք, միայն մի՛ լսէք՝ ինքզինքնիդ խաբելով» (Յակոբոս 1.22):

Երբ մենք պարզօրէն կը լսենք Աստուծոյ խօսքը եւ չենք հնազանդիր, մեզ հետ ինչ որ բան կը կատարուի. «խաբէութիւն» կոչուող քո-

ըն կը ծածկէ մեր սրտերը: Այժմ մենք բոլորովին համոզուած ենք, որ ճիշդ պատկերացում ունինք Աստուծոյ, Յիսուսի եւ Աստուծոյ թագաւորութեան մասին, սակայն իրականութեան մէջ կապ չունինք Աստուծոյ հետ: «Խաբէլ» բառի սահմանումն է՝ «դրդել ինչ-որ մէկուն ընդունիլ որպէս ճշմարիտ եւ վաւերական այն, ինչ որ կեղծ կամ անվաւեր է» (*Մերիամ-Ուեպպըր*): Չեն գիտեր՝ արդեօ՞ք ասիկա ողջամիտ երկիւղ կը յառաջացնէ ձեր սրտին մէջ այնպէս, ինչպէս իմ սրտին մէջ, բայց յոյսով եմ, որ այդպէս է: Միտումնաւոր անհնազանդութեան պէտք չէ թերթերէն վերաբերիլ:

Մենք կը խաբենք մեզ, երբ կը մտածենք, որ կրնանք անտեսել Նոր կտակարանի այս զգուշացումները, քանի որ ամէն բան ծածկուած է Աստուծոյ շնորհքով, ներմամբ եւ սիրով: Յիշեցէք՝ նոյն Աստուած, որ կը յայտնէ Իր շնորհքը, ներումը եւ սէրը Նոր կտակարանին մէջ, նաեւ կը զգուշացնէ միտումնաւոր անհնազանդութեան վտանգներու մասին:

Մենք չենք կրնար պարզապէս ընտրել այն սուրբգրային հատուածները, որոնք մեզի համար հաճելի են, եւ անտեսել կամ նոյնիսկ մէկ կողմ նետել այլ հատուածներ, որոնք հաճելի չեն մեզի: Այս մտածելակերպը ինքնին խաբէութիւն է: Մենք պէտք է ընդունինք Աստուծոյ Խօսքի ամբողջական խորհուրդը: Յաւոք, ժամանակակից եկեղեցւոյ մէջ ճշմարտութիւնը անտեսելու համաճարակ մը տարածուած է: Եւ պատճառը այն չէ, որ Աստուած ետ կը պահէ ճշմարտութիւնը. պատճառը շարունակական կռապաշտութիւնն է եկեղեցւոյ մէջ:

Յակոբոսը կը շարունակէ.

«Որովհետեւ եթէ դուք կը լսէք Խօսքը եւ չէք հնազանդիր, նման է ձեր դէմքին հայելիի մէջ նայելուն: Դուք կը տեսնէք ձեզ, կը հեռանաք եւ կը մոռնաք, թէ ինչպիսին էք» (Յակոբոս 1.23,24, NLT):

Այն մարդիկ, որոնք կը լսեն Աստուծոյ Խօսքը եւ չեն հնազանդիր, կը մոռնան, թէ ով են իրենք Քրիստոսի մէջ: Անոնք կ'ունենան այլ վարք եկեղեցւոյ, փոքրիկ խումբի եւ համաժողովներուն մէջ, որոնց մէջ կը քարոզուի Աստուծոյ Խօսքը, սակայն այդ միջավայրէն հեռու անոնց վարքը ոչինչով կը տարբերի այս աշխարհի մարդոց վարքէն: Աստուծոյ Խօսքը հայելի է. այնպէս որ, երբ անոնք ատոր առջեւ են, կը վարուին ատոր համապատասխան: Հետեւաբար, մենք պէտք է խեղաթիւրուած ուսմունքներ յօրինենք, որպէսզի բացատրենք, թէ ինչու կը վարուինք այնպէս, ինչպէս այս աշխարհը: Թերեւս ըսենք. «Իրականութեան մէջ, քրիստոնէսները ոչինչով կը տարբերին անհաւատներէն. մենք պար-

զապէս ներուած ենք», կամ «Աստուած գիտէ, որ ես անկում ապրած բնութիւն ունիմ, եւ այս կեանքին մէջ մենք երբեք չենք կրնար ապրիլ սրբութեամբ: Ահա թէ ինչու Ան ծածկած է մեզ շնորհքով»:

Նոր կտակարանին մէջ մենք կրնանք գտնել առանձին խօսքեր, որոնք, առաջին հայեացքէն, կ'աջակցին այս պնդումներուն, սակայն ստիպուած ենք հրաժարիլ բազմաթիւ այլ հաստուածներէն՝ այս սխալական Աստուածաբանութեան հաւատալու համար:

Մենք պէտք է որոշում կայացնենք.

- Մենք իսկապէ՞ս կը ցանկանք ապրիլ մեղքի ճահիճի մէջ:
- Մենք կը ցանկա՞նք, որ քրիստոնաքարի ազդեցութիւնը սահմանափակէ այն զօրութիւնը, որ տրուած է մեզի՝ որպէս Աստուծոյ գերբնական դեսպաններ:
- Մենք կը ցանկա՞նք ապրիլ շատ աւելի ցած այն մարդոցմէ, որուն համար ստեղծուած ենք՝ սուտ ուսմունքներու պատճառով:
- Մի՞թէ մենք կը ցանկանք, որ մեր կեանքը ոչինչով տարբերի այս աշխարհէն, եւ օր մը պարզապէս ազատինք այս կեանքէն եւ Երկինք երթանք:
- Թէ՞ կը ցանկանք, որ Աստուծոյ Թագաւորութիւնը տարածուի եւ կատարուի տեսիլքը վերջին փառաւոր տաճարի (Եկեղեցւոյ) մասին, որուն մասին մենք խօսեցանք քանի մը զուլս առաջ:

Ընտրելով քրիստոնաքարը՝ մենք կը զրկուինք մեր առողջութենէն, կենսունակութենէն, գերբնական ուժերէն եւ ամբողջ աշխարհը զխիվայր շրջելու կարողութենէն: Մենք, ըստ էութեան, կը ճնշենք ճշմարտութիւնը: Մենք ետ կը պահենք այն եւ կը պահենք Յիսուսը ամբողջ աշխարհէն: Ահա թէ ինչու Պօղոսը ի վերջոյ կը բացականչէ՝ դիմելով կորնթացիներուն.

«Ուղի՛ղ մտածեցէք: Արթնցէ՛ք սրբութեան համար: Հերի՛ք է խաղ ընենք յարութեան փաստերուն հետ: Անիրազեկութիւնը Աստուծոյ մասին ճոխութիւն է, որ չէք կրնար թոյլ տալ ձեզի նման ժամանակներուն մէջ: Մի՞թէ դուք չէք ամչնար, որ թոյլ տուած էք, որ այս տեսակի բանը այսքան ժամանակ շարունակուի ձեր միջեւ» (Ա. Կորնթացիս 15.34, MSG):

Ան կ'ըսէ Կորնթոսի Եկեղեցիին, որ անոնք Յիսուսին պէս ապրելու կարողութիւն ունին, սակայն տակաւին կռապաշտութեան մէջ են:

Անոնք տակաւին կը հաւատան, որ արժէ անտեսել Աստուծոյ Խօսքին յայտնուած ճշմարտութիւնը՝ պահպանելու համար այն, ինչ որ իրենք կարելոր կը համարեն: Անոնք լրջօրէն չեն վերաբերիր Աստուծոյ Խօսքին, ճնշած են ճշմարտութիւնը իրենց կեանքին մէջ եւ վերջաւորութեան սահմանափակ են, անգոր են եւ անկարող են փոխելու իրենց հասարակութիւնը:

Ասիկա ողբերգական է շատ առումներով, բայց ամենավատը այն է, որ կորսուածները, որոնք կ'ապրին նման կռապաշտներու կողքին, չեն տեսներ Յիսուսը ներկայացնող մարդոց: Ահա այս Խօսքը մէկ այլ թարգմանութեամբ. «Արթուն կեցէք արդարութեամբ եւ մեղք մի՛ գործէք, որովհետեւ մէկ քանին Աստուծոյ մասին տգէտ են. ասիկա ձեզի ամչնելու համար կ'ըսեն»: Պողոսը կ'ըսէ այս եկեղեցւոյ. «Դուք միակ Յիսուսն էք, Որուն պիտի տեսնեն Կորնթոսի կորսուած մարդիկ: Եթէ անոնք չտեսնեն Անոր յարութեան գօրութեան ապացոյցը եւ Անոր բնութիւնը ձեր միջոցով, կը նշանակէ՝ անոնք չեն տեսներ ատիկա: Ինչո՞ւ ճնշած էք ճշմարտութիւնը ոչ միայն ձեզի եւ եկեղեցիին, այլեւ ձեր բնակավայրին մէջ ապրող կորսուած մարդոց համար»:

Երբ մենք միաբան ենք Աստուծոյ հետ, մեր կեանքը ներդաշնակ է:

Դուք երբեք մտածած էք, թէ ինչու մեր շուրջը գտնուող կորսուած մարդիկ չեն ձգտիր դէպի մեզի, եւ նոյնիսկ եթէ ձգտին, անոնց կը գրաւեն սխալ բաները: Արդեօ՞ք անոնց կը գրաւեն մեր հումորը, խելացի գործելակերպը, մեր հետաքրքրական զբաղմունքները, ժամանցային ծրագրերը եւ երաժշտութիւնը: Թէ՞ անոնք առաջին հերթին մեր մէջ եւ մեր միջեւ կը տեսնեն կենդանի եւ հզօր Թագաւորը: Ստածեցէ՛ք Առաջին եկեղեցւոյ մասին. հաւատացեալներուն շարունակ «աստուածներ» կ'անուանէին, եւ անոնք հարկադրուած էին իյնալու եւ աղաղակելու. «Ո՛չ, մենք աստուածներ չե՛նք: Մենք Բարձրեալ Աստուծոյ գաւակներն ենք»:

Պետրոսը հարկադրուած էր խստօրէն ըսելու հռովմայեցի սպային. «Ելիր կայնէ՛, ես ինքս ալ մարդ եմ» (Գործք 10.26):

Պողոսը հարկադրուած էր բացականչելու՝ դիմելով Լիւստրայի քաղաքացիներուն. «Ի՛նչ կ'ընէք: Մենք աստուածներ չե՛նք» (Գործք 14.14, 15, MSG):

Մալթայի մէջ քաղաքացիները «եզրակացուցին, որ ան [Պողոսը] աստուած էր» (Գործք 28.6, MSG):

Թեսաղոնիկէի երեկոյեան լուրերը կը տեղեկացնէին. «Անոնք, որ աշխարհը տակնուվրայ ըրին՝ հոս ալ հասեր են» (Գործք 17.6):

Երուսաղէմի քաղաքացիներուն մասին գրուած է. «Բոլոր մարդիկ բարձր կարծիք ունէին անոնց մասին» (Գործք 5.13, NLT):

Նման լուրեր չկային Կորնթոսի մէջ, ինչպէս նաեւ չկան մեր արեւմտեան հասարակութեան մէջ: Մի՞թէ պատճառը այն է, որ մենք բաւարարուած ենք քրիստոնաքարով: Համոզուած են՝ մենք բաւարարուած ենք անսարք «iPhone»-ի համարժէքով, որուն միջոցով անկարելի է հաղորդագրութիւններ ուղարկել: Մենք կը գերադասէինք լսել, որ այդ հեռախօսը մշտապէս անսարք պիտի ըլլայ, որպէսզի հաշտուէինք այն մտքին հետ, որ պիտի ապրինք առանց ատոր:

Ես չեմ պատրաստուիր բաւարարուելու այդ վիճակով: Ես չեմ պատրաստուիր կորսնցնելու Աստուծո՛վ մեզի տրուած աշխուժութիւնը, կեանքը, ուժը, առողջութիւնը եւ կենդանի Փրկիչն ու Թագաւորը կորսուած աշխարհին յայտնելու կարողութիւնը: Համոզուած եմ, որ շատերը յոգնած են սովորական կեանքէն, այսինքն՝ ձեռով մը գոյատեւելէն:

Ես կը զգամ Աստուածային հրատապութիւն, յանձնարարական Աստուծո՛վ՝ ձեզի այս մասին գրելու համար: Այս ուղերձը ձեզի համար չէ, եթէ ձեզի կը գոհացնէ այս աշխարհի աղտոտ, դատարկ եւ անտեղի վատնուող կեանքը: Այն ձեզի համար է, եթէ կը փափաքիք ւաւելի վեհ կեանք՝ յարութեան կեանք:

Ձեր Հայր Աստուած կը ցանկայ, որ դուք ապրիք գերբնական կեանքով. *ն՛չ, Ան ի սրտէ կը փափաքի՛* ատիկա: Ան կը կամենայ, որ դուք վերապրիք Անոր Աստուածային բնութիւնն ու զօրութիւնը ւաւելի, քան դուք կը կամենայք:

Աստուած չէ, որ կը սահմանափակէ մեզ: Եթէ մենք սահմանափակ ենք, պատճառը մեր կռապաշտութիւնն է:

III

Շարունակելով՝ մենք ւաւելի խոր պիտի դիտարկենք այն խաբէութիւնը, որ կուրցուցած է բազմաթիւ մարդիկ ժամանակակից եկեղեցւոյ մէջ: Մենք պիտի տեսնենք, որ այն, ինչ որ ընդունած ենք որպէս բնականոն քրիստոնէութիւն, բնականոն չէ՝ ըստ երկնային չափանիշներու:

Մենք ունինք կոչում, ճակատագիր եւ հանդիպում գերբնականի հետ, որ կը սպասէ մեզի: Ժամանակն է թօթափել մեր անհնազանդութիւնը եւ անտարբերութիւնը եւ հազնիլ մեծութիւն, փառք, վեհութիւն եւ զօրութիւն՝ հազնիլ Յիսուս Քրիստոսը:

գործնական քայլ

Կռապաշտութիւնը կը սկսի, երբ կը խստացնենք մեր սրտերը Աստուծոյ խօսքին հանդէպ: Ասիկա ամէն տեսակի կռապաշտութեան արմատն է: Ահա թէ ինչու Աստուած պատուիրեց Իսրայէլին պատռել իրենց սրտերը, ոչ թէ հանդերձները: Ան չէր ուզեր մակերեսային ապաշխարութիւն, որ պիտի չանդրադառնար խնդիրի արմատին՝ անոնց խստացած սրտերուն, որոնք այլեւս չէին լսեր Անոր ծայնը կամ ուշադրութիւն չէին դարձներ ասոր:

Երկրորդ Օրինաց 8-րդ գլուխին մէջ գրուած է, որ Աստուած խրատեց Իսրայէլը, որպէսզի անոնք գիտնային, որ մարդը չ'ապրիր միայն հացով, այլեւ՝ ամէն խօսքով, որ դուրս կու գայ Աստուծոյ բերանէն: Աստուծոյ խօսքերով ապրիլը եւ Անոր ծայնը մեր կեանքի աղբիւրը դարձնելը այն է, ինչ որ կը պահպանէ մեզ կռապաշտութենէն եւ կը բարձրացնէ դէպի այն հզօր կեանքը, որուն համար Ան կը կանչէ մեզ:

Ի՞նչ դեր ունի Աստուծոյ ծայնը ձեր կեանքին մէջ: Վերջին անգամ ե՞րբ փնտռած էք Անոր խորհուրդը ձեր որոշումներուն վերաբերեալ: Ձեր աղօթքը մենախօսութիւն է, թէ՞ երկխօսութիւն: Ժամանակ յատկացուցէք ճիշդ հիմա եւ խնդրեցէ՛ք Աստուծմէ՛ գրուցել ձեզի հետ: Լուռ եղէք եւ լսեցէ՛ք Անոր ծայնը: Հաղորդակցեցէ՛ք Անոր հետ, եւ երբ աւարտէք, գրի առէք, թէ Ան ինչ կ'ըսէ ձեզի:

ՄԵՆՔ ԿԱՆՉՈՒԱԾ ԵՆՔ՝
ԸԼԼԱԼՈՒ ԱՅՍ
ՍԵՐՈՒՆԴԻ ԻՐԱԿԱՆ
ՍՈՒՓԸՐՅԵՐՈՍՆԵՐԸ:



ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆՈՐՀԸ
ՍՏԱՆԱԼՈՒ ԱՊԱՅՈՅՑԸ
ՄԵՐ ՆԵՐՔԻՆ
ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ Է:





ՄԵՆՔ ԿԱՆՉՈՒԱԾ ԵՆՔ, ՈՐ
ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆ ՁԳԵՆՔ ԱՅՍ
ԱՇԽԱՐՀԻՆ ԿՐԱՅ... ՈՉ ԹԵ
ԿՐԵՆՔ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ
ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆԸ:







└ ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՄԻՐԷ ՄԵԶ

ԱՅՆՊԻՍԻՆ, ԻՆՉՊԻՍԻՆ ՈՐ ԿԱՆՔ,
ԲԱՅՑ ԱՏԻԿԱ ՉԻ ՆՇԱՆԱԿԵՐ, ՈՐ ԱՆ
ՄԵԶ ՊԻՏԻ ՁԳԷ ԱՅԴ ՎԻՃԱԿԻՆ ՄԷՋ:

ԾԻՇԴ ԶԱԿԱՌԱԿԸ...



ԱՆ ՄԵՉ ԿԸ ՉՕՐԱՑՆԵ ԻՐ
ՇՆՈՐՀՔՈՎ՝ ՄՈՒՐԲ ԿԵԱՆՔՈՎ
ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՄԵՐ ԱՐՏԱՍՈՎՈՐ

ԱՍՏՈՒԾՈՅ

ՉԱԻԱԿՆԵՐԸ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ՉԵՆ:



Իմացե՛ք անելին CloudLibrary.org կայքին մեջ:



Մեղք

Մեղք: Մենք կը համարձակի՞նք խօսիլ մեղքի մասին: Այն չափազանց հակասակա՞ն կը համարուի: Ինչո՞ւ պէտք չէ ցանկանք տեղեակ ըլլալու մեր թշնամիէն: Չէ՞ որ այդ պարագային մենք պիտի կարենանք պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ մեղքին վրայ իշխելու համար:

Յաճախ մարդիկ կա՛ն թեթեւօրէն կ'օգտագործեն «մեղք» բառը, կա՛ն կը խուսափին անկէ գրոյցներու եւ քարոզներու մէջ՝ մտածելով այն մարդոց մասին, որոնց ցաւ կը պատճառեն օրինապաշտական մեղադրանքները, ուսուցումները կամ քարոզները: Այսպիսով, դիտարկենք մեղքը Աստուածաշունչի լոյսի ներքոյ:

«Ձեր մեղքերն են, որ կտրեցին ձեզ Աստուծմէ»
(Եսայի 59.2, NLT):

«Մեղք» բառը այս խօսքին մէջ թարգմանուած է եբրայերէն *«աւոն»* բառէն: Այն Հին կտակարանին մէջ «մեղք» իմաստը կրող չորս հիմնական բառերէն մէկն է: Համաձայն *«Հին կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարանի»*՝ այս բառը «կը մատնանշէ մեղքի խիստ չարութիւնը, քանի որ այն կ'ընդգծէ դիտաւորեալ կերպով խեղաթիւրման կամ այլասերման գաղափարը»: Խօսքը *միտումնաւոր* մեղքի մասին է, կամ, մեր ձեւակերպմամբ, *հոգեւոր քրիպտոնաքարի*, որ կը բաժնէ մեզ Աստուծմէ: Այն կ'օտարացնէ մեզ Աստուածային առաքինութիւններէն, որոնք անհրաժեշտ են Աստուածապաշտ կեանքի համար: Երբ կը մեղանչենք եւ չունինք տրտմութիւն այդ պատճառով, կը նշանակէ՝ մենք յայտնուած ենք կռապաշտութեան մէջ եւ շնացող կին

դարձած ենք: Մենք թշնամացած ենք Աստուծոյ դէմ:

Նոր կտակարանին մէջ «մեղք» բառը «համարթիա»-ն է (աստորմէ յառաջացող բայը «համարթանօ»-ն է): Այս երկու բառերը ամէնէն շատ կ'օգտագործուին Նոր կտակարանին մէջ՝ «մեղք» իմաստով: «Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարանը» կը պնդէ, որ «համարթիա» գործողը «կը կորսնցնէ կեանքի ճշմարիտ նպատակը եւ լիութիւնը, այսինքն՝ Աստուած»:

Պահ մը դադրեցէք կարդալէ եւ մտածեցէք այս մասին: Երբ կը մեղանչենք, մենք, ըստ էութեան, կը հեռանանք այն ընթացքէն, որմէ (առողջ դատելու պարագային) ոչ մէկ պարագային կ'ուզէինք շեղիլ: Մենք կը հեռանանք կեանքի Աղբիւրէն եւ կը կորսնցնենք ուրախութիւնը, խաղաղութիւնը, իմաստութիւնը, բաւականութիւնը, գոհունակութիւնը, մատակարարումը եւ աւելին... այս ցուցակը գրեթէ անվերջ է:

Աստուածաշունչի բազմաթիւ ուսուցիչներ կը սահմանեն մեղքը որպէս «նշանակէտէն վրիպիլ»: Այս սահմանումը ճիշդ է, սակայն, հաշուի առնելով այն հիմնական սահմանումը, որ ներկայացուցի ձեզի, կը կարծէք՝ «նշանակէտէն վրիպիլը» լիարժէք կերպով կը բացատրէ՞ մեղքի լրջութիւնը:

Կան այլ բառեր, որոնք կ'օգտագործուին Նոր կտակարանին մէջ որպէս «մեղք» բառի տարբերակներ, օրինակ՝ անօրինութիւն, յանցանք, անարդարութիւն եւ օրինազանցութիւն: Սակայն իմ նպատակը բառային ուսումնասիրութիւն կատարելը չէ, այլ՝ ներկայացնել մեղքի գլխաւոր յատկանիշները եւ այն կարողութիւնը, որուն միջոցով մեղքը կը հրապուրէ մարդիկ՝ հեռացնելով ճշմարիտ կեանքի աղբիւրէն:

Մեղքը յարձակում կը գործէ մեր կենսունակութեան, սիրոյ, ուժերու, ողջամտութեան, ձգտումներու եւ նպատակներու վրայ: Նոյնիսկ չկասկածիք, որ մեղքը վնասակար եւ կործանարար է: Այն կրնայ իրապէս հաճելի ըլլալ, բայց միայն որոշ ժամանակով: Ըստ էութեան, մեղք գործելը կը նշանակէ ընտրել կարճատեւ հաճոյք՝ երկարատեւ տառապանքի հաշուին, քանի որ, երբ ամէն ինչ որ կ'աւարտի, մեղքը կը խայթէ մեզ մահացու տեսական հետեւանքներով: Մեղքը գրաւիչ է մեր մարմնական բնութեան համար, սակայն, որպէս նոր արարած Քրիստոսին մէջ, որ ունի Աստուծոյ բնութիւնը՝ մենք ներքուստ չենք կամենար մեղանչել, եւ կրնանք ընդդիմանալ մեղքի գրաւչութեան:

Աստուած ըսաւ Կայէնին. «Մեղքը դրանը քով պառկած է: Անկկաքեզի կը փափաքի, բայց դուն իշխէ՛ անոր վրայ» (Ծննդոց 4.7): Ուշադրութիւն դարձուցէք, որ գոյութիւն ունի դուռ, որուն միջոցով մեղքը մուտք կը գործէ մարդու կեանք: Այդ դուռը կը կոչուի «ցանկութիւն»,

եւ Յակոբոսը կը գրէ. «Ցանկութիւնները ծնունդ կու տան մեղսալի արարքներու» (Յակոբոս 1.15, NLT): Այս դուռը կա՛մ փակ է, կա՛մ բաց՝ կախուած այն բանէն, թէ ինչպէս կ'որոշենք վարուիլ մեր ցանկութիւններուն հետ: Մեղքը պատրաստ է վերահսկելու մեզ: Մեղքը նոյնպէս ցանկութիւն ունի. այն կը ստրկացնէ մեզ: Յիսուս կը զգուշացնէ. «Ես կը հաւաստիացնեմ ձեզի. ան, որ կը մեղանչէ, մեղքի ստրուկ է» (Յովհաննէս 8.34, NKJV):

Պօղոսը կը բացատրէ Յիսուսին խօսքերը մեզ՝ հաւատացեալներուս. «Մի՞թէ չէք գիտակցիր, որ դուք կը դառնաք այն բանին ստրուկը, ինչին կ'որոշէք հնազանդիլ: Դուք կրնաք մեղքի ստրուկ ըլլալ, ինչին հետեւանքը մահն է, կամ որոշել, որ պիտի հնազանդիք Աստուծոյ, որուն արդիւնքը արդար կեանքն է» (Հռովմայեցիս 6.16, NLT): Եւ եթէ ասիկա բաւական չէ, Պետրոսը կը գրէ շարունակական մեղքի վերաբերեալ. «Որովհետեւ դուք այն բանի ստրուկն էք, ինչ որ կը վերահսկէ ձեզ» (Բ. Պետրոս 2.19, NLT): Ստրկութիւնը հաճելի չէ, իսկ մեղքը անողորմ ստրկատէր է: Դուք չէք կրնար պարզապէս զուարճանալ մեղքով, քանի որ այն մահացու է: Այն ա՛լ աւելի ուժգին ցանկութիւններ կը յառաջացնէ մեր մէջ եւ կը դրդէ այնպիսի քայլերու, որոնք վերջաւորութեան կը վնասեն մեզ:

Այն, որ մեղքի մտադրութիւնը մեզ ստրկացնելն է, ակնյայտօրէն չերեւիր: Մեղքը խաբուսիկ է. այն կը վերահսկէ մեզ եւ կը խստացնէ մեր սրտերը (տե՛ս Եբր. 3.13), եւ մեզի համար աւելի դժուար կը դառնայ զգալ, գիտակցիլ եւ լսել Հոգիին առաջնորդութիւնը: Մեղքը կը մոլորեցնէ մեզ՝ տանելով կործանարար կռապաշտութեան: Յիշեցէք, որ Աստուած երկու անգամ յայտնուեցաւ Սողոմոնին: Կրնա՞ք պատկերացնել: Չնայած ատոր՝ յետագային ան երկրպագեց կեղծ աստուածներու: Թերեւս մտածէք. «Ինչպէ՞ս այն մարդը, որ երկու անգամ տեսած էր զԱստուած, դարձաւ կեղծ աստուածներու»: Պատասխանն է՝ խաբէութեան միջոցով: Եթէ ատիկա տեղի ունեցաւ Սողոմոնին հետ, որ տեսած էր զԱստուած, որքա՛ն աւելի դիւրաբար ատիկա կրնայ տեղի ունենալ անոնց հետ, որոնք չեն տեսած Ջինք:

Մեղքը այնպիսի բան չէ, ինչին հետ մենք կրնանք խաղալ: Այն շատ ազդեցիկ է եւ արագօրէն կրնայ փոխել մարդուն սիրտը: Ամենասարսափելին այն է, որ նման խստացած վիճակին մէջ մեր սրտերը խաբուած են, եւ մենք կը սկսինք հաւատալ, որ ճիշդ ենք, այնինչ իրականութեան մէջ սխալ ենք: Մենք չենք տեսներ մեր մեղաւորութիւնը: Երբեք մի՛ հաւատաք այս սուտին. «Ես ծածկուած եմ շնորհքով. եթէ մեղանչեմ, ինձի, ընդհանուր առմամբ, ոչ մէկ վտանգ կը սպառնայ»: Նման դիրքորոշում ունենալը կը նշանակէ խաղալ կրակի հետ: Թոյլ տուէ՛ք բացատրել:

Միտումնաւոր մեղքը կը տանի շարունակական մեղքի

Միտումնաւոր մեղքը ի վերջոյ կը վերածուի շարունակական մեղքի: Ահա թէ ինչպէս աստիկա տեղի կ'ունենայ: Երբ մենք անհնազանդ ենք առաջին անգամ, մեր խիղճը կը խօսի մեզի հետ: Սովորաբար մենք ոչ թէ ծայն կը լսենք, այլ անյարմար զգացում կ'ունենանք: Մեր սիրտը կը բացականչէ անխօս ծայնով. «Դուն վրիպա՛ծ ես նշանակէտէն, դուն շեղա՛ծ ես կեանքի ճանապարհէն եւ պէտք է շտկես քու ընթացքը՝ ապաշխարելով ու ներում խնդրելով»: Եթէ այդ պահուն ձգենք մեր մեղքը՝ անկեղծօրէն ապաշխարելով, մեր սիրտը կը մաքրուի, եւ մենք զգայուն կը մնանք Հոգիի ծայնին: Աստուծոյ Խօսքին մէջ գրուած է. «Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չի գտներ, բայց զանոնք խոստովանողն ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ» (Առակաց 28.13):

Այնուամենայնիւ, եթէ մենք անտեսենք մեր խիղճին ծայնը, մեր սիրտը կը ծածկուի քողով (այս մասին խօսեցանք նախորդ գլուխին մէջ): Եթէ կրկին անհնազանդ ըլլանք, անյարմարաւէտ զգացումը արդէն ուժգին չըլլար: Այն աւելի կը թուլնայ՝ նմանելով «ներքին կսմթոցի»: Մենք աւելի դժուարութեամբ կը լսենք, քանի որ մեր սրտի զգայունութիւնը կը նուազի: Այնուամենայնիւ, մենք տակաւին կրնանք ներում խնդրել եւ վերականգնուիլ, եթէ փոխենք մեր վերաբերմունքը մեր գործած մեղքին հանդէպ մեր սրտին մէջ եւ մտքին մէջ:

Սակայն եթէ շարունակենք անտեսել մեր խիղճի յանդիմանութեան ծայնը, մեր սիրտը կը ծածկուի եւս մէկ քողով, եւ մեր զգայունութիւնը աւելի կը թուլնայ: Եթէ մենք չհնազանդինք Աստուծոյ Խօսքին, անյարմարաւէտութեան շատ թոյլ ազդակ կը զգանք: Լսելը շատ աւելի դժուար կը դառնայ, քանի որ մեր խիղճը մօտ է ամբողջական անզգայացման: Մենք տակաւին կրնանք ներում խնդրել եւ վերականգնուիլ, եթէ ճշմարտապէս փոխուինք մեր մտքին եւ սրտին մէջ, բայց մեր սխալը զգալը շատ աւելի դժուար կ'ըլլայ:

Եթէ մենք եւս մէկ անգամ անտեսենք յանդիմանութեան այս թոյլ ծայնը, մեր սիրտը կը ծածկուի եւս մէկ քողով: Եթէ այսպէս շարունակուի, մեր խիղճը ի վերջոյ պիտի վառի կամ պիտի կուրնայ մեր կռապաշտութեան պատճառով: Մեր հոգեւոր զգայարանները կը բթանան, եւ մենք բացարձակապէս անզգայ կը դառնանք Հոգիին հանդէպ: Մենք կը կարողանանք մեղք գործել՝ առանց յանդիմանութիւն զգալու, եւ կը յայտնուինք *շարունակական* մեղքի վիճակին մէջ: Մենք տակաւին կրնանք ներում ստանալ եւ վերականգնուիլ, սակայն, գրեթէ չենք ցանկար ընելու աստիկա, քանի որ այլեւս չենք դիտարկեր մեր մեղքը՝ որպէս մեղք:

Յաջորդ քայլը այն է, որ Աստուած կ'ուղարկէ մեզի մարգարէ, հովի կամ ընկեր՝ մեզի հասնելու համար: Եթէ մենք չլսենք այդ աւետաբերին, յաջորդ քայլը, որ Աստուած կը ձեռնարկէ՝ մեզի հասնելու եւ մեր ուշադրութիւնը գրաւելու համար, կ'ըլլան դժուարութիւնները, նեղութիւնները եւ նոյնիսկ տառապանքները: Դաւիթը կը պնդէ. «Մինչեւ տառապանք կրելը ես կը շեղէի, բայց հիմա կը պահեմ Քու Խօսքը» (Սաղմոս 119.67, NKJV):

Եկէք հասկնանք հետեւեալը. Աստուծոյ սորվելու լաւագոյն ձեւը այն է, որ հնազանդ մնանք այն ամէնուն, ինչ որ Ան կը յայտնէ մեզի, եւ հեռու մնանք մեղքէն: Բայց եթէ այդպէս չվարուինք, Ան այնքան կը սիրէ մեզ, որ կ'օգտագործէ նեղութիւններ, որպէսզի սորվեցնէ մեզի եւ վերադարձնէ կեանքի ուղիին: «Նոր Կենդանի թարգմանութեան» մէջ Դաւիթի Խօսքերը այսպէս կը հնչեն. «Ես կը շեղէի, մինչեւ որ Դուն խրատեցիր զիս. բայց հիմա ես ուշի-ուշով կը հետեւիմ Քու Խօսքին» (NLT):

Եթէ կրկին կարդանք Պօղոսին Խօսքերը կորնթացիներուն, մենք պիտի տեսնենք ատոնց մէջ նոյն նկարագրութիւնը այն մասին, թէ ինչպէս Աստուած կը փորձէ ետ բերել մեզ: Ան կ'ըսէ Կորնթոսի եկեղեցիին. «Սակայն երբ մենք կը դատուինք Տիրոջ կողմէն, մենք կը խրատուինք, որպէսզի չդատապարտուինք այս աշխարհին հետ» (Ա. Կորնթացիս 11.32, NLT): Աստուած յոյս ունի, որ այն նեղութիւնները, տառապանքները եւ փորձանքները, որոնք Ան թոյլ կու տայ մեզի կրելու, պիտի գրաւեն մեր ուշադրութիւնը եւ պիտի դրդեն վերադառնալ մահուան ճանապարհէն դէպի կեանքի ուղիին:

Մենք կը տեսնենք միեւնոյն սկզբունքը, երբ Պօղոս առաքեալը կը խօսի այն մարդուն մասին, որ սեռական յարաբերութիւններ ունէր իր խորթ մօրը հետ: Ան կը պնդէ. «Դուք պէտք է յանձնէք այս մարդը սատանային՝ մարմինը պատժելու համար [կործանելու համար մարմնական կիրքերը, որոնք արհնապղծութեան դրդեցին զինք], որ [անոր] հոգին [դեռ] կարենայ փրկուիլ Տէր Յիսուսին օրը» (Ա. Կորնթացիս 5.5, AMPC): Երբ այս եկեղեցիին հայրը ըսաւ՝ դուք պէտք է վտարէք այս մարդը, անոր նպատակն էր ոչ միայն պաշտպանել Կորնթոսի եկեղեցին այդ արագօրէն տարածուող մեղքի ապականութենէն, այլեւ օգնել այն մարդուն, որ մեղքի մէջ էր:

Աստուած խորապէս եւ ջերմօրէն կը սիրէ Իր զաւակները: Ահա թէ ինչու Ան կը փորձէ հասնիլ մեզի բազմաթիւ ձեւերով՝ կախուած այն բանէն, թէ մեղքի ստրկութեան որ փուլին մէջ կը գտնուինք: Ըստ էութեան, Ան առաջնահերթ կը համարէ այն, ինչ որ լաւագոյնն է մեզի համար՝ գերադասելով ատիկա մեր ներկայ յարմարաւէտութենէն:

Եբրայեցիներու թուղթին մէջ կայ անդում մը, որ կը բացայայտէ մեղքի գործունէութիւնը.

«Եկէք մէկ կողմ ձգենք մեր վրայէն ամէն ծանրութիւն, որ կը դանդաղեցնէ մեր ընթացքը, յատկապէս՝ այն մեղքը, որ այնքան դիւրաբար սայթաքիլ կու տայ մեզի» (Եբրայեցիս 12.1, NLT):

Ուշադրութիւն դարձուցէք անոր խօսքերուն. «... որ այնքան դիւրաբար սայթաքիլ կու տայ մեզի»: Ինծի դիւրաբար սայթաքիլ տուող մեղքը յարեցողութիւնը, ազահութիւնը, թմրանիւթերէն կախուածութիւն ունենալը, բամբասանքը եւ միւս ակնյայտ մեղքերը չէին: Իմ պարագային ատիկա պոռնոկրաֆիան էր: Ատիկա իմ կեանքի մեծագոյն պայքարն էր, եւ յաջորդ գլուխներէն մէկուն մէջ պիտի պատմեմ, թէ ինչպէս 1985 թուականին ես վերջապէս ազատեցայ այդ դաժան ստրկատիրոջմէն: Այս խօսքին զխաւոր ըսելիքը հետեւեալն է. մենք պէտք է գիտնանք, թէ ո՛ր մեղքերուն հանդէպ առաւել խոցելի ենք, եւ ընենք անհրաժեշտ ամէն ինչ, որ հեռու մնանք ատոնցմէ: Յիսուսը այսպէս կ'ըսէ.

«Եթէ քու ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա. աղէկ է քեզի պակասաւոր մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք ունենալ ու գեհեանը երթալ՝ չմարելու կրակին մէջ... Եթէ քու ոտքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա... Եթէ քու աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա...» (Մարկոս 9.42,44,46):

Յիսուս չի խօսիր բառացիօրէն ձեր ձեռքը կամ ոտքը կտրելու կամ աչքը դուրս հանելու մասին: Ան նկատի ունի, որ մենք պէտք է հեռու մնանք այն մեղքերէն, որոնք մեզ դիւրաբար սայթաքիլ կու տան:

Ես բազմաթիւ ընկերներ ունիմ, որոնք նախկին գինովներ եղած են, եւ ես արտօնուած եղած եմ օգնելու անոնցմէ մէկուն ազատելու իր կախուածութենէն: Այսօր այդ մարդը կը հրաժարի նոյնիսկ մէկ ումպ գինի խմելէ եւ մեծ զգուշաւորութեամբ հեռու կը մնայ որեւէ միջավայրէ, ուր ալքոհոլային խմիչքներ կան: Իմ ընկերը գիտէ, որ ատիկա մեղքի այն բնագաւառն է, որ կրնայ դիւրաբար ստրկացնել զինք: Ան իմաստութեամբ կը հնազանդի Քրիստոսի խօսքերուն եւ կը հեռացնէ իրմէ ստրկութեան մէջ յայտնուելու որեւէ հնարաւորութիւն:

Այնուամենայնիւ, իմ ուսանողական տարիներուն՝ նախքան քրիստոնեայ դառնալը, ես խմիչք կ'օգտագործէի եւ կը գինովնայի միւս ուսա-

նողներուն եւ իմ ընկերներուն հետ: Մէկ անգամ՝ Սուրբ Ծննդեան արծակուրդի ընթացքին, ես գինետունի մը մէջ էի ընկերներուս հետ, եւ անոնք խիստ գինովցան: Այդ օրը տուն հասայ գիշերուան 00:30-ին՝ ընկերներուս տուն տանելէն յետոյ, եւ տեսայ, որ մայրս կը սպասէր զիս: Ես պատմեցի անոր ընկերներուս մասին եւ խօսքի մէջ լուրջ թոնով ըսի.

– Մայրի՛կ, ճիշդը ըսելու համար՝ ինծի հաճելի չէ խմիչքը:

Ան ծիծաղեցաւ եւ ըսաւ.

– Դուն իսկական Պիվիր ես:

Այդ պահուն ես հասկցայ, որ երբեք չեմ տեսած իմ հայրը գինով վիճակի մէջ: Անոր ընտանիքին մէջ գինովութիւն չկար, եւ ատիկա այն մեղքը չէր, որը դիւրաբար սայթաքիլ կու տար Պիվիրներուն, թէեւ կային այլ մեղքեր: Այն մեղքերը, որոնք դիւրաբար պարտութեան կը մատնեն մեզ, պէտք չէ թոյլ տանք որեւէ կերպով մուտք գործելու մեր կեանք:

Եբրայեցիս թուրքի հեղինակը կ'աւելցնէ.

«Եւ արդեօ՞ք դուք մոռցած էք այն խրախուսական խօսքերը, որոնք Աստուած ըսաւ ձեզի՝ որպէս Իր զաւակներուն: Ան ըսաւ. «Որդեա՛կ իմ, թեթեօրէն մի՛ վերաբերիր Տիրոջ խրատին, եւ մի՛ վիատիր, երբ Ան կը շտկէ քեզ: Որովհետեւ Տէրը կը խրատէ անոնց, որ կը սիրէ, եւ կը պատժէ իւրաքանչիւր մարդ, որ կ'ընդունի՝ որպէս Իր զաւակը» (Եբրայեցիս 12.5,6, NLT):

Տէրը կը խրատէ մեզ, երբ մենք կը մեղանչենք: Եկէք արագօրէն վերանայինք այդ գործընթացը: Առաջին քայլն է՝ շտկել մեզ Իր խօսքով, երբ Ան կը յանդիմանէ մեզ մեր սրտին մէջ: Եթէ մենք չլսենք եւ թոյլ տանք, որ մեր խիղճը ծածկուի քողերով, յանդիմանութիւնը կը հասնի մեզի ընկերոջ, հովիւի կամ մարգարէի միջոցով: Եթէ մենք շարունակենք չլսել, Ան կ'օգտագործէ դժուարութիւններ, նեղութիւն կամ տառապանք:

Մտածեցէ՛ք այս մասին. ինչո՞ւ հեղինակը կը գրէ. «Մի՛ վիատիր», երբ Աստուած կը խրատէ: Կը նշանակէ՝ այդ խրատը խիստ է: Ահա թէ ինչ գրուած է անկէ յետոյ.

«Սակայն Աստուծոյ խրատը մշտապէս օգտակար է մեզի համար, որպէսզի բաժնեկից ըլլանք Անոր սրբութեան: Ոչ մէկ խրատ հաճելի չէ, քանի տակաւին այն ընթացքին մէջ է. այն ցաւո՛տ է: Բայց յետագային պիտի ըլլայ արդար կեանքի խաղաղարար արդիւնք անոնց համար, որոնք այս կերպով վարժուած են» (Եբրայեցիս 12.10,11, NLT):

Ուշադրութիւն դարձուցէք, որ խրատը ցաւոտ է: Անկարելի է աւելի պարզ ըսել ասիկա. Աստուած չի վախնար շտկել Իր գաւակներուն «խրատի գաւազանով»: Մտածեցէ՛ք այն մասին, թէ որքան անմիտ ենք մենք, երբ կ'որոշենք հետելիլ այնպիսի ցանկութիւններու, որոնք հակառակ են Աստուծոյ: Մտածեցէ՛ք այս մասին. մենք կրնանք շատ աւելի քիչ ցաւ ապրիլ կեանքին մէջ, եթէ հեռու մնանք մեղքէն՝ աստոր հաճոյքները կարճ ժամանակով վայելելու փոխարէն:

Աստուծոյ Հոգին կը ձգտէր օգնել կորնթացիներուն Պողոս ամաքեալին միջոցով, նոյնիսկ այն մարդուն, որ շնութիւն կը գործէր իր հօր կնոջ հետ: Աստուած կը շարունակէ ընել ասիկա՝ յուսալով վերադարձնել մեզ կեանքի ճանապարհին, որպէսզի բաժնեկցինք Անոր սրբութեան: Այս երկու ճանապարհները անհամատեղելի են: Մենք կա՛մ կը վայելենք կեանքի լիութիւնը՝ հնազանդելով Աստուծոյ Խօսքին, կա՛մ որոշում կը կայացնենք խոտորիլ դէպի կռապաշտութիւնը՝ միտումնաւոր մեղքը (հոգեւոր քրիպտոնաքարը), որ ի վերջոյ շատ նեղութիւններ եւ տառապանքներ կը պատճառէ մեզի:

գործնական քայլ

Մեղքը իր բնոյթով խաբուսիկ է: Խաբէութիւնը այն է, որ մեղքը կրնայ բաւականութիւն պատճառել մեզի: Խաբէութիւնը այն է, որ մենք կը վերահսկենք մեղքը, այնինչ չենք հասկնար, որ եթէ շարունակենք մնալ մեղքի մէջ, այն լիովին կը վերահսկէ մեզ: Մեղքի խաբէութեան վատագոյն հետեւանքը այն է, որ մեղքը կը հեռացնէ մեզ այն ճշմարիտ փառքէն, որուն համար կանչուած ենք, եւ թոյլ չի տար ունենալ կենդանի հաղորդակցութիւն Քրիստոսի հետ:

Բայց եթէ մենք տեսիլք ունինք այն մասին, թէ ինչ կրնայ ընել Աստուած մեր կեանքին մէջ՝ զօրութեան, գերբնական արդիւնաւէտութեան, ազատութեան, Անոր հետ մտերմութեան եւ շատ այլ բնագաւառներուն մէջ, մենք պիտի հասկնանք, որ մեղքը ընդամէնը կեղծիք եւ խաբէութիւն է:

Խնդրեցէ՛ք Աստուծմէ ցոյց տալ որեւէ բնագաւառ ձեր կեանքին մէջ, ուր դուք սկսած էք կորսնցնել տեսիլքը այն կեանքին մասին, որ Ան կը ցանկայ տալու ձեզի՝ այն բնագաւառները, որոնց մէջ թերեւս մեղքը եւ փոխգիշումը սկսած են աւելի գրաւիչ թուալ: Թոյլ տուէք Անոր նոր տեսիլք տալու ձեր կեանքի այդ բնագաւառներուն համար: Գրի՛ առէք այն, ինչ որ Ան ցոյց կու տայ ձեզի:

ՄԵՂՔԻ ՈՒԺԸ (ՄԱՍ 1)

Հին կտակարանին մէջ Կայէնը զգուշացում ստացաւ. «Ձգո՛յ՛ջ եղիր: Մեղքը կռացած է (պառկած է) դրան մօտ եւ կ'ուզէ վերահսկել քեզ: Բայց դուն պէտք է պարտութեան մատնես եւ իշխես ատոր» (Ծննդոց 4.7, NLT): Ասիկա կը վերաբերի ոեւէ մարդու: Մեղքը կը ձգտի մեզի. այն կ'ուզէ ստրկացնել եւ վերահսկել մեզ, որպէսզի կարենայ դրսեւորուիլ մեր կեանքին մէջ: Մեղքը խաբուսիկ, գայթակղեցնող եւ զօրաւոր թշնամի է:

Ինչպէ՞ս իշխել մեղքին: Պատասխանն է՝ հնազանդելով Աստուծոյ կամքին, Խօսքին եւ ճանապարհներուն: Կարդանք, թէ ինչ ըսաւ Աստուած Կայէնին անմիջապէս Ծննդոց 4.7-էն առաջ. «Դուն ընդունուած պիտի ըլլաս, եթէ ճիշդ վարուիս: Բայց եթէ հրաժարիս ճիշդ վարուելէ, զգո՛յ՛ջ եղիր: Մեղքը պառկած է դրան մօտ»: Ի սրտէ հնազանդութիւնը *ամուր կը փակէ դուռը մեղքի ցանկութեան առջեւ:*

Յիշեցէ՛ք Պօղոսին խօսքերը հաւատացեալներուն (մտապահեցէ՛ք, որ Պօղոսը այն մարդն էր, որ ստացած էր մեծագոյն յայտնութիւնը Աստուծոյ շնորհքին մասին).

«Մի՞թէ չէք գիտակցիր, որ դուք կը դառնաք այն բանին ստրուկը, ինչին կ'որոշէք հնազանդիլ: Դուք կրնաք ստրուկ ըլլալ մեղքին, որուն հետեւանքը մահն է, կամ որոշել, որ պիտի հնազանդիք Աստուծոյ, որուն արդիւնքը արդար կեանքն է» (Հռովմայեցիս 6.16, NLT):

Պօղոսին խօսքերը նման են Կայէնին տրուած ցուցմունքին: Այնուամենայնիւ, գոյութիւն ունի մեծ տարբերութիւն մը: Հին կտակարա-

նին մէջ մարդոց հոգին մահացած էր: Անոնց ներսի մարդէն կեանք չէր բխեր: Նոր կտակարանին մէջ եւ այսօր Յիսուսին հաւատացող մարդու հոգին կենդանի է. ան մէկ է Աստուծոյ հետ եւ ունի Անոր Աստուածային բնութիւնը: Այդ իսկ պատճառով, մենք կրնանք որոշել, որ պիտի հնազանդինք մեր ներսի մարդուն՝ մեր հոգիին, կամ մեր դուրսի մարդուն՝ մեր մարմինին:

Բացի այդ՝ այժմ կը գործէ Աստուծոյ շնորհքը. այն ոչ միայն կը փրկէ եւ կը ներէ, այլեւ կը զօրացնէ, որ հնազանդինք ճշմարտութեան: Աստուծոյ խօսքը կը յորդորէ մեզ. «Ամուր բռնենք այն շնորհքը, որմով զԱստուած կը պաշտենք հաճութեամբ» (Եբրայեցիս 12.28): Շնորհքը կու տայ մեզի Աստուծոյ հնազանդելու կարողութիւն:

Պետրոսը կը գրէ. «Թող Աստուած աւելի ու աւելի *շնորհք* տայ ձեզի... Իր Աստուածային զօրութեամբ (շնորհքով) Աստուած տուած է մեզի այն, ինչին կարիքը որ մենք ունինք՝ Աստուածապաշտ կեանք վարելու համար» (Բ. Պետրոս 1.2,3, NLT): Այս երկու խօսքերուն, ինչպէս նաեւ Նոր կտակարանի այլ խօսքերուն մէջ, շնորհքը կը նկարագրուի որպէս զօրացնող ուժ: Մենք ունինք նոր բնութիւն՝ զօրացած Անոր շնորհքի պարգեւով, որ հասանելի չէր Կայէնին, եւ ո՛չ ալ ռեւէ մէկուն չին կտակարանին մէջ:

Այդ պարագային, ինչո՞ւ բազմաթիւ հաւատացեալներ չեն յաջողիր մեղքին իշխելու գործողութեան մէջ: Կարելոր է յիշել, որ մենք կրնանք զօրութիւն ունենալ, բայց չգործածելու պարագային այն ոչ մէկ օգուտ կու տայ մեզի: Աստուած ընտրելու հնարաւորութիւն կու տայ մեզմէ ամէն մէկուն, եւ ոչինչ կը հարկադրէ: Այնպէս որ, երբ ռեւէ քրիստոնէայ անհնազանդ կը գտնուի Աստուծոյ, մեղքը կը սկսի վերահսկել անոր կեանքը: Ինչո՞ւ հաւատացեալը պէտք է առիթ տայ նման բանի: Ատիկա կրնայ տեղի ունենալ, միայն եթէ մեղքը համոզէ հաւատացեալին, որ անոր ցանկութիւնը աւելի շահաւէտ է անոր համար, քան Աստուծոյ հնազանդիլը: Ասիկա է պատճառը, որ Պօղոսը կը գրէ.

«Մեղքի զօրութիւնը օրէնքն է» (Ա. Կորնթացիս 15.56):

Այս պնդումը դժուարըմբռնելի է եւ թերեւս նաեւ՝ զարմացնող: Մեղքը կ'ազդէ մարդուն վրայ՝ ստանալով իր ուժը *օրէնքէն*: Առաջին հայեացքէն դուք կրնաք մտածել. «Ես Մովսէսի *օրէնքին տակ չեմ*»: Ատիկա ճիշդ է, սակայն կարելոր է նշել, որ «օրէնք» բառը Աստուածաշունչին մէջ ամէն անգամ չէ, որ կը վերաբերի Մովսէսի օրէնքին: Յակոբոսը կը խօսի «թագաւորական օրէնքի» մասին (տե՛ս Յակոբ. 2.8), որ մերձաւորը սիրելն է: Գոյութիւն ունի «Աստուծոյ օրէնքը» (տե՛ս Հռովմ. 8.7),

որ գրուած է հաւատացեալներու սրտերուն, «Քրիստոսի օրէնքը» (տե՛ս Գաղատ. 6.2), որ կը կատարուի՝ մէկը միւսին բեռը կրելով, եւ «ազատութեան օրէնքը» (տե՛ս Յակոբ. 2.12), որուն միջոցով մենք պիտի դատուինք: Կան նաեւ աւելի շատ «օրէնքներ»: Առաջին Կորնթացիս 15.56-ին մէջ Պօղոսը չի խօսիր այս օրէնքներէն որեւէ մէկուն մասին:

Այդ պարագային, ի՞նչ օրէնքի մասին կը խօսի Պօղոսը, որուն միջոցով մեղքը ուժ կը ստանայ՝ հաւատացեալներուն վրայ ազդելու համար: Մինչեւ պատասխանելը, թոյլ տուէք բացատրել: Ահա որոշ մտքեր կամ խօսքեր, որոնք յատուկ են այս օրէնքի ներքոյ գտնուող մարդոց. «Ես պէտք չէ դիտեմ այդ ֆիլմը, որովհետեւ աստոր մէջ մերկութիւն եւ հայիւրանքներ կան», «Ես պէտք է տասանորդ տամ», կամ «Ես պէտք չէ նախիմ սրահի միւս կողմը գտնուող կնոջը, որը ճշացող հագուստ կը կրէ»:

Ինչպիսի՞ օրէնքի կը վերաբերին այս արտայայտութիւնները: Նման բաներ խօսող մարդու համար Աստուծոյ Խօսքը սահմանափակող գործօն է, ոչ թէ անոր բերկրանքը: Աստուծոյ Խօսքը անոր համար հարկադրող եւ զսպող է, ինչ որ սաղմոսերգուի խօսքերուն ճիշդ հակառակն է. «Ես ուրախութիւն կ'ապրիմ՝ կատարելով Քու կամքը, իմ Աստուած, որովհետեւ Քու հրահանգները գրուած են իմ սրտին վրայ» (Սաղմոս 40.8, NLT): «Օրէնքի ներքոյ» գտնուող մարդը սրտանց չի *«կամենար Անոր կամքը ընել»* (տե՛ս Յովի. 7.17):

Ըստ էութեան, այս ձեւակերպումը ամէն ինչ կ'ըսէ. «Ես կուզի ընել ատիկա... բայց Աստուծոյ Խօսքը այլ բան կը պատուիրէ»: Եւ Հին կտակարանին մէջ գոյութիւն ունի նման վերաբերմունքի դիպուկ օրինակ:

Անհամաձայնութիւն ունեցող մարգարէն

Բաղասմը մարգարէ էր: Ան կը ճանչնար Աստուծոյ ձայնը, եւ Տիրոջ ճանապարհները անյայտ չէին Անոր համար: Բաղակը Մովաբի թագաւորն էր, եւ բացի այդ՝ կ'իշխէր նաեւ մադիանացիներու վրայ: Անոր ամբողջ պետութեան բնակիչները սարսափած էին, քանի որ Իսրայէլի ժողովուրդը կը մօտենար իրենց: Իսրայէլցիները թալանած էին Եգիպտոսը՝ ամենաազդեցիկ երկիրը ամբողջ աշխարհին մէջ, եւ անցած էին Կարմիր ծովը: Եգիպտոսի զինուորական ուժը, գիւղատնտեսութիւնը եւ տնտեսութիւնը կործանման եզրին էին, եւ ամէն ընտանիքի անդրանիկ որդին գերբնականօրէն մահուան մատնուած էր:

Եգիպտոսէն դուրս ելլելէն ետք իսրայէլցիները յարձակման ենթարկուեցան ամորիացիներու կողմէն եւ լիովին ջախջախեցին զանոնք: Այժմ Իսրայէլը բանակ տուած էր Մովաբի հարթավայրերուն մէջ, եւ

Մովսեփի ժողովուրդը, առաջնորդներն ու թագաւորը սարսափած էին՝ մտածելով, որ Իսրայէլը պիտի ընէր իրենց հետ նոյնը, ինչ որ եգիպտացիներու եւ ամորհացիներու հետ:

Բաղակ թագաւորին պատմեցին ակնառու եւ ազդեցիկ մարգարէի մը մասին, որուն անունը Բաղասամ էր: Երբ ան կ'օրհնէր մարդոց, անոնց հետ բարի բաներ կը կատարուէին, իսկ երբ կ'անիծէր մարդոց, անոնք անպատճառ անէծք կը կրէին: Բաղակ թագաւորը ուղարկեց իր պաշտօնեաները Բաղասամ մարգարէին քով՝ նուէրներով եւ հետեւեալ առաջարկով. «Կ'աղաչեմ, եկո՛ւր, ինծի համար անիծե՛ այս ժողովուրդը [Իսրայէլը], որովհետեւ ան ինձմէ զօրաւոր է: Թերեւս կարենամ զինք զարնել եւ իմ երեսէն դուրս քշել» (Թուոց 22.6):

Բաղասամը պատասխանեց ուղարկուած մարդոց.

«Եւ անիկա ըսաւ անոնց. «Այս գիշեր հոս մնացէք, եւ Տէրը ինչ որ ինծի խօսելու ըլլայ, անոր համեմատ պատասխան տամ ձեզի»: Մովսեփի իշխանները Բաղասամին քով մնացին» (Թուոց 22.8):

Ուշադրութիւն դարձուցէք, որ Բաղասամը «Տէր» կ'անուանէ Ձինք: Ան չէր խորհրդակցեր ինչ որ օտար Աստուծոյ հետ, քանի որ ան միակ ճշմարիտ Աստուծոյ մարգարէն էր: «Տէր» բառի փոխարէն ան կ'օգտագործէր «*Եահուէի*» անունը: Ասիկա Աստուծոյ անունն է. Հին կտակարանի հեղինակները երբեք չէին օգտագործեր այս անունը՝ խօսելով կեղծ Աստուծոյ մասին:

Որքա՞ն յաճախ մենք կ'օգտագործենք «Տէր» բառը՝ նկատի ունենալով Յիսուսին եւ մեր Հայր Աստուծոյ: Մենք չենք խօսիր օտար աստուածներու մասին, այլ՝ մեր Արարիչի, Գերագոյն Տիրոջ եւ մեզ համար Իր կեանքը Տուողին մասին: Այսպէս կը վարուի նաեւ Բաղասամը:

Ուշադրութեամբ կարդանք, թէ ինչ ըսաւ Աստուած Բաղասամին այդ գիշեր: Հետաքրքրական է նշել, որ Ան նոյնիսկ չսպասեց, որ Բաղասամը փնտռէ Ձինք:

«Աստուած Բաղասամին եկաւ ու ըսաւ. «Որո՞նք են այդ քու քովդ եղած մարդիկը»» (Թուոց 22.9):

Տէրը, ըստ էութեան, Բաղասամին կ'ըսէր. «Որո՞նք են այս մարդիկ ինծի համար: Անոնք ուխտի մէջ չեն հետս: Դուն իսկապէ՞ս կ'ուզես հարցնել ինծի Իմ ուխտի ժողովուրդը անիծելու մասին: Ինչո՞ւ կ'ուզես աղօթել այս մասին: Մի՞թէ պատասխանը ակնյայտ չէ»:

Կան բաներ, որոնց համար պետք է աղօթել: Մենք արդեն գիտենք, թե որն է Աստուծոյ կամքը՝ կարդալով այն, ինչ որ յայտնուած է Անոր գրաւոր ուխտին մէջ: Կարիք չկայ աղօթել եւ հարցնել Աստուծոյ, թե արդե՞օք պետք է հաւաքուիլ այլ քրիստոնէաներու հետ: Աստուած արդէն ըսած է. «Եւ մէկտեղ հաւաքուիլը չթողունք, ինչպէս ոմանք սովորութիւն ունին» (Եբրայեցիս 10.25):

Կարիք չկայ աղօթել եւ հարցնել Աստուծոյ, թե արդե՞օք պետք է զոհաբերութիւններ հաւաքել այն մարդոց համար, որոնք կը ծառայեն ձեզի, որովհետեւ Սուրբ գիրքը կ'ըսէ. «Նոյնպէս ալ Տէրը հրաման տուաւ, որ Աւետարանը քարոզողները Աւետարանէն ապրին» (Ա. Կորնթացիս 9.14):

Պէտք չկայ հարցնելու, թե արդե՞օք կրնաք միասեռ յարաբերութիւններ ունենալ կամ խրախուսել նման յարաբերութիւնները: Աստուած արդէն յստակ խօսած է այս մասին.

«Չէ՞ք հասկնար, որ մեղք գործողները չեն ժառանգեր Աստուծոյ թագաւորութիւնը: Մի՛ խաբէք դուք ձեզ: Անոնք, որոնք կը տրուին սեռական մեղքերուն, կամ կ'երկրպագեն կուռքերուն, կամ շնութիւն կը գործեն, կամ տղամարդ մարմնավաճառներ են, կամ միասեռական են, կամ գողեր են, կամ ազահ մարդիկ են, կամ զինովներ են, կամ կռուարար են, կամ կը խաբեն մարդիկ. ասոնցմէ ոչ մէկը կը ժառանգէ Աստուծոյ թագաւորութիւնը» (Ա. Կորնթացիս 6.9,10, NLT):

Պէտք չկայ հարցնելու Աստուծոյ, թե կրնա՞ք կեղծել ձեր հարկային յայտարարագիրը. աստիկա գողութիւն է: Կամ տեղափոխուիլ ձեր զուգընկերուհիի կամ զուգընկերոջ տունը եւ սեռական կեանքով ապրիլ անոր հետ մինչեւ ամուսնանալը. աստիկա սեռական մեղք է: Կամ յարաբերութիւններ սկսիլ այլ մարդու կնոջ հետ. աստիկա շնութիւն է, եւ այլն: Նոր կտակարանին մէջ կան բազմաթիւ պատուիրաններ, որոնք արդէն յստակ ցոյց կու տան Աստուծոյ կամքը:

Ըստ էութեան, Աստուած շարունակեց. «Լա՛ւ, Բաղասամ, քանի որ դուն չես հասկնար, կամ, աւելի ճիշդը, չես ուզեր հասկնալ, Ես պարզօրէն պիտի յայտնեմ Իմ կամքը քեզի համար»: «Ատոնց հետ մի՛ երթար, ժողովուրդը մի՛ անիծեր, վասնզի անիկա օրհնեալ է» (Թուոց 22.12):

Այս խօսքերը մեկնութեան կարիք չունին:

Իսկ այժմ, ուշադրութիւն դարձուցէք, թե ինչպէս Բաղասամը արձագանգեց Աստուածային ցուցմունքին.

«Բաղասան առտուն ելաւ ու ըսաւ Բաղակի իշխաններուն.
 «Դուք ձեր երկիրը գացէք, վասնզի Տէրը *չի թողուր (կ'ար-
 գիլէ)*, որ ձեզի հետ երթամ» (Թուոց 22.13):

Շատերը պիտի գովէին Բաղասանը: Մենք պիտի ծափահարէինք անոր հնազանդութեան եւ պիտի ըսէինք. «Ան Աստուածապաշտ եղբայր է»: Այնուամենայնիւ, անոր խօսքին մէջ բան մը կայ, ինչ որ կը դրդէ մեզ ուրիշ ձեւով մտածելու: Ուշադրութիւն դարձուցէք, որ ան ըսաւ. «Տէրը *կ'արգիլէ* զիս»: Ան չըսաւ. «Տէրը պարզօրէն ցոյց տուաւ իր կամքը, եւ այդ պատճառով ես չեմ գար»: Ան օգտագործեց «*արգիլել*» բառը:

Օրինակ մը բերենք: Աւագ դպրոցի խումբ մը աշակերտներ կ'որոշեն երթալ գնումներու, իսկ յետոյ՝ սինեմա: Էմին, որ անոնցմէ մէկն է, թոյլտուութիւն կը խնդրէ իր ծնողներէն՝ երթալու համար: Անոնք կը պատասխանեն.

- Էմի՛, մենք ընտանեկան ընթրիք պիտի ունենանք այս երեկոյ, աւելի լաւ է, որ մնաս մեզի հետ:

Էմիի ընկերները ինքնաշարժով կու գան անոր տունին քով՝ զինք իրենց հետ տանելու համար: Երբ ան կը բանայ դուռը, ընկերները կը հարցնեն.

- Պատրա՞ստ ես:

Էմին մռայլ դէմքով կը պատասխանէ.

- Ես չեմ կրնար գալ:

Ասիկա կը նշանակէ՝ «*Ես կ'ուզէի գալ ձեզի հետ, երեխանէ՛ր, բայց պէտք է տունը մնամ՝ ընտանեկան ընթրիքի*»: Անոր ծնողներու ցանկութիւնը թոյլ չի տար անոր ընելու այն, ինչ որ ան իրականութեան մէջ կ'ուզէ ընել: Անոր ծնողներու խօսքերը *օրէնք* են իրեն համար: Բաղասանին ըսածը ճիշդ նոյնն էր:

Աւելի շահաւէտ գործարք

Մովաբի իշխանները վերադարձան թագաւորին քով եւ փոխանցեցին Բաղասանի պատասխանը: Սակայն ատիկա չգոհացուց թագաւորը. մերժումը պատասխան չէր անոր համար: Այնպէս որ, ան ուղարկեց ավելի պատուաւոր իշխաններ եւ ավելի մեծ նուէրներ՝ Բաղասանը հրաւիրելու համար: Ահա թագաւորին խօսքերը անոր. «Քանզի քեզի շատ պատիւ պիտի ընեն եւ ինծի ինչ որ ըսես, պիտի ընեն, ուստի կ'աղաչեմ, եկո՛ւր, անիծե՛լ այս ժողովուրդը ինծի համար» (Թուոց 22.16,17):

Եթէ ձեր դրացին ըսեր ձեզի. «Ես պիտի ընեմ քեզի համար այն, ինչ որ ըսես», ատիկա մեծ բան չէր ըլլար, բայց երբ մեծ պետութեան մը թագաւորը նման առաջարկ մը ընէր, ատիկա շատ բան կը նշանակէ:

Երբ ես կը սորվէի աւագ դպրոցի մէջ, կար Ֆլիփ Ուիլսըն անունով յայտնի կատակերգակ մը: Անոր թեւաւոր խօսքերէն մէկն էր. «սատանան ստիպեց, որ ընեմ ատիկա»:

Ատիկա ծիծաղելի էր, եւ մարդիկ յաճախ կը կրկնէին անոր խօսքերը, բայց ատոնք ճիշդ չեն: Սատանան չի կրնար ստիպել հաւատացեալին որեւէ բան ընելու: Աստուծոյ Խօսքը յստակ կ'ըսէ. «Սակայն ամէն մէկը կը փորձուի՝ իր ցանկութիւններէն *հրապուրուած* ու խաբուած» (Յակոբոս 1.14): Բանալին այս խօսքին մէջ «հրապուրուած» բառն է: Ահա այն ամէնը, ինչ որ սատանան կրնայ ընել հաւատացեալին: Սակայն դուք չէք կրնար հրապուրուիլ այնպիսի բանով, որ չէք ցանկար: Եթէ իմ առջեւ թմրանիւթի (քոքաինի) մէկանգամեայ չափաբաժին դնէին, ես պիտի ըսէի. «Հեռացուցէ՛ք ատիկա ինձմէ»: Ինծի անկարելի պիտի ըլլար հրապուրուիլ ատով, քանի որ ես չունիմ ցանկութիւն թմրամիջոցներու հանդէպ:

Սակայն սատանան խելացի է եւ ծոյլ չէ: Ան կը յանձնարարէ դեւերուն ուսումնասիրել ոչ միայն ձեր կեանքը, այլեւ ձեր հօր եւ մօր, նաեւ անոնց հայրերու եւ մայրերու կեանքերը: Ան գիտէ ձեր ընտանեկան տկարութիւններն ու հակումները:

Ան ուսումնասիրած էր Բաղասամին կեանքը եւ գիտէր, որ այդ մարգարէն անառողջ ցանկութիւն ունէր հարստութեան, նուէրներու եւ կարգավիճակի հանդէպ: Համոզուած եմ՝ ասիկա էր պատճառը, որ սատանան դրդեց անաստուած Բաղակ թագաւորին աւելի գայթակղիչ առաջարկ ընելու: Բայց սպասեցէ՛ք. որքան մեծ էր առաջարկը, այնքան ուշագրաւ էր Բաղասամին պատասխանը.

«Եթէ Բաղակ իր տունովը լեցուն արծաթ ու ոսկի ալ տայ ինծի, իմ Տէր Աստուծոյս հրամանին հակառակ *չեմ կրնար* պզտիկ կամ մեծ բան մը ընել» (Թուոց 22.18):

Մենք կրկին պիտի ծափահարէինք Բաղասամ մարգարէի համարձակ դիրքորոշումին, քանի որ ան անհնազանդ չէր Աստուծոյ Խօսքին՝ նոյնիսկ աւելի մեծ առաջարկի պարագային: Այնուամենայնիւ, մենք կրկին կը տեսնենք այն բանալի բառերը, որոնք ցոյց կու տան, որ մարգարէն սահմանափակուած կը զգար ինքզինքը: Ան ըսաւ՝ «Ես չեմ կրնար», ոչ թէ՝ «Ես չեմ ուզեր»: Ոչինչ փոխուած էր: Ան տակաւին զսպուած էր Աստուծոյ Խօսքով, որ օրէնք էր անոր

համար: Անոր յաջորդ խօսքերը կը հաստատեն ասիկա.

«Արդ, կ'աղաչեմ, այս գիշեր դուք ալ հոս կեցե՛ք, որպէսզի գիտնամ, թէ Տէրը ուրիշ ինչ պիտի ըսէ ինձի» (Թուոց 22.19):

Ի՞նչ: Մի՞թէ Եստի Գայթակղիչ առաջարկ մը պիտի փոխէր Աստուծոյ միտքը: Մի՞թէ ինչ որ մէկը կրնայ հաւատալ, որ Աստուած պատուիրեց Բաղասամին «ոչ» ըսել առաջին անգամ, որովհետեւ Ան գիտէր, որ թագաւորը Եստի շահաւէտ առաջարկ մը պիտի ընէր անոր յաջորդ դեսպաններուն հետ: Ինչպիսի՜ անհեթեթ մտածելակերպ: Աստուած չէր առաջարկեր Բաղասամին սպասել՝ Եստի լաւ առաջարկի համար: Այնպէս որ, եթէ կարիք չկար, որ Բաղասամը աղօթէր առաջին անգամ, առաւել եւս չ'արժէր աղօթել երկրորդ անգամ: Իսկ Աստուած պարզօրէն յայտնեց Իր կամքը առաջին անգամ եկած մարդոց վերաբերեալ. «Անոնց հետ չերթա՛ս»:

Չնայած այդ ամէնուն, Բաղասամը որոշեց աղօթել այդ գիշեր: Այնուամենայնիւ, լսեցե՛ք Տիրոջ պատասխանը.

«Եթէ մարդիկ քեզ կանչելու գան, ելի՛ր, անոնց հետ գնա՛, բայց ինչ որ քեզի հրամայեմ, միայն ան ըրէ» (Թուոց 22.20):

Սպասեցե՛ք: Այժմ Աստուած կ'ըսէ. «Գնա՛ անոնց հետ»: Մի՞թէ մենք ճիշդ կարդացինք: Ի՞նչ կը կատարուի: Ինչպիսի՜ շրջադարձ: Այժմ Բաղասամը Տիրոջմէն խօսք ունէր, որ երթար Մովսէսի իշխաններուն հետ: Եւ ան ըրաւ ճիշդ այն, ինչ որ Տէրը պատուիրեց իրեն: Ան թամբեց իր աւանակը եւ գնաց Մովսէսի իշխաններու հետ: Ան հնազանդեցաւ Աստուծոյ պատուէրին: Այնուամենայնիւ, կատարուեցաւ հետեւեալը.

«Եւ երթալու համար Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ» (Թուոց 22.22):

Ի՞նչ կը կատարուի: Մի՞թէ Աստուած շիզոֆրենիայէ (մտազարութիւն, շնչաւոր հիւանդութեան տեսակ) կը տառապի: Բաղասամը ըրաւ ճիշդ այն, ինչ որ Աստուած պատուիրած էր իրեն նախորդ գիշեր, իսկ Աստուած բարկացաւ անոր վրայ: Ինչպէ՞ս կարելի է բացատրել ասիկա:

Աստուածաշունչին մէջ կայ տրամաբանական պատասխան մը, որ շատ բաներ կրնայ յայտնել մեզի: Այդ պատասխանը կը վերաբերի այն ճշմարտութեան, որ *մեղքը կը ստանայ իր ուժը օրէնքէն*: Մենք պիտի բացայայտենք այն յաջորդ գլուխին մէջ:

գործնական քայլ

Շատ հաւատացեալներ կարիք ունին լսելու այս յոյսի ուղերձը. դուք կրնաք լիովին ազատ ըլլալ մեղքի իշխանութենէն:

Այո՛, դուք ճիշդ կարդացիք: Քրիստոնէաները կրնան վեր ըլլալ մեղքէն: Յիսուս չմահացաւ միայն ձեզի «Երկնքի տոմս» տալու համար. Ան ազատ արծակեց ձեզ մեղքի եւ մահուան իշխանութենէն: Մեղքը իշխանութիւն չունի ձեր վրայ. ընդհակառակը՝ դո՛ւք ունիք իշխանութիւն մեղքի վրայ:

Ասիկա հնարաւոր է միայն Աստուծոյ շնորհքով՝ Անոր Աստուածային զօրութեամբ, որ կրնայ այն, ինչ անկարելի է մարդուն համար: Շնորհքը տրուած է մեզի, եւ շնորհքի զօրութիւնը կը պատկանի մեզի: Այնուամենայնիւ, մենք չենք ստանար շնորհքի առաւելութիւնները, եթէ չօգտագործենք այն: Որպէս կանոն, հաւատացեալները չեն օգտագործեր Աստուծոյ շնորհքը, քանի որ չեն գիտակցիր, որ այն կը պատկանի իրենց:

Ջօրացէ՛ք մեղքին դէմ այսօր՝ մտորելով այն Աստուածաշնչեան հատուածներուն շուրջ, որոնք կը յայտնեն, որ դուք իրական իշխանութիւն ունիք մեղքին վրայ: Խօսեցէ՛ք Աստուծոյ հետ այս մասին եւ ապաշխարեցէ՛ք այն բնագաւառներուն համար, որոնց մէջ թոյլ տուած էք մեղքին իշխելու ձեր կեանքին մէջ: Գոհացէ՛ք Աստուծմէ՝ այսօր ձեզի ազատութիւն տալու համար: Ներեցէ՛ք դուք ձեզ նախկին ձախողումներուն համար եւ խնդրեցէ՛ք Աստուծմէ ցոյց տալ, թէ ինչպէս Ան կը դիտարկէ ձեր ձախողումները: Գրի՛ առէք այն, ինչ որ Ան ցոյց կու տայ կամ կը յայտնէ ձեզի:

ՄԵՂՔԻ ՈՒԺԸ (ՄԱՍ 2)

Շարունակենք նախորդ գլուխին մէջ մեր սկսած պատմութիւնը Բաղասան մարգարէի մասին:

Աստուած պատուիրած էր Բաղասանին չերթալ Մովսէսին եւ Մադիամէն եկած մարդոց առաջին խումբին հետ: Այնուամենայնիւ, երբ եկաւ երկրորդ խումբը՝ բաղկացած աւելի ակնառու պաշտօնեաներէն, Բաղասանը եւս մէկ անգամ գնաց Տիրոջ քով: Ան յոյս ունէր, որ այլ պատասխան պիտի ստանար:

Դուք երբեք եղա՞ծ էք նման իրավիճակի մէջ, երբ իմացած էք ձեր սրտին մէջ, թէ որն է Աստուծոյ կամքը, սակայն, միեւնոյնն է, աղօթքով դիմած էք Անոր՝ յոյս ունենալով, որ Ան այլ պատասխան պիտի տայ: Թերեւս դուք քողարկած էք ձեր սխալ ցանկութիւնը՝ ըսելով. «Ես պիտի աղօթեմ ատոր համար», կամ «Ես մէկ անգամ ալ պիտի աղօթեմ ատոր համար»:

Չեմ գիտեր՝ դուք ինչպէս, բայց ես մեղաւոր եմ այս հարցին մէջ, եւ քիչ յետոյ այս գլուխին մէջ պիտի պատմեմ այս ոլորտին մէջ իմ երկու բացասական փորձառութիւններուն մասին:

Բաղասանը սաստիկ կը ցանկար ստանալու թէ՛ նուէրներ, թէ՛ պատիւ այդ ազդեցիկ թագաւորէն, սակայն չէր համարձակեր դուրս ելլել Աստուծոյ պատուէրի «սահմանափակումներէն»: Ան կը հասկնար, որ օրհնուած չէր ըլլար, եթէ գիտակցաբար անհնազանդ ըլլար Աստուծոյ: Երբեմն նման դիրքորոշումը դուռ կը բանայ աւելի մեծ խաբէութեան համար:

Այնպէս որ, փորձեցէք պատկերացնել Բաղասանին զարմանքը, երբ

Աստուած ըսաւ. «Ուտքի՛ կեցիր, գնա՛ անոնց հետ»: Թերեւս Բաղասամը մտածեց. «Չարմանալի՛ է: Որքան լաւ է, որ անգամ մըն ալ աղօթեցի ասոր համար»:

Յաջորդ առաւօտեան Բաղասամը արթնցաւ եւ ըրաւ ճիշդ այն, ինչ որ Աստուած պատուիրած էր իրեն նախորդ գիշեր եւ, ի զարմանս մեզի, մենք կը կարդանք. «Եւ երթալու համար Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ» (Թուոց 22.22):

Ի՞նչ, մի՞թէ Աստուած շիզոֆրենիայէ կը տառապի: Անշուշտ, ապիկա հռետորական հարցում է, քանի որ բոլորս գիտենք պատասխանը՝ *անշուշտ՝ ո՛չ*: Այդ պարագային, ինչո՞ւ Աստուած բարկացաւ: Բաղասամը կ'ընէր ճիշդ այն, ինչ որ Աստուած ըսած էր իրեն. ան կ'երթար: Եւ յանկարծ Աստուած բարկացաւ անոր երթալուն համար: Ի՞նչ կը կատարուի:

Այս հատուածին մէջ յայտնուած է ճշմարտութիւն մը, որ շատերը չեն գիտեր եւ չեն հասկնար, եւ ինձմէ պահանջուեցան դժուարութիւններով լեցուն տարիներ, մինչեւ որ բացայայտեցի այն:

Եթէ մենք ուժգնօրէն (ազահաբար) ինչ որ բան մը կը ցանկանք, իսկ Աստուած յայտնած է մեզի Իր կամքը այդ մասին (թէ՛ Իր Խօսքով, թէ՛ աղօթքի ժամանակ), սակայն մենք տակաւին կը ցանկանք ատիկա, Աստուած յաճախ կու տայ ատիկա մեզի, թէւ Ան գիտէ, որ ատիկա լաւագոյնը չէ մեզի համար, եւ որ ի վերջոյ մենք դատաստանի առջեւ պիտի կենանք ասոր համար:

Թերեւս այս պնդումը զարմացնէ ձեզ, բայց այն ճշմարիտ է: Թոյլ տուէք ապացուցելու այն Աստուածաշնչեան օրինակներով:

Պատասխանուած խնդրանքներ

Իսրայէլը կը ցանկար թագաւոր ունենալ: Ժողովուրդի առաջնորդները դիմեցին Սամուէլ մարգարէին եւ յայտնեցին իրենց խնդրանքը: Անոնք ըսին. «Ուստի հիմա մեր վրայ թագաւոր մը դիր, որպէսզի բոլոր ազգերուն պէս մեզ կառավարէ» (Ա. Թագաւորաց 8.5):

Սամուէլը հարցուց Տիրոջը անոնց խնդրանքին մասին, եւ Աստուած պատասխանեց առաջնորդներուն մարգարէի միջոցով՝ բացատրելով, թէ ինչու թագաւոր ունենալը լաւ չէր ըլլար անոնց համար: Ան զգուշացուց, որ թագաւորը իր բանակը պիտի զօրակոչէր անոնց որդիները: Թագաւորը նոյնպէս պիտի առնէր անոնց որդիները՝ իր դաշտերը վարելու, իր հունձքը հաւաքելու եւ իրեն համար զէնք ու սպառազինութիւն պատրաստելու համար: Ան պիտի առնէր անոնց աղջիկները եւ հարկադրաբար պիտի դարձնէր խոհարարներ, մաքրուիիներ, օժանելիք

պատրաստողներ եւ պիտի նշանակէր շատ այլ գործերու համար: Այդ ամէնէն բացի՝ թագաւորը պիտի պահանջէր լաւագոյն դաշտերը, խաղողի այգիները, ձիթենիներու պուրակները, երինջները եւ ոչխարները, եւ պիտի տար ատոնք իր պաշտօնեաներուն: Աստուած շարունակեց՝ ըսելով, որ ժողովուրդը ի վերջոյ պիտի աղաչէր, որ ազատէր այն թագաւորէն, որուն իրենք փափաքած էին, բայց Ինքը չէր օգնէր անոնց:

Այնուամենայնիւ, գրուած է. «Սակայն ժողովուրդը Սամուէլին խօսքին մտիկ ընել չուզելով՝ ըսին. «Ո՛հ, անպատճառ թագաւոր մը կ'ուզենք, որպէսզի մենք ալ բոլոր ազգերուն պէս ըլլանք»» (Ա. Թագաւորաց 8.19,20):

Սամուէլը կրկնեց Աստուծոյ ժողովուրդին սաստիկ ցանկութիւնը: Տիրոջ պատասխանը Սամուէլին հակառակ էր Անոր կամքին: Ան ըսաւ. «Անոնց խօսքին մտիկ ըրէ՛ ու անոնց վրայ թագաւոր մը դի՛ր» (Ա. Թագաւորաց 8.22): Աստուած անոնց տուաւ իրենց ուզածը, թէւ ատիկա լաւագոյնը չէր անոնց համար: Անոնք ստացան իրենց թագաւորը. թէ՛ ան, թէ՛ անոր յաջորդները ըրին այն ամէնը, ինչի մասին Աստուած զգուշացուցած էր ժողովուրդը:

Եւս օրինակ մը: Երբ Իսրայէլը դուրս ելաւ Եգիպտոսէն, Աստուած կը կերակրէր ժողովուրդը գերբնական կերակուրով: Այն կը կոչուէր մանանա՝ երկնային հաց, որ Աստուածաշունչը կ'անուանէ նաեւ «հրեշտակներու հաց» (տե՛ս Սաղմոս 78.25): Այդ կերակուրը այնքան սննդարար էր, որ յետագային Եդիան կերաւ մանանայէն պատրաստուած ընդամէնը երկու շոթ, եւ քառասուն օր շարունակ առանց կենալու վազեց ատորմէ՝ ստացած ուժով: Ես կ'ուզէի ժամանակ առ ժամանակ նման կերակուր ուտել:

Սակայն Իսրայէլը յոգնեցաւ այդ հացէն եւ միս փափաքեցաւ: Եւ անոնք խնդրեցին ատոր համար: Սաղմոսերգուն կը գրէ. «Խնդրեցին, եւ Ան լորամարգիներ բերաւ» (105.40): Աստուած զարմանալի կերպով պատասխանեց անոնց խնդրանքին: Գրուած է. «Երկնքի մէջ արեւելեան հովը հանեց եւ *Իր զօրութեամբ* հարաւային հովը բերաւ: Անոնց վրայ փոշիի պէս միս տեղացուց: Ծովու աւազին չափ թեւաւոր թռչուններ անոնց բանակին մէջ եւ անոնց վրաններուն չորս կողմը իջեցուց» (Սաղմոս 78.26-28):

Աստուած ոչ միայն պատասխանեց անոնց խնդրանքին, այլեւ կատարեց ատիկա հրաշքով: *Իր զօրութեամբ*, Ան հարիւր հազարաւոր թռչուններ բերաւ Իսրայէլի բանակատեղին: Կարիք չկար, որ իսրայէլցիները որսային այդ թռչունները. անոնց պէտք չէին շուներ, զէնքեր, վանդակներ եւ ոչ ալ սարք՝ զանոնք բռնելու համար: Լորամարգիներ

րը պարզապես թափուեցան անոնց վրայ, եւ անոնք կը հաւաքէին այդ թռչունները օդէն կամ գետնէն: Եթէ ատիկա տեղի ունենար այսօր, այդ պատմութիւնը պիտի տարածուէր բոլոր ընկերական ցանցերուն (social media) մէջ եւ պիտի դառնար գլխաւոր լուրերէն մէկը: Աստուած ազդեցիկ կերպով միջամտեց, սակայն կարդացէք այս Սաղմոսի շարունակութիւնը:

«Կերան եւ աղէկ կշտացան. վասնզի իրենց ցանկացածը իրենց տուաւ: Իրենց ցանկացածներէն զուրկ չմնացին եւ քանի որ իրենց կերակուրը իրենց բերանն էր, Աստուծոյ բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ ու սպաննեց անոնց զօրաւորները ու գետիկն զարկաւ Իսրայէլի ընտիրները» (Սաղմոս 78.29-31):

Աստուած՝ ոչ թէ կեղծ աստուած կամ որեւէ դէ, տուաւ անոնց այն, ինչ որ կը ցանկային, եւ այն ալ՝ հրաշքով: Սակայն մինչեւ անոնք աւարտեցին ուտելը, Անոր դատաստանը վրայ հասաւ:

Մենք պէտք է մտապահենք, որ մինչեւ մարդուն ստեղծելը, Աստուած որոշեց ազատ կամք տալ անոր, թէեւ Ան կը գիտակցէր, որ մենք կրնայինք ընտրել այն, ինչ որ հակառակ է Իր ցանկութեան եւ նոյնիսկ կործանարար է մեզի համար:

Յիշեցէ՛ք անառակ որդիին օրինակը: Ան խնդրեց տալ իր ժառանգութիւնը: Անոր հայրը գիտէր, որ ան այնքան հասուն չէր, որ պատշաճ կերպով տնօրինէր այն: Այնուամենայնիւ, քանի որ որդին խիստ կը ցանկար ատիկա, հայրը զիջեցաւ եւ տուաւ անոր ժառանգութիւնը: Հետեւաբար որդին յայտնուեցաւ խոզանոցին մէջ եւ համակուեցաւ խոր ափսոսանքով:

Աստուածաշունչին մէջ կան նաեւ այլ օրինակներ, բայց կը կարծեն՝ հասկցաք այս ճշմարտութիւնը: *Մենք կը գտնուինք անբարենպաստ եւ վտանգաւոր վիճակի մէջ, երբ եռանդուն կերպով կը խնդրենք այնպիսի բան, ինչ որ չի համապատասխանիր Աստուծոյ կամքին:*

Խելացի ականակը

Հաշուի առնելով այս ամէնը՝ վերադառնանք Բաղասամի պատմութեան:

Ան արդէն կ'երթար Մովաբի թագաւորին հանդիպելու: Թագաւորին օգնականները կ'ուղեկցէին անոր, բայց Աստուած բարկացած էր անոր

ընտրութեան պատճառով: Յանկարծ հրեշտակ մը կեցաւ Բաղասմին առջեւ: Կը խնդրեմ մտապահել, որ հրեշտակները փոքրիկ գեր մանուկներ չեն՝ աղեղներով եւ նետերով, այլ՝ հսկայամարմին եւ զօրաւոր էակներ: Ես կ'ենթադրեմ, որ այդ հրեշտակը 2,5-3 մեթր հասակ ունէր:

Հրեշտակը կեցաւ ճանապարհի վրայ՝ Բաղասմին առջեւ, դուրս հանած թուրով, եւ Աստուած հրաշքով բացաւ *աւանակին* աչքերը: Հագիւ որ աւանակը տեսավ այդ հսկայամարմին էակը, որ պատրաստ էր թուրով զարնելու, ան դուրս գնաց ճանապարհէն դէպի դաշտը՝ անորմէ խուսափելու համար: Բաղասմը սկսաւ բարկացած հարուածել իր աւանակին եւ վերադարձուց զինք ճանապարհի վրայ:

Հրեշտակը կեցաւ ճանապարհի այն հատուածը, ուր երկու կողմէն պատ կառուցուած է: Տեսնելով հրեշտակին՝ աւանակը կրկին փորձեց կարելի եղած չափով հեռանալ անորմէ, եւ սեղմեց Բաղասմին ոտքը իր մարմինին եւ պատին միջեւ: Բաղասմն ա՛լ աւելի բարկացաւ աւանակին վրայ եւ կրկին սկսաւ հարուածել անոր:

Յաջորդը՝ հրեշտակը կեցաւ ճանապարհի այն հատուածը, ուր անցումը այնքան նեղ էր, որ այլեւս դառնալու տեղ չկար: Այս անգամ, տեսնելով թուրը մերկացուցած հրեշտակը, աւանակը պառկեցաւ Բաղասմին տակ: Բաղասմը կատաղութեան չափ բարկացաւ, եւ կրկին սկսաւ հարուածել աւանակին:

Աստուած բացաւ աւանակին բերանը, եւ ան ըսաւ Բաղասմին. «Ի՞նչ ըրի քեզի, որ այսպէս երեք անգամ զիս ծեծեցիր» (Թուոց 22.28):

Բաղասմը եւ աւանակը բարկացած քանի մը խօսք փոխանակեցին եւ, ի վերջոյ, Աստուած բացաւ Բաղասմին աչքերը, որպէսզի ան նոյնպէս տեսնէ հրեշտակը: Ան անմիջապէս երեսնիվայր ինկաւ:

Մինչեւ այս պահը ես խօսած եմ այդ հրեշտակին մասին՝ որպէս Աստուծոյ ծառայող երկնային էակի մը: Այնուամենայնիւ, Աստուածաշունչի «Նիւ Քինկ Ճէյմս» թարգմանութեան թարգմանիչները (ինչպէս նաեւ՝ ես) կը հաւատան, որ այդ հրեշտակը Ինքը Տէրն էր: Ինչ որ է, ես թոյլ պիտի տամ, որ դուք որոշէք ասիկա, քանի որ իմ նպատակը ձեզ համոզելը չէ ո՛չ ատոր մէջ, ո՛չ ալ հակառակը:

Հրեշտակը յանդիմանեց Բաղասմը՝ ըսելով. «Տե՛ս, ես դուրս ելայ՝ քեզի դէմ կանգնելու համար, որովհետեւ քու ճանապարհը ծուռ է Իմ առջեւ: Աւանակը տեսաւ Ջիս եւ քաշուեցաւ Ինձմէ արդէն երեք անգամ: Եթէ ան չքաշուէր Իմ առջեւէն, անշուշտ, ես արդէն սպաննած պիտի ըլլայի քեզ եւ պիտի խնայէի անոր կեանքը» (Թուոց 22.32,33, NKJV):

Աւանակը փրկեց Բաղասմին կեանքը: Ան մահացած պիտի ըլլար, եթէ աւանակը չդառնար Տիրոջ առջեւէն: Թերեւս մտածէք, որ Բաղաս-

մը ըսաւ Մովսէսի եւ Մադիամի առաջնորդներուն. «Վե՛րջ, ես կ'երթամ: Ըսե՛ք ձեր թագաւորին՝ թող իր դրամը իրեն մնայ»: Բայց ան ուրիշ բան ըսաւ: Փոխարէնը՝ Բաղասանը խոստովանեցաւ Տիրոջը.

«Ես մեղանշած եմ, որովհետեւ չէի գիտեր, որ Դուն կեցար ճանապարհին՝ իմ դէմ: Եւ ուրեմն, եթէ ասիկա հաճելի չէ Քեզի, ես ետ պիտի դառնամ» (Թուոց 22.34, NKJV):

Բաղասանը ընդունեց իր մեղքը, սակայն աւելցուց. «Եթէ ասիկա հաճելի չէ Քեզի»:

Բաղասան, իսկապէ՞ս: Ուրիշ ի՞նչ պէտք է քեզի: Թէեւ Ինքը՝ Տէրը եկաւ եւ խիստ տպաւորիչ կերպով կեցաւ անոր առջեւ, Բաղասանը տակաւին կը փորձէր ստանալ իր ուզածը: Ան այնքան կը փափաքէր թագաւորին առաջարկած դրամը եւ պատիւը, որ կ'անտեսէր Աստուածային խրատը: Իր կռապաշտութեան պատճառով ան այլեւս չէր զգար, թէ ինչ կար Աստուծոյ սրտին մէջ:

Ահա թէ ինչ կը կատարուի, երբ մեր ցանկութիւնները աւելի ուժգին են, քան Աստուծոյ հնազանդելու ձգտումը, երբ մեզ կը թուայ, թէ Անոր պատուիրանները կը սահմանափակեն մեզ: Մեղքի զօրութիւնը կ'աւելնայ խաբէութեան միջոցով: Մարդը կը դադրի տեսնել այն, ինչ որ ակնյայտօրէն հակառակ է Աստուծոյ կամքին: Հնազանդ մարդոց համար ամէն ինչ պարզ է. այնուամենայնիւ, կռապաշտութեան ազդեցութեան ենթարկուելու պարագային, նոյնիսկ անոնք շարունակ կը փորձեն ստանալ Աստուծոյ հաւանութիւնը իրենց սաստիկ ցանկութիւններու համար:

Իմ ձախողումները

Երբ ես երեսունը անց էի, Աստուած յստակ ցոյց տուաւ Լիզային եւ ինծի, որ Անոր կամքը չէր, որ մենք պայմանագիր ստորագրէինք յայտնի հրատարակչական ընկերութեան հետ: Ես մերժեցի, երբ այդ ընկերութեան նոր նախագիծերով զբաղող խմբագիրը առաջին անգամ դիմեց ինծի, բայց ոչ այնպէս, ինչպէս Բաղասանը, երբ ան առաջին անգամ հանդիպեցաւ Բաղակի առաջնորդներուն:

Այդ խմբագիրը կը զանգահարէր ինծի գրեթէ ամէն օր: Ան կ'ըսէր, որ իմ ուղերձը կարելոր էր Քրիստոսի մարմինին համար, եւ կը պատմէր, թէ ինչպէս յարաբերականօրէն անյայտ հեղինակները յայտնի դարձան՝ հրատարակելով իրենց գիրքերը այդ հրատարակչութեան մէջ: Ես կուլ

տուհի անոր շողոքորթութեան կարթի կեռիկը, կարթաթելը եւ բեռնիկը: Ես ալ հրատարակած էի մինչեւ այդ գրուած իմ երկու գիրքերը, եւ ատոնք հասած էին շատ քիչ ընթերցողներու: Ես կ'ուզէի օգտուիլ այդ հրատարակչութեան համազգային ազդեցութենէն: Աստուած նոյնպէս կը կամենար, որ իմ ուղերձները տարածուէին, սակայն տակաւին չէր եկած Անոր կողմէն որոշուած ժամանակը, Ան չէր ուզեր սկսիլ ճիշդ այդ ուղերձէն եւ չէր պատրաստուած օգտագործելու այդ հրատարակչութիւնը: Բացի այդ՝ իմ դրոյսապատճառները սխալ էին. ես կ'ուզէի ճանչցուած դառնալ, ինչ որ Աստուծոյ Խօսքը կ'անուանէ *այս կեանքի ամբարտաւանութիւնը*՝ ձգտում կարգավիճակի կամ համբաւի:

Յայտնի ընկերութեան միջոցով իմ գիրքերը հրատարակելու ցանկութիւնը այնքան ուժգին էր, որ ես անտեսեցի Տիրոջ ակնյայտ առաջնորդութիւնը, կնոջս խորհուրդները եւ այն բազմաթիւ խնդիրները, որոնք այդ ընթացքին յառաջացան մեր կեանքին մէջ: Սուրբ Հոգիին ներքին առաջնորդութիւնը՝ Ձինք զգուշացնող ծայնը, մարած էր, եւ փոխարինուած ուժգնացող ցանկութենէն յառաջացած խաբէութեամբ:

Այդ հրատարակչութիւնը կը գտնուէր այլ նահանգի մէջ: Մենք որոշեցինք, որ Լիզան պիտի ճամբորդէ եւ պայմանագիր պիտի ստորագրէ մեր ծառայութեան կողմէն, քանի որ ես չէի կրնար երթալ՝ իմ զբաղուածութեան պատճառով: Առաւօտեան, երբ ան պիտի մեկնէր, մեր որդիներէն մէկը այնպէս փսխեց, որ աղտոտեց առաջինէն մինչեւ երկրորդ յարկի աստիճանները: Մինչ մենք կը մաքրէինք անոր փսխումը, կինս սրտնեղած ըսաւ.

- «Ճո՛ւն, չե՞ս հասկնար, որ Աստուած չ'ուզեր, որ ընենք ատիկա»:

Ես համարձակ ընդդիմացայ.

- Ո՛չ, թշնամին կը փորձէ հիասթափեցնել եւ կեցնել մեզ:

Եթէ միակ խնդիրը ատիկա ըլլար, թերեւս ես ճիշդ կ'ըլլայի: Մեզի հետ բազմաթիւ չարաբաստիկ անախորժութիւններ տեղի կ'ունենային, սակայն չէի նկատեր այդ ամէնը. ես խաբուած էի իմ մեղքի զօրութեամբ:

Այդ օրը Լիզան ճամբորդեց եւ ստորագրեց պայմանագիրը: Յաջորդ երեք ամիսներու ընթացքին քառսը ներխուժեց իմ կեանք: Խաղաղութիւնը հեռացաւ ինձմէ. սկսաւ պայքարը: Երեք ամիս շարունակ ես հիւանդ էի: Կը վարակուէի տարբեր վիրուսներով, մրսածութիւնն ու հիւանդութիւնները կը կրկնուէին: Մեր յարաբերութիւնները այդ հրատարակչութեան հետ պարզապէս սարսափելի էին. մենք չէինք կրնար համաձայնիլ որեւէ բանի վերաբերեալ: Բացի այդ՝ մեր ծառայութիւնը հազարաւոր տոլարներու կորուստ ունեցաւ:

Ես կը տարբերէի Բաղասամէն մէկ բանով. ի վերջոյ, հասկցայ, որ իմ

ուժգին ցանկութիւնը կուրցուցած էր զիս, եւ ես չէի տեսներ Աստուծոյ կամքը: Ես կը գտնուէի Աստուծոյ դատաստանի (խրատի) ներքոյ: Յիշեցէ՛ք Պողոսին խօսքերը. «Ասոր համար ձեր մէջ շատ հիւանդներ ու ցաւագարներ կան, եւ շատեր ալ կը ննջեն: Վասնզի եթէ ինքզինքնիս դատելու ըլլայինք, պիտի չդատապարտուէինք, իսկ երբ կը դատուինք, Տիրոջմէն կը խրատուինք, որպէսզի աշխարհի հետ չդատապարտուինք» (Ա. Կորնթացիս 11.30-32): Ես կրեցի բազմաթիւ անտեղի դժուարութիւններ, մինչեւ որ տեսայ այն կուռքը, որ ստեղծած էի: Ես ապաշխարեցի իմ յամառութենէն, եւ գրեթէ անմիջապէս ամէն ինչ փոխուեցաւ: Կարճ ժամանակ յետոյ այդ հրատարակչութիւնը տեղեկացուց ինձի, որ կ'ուզէ աւարտել մեր աշխատանքային յարաբերութիւնները:

Մօտաւորապէս մէկ տարի յետոյ յայտնի ընկերութիւն մը եւս առաջարկեց հրատարակել մէկ ուրիշ ուղերձ, որ ես գրած էի՝ վիրաւորանքէն ազատ ըլլալու մասին: Աստուած խօսեցաւ հետս. «Նախորդ հրատարակիչը քու գաղափարն էր. այս հրատարակիչը՝ Իմն է»: Իմ դրդապատճառները նոյնպէս փոխուած էին այն խրատին շնորհիւ, որ ստացած էի մէկ տարի առաջ: Այժմ ես կ'ուզէի հնազանդիլ Աստուծոյ, որպէսզի մարդիկ իրականութեան մէջ ազատագրուէին: Աստուած կը ցանկար, որ հրատարակուէր ճիշդ այդ ուղերձը, եւ այժմ այդ գիրքը՝ *«Սատանայի խայծը»*, արդէն վաճառուած է շուրջ երկու միլիոն օրինակով:

Ես կ'ուզեմ ըսել, որ սորվեցայ իմ դասը եւ երբեք չեմ կրկնած այդ յիմարութիւնը: Սակայն, երբ քառասունը անց էի, եւս մէկ անգամ անտեսեցի Աստուծոյ յստակ յայտնուած կամքը, ինչպէս նաեւ՝ իմ կնոջ եւ մեր ծառայութեան խորհուրդի անդամներէն մէկուն համոզիչ խորհուրդը: Այդ անգամ խաբէութիւնը աւելի ուժգին էր, եւ խրատը, որը բաղկացած էր նեղութիւններէն, դժուարութիւններէն եւ տառապանքներէն, աւելի խիստ էր: Ատիկա տեսեց գրեթէ տասնութ ամիս: Եւս մէկ անգամ ես տեսայ այն կուռքը, որ ստեղծած էի իմ ներսը, եւ ապաշխարեցի, սակայն այդ ամէնը տեղի ունեցաւ շատ ծանր գինով:

Ես բոլորովին համոզուած եմ՝ եթէ Բաղասմը ընդունէր այն, ինչ որ կար Աստուծոյ սրտին մէջ, անոր կեանքը յետագային կը բարելաուէր: Այնուամենայնիւ, ան այդպէս ալ չթողեց իր կռապաշտութիւնը եւ մահացաւ՝ ենթարկուելով Աստուծոյ դատաստանին (տե՛ս Յեսու 13.22):

Սիրելի՛ ընթերցող, չեմ ուզեր, որ դուք սորվիք նեղութիւններու միջոցով, ինչպէս ես: Յոյսով եմ՝ այս խիստ ուղերձը պիտի դրդէ ձեզի խուսափելու այնպիսի անտեղի դժուարութիւններէն եւ տառապանքներէն, ինչպիսիք ես կրեցի:

գործնական քայլ

Եթե մեր ցանկութիւնները չհնազանդեցնենք Աստուծոյ, ատոնք պիտի հեռացնեն մեզ Անորմէ, եւ թերեւս Աստուած նոյնիսկ ձգէ մեզ մեր ցանկութիւններուն: Աստուածաշունչին մէջ յաճախ կը տեսնենք, որ Աստուած յստակ կը յայտնէր Իր կամքը, սակայն երբ Անոր ժողովուրդը ատոր հակառակ ինչ որ բան կը ցանկար, Ան կու տար անոնց ուզածը, նոյնիսկ այն պարագային, երբ ատիկա նեղութիւն կը պատճառէր անոնց:

Այսօր Աստուած նոյն կերպով կը վարուի մեզի հետ: Ան պիտի տայ մեզի այն, ինչ որ մենք կ'ուզենք, նոյնիսկ եթէ մեր ուզածը հակառակ է Անոր կամքին: Այնուամենայնիւ, այդպէս մենք չենք ստանար այն օրհնութիւնը, որուն կը ձգտէինք. մենք պիտի ստանանք խրատ, որը ցատտ եւ տհաճ պիտի ըլլայ:

Կարիք չկայ, որ ատիկա տեղի ունենայ մեր կեանքին մէջ: Փոխարէնը՝ մենք կրնանք հաւատալ, որ Աստուած բարիք պիտի ընէ մեզի: Յաճախ Ան արդէն որոշած է, թէ ինչ ճանապարհով պիտի տայ մեզի ճիշդ այն, ինչ որ մենք կը ցանկանք, բայց՝ արդար կերպով: Եթէ մենք հետեւինք Անոր, Ան պիտի առաջնորդէ մեզ օրհնուած ճանապարհով, բայց մեր ցանկալի արդիւնքը պիտի գայ Անոր որոշած ժամանակին: Այսօր յանձնեցէ՛ք ձեր ընթացքը Տիրոջ: Խնդրեցէ՛ք Անորմէ առաջնորդել ձեզ՝ ըստ Իր ցանկութիւններուն, այլ ոչ թէ՝ ձեր: Հարցուցէ՛ք Անոր, թէ ի՞նչ քայլեր կրնաք ընել այսօր, որպէսզի ատելի սերտօրէն հետեւիք Անոր: Գրի՛ առէք այդ քայլերը եւ կատարեցէ՛ք:

ՄՈՒՈՐՈՒԱԾ

Մեր հիմնական թեմային անդրադառնալու համար, ամփոփենք կռապաշտութիւնը: Կռապաշտութիւնը այն է, երբ՝ թէ՛ հաւատացեալները, թէ՛ անհաւատները, կ'անտեսեն Աստուծոյ ուզածը, որպէսզի բաւարարեն սեփական կիրքերն ու ցանկութիւնները, որոնք հակառակ են Անոր կամքին: Ահա թէ ինչու Պօղոսը կը գրէ.

«Քանզի գիտէք, թէ ամէն պոռնիկ կամ պիղծ *կամ ազահ, որ կռապաշտ է*, Քրիստոսին ու Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի: Չըլլա՛յ, որ մէկը ձեզ խաբէ փուռ խօսքերով, վասնզի այս բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ: Ուստի անոնց հաղորդ մի՛ ըլլաք» (Եփեսացիս 5.5-7):

Աստուծոյ զայրոյթը պիտի գայ անհաւատներուն վրայ, բայց Աստուած նաեւ կը խրատէ այն հաւատացեալը, որ ներգրաւուած է կռապաշտութեան (ազահութեան) մէջ, որպէսզի վերադարձնէ զինք Իր քով: Այնուամենայնիւ, եթէ հաւատացեալը յամառօրէն շարունակէ անհնազանդմնալ, ինչպէս Բաղասամը, ատիկա կրնայ ծանր հետեւանքներ ունենալ, մինչեւ իսկ անոր մահը: Պօղոսը կը զգուշացնէ հաւատացեալները. «Վասնզի եթէ մարմնաւորապէս ապրելու ըլլաք, պիտի մեռնիք» (Հռովմայեցիս 8.13): Յակոբոս առաքեալը կը զգուշացնէ մեզ. «Անկէ յետոյ ցանկութիւնը յղանալով՝ մեղք կը ծնանի, եւ մեղքը, որ կատարուի, մահ կը ծնանի: Մի՛ խաբուիք, իմ սիրելի՛ եղբայրներս» (Յակոբոս 1.15,16):

Կռապաշտութիւնը նման է դանդաղօրէն սպաննող թոյնի: Այն հո-

գետոր քրիստոնաքարն է: Մենք չենք կրնար թոյլ տալ մեզի սիրախաղեր ընելու ատոր հետ: Կռապաշտութեան ոստայնը ե՛ւ աննկատ է, ե՛ւ ամուր: մենք որոշ չափով տեսանք ատոր ազդեցութիւնը՝ ուսումնասիրելով Բաղասամի կեանքը, բայց եկէք մէկ քայլ առջեւ երթանք: Ուշադիր կարդացէ՛ք Աստուծոյ զգուշացումը Իսրայէլի առաջնորդներուն.

«Տիրոջ Խօսքը եղաւ ինձի՝ ըսելով. «Մարդո՛ւ որդի, այս մարդիկ *կանգնեցուցած են իրենց կուռքերը իրենց սրտերուն մէջ* եւ դրած են իրենց առջեւ այն, ինչ որ կը դրդէ սայթաքիլ անօրինութեան մէջ: Մի՞թէ Ես պէտք է թոյլ տամ, որ անոնք հարցնեն Ինձի»» (Եզեկիէլ 14.2,3, NKJV):

Եւս մէկ անգամ տեսնենք, որ կռապաշտութիւնը չի սահմանափակուիր արձաններով, զոհասեղաններով եւ տաճարներով: Աստուած նոյնիսկ կասկածի նշոյլ չի ձգեր այս մասին՝ պնդելով, որ անոնք «կանգնեցուցած են իրենց կուռքերը իրենց սրտերուն մէջ»: Ոչ թէ արձանիկներ՝ ծառերու տակ, քաղաքներու կեդրոնները կամ տաճարներուն մէջ: Ո՛չ, այդ կուռքերը կանգնեցուցած էին անոնց սրտերուն մէջ: Անոնց սրտերուն մէջ կային ցանկութիւններ, որոնք հակառակ էին Աստուծոյ կամքին: Աստուած կը շարունակէ.

«Ուստի, խօսի՛ր անոնց հետ եւ ըսէ անոնց՝ այսպէս կ'ըսէ Տէր Աստուած. «Իւրաքանչիւրը Իսրայէլի տունէն, որ կուռքեր կը կանգնեցնէ իր սրտին մէջ եւ իր առջեւ կը դնէ այն, ինչ որ կը դրդէ զինք սայթաքելու անօրինութեան մէջ, եւ կու գայ մարգարէին քով, Ես՝ Տէրս, պիտի պատասխանեմ այդ եկողին՝ անոր կուռքերու շատութեան համեմատ»» (Եզեկիէլ 14.4, NKJV):

Երբ կռապաշտութեան մէջ գտնուող մարդը (որ կը յարի Աստուծոյ կամքին հակառակ ցանկութիւններու) կու գայ ինչ որ ծառայողի մը քով՝ խնդրելով առաջնորդութիւն, խորհուրդ կամ որեւէ տեսակի Աստուածաշնչեան ուսուցում, թերեւս ան պատասխան ստանայ, բայց այն չ'ըլլար ըստ Աստուծոյ կամքին: Այդ պատասխանը նման պիտի ըլլայ Բաղասամին ստացած պատասխանին: «Նոր Ամերիկեան Սթանտարտ Աստուածաշունչը» հետեւեալ կերպով թարգմանած է այս խօսքը Եզեկիէլի գիրքէն. «Ես՝ Տէրս, հարկադրուած պիտի ըլլամ պատասխանելու անոր հարցին՝ հաշուի առնելով անոր կուռքերու շատութիւնը» (NASB):

Իսկ այժմ լսեցէ՛ք զգուշացումը՝ ուղղուած այն ծառայողին, որ կը

խուսավի մարդոց կռապաշտութիւնը յանդիմանել, եւ այնպէս կը խօսի անոնց հետ, ըսես ամէն ինչ լաւ է (Հին կտակարանին մէջ ծառայողները, մարգարէները եւ քահանաներն էին. այս տեսանկիւնէն, ես կը համեմատեմ զանոնք մերօրեայ ծառայողներուն հետ).

«Բայց եթէ մարգարէն կու տայ մարդուն այն պատասխանը, որ ան կը ցանկայ [ատով իսկ թոյլ տալով իրեն ըլլալ հարցնողին մեղքի (կռապաշտութեան) մասնակիցը], Ես՝ Տէրս, այնպէս պիտի ընեմ, որ այդ մարգարէն խաբուած ըլլայ իր պատասխանին մէջ» (Եզեկիէլ 14.9, AMPC):

Ես կու լայի եւ մեծ տրտմութիւն կ'ապրէի աղօթքի մէջ՝ մտորելով այն ուսմունքներուն շուրջ, որոնք կը քարոզեն ժամանակակից ծառայութիւնները, յատկապէս՝ Արեւմուտքի մէջ: Ես կ'աղաղակէի, որ պատասխան ստանայի այն մասին, թէ որն է այսօրուան գրուող եւ քարոզուող աւետարանական ուղերձներու անզօրութեան պատճառը: Ի պատասխան, Աստուծոյ Հոգին առաջնորդեց զիս դէպի Եզեկիէլի գիրքի 13-րդ եւ 14-րդ գլուխները: Այս գլուխները ցոյց կու տան, թէ ինչ կը գտնուի այսօրուան անլուրջ ուսմունքներուն ետեւը, որոնք չեն յանդիմաներ շարունակական մեղքը. խօսքը *կռապաշտութեան* մասին է: Եթէ ծառայողը ոչ լիարժէք Աւետարանը կը քարոզէ, քանի որ չ'ուզեր կորսնցնել իր հետեւորդները կամ իր համբաւը, ատիկա ոչ այլ ինչ է, քան քողարկուած ազահութիւն: Ահա թէ ինչու այն ժամանակ, երբ կեղծաւորութեամբ լեցուն ծառայութիւնը կ'աճէր, Երեմիան կը բացականչէր.

«Որովհետեւ անոնց ամենափոքրէն մինչեւ ամենամեծը՝ բոլորը տրուած են ազահութեան: Մարգարէները, քահանաները եւ անոնց միջեւ գտնուող իւրաքանչիւր մարդ կ'աղաւաղեն բառերը եւ կը կեղծեն ճշմարտութիւնը» (Երեմիա 6.13, առաջին նախադասութիւնը՝ NKJV, երկրորդ նախադասութիւնը՝ MSG):

Ես սկսայ նկատել ակնյայտ հոգեւոր անզօրութեան կամ քրիպտոնաքարի աւելի խոր ազդեցութիւնը գրեթէ ամբողջ ժամանակակից եկեղեցւոյ մէջ: Ես տեսայ դժգոհութիւն շատերու կեանքին մէջ, որոնք կը դաւանին, որ հաւատացեալ են, եւ այդպիսի սրտի վիճակէն կը յառաջանայ պահանջք այն ամէնուն հանդէպ, ինչ որ «չկայ իրենց կեանքին մէջ» (հիմնականին խօսքը ոչ թէ հանապազօրեայ կարիքներու մասին է, այլ՝ ցանկութիւններու եւ ձգտումներու):

Մոլորուած առաջնորդները, որոնք նոյնպէս շեղած են ցանկասիրութեամբ, քարոզած են այնպիսի հատուածներ Աստուծոյ Խօսքէն, որոնք, կը թուայ, կ'անտեսեն մեղաւոր կենսառճը եւ հաւանութիւն կու տան ատոր: Միեւնոյն ժամանակ, անոնք յարմարաւէտ կերպով կը շրջանցեն այն սուրբգրային հատուածները, որոնք կը յանդիմանեն անբարոյ վարքը: Այս կռապաշտութեան պատճառով, թէ՛ ծառայողները, թէ՛ հաւատացեալները կը լսեն այնպիսի ուղերձներ եւ խորհուրդներ, որոնք անմիջապէս ուղղուած են իրենց ձգտումներուն եւ կիրքերուն: Ատոնք աւելի ուժգին կը դարձնեն իրենց ցանկութիւնները կամ կը զօրացնեն իրենց կուռքերը:

Նոր կտակարանին մէջ Պօղոսը, Երեմիային եւ Եգեկիէլին պէս կը մարգարէանայ ապագայի մասին.

«Որովհետեւ ժամանակ մը կու գայ, երբ մարդիկ այլեւս չեն լսեր առողջ եւ ողջամիտ ուսմունքը: Անոնք պիտի հետեւին *իրենց ցանկութիւններուն* եւ պիտի փնտռեն այնպիսի ուսուցիչներ, որոնք պիտի ըսեն անոնց այն, ինչ որ իրենց ցանկասիրութեան վարժ ականջները կ'ուզեն լսել» (Բ. Տիմոթէոս 4.3, NLT):

Բարի գալուստ այդ ժամանակաշրջան: Այսօր, իրենց ուզածը լսելու համար, մարդիկ ընդամէնը պէտք է գտնեն այնպիսի «ծառայողներ», որոնք նոյնպէս տարուած են ցանկասիրութեամբ:

Այնուամենայնիւ, Աստուածապաշտ եւ Աստուածավախ առաջնորդը ոչ մէկ պարագայի կը խոտորի Աստուծոյ Խօսքի խորհուրդէն: Ան հաւատարիմ է Աստուածաշունչի ամբողջ ուղերձին, ոչ թէ՛ առանձին հատուածներու: Ան չի վախնար շտկելէն եւ յանդիմանելէն, ինչպէս նաեւ՝ խրախուսելէն:

Այն ծառայողները, որոնց մասին կը խօսի Պօղոսը, մտահոգուած են իրենց համբաւով, արտաքինով, իրենց ծառայութեան աճով եւ ծրագրերով: Անոնց կարելի է համոզել մեծ նպատակներով կամ վարձատրութեամբ, եւ անոնք պիտի քարոզեն ու պիտի սորվեցնեն՝ համաձայն իրենց ունկնդիրներու ցանկութիւններուն, Աստուծոյ Խօսքը ազդարարելու փոխարէն, անկախ այն բանէն՝ այն պիտի ընդունուի՞, թէ՞ ոչ:

Միայն մէկ ծառայող ազդարարեց ճշմարտութիւնը

Յուդայի թագաւոր Յովսափատը դաշինք կնքեց Իսրայէլի Աքաբ թագաւորին հետ՝ իրենց երեխաներու ամուսնութեան միջոցով: Ասիկա ճիշդ քայլ չէր Յովսափատի կողմէն, քանի որ ան Աստուածավախ մարդ էր, իսկ Աքաբը կռապաշտ էր: Որոշ ժամանակ յետոյ Յովսափատը գնաց Սամարիա՝ Իսրայէլի թագաւորին տեսակցելու:

Աքաբը խնդրեց Յովսափատէն ժողովել Յուդան եւ Իսրայէլի հետ պատերազմի երթալ Ասորեստանի դէմ: Յովսափատը պատասխանեց. «Այո՛, անշո՛ւշտ: Դուսն եւ ես եղբայրներ ենք, եւ իմ զօրքերը քու հրամանատարութեան տակ են: Մենք անպայման կը գիտնանք քեզ կռուի մէջ»: Սակայն Յովսափատը աւելցուց. «Բայց, նախ, եկո՛ւր պարզենք, թէ Տէրը ինչ կ'ըսէ» (տե՛ս Բ. Մնաց. 18):

Աքաբ թագաւորը ժողովեց Իսրայէլի չորս հարիւր ամենաակնառու ծառայողներն ու հոգեւոր առաջնորդները: Այդ մարդիկ Բահաղի, Աստարովթի, Քամովսի կամ այլ կեղծ աստուածներու ծառայողները չէին, այլ՝ Տէր Աստուծոյ (անոնք կը խօսէին *Եահուէի* անունով): Աքաբը հարցուց անոնց՝ արդե՞օք ան պէտք է պատերազմի երթար, թէ՞ ետ մնար այդ մտադրութենէն:

Բոլոր ծառայողները միաձայն ըսին. «Այո՛, գնա՛՛ եւ մի՛ վարանիր: Աստուած յաղթանակ պիտի տայ թագաւորին» (Բ. Մնացորդաց 18.5, NLT): Այդ առաջնորդներուն սորվեցուցած էին խօսիլ միայն դրական եւ խրախուսող ուղերձներ իրենց ունկնդիրներուն, յատկապէս՝ ազդեցիկ մարդոց: Թէեւ անոնք Եահուէի ծառայողներ էին, սակայն տրուած էին ազահութեան. անոնք կռապաշտ էին:

Թէեւ այդ ծառայողները բարձր հեղինակութիւն ունէին Իսրայէլի մէջ, եւ անոնց ուղերձները տպաւորիչ էին, Յովսափատը գոհ չմնաց անոնց խորհուրդէն: Շնորհիւ Աստուծոյ երկիւղին՝ ան կը տարբերէր ճշմարտութիւնը: Ան հարցուց. «Հոս չկա՞յ Տիրոջ մէկ ուրիշ մարգարէ, որ մենք հարցնենք Անոր» (խօսք 6, NKJV): Ան գիտէր, որ խօսողները *Եահուէի* մարգարէներն էին, բայց ինչ որ բան սխալ էր:

Աքաբը պատասխանեց. «Կայ եւս մարդ մը, որ կրնայ հարցնել Տիրոջ խորհուրդը մեզի համար, բայց ես կ'ատեն զինք: Ան երբեք ոչինչ կը մարգարէանայ ինձի համար՝ չարիքէն բացի: Անոր անունը Միքիա է» (խօսք 7, NLT): Կռապաշտ մարդը կամ շողոքորթութեան ընտելացած հաւատացեալներու համայնքը յաճախ բացասական եւ վիատեցնող կը համարէ Աւետարանի ճշմարիտ ծառայողը:

Միքիան կը տարբերէր միւսներէն, քանի որ ան չէր ուզեր բազմաթիւ

հետետորոններ ունենալ կամ որեւէ բան ստանալ Աքաբէն: Ան կը վախնար Տիրոջմէն աւելի, քան մարդոցմէ, եւ կը ձգտէր Աստուծոյ հաւանութեան աւելի, քան յաջողութեան: Ան գիտէր, որ իր աղբիւրը *Եսիուէն* էր, եւ որ աւելի լաւ է՝ ինքը հաճեցնէր Ջինք, քան թագաւորի մը, որ կը գտնուէր քրիպտոնաքարի ազդեցութեան ներքոյ: Այդ դիրքորոշման շնորհիւ ան զերծ եւ ազատ մնացած էր այն խաբէութենէն, որուն ներքոյ կը գտնուէին միւս ծառայողները:

Աքաբը յանձնարարեց բերել Միքիան: Մինչ անոնք կը սպասէին Աստուծոյ ճշմարիտ ծառայողին, միւս ծառայողները կը շարունակէին մարգարէանալ երկու թագաւորներուն առջեւ: Անոնցմէ մէկը՝ Սեդեկիա անունով, որ Բենիամինի ցեղէն էր, երկաթէ եղջիրներ պատրաստած էր իրեն համար եւ կ'ըսէր. «Այսպէս կ'ըսէ Տէրը (*Եսիուէր*). «Ասոնցմով պիտի հրէս ասորիները, մինչեւ որ զանոնք բնաջինջ ընես» (խօսք 10):

Անկէ յետոյ բոլոր ծառայողները միասնաբար ըսին թագաւորին. «Գնա՛ Ռամովթ-Գաղաադ եւ պիտի յաջողիս, եւ Տէրը (*Եսիուէր*) պիտի տայ [յաղթանակ] թագաւորին ձեռքը» (խօսք 11): Առաջնորդներու բազմութեան մէջ ապահովութիւն կայ, այնպէս չէ՞: Այն փաստը, որ բոլոր ուղերձները միանման էին եւ կը հաստատէին մէկը միւսին, իրականութեան մէջ խրախուսելի էր եւ ապահովութիւն կը ներշնչէր: Այո՛, ատոնք կը հաստատէին Աքաբի սրտի ցանկութիւնները եւ անմիջապէս ուղղուած էին անոր շահամոլութեան կամ կռապաշտութեան:

Մինչ բոլոր ծառայողները միաձայն խորհուրդ կու տային թագաւորին, սուրհանդակը գտաւ Միքիան եւ ըսաւ. «Ահա բոլոր մարգարէները մէկ բերնով թագաւորին համար նպաստաւոր (բարի) խօսեցան. թող քու խօսքդ ալ անոնց մէկուն խօսքին պէս ըլլայ» (Բ. Մնացորդաց 18.12):

Ես լսած եմ նման խօսքեր, երբ զիս հրաւիրած են քանի մը յայտնի եկեղեցիներ. «Ճո՛ն, խրախուսէ՛ ժողովուրդը: Քարոզէ դրական ուղերձներ: Կառուցէ՛ անոնց անձը եւ մխիթարէ՛ զանոնք: Մենք կ'աւարտենք հաւաքոյթը շիթմիկ երգով, այնպէս որ, կրնա՞ս բարձր նոթայով աւարտել քու ուղերձը: Մենք կ'ուզենք, որ անոնք տուն երթան դրական զգացողութեամբ»: Ըսես թէ պարզ սուրհանդակը իրաւունք ունի փոխելու Թագաւորին ուղերձը: Եթէ մենք փոխենք այն, այլեւս Աստուծոյ խօսքերը ազդարարող դէսպաններ չենք ըլլար, այլ՝ պարզ մարդիկ, որոնք կ'օգտագործեն Նոր կտակարանին մէջ գտնուող Անոր դրական խօսքերը՝ մեր ցանկալի արդիւնքը ստանալու համար:

Միքիայի պատասխանը խիստ էր, քանի որ անոր անկարելի էր շահիլ կեղծաւորութեամբ. «Տէրը կենդանի է, որ իմ Աստուածս ինձի ինչ որ ըսէ, այն պիտի ըսեմ» (խօսք 13):

Հայր, ուղարկէ՛ մեզ առաջնորդներ, որոնք այսօր կը վարուին նոյն կերպով:

Երբ Միքիան կանգնեցաւ Աքաբի առջեւ, անոր տրուեցաւ միեւնոյն հարցումը, որուն արդէն պատասխանած էին բազմաթիւ այլ ծառայողներ: «Միքիան հեզնանքով պատասխանեց. «Այո՛, գնա եւ պիտի յաղթես, որովհետեւ դուն պարտութեան պիտի մատնես զանոնք» (խօսք 14, NLT):

Միքիային ծաղրը բարկացուց Աքաբը: Անկէ յետոյ Միքիան ըսաւ Աստուծոյ խօսքը այդ իրավիճակին համար. «Բոլոր Իսրայէլը հովիւ չունեցող ոչխարներու պէս լեռներու վրայ ցրուած տեսայ, եւ Տէրը ըսաւ. «Ասոնք տէր չունին. ամէն մարդ խաղաղութեամբ թող իր տունը դառնայ»» (խօսք 16):

Աքաբը նայեցաւ Յովսափատին՝ ըսելով. «Քեզի չըսի՞ թէ անիկա ինծի համար աղէկ մարգարէութիւն չ'ըներ, հապա՛ գէշ» (խօսք 17):

Միքիան շարունակեց՝ ըսելով Աքաբին, թէ իրականութեան մէջ ինչ տեղի կ'ունենար, եւ թէ ինչ պիտի կատարուէր.

«Ուրեմն Տիրոջը խօսքը մտիկ ըրէ՛ք. Տէրը Իր աթոռին վրայ նստած տեսայ, ու երկնքի բոլոր զօրքերը Անոր աջ կողմը ու ձախ կողմը կայներ էին: Եւ Տէրը ըսաւ. «Իսրայէլի Աքաբ թագաւորը ո՞վ կրնայ խաբել, որպէսզի Ռամովթ-Գաղաադ ելլէ ու կորսուի»: Մէկը այսպէս ու միւսը այնպէս ըսաւ: Ու հոգի մը ելաւ եւ Տէրոջը առջեւ կայնեցաւ ու ըսաւ. «Զանիկա ես կը խաբեմ»: Եւ Տէրը անոր ըսաւ. «Ի՞նչ միջոցով»: Անիկա ըսաւ. «Ելլեմ ու անոր բոլոր մարգարէներուն բերանը սուտ հոգի կ'ըլլամ»: Տէրը անոր ըսաւ. «Դուն պիտի խաբես ու պիտի յաջողիս: Ելի՛ր ու այնպէս ըրէ՛»: Ահա Տէրը այս քու մարգարէներուդ բերանը սուտ հոգի դրեր է. Տէրը քեզի համար չարիք խօսեցաւ» (խօսքեր 18-22):

Աստուած պատասխանեց Աքաբին՝ ըստ անոր սրտի կռապաշտութեան (ազահութեան): Այս հատուածը կը նկարագրէ այն ճշմարտութիւնը, որուն մասին կը գրէ Եզեկիէլը: Աստուած խօսեցաւ համաձայն Բաղաամի սրտի կռապաշտութեան, ինչպէս մենք կարդացինք նախորդ գլուխին մէջ, եւ համաձայն Աքաբի սրտի կռապաշտութեան՝ այս գլուխին մէջ: Ատոր հետ մէկտեղ, Ան վարուեցաւ նոյն կերպով այն մարդոց հետ, որոնք կը փոխանցէին այդ ուղերձը:

Աքաբը ընդունեց այն ուղերձը, որ կ'ուզէր լսել, սակայն մերժեց Աստուծոյ ճշմարիտ խօսքերը, որոնք կը պաշտպանէին եւ կը փրկէին զինք: Աքաբը կռիւի գնաց: Թէեւ ան որոշեց ապահովել իր անվտանգութիւնը եւ

ծպտուած գնաց, որպէսզի ասորիները չճանչնային զինք, անոր պատահական նետ մը դպաւ, եւ ան մահացաւ մինչեւ օրուան աւարտը: Կարելի է պահուըտիլ մարդէն, սակայն անհնար է պահուըտիլ Աստուծոյ:

Իսկ ի՞նչ կը կատարուի այսօր: Մենք կ'ուզե՞նք ստանալ Աստուծոյ խոստացած պաշտպանութիւնը, մատակարարումը եւ փրկութիւնը, թէ՞ կ'ուզենք, որ մեզ շողոքորթեն: Մենք կ'ուզե՞նք լսել «խաղաղութիւն», այն պարագային, երբ մեր խաբէութիւնը կրնայ մեծ խնդիրներ յառաջացնել մեր կեանքին մէջ:

Մտածենք այս մասին Աստուածաշունչի լոյսի ներքոյ: Ի՞նչն է գերադասելի՝ տեսական պաշտպանութիւնը՝ Աստուծոյ Խօսքի ամբողջական խորհուրդին հնազանդելու պարագային, թէ՞ կարճատեւ մակերեսային օրհնութիւնը՝ մօտալուտ խրատի կամ դատաստանի հետ:

գործնական քայլ

Անոնք, որ կը դաւանին, թէ քրիստոնեայ են, կ'ուզեն լսել միայն դրական քարոզներ: Ազահութեան եւ մարդոցմէ երկիւղ ունենալու պատճառով, շատ ծառայողներ պատրաստ են քարոզելու այնպիսի ուղերձներ, որոնք միայն կը խրախուսեն իրենց հետեւորդները: Անոնց բոլոր ուղերձները հրաշալի կը թուան, սակայն թերի են: Ի վերջոյ, ատոնք անցանկալի արդիւնք պիտի ունենան թէ՛ այդ ուսուցիչներուն, թէ՛ անոնց հետեւորդներուն համար:

Մենք պէտք է լսենք ճշմարտութիւնը, նոյնիսկ եթէ սկիզբը այն ցաւ պատճառէ մեզի: Որքան ալ ցաւոտ ըլլայ ճշմարտութիւնը լսելը, ատիկա անհամեմատ աւելի լաւ է այն նեղութենէն, որուն մէջ պիտի յայտնուինք, եթէ ապրինք խաբէութեան մէջ:

Դուք կրնաք ճշմարտութեան ձգտող մարդ ըլլալ:

Խնդրեցէ՛ք Աստուծոյ յայտնել Իր ճշմարտութիւնը ձեր կեանքի մասին. խնդրեցէ՛ք Անորմէ յայտնել այն բնագաւառները, որոնց մէջ դուք անգիտակցաբար խաբուած էք: Գրի՛ առէք այն ճշմարտութիւնները, որոնք Ան կը յայտնէ ձեզի, որպէսզի կարենաք մտորել ատոնց շուրջ յաջորդ օրերու կամ շաբաթներու ընթացքին: Ատոնցմէ յետոյ, խնդրեցէ՛ք Աստուծոյ զօրացնել ձեզ, որ կարենաք ըսել ճշմարտութիւնը, նոյնիսկ եթէ այն ընդունուած կամ «քաղաքականապէս ճիշդ» չէ: Կարիք չկայ, որ կռիւի բռնուիք մարդոց հետ, բայց դուք կրնաք ըսել Միքիային պէս. «Կենդանի է Տէրը, որ իմ Աստուած ինչ որ ինձի ըսէ, այն պիտի խօսիմ»:

ԿԵՂԾՈՒԱԾ ՅԻՍՈՒՄ

Թերեւս մտածէք. «Կեղծուած Յիսուս... ի՞նչ կը նշանակէ ասիկա»: Այս գլուխը կը նկարագրէ այն աննկատ երեւոյթը, որ կռապաշտութեան կը տանի հաւատացեալները: Մենք պիտի բացայայտենք առեղծուածը այն մասին, թէ ինչու շատերը ժամանակակից քրիստոնէութեան մէջ դիւրաբար զոհ կը դառնան հոգեւոր քրիպտոնաքարին, որ կը խլէ մեր ուժերը՝ որպէս եկեղեցի եւ որպէս անհատներ:

Քովս բերի

Ինչպէս արդէն նշեցի, Իսրայէլի ելքը Եգիպտոսէն կը խորհրդանշէ մեր փրկութիւնը՝ մեր ելքը այս աշխարհէն: Մովսէսը առաջնորդեց իսրայէլցիները դէպի Սինա լեռ, ուր ան հանդիպած էր Աստուծոյ՝ այրող մորենիին քով: Մովսէս կ'ուզէր, որ իր ժողովուրդն ալ նմանատիպ հանդիպում ունենար: Ինչո՞ւ ան պէտք է ուզէր անմիջապէս առաջնորդել զանոնք Խոստման երկիր, նախքան Խոստումը Տուողին հետ ծանօթացնելը: Գրուած է, որ Սինա հասնելուն պէս,

«Մովսէս Աստուծոյ քով ելաւ: Եւ Տէրը լեռնէն կանչեց զանիկա՝ ըսելով. «Յակոբին տանը այսպէս ըսես եւ Իսրայէլի որդիներուն իմացնես՝ դուք տեսաք՝ ինչ որ ըրի Եգիպտացիներուն, եւ ինչպէս ձեզ արծիւի թելերուն վրայ վերցուցի ու քովս բերի»» (Ելից 19.3,4):

Կարդացէ՛ք Անոր խօսքերը. «քովս բերի»: Այս պնդումը ցոյց կու

տայ, թե որն էր մեզ այս աշխարհին փրկելու Աստուծոյ դրոյապատճառը: Ան կը ձգտի ձեզի, Ան կը փափաքի հաղորդակցելու ձեզի հետ, եւ Ան կը ցանկայ հաղորդակցելու մեզի հետ, ինչպէս հայրը՝ զաւակին:

Կրնա՞ք պատկերացնել, թե որքա՛ն ոգեշնչուած էր Աստուած, երբ կը պատրաստուէր հանդիպիլ այդ ժողովուրդին, որ չորս հարիւր տարի գերութեան մէջ էր: Կը յիշեմ, երբ Լիզան յղի էր մեր չորս որդիներէն ամէն մէկով, եւ անհամբեր կը սպասէի անոնց ծնունդին: Կը սպասէի ինը երկար ամիսներ: Ես կ'ուզէի գրկել զանոնք, տեսնել, թե ինչպէս կը մեծնան, լսել անոնց ձայնը, ճանչնալ զանոնք՝ որպէս անհատ, եւ հաղորդակցիլ անոնց հետ, ինչպէս հայրը՝ զաւակին: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ ես կը փափաքէի անոնց:

Աստուծոյ վերաբերմունքը ճիշդ այդպիսին էր. միակ բացառութիւնը այն է, որ Ան ինը ամիսէն աւելի երկար սպասած էր:

Ժողովուրդը պէտք է որոշ պատրաստութիւններ տեսնէր, որպէսզի այդ հանդիպումը տեղի ունենար: Աստուած ըսաւ. «Գնա՛ ժողովուրդին եւ զանոնք սրբէ այսօր ու վաղը, եւ թող իրենց լաթերը լուան: Երրորդ օրուան համար պատրաստ ըլլան, քանզի երրորդ օրը Տէրը բոլոր ժողովուրդին աչքին առջեւ Սինա լեռան վրայ պիտի իջնէ» (Ելից 19.10,11):

Տէրը կ'ըսէր Իր ժողովուրդին. «Ես կը փափաքիմ ձեզի, բայց իրական հանդիպման համար դուք պէտք է մաքրէք Եզիպտոսի պղծութիւնը ձեր հանդերձներէն: Ես ձեր Հայրն եմ, բայց նոյնպէս սուրբ Աստուած եմ, եւ չեմ ուզեր մակերեսային յարաբերութիւններ ունենալ ձեզի հետ»:

Անկարելի է ունենալ խոր եւ իմաստալից յարաբերութիւններ եսասէր մարդոց հետ: Աստուած լիովին տուած է մեզի Իր Անձը. Ան չի հանդուրժեր, որ մենք վարուինք այս աշխարհին պէս, այսինքն՝ օգտագործենք մարդիկը, որպէսզի բաւարարենք մեր ցանկութիւնները կամ գոհացնենք մեր անձը:

Անցաւ երկու օր, եւ երրորդ օրը առաւօտեան Տէրը իջաւ Սինա լեռան վրայ՝ ժողովուրդին քով: Երբ ատիկա տեղի ունեցաւ, մարդիկ ընկրկեցան եւ սկսան դողալ սարսափէն: Անոնք ըսին Մովսէսին. «Պուն խօսէ՛ մեզի հետ, եւ մտիկ ընենք, բայց Աստուած թող չխօսի մեզի հետ, որպէսզի չմեռնինք» (Ելից 20.19):

Մովսէսը ցնցուած էր. ինչպէ՞ս անոնք կրնային հեռանալ Անորմէ, Որ փրկած էր զիրենք եւ ազատած էր ստրկութենէն: Մի՞թէ անոնք չէին ուզեր լսել իրենց Արարիչին ձայնը: Իսկ կրնա՞ք պատկերացնել Աստուծոյ հիասթափութիւնը: Ան կը փափաքէր այդ պահուն: Ան կը ցանկար ճանչնալու զանոնք այնպէս, ինչպէս Մովսէսին: Բայց անոնք մերժեցին Աստուծոյ ներկայութիւնը:

Չեմ պատկերացներ, թե ինչպես պիտի զգայի ես, եթե իմ որդիներէն մէկը ըսէր. «Հայրի՛կ, չեմ ուզեր, որ խօսիս անմիջապէս հետս: Ես միայն կ'ուզեմ լսել քու ըսածը իմ եղբայրներէն մէկուն միջոցով»: Որքա՛ն յուսահատեցնող կ'ըլլար ատիկա:

Քահանայութեան հիմնադրումը

Աստուած որոշեց քահանայութիւն հիմնադրել, քանի որ ժողովուրդը չէր ուզեր հաղորդակցիլ անմիջապէս Իրեն հետ: Քահանան այն մարդն է, որ կը խօսի Աստուծոյ հետ ժողովուրդին անունէն: Հրեաները արդէն ունէին մարգարէ, որ կը խօսէր ժողովուրդին հետ Աստուծոյ անունէն՝ Մովսէսը: Այնուամենայնիւ, Աստուած ստիպուած էր նաեւ քահանայութիւն հիմնադրել՝ որպէս ժողովուրդին հետ շարունակական հաղորդակցման տարբերակ:

Այնուհետեւ Աստուած ըսաւ. «Գնա՛, վա՛ր իջիր ու Ահարոնին հետ մէկտեղ ելի՛ր» (Ելից 19.24): Ահարոնը պիտի դառնար Անոր քահանայապետը, սակայն Աստուծոյ սկզբնական ծրագիրը այդպէս չէր: Սկիզբը Ան կ'ուզէր, որ բոլորը քահանաներ ըլլային: «Երբ ժողովուրդը հասաւ Սինա լեռ, Ան ըսաւ. «Ղուք Ինձի քահանաներու թագաւորութիւն ու սուրբ ազգ մը պիտի ըլլաք. Իսրայէլի որդիներուն ըսելիք խօսքերս ասոնք են»»: (Ելից 19.6): Ան կը կամենար, որ իւրաքանչիւրը Իսրայէլի մէջ կարենար հաղորդակցիլ Իրեն հետ:

Աստուած պատուիրեց Մովսէսին լեռ բարձրանալ Ահարոնին հետ, սակայն մենք չենք տեսներ որեւէ յիշատակում այն մասին, որ Ահարոնը հետեւեցաւ այդ կանչին: Ինչ-ինչ պատճառներով, ան կրկին վերադարձաւ բանակատեղին՝ ժողովուրդին քով, իսկ Մովսէսը մնաց լեռան վրայ քառասուն օր ու գիշեր: Ինչո՞ւ Ահարոնը չգնաց: Մի՞թէ ան աւելի մեծ մխիթարութիւն կը գտնէր մարդոց ներկայութեան մէջ, քան՝ Աստուծոյ: Մի՞թէ ան կը վախճար Աստուծոյ հետ առանձին ըլլալէն: Մենք չենք գիտեր պատասխանը, բայց գիտենք, որ այն, ինչ որ Ահարոնը պիտի ընէր, պարզապէս անհեթեթութիւն էր:

Կեղծուած Եահուէի

«Երբ ժողովուրդը տեսաւ, որ Մովսէս ուշացաւ լեռնէն իջնելու, Ահարոնին քով հաւաքուեցաւ» (Ելից 32.1):

Ի՞նչ տեղի պիտի ունենար: Առաջին հերթին, մարդիկ կ'ուզէին կատարել իրենց ցանկութիւնները, եւ անոնք կը փնտռէին Աստուծոյ ծա-

ռայոդը, որ պիտի տար իրենց այդ հնարաւորութիւնը: Երկրորդը՝ Ահարոնը առաջնորդի պարգեւ ունէր, իսկ այդ պարգեւը կը գրաւէ մարդիկ: Ասիկա կարելի էր դիտարկուիմ է, քանի որ մարդոց կը հրապարէ ուժեղ առաջնորդը, անկախ այն բանէն՝ ան հնազա՞նդ է Տիրոջը, թէ՞ ոչ: Այն, որ առաջնորդը մեծ թիւով հետեւորդներ ունի, միշտ չէ, որ կը նշանակէ՝ ան Աստուծոյ կը հետեւի: Լսեցէ՛ք, թէ ինչ ըսաւ ժողովուրդը Ահարոնին.

«Ելի՛ր, մեզի աստուածներ շինէ, որպէսզի մեր առջեւէն երթան, քանզի Մովսէսը, մեզ Եգիպտոսի երկրէն հանող մարդ չենք գիտեր, թէ ինչ եղաւ անոր» (Ելից 32.1):

Առաջինը՝ ուշադրութիւն դարձուցէք, որ ժողովուրդը չըսաւ. «Որովհետեւ չենք գիտեր, թէ ինչ եղաւ Աստուծոյ հետ»: Ասիկա շատ կարելի է, եւ քիչ յետոյ եւ պիտի անդրադարձնամ այս մտքին:

Երկրորդը՝ ուշադրութիւն դարձուցէք, որ անոնք ըսին. «Մեզի համար աստուածներ շինէ՛»: Եբրայերէնի մէջ «աստուածներ» բառը «*էլոհիմ*»-ն է: Հին կտակարանին մէջ այս բառը կ'օգտագործուի աւելի քան 2.600 անգամ եւ աւելի քան 2.250 անգամ այն կը վերաբերի Ամենակարող Աստուծոյ: Օրինակ՝ միայն Ծննդոց գիրքի առաջին գլուխին մէջ այն գրուած է 32 անգամ: Աստուածաշունչի առաջին խօսքին մէջ գրուած է. «Սկիզբը էլոհիմը ստեղծեց երկինքն ու երկիրը»:

Եւս մէկ օրինակ է Երկրորդ Օրինաց 13.4-ը. «Ձեր Տէր (*Եստուդ*) Աստուծոյ (*էլոհիմ*) հետեւեցէ՛ք եւ Անորմէ վախցէ՛ք, Անոր պատուիրանները պահեցէ՛ք եւ Անոր ծայնը լսեցէ՛ք, Ջինք պաշտեցէ՛ք եւ Անոր յարեցէ՛ք»: Դուք կրնաք տեսնել, որ այս հատուածին մէջ գրուած է Տիրոջ անունը՝ «*Եստուդ*», իսկ յետոյ Ան կը կոչուի մեր (*էլոհիմ*): Ան Աստուած է՝ բացարձակ իշխանութիւնը եւ ամէն ինչի սկզբնաղբիւրը:

Այնուամենայնիւ, Հին կտակարանին մէջ էլոհիմ բառը կ'օգտագործուի մօտաւորապէս 250 անգամ՝ կեղծ աստուածներ նկարագրելու համար, օրինակ՝ Ղազոնին (Ա. Թագաւորաց 5.7) եւ Բահաղին (Գ. Թագաւորաց 18.21): Այնպէս որ, կարդալով այս բառը՝ մշտապէս պէտք է դիտարկենք այն համաթեքթով, որպէսզի հասկնանք, թէ որուն կը վերաբերի այն:

Ահարոնը արձագանգեց մարդոց խնդրանքին՝ պահանջելով անոնց ոսկի ականջօղերը: Ան հալեցուց ամբողջ ոսկին եւ ձուլեց տխրահռչակ հորթը: Հազիւ որ այն պատրաստ էր, մարդիկ ըսին. «Ո՛վ Իսրայէլ, ասոնք են քու աստուածներդ, որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին» (Ելից 32.4): Եբրայերէնին մէջ կրկին օգտագործուած է «*էլոհիմ*» բառը: Այնուամենայնիւ, անոնց բառերէն կը սկսինք հասկնալ, թէ որուն մա-

սին անոնք կը խօսին. «Որ քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին»: Անոնք գիտէին, թէ ո՛վ հանեց զիրենք Եգիպտոսի երկրէն. անոնք յիմար չէին: Մեր կանխագագոււմը կը հաստատուի անմիջապէս յաջորդ խօսքին մէջ.

«Եւ երբ Ահարոն տեսաւ ասիկա, անոր առջեւ սեղան մը շինեց: Ահարոն յայտարարեց. «Վաղը տօն է Տիրոջ համար»» (Ելից 32.5):

«Տէր» բառը այս խօսքին մէջ *«Եսահուէհ»* բառն է: *«Աստուածաշնչեան բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարանը»* այսպէս կը սահմանէ այն.

«Այս բառը կը նշանակէ Իսրայէլի Աստուծոյ ճշգրիտ անունը՝ այն անունը, որուն միջոցով Ան յայտնեց Ինքզինքը Մովսէսին (Ելից 6.2,3): Այս Աստուծային անունը աւանդաբար չէր արտասանուեր, հիմնականին՝ ելլելով յարգանքէն այդ անուան սրբութեան հանդէպ: Մինչեւ Վերածնունդի ժամանակաշրջանը, այն կը գրուէր Հին կտակարանի եբրայերէն թեքսթին մէջ առանց ձայնաւորներու՝ որպէս «ՅՀՎՀ»:

Ոչ մէկ տեղ ամբողջ Աստուածաշունչին մէջ այս բառը օգտագործուած է ոեւէ կեղծ Աստուած անուանելու համար՝ այս խօսքէն բացի: Ինքնին հասկնալի է, թէ ինչ կը կատարուէր: Գրեթէ կասկած չկայ, որ Ահարոնը եւ ժողովուրդը կանգնեցան անմիջապէս այդ հորթին առջեւ եւ անուանեցին այն *Եսահուէհ*: Անոնք չանվանեցին այն Բահաղ, Ղագոն, Աստարովթ, Ռա, Նեփթիս եւ չտուին այլ եգիպտական Աստուծոյ անուն: Անոնք չըսին. «Ահա՛ Ռան, որ ազատեց մեզ Եգիպտոսէն»:

Յիշեցէք, թէ ինչ ըսին անոնք. «Մենք չենք գիտեր, թէ ինչ եղաւ Մովսէսին հետ»: Անոնք չըսին. «Մենք չենք գիտեր, թէ ինչ եղաւ Աստուծոյ հետ»: Անոնք չէին ժխտեր, որ *Եսահուէհը* գոյութիւն ունէր, եւ որ Ան ներգրաւուած էր իրենց կեանքին մէջ: Անոնք կ'ընդունէին, որ *Եհովան* կամ *Եսահուէհը* փրկած էր զիրենք, ազատած էր զիրենք, բժշկած էր զիրենք եւ մատակարարած էր զանոնք: Անոնք պարզապէս փոխած էին *Եսահուէհի* ճշմարիտ պատկերը վերահսկելի պատկերի հետ, որ պիտի տար իրենց այն, ինչ որ իրենք կը ցանկային:

Ես պիտի բերեմ այս երեւոյթի ժամանակակից օրինակ մը: Լիզան եւ ես շատ կը ճամբորդենք: Մեր ծառայութիւնը՝ «Մեսինձըր ինթերնե-

շընլ»-ը, բաղկացած է հրաշալի խումբի: Այն, ինչ որ պիտի գրեմ ձեզի, ենթադրական է, քանի որ մեր խումբի անդամները երբեք նման բան չէին ըներ: Որպես ծառայութեան ղեկավարներ՝ Լիզան եւ ես մշտապէս կը շեշտադրենք շարք մը աշխատանքային եւ մշակութային սկզբունքներ, քանի որ ատոնք կարելի էր են մեզի համար: Ատոնցմէ մէկ քանին հետեւեալն է: Մենք կը խնդրենք մեր խումբի անդամներէն ինը ժամեայ արդիւնաւէտութիւն՝ ութ ժամուան ընթացքին: Մենք կը ցանկանք ունենալ ուրախ աշխատանքային մթնոլորտ, կատարել ամէն ինչ գերազանց, սիրել եւ ծառայել իւրաքանչիւր մարդու, գործընկերոջ կամ եկեղեցական առաջնորդի, որ կապ կը հաստատէ մեզի հետ, կատարել որոշակի ծաւալի աշխատանք՝ ամէն օրուայ եւ շաբթուայ ընթացքին, եւ շատ այլ բաներ: Մեր գլխաւոր գործառնական տնօրէնը, որուն պիտի կոչեմ Թոմ յօրինուած անունով, պատասխանատու է մեր կողմէն պահանջուող աշխատանքային եւ մշակութային չափանիշներու պահպանման համար:

Պատկերացուցէք, որ Լիզան եւ ես կը ճամբորդենք, եւ բացի այդ՝ մեր գլխաւոր գործառնական տնօրէնը նոյնպէս կը ճամբորդէ: Յաջորդ պատասխանատու անձը մեր գլխաւոր ֆինանսական տնօրէնն է՝ Ճորտընը (անունը նոյնպէս յօրինուած է): Թոմի հեռանալէն անմիջապէս յետոյ Ճորտընը կը յայտարարէ ամբողջ խումբին. «Լսեցէ՛ք, ճոնը եւ Լիզան կ'ուզեն, որ մենք ուրախ մթնոլորտ ունենանք: Եկէ՛ք երաժշտավար վարձենք եւ վերածենք աշխատավայրը պարասրահի՝ ծուխով եւ լոյսերով, եւ եկէ՛ք քանի մը օր շարունակ երեկոյթներ անցընենք:

Այդ երեկոյթներու ամբողջ ընթացքին մեր խումբը «կը դաւանի», որ կ'ընէ ճիշդ այն, ինչ որ մենք խնդրած ենք իրենցմէ: Անոնք շարունակ կը վկայակոչեն մեզ՝ ըսելով. «Ասիկա ճոնի եւ Լիզայի ցանկութիւնն է: Անոնք կ'ուզեն, որ մենք ուրախ մթնոլորտ ունենանք»: Իսկ խումբի անդամներէն մէկը կը բացականչէ. «Լսեցէ՛ք, ես ճիշդ հիմա կը խօսիմ ճոնին հետ հեռաձայնով: Ես պատմեցի անոր մեր երեկոյթի մասին, եւ ան գովեց մեզ»: Հաւանաբար, ան կը ստէ, քանի որ, եթէ ես զանգահարէի եւ իմանայի, որ նման բան տեղի կ'ունենար, շատ պիտի բարկանայի իմ խումբին վրայ:

Պատկերացուցէք, որ մեր գլխաւոր գործառնական տնօրէնը կը վերադառնայ գրասենեակ աւելի կանուխ, քան Լիզան եւ ես: Եթէ այդպէս ըլլար, ան նոյնպէս շատ պիտի բարկանար: Ան կ'անջատէր երաժշտութիւնը, ետ կ'ուղարկէր լոյսերը եւ ծուխի մեքենան ու լաւ մը կը նախատէր զանոնք. «Ասիկա այն չէ՛, ինչ որ ճոնը եւ Լիզան կ'ուզեն: Դուք սխալ՝ ներկայացուցած էք անոնց խօսքերը»: Ատկէ յետոյ ան աշխա-

տանքէն կը հեռացնէր այն մարդիկը, որոնք ձեւաւորած էին այդ կեղծուած մշակոյթը:

Իսկ այժմ տեսէք, թէ ինչպէս վարուեցաւ Իսրայէլը՝ ստեղծելով վերահսկելի «*Եահուէհ*».

«Հետեւեալ առաւօտ, կանուխ ելան ու ողջակէզներ մատուցանեցին եւ խաղաղութեան զոհեր բերին, եւ ժողովուրդը ուտելու ու խմելու նստան ու խաղալու ելան» (Ելից 32.6):

Ատիկա *Եահուէհին* նուիրուած տօնական օր էր: Առաջնորդները եւ ժողովուրդը զոհեր մատուցեցին Անոր, իսկ յետոյ կորսնցուցին բոլոր սահմանները: Անոնք համոզած էին իրենք զիրենք, որ իրենց վարքը հաճելի էր իրենց «*Եահուէհին*»: Անոնք կը հաւատային, որ Ան չէր առարկեր իրենց որկրամոլութեան, խնճոյքներու եւ անզուսպ խրախճանքին դէմ (ինչ որ, կարելի է ենթադրել, կ'ընդգրկէր նաեւ սեռական անբարոյութիւնը): Անոնք կը ներկայացնէին իրենց վարքագիծը՝ որպէս հաճելի բան Աստուծոյ (*Եահուէհին*), այնինչ այդ ամէնը բոլորովին հաճելի չէ Անոր:

Անոնք անցում կատարած էին կռապաշտութեան աւելի խաբուսիկ ձեւի: Ստեղծած էին կեղծուած *Եահուէհ*, որ նման չէր իրական Աստուծոյ: Ատիկա առիթ կու տար անոնց ապրելու այնպէս, ինչպէս կը ցանկային՝ ունենալով Անոր հաւանութիւնը: Անոնց արարքները բոլորովին չէին տարբերեր այն հեթանոս ազգերու արարքներէն, որոնք կը հրաժարէին երկրպագել (ծառայել) Աստուծոյ: Կրկին, Պօղոսը կը գրէ. «Անոնք սկսան յօրինել անմիտ գաղափարներ այն մասին, թէ ինչպիսին է Աստուած» (Հռովմայեցիս 1.21, NLT): Միակ տարբերութիւնը այն է, որ հեթանոս ազգերը կ'անուանեն իրենց աստուածները այլ անուններով, օրինակ՝ Դագոն, Բահադ, Հափի, Ամիթ, Սոփոյու եւ այլն, իսկ Իսրայէլը կ'անուանէ իր Աստուածութեան *Եահուէհ*:

Այդ ժամանակ Աստուած ըսաւ զլիսաւոր գործառնական տնօրէն Մովսէսին. «Գնա՛, իջի՛ր, վասնզի ապականեցաւ քու ժողովուրդդ, որ Եգիպտոսի երկրէն հանեցիր: Անոնք շուտով խտորեցան այն ճամբայէն, որ իրենց պատուիրեցի» (Ելից 32.7,8):

Մովսէս վերադարձաւ եւ սկսաւ հաշիւ պահանջել մարդոցմէ: Առաջինը Ահարոնն էր, որուն ան ձգած էր՝ որպէս պատասխանատու, յաջորդը՝ առաջնորդները, եւ վերջապէս՝ ժողովուրդը: Գրուած է. ««Երբ Մովսէս ժողովուրդին անառակութիւնը տեսաւ, (քանզի Ահարոն թող տուեր էր զանոնք անառակութիւն ընելու՝ իրենց թշնամիներուն մէջ խայտառակ ըլլալու չափ): Այն ատեն Մովսէս բանակին դուռը կայնե-

ցաւ ու ըսաւ. «Ով որ Տիրոջը կողմէն է, թող ինձի գայ» (Ելից 32.25,26): Այդ մարդիկ, ինչպէս եւ մենք, չկեցանք Տիրոջ կողքին՝ պարզապէս դաւանելով Անոր անունը կամ Անոր երգեր երգելով: Մենք կ'որոշենք, որ Անոր կողքին ենք, երբ կ'ապրինք համաձայն Անոր Խօսքին:

Այս պատմութիւնը քանի մը կարելոր հարցումներ կը յառաջացնէ.

Հնարաւոր է, որ մենք ստեղծած ենք այնպիսի «Յիսուս» մը, որ կու տայ մեզի այն ամէնը, ինչին որ կը ձգտին մեր մոլորուած կիրքերը:

Արդեօք կը գիտակցինք, որ Յիսուս թափած է Իր արիւնը մեզի համար, փրկած է մեզ եւ ազատած է այս աշխարհէն:

Հնարաւոր է, որ, թէեւ մենք կը գովերգենք Ձինք, որ Ան բացած է Երկինքը մեզի համար, իրականութեան մէջ «մեր Յիսուսը» այն Յիսուսը չէ, որ նստած է Հօր աջ կողմը:

Հնարաւոր է, որ մենք ստեղծած ենք կեղծուած Յիսուս:

Հնարաւոր է, որ անթիւ մարդիկ եկեղեցւոյ մէջ խաբուած են՝ նման Եգիպտոսէն դուրս եկած իսրայէլցիներուն:

Եւս ուրիշ հարց մը. որո՞նք են այն գլխաւոր գործառնական տնօրէնները՝ Մովսէսին պէս, որոնք պիտի իջնեն Աստուծոյ լեռէն՝ կրակով եւ սիրով լեցուն սրտերով, եւ պիտի յանդիմանեն խաբուածները:

Եթէ անոնք չայտնուին, մեր խաբէութիւնն ա՛լ աւելի կը խստանայ: Եւ քրիստոնաբարը կը շարունակէ շահագործել մեր տկարութիւնները, նոյնիսկ՝ մինչեւ մահուան աստիճան:

գործնական քայլ

Արեւմուտքի մէջ դիւրին է ըսելը, որ դուք կը հաւատաք Յիսուսին: Այնուամենայնիւ, Արեւմուտքի մեծ մասը յոգնած է քրիստոնէութենէն, քանի որ քրիստոնեաներու եւ այս աշխարհի միջեւ շատ քիչ տարբերութիւն կայ: Քրիստոնեաները կը քարոզեն Յիսուսի անունը եւ կը պնդեն, որ կը պատուեն զԱստուած, սակայն կ'ապրին մեղաւոր կեանքով, որուն Ան ակնյայտօրէն հաւանութիւն չի տար: Ինչպէս որ ըսաւ Մովսէսը՝ պատասխանատուութեան կանչելով Իսրայէլը. «Ով որ Տիրոջը կողմէն է, թող ինձի գայ»: Ժամանակն է, որ ճշմարիտ քրիստոնեաները ոտքի ելլեն եւ կանչեն իրենց եղբայրներն ու քոյրերը դէպի ճշմարտութիւնը:

Մենք կը հրաժարինք ամէն ինչէն՝ Յիսուսին հետեւելու համար: Մեր կեանքերը մերը չեն: Մեր կամքը հնազանդ է Աստուծոյ. հակառակ պարագային, Ան մեր Տէրը չէ: Մենք կը հաւատանք, որ Ան պիտի տայ այն,

ինչի կարիքը մենք ունինք: Ասիկա է քրիստոնեության կանչը. այո՛, եկե՛ք եւ փրկութի՛ւն ստացե՛ք, բայց նոյնպէս՝ դուք պէտք է մահանաք ձեր հին անձին համար եւ նորը դառնաք:

Մտորեցե՛ք քրիստոնեության ճշմարիտ կանչին շուրջ: Գրի՛ առէք ձեր մտքերը այն մասին, թէ որքանով այդ կանչը կը համապատասխանէ այն ամէնուն, ինչ որ ձեզի սորվեցուցած են, կամ՝ որքանով կը տարբերի աստորմէ: Գտե՛ք ինչ որ մէկը ձեր ընտանիքին կամ եկեղեցիին մէջ, որուն հետ կրնաք խօսիլ այս մասին: Փոխանցեցե՛ք անոնց այս ճշմարտութիւնը:

ՍԿԶԲՆԱԿԵՏԸ

Ակնյայտ է, որ երբ Մովսէսը իջաւ Աստուծոյ լեռէն, Իսրայէլը լիովին կռապաշտութեան մէջ էր, թէւ անոնք տակաւին կ'ընդունէին, որ *Եահուէիք* փրկած էր զիրենք եւ ազատած էր Եգիպտոսէն: Ինչպէս տեսանք, կռապաշտութեան հիմքը անհնազանդութիւնն է՝ Աստուծոյ յայտնուած կամքին: Եթէ մենք կը դաւանինք, որ Յիսուս Քրիստոսը մեր Տէրն ու Փրկիչն է, սակայն ակնյայտօրէն անհնազանդ ենք Անոր իշխանութեան, ատիկա կը դառնայ կռապաշտութեան ամենախաբուսիկ տեսակը:

Վերադառնանք մեր «Մեսինճըր ինթերնեշնլ»-ի խումբի ենթադրական օրինակին: Հազիւ որ մեր գլխաւոր գործառնական տնօրէնը՝ Թոմը, գրասենեակ վերադառնայ եւ տեսնէ այդ անսանձ խնճոյքը, ան խիստ պիտի բարկանայ մեր գլխավոր ֆինանսական տնօրէնի՝ Ճորտընի վրայ: Սակայն Ճորտընը կրնայ պատասխանել Թոմին. «Մենք կ'ընենք ճիշդ այն, ինչ որ ճոնը եւ Լիզան կը պահանջեն: Մենք ուրախ մթնոլորտ ստեղծած ենք»:

Ինչպէ՞ս պիտի պատասխանէ Թոմը: «Այո՛, անշո՛ւշտ, ճոնը եւ Լիզան կը ցանկան ուրախ մթնոլորտ, բայց ի՞նչ պիտի ըսես մնացած բոլոր ցուցմունքներուն մասին, որոնք անոնք տուած են մեզի. ինը ժամեայ արդիւնաւէտութիւն՝ ութ ժամուայ ընթացքին, հասանելիութիւն իւրաքանչիւրի համար, որ կապ կը հաստատէ մեզի հետ, աշխատանքի օրական ծաւալներու կատարում եւ այլն: Դուք առանձնացուցած էք անոնց պահանջներէն մէկը եւ կեդրոնացած էք ատոր վրայ՝ անտեսելով մնացածը»:

Հնարաւոր է, որ մենք այսպէս վարուած ենք ժամանակակից եկե-

ղեցւոյ մէջ: Կը կարծեմ՝ մենք գտած ենք որոշ դրոյթներ Նոր կտակարանին մէջ, որոնք մեզի հաճելի են: Մենք հռչակած ենք, որ փրկուած ենք շնորհքով՝ հաւատքի միջոցով, եւ չենք կրնար վաստակիլ այդ շնորհքը, քանի որ այն Աստուծոյ բարեհաճութիւնն է: Մենք շեշտադրած ենք, որ անհրաժեշտ է սիրել եւ ծառայել միմիանց, փառաբանութեան եւ երկրպագութեան նոր երգեր երգել, վստահելի ըլլալ, կազմակերպուած ղեկավարութիւն ունենալ եւ առողջ եկեղեցական համայնքներ ստեղծել: Մենք կը քարոզենք այս ամէնը մեծ եռանդով: Բոլոր այդ ցուցմունքները ճիշդ են, եւ Նոր կտակարանը կը խօսի ատոնց մասին:

Այնուամենայնիւ, մենք կ'անտեսենք խոնարհութեան, սրբութեան եւ սեռական մաքրութեան կարեւորութիւնը, ինչպէս նաեւ՝ այլ մեղքերէն հեռու մնալը, օրինակ՝ պոռնոկրաֆիայէն:

Արդեօ՞ք մենք զգուշացուցած ենք այն մարդիկը, զոր կը սիրենք, որ փախչին համասեռամոլութենէն, պոռնկութենէն, զինովութենէն, անբարոյ կատակներէն, դատարկախօսութենէն, չներումէն, դառնութենէն եւ բամբասանքէն: Արդեօ՞ք մենք քարոզած ենք այլ կարեւոր պատուիրաններ, ցուցմունքներ եւ զգուշացումներ, որոնք գրուած են Նոր կտակարանին մէջ:

Մի՞թէ մենք կրնանք շեշտադրել միայն Յիսուսի այն ուսուցումները, որոնք չեն ընդհարուիր մեր հասարակութեան մէջ հաստատուած չափանիշներու եւ անբարոյութեան հետ:

Մի՞թէ մենք կրնանք ստեղծել այնպիսի Յիսուս, որ չ'ընդդիմանար մեր մշակոյթի անաստուած ճանապարհներուն:

Մի՞թէ մենք կրնանք չխօսիլ այն մասին, թէ ինչը Ան կ'ատէ, եւ միայն քարոզել Անոր խօսքերուն այն մասը, որոնք ընդունելի են մեր հասարակութեան համար:

Մի՞թէ մենք կրնանք լայնցնել այն ճանապարհը եւ դուռը, որ կը տանի դէպի կեանք:

Մի՞թէ մենք կրնանք հաւատալ, որ եթէ մարդը պարզապէս քանի մը մոզական բառ կը կրկնէ, ան ինքնաբերաբար փրկուած է:

Հնարաւո՞ր է, որ մենք ստեղծած ենք կեղծուած Յիսուս, որ կը տարբերի այն Յիսուսէն, Որուն մասին գրուած է ամբողջ Սուրբ գիրքին մէջ: Վերադառնանք Կորնթոսի եկեղեցիին, որ վնաս կրած է հոգեւոր քրիպատոնաքարէն: Պօղոսը կ'ամփոփէ՝ գրելով անոնց.

«Կը վախնամ, որ ինչ որ կերպով ձեր մաքուր եւ լիակատար նուիրումը Քրիստոսին՝ ապականի, ինչպէս որ Եւան խաբուեցաւ օձի խորամանկ ճանապարհներով: Դուք ուրախութեամբ

կը հանդուրժէք որեւէ բան, որ ինչ որ մէկը կ'ըսէ ձեզի, նոյնիսկ եթէ անոնք կը քարոզեն *ուրիշ* Յիսուսի մասին, ոչ՝ Անոր, որուն մենք կը քարոզենք» (Բ. Կորնթացիս 11.3,4, NLT):

Այս հաւատացեալներու խումբը դիւրաբար մոլորուած էր, ոչ թէ ոեւէ կեղծ Աստուծոյ կամ Յիսուսի գոյութիւնը ժխտող կրօնի միջոցով, այլ հաւատալով ուրիշ Յիսուսի՝ կեղծուած Յիսուսի: Մի՛ մոռնաք, որ Իսրայէլի զաւակները իրենց փրկութիւնը, ազատութիւնը եւ մատակարարումը վերագրեցին կեղծուած Եահուէհին՝ ոսկի հորթին... բայց այն նաեւ առիթ տուած էր եւ նոյնիսկ կը խրախուսէր այնպիսի վարքագիծ, որ հակառակ է Աստուծոյ բնութեանը, որուն մասին գրուած է Իր Խօսքին մէջ: Հնարաւոր է, որ մենք ստեղծած ենք կեղծուած Յիսուս, որ կը խրախուսէ եւ թոյլ կու տայ նոյն բաները: Արդեօ՞ք մենք միտումնաւոր կ'անտեսենք այն կոչերը, որ Նոր կտակարանը կ'ուղղէ մեզի:

Պօղոսը այնպիսի պնդում մը կ'ընէ, որ մեզմէ ոչ ոք կրնայ անտեսել.

«Այսօր ես կը յայտարարեմ, որ հաւատարիմ եղած եմ: Եթէ ինչ որ մէկը յաւիտենական մահ կրէ, ատիկա իմ մեղաւորութիւնը չէ, որովհետեւ ես չվարանեցայ *ազդարարելէն այն*, ինչ որ Աստուած կ'ուզէ, որ դուք իմանաք» (Գործք 20.26,27, NLT):

Պօղոսը չէր քարոզեր միայն Աւետարանի հաճելի ուղերձները: Ան համոզուածութեամբ կ'ազդարարէր այն, ինչ որ Աստուած կ'ուզէր, որ մենք իմանայինք: Ան նման չէր մեր գլխաւոր ֆինանսական տնօրէնին, որ մեր խումբին միայն կը փոխանցէր Լիզայի եւ իմ հաճելի ցանկութիւնները: Պօղոսին խօսքերը, «Նիւ Քինկ Ճէյմս» թարգմանութեամբ, այսպիսին են. «Ես չխուսափեցայ Աստուծոյ *խորհուրդը ամբողջութեամբ* ձեզի ազդարարելէն» (NKJV): «Էմփլիֆայտ Քլասիք» թարգմանութեան մէջ գրուած է. «Ես երբեք չեմ վարանած, ետ չեմ կանգնած եւ չեմ թերացած Աստուծոյ ամբողջական նպատակը, ծրագիրը եւ խորհուրդը ձեզի յայտնելէն» (AMPC):

Եթէ մենք խուսափինք Նոր կտակարանի ոչ հաճելի ուսմունքները քարոզելէն, չենք կրնար Պօղոսին պէս ըսել. «Եթէ ինչ որ մէկը յաւիտենական մահ կրէ, ատիկա իմ մեղաւորութիւնը չէ»: Իրականութեան մէջ, եթէ մենք թերանանք Նոր կտակարանի բանալի հատուածները քարոզելու մէջ, պիտի կատարուի ճիշդ հակառակը: Արդեօ՞ք մենք մտահոգուած ենք, որ առաջին անգամ եկած մարդիկ չեն գար մեր յաջորդ ծառայութեան կամ փոքր խումբի հաւաքոյթին:

Մեր քրիստոնեական մշակոյթին մէջ տարիներ շարունակ խուսափած ենք շեշտադրելէն այն կարեւոր բնաւորութեան գիծերը, որոնց մասին գրուած է Աստուծոյ Խօսքին մէջ, եւ այսօր մենք կը հնծենք մեր անփութութեան հետեւանքները: Ցաւօք, շատերը այսօր սխալ ուղիի վրայ են: Այս մասին կարելի է անթիւ օրինակներ բերել: Ես կը մտապահեմ շատ ազդեցիկ կին ծառայող մը, որ հանրաճանաչ հեղինակ եւ համաժողովներու յայտնի քարոզիչ էր: 2016 թուականին ան յայտարարութիւն տարածեց, որ իր ամուսնութիւնը ւարտած է (ինչ ալ, որ ատիկա կը նշանակէր): Ան ամուսնալուծուեցաւ, եւ այս գիրքը գրելու պահուն նշանուած է ու կ'ապրի մէկ ուրիշ կնոջ հետ:

Ան իր հետեւորդներուն պարբերաբար կը պատմէ իրենց միացեալ կեանքի մասին: Գրառումներէն մէկուն մէջ ան բաժնեկցած է լուսանկարով, ուր իր կին զուգընկերուիին կրթոտ կը համբուրէ զինք, եւ կը մեկնաբանէ այն՝ գրելով, որ իր կեանքի ընթացքը բերած է իրեն այդ կնոջ մօտ, եւ որ ամէն ինչ իրենց յարաբերութիւններուն մէջ «սուրբ» է: Աստուածաշունչը այդպէս չի նկարագրեր անոնց յարաբերութիւնները: Սիրտս կը ցաւի անոր համար: Ահա «Աւետարանի ծառայող» մը, որ սրտանց կը հաւատայ, որ արդար դիրք ունի Աստուծոյ ամօքեւ, եւ կը ցանկայ օգնել, ծառայել ու սիրել մարդիկ, այնինչ իրականութեան մէջ ան խաբուած է:

Աւելի մտահոգիչ են անոր հարիւր հազարաւոր հետեւորդներու անթիւ աջակցող եւ դրական մեկնաբանութիւնները: Անոր գրառումները կ'ենթադրեն, որ ան կը ներկայացնէ զԱստուած, եւ անոր հետեւորդները համաձայն են ատոր: Եւ ամբողջ այդ ընթացքին ան աւելի յայտնի դարձաւ: Այս իրավիճակը վշտալի, ցաւալի եւ ողբերգական է, միեւնոյն ժամանակ վախ կը յառաջացնէ:

Եւս մէկ ողբերգական իրավիճակ. Ամերիկայի ամենայայտնի աւետարանական առաջնորդներէն մէկը վերջերս յայտարարեց իր բոլոր հետեւորդներուն եւ իր եկեղեցւոյ, որ մենք պէտք է լիարժէք ընդունինք համասեռամոլ զոյգերը՝ որպէս Յիսուսի ճշմարիտ հետեւորդներ: Ան ըսաւ, որ կայացուցած է այդ որոշումը՝ համասեռամոլ զոյգերու հետ երկար ժամանակ անցընելէն յետոյ, եւ յայտնաբերած է, որ անոնց յարաբերութիւնները գրեթէ նոյնն են, ինչ տղամարդու եւ կնոջ յարաբերութիւնները: Ան կրնար նման եզրակացութեան գալ միայն՝ միտումնաւոր անտեսելով շարք մը հատուածներ Նոր կտակարանէն նաեւ Աստուածաշունչի ընդհանուր ուսմունքը: Ինչպէս Ահարոնի եւ ոսկի հորթի պարագային, այս առաջնորդի յայտարարութեան պատճառով բազմաթիւ մարդիկ պիտի հեռանան ճշմարտութենէն:

Ասիկա ողբերգական խաբէութիւն է: Քանի որ Արեւմուտքի ծառայողական փիլիսոփայութիւնը ձեւաւորած է կեղծուած Յիսուս, մարդոց համար աւելի ու աւելի դժուար կը դառնայ գտնել իրական Փրկիչը: Մենք պէտք է հարցնենք. «Արդեօ՞ք իրական Յիսուսը այդպիսին է: Արդեօ՞ք Աստուծոյ սէրն այդպիսին է: Արդեօ՞ք ճշմարիտ սէրը կը բնութագրուի միայն բարութեամբ, համբերութեամբ եւ մարդոց օգնելով: Այս յատկանիշները ճշմարիտ են եւ ընդունուած մեր հասարակութեան կողմէն: Այնուամենայնիւ, հնարաւոր է, որ մենք պարզապէս անտեսած ենք այն, թէ ինչպէս սէրը կը նկարագրուի Աստուածաշունչին մէջ. «Վասնզի ասիկա է Աստուծոյ սէրը, որ Անոր պատուիրանքները պահենք» (Ա. Յովհաննէս 5.3):

Արդեօք մենք բաւարարուած ենք միայն Նոր կտակարանի որոշ հատուածներով՝ սիրոյ մեր սահմանումը գտնելու համար:

Ապաշխարելու անհրաժեշտութիւնը

Հնարաւոր է, որ այս աղաւաղուած Աւետարանը ի յայտ եկած է ապաշխարութեան բացակայութեան պատճառով: Արդեօք այն կնոջը, որ հովիւ եւ հեղինակ էր, միւս աւետարանական առաջնորդին, ինչպէս նաեւ՝ շատ այլ մարդոց երբեք ըսած էին, որ անհրաժեշտ է ձգել մեղքը՝ Յիսուսին հետեւելու համար: Թէ՞ անոնց պարզապէս սորվեցուցած էին այն, ինչ որ դարձած է մեր սովորական աղօթքը. «Յիսու՛ս, եկո՛ւր իմ կեանքին մէջ եւ դարձո՛ւր զիս քրիստոնէայ»:

Լսեցէ՛ք Պօղոսին խօսքերը.

«Ես երբեք չեմ վարանած՝ ըսելու այն, ինչ որ դուք պէտք է լսէիք՝ թէ՛ հրապարակաւ, թէ՛ ձեր տուներուն մէջ: Ես ունէի ուղերձ մը հրեաներու եւ յոյներու համար՝ մեղքէն ապաշխարելու, Աստուծոյ դառնալու եւ մեր Տէր Յիսուսին հանդէպ հաւատք ունենալու *անհրաժեշտութիւնը*» (Գործք 20.20,21, NLT):

Միայն մէկ ուղերձ: Առաջին քայլը մեղքէն ապաշխարելու *անհրաժեշտութիւնն* է: Աստուծոյ զաւակ դառնալու համար ապաշխարութիւնը *պարտադիր* է, ոչ թէ՛ ընտրովի: Այնուամենայնիւ, յաճախ այն չի ալ յիշատակուիր, երբ մենք կը բացատրենք Աւետարանը եւ կ'առաջարկենք մարդոց փրկուիլ:

Քանի մը տարի առաջ՝ իմ ծոմերէն մէկուն առաջին օրը, ես լսեցի

Սուրբ Հոգին ձայնը. «Կարդա՛ Մարկոսի առաջին գլուխը»: Ես պատրաստակամօրէն կարդացի ամբողջ գլուխը եւ ոչ մէկ նոր բան բացայայտեցի: Սուրբ Հոգին ըսաւ. «Կրկի՛ն կարդա այն»: Ես կարդացի, եւ կրկին, նոր բան չկար: Ան ըսաւ նոյնը երրորդ, չորրորդ եւ հինգերորդ անգամ: Ես եւս քանի մը անգամ կարդացի այն... եւ ոչինչ: Ատիկա կրկնուեցաւ մօտաւորապէս եօթ անգամ: Ի վերջոյ, ես որոշեցի շատ դանդաղ կարդալ այն, եւ այս անգամ առաջին իսկ արտայայտութիւնը ըսես դուրս թաւ էջէն.

«... Յիսուս Քրիստոսի Աւետարանին սկիզբը» (Մարկոս 1.1):

Բանալին յաջորդ խօսքերուն մէջ էր. «Ահա Ես Իմ հրեշտակին (կամ՝ աւետաբերին) կ'ուղարկեմ Քու երեսի առջեւէն, որ պատրաստէ Քու ճանապարհը Քու առջեւ»: Այդ աւետաբերը Յովհաննէս Մկրտիչն էր: Ան «ապաշխարութեան մկրտութեան» ծառայութիւն ունէր: Մկրտութիւնը կը նշանակէ ամբողջական ընկղմում, ոչ թէ՛ մասնակի: Յովհաննէսի ուղերձը ամբողջական ապաշխարութեան մասին՝ Աւետարանի սկիզբն է կամ սկզբնակէտը: Ոչ ոք կրնայ ունենալ ճշմարիտ յարաբերութիւններ Յիսուսին հետ, եթէ չսկսի ճշմարիտ ապաշխարութենէն:

Սուրբ Հոգին խօսեցաւ ինծի հետ. «Յովհաննէսի ծառայութիւնը կը յիշատակուի ամէն մէկ Աւետարանի սկիզբը: Յովհաննէսի պատմութիւնը գրուած չէ Հին կտակարանի գիրքերէն մէկուն մէջ, քանի որ անոր ուղերձը նորկտակարանեան Աւետարանի յոյժ կարեւոր մասն է»:

Յաջորդը՝ Հոգին առաջնորդեց զիս դէպի Յիսուսին խօսքերը.

«Վասնզի բոլոր մարգարէները ու օրէնքը մինչեւ Յովհաննէսը մարգարէութիւն ըրին» (Մատթէոս 11.13):

Ես վեր ցատկեցի իմ աթոռէն եւ բացականչեցի. «Իսկապէ՛ս որ, ճի՛շդ է»: Յիսուսը չըսաւ. «Որովհետեւ բոլոր մարգարէները եւ օրէնքը մինչեւ Զիս (Յիսուս Քրիստոսը) մարգարէացան»: Ո՛չ, քանի որ Յովհաննէսին ուղերձը լիարժէք ապաշխարութեան մասին՝ նորկտակարանեան Աւետարանի սկզբնակէտն է: Դուք չէք սկսած ձեր յարաբերութիւնները Յիսուսին հետ, քանի տակաւին լիովին չէք ապաշխարած ձեր մեղքերէն:

Ապաշխարութիւնը մուտքի դուռն է:

Յիշեցէ՛ք մեր պատմութիւնը Ճասթինի, Անժելայի եւ ամուսնութեան վերաբերեալ անոր տարօրինակ պատկերացման մասին: Ան այդպէս ալ չթողեց իր հին գուզընկերները: Ան խորապէս կը սիրէր իր ամուսի-

նը. Ճասթինը առաջինն էր անոր համար, եւ ան կը ցանկար անցընել իր ժամանակին մեծ մասը անոր հետ: Սակայն անոր ոչ մէկ անգամ ըսած էին, որ Ճասթինին հետ ամուսնական ուխտ կնքելու համար *անհրաժեշտ էր*, որ ան խզեր բոլոր կապերը (մտաւոր, զգացմունքային եւ ֆիզիքական) իր հին զուգընկերներուն հետ: Այս որոշումը պիտի դառնար Ճասթինի հետ ուխտի մէջ մտնելու սկիզբը կամ սկզբնակէտը:

Ան ցնցուած էր, որ Ճասթինը բարկացած էր թոնիին հետ հանդիպելու իր որոշման պատճառով: Ան շարունակ կը մտածէր. «*Ինչո՞ւ ան այդպէս զայրացած է: Ի՞նչ է, ան կը խանդէ՞ (կը նախանձի՞)*»: Այո՛, ան շատ կը խանդէ, եւ ճիշդ այդպէս ալ պէտք է ըլլայ: Աստուած կը խանդէ մեզի կամ նախանձաւոր է մեզի համար, եւ ճիշդ այդպէս ալ պէտք է ըլլայ: Մենք Անոր հետ ուխտի մէջ ենք. ինչպէ՞ս կրնանք այլ սիրեկաններ ունենալ:

Մի՞թէ զուգահիստութիւն է, որ Աստուածաշունչին մէջ Յովհաննէսի առաջին խօսքերն են. «Ապաշխարեցէք, վասնզի երկնքի թագաւորութիւնը մօտեցած է» (Մատթէոս 3.2):

Մի՞թէ միայն Յովհաննէսը կ'ըսէ ասիկա: Արդեօ՞ք անոր ուղերձը մեկուսի է եւ չի կրկնուիր Նոր կտակարանի միւս արեւաբերներու կողմէն: Անշուշտ՝ ո՛չ: Յիսուսի առաջին պատուէրը հետեւեալն է.

«Ապաշխարեցէք, վասնզի երկնքի թագաւորութիւնը մօտ է» (Մատթէոս 4.17):

Մեր Տէրը եւ Թագաւորը գիտէր, որ ապաշխարութիւնը անհրաժեշտ եւ առանցքային քայլ է՝ Աստուծոյ հետ տեսական յարաբերութիւններ ունենալու համար: Ջարմանալի չէ, որ ասիկա այն չափանիշն է, որ Ան օգտագործեց, որպէսզի որոշէ՝ արդեօ՞ք մարդիկ կը պատկանէին Աստուծոյ:

Յիսուս նախատեց այն քաղաքները, որոնց մէջ Ան բազմաթիւ հրաշքներ գործած էր, որովհետեւ անոնք *չապաշխարեցին իրենց մեղքերէն* եւ չհարձան Աստուծոյ (տե՛ս Մատթ. 11.20):

Եթէ փրկուելու համար անհրաժեշտ ըլլար միայն «դառնալ Աստուծոյ», Յիսուս պիտի խօսէր միայն այդ մասին: Այնուամենայնիւ, ինչպէս որ Անժելան պէտք է ձգէր իր հին զուգընկերները, որպէսզի բոլորովին նուիրուէր Ճասթինին, նոյնպէս ալ մենք պէտք է ապաշխարենք մեր մեղքերէն, որպէսզի լիովին նուիրուինք Յիսուսին:

Մենք շարունակաբար կը տեսնենք այս ուղերձը, քանի որ այն Յիսուսի ծառայութեան առանցքային ուղերձն է: Ան կը յայտարարէ. «Ես եկած եմ կանչելու... զանոնք, որոնք գիտեն, որ մեղաւոր են եւ *պէտք է*

ապաշխարեն» (Ղուկաս 5.32, NLT): Մտածեց՛ք «պէտք է» բառի մասին: Ապաշխարութիւնը ընտրովի չէ: Յիսուս ըսաւ հետեւեալը խումբ մը մարդոց. «Ղուք նոյնպէս պիտի կորսուիք, եթէ չապաշխարէք ձեր մեղքերէն եւ չդառնաք Աստուծոյ» (Ղուկաս 13.3, NLT):

Ճշմարտութիւնը հետեւեալն է. *անկարելի է դառնալ Աստուծոյ՝ առանց ապաշխարութեան:*

Եկէ՛ք առջեւ երթանք՝ տեսնելու համար, թէ ինչպէս Յիսուսի աշակերտները կը քարոզէին Աւետարանը: Ահա թէ ինչ ազդարարեցին անոնք առաջին միսիոներական առաքելութեան ժամանակ, որ Յիսուս ուղարկեց զանոնք. «Եւ աշակերտները դուրս գացին, եւ ամէն մէկուն, որուն կը կը հանդիպէին, կը պատուիրէին *ապաշխարել իրենց մեղքերէն* եւ դառնալ Աստուծոյ» (Մարկոս 6.12, NLT):

Մտածեց՛ք այս բառերուն մասին. «*Ամէն մէկուն, որուն կը հանդիպէին*»: Քանի որ առանց ապաշխարութեան չկայ փրկութիւն, անհրաժեշտ է, որ ըսէք այդ մասին իւրաքանչիւրին: Նոյնիսկ դժոխքին մէջ այրող հարուստ մարդը գիտէր մեղքերէն ապաշխարելու կարելիութեան մասին.

«Հարուստ մարդը պատասխանեց. «Ո՛չ, Հա՛յր Աբրահամ: Բայց եթէ մահացածներէն ինչ որ մէկը ուղարկուի անոնց քով, այդ ժամանակ անոնք պիտի ապաշխարեն իրենց մեղքերէն եւ պիտի դառնան Աստուծոյ» (Ղուկաս 16.30, NLT):

Իսկ Յիսուսի յարութենէն յետո՞յ: Արդեօ՞ք անոնց ուղերձը փոխուեցաւ: Ղուկասը կը գրէ այն մասին, որ Յիսուսը յայտնուեցաւ Իր աշակերտներուն, յանդիմանեց զանոնք խստասրտութեան մէջ, իսկ յետոյ բացաւ անոնց միտքը: Ապա Ան կրկնեց այն, ինչ որ մարգարէները ըսին Իր մասին.

«Գրուած է նաեւ, որ այս ուղերձը պիտի ազդարարուի Անոր անուան իշխանութեամբ բոլոր ազգերուն՝ Երուսաղէմէն սկսեալ. «Կայ մեղքերու ներում *անոնց համար, որոնք կ'ապաշխարեն*»» (Ղուկաս 24.47, NLT):

Մարգարէները նախապէս ըսին, որ մարդիկ կրնային ներում գտնել Փրկիչին մէջ միայն ապաշխարութեան միջոցով, եւ Պետրոս առաքեալը հետեւեցաւ անոնց օրինակին: Լսեց՛ք Անոր առաջին յորդորը փրկութեան մասին, որ ան Պէնտէկոստէի օրը ուղղեց այն մարդոց, որոնք պատրաստակամօրէն կը փնտռէին զԱստուած.

«Ձեզմէ իւրաքանչիւրը պէտք է *ապաշխարէ իր մեղքերէն* եւ դառնայ Աստուծոյ եւ մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերու ներման համար» (Գործք 2.38, NLT):

Կրկին, անկարելի է դառնալ Աստուծոյ՝ առանց ապաշխարելու: Իսկ Պօղոս՝ սը: Արդեօ՞ք ան փոխեց իր ուղերձը հեթանոսներուն համար: Բնա՛ւ.

«Ես հնազանդեցայ այդ երկնային տեսիլքին: Ես քարոզեցի, առաջինը՝ Դամասկոսի մէջ եղողներուն, իսկ յետոյ՝ Երուսաղէմի մէջ եւ Հրէաստանով մէկ գտնուողներուն, եւ նոյնպէս՝ *հեթանոսներուն*, որ բոլորը *պէտք է ապաշխարեն իրենց մեղքերէն* եւ դառնան Աստուծոյ եւ ապացուցեն, որ իրենք փոխուած են՝ այն բարի գործերով, որ կ'ընեն» (Գործք 26.19,20, NLT):

Գրուած է. «Բոլորը պէտք է», ոչ թէ՝ «բոլորը կրնան» կամ «լաւ գաղափար է, որ...»: Ո՛չ մէկ պարզայի: Ան կ'ըսէ. «Բոլորը պէտք է ապաշխարեն իրենց մեղքերէն»:

Պօղոս բացատրեց, որ յատկապէս Աստուած տուած էր փրկութեան այս պահանջը իւրաքանչիւրին համար՝ թէ՛ հրեայի, թէ՛ հեթանոսի.

«Անցեալ ժամանակներուն մէջ Աստուած անտեսեց մարդոց անտեղեակութիւնը այս բաներուն մասին, բայց այժմ Ան կը պատուիրէ բոլորին ամէն տեղ *ապաշխարել մեղքերէն* եւ դառնալ Իրեն» (Գործք 17.30, NLT):

Ինչ կը վերաբերի Յիսուս Քրիստոսի հիմնարար ուսմունքներուն, բոլորովին զարմանալի չէ տեսնել, թէ որն է առաջինը այդ ցուցակին մէջ. կռահեցէ՛ք այն:

«Այնպէս որ, դադրինք նորէն ու նորէն կրկնելէ Քրիստոսի մասին *հիմնական ուսմունքները*: Փոխարէնը, առաջ երթանք եւ մտքով հասունանանք: Անկասկած, կարիք չկայ կրկին սկսիլ հիմքային կարեւորութիւն ունեցող ուսմունքներէն, որոնք *չար գործերէն ապաշխարելն* ու Աստուծոյ հաւատալն են» (Եբրայեցիս 6.1, NLT):

Ես չեմ անդրադարձած Նոր կտակարանի բոլոր հատուածներուն, որոնց մէջ կը տրուի այս պատուէրը: Այնուամենայնիւ, թուարկած եմ բաւականաչափ հատուածներ, որպէսզի ցոյց տամ մեղքերէն ապաշ-

խարելու կարելիությունը: Անկարելի է հաւատալ Տէր Յիսուս Քրիստոսին, եթէ ատոր չի նախորդեր ապաշխարությունը Աստուծոյ գիտակցաբար անհնազանդ ըլլալէն:

Այսպիսով, մենք չենք կրնար քրիստոնեայ դառնալ, եթէ գիտակցաբար պոռնկրաֆիք նիւթեր կ'օգտագործենք:

Մենք չենք կրնար հաւատացեալ դառնալ, եթէ կը հրաժարինք սեռական յարաբերութիւնները դադրեցնելէ մեր զուգընկերուհիին կամ զուգընկերոջ հետ:

Մենք չենք կրնար քրիստոնեայ դառնալ, եթէ կը հրաժարինք համասեռամոլութիւնը ձգելէ:

Մենք չենք կրնար հաւատացեալ դառնալ, եթէ կը շարունակենք կեղծել մեր հարկային տուեալները:

Մենք չենք կրնար Յիսուսին հետեւորդ դառնալ, եթէ կը յարինք ճենտըրային այլասերուածութեան:

Մենք չենք կրնար քրիստոնեայ դառնալ, եթէ կը հրաժարինք ներելէ: Այս ցուցակը կրնայ շատ երկար ըլլալ:

Եթէ մենք յամառօրէն կ'ընդունիք Նոր կտակարանի միայն առանձին հատուածներ, կը նշանակէ՝ մենք ստեղծած ենք «կեղծուած Յիսուս»: Մենք խաբուած ենք մեր սրտին մէջ, եւ մեր հաւատքը սոսկ երեւակայական է: Եւ Աստուծոյ Խօսքը կը զգուշացնէ. «Աստուծոյ Խօսքը միայն մի՛ լսէք: Դուք պէտք է կատարէ՛ք այն: Հակառակ պարագային, դուք պարզապէս դուք ձեզ կը խաբէք» (Յակոբոս 1.22, NLT):

Ինչպէ՞ս գԱստուած փնտռող մարդիկ պէտք է գիտնան այս մասին, եթէ մենք չհռչակենք ասիկա: Մի՞թէ մենք՝ առաջնորդներս, կ'ենթադրենք, որ անոնք ինքնուրոյն կը հասկնան այս բաները: Եթէ պարզապէս ըսենք անոնց. «Դուք հեռո՞ւ էք Աստուծմէ: Ան կը սպասէ, որ դուք տուն գաք: Պարզապէս աղօթէ՛ք այս աղօթքը ինծի հետ», մի՞թէ մենք ճշմարտապէս կը սիրենք զանոնք:

Եթէ մեր մօտեցումը այսպիսին է, մենք կ'ընենք նոյնը, ինչ որ ըրած էին Անժելայի ընտանիքի անդամները կամ այլ մարդիկ, որոնք սորվեցուցած էին անոր ամուսնութեան մասին: Անոնք տեղեակ չէին պահած Անժելան, որ ճասթինի հետ ամուսնանալու համար ան պէտք է հրաժարէր իր հին զուգընկերներէն: Հնարաւո՞ր է, որ անոնք ենթադրած էին, որ ան անձնապէս պիտի հասկնար ասիկա: Այժմ Անժելան շփոթուած եւ այլայլուած է: Իսկ ճասթինը, որ կը սիրէ զինք եւ ճշմարտապէս նուիրուած է իրենց ուխտին, խիստ բարկացած է:

Ինչպիսի ունկնդիրներ ալ ունենանք, զոյութիւն ունի միայն մէկ ճշմարիտ Աւետարան, որ պէտք է քարոզուի հետեւեալ կերպով. առա-

ջին հերթին՝ *ապաշխարութիւն* որեւէ գիտակցաբար գործուող մեղքէ, իսկ յետոյ՝ Աստուծոյ դառնալը: Գոյութիւն չունի ճշմարիտ հաւատք, եթէ ատոր չի նախորդեր *ապաշխարութիւնը*:

Աւետարանը քարոզելու ժամանակակից ձեւը հետեւեալն է. առաջնորդել մարդիկը դէպի հաւատք եւ աղօթել անոնց հետ, եւ միայն ատկէ յետոյ հեռացնել զանոնք գիտակցաբար գործած մեղքերէն՝ քանի մը շաբթուան, ամիսներու կամ նոյնիսկ՝ տարիներու ընթացքին: Այնուամենայնիւ, հնարաւոր է, որ այդ մարդիկ այլեւս չուզեն ապաշխարել, քանի որ անոնք կը հաւատան, որ արդէն փրկուած են:

Ամօժեալն կը զոջար, որ չէր լսած ճշմարտութիւնը մինչեւ Ճասթինի հետ ամուսնանալը: Մենք նոյնպէս ընդամէնը կը ձեւաւորենք ներքին բախում ունեցող եկեղեցի յաճախողներու, երբ չենք ըսեր անոնց ճշմարտութիւնը փրկութեան պահանջներու մասին:

գործնական քայլ

Նոր կտակարանի ուղերձը պարզ է. չկայ փրկութիւն՝ առանց մեղքերէն ապաշխարելու: Դուք չէք կրնար ամուսնանալ Յիսուսին հետ՝ պահպանելով ձեր յարաբերութիւնները այս աշխարհին հետ: Դուք պէտք է մահանաք ձեր հին կեանքին համար, որպէսզի նոր կեանք սկսիք:

Եթէ երբեք եղած էք խօսնակի դերի մէջ, դուք կը հասկնաք, որ պէտք է շատ պարզ ներկայացնէք մարդոց ձեր հիմնական ըսելիքը: Հակառակ պարագային, հաւանական է, որ ձեր լսարանը չհասկնայ ձեզ, եւ ձեր հաղորդակցութեան նպատակը չիրականանայ: Աստուած գիտէ այս մասին: Ահա թէ ինչու Ան շատ պարզ ըսաւ. «Ապաշխարեցէ՛ք»:

Մինչեւ այս պահը դուք, հաւանաբար, արդէն քանի մը անգամ ապաշխարած էք այս գիրքը ընթերցելու ժամանակ: Այնուամենայնիւ, ինչպէ՞ս այս գլուխը ձեր մէջ ամրապնդեց համոզմունքը այն մասին, որ ապաշխարութիւնը կարելի է: Ի՞նչ կերպով ձեր կեանքը փոխուեցաւ, երբ իմացաք այս մասին: Ինչպէ՞ս աստիկա պիտի փոխէ ձեր յարաբերութիւնները այս աշխարհին, ձեր սիրելիներուն եւ կորսուած մարդոց հետ: Խնդրեցէ՛ք Աստուծմէ, որ ցոյց տայ ձեզի, թէ ինչ կրնաք ընել՝ ապաշխարելու կարելորութիւնը ձեր մէջ ամրապնդելու համար: Ինչպէս միշտ, գրի՛ առէք այն, ինչ որ Ան կ'ըսէ ձեզի՝ ներառեալ ձեր ծրագիրը այն մասին, թէ ինչպէս պիտի կատարէք Անոր ցուցմունքերը:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

Նախորդ գլուխին մէջ Աստուծոյ Խօսքէն մենք շարունակ կը կարդայինք. «Ապաշխարեցէ՛ք ձեր մեղքերէն եւ դարձէ՛ք Աստուծոյ»: Քանի որ ապաշխարութիւնը ընտրովի չէ, այլ *անհրաժեշտ* է՝ յաւիտենական կեանքը ստանալու համար, եկէք աւելի մանրամասնօրէն դիտարկենք այն: Բացայայտելով այս ճշմարտութիւնը՝ մենք նոյնպէս պիտի բացայայտենք (յետագայ գլուխներէն մէկուն մէջ), որ քրիստոնեայի համար ապաշխարութիւնը անհրաժեշտ է՝ Աստուծոյ հետ մտերիմ յարաբերութիւնները պահպանելու համար:

Առաջինը՝ անչափ կարեւոր է հասկնալ, որ ապաշխարութիւնը Նոր կտակարանին մէջ այնպիսին չէ, ինչպիսին Հին կտակարանին մէջ: Երբ Հին կտակարանին մէջ Աստուծոյ ժողովուրդը կ'ապաշխարէր, քործ ու մոխիր կը կրէին: Անոնք կ'ողբային, գետին կ'իյնային եւ յաճախ շատ արցունքներ կը թափէին՝ իրենց ապաշխարութիւնը ցոյց տալու համար: Ապաշխարութիւնը զղջման արտաքին դրսեւորում էր եւ վերադարձ դէպի Աստուածահաճոյ հնազանդութիւնը: Մենք պիտի տեսնենք, որ Նոր կտակարանին մէջ շեշտադրումը արտաքին դրսեւորման վրայ չէ, այլ՝ սրտի:

Ապաշխարութիւնը Նոր կտակարանին մէջ

Նոր կտակարանին մէջ «ապաշխարութիւն» գոյականը («մեթանոյա») եւ «ապաշխարել» բայը («մեթանոե՛ս») կարելի է գտնել համապատասխանաբար քսանչորս եւ երեսունչորս անգամ: Այս բառին ամէնէն յայտնի եւ լայնօրէն ընդունուած սահմանումը «մտափոխութիւնն» է: Այ-

նուամենայնիւ, այսքանով սահմանափակուելու պարագային մենք չենք հասկնար ատոր ամբողջական իմաստը:

Համաձայն «Պէյքըրի Աստուածաշնչեան հանրագիտարանի»՝ ապաշխարութիւնը «բառացիօրէն մտափոխութիւն է, ոչ թէ անձնական ծրագրերու կամ համոզմունքներու, այլ *ամբողջ անհատականութեան* փոփոխութիւն՝ մեղսալի գործերու ընթացքէն դէպի Աստուած» (շեղագիրը աւելացուած է):

Ինծի հաճելի է «*ամբողջ անհատականութիւն*» արտայայտութիւնը: Ես կրնամ մտափոխուիլ, սակայն լիովին համոզուած չըլլալ: Այս արտայայտութեամբ աստուածաբանները ցոյց կու տան, որ կայ աւելին, քան պարզապէս միտք փոխելը: «Լեքսիէմի Աստուածաբանական բառագիրքը» աւելի խոր կը սահմանէ այս բառը՝ նշելով, որ ապաշխարութիւնը «ընթացք է, որուն մէջ անհատը կը վերակողմնորոշէ իր միտքը եւ կամքը՝ հեռացնելով ատոնք մեղքէն եւ ուղղելով Աստուծոյ»:

Անկասկած, ապաշխարութիւնը կը վերաբերի մտքին, սակայն ատոր ազդեցութիւնը աւելի խորունկ է. այն կ'ազդէ մեր կամքի եւ զգացումներու վրայ: Այն կը թափանցէ մեր սրտի խորքը, ուր կը գտնուին մեր հիմքային համոզմունքները: Յիսուս կ'ըսէ.

«Վասնզի *սրտէն* կ'ելլեն չար խորհուրդներ, սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ ու հայիոյութիւններ: Ասոնք են որ կը պղծեն մարդը...» (Մատթէոս 15.19,20):

Վարքը՝ թէ՛ հանպատրաստի, թէ՛ սովորական, կը յառաջանայ մեր ներսէն: Եթէ ճշմարիտ ապաշխարութեան համար անհրաժեշտ ըլլար միայն փոխել միտքը, Յիսուսը կ'ըսէր, որ բոլոր այդ վարքագիծերը կը բխին մեր մտքէն: Աստուածաշունչին մէջ գրուած է. «Որովհետեւ, ինչպէս որ ան կը մտածէ իր սրտին մէջ, այնպիսին է» (Առակաց 23.7, NKJV): Այն, թէ ինչպէս կ'ընկալենք կեանքը խորունկ մեր ներսը, կը թելադրէ մեր գործողութիւնները կամ արծագանգը իրավիճակներուն, իսկ վերջիններս կը բնութագրեն մեզ:

Թերեւս մտածէք. «*Ես չեմ ուզեր բնութագրուիլ իմ վարքով*»: Համաձայն եմ՝ ատիկա հաճելի ճշմարտութիւն չէ, բայց մենք չենք կրնար անտեսել Յիսուսին խօսքերը. «Դուք կրնաք որոշել զանոնք իրենց պտուղով, այսինքն՝ այն բանով, թէ ինչպէս կը վարուին» (Մատթէոս 7.16, NLT): Ճշմարտութիւնը այն է, որ մենք կը բնութագրուինք մեր վարքով, ոչ թէ՛ մտադրութիւններով»:

Այս ճշմարտությունը ինքնին ցոյց կու տայ Աւետարանի զօրութիւնը, քանի որ Աւետարանը կրնայ փոխել մեր սրտի մտքերը՝ ասով իսկ փոխելով մեր վարքը: Աւետարանի ազդեցութիւնը իրապէս կրելը չի նշանակեր՝ ունենալ նոր մտածելակերպ կամ զգացմունքային արձագանգ, այլ՝ կրել ընկալումներու եւ համոզմունքներու խոր փոփոխութիւն, որ կ'ուղեկցի ճշմարտապէս նորոգուած վարքով:

Ապաշխարութիւնը տեղի կ'ունենայ, երբ մենք կ'արթնանաք ճշմարտութեան համար եւ մինչեւ մեր էութեան խորքը լիովին կը համոզուինք, որ մեր փիլիսոփայութիւնը եւ վարքը հակառակ են մեր Արարիչին: Այս ի սրտէ գիտակցումը տեղի կ'ունենայ, երբ կը փոխուի ոչ միայն մեր կարծիքը, այլեւ ցանկութիւնները եւ կամքը: Մենք յստակ որոշում կը կայացնենք՝ փոխել մեր ցանկութիւնները եւ ձգտումները, որոնք հակառակ են Աստուծոյ կամքին, ձգել աստուծոյ եւ նոյնիսկ՝ ասել: Ապաշխարութիւնը ճշմարիտ խոնարհութիւն է, իսկ խոնարհութիւնը դուռ կը բանայ Աստուծոյ անարժանաբար տրուող շնորհքին համար, որ աստուածապաշտ կեանքով ապրելու կարողութիւն կու տայ մեզի:

Անհաւատները

Ապաշխարութիւնը կը վերաբերի թէ՛ անհաւատներուն, թէ՛ հաւատացեալներուն, սակայն քիչ մը տարբեր ձեւերով: Եկէք առաջին հերթին խօսինք անհաւատներու մասին:

Նախորդ գլուխին մէջ հետեւողականօրէն լսեցինք Յովհաննէս Մկրտիչէն, Յիսուսէն եւ Անոր աշակերտներէն. «Ապաշխարեցէ՛ք մեղքէն եւ դարձէ՛ք Աստուծոյ»: Իրականութեան մէջ, այս երկու պատուէրները սերտօրէն կապակցուած են եւ անկախ չեն իրարմէ: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ մէկը առանց միւսին չի կրնար ըլլալ, քանի որ աստուծոյ նման են նոյն մետաղադրամի երկու կողմերուն: Աստուածաշնչեան ապաշխարութիւնը կը նշանակէ դառնալ Աստուծոյ՝ բոլոր առումներով: Այն մարդը, որ ճշմարտապէս կ'ընդունի Քրիստոսը, կը յայտարարէ.

«Ես մշտապէս ձգտած եմ այն ամէն ինչին, ինչ որ լաւագոյնն էր ինձի համար, բայց հիմա գիտեմ, որ լիովին սխալած եմ: Այս պահէն ի վեր, լաւագոյնը այն է, ինչ որ Աստուած կ'ընէ, ինչ ալ որ ատիկա ըլլայ. ես կը հաւատամ եւ կ'ընդունիմ ատիկա իմ ամբողջ սրտով, մտքով եւ վարքով»:

Ան ի սրտէ կ'որոշէ (ինչ որ կ'ընդգրկէ անոր միտքը, զգացումները եւ

կամքը), որ պիտի կատարէ Աստուծոյ կամքը: Կայացնելով այս որոշումը՝ ան օրհնութիւն կը ստանայ. ան կը շարունակէ լսել Աստուծոյ ձայնը: Կրկին, որպէս յիշեցում՝ Յիսուս ըսաւ. «Ամէն մէկը, որ կ'ուզէ (կը կամենայ) Աստուծոյ կամքը կատարել, պիտի գիտնայ, թէ արդեօ՞ք Իմ ուսմունքը Աստուծմէ է» (Յովհաննէս 7.17, NLT): Ապաշխարելով՝ անհաւատը կը ձգէ ինքնակառավարումը եւ կ'ընտրէ բացարձակ հպատակութիւնը Աստուծոյ: Այս որոշումը կը բանայ անոր սիրտը՝ Աստուծոյ ձայնը լսելու համար:

Երբ անհաւատները ճշմարտապէս կ'ապաշխարեն, անոնք կը ձգեն կռապաշտութիւնը եւ կ'ընտրեն լիակատար հպատակութիւնը եւ հնազանդութիւնը Աստուծոյ իշխանութեան: Ըստ էութեան, անոնք կը յայտարարեն. «Ես այլեւս չեմ ընդունիր այնպիսի մտքեր, համոզմունքներ, դատողութիւններ կամ փաստարկներ, որոնք Աստուծոյ Խօսքէն վեր կը դասեն իրենք զիրենք»: Պօղոսը համարձակ կը հռչակէ.

«Մարդկային դատողութեան բերդերը *քանդելու* եւ կեղծ փաստարկները *կործանելու* համար մենք կը գործածենք ոչ թէ աշխարհիկ գէնքեր, այլ Աստուծոյ հզօր գէնքեր: Մենք *կը կործանենք* ամէն մէկ ամբարտաւան խոչընդոտ, որ թոյլ չի տար մարդոց ճանչնալու զԱստուած: Մենք գերի կը բռնենք անոնց ապստամբ մտքերը եւ կը սորվեցնենք հնազանդիլ Քրիստոսին» (Բ. Կորնթացիս 10.4,5, NLT):

Աստուծոյ գէնքերն են՝ Անոր Խօսքը, իմաստութիւնը եւ խորհուրդը: Այս աշխարհի գէնքերն են՝ հասարակութեան փիլիսոփայութիւնը, մշակոյթը, սովորոյթները, օրէնքները եւ կենսառճը, որոնք հակառակ են Աստուծոյ Խօսքին: Թերեւս հարցնէք. «Այս աշխարհը գէնքե՞ր ունի»: Անշուշտ. դժոխքը շարունակաբար յարձակում կը գործէ այս աշխարհի համակարգին միջոցով՝ դրդելով թէ՛ քրիստոնեաներուն, թէ՛ անհաւատներուն փոխգիշման երթալու:

Ուշադրութիւն դարձուցէք վերոյիշեալ Աստուածաշնչեան հատուածի «քանդել» եւ «կործանել» բառերուն: Նոյն բառերը յաճախ կ'օգտագործուին Հին կտակարանին մէջ, երբ մարդիկ կը շրջուէին կռապաշտութենէն: Իսրայէլը կը քանդէր, կը կոտրատէր, վայր կը նետէր եւ կը կործանէր կանգնած կուռքերը (մտապահեցէ՛ք անոնց մեղսալի գործերը. կռապաշտութեան արմատը գիտակցուած եւ շարունակական մեղքն է: Անոնք կը կործանէին ճիշդ աստիկա, ոչ թէ պարզապէս արծանները):

Այն սկզբունքները, որոնց մասին Պօղոսը կը խօսի, նոյնն են: Մենք կ'օգտագործենք Աստուծոյ Խօսքը՝ յանդիմանելու համար կռապաշտ

մտածելակերպեր ունեցող մարդիկը, որոնք օտարացած են Քրիստոսին: Այս կերպով մեր ունկնդիրները կ'ապաշխարեն (կը քանդեն եւ կը կործանեն) բոլոր մարդկային դատողութիւններէն, փաստարկներէն եւ Աստուծոյ իշխանութեան չինազանդելէն: Ըստ էութեան, ճիշդ ասիկա է շարունակաբար գործուող մեղքէն ապաշխարելը: Երբ մարդը այդպէս կը վարուի, ան ճշմարտապէս կը դառնայ Աստուծոյ եւ ազատութիւն կը ստանայ:

Փիլիսոփայական տարբերութիւն

Ճիշդ հոս մենք կը յանգինք լուրջ փիլիսոփայական տարբերութիւններու՝ մերօրեայ քրիստոնէական ծառայութեան մէջ, յատկապէս՝ Արեւմուտքի մէջ: Առաջնորդներու մեծ խումբ մը ընդունած է այնպիսի մտածելակերպ, որ կորսուածներուն հասնելու համար պէտք է կեդրոնացնենք մեր ուղերձները Աւետարանի հակառակութիւն յառաջացնող կողմերու վրայ: Ուրիշ ծելով ըսելու համար՝ ըլլանք դրական եւ ջիշատակենք այն մեղքերը, որոնցմէ պէտք է ապաշխարել: Նման մօտեցմամբ մենք, գիտակցաբար, թէ անգիտակցաբար, կը նմանինք վաճառողի, որ կը փորձէ հանոգել գնորդը՝ ներկայացնելով միայն իր ապրանքի առաւելութիւնները եւ պահելով բացասական կողմերը: Ցաւօք, այս մտածելակերպը գրեթէ կորսուածներուն հասնելու մեթոտներու չափանիշը դարձած է:

Ծառայութեան մէջ այս սխալական փիլիսոփայութիւնը ունի երկու ակնյայտ առաւելութիւն: Առաջինը՝ մենք կը բացառենք մարդոց խոցելու եւ ցաւ պատճառելու որեւէ հնարաւորութիւն: Օրինապաշտութիւնը իսկապէս որ գուրկ է կարեկցանքէն եւ կենդրոնացած է օրէնքի տառի վրայ: Օրինապաշտ մարդիկ կը ձգտին ճիշդ ըլլալ, վերահսկել սեփական վարքը եւ ընդունուած հեղինակութիւն ըլլալ: Խիստ ըլլալու պատճառով օրինապաշտութիւնը կը ձգէ իր ետեւէն խոցուած մարդիկը, որոնք այլեւս չեն կրնար փնտռել զԱստուած, քանի որ այն անհատը կամ հաստատութիւնը, որ կը ներկայացնէ Յիսուսը, վնաս հասցուցած է անոնց: Հաւանաբար, օրինապաշտութիւնը, քան որեւէ ուրիշ բան, զԱստուած հեռացուցած է աւելի քան մարդոց:

Յիսուս ցոյց տուաւ կրօնական «ծառայութեան» հետեւանքները. «Որովհետեւ դուք կը փակէք Երկնքի թագաւորութեան դուռը մարդոց երեսին: Դուք անձնապէս չէք մտներ եւ ուրիշներուն ալ թոյլ չէք տար մտնելու» (Մատթէոս 23.13, NLT):

Այնպէս որ, օրինապաշտութենէն ազատելու ցանկութիւնը ճիշդ է, սակայն մենք չենք կրնար թեքիլ դէպի միւս ծայրայեղութիւնը: Մի՞թէ մենք պէտք է խուսափինք Նոր կտակարանի ծառայութենէն, քանի որ

կը վախճանք, որ կրնանք իյնալ այդ ծուղակը եւ վնաս հասցնել մարդոց: Մի՞թէ մենք պէտք է հրաժարինք մեղքը յանդիմանելի եւ ապաշխարութեան կոչ ընելի, որպէսզի բացառենք օրինապաշտութեան որեւէ դրսեւորում: Մի՞թէ ասով յօնքի հետ աչքն ալ չենք հաներ:

Մենք պէտք է անդրադառնանք այս հարցերուն, քանի որ այն, ինչ որ այսօր չափանիշ դարձած է աւետարանչութեան մէջ, չի համապատասխանիր Աստուածաշունչին: Ինչպէ՞ս կրնանք առաջարկել փրկութիւն՝ առանց ապաշխարութեան, եթէ Աստուածաշունչը յստակ կը սորվեցնէ, որ ապաշխարութիւնը անհրաժեշտ է: Եւ արդեօ՞ք այն մարդիկ, որոնց մենք կը շահինք նման սահմանափակ Աւետարանով, ճշմարտապէս կը փրկուին:

Ապաշխարութիւնը շրջանցելու երկրորդ «առաւելութիւնը» այն է, որ մենք կրնանք շատ դիւրին նորադարձները շահիլ եւ ատով իսկ կառուցել աւելի մեծ ծառայութիւն, եկեղեցի կամ փոքր խումբ: Սակայն մի՞թէ կը մոռնանք, որ յատկապէս մեծամասնութիւնը հետեւեցաւ Ահարոնի սխալմունքին: Մեր հետեւորդներուն մեծ կամ փոքր թիւը չէ, որ կ'որոշէ՝ արդեօ՞ք մենք կը վարուինք Աստուծոյ սրտին համեմատ: Որոշիչ գործօնը ճշմարտութիւնն է, ոչ թէ մարդոց թիւը:

Մի՞թէ մոռցած ենք Յիսուսին հետեւելու գինի մասին: Մի՞թէ անտեսած ենք Անոր կրկնուող հրահանգները մեղքը ձգելու (սեփական անձը ուրանալու) եւ մեր խաչը վերցնելու (Անոր պատրաստակամօրէն հնազանդելու) մասին:

Եթէ մենք ջանդիմանենք շարունակական մեղքը, այն մարդիկ, որոնք պիտի ընդունին Յիսուսը, պիտի շարունակեն ապրիլ համաձայն այս աշխարհի չափանիշներուն, ոչ թէ՝ համաձայն Աստուծոյ խօսքին: Մեր հասարակութեան մէջ լիովին ընդունելի է ապրիլ եւ սեռական կեանք ունենալ սիրեկանի հետ՝ առանց ամուսնանալու, համասեռամուլ ըլլալ՝ նոյնիսկ այնպիսի միութեան պայմաններուն մէջ, որ, սխալմամբ, «ամուսնութիւն» կը կոչուի, տարուիլ գինովութեամբ, ընդունիլ մարիխուանա կամ այլ թմրանիւթեր, դիտել անվայել, անպարկեշտ կամ պիղծ հաղորդումներ, տեսանիւթեր եւ ֆիլմեր եւ շատ աւելին: Սակայն այս ամէնը ուղղակիօրէն կը հակասէ Նոր կտակարանի պատուիրաններուն:

Երկնքի չափանիշները

Իսկ մի՞թէ Նոր կտակարանին մէջ պատուիրաններ կան: Այո՛, իրականութեան մէջ, Նոր կտակարանին մէջ կայ աւելի քան հինգ հարիւր պատուիրան՝ տարբեր մտածելակերպերէն եւ վարքագիծերէն ազա-

տելու վերաբերեալ: Պողոս առաքեալը՝ այն մարդը, որ ստացաւ մեծագոյն յայտնութիւնը Աստուծոյ շնորհքի մասին, կը գրէ. «Վասնզի թլփատութիւնը բան մը չէ, ու անթլփատութիւնն ալ բան մը չէ. հապա Աստուծոյ պատուիրանքները պահելն է էականը» (Ա. Կորնթացիս 7.19):

Օրինակ՝ Աստուած յստակ կ'ըսէ, որ արտամուսնական սեռական յարաբերութիւնները ոչ միայն կ'արգիլուին, այլեւ պիտի ենթարկուին դատաստանի: Հետեւեալ հատուածները դատարկ խօսքեր չեն.

«Որովհետեւ համոզուած եղէք ասոր մէջ, որ այն մարդը, որ սեռական անառակութիւն եւ պղծութիւն կը գործէ իր մտքին մէջ կամ կեանքին մէջ... չունի ժառանգութիւն Քրիստոսի եւ Աստուծոյ թագաւորութեան մէջ: Ոչ ոքի թոյլ տուէք մոլորեցնելու ձեզ դատարկ արդարացումներով եւ անհիմն փաստարկներով [այս մեղքերու վերաբերեալ], որովհետեւ այս բաներու պատճառով Աստուծոյ զայրոյթը կու գայ ապստամբութեան եւ անհնազանդութեան որդիներու վրայ» (Եփեսացիս 5.5,6, AMPC):

Եւ կրկին.

«Աստուած անպատճառ կը դատէ այն մարդիկը, որոնք անբարոյ են, եւ զանոնք, որոնք շնութիւն կը գործեն» (Եբրայեցիս 13.4, NLT):

Այն, ինչ որ քիչ առաջ կարդացինք, կը վերաբերի ոչ միայն արտամուսնական սեռական յարաբերութիւններուն, այլեւ պոռնոկրաֆիային եւ որեւէ սեռական պղծութեան: Եւ ինչպէ՞ս մարդիկ պիտի գիտնան այս ամէնը, եթէ չքարոզենք այս մասին: Մի՞թէ մենք իսկապէս սէր կը ցուցաբերենք մարդոց հանդէպ, եթէ անոնցմէ կը պահենք այս ճշմարտութիւնները:

Աստուած յստակ կ'ըսէ, որ այն մարդիկ, որոնց կեանքին մէջ կայ շնութիւն, համասեռամոլութիւն, գողութիւն, զինովութիւն (որ կ'ընդգրկէ նաեւ թմրանիւթերու օգտագործումը) եւ այլ վարքագիծեր, որոնք այսօր մեր հասարակութեան մէջ ընդունելի են շատերուն համար, չեն ժառանգեր Աստուծոյ թագաւորութիւնը.

«Չէ՞ք հասկնար, որ մեղք գործողները չեն ժառանգեր Աստուծոյ թագաւորութիւնը: Մի՛ խաբէք դուք ձեզ: Անոնք, որոնք կը տրուին սեռական մեղքերուն, կամ կուռքերուն կ'երկրպագեն, կամ շնութիւն կը գործեն, կամ տղամարդ

մարմնավաճառներ են, կամ միասեռութեամբ կը զբաղին, կամ գողեր են, կամ ազահ մարդիկ են, կամ գինովներ են, կամ կռուարար են, կամ կը խաբեն մարդիկը. ասոնցմէ ոչ մէկը կը ժառանգէ Աստուծոյ թագաւորութիւնը» (Ա. Կորնթացիս 6.9,10, NLT):

Օրինապաշտ մարդիկ մեծ վնաս հասցուցած են՝ իրական սէր եւ գթասրտութիւն չունենալու պատճառով: Անոնք Նոր կտակարանի խօսքերուն աւելցուցած են իրենց համոզմունքները եւ կանոնները, որպէսզի դրոշմ մարդոց վարուելու իրենց համար ընդունելի կերպով: Այնուամենայնիւ, թերեւս մենք ծայրայեղ կերպով հակազդած ենք այս երեւոյթին՝ այն աստիճան, որ այլեւս չենք քարոզեր Յիսուսին պատուիրանները, որոնք փոխանցուած են կա՛մ անմիջապէս Անոր կողմէն, կա՛մ Անոր առաքեալներու գիրքերուն միջոցով:

Վերջերս, մեծ յայտնի եկեղեցւոյ մը մէջ կը քարոզէի Ա. Կորնթացիս գիրքի այս խօսքը: Առաջին քանի մը ժառայութիւններուն քարոզելէն յետոյ այդ եկեղեցւոյ հովիւը ըսաւ, որ միւս ժառայութիւններուն այլեւս չիշատակեմ համասեռամոլութեան թեման: Չաւելշտական է, որ ճիշդ այդ պահուն կին ոստիկան մը, որ աւելի քան քսան տարի լեզպուհի (միասեռական աղջիկ) էր, արցունքը աչքերուն մօտեցաւ մեր գրասեղանին եւ ըսաւ. «Ինձի պէտք է այն գիրքը, որուն մասին ան կը քարոզէր այսօր երեկոյեան՝ «Բարի՞, թէ՞ Աստուած»: Այսօր ճոնը իսկապէս սրտիս հետ խօսեցաւ»:

Ինչպէ՞ս մարդիկ պիտի ճանչնան Երկնքի չափանիշները, եթէ մենք շարունակենք պահպանել մեր ներկայ ժառայողական փիլիսոփայութիւնը: Մտածեցէ՛ք Յովհաննէս Մկրտիչի ուղերձի մասին: Անոր ուսմունքը կը յանդիմանէր այն մեղքերը, որոնք կը գերիշխէին անոր օրերու հասարակութեան մէջ: Ան կը պատուիրէր հարստութիւն կուտակած մարդոց բաժնեկցիլ աղքատներուն հետ, գողցողներուն՝ դադրիլ գողանալէ, մարդիկը վախցնողներուն՝ դադրիլ վախցնելէ, եւ աշխատաւորներուն՝ բաւարարուիլ իրենց աշխատավարձով (տե՛ս Դուկաս 3.10-14): Մարդիկ կ'երթային անապատ, ուր խիստ պայմաններ էին, որպէսզի լսէին զինք, քանի որ անոնք ճշմարտութիւնը լսելու փափաքը ունէին: Յովհաննէսին լսելէն յետոյ մարդիկ կ'արծագանգէին անոր ուղերձին եւ կ'ապաշխարէին իրենց մեղքերէն: Անոնք կը վարուէին ճիշդ նոյն կերպով, ինչպէս վարուեցաւ այդ եկեղեցական հաւաքոյթին ներկայ կին ոստիկանը, որ գաղափար չունէր իր կենսառձի լուրջ հետեւանքներու մասին:

Յովհաննէս Մկրտիչը հրապարակաւ ըսաւ չերովդէսին՝ Յուդայի թագաւորին, որ ան կը խախտէր Աստուծոյ օրէնքը՝ սեռական յարա-

բերութիւններ ունենալով իր եղբօր կնոջ հետ, եւ որոշ ժամանակ յետոյ զինք գլխատեցին՝ ճշմարտութիւնը քարոզելու համար: Յովհաննէսը չէր փորձեր հաճեցնել այդ ազդեցիկ իշխանաւորը, սակայն անյարգանք ծեռք բերաւ: Եթէ Յովհաննէսը հրապարակաւ ջանդիմանէր Հերովդէսի մեղքը, անոր կեանքը աւելի երկար պիտի ըլլար: Այնուամենայնիւ, մտածեցէ՛ք երկարաժամկետ հետեւանքներու մասին: Որոշ ժամանակ յետոյ Յիսուսը պատուեց Յովհաննէսը մեծ բազմութեան առջեւ (տե՛ս Մատթէոս 11.7-15), եւ մենք միայն կրնանք պատկերացնել, թէ ինչպիսի յաւիտենական վարձատրութիւն ան պիտի ստանայ Ղատաստանի օրը: Յովհաննէսը հաւատարմօրէն պահեց Երկնքի չափանիշը՝ յանուն կորսուած մարդոց:

Պօղոսը հետեւեցաւ այս օրինակին՝ գրելով եւ քարոզելով միեւնոյն բաները: Ան ունէր պարզ ուղերձ կորսուածներուն համար. «Բոլորը պէտք է ապաշխարեն իրենց մեղքերէն եւ դառնան Աստուծոյ եւ ապացուցեն, որ իրենք փոխուած են՝ այն բարի գործերով, որ կ'ընեն» (Գործք 26.20, NLT): Ան պատուիրեց Տիմոթէոսին. «Դուն՝ որպէս Խօսքի քարոզիչ, պէտք է ցոյց տաս մարդոց, թէ ինչ կերպով անոնց կեանքը սխալ է» (Բ. Տիմոթէոս 4.2, AMPC): Ան պատուիրեց մէկ այլ ծառայողի. «Յանդիմանէ՛ ամբողջ իշխանութեամբ» (Տիտոս 2.15, NLT):

Պօղոսը կը բացառէր որեւէ փոխզիջում: Մէկ անգամ անոր հրաշալի հնարաւորութիւն տրուցեալ՝ քարոզելու Աւետարանը Ֆելիքս անունով շատ հարուստ եւ ազդեցիկ պետական պաշտօնեայի եւ անոր կին Թրուսիլային: Այս մեծ առաքեալը չքարոզեց անոնց խրախուսական եւ ոչ յանդիմանական ուղերձ: Փոխարէնը՝ գրուած է.

«Բերելով Պօղոսը՝ անոնք կը լսէին, մինչ ան կը պատմէր Յիսուս Քրիստոսի հանդէպ հաւատքի մասին: Երբ ան կը համոզէր զանոնք՝ խօսելով արդարութեան, ինքնատիրապետման եւ գալիք դատաստանի օրուան մասին, Ֆելիքսը վախցաւ: «Այժմ գնա՛, - պատասխանեց ան, - երբ աւելի յարմար ըլլայ, եւ կրկին պիտի կանչեմ քեզ»» (Գործք 24.24,25, NLT):

«AMPC» թարգմանութիւնը աւելի պարզ է. «Բայց երբ ան շարունակեց փաստարկներ բերել արդարութեան, կեանքի մաքրութեան (կիրքերը վերահսկելու) եւ գալիք դատաստանի մասին, Ֆելիքսը տագնապեցաւ եւ սարսափեցաւ, ան ըսաւ՝ գնա՛»:

Կարդալով պատմութիւնը ամբողջութեամբ՝ մենք կը պարզենք, որ Ֆելիքսը կանչած էր Պօղոսը, քանի որ կը կամենար լսել Աստուծոյ եւ

հանդերձեալ կեանքի մասին: Անկասկած՝ այդ իշխանը կը ցանկար յարաբերութիւններ ունենալ իր Արարիչին հետ: Անոր կարելի է համեմատել մերօրեայ զԱստուած փնտռող մարդու հետ՝ հետաքրքրուած, չփրկուած եւ եկեղեցի այցելող անձնաւորութեան հետ: Ակնյայտ է, որ Պօղոսին քարոզը կը յանդիմանէր այն մեղքերը, որոնք Ֆելիքսը չէր կամենար ձգել, քանի որ ան *սարսափեցաւ* եւ ետ ուղարկեց Պօղոսը:

Այսօր այդ իրավիճակը կրնար այսպիսին ըլլալ. պատկերացուցէք, որ ազդեցիկ անհաւատ մը դուրս կու գայ հաւաքոյթէն՝ ըսելով. «Ես չեմ վերադառնար հոն. այդ ուղերձը վախցուց զիս»: Ինչո՞ւ ան պէտք է վախնար: Թերեւս պատճառը այն է, որ ան չի՞ կամենար ձգել այն մեղքը, որ այդ ուղերձը կը յանդիմանէ:

Եթէ Պօղոսը քարոզէր համաձայն այսօրուան Արեւմուտքի փիլիսոփայութեան, անոր ուղերձը այսպիսին պիտի ըլլար. «Ֆելիքս, Աստուած կը սիրէ քեզ: Ան ուղարկեց Յիսուսը՝ մահանալու քեզի համար, որ դուն փրկուած ըլլաս: Կուգե՞ս ընդունիլ Ջինք քու սրտին մէջ: Եթէ այո, կրկնէ՛ հետս այս աղօթքը. «Յիսուս, եկո՛ւր իմ սրտին մէջ եւ դարձո՛ւր ինձի Աստուծոյ զաւակ»»: Եւ այդքանով ամէն ինչ կ'աւարտէր:

Այնուամենայնիւ, Պօղոսի խօսքերը վախցուցին Ֆելիքսը: Պօղոսը գիտէր, որ Ֆելիքսը կրնար քրիստոնեայ դառնալ, միայն եթէ ապաշխարէր այն մեղքերէն, որոնք ան գիտակցաբար կը գործէր: Եթէ Պօղոսը աղօթէր *մեղաւորի աղօթքը* Ֆելիքսին հետ՝ անոր խրախուսական եւ ոչ յանդիմանական ուղերձ քարոզելէն յետոյ, Ֆելիքսը *խաբուած* պիտի ըլլար: Ան ի սրտէ պիտի հաւատար, որ *վերստին ծնած* էր, բայց իրականութեան մէջ *չփրկուած կռապաշտ* կը մնար: Ըստ էութեան, Պօղոսը թոյլ պիտի տար, որ քրիստոնաբարը ներթափանցէր եկեղեցի: Բայց ան՝ որպէս Յիսուս Քրիստոսի հաւատարիմ ծառայող, ոչ մէկ պարագայի այդպէս կը վարուէր:

Ես գիտեմ, որ այս ամէնը սթափեցնող է, բայց այսօր մենք՝ որպէս Աւետարանի դեսպաններ, պէտք չէ տարբերինք անորմէ:

գործնական քայլ

Ժամանակակից եկեղեցիներու մեծ մասը կառուցուած է՝ առաջարկելով մարդոց կրկնել «մեղաւորի աղօթքը», ինչ որ պարզապէս կը նշանակէ ընդունիլ Յիսուսին զոհը մեր մեղքերուն համար եւ հրաւիրել Ջինք մեր սրտի մէջ: Պատկերացուցէք, թէ ինչպիսին պիտի ըլլար ձեր եկեղեցին, եթէ առաջնորդներու խումբը հրաւիրէր մարդիկը ապաշխարելու իրենց մեղքերէն եւ դառնալու Աստուծոյ: Ձեր կարծիքով, քանի՞ հոգի կը մնային:

Թերեւս ասիկա բարկացնէ շատերը, յատկապէս՝ եկեղեցական առաջնորդները: Սակայն պատկերացուցէք, թէ ինչպիսին պիտի ըլլային մնացողները: Առաջին Մեծ Արթնութիւնը առանձնայատուկ էր այն բանով, որ արթնութեան քարոզիչները եկեղեցիէ եկեղեցի կ'երթային, որպէսզի ապաշխարութիւն քարոզէին: Այն առանձնայատուկ էր նաեւ անով, որ այդ ուղերձը լսողները կը բռնուէին իրենց աթոռներէն կամ կ'իյնային ու կ'ապաշխարէին՝ գոչելով, լալով եւ աղաչելով Աստուծոյ՝ փրկել զիրենք: Ճիշդ այդ հազարաւոր ապաշխարող մարդիկն էին, որ փոխեցին աշխարհը: Ամբողջ քաղաքներ ձգեցին մեղքը եւ դարձան Աստուծոյ:

Թերեւս ապաշխարութեան մասին քարոզները դատարկեն մեր եկեղեցիները, սակայն նոյնպէս հաւանական է, որ մեր եկեղեցիները լեցուին: Խնդրեցէ՛ք Աստուծոյ՝ յայտնել ձեզի ապաշխարութեան ներուժը, այնուհետեւ աղօթեցէ՛ք, որ Ան իրական դարձնէ այդ ներուժը ձեր կեանքին եւ ձեր եկեղեցիին մէջ:

ԵՐԵՔ ԹԱԳԱԻՈՐՆԵՐԸ

Ես ոգեշնչուեցայ այս գիրքը գրելու համար, երբ հերթական անգամ վերընթերցեցի վեց գիրք Հին կտակարանին:

Վերջին քառասուն տարիներու ընթացքին բազմաթիւ անգամներ կարդացած եւ ուսումնասիրած եմ Թագաւորաց եւ Մնացորդաց գիրքերը: Բայց վերջերս ես հետեւողաբար ու աղօթքով կ'ուսումնասիրէի ատոնք, ինչպէս երբեք: Ես զարմացայ, երբ Աստուած բացաւ իմ աչքերը բանի մը վրայ, ինչ որ նախապէս չէի նկատած:

Հետեւեալը կրնայ քիչ մը ակադեմիական եւ նոյնիսկ յոգնեցուցիչ թուալ, սակայն եթէ ես պարզապէս նշեմ այն, ինչ որ յայտնաբերեցի այս գիրքերուն մէջ՝ առանց համառօտ ամփոփելու Հին կտակարանի թագաւորներու կեանքը, իմ խօսքերուն ազդեցութիւնը թոյլ պիտի ըլլայ: Գոյութիւն ունի ազդեցիկ ճշմարտութիւն մը, որ կը յայտնուի անոնց կեանքերը ամփոփելու ժամանակ: Այն դիւրին չէ նկատել, երբ մենք պարզապէս հերթականութեամբ կը կարդանք այս վեց գիրքերը՝ ատոնց մէջ գտնուող բազմաթիւ պատմութիւններուն պատճառով:

Նախապէս, երբ կը կարդայի այս գիրքերը, ես մշտապէս կը համարէի, որ գոյութիւն ունէր թագաւորներու երկու տեսակ՝ անոնք, որոնք «արդարութիւն կը գործէին Տիրոջ առջեւ», եւ «կռապաշտները»: Այնուամենայնիւ, ես հասկցայ, որ իրականութեան մէջ գոյութիւն ունէր թագաւորներու *երեք* տեսակ:

Ինչ կը վերաբերի Իսրայէլի թագաւորներուն, անոնցմէ ոչ մէկը արդարութեամբ վարուեցաւ Տիրոջ առջեւ՝ բացառութեամբ Յէուի, սակայն իր կեանքի աւարտին ան, ցաւօք, նոյնպէս շեղեցաւ ճշմարտութենէն:

Այնպես որ, եկեք խօսինք Յուդայի մասին: Սաուղեն, Ղաւիթեն եւ Սողոմոնէն յետոյ Յուդայի մէջ իշխեց 20 թագաւոր: Կռապաշտ թագաւորներն էին Ռոբովամը, Աբիամը (կամ՝ Աբիան), Յովրամը, Ոգիան, Գոթողիան (թագուհի), Աքազը, Մանասէն, Ամոնը, Յովաքազը, Յովակիմը, Յովաքինը եւ Սեղեկիան: Այս թագաւորներու իշխանութեան ընթացքին Յուդան կրեց մեծ դժուարութիւններ եւ ենթարկուեցաւ յարձակումներու իր թշնամիներուն կողմէ: Այդ յարձակումները, որոնց Յուդան յաճախ անկարող էր դիմակայել, խիստ մեծ վնաս հասցուցին երկրին:

Յուդայի միւս թագաւորները արդարութեամբ վարուեցան (Ղաւիթը եւ Սողոմոնը նոյնպէս արդարութեամբ վարուեցան, թէւ Սողոմոնը նահանջեց իր յետագայ տարիներուն): Թագաւորութեան պառակտումէն յետոյ արդար թագաւորներն էին Ասան, Յովսափատը, Յովասը, Ամասիան, Ոգիան (կամ՝ Ազարիան), Յովաթամը, Եզեկիան եւ Յովսիան: Այնուամենայնիւ, այս ութ թագաւորները կարելի է բաժնել եւս երկու խումբի: Առաջինը այն թագաւորներն էին, որոնք արդարութեամբ կը վարուէին Տիրոջ առջեւ իրենց անձնական կեանքին մէջ, սակայն չէին կործաներ կռապաշտութեան համար նախատեսուած բարձրավանդակները այն ժողովուրդի մէջէն, որուն կ'առաջնորդէին:

Միւս խումբին մէջ այն թագաւորներն էին, որոնք ոչ միայն արդար էին Տիրոջ առջեւ իրենց անձնական կեանքին մէջ, այլեւ կը քանդէին եւ կը կործանէին կռապաշտութեան համար նախատեսուած բարձրավանդակները իրենց ժողովուրդի մէջէն: Այս թագաւորներու իշխանութեան ժամանակ երկրի յաջողութիւնը զգալիօրէն կը տարբերէր այն թագաւորներու ժամանակաշրջանէն, որոնք չէին կործաներ բարձրավանդակները: Ղիտարկենք իւրաքանչիւրը.

1. Ղաւիթ. Անոր թագաւորութեան ժամանակ երկրին մէջ կռապաշտութիւն չկար: Ան ջերմեռանդօրէն կը խրախուսէր ժողովուրդը ծառայելու Տիրոջը՝ ամբողջ սրտով, մտքով, անձով եւ մարմինով: Ան չէր պարտուեր պատերազմներու ժամանակ, եւ անոր թագաւորութիւնը շատ հարուստ դարձաւ: Ան փոխանցեց իր որդիին բարգաւաճ թագաւորութիւն:
2. Սողոմոն. Իր գահակալման գրեթէ ամբողջ ընթացքին Սողոմոնը կ'երթար իր հայր Ղաւիթի հետքերով: Անոր հնազանդութեան արդիւնքները ոչ միայն ուշագրաւ էին իր, այլեւ իր ենթականերու կեանքին մէջ: Գրուած է. «Սողոմոնի կենդանութեան օրոք ամբողջ Յուդան եւ Իսրայէլը կ'ապրէին խաղաղութեամբ եւ ապահովութեամբ: Եւ Ղանէն՝ հիւսիսի մէջ, մինչեւ Բերսաբէ՝ հարաւը, ամէն ընտանիք ունէր իր սեփական տունն ու պարտէզը»

(Գ. Թագաւորաց 4.25, NLT): Մտածեցէ՛ք այս մասին. ոչ ոք կառավարական օժանդակութեան կարիք ունէր, քանի որ երկիրը մեծ առատութեան մէջ էր: Անոր կառավարումը այնքան ակնառու էր, որ «բոլոր երկիրներու թագաւորները կ'ուղարկէին իրենց դեսպանները՝ Սողոմոնի իմաստութիւնը լսելու համար» (Գ. Թագաւորաց 4.34, NLT): Եւ «մարդիկ բոլոր ազգերէն կու գային՝ անորմէ խորհուրդ ստանալու եւ լսելու այն իմաստութիւնը, որ Աստուած տուած էր անոր» (Գ. Թագաւորաց 10.24, NLT): Նոյնպէս գրուած է. «Ան յաջողութիւն ունէր ամէն ինչի մէջ, եւ ամբողջ Իսրայէլը կը հնազանդէր անոր» (Ա. Մնացորդաց 29.23, NLT): Երկրի ժողովուրդը մեծ առատութիւն ունէր. «Թագաւորը քարի պէս շատցուց արծաթը եւ ոսկին Երուսաղէմի մէջ: Եւ թանկարժէք մայրիի փայտանիւթը այնքան տարածուած էր, որքան մոլաթզենիները, որոնք կ'աճին Յուդայի հովիտներուն մէջ» (Բ. Մնացորդաց 1.15, NLT):

Այնուամենայնիւ, յետագային Սողոմոնը անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ եւ ամուսնացաւ բազմաթիւ օտարազգի կանանց հետ: Անոնք դարձուցին անոր սիրտը դէպի օտար աստուածներու (գիտակցուած եւ շարունակական մեղքը) եւ, հետեւաբար, Տէրը բարձրացուց թշնամիներ, որոնք խոչընդոտեցին Սողոմոնի առաջընթացը եւ խնդիրներ յարուցեցին թագաւորութեան մէջ (տե՛ս Ա Թագ. 11.14,23): Գիտակցաբար անհնազանդ ըլլալու հետեւանքով Սողոմոնի թագաւորութիւնը պառակտուեցաւ. անոր որդիին հասաւ միայն երկու ցեղերը, իսկ միւս տասը ցեղերը կորսուեցան:

Այս պահէն ես պիտի թուարկեմ միայն Յուդայի թագաւորները.

3. Ռոբովամ. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:
4. Աբիամ (կամ՝ Աբիա). Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:
5. Ասա. Ան ջերմեռանդօրէն հետեւեցաւ Աստուծոյ: Ան ոչ միայն արդարութեամբ վարուեցաւ Աստուծոյ առջեւ իր անձնական կեանքին մէջ, այլեւ յամառօրէն բացայայտեց եւ կործանեց կռպաշտութիւնը իր ժողովուրդին մէջ: Ան վտարեց տղամարդ եւ կին տաճարային մարմնավաճառները, հեռացուց բոլոր կուռքերը եւ իր տատ Մաաքային զրկեց դիրքէն, քանի որ ան Աստարովթի գարշելի արծան պատրաստած էր (տե՛ս Գ. Թագ. 15.11-13): Նա նոյնպէս հեռացուց բոլոր օտար զոհասեղանները եւ հեթանոսական բարձրավանդակները, կտորատեց սրբազան արծանները, Աստարովթի կուռքերը եւ հեռացուց հեթանոսական սրբատեղիներն ու խունկի սեղանները Յուդայի բոլոր քա-

ղաքներին: Ըստ էության, Ասան կոչ ըրաւ Յուդայի ժողովուրդին ապաշխարել իրենց շարունակական մեղքերին: Հրամայեց անոնց փնտռել Տէրը եւ հնազանդիլ Անոր օրէնքներուն եւ պատուիրաններուն (տե՛ս Բ. Մնաց. 14.2-4):

Շարունակական մեղքը ձգելու անոր հրամանը դրական արդիւնքներ ունեցաւ. «Ասայի թագաւորութիւնը որոշ ժամանակով խաղաղութիւն ունեցաւ» (Բ. Մնացորդաց 14.5): Այդ խաղաղ տարիներուն ան կրցաւ պարսպապատ քաղաքներ կառուցել ամբողջ Յուդային մէջ: Ոչ ոք փորձեց պատերազմիլ անոր դէմ այդ ժամանակահատուածին: Աւելի ուշ Ասայի եւ Յուդային վրայ յարձակեցաւ մէկ միլիոն զինուորէ բաղկացած բանակ մը, սակայն գրուած է. «Անոնք կործանուեցան Տիրոջ եւ Անոր բանակի կողմէն, եւ Յուդայի բանակը ահռելի քանակութեամբ աւար տարաւ» (Ա. Մնացորդաց 14.13, NLT): Բացի այն, որ թշնամիները պարտուեցան, անոնց յարձակման հետեւանքով Յուդան մեծ հարստութիւն ձեռք ձգեց:

Մենք յստակ կը տեսնենք այն առաջնորդի օրինութիւնը, որ ոչ միայն անձամբ հնազանդեցաւ Աստուծոյ եւ ձգեց գիտակցուած ու շարունակական մեղքը, այլեւ կոչ ըրաւ այն ժողովուրդին, որուն ինք կ'առաջնորդէր, նոյնը ընել:

6. Յովսափատ. Ան նոյնպէս արդարութեամբ վարուեցաւ Աստուծոյ առջեւ՝ թէ՛ իր անձնական կեանքին մէջ, եւ թէ՛ կառավարման մէջ: Ան կոչ ըրաւ ժողովուրդին ապաշխարել կռապաշտութենէն (գիտակցուած եւ շարունակական մեղքէն): Ան երկրէն արտաքսեց մնացած տղամարդ եւ կին մարմնավաճառները (տե՛ս Գ. Թագ. 22.47): Ան հեռացուց հեթանոսական բարձրավանդակները եւ Աստարովթի արձանները Յուդայէն (տե՛ս Բ. Մնաց. 17.6): Իր թագաւորութեան երրորդ տարին ան պաշտօնեաներ ուղարկեց՝ սորվեցնելու համար Յուդայի բոլոր քաղաքներուն մէջ: Անոնք վերցուցին Տիրոջ օրէնքի օրինակները եւ գացին Յուդայի բոլոր քաղաքները՝ սորվեցնելով ժողովուրդին:

Ի՞նչ արդիւնքներ ունեցաւ Յովսափատի կառավարումը: «Այդ ժամանակ Տիրոջ վախը իջաւ բոլոր շրջակայ թագաւորութիւններուն վրայ՝ այնպէս, որ անոնցմէ ոչ մէկը կ'ուզէր պատերազմ յայտարարել Յովսափատի դէմ: Փղշտացիներէն ոմանք պարգեւներ բերին անոր... Եւ Յովսափատը աւելի ու աւելի զօրաւոր դարձաւ» (Բ. Մնացորդաց 17.10-12, NLT): Ատորմէ յետոյ գրուած է. «Յովսափատը մեծ հարստութիւն եւ համբաւ ունէր» (Բ. Մնացորդաց 18.1, NLT): Անոր եւ Յուդային դէմ բանակներ յարձակեցան, սակայն Աստուած այնպէս ըրաւ, որ այդ բանակները ոչնչացուցին զիրար, եւ այդ պատճառով Յուդան հարուստ աւար վերցուց:

Այդ ամէնէն յետոյ գրուած է. «Եւ Տէրը հաստատեց Յովսափատի իշխանութիւնը Յուդայի թագաւորութեան վրայ... Ան դարձաւ շատ հարուստ եւ մեծ համբաւ ունեցաւ: Ան խորապէս նուիրուած էր Տիրոջ ճանապարհներուն» (Բ. Մնացորդաց 17.5,6, NLT):

Ան մեծ սխալ մը գործեց՝ դաշինք կնքելով կռապաշտ Աքաբ թագաւորի ընտանիքին հետ: Քիչ մնար ան սպաննուէր այդ պատճառով, եւ այդ պատճառով ապականեցաւ անոր որդիին բնաւորութիւնը: Յէու անունով մարգարէ մը յանդիմանեց զինք. «Ինչո՞ւ կ'օգնես անօրէններուն եւ կը սիրես զանոնք, որոնք կ'ատեն Տէրը» (Բ. Մնացորդաց 19.1,2, NLT): Այնուամենայնիւ, Յովսափատը եւ Յուդան, ընդհանուր առմամբ, մեծապէս բարգաւաճեցան անոր հնազանդութեան հետեւանքով, որ, անկասկած, կ'ենթադրէր պայքարը ժողովուրդի շարունակական մեղքին (կռապաշտութեան) դէմ:

7. Յովրամ. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:
8. Ոքոզիա. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:
9. Գոթողիա (թագուհի). Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:
10. Յովաս. Անոր մասին գրուած է. «[Ան] վարուեցաւ Տիրոջը հաճելի կերպով» (Բ. Մնացորդաց 24.2, NLT): Այնուամենայնիւ, որպէս երկրի ղեկավար՝ ան բոլորովին ուրիշ ձեւով վարուեցաւ: Ան չկործանեց այն բարձրավանդակները, որոնց մէջ մարդիկ կուռքեր կը պաշտէին, այսինքն՝ կոչ չըրաւ այն ժողովուրդին, որուն ինքը կ'առաջնորդէր, ապաշխարել իրենց շարունակական մեղքէն: Գրուած է, որ որոշ ժամանակ անց «Յուդայի առաջնորդները... համոզեցին զինք լսել իրենց խորհուրդին: Անոնք որոշեցին ձգել Տիրոջ տաճարը... եւ փոխարէնը երկրպագեցին Աստարովթներու արծաններու եւ կուռքերու» (Բ. Մնացորդաց 24.17,18, NLT):

Ան ենթարկուեցաւ այն ժողովուրդի ազդեցութեան, որուն վրայ ինքը պէտք է ազդեցութիւն ձգէր: Գրուած է, որ «այդ մեղքին պատճառով Յուդայի եւ Երուսաղէմի վրայ Աստուածային բարկութիւն եկաւ» (խօսք 18, NLT): Անոր քով մարգարէ մը եկաւ եւ ըսաւ. «Ինչո՞ւ չէք հնազանդիր Տիրոջ պատուիրաններուն եւ դուք ձեզի առիթ չէք տար բարգաւաճելու» (խօսք 20, NLT): Եւ, ի վերջոյ, «այդ տարուան գարնան... ասորիներու բանակը եկաւ Յովասի դէմ: Անոնք... սպաննեցին երկրի բոլոր ղեկավարները... [տարին] աւարը իրենց հետ՝ դէպի... Դամասկոս... Ասորիները հարձակեցան փոքր բանակով: Տէրը օգնեց անոնց պարտութեան մատնել Յուդայի շատ անելի մեծ բանակը... Եւ Յովասի դէմ դատաստան կատարուեցաւ» (խօսքեր 23,24, NLT): Ան վիրաւորուեցաւ ասորիներու կողմէն, իսկ յետոյ սպաննուեցաւ: Յովասի գահակա-

լութիւնը կը նկարագրէ ժողովուրդի շարունակական մեղքին չհակառակուող առաջնորդի եւ նման դիրքորոշման գարհուրելի հետեւանքները:

11. Ամասիա. Գրուած է. «Ամասիան վարուեցաւ Տիրոջը հաճելի կերպով, բայց ոչ՝ ամբողջ սրտով» (Բ. Մնացորդաց 25.2, NLT): Ան «չկործանեց հեթանոսական սրբատեղիները, եւ ժողովուրդը տակաւին զոհաբերութիւններ կը մատուցէր ու խունկ կը ծխէր ատոնց մէջ» (Դ. Թագաւորաց 14.4, NLT): Ատոր հետեւանքները բացասական էին նաեւ թագաւորութեան համար: Ամասիան պարտութեան մատնեց Եդովմը եւ շատ հպարտացաւ: Անոր հպարտութիւնը դրդեց անոր պատերազմ յայտարարելու Իսրայէլի թագաւոր Յովասին: Յովասը զգուշացուց զինք հեռու մնալ իր երկրէն: Ամասիան չլսեց, եւ մեծ պարտութիւն կրեց Իսրայէլի բանակէն: Անոր գերեցին: Իսրայէլցիները քանդեցին 180 մեթր Երուսաղէմի պարիսպէն եւ իրենց հետ տարին Տիրոջ տաճարի ամբողջ ոսկին, արծաթը եւ բոլոր անօթները: Իսրայէլցիները վերցուցին թագաւորական պալատի գանձերը, ինչպէս նաեւ՝ շատ գերիներ: Ամասիան սպանուեցաւ (տե՛ս Բ. Մնաց. 25.11-28): Կրկին, մենք կը տեսնենք, որ իրավիճակները բարենպաստ չէին այն առաջնորդի համար, որ արեց այն, ինչ որ հաճելի էր Տիրոջը, սակայն չընդդիմացաւ իր հպատակներուն շարունակական մեղքին:
12. Ոգիա (կամ՝ Ագարիա). Ան վարուեցաւ Տիրոջը հաճելի կերպով, եւ քանի տակաւին ան կը փնտռէր Տէրը, Աստուած բարգաւաճում կու տար անոր: Ան շատ ազդեցիկ եւ յաջողակ դարձաւ: Թէեւ ոչինչ գրուած է այն մասին, թէ ինչ կ'ընէր ան կռապաշտութեան վայրերու վերաբերեալ, մենք գիտենք, որ ան մահացաւ որպէս բորոտ՝ հպարտութեան պատճառով:
13. Յովաթամ. Այս թագաւորի մասին շատ բան գրուած չէ: Ան կը վարուէր Տիրոջը հաճելի կերպով, սակայն ժողովուրդը կը շարունակէր երթալ իր ապականած ճանապարհներով: Յաւոք, «Ան չկործանեց հեթանոսական սրբատեղիները, եւ ժողովուրդը տակաւին զոհեր կը մատուցէր ու խունկ կը ծխէր ատոնց մէջ» (Դ. Թագաւորաց 15.35, NLT): Վերջաւորութեան, «այդ օրերուն մէջ Տէրը ուղարկեց Ասորեստանի Ռասին թագաւորը եւ Իսրայէլի Փակէէ թագաւորը՝ Յուդայի վրայ յարձակելու համար» (Դ. Թագաւորաց 15.37, NLT):
14. Աքագ. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:
15. Եգեկիա. Եգեկիայի հայրը՝ Աքագը, շատ անօրէն թագաւոր էր: Ան փակեց տաճարի դռները եւ լիովին վերջ տուաւ ճշմարիտ երկր-

պագութեան: Եզեկիան առաջին հերթին բացաւ Տիրոջ տաճարի դռները, մաքրեց բոլոր անմաքուր դարձած անօթները եւ վերանորոգեց տաճարի շէնքը: Անոր մասին գրուած է. «Ան վարուեցաւ Տիրոջը հաճելի կերպով, ինչպէս որ անոր նախահայր Ղաւիթը: Ան հեռացուց հեթանոսական սրբատեղիները, կործանեց սրբազան սիւները եւ կոտորատեց Աստարովթի արծանները: Ան փշրեց այն պղինձէ օձը, որ պատրաստած էր Մովսէսը, որովհետեւ Իսրայէլի ժողովուրդը զոհեր կը մատուցէր ատոր» (Ղ. Թագաւորաց 18.3,4, NLT): Ասկէ յետոյ ան կրկին հաստատեց Տիրոջ Չատկի տօնակատարութիւնը: Ատիկա խոշոր իրադարձութիւն էր, եւ երբ այն աւարտեցաւ, մարդիկ վերադարձան «Յուդայի, Բենիամինի, Եփրեմի եւ Մանասէի բոլոր քաղաքները, եւ անոնք կործանեցին բոլոր սրբազան սիւները, կոտորատեցին բոլոր Աստարովթի արծանները եւ հեռացուցին հեթանոսական սրբատեղիներն ու գոհասեղանները» (Բ. Մնացորդաց 31.1, NLT):

Եզեկիայի մասին գրուած է. «Ան հաւատարիմ մնաց Տիրոջը ամէն ինչի մէջ եւ զգուշօրէն հնազանդեցաւ բոլոր պատուիրաններուն, որոնք Տէրը տուած էր Մովսէսին: Եւ Տէրը Անոր հետ էր, եւ Եզեկիան յաջողակ էր իր բոլոր գործերուն մէջ» (Ղ. Թագաւորաց 18.6,7, NLT): Ատորիները յարձակեցան անոր երկրի վրայ, բայց ի վերջոյ Տիրոջ հրեշտակը գնաց ասորիներու ճամբարը եւ 185.000 զինուոր սպաննեց: Քանի որ Եզեկիան պայքարեցաւ իր հպատակներուն գիտակցուած եւ շարունակական մեղքի դէմ, թէ՛ ինքը, թէ՛ իր ժողովուրդը մեծ բարօրութիւն ունեցան:

16. Մանասէ. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:

17. Ամոն. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:

18. Յովսիա. Ան սկզբունքայնօրէն հնազանդ թագաւոր էր՝ թէ՛ անձնական կեանքին մէջ, թէ՛ կառավարման մէջ: Անոր մասին գրուած է. «Թագաւորը կարդաց [Երուսաղէմի եւ Յուդայի ամբողջ ժողովուրդին] ամբողջ Ուխտի Գիրքը, որ գտնուած էր Տիրոջ տաճարին մէջ» (Ղ. Թագաւորաց 23.2, NLT): Ատորմէ յետոյ ան նորոգեց ուխտը եւ պատուիրեց քահանաներուն հեռացնել Տիրոջ տաճարէն բոլոր առարկաները, որոնք կ'օգտագործէին Բահադին, Աստարովթին եւ երկնային բոլոր զօրքերուն երկրպագելու համար: Ան այրեց ատոնք եւ ցրեց ատոնց մոխիրը կռապաշտներու գերեզմաններուն վրայ:

Այս թագաւորը այնքան բան ըրաւ՝ գիտակցուած եւ շարունակական անհնազանդութենէն ազատելու համար: Ես շրջանակով նշեցի բոլոր հատուածները, որոնց մէջ գրուած է, որ Յովսիան «դուրս հանեց,

այրեց, դադրեցուց, հանեց (կամ՝ հեռացուց), փշրեց, մոխիր դարձուց, քանդեց, պղծեց (կամ՝ կործանեց)», եւ մնացած բոլոր բառերը, որոնք կ'օգտագործուէին Յուդայի մէջ՝ գիտակցուած մեղքի դէմ պայքարելու վերաբերեալ: Միայն Դ. Թագաւորաց 23-րդ գլուխին մէջ քսանչորս այսպիսի դէպք նշուած է: Այս թագաւորի մասին գրուած է. «Նախապէս երբեք չէր եղած Յովսիայի պէս թագաւոր, որ դարձաւ Տիրոջը իր ամբողջ սրտով, անծով եւ զօրութեամբ՝ հնազանդելով Մովսէսի բոլոր օրէնքներուն: Եւ անորմէ՛ յետոյ անոր նման թագաւոր այլեւս չէղաւ» (Դ. Թագաւորաց 23.25, NLT): Թէ՛ ան, թէ՛ ժողովուրդը բարօրութիւն ունէին անոր կենդանութեան օրոք:

19. Յովաքազ. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:

20. Յովակիմ. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:

21. Յովաքին. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:

22. Սեդեկիա. Արդարութեամբ չվարուեցաւ Տիրոջ առջեւ:

Ամփոփենք այս թագաւորներու պատմութիւնները: Երկարատեւ բարօրութիւն ունեցան այն առաջնորդները, որոնք ե՛ւ Աստուածահաճոյ կեանք կը վարէին, ե՛ւ կը պայքարէին իրենց հպատակներու շարունակական մեղքերու (կռապաշտութեան) դէմ: Իրավիճակը նոյնքան բարենպաստ չէր, երբ առաջնորդը Աստուածապաշտ կեանք կը վարէր, սակայն չէր հակառակէր ժողովուրդի մեղքերուն:

Այսօր եկեղեցին պէտք է դաս քաղէ այս օրինաչափութենէն: Մենք դժուարութիւններու կը բախինք, եթէ ընդամէնը խնդրենք առաջին անգամ եկած մարդոցմէ՝ աղօթել մեղաւորի աղօթքը՝ օգտագործելով այն որպէս ծածկոց, եւ ճշմարիտ ապաշխարութեան կոչ չընենք անոնց: Ի՞նչ, եթէ մեր «նորադարձները» չեն ալ պատրաստուիր ձգելու իրենց մեղքերը: Կը նշանակէ՝ մեր եկեղեցական համայնք կը հրաւիրենք կռապաշտները:

Մենք՝ առաջնորդներս, կրնանք աստուածապաշտ ըլլալ մեր անձնական կեանքին մէջ, սակայն, եթէ չյանդիմանենք «մեղքի բարձրավանդակները» մարդոց կեանքերուն մէջ, կ'ըլլան հետեւանքներ՝ նման այն բանին, ինչ որ կատարուեցաւ վերոյիշեալ թուարկուած թագաւորներուն հետ: Հնարաւոր է՝ մենք կարճատեւ յաջողութեան հասնինք, սակայն բարեյաջող աւարտ չենք ունենար: Մէկ քանին այն թագաւորներէն, որոնք չէին պայքարեր իրենց ժողովուրդի անհնազանդութեան դէմ, սկզբնական շրջանին յաջողակ էին, սակայն, ի վերջոյ, հարկադրուած էին բախելու իրենց թերի առաջնորդութեան հետեւանքներուն:

Եթէ մենք ընտրենք Աւետարանը տարածելու հակառակութիւններ չառաջացնող ուղին, մեզ կը շրջապատենք կռապաշտ մարդոցմով,

որոնք կը հաւատան, որ ճիշդ դիրք ունին Աստուծոյ առջեւ: Ըստ էութեան, մենք խոցելի կը դարձնենք մեր եկեղեցական համայնքը հոգեւոր քրիպտոնաքարի համար:

գործնական քայլ

Մարդիկ դիւրաբար կրնան կորսնցնել ընդհանուր պատկերը՝ մանրութներով զբաղելու պատճառով: Ասացուածք մը կայ. «Մենք կը կորսնցնենք անտառը՝ փորձելով փրկել ծառերը»: Ասիկա կրնայ տեղի ունենալ նաեւ Աստուծոյ Խօսքը ուսումնասիրելու ժամանակ, յատկապէս եթէ մենք կը դիտարկենք մեծ պատմական փուլեր: Այնուամենայնիւ, թեմատիկ եւ ժամանակագրական ուսումնասիրութիւնը, ինչպէս այս գլուխին մէջ, ցոյց կու տայ մեզի այնպիսի բաներ, որոնք ուրիշ ձեւով չէինք նկատեր: Մենք կը տեսնենք ընդհանուր պատկերը:

Իսրայէլի եւ Յուդայի պատմութեան ընդհանուր պատկերը այն է, որ Աստուած բարգաւաճում կու տար առաջնորդներուն, երբ անոնք կ'ընէին աւելին, քան իրենց կեանքերը շտկելը, եւ իրական պատասխանատուութիւն կը ստանձնէին բոլոր բնագաւառներուն մէջ, որոնց մէջ Աստուած իշխանութիւն տուած էր իրենց:

Թերեւս դուք թագաւոր կամ թագուհի չէք: Թերեւս դուք նոյնիսկ տնօրէն կամ ղեկավար չէք ձեր աշխատավայրին մէջ: Այնուամենայնիւ, դուք ունիք ազդեցութեան շրջանակ, որուն մէջ Աստուած իշխանութիւն տուած է ձեզի: Այն, թէ որքանով պատասխանատուութիւն կը ստանձնենք ոչ միայն ձեր անձնական կեանքին մէջ, այլեւ ձեր ազդեցութեան շրջանակին մէջ, կ'որոշէ, թէ ինչպէս Աստուած պիտի գործէ ձեզի համար: Խնդրեցէ՛ք Աստուծմէ, որ ցոյց տայ ձեր ազդեցութեան շրջանակը, նաեւ իմաստութիւն տայ ձեզի՝ սորվեցնելով, թէ ինչպէս պատասխանատուութիւն ստանձնէք եւ արդարութիւն հաստատէք աստոր մէջ: Գրի՛ առէք այն, ինչ որ Ան կ'ըսէ ձեզի, իսկ յետոյ ծրագրեցէ՛ք, թէ ինչպէս պիտի ընէք ատիկա:

ՄԱՌԻՏԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«ԲԱԺԻՆ 4»

ԱՌԵՐԵՍՈՒՄ

Եկէք սկսինք քրիստոնաքարը կործանելու ընթացքը՝ թէ՛ անհատապէս, թէ՛ որպէս եկեղեցական համայնք: Նախ եւ առաջ «առերեսուիւնք» այն հետեւանքներուն, որոնք կը յառաջանան, երբ կ'անտեսենք այս մահացու երեւոյթը:

Երբ կը սորվէի միջին դպրոցի մէջ, մենք մասնակցեցանք պարտադիր երկօրեայ դասընթացքի մը թմրանիւթերու մասին, որուն ժամանակ մեզի կը ներկայացնէին թմրանիւթերու օգտագործման զարհուրելի հետեւանքները: Քրիստոսին հանդիպելէ առաջ, այն տարիներու ընթացքին, երբ ես երեկոյթներու մշտական մասնակից էի, հեռու կը մնայի ամէն տեսակի թմրանիւթերէն. պատճառը վախն էր ատոնց հետեւանքներէն:

Անկասկած, գոյութիւն ունի անառողջ վախ, որմէ Յիսուս ազատեց մեզ: Այնուամենայնիւ, գոյութիւն ունի նաեւ Աստուածային երկիւղ՝ նման այն զգացումին, որ ես ունեցայ դպրոցին մէջ, երբ իմացայ թմրանիւթերու մասին: Այս երկիւղը կը պահէ մեզ այն ամէնէն, ինչ որ կրնայ խլել մեր կեանքը: Աստուծոյ խօսքին մէջ գրուած է. «Քանի դեռ Անոր հանգիստին մէջ մտնելու խոստումը կը մնայ, եկէք վախճանք, որ չըլլայ թէ ձեզմէ մէկը գրկուի ատորմէ» (Եբրայեցիս 4.1, NKJV), եւ «Տիրոջը վախովը մարդ չարութենէ կը հեռանայ» (Առակաց 16.6):

Այս գլուխին մէջ կրկին պիտի խօսինք քրիստոնեայ առաջնորդներուն մասին: Այնուամենայնիւ, այս ուղերձը պէտք է զգոնութիւն հաղորդէ բոլորիս, քանի որ հաւատացեալը «գլուխ» է, «ոչ թէ՛ պոչ» (Երկրորդ Օրինաց 28.13): Մենք կանչուած ենք՝ ըլլալու Անոր Թագաւորութեան դեսպանները, ինչ որ կարելոր պաշտօն է:

Արդեօ՞ք մենք մտածած ենք մեր ծառայութեան մարտավարութեան մասին՝ Սուրբ Գիրքի լոյսի ներքոյ: Ինչո՞ւ կը վարանինք մեղքի բարձրավանդակներուն հակառակելու հարցին մէջ: Մարդիկ, որոնք կը փափաքին ճանչնալ զԱստուած, մեզի կը նային՝ ճշմարտութիւնը լսելու համար: Սակայն մենք չենք խօսիր այն մասին, ինչ որ կը խանգարէ գանոնք անկեղծ յարաբերութիւններ ունենալու Աստուծոյ հետ: Մի՞թէ մենք կը պաշտպանենք զանոնք: Իսկ չե՞նք մտածած այն մասին, որ ապագայի տեսանկիւնէն՝ մենք կը վնասենք զԱստուած փնտռողները: Ինչո՞ւ մենք պէտք է խաբենք այն մարդիկ, որոնք կու գան՝ լսելու յաւիտենական կեանքին մասին:

Անոնց հետ պիտի կատարուի նոյնը, ինչ որ կատարուեցաւ Անժելային հետ: Քանի որ Անժելային չէին ըսած ճշմարտութիւնը ճիշդ սկիզբէն, անոր ամուսնութիւնը յայտնուեցաւ անկայուն եւ դժուարին վիճակին մէջ: Ինչո՞ւ մենք կ'ուզենք, որ մարդիկ մտածեն, որ կրնան բերել շարունակական մեղքը իրենց եւ Յիսուսին յարաբերութիւններուն մէջ: Ատիկա անհնար է: Հնարաւոր է, որ մենք կ'առաջարկենք այնպիսի փոխյարաբերութիւն, որ իրականութեան մէջ գոյութիւն չունի: Հնարաւոր է, որ մենք կեղծ փրկութիւն կ'առաջարկենք:

Եկէք նայինք այս հարցին բոլոր կողմերէն: Մենք պիտի տեսնենք, թէ ատիկա ինչ հետեւանքներ պիտի ունենայ զԱստուած փնտռող մարդոց համար, այն առաջնորդներուն համար, որոնք չեն յիշատակեր քրիստոնաքարը, եւ, վերջապէս, եկեղեցական համայնքին համար: Ապագայի տեսանկիւնէն, երեք խումբերուն համար ալ հետեւանքները կործանարար են:

ԶԱՍՏՈՒԱԾ ՓՆՏՐՈՂՆԵՐԸ

Մենք պէտք է յիշենք, որ Ղատաստանին օրը Յիսուսին մօտ պիտի գան ոչ թէ մէկ քանին, այլ՝ *շատերը*, որոնք ի սրտէ պիտի հաւատան, որ կրնան մուտք գործել Աստուծոյ Թագաւորութիւն, սակայն պիտի լսեն հետեւեալը. «Մէկդի՛ գացէք քովէս դուք, որ անօրէնութիւն կը գործէիք» (Մատթէոս 7.23):

Որո՞նք են այս մարդիկ: Անոնք ոգեկոչնե՞ր են, կը պատկանին այլ կրօններո՞ւ, թէ՞ կը գտնուին աղանդներու թակարդին մէջ: Եթէ ուսումնասիրենք Յիսուսին խօսքերը, պիտի տեսնենք, որ անոնք անմիջապէս մեր միջեւ են. Անոնք կը յաճախեն մեր եկեղեցիները եւ կը դաւանին, որ քրիստոնէայ են: Ան կ'ըսէ. «Ոչ թէ ամէն ով, որ Ինձի «Տէ՛ր, Տէ՛ր», կ'ըսէ, պիտի մտնէ Երկնքի Թագաւորութիւնը, հապա անիկա, որ Իմ Երկնա-

ւոր Հօրս կամքը կը կատարէ» (Մատթէոս 7.21): Յիսուս կը խօսի այն-պիսի մարդոց մասին, որոնք կը պնդեն, որ Յիսուս Տէրն է: Ոչ թէ ժողով Սմիթը, Մուհամմէտը, Պուտտան, Հարէ Քրիշնան, Քոնֆուցիոսը, Ռան, Սիքսը կամ ուրիշ այլ կեղծ մարգարէ կամ աստուած: Ո՛չ, այս մարդիկ, որոնց թոյլ չտրուեցաւ մուտք գործելու Երկինք, Յիսուս Քրիստոսին կ'անուանեն իրենց «Տէրը» եւ ատիկա կ'ընեն մեծ ջերմեռանդութեամբ:

Ինչո՞ւ «Տէր» բառը կրկնակի կ'օգտագործուի այս խօսքին մէջ: Կրկին, ինչպէս արդէն նշուած է, որեւէ բառի կամ արտայայտութեան կրկնութիւնը Աստուածաշունչին մէջ պատահական չէ: Այնուամենայնիւ, այս միջոցը կը նշանակէ ոչ միայն շեշտադրում, այլեւ ուժգին զգացումներ:

Օրինակ, երբ Դաւիթ թագաւորը իմացաւ, որ Յովաբի բանակը սպաննած էր իր որդին, ան խիստ զգացմունքօրէն արծազանգեց ատոր: «Թագաւորը իր երեսը ծածկեց ու *մեծ ծայնով մը կը կանչէր*. «Որդեա՛կ իմ, Աբիսողո՛մ, Աբիսողո՛մ, որդեա՛կ իմ, որդեա՛կ իմ» (Բ. Թագաւորաց 19.4): Ամենայն հաւանականութեամբ, Դաւիթը չկրկնեց «որդեակ իմ» բառը. անոր աղաղակը այնքա՛ն վշտալի էր, որ հեղինակը երկու անգամ գրեց այդ բառը, որպէսզի ընթերցողը հասկնայ անոր զգացումները:

Նոյն կերպով, Տէրը ցոյց կու տայ, որ այդ մարդիկ ուժգին զգացումներ ունէին Իր հանդէպ: Անոնք ոչ միայն համաձայն էին այն վարդապետութեան, որ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է, այլեւ զգացմունքօրէն ներգրաւուած էին եւ ջերմեռանդ էին իրենց հաւատքով: Խօսքը այն մարդոց մասին է, որոնք ոգելորութեամբ կը վերաբերին քրիստոնեայ ըլլալուն եւ, ամենայն հաւանականութեամբ, խանդավառութեամբ կը խօսին իրենց հաւատքի մասին:

Անոնք ոչ միայն լիարժէք կերպով կը սատարեն Քրիստոսի ուսմունքները, այլեւ ներգրաւուած են Անոր ծառայելու մէջ.

«Ես կրնամ տեսնել ատիկա. վերջին դատաստանին հազարաւորները վեհ կեցուածքով կը մօտենան Ինծի եւ կ'ըսեն. «Տէ՛ր, մենք կը քարոզէինք Ուղերձը. մենք կը հանէինք դեւերը. բոլորը կը խօսէին այն նախագիծերու մասին, որոնք մենք ստացած էինք Աստուծմէ՛»» (Մատթէոս 7.22, MSG):

«Ուղերձ» շրջաստութիւնը ցոյց կու տայ, որ այդ մարդիկ դիտորդներ չէին: Անոնք անմիջապէս ներգրաւուած էին իրենց եկեղեցիներու աշխատանքին մէջ կամ կ'աջակցէին այդ աշխատանքին: Անոնք նոյնպէս յայտնի էին որպէս Աւետարանին հաւատացող մարդիկ. «Մենք կը քարո-

զէինք Ուղերծը»: Ըստ էութեան, անոնք կը փոխէին մարդոց կեանքերը:

Այս շրջասութեան ենթարկուած թարգմանութեան մէջ գրուած է «հազարաւորները» բառը, սակայն գրեթէ բոլոր թարգմանութիւնները կ'օգտագործեն «շատերը» բառը: Յունարէնի մէջ այս բառը «փոյլուս»-ն է, որուն սահմանումն է՝ «մեծ թիւ, քանակ եւ չափ ունեցող»: Այս բառը յաճախ կ'օգտագործուի «մեծ մասամբ» իմաստով: Ամէն պարագային, Յիսուս չի խօսիր մարդոց փոքր խումբի մասին, այլ՝ ստուար զանգուածի, եւ հնարաւոր է՝ մեծամասնութեան մասին:

Եկէք ամփոփենք ասիկա. Յիսուս կը խօսի այն մարդոց մասին, որոնք կը հաւատան Աւետարանի ուսմունքներուն. անոնք Տէր կ'անուանեն Յիսուսը, զգացմունքօրէն ներգրաւուած են, կը տարածեն Աւետարանի ուղերծը եւ քրիստոնէական ծառայութեան մէջ են: Մենք դիրաբար կ'անուանենք զանոնք ճշմարիտ քրիստոնէաներ: Ուրեմն, ինչո՞վ անոնք կը տարբերին ճշմարիտ հաւատացեալներէն: Յիսուս կ'ըսէ մեզի. «Այն ատեն յայտնապէս անոնց պիտի ըսեմ, թէ Ես բնաւ ձեզ չէի ճանչնար. մէկդի՛ գացէք քովէս դուք, որ անօրէնութիւն կը գործէիք» (Մատթէոս 7.23):

Այս խօսքի բանալի արտայայտութիւնը «անօրինութիւն գործելն» է: Նախ, ի՞նչ է անօրինութիւնը: Յունարէնի մէջ այն «անոմիա» բառն է: «Թէլըրի յունարէն բառարանը» կը սահմանէ այն որպէս «առանց օրէնքի [ըլլալու] վիճակ՝ օրէնքի մասին անտեղեակ ըլլալու կամ այն խախտելու պատճառով»: Պարզ ըսելու համար՝ անօրէն մարդը չ'ենթարկուիր Աստուծոյ Խօսքի իշխանութեան: Ան շարունակաբար կը մեղանչէ՝ առանց ճշմարիտ ապաշխարութեան: Այսպիսի մարդը մերօրեայ կռապաշտ է:

Այսպիսով, անօրինութիւնը *քրիստոնաքարի* ձեւերէն մէկն է:

Այս տղամարդիկ եւ կանայք չեն սայթաքի *ժամանակ առ ժամանակ*. անոնք շարունակաբար կը շրջանցեն, կ'անտեսեն եւ կ'անարգեն Աստուծոյ Խօսքը եւ չեն հնազանդիր ատոր: Մեղսալի վարքը կը դառնայ անոնց կենսաոճը: Անոնցմէ ոմանք համոզուած են, որ որոշ սուրբգրային հատուածներ այլ բան կը նշանակեն, միւսները կը մտածեն, որ ատոնք չեն վերաբերիր մեր օրերուն, եւ մեծամասնութիւնը կը հաւատան, որ ծածկուած է ոչ սուրբգրային շնորհքով:

Ցաւալի է, բայց ես համոզուած եմ՝ անոնք կ'ապրին մեղքի մէջ մասամբ այն պատճառով, որ անոնց առաջնորդները երբեք չեն յանդիմանած անոնց կենսաոճը եւ ճշմարիտ ապաշխարութեան կոչ չեն ըրած: Ոչ ոք ըսած է անոնց, որ անկարելի է իրենց կուռք-փրեկաններուն մտցնել Յիսուս Քրիստոսի հետ ունեցած ուխտի յարաբերութիւններուն մէջ: Եթէ անոնք իսկապէս շնորհքով փրկուած ըլլային, ոչ միայն կը խորշէին մեղ-

քի մասին մտքերին, այլև որոշում կը կայացնէին ձգել գիտակցուած եւ շարունակական մեղքը: Անոնք կը խաչէին իրենց մարմինը՝ կիրքերով եւ ցանկութիւններով, եւ կը հետեւէին Աստուածային բնաւորութեանն ու պտղաբերութեան: Ճշմարիտ հաւատացեալը այսպիսին է:

Հետաքրքրական է նշել, որ Յիսուս յայտարարեց. «Երբեք ձեզ չե՛մ ճանչցած»: «Ճանչնալ» բառը յունարէն «կինոսքօ»-ն է, որ կը նշանակէ «մտերմօրէն ճանչնալ»: Այդ մարդիկ երբեք չեն ունեցած իրական յարաբերութիւններ Անոր հետ: Թէեւ անոնք «Տէր» կ'անուանեն Յիսուսը, անոնց համար ատիկա պարզապէս տիտղոս է, քանի որ չեն հնազանդիր Անոր: Աստուծոյ հետ իրական հաղորդակցութիւն ունենալու ապացոյցը այն է, որ մարդը կը պահէ Անոր Խօսքը.

«Եթէ Անոր պատուիրանները պահենք, այն ատեն կը գիտնանք, թէ զԱնիկա կը ճանչնանք: Ան, որ կ'ըսէ, թէ «Ես զԱնիկա ճանչցայ» ու Անոր պատուիրանները չի պահեր, ստախօս է, ու անոր մէջ ճշմարտութիւն չկայ» (Ա. Յովհաննէս 2.3,4):

Այս պնդումը բոլորովին համահունչ է այն բանին, թէ ինչպէս Յիսուս սկսաւ այս հատուածը. «Դուք կրնաք ճանչնալ մարդիկը իրենց գործերով» (Մատթէոս 7.20, NLT): Գործեր ըսելով՝ Յիսուս նկատի չունի քրիստոնէական ծառայութիւնը, Աւետարանը քարոզելը կամ եկեղեցի յաճախելը, քանի որ անոնց, որոնց թոյլ պիտի չտրուի Երկինք մտնելու, պիտի ունենան այս յատկանիշները: Այսօր շատերը Աստուծոյ զաւակ պիտի համարեն այն մարդը, որ Տէր կը դաւանի Յիսուսին, կը հաւատայ Անոր ուսմունքներուն, զգացմունքօրէն ներգրաւուած է եւ գործուն մասնակցութիւն ունի քրիստոնէական ծառայութեան մէջ: Սակայն մենք յստակ կը տեսնենք Յիսուսի Խօսքերէն, որ գոյութիւն ունին այլ յատկանիշներ, որոնցմով կարելի է բնորոշել ճշմարիտ հաւատացեալը:

Թոյլ տուէք հետեւեալը ըսելու. անկասկած, բոլոր այս յատկանիշները բնորոշ են ճշմարիտ հաւատացեալներուն: Ոչ ոք կրնայ ճշմարիտ հաւատացեալ ըլլալ՝ առանց ասոնց: Այնուամենայնիւ, միայն այս յատկանիշները ունենալը չի նշանակեր, որ մարդը իրականութեան մէջ Աստուծոյ զաւակ է: Որոշիչ գործօնը հետեւեալն է. Արդէ՞ք ան ապաշխարած է իր գիտակցուած եւ շարունակական մեղքերէն, եւ Արդէ՞ք ան ջերմեռանդօրէն կը ձգտի հնազանդելու Անոր: Գոյութիւն ունի անսխալական միջոց մը՝ ասիկա որոշելու համար. «Անոնք կը համարեն Յիսուսին «այլեւ չմեղանչես» բառերը ընտրովի՞, թէ՞ պարտադիր» (տե՛ս Յովհ. 5.14):

Քարոզիչները

Այժմ դիտարկենք երկարաժամկետ հետեւանքները առաջնորդներու եւ Աւետարանի քարոզիչներու համար: Սուրբ Գիրքը զգաստացնող դատաստան կը հռչակէ այն մարդոց դէմ, որոնց վստահուած է Աւետարանը, բայց որոնք չեն քարոզեր ճշմարտութեան հակառակութիւն յառաջացնող կողմերը: Ուշադրութեամբ կարդացէք այս զգուշացումը, որ Աստուած կու տայ Իր աւետաբերներուն.

«Եթէ Ես *զգուշացնեմ* անօրէնները՝ ըսելով. «Դուք ենթակայ էք մահապատիժի», բայց դուն չփոխանցես այդ *զգուշացումը*, անոնք պիտի մահանան իրենց մեղքերուն մէջ: Իսկ Ես պատասխանատուութեան պիտի կանչեմ քեզ անոնց մահուան համար: Եթէ դուն *զգուշացնես* զանոնք, եւ անոնք հրաժարին ասպաշխարելէ եւ շարունակեն մեղանչել, անոնք պիտի մահանան իրենց մեղքերուն մէջ: Բայց դուն *պիտի փրկես դուն քեզ*, որովհետեւ դուն հնազանդեցար Ինծի: Եթէ արդարները հեռանան իրենց արդար վարքէն եւ անտեսեն այն արգելքները, որոնք Ես պիտի դնեմ անոնց ճանապարհին, անոնք պիտի մահանան: Եւ եթէ դուն *չզգուշացնես* զանոնք, անոնք պիտի մահանան իրենց մեղքերուն մէջ: Անոնց արդար գործերէն ոչ մէկը կը յիշուի, եւ Ես *պատասխանատուութեան կը կանչեմ քեզ* անոնց մահուան համար: Բայց եթէ դուն *զգուշացնես* արդարները չմեղանչել, եւ անոնք լսեն քեզ եւ չմեղանչեն, անոնք պիտի ապրին, եւ դուն նոյնպէս *դուն քեզ պիտի փրկես*» (Եզեկիէլ 3.18-21, NLT):

Ուշադրութիւն դարձուցէք, թէ որքան յաճախ վերոյիշեալ խօսքերուն մէջ կ'օգտագործուի «զգուշացնել» բառը: Թոյլ տուէք անկեղծօրէն հարցնելու հովիւներուն, առաջնորդներուն եւ բոլոր հաւատացեալներուն, քանի որ բոլորիս յանձնարարուած է հասնիլ կորսուածներուն եւ սիրով յանդիմանել մեղաւորները: Մի՞թէ կ'ուզէք հաշուետու ըլլալ այն մարդոց համար, որոնց դուք համոզած էք, որ իրենք ունին արդար դիրք Աստուծոյ առջեւ, այնինչ, իրականութեան մէջ այդպէս չէ, քանի որ դուք *չէք զգուշացուցած* զանոնք շարունակական մեղքը ձգելու մասին: Անոնք սխալմամբ կը համարեն, որ փրկուած են, սակայն *զգուշացումներ* չստանալու պատճառով կը շարունակեն մեղքին մէջ ապրիլ, եւ Դատաստանին օրը պիտի լսեն. «Մէկդի՛ գացէք քովէս»:

Թերեւս ճիշդ ասիկա՞ է պատճառը, որ Աւետարանը պէտք է քա-

րոզել՝ «զգուշացնելով իւրանչիւր մարդ եւ սորվեցնելով ամէն մարդու ամէն իմաստութեամբ, որ կարենանք իւրաքանչիւր մարդ կատարեալ կանգնեցնել Քրիստոս Յիսուսին մէջ» (Կողոսացիս 1.28, NKJV): Մենք պէտք է ոչ միայն սորվեցնենք, այլեւ՝ *զգուշացնենք*:

Մտածեցէք, թէ ինչ ըսաւ Աստուած վերոյիշեալ խօսքերուն մէջ. «Ես պատասխանատուութեան պիտի կանչեմ քեզ անոնց մահուան համար»: Դուք մտածա՞ծ էք այն մասին, որ մեր անփութութեան հետեւանքները յաւիտեան մեր առջեւ պիտի ըլլան: Եսային կը գրէ, թէ ինչ պիտի ըլլայ նոր երկնքի եւ նոր երկրի ժամանակ.

«Ամբողջ մարդկութիւնը պիտի գայ երկրպագելու Ինծի շաբաթ առ շաբաթ եւ ամիս առ ամիս: Եւ երբ անոնք դուրս ելլեն, պիտի տեսնեն անոնց մահացած մարմինները, որոնք ապստամբած են Իմ դէմ: Որովհետեւ որդերը, որոնք կը լափեն զանոնք, երբեք չեն մահանար, եւ կրակը, որ կ'այրէ զանոնք, երբեք չի հանգչիր: Բոլոր անոնց քովէն անցնողները պիտի նային անոնց բացարձակ զարհուրանքով» (Եսայի 66.23,24, NLT):

Մի՞թէ կը կարծէք, որ «պատասխանատուութեան կանչուածները» պարզապէս պիտի մոռնան այն մասին, որ այդ մարդիկ կ'այրին կրակի լիճին մէջ, քանի որ իրենք չեն փափաքած զգուշացնել զանոնք:

Եթէ մեր փիլիսոփայութիւնը պարզապէս այնպիսին է, որ ընդունինք մարդիկը՝ ինչպէս որ կան, առաջարկենք անոնց աղօթել փրկութեան աղօթքը՝ առանց ապաշխարութեան, եւ Երկինք երթալու կեղծ յոյս տանք, ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն պիտի ըլլայ հետեւանքը: Մենք կեղծ ապահովութիւն կու տանք մեր ունկնդիրներուն եւ անոնց սրտէն կը հեռացնենք ճշմարտապէս ապաշխարելու ցանկութիւնը: Ինքնին հասկնալի է, որ մենք «բացարձակ զարհուրանքով» պիտի նայինք անոնց, որ մոլորեցուցած ենք:

Յիշեցէ՛ք Պօղոսին ուշագրաւ խօսքերը. «Եթէ ինչ որ մէկը յաւիտեանական մահ կրէ, *ասիկա իմ մեղաւորութիւնը չէ*, որովհետեւ ես չվարանեցայ ազդարարելէն այն ամէնը, ինչ որ Աստուած կ'ուզէ, որ դուք գիտնաք» (Գործք 20.26,27, NLT): Պօղոսը քաջատեղեակ էր այն մասին, ինչ որ Աստուած ըսաւ Եզեկիէլի միջոցով իւրաքանչիւրին, որ կը քարոզէ Իր խօսքը: Եթէ մենք չքարոզենք Անոր ճանապարհները, պատասխանատուութեան պիտի կանչուինք. կատարուածը պիտի ըլլայ մեր մեղաւորութիւնը: Թերեւս ճիշդ ասիկա է պատճառը, որ Յակոբոս առաքեալը կը գրէ մեզի.

«Թանկագին եղբայրներ եւ քոյրեր, ձեզմէ ոչ բոլորն են, որ պէտք է ուսուցիչներ դառնան եկեղեցիին մէջ, որովհետեւ մենք՝ սորվեցնողներս, աւելի խստօրէն պիտի դատուինք» (Յակոբոս 3.1, NLT):

Այս խօսքերը գրուած չեն Աստուածաշունչին մէջ, որ մենք անտեսենք կամ թեթևօրէն վերաբերինք ատոնց: Աստուած կ'աղերսէ մեզի, որ չպահենք Անոր խօսքերը եւ թեթևօրէն չվերաբերինք շարունակական մեղքէն ապաշխարելու կոչին: Ան կ'ըսէ ասիկա թէ՛ յանուն առաջնորդի, թէ՛ յանուն զԱստուած փնտռողի: Ան կը սիրէ մեզ, բայց Ան սուրբ Աստուած է եւ չի կրնար հանդուրժել մեղաւոր բնութիւնը Իր ներկայութեան մէջ: Այնպէս որ, Ան ելք պատրաստած է. Ան մեծ գին վճարած է, որպէսզի ե՛ւ փրկէ, ե՛ւ զօրութիւն տայ մեզի, որ ազատ ըլլանք մեղքէն: Ուրեմն, ինչպէ՞ս մենք պիտի խուսափինք դատաստանէն, եթէ չսորվեցնենք այս մեծ փրկութեան մասին եւ չընդունինք այն:

Մի՞թէ արժէ անուշադրութեան մատնել այն աւետարանչական կոչը, որ Նոր կտակարանը յստակ կը պահանջէ: Նոր կտակարանի վերջին գիրքի եզրափակիչ խօսքերուն մէջ գրուած է «Եւ եթէ մէկը այս մարգարէութեան Գիրքի խօսքերէն բան մը պակսեցնէ, Աստուած ալ անոր բաժինը պիտի պակսեցնէ Կենաց Գիրքէն եւ Սուրբ քաղաքէն, որ այս Գիրքին մէջ գրուած են» (Յայտնութիւն 22.19): Ինչպէ՞ս կրնանք անտեսել այս զգուշացումը: Ինչպէ՞ս կրնանք չըսել այն մարդոց (որոնք կը ցանկան լսել ճշմարտութիւնը մեզմէ), որ առաջին քայլը դէպի փրկութիւնը՝ մեղքերէն ապաշխարելն է:

Մի՞թէ մենք կը կարծենք, որ գիտենք աւելին, քան Աստուած: Որ աւելի կարեւոր է այնպէս ընել, որ նորեկները եկեղեցի յաճախեն, եւ թերեւ յետագային անոնք համոզուին, որ պէտք է ձգեն մեղքը: Այնուամենայնիւ, եթէ մարդուն արդէն ըսած են, որ ինքը փրկուած է, որովհետեւ աղօթած է ապաշխարութեան աղօթքը եւ ընդունուած է «ընտանիքի» մէջ, ինչո՞ւ ան պէտք է ապաշխարելու անհրաժեշտութիւն զգայ անկէ յետոյ: Չէ՞ որ ան արդէն «ընդունուած է» եւ «ծածկուած է շնորհքով»:

Չարլզ Կ. Ֆիննին մեծ աւետարանիչ էր: Անոր ծառայութիւնը այնքա՛ն հզօր էր, որ աւելի քան մէկ անգամ ամբողջ գիւղաքաղաքներու (իսկ մէկ անգամ՝ Նիւ Եորք նահանգի Ռոչեսթըր քաղաքի) ամենօրեայ գործունէութիւնը կը դադրէր՝ անոր հաւաքոյթներու ազդեցութեան պատճառով: Երբեմն ան քանի մը երեկոյ կը քարոզէր մեղքերէն ապաշխարելու մասին եւ կը քաջալերէր մարդոց ընդունիլ փրկութիւնը՝ այնպէս, որ ներկաները հազիւ նստած կը մնային աթոռներուն: Եւ ամբողջ այդ ընթացքին ան տակաւին փրկութեան համար չէր աղօթեր: Ի

վերջոյ, քանի մը օր յետոյ, ան նման բան մը ըսաւ. «Եթէ դուք կը ցանկաք քրիստոնէայ դառնալ, մենք պիտի ունենանք «հարցման անկիւն» այսօրուան հաւաքոյթէն յետոյ»:

Անոր հաւաքոյթներուն կը փրկուէին հազարաւոր մարդիկ, եւ պատմութիւնը ցոյց կու տայ, որ անոր միջոցով դարձի եկածներու աւելի քան իննսուն տոկոսը հաւատարիմ կը մնար հաւատքին: Այսօր նմանատիպ վիճակագրութիւնները շատ աւելի ցած ցուցանիշներ ունին: Ան մեծ յաջողութիւն ունէր, քանի որ ան կը վարուէր համաձայն Նոր կտակարանի ուսուցման. ան գիտէր, որ լաւագոյն մեթոտները կը գտնուին Աստուծոյ Խօսքին մէջ:

Եկեղեցական համայնքը

Այժմ հասկնալի կը դառնայ, թէ որքան կարելոր է այն ամէնը, ինչին մասին կը խօսէինք այս գիրքի սկիզբը: Եթէ մենք փրկութիւն առաջարկենք այն մարդոց, որոնք կը շարունակեն մեղանչել, մենք խոցելի կը դարձնենք մեր եկեղեցական համայնքները մեղքի թթխմորին համար: Միտումնաւոր գործուող մեղքը արագօրէն կը տարածուի եւ կ'ազդէ թէ՛ անհատներու, թէ՛ եկեղեցական համայնքներու վրայ, ինչպէս որ քրիստոնաքարը՝ Սուփըրհերոսին վրայ:

Մեղքին չհակառակելու պատճառով մենք տկարացուցած ենք մեր եկեղեցիները եւ բնակավայրերը, եւ ասորը հետեւանքով մեր գիւղերը, քաղաքները եւ պետութիւնները չեն տեսներ Աստուծոյ փառքը: Առաջին եկեղեցին կը փոխէր ամբողջ գիւղեր, քաղաքներ, նոյնիսկ տարածաշրջաններ՝ շնորհիւ Աստուծոյ փառքի զօրութեան: Ինչո՞ւ մենք տակաւին չենք փոխած մեր համայնքները քսանմէկերորդ դարու մէջ: Մեր տրամադրութեան տակ գտնուող արուեստագիտական միջոցները (թեքնոլոճի), որոնցմով կրնանք հասնիլ մարդոց, շատ աւելի զարգացած են, քան Առաջին եկեղեցւոյ օրերուն մէջ:

Ինչո՞ւ արհեստական վիժեցումը, շնութիւնը, սեռական անբարոյութիւնը, համասեռամոլութիւնը եւ սեռային (ձենտրոյին) խառնաշփոթը սկսան տարածուիլ Ամերիկայի եւ Արեւմուտքի միւս երկիրներուն մէջ: Պատճառը այն չէ, որ մեր հասարակութիւնները աւելի յառաջադէմ կը դառնան: Անօրինութեան աւելացման նոյն միտումը կը նկատուի չորրորդ եւ հինգերորդ դարերուն մէջ, երբ եկեղեցին կորսնցուց ջերմեռանդութիւնը: Երբ քրիստոնէութիւնը սկսաւ ճանաչուի ստանալ հռովմէական հասարակութեան մէջ, եկեղեցին նմանեցաւ այդ հասարակութեան: Եկեղեցւոյ զօրութիւնը սկսաւ մարիլ, մինչեւ որ այն ընկղմեցաւ ժամա-

նակաշրջանի մը մէջ, որ ներկայիս յայտնի է որպէս Խաւար դարեր:

Ոչ մէկ պարզայի չեմ ուզեր կրկին նման բան տեսնել, եւ ես գիտեմ, որ շատերը համամիտ են հետս: Մենք չենք դադրիր ամբողջ ճշմարտութիւնը սիրով եւ գթասրտութեամբ հռչակելէ:

Կը խնդրե՛մ, միացէ՛ք եւ որոշո՛ւմ կայացուցէք, որ պիտի ազդարարէք ճշմարտութիւնը, անկախ անորմէ՝ այն տարածուած եւ ընդունուած է, թէ՞ ոչ: Խօսեցէ՛ք Աստուծոյ Խօսքը, որ պիտի փոխէ մարդիկ, բնակավայրեր, քաղաքներ եւ երկիրներ: Ուրիշ ձեռով վարուիլը կը նշանակէ, որ մենք կը հրաժարինք մեր մերձաւորը սիրելէ:

գործնական քայլ

Քրիստոսի մարմինին մէջ չկայ այնպիսի դիրք, որուն մէջ կարելի է պահել մեղքի հետեւանքները: Այնպէս չէ, որ մեղքը մուտք կը գործէ եկեղեցի միայն առաջնորդներու միջոցով. մեղքը կրնայ տարածուիլ ընդամենը մէկ մարդու միջոցով, որ կ'ընդունի այն իր կեանքին մէջ: Մեր լռութիւնը մեղքի վերաբերեալ՝ կրնայ կործանման մատնել մարդիկը եւ հաշուետու դարձնել մեզ անոնց մահուան համար:

Կրկին կարդացէք վերջին նախադասութիւնը, բայց՝ առաջին դէմքով. իմ լռութիւնը մեղքի վերաբերեալ՝ կրնայ կործանման մատնել մարդիկը եւ հաշուետու դարձնել զիս անոնց մահուան համար: Քանի մը անգամ բարձրաձայն կրկնեցէ՛ք ասիկա եւ թո՛յլ տուէք, որ այս խօսքերը թափանցեն ձեր սրտին խորքը: Թո՛ւյլ տուէք, որ այս ճշմարտութիւնը լիարժէք կերպով տպաւորուի ձեր սրտին եւ մտքին մէջ:

Աստուած հաշիւ պիտի պահանջէ ձեզմէ այս բանին համար: Մենք չենք կրնայ պահել մեղքը: Ձեր կարծիքով, ինչպէ՞ս այս ճշմարտութիւնը պիտի ազդէ ձեր կեանքին վրայ: Ի՞նչ ազդեցութիւն այն պիտի ձգէ ձեր ամուսնութեան եւ ձեր երեխաներու դաստիարակութեան վրայ: Արդե՞օք դուք պիտի սկսիք այլ կերպով հաղորդակցիլ ձեր տնային եկեղեցւոյ անդամներուն հետ: Խնդրեցէ՛ք Աստուծմէ պատասխանել այս հարցումներուն, մինչեւ որ պարզօրէն հասկնաք, թէ ինչպէս ապրիք համաձայն այս ճշմարտութեան: Այնուհետեւ, ձեր ընկերներէն մէկուն հետ, որուն կը վստահիք, քննարկեցէք, թէ ինչպէս կը պատրաստուիք կեանքի կոչել այս ճշմարտութիւնը ձեր կեանքին մէջ:

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եկէք անցում կատարենք այն խօսքերուն, որոնք ըսած է մեր յարութիւն առած Թագաւորը:

Աստուածաշունչի վերջին գիրքին մէջ Յիսուս եօթը ուղերձ կը յղէ Ասիոյ մէջ գտնուող եօթը եկեղեցիներուն: Եթէ Անոր խօսքերը նախատեսուած ըլլային միայն այդ եօթը եկեղեցիներուն համար, չէին գրուեր Աստուածաշունչին մէջ: Այն փաստը, որ աստուծոյ ընդգրկուած են Սուրբ Գիրքին մէջ, կը խօսի աստուծոյ մարգարէական բնոյթին մասին: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ աստուծոյ կիրառելի են այսօր, ինչպէս եւ այն ժամանակ, երբ ըսուեցան առաջին անգամ:

Աստուծոյ խօսքը կենդանի է. այդ իսկ պատճառով, մենք պիտի դիտարկենք Յիսուսին խօսքերը այնպէս, ըսես աստուծոյ կը վերաբերին մեզի՝ ներկայ ժամանակին մէջ: Այսպիսով, եթէ այս ուղերձը մեզի համար է, եկէք ընդունինք այն. կա՛մ զօրանանք Անոր փառքով, կա՛մ կրենք Անոր սիրով լեցուն խրատը:

Ո՞վ է Յեզաբէլը

Այն պատմական եկեղեցին, որուն մասին պիտի խօսինք, Թիւատիրն է: Յիսուս կը սկսի Իր խօսքը՝ անուանելով Ինքզինքը «Այսպէս կ'ըսէ Աստուծոյ Որդին, որ կրակի բոցի պէս աչքեր ունի ու իր ոտքերը ոսկեպղնձի նման են» (Յայտնութիւն 2.18): Մենք կրնանք մեկնել այս խօսքը հետեւեալ կերպով. Անոր աչքերը նման են լազերային ճառագայթներու, որոնք կը տեսնեն գործի բուն էութիւնը, եւ Անոր ոտքերը նման են յղկո-

լած պղնձի, ինչ որ կը նկարագրէ Անոր ամենակարող ըլլալը:

Հրաշալի է, որ Ան կը սկսի՝ գովելով մեզ. «Գիտեմ քու գործերդ եւ սէրդ ու ծառայութիւնդ եւ քու հաւատքդ ու համբերութիւնդ, եւ որ վերջին գործերդ առաջիններէն շատ են» (Յայտնութիւն 2.19): Ակնյայտ է, որ Ան չի խօսիր մահացած եկեղեցւոյ հետ. այդ եկեղեցին կենդանի է եւ աճ ունի:

Ան կը սկսի՝ զնահատելով եւ խրախուսելով մեր սէրը: Երբ որեւէ եկեղեցի կամ ծառայութիւն կը մահանայ, առաջին հերթին կը մարի եւ կը պաղի սէրը Աստուծոյ եւ մարդոց հանդէպ: Նման ողբերգական վիճակի պատճառով կը կորսուին նաեւ արդարութեան այլ պտուղներ:

Ջարմանալի չէ, որ Տէրը ճիշդ ասիկա կը շտկէ եօթը եկեղեցիներէն առաջինին՝ Եփեսոսի մէջ. այն ձգած էր իր առաջին սէրը: Սակայն Թիւատիրը այդպիսին չէր: Յիսուս կը գովէ այդ եկեղեցւոյ սէրը: Ան կը խօսի այնպիսի հաւատացեալներու համայնքի մասին, որ հոգատար է մարդոց հանդէպ, ինչ որ շատ կարելոր է Աստուծոյ համար: Անձամբ ես կը հաւատամ, որ ասիկա է պատճառը, որ Յիսուս կը գովէ մեր սէրը, մինչեւ որեւէ այլ բանի մասին խօսիլը, նոյնիսկ՝ հաւատքի, ծառայութեան կամ համբերութեան:

Միւս զարմանալի իրողութիւնն այն է, որ այս եկեղեցին *կ'աճէր* սիրով, հաւատքով, ծառայութեամբ եւ համբերութեամբ: Որքա՛ն ակնառու է: Այդ հաւատացեալներու համայնքը ընդամէնը չէր պահպաներ այն, ինչ որ ունէր. անոնք շարունակաբար կը յառաջանային ծառայութեան կարելոր բնագաւառներուն մէջ: «Ուղերձ» շրջասութիւնը հրաշալի կերպով կը վերծանէ այս խօսքը. «Ես կը տեսնեմ այն ամէնը, ինչ որ դուն կ'ընես Ինձի համար: Որքա՛ն տպաւորիչ է: Քու սէրը եւ հաւատքը, ծառայութիւնը եւ հաստատակամութիւնը: Այո՛, շա՛տ տպաւորիչ է: Քովդ ամէն օր աւելի լաւ կը յաջողի»: Ռեւէ առաջնորդ կամ եկեղեցւոյ անդամ բերկրանքով պիտի լսէր այդպիսի խօսքեր անձամբ Տիրոջմէն:

Այնուամենայնիւ, յանկարծ Անոր գովեստը կը փոխարինուի յանդիմանութեամբ.

«Բայց Ես ունիմ հետեւեալ զանգատը քու դէմ: Դուն թոյլ կու տաս այդ կնոջը՝ այդ Յեզաբէլին, որ մարգարէուհի կ'անուանէ ինքզինքը, մոլորեցնել Իմ ծառաները: Ան կը սորվեցնէ անոնց սեռական մեղք գործել եւ կուռքերուն զոհաբերուած կերակուր ուտել» (Յայտնութիւն 2.20, NLT):

Այս խօսքերուն մէջ այնքա՛ն բան կայ, որ պէտք է հասկնալ: Առաջինը՝

ուշադրութիւն դարձնենք *Յեզաբէլ* անունին: Մի՞թէ այս անունը կը պատկանէր այս հատուածին մէջ նշուած կնոջ: Աստուածաշունչի մեկնիչներու մեծ մասը կը համաձայնի, որ այդպէս չէ: «Նոր Ամերիկեան Մեկնութիւն. Յայտնութիւն» աշխատութիւնը կը պնդէ. «Այդ ժամանակաշրջանի յունա-հռովմէական գրականութեան մէջ չկայ յիշատակում Յեզաբէլ անունին մասին... այն, որ ռեւէ հրեայ Յեզաբէլ պիտի անուանէր իր դուստրը, նոյնքան անհաւանական է, որքան ռեւէ քրիստոնէայ Յուդա անուանէր իր որդին, կամ՝ ռեւէ հրեայ Յիսուս անուանէր իր որդին՝ առաջին դարէն յետոյ»: «Նոր կենդանի թարգմանութեան» թարգմանիչները ակնյայտօրէն համաձայն են այս փաստարկներուն հետ, քանի որ անոնք թարգմանած են Յիսուսին խօսքերը որպէս «այդ Յեզաբէլը»:

Նման կերպով որեւէ անուն յիշատակելը նոյնն է, ինչ ուրիշներուն մշտապէս ծիծաղեցնող անձնաւորութեան անուանել «այդ կատակերգակը»: Այդ բառը անոր անունը չէ, այլ կը նկարագրէ անոր բնորոշ վարքը:

Կարելի է ըսել, որ խօսքը այդ ժամանակահատուածի մէջ ապրող ազդեցիկ կնոջ մասին է: Ան պիտակուեցաւ «Յեզաբէլ» անունով, որ անոր իրական անունը չէր: Ան մեծ ազդեցութիւն ունէր, եւ խումբ մը առաջնորդներ կը տարածէին անոր ուսմունքները: Մեր օրերուն մէջ ասիկա կրնայ տեղի ունենալ հետեւեալ կերպով. ռեւէ տղամարդ, կին կամ, աւելի հաւանական է, որ խումբ մը առաջնորդներ միեւնոյն տեսակի ուսմունք կը քարոզեն: Ինչպէս ալ ատիկա տեղի ունենար, կարելորդ գաղափարը այն է, որ այդ ծառայողական փիլիսոփայութիւնը վնասակար ազդեցութիւն կը ձգէր ամբողջ եկեղեցւոյ վրայ:

Ինչո՞ւ Տէրը այդպէս անուանեց այդ կինը: Ամենայն հաւանականութեամբ, անոր պտուղը նման էր Յեզաբէլի պտուղին: Յեզաբէլը, որուն մասին գրուած է Գ. եւ Դ. Թագաւորաց գիրքերուն մէջ, Աքաբ թագաւորին կինն էր: Այդ թագուհիին մասին կարելի է շատ բան ըսել, բայց դիտարկենք անոր ընդհանուր ազդեցութիւնը Իսրայէլի վրայ: Ան տարածեց կռապաշտութիւնը, ինչի հետեւանքով Տիրոջ Խօսքի ձայնը լռեցաւ Իսրայէլին մէջ: Ժողովուրդին իշխանները դադրեցան ձայն բարձրացնելէ, իսկ ժողովուրդը յայտնուեցաւ հոգեւոր ծուլութեան մէջ՝ թմրութեան աստիճանի հասնելով: Կար միայն մէկ մարդ՝ Եղիան, որ կը համարձակէր խօսիլ այդ իրավիճակի դէմ:

Մենք կրնանք ակնյայտօրէն տեսնել Յեզաբէլի ազդեցութիւնը, երբ Եղիան յանդիմանեց ամբողջ ազգը եւ առաջարկեց ընտրել Աստուծոյ հնազանդելու եւ շարունակական մեղքի միջեւ: Ան ըրաւ ատիկա Յեզաբէլի կողմէն վարձատրուող «ծառայողներու»՝ Բահադի եւ Աստարովթի

մարգարեներու ներկայութեամբ, որոնք կը վերահսկէին լրատուամիջոցները, կը ղեկավարէին յատուկ շահեր ներկայացնող կազմակերպութիւններ, օրէնսդիրներ եւ իրաւաբաններ էին եւ այլն: Ամբողջ ազգը հաւաքուած էր, եւ Եղիան մարտահրաւէր նետեց ժողովուրդին՝ այդ «վերնախաւի ներկայացուցիչներու» առջեւ.

«Որքա՞ն ժամանակ պիտի նստիք ցանկապատի վրայ: Եթէ Աստուած իրական Աստուած է, հետեւեցէք Անո՛ր. եթէ Բահաղը [շարունակական մեղքն] է, հետեւեցէք անո՛ր: Որոշո՛ւմ կայացուցէք» (Գ. Թագաւորաց 18.21, MSG):

Աստուծոյ հետեւելու համար կը պահանջուի աւելին, քան լուռ հաւատքը: Մենք պէտք է քարոզենք Անոր Խօսքը: Մենք կանչուած ենք՝ որպէս դեսպաններ: Ինչպէ՞ս ընել ատիկա: Պօղոսը յստակ ցոյց կու տայ.

«Ազդարարէ՛ եւ քարոզէ՛ Խօսքը: Պահէ՛ քու հրատապութեան զգացումը [եղի՛ր հասանելի, մօտ եւ պատրաստ], անկախ այն բանէն՝ հնարաւորութիւնը բարենպաստ կը թուայ, թէ՞ ոչ: [Անկախ այն բանէն՝ ատիկա յարմա՞ր է, թէ՞ անյարմար, ցանկալի՞ է, թէ՞ անցանկալի, դուն՝ որպէս Խօսքի քարոզիչ, պէտք է ցոյց տաս մարդոց, թէ ինչ կերպով անոնց կեանքերը սխալ են]» (Բ. Տիմոթէոս 4.2, AMPC):

Եղիան միակն էր Իսրայէլի մէջ, որ այնքան կը սիրէր մարդիկը, որ պատրաստ էր ցոյց տալու, թէ ինչ կերպով անոնց կեանքերը սխալ էին:

Յեզաբէլի ազդեցութիւնը վախ յառաջացուցած էր թէ՛ իշխաններու, թէ՛ ժողովուրդի ներսը: Անոնք լուռ էին, թմրած էին, երկչոտ էին եւ այլեւս բացայայտ կերպով չէին խօսեր՝ ի աջակցութիւն *Եահուէհի*: Շարունակական մեղքը յարթած էր, եւ Աստուծոյ Խօսքը կ'անտեսուէր: Նման բան մը սկսած էր տեղի ունենալ նաեւ այդ նորկտակարանեան եկեղեցիին մէջ: Յիսուս չէր կամենար թոյլ տալ ատիկա, եւ Ան գտաւ Իր ծառաներէն մէկը՝ Յովհաննէս առաքեալը, որ, ինչպէս եւ Եղիան, պատրաստ էր խօսելու:

Իրական խնդիրը

Մենք պէտք հարցում մը հարցնենք. Արդե՞օք Յիսուս նկատի ունէր, որ Թիւաստիրի եկեղեցւոյ անդամները ֆիզիքապէս ներգրաւուած էին սեռական անբարոյութեան մէջ եւ կուռքերուն զոհաբերուած միս կ'ուտէին: Հնարաւոր է, սակայն ես չեմ համաձայնիր այդ մեկնութեան, քա-

նի որ Պօղոս չդատապարտեց կուռքերուն զոհաբերուած կերակուր ուտելը երկու տարբեր եկեղեցիներուն ուղղուած իր նամակներուն մէջ (տե՛ս Հռովմ. 14 եւ Ա. Կորնթ. 10): Ինչո՞ւ Յիսուս պէտք է չար անուանէր այն, ինչ որ Պօղոսը, Սուրբ Հոգիին ոգեշնչումին ներքոյ կը թոյլատրէր: Հեղինակաւոր մեկնութիւն մը կը պնդէ. «Ինչ կը վերաբերի մարդոց սեռական անբարոյութեան մէջ գայթակղեցնելուն, բազմաթիւ մեկնիչներ կ'ենթադրեն, որ փաստացի սեռական խառնակութիւնը անհաւանական էր, քանի որ եկեղեցին միանշանակ չէր հանդուրժեր ատիկա: Փոխարէնը՝ խօսքը հոգեւոր եւ/կամ վարդապետական անհաւատարմութեան մասին է» (*«Նոր Ամերիկեան Մեկնութիւն. Յայտնութիւն»*):

Անկախ այն բանէն, թէ ինչի մասին է խօսքը՝ Յիսուսի յանդիմանութիւնը չէր վերաբերեր ատոր: Մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք այն գործունէութեան կամ անգործութեան վրայ, որուն անդրադարձաւ Յիսուսը:

Խօսքը *հանդուրժողականութեան* մասին է: Ան ըսաւ. «Դուն թոյլ կու տաս»: Յունարէնի մէջ կ'օգտագործուի «էաո» բառը: «Յովհաննէսի Յայտնութիւն գիրքի ձեռնարկը» սպառիչ կերպով կը սահմանէ այս բառը. «Այս բառի իմաստը կրնայ ըլլալ դրական. «դուն կը թոյլատրես», «դուն իրաւունք կու տաս», կամ՝ բացասական. «դուն չես արգիլեր», «դուն չես դադրեցներ», «դուն չես խոչընդոտեր»»:

Ասիկա պարզապէս ապշեցուցիչ է: Յիսուս չանդրադառնար այդ յանցաւոր անձնաւորութեան, ով որ ալ ան ըլլայ, կամ, մեր պարագային՝ այն ժամանակակից յանցաւորներուն, որոնց կողմէն տարածուող ուսմունքները կը գայթակղեցնեն Իր ժողովուրդը դէպի կռապաշտութիւնը (շարունակական մեղքը): Ան պարզ կ'ըսէ. «Ես անոր ժամանակ տուի... ապաշխարելու, բայց ան չապաշխարեց» (Յայտնութիւն 2.21): Ակնյայտ է, որ նախապէս նոյնպէս զգուշացումներ եղած էին, սակայն, ցաւօք, ատոնք անտեսուած էին:

Փոխարէնը՝ Ան խստօրէն կը յանդիմանէ իւրաքանչիւրը, որ թոյլ կու տայ, որ այդ երեւոյթը շարունակուի. ուրիշ ձեւով ըսելու համար՝ մենք չենք ընդդիմանար այդ խնդիրին: Փոխարէնը՝ մենք կը շարունակենք սորվեցնել միայն Նոր կտակարանի հաճելի, խրախուսական եւ ոգեւորիչ հատուածները: Ըստ էութեան, մենք լուռ ենք եւ ոչինչով կը տարբերինք Յեզաբէլի օրերուն մէջ ապրող Իսրայէլի ժողովուրդէն: Ասիկա կարելի է համեմատել հետեւեալ իրավիճակին հետ. բոլորս կը գտնուինք այրող շէնքի մէջ, բայց մեզմէ ոչ ոք ոչինչ կ'ընէ փախչելու համար, եւ ո՛չ ալ կը փորձէ օգնել մէկ այլ մարդու փախչելու այդտեղէն: Մենք պարզապէս կը շարունակենք խրախուսել իրար՝ ըսելով, թէ որ-

քան օրհնուած ենք, եւ սէր կը ցուցաբերենք միմիանց հանդէպ, միւնչդեռ տանիքը եւ պատերը փուլ կու գան:

Նմանատիպ երկընտրանքներ

Յուդա առաքեալը բախած էր նմանատիպ երկընտրանքի: Ան կ'ուզէր գրել իր հաւատակիցներուն եւ խրախուսել զանոնք մեր փրկութեան առաւելութիւններով, սակայն չէր կրնար: Տունը կ'այրէր: Ան պէտք է հակառակէր այն քրիպտոնաքարին, որ ներթափանցած էր եկեղեցիները: Կարդացէ՛ք անոր խօսքերը.

«Թանկագին՝ ընկերներ, ես մեծ ցանկութիւն ունէի գրելու ձեզի այն փրկութեան մասին, որուն բոլորս բաժնեկից ենք: Բայց այժմ կը համարեմ, որ պէտք է գրեմ ուրիշ բանի մը մասին՝ յորդորելով ձեզ պաշտպանել այն հաւատքը, որ Աստուած մէկընդմիշտ վստահեցաւ Իր սուրբ ժողովուրդին: Ես կ'ըսեմ ասիկա, որովհետեւ քանի մը անաստուած մարդիկ սողոսկած են ձեր եկեղեցիները՝ ըսելով, որ Աստուծոյ զարմանալի շնորհքը թոյլ կու տայ իրենց անբարոյ կեանք վարելու» (Յուդա 3,4, NLT):

Այս ծառայողը ջերմեռանդօրէն կը ցանկար գրել այն մարդոց, որոնց ինք կը սիրէր, այն առաւելութիւններու, օրհնութիւններու եւ խոստումներու մասին, որոնք մենք ունինք Քրիստոսի մէջ: Շատերու պէս ան կ'ուզէր ոգեշնչել եւ խրախուսել մարդիկ:

Ես կը հասկնամ անոր դժուարին կացութիւնը: Ամենամեծ զգացմունքային պայքարներէն մէկը, որոնց ես կը բախիմ թէ՛ գրելու, թէ՛ սորվեցնելու, միայն խրախուսելու ցանկութիւնն է: Ես կը սիրեմ ոգեշնչել. ո՞վ չի սիրեր ատիկա: Այնուամենայնիւ, Հոգին կը մղէ մեզ խօսելու այն իրողութիւններուն մասին, որոնք կը ձգտին կործանել Աստուծոյ թանկ զաւակները:

Այսպիսով, Յուդայի անկեղծ սէրը կը դրդէր անոր զգուշացնելու հաւատացեալները՝ անոնց պաշտպանելու համար: Ի՞նչ տեղի կ'ունենար: Իրավիճակը քիչ մը ուրիշ էր, քան Թիւատիրի մէջ: Այդ անաստուած մարդիկ, որոնք պահուրտած էին հովիւներու, առաջնորդներու կամ հաւատացեալներու դիմակներու տակ, կը սորվեցնէին կամ, աւելի հաւանական է, կը մարմնաւորէին «թոյլատրող շնորհքը», ոչ թէ ճշմարիտ «զօրացնող շնորհքը»: Այն «թոյլատրող շնորհքը», որ անոնք կը սոր-

վեցնէին, չի պաշտպաներ քրիպտոնաքարէն, եւ ո՛չ ալ ատկէ հեռանալու կարողութիւն կու տայ, այլ թոյլ կու տայ ապրելու միայն սակաւաթիւ սուրբգրային սահմանափակումներով կամ, ընդհանրարպէս, առանց ատոնց: Նման պայմաններուն մէջ հասարակութիւնը կը սկսի թելադրել մեր կենսառճը, քանի որ շնորհքը փոքրացած է՝ վերածուելով ընդամէնը ծածկոցի, ոչ թէ՛ կարողութիւն տուող ուժի: Այնպէս որ, ըստ էութեան, հաւատացեալները խոցելի կը դառնան, քանի որ անոնք ազատօրէն կը հետեւին իրենց անկում ապրած բնութեան ցանկութիւններուն՝ համաձայն իրենց շրջապատող մշակոյթին, եւ կը կրեն քրիպտոնաքարի ազդեցութիւնը: Աստուծոյ շնորհքի նպատակը այլ է:

Յուդան չէր պատրաստուեր *հանդուրժել* այն թթխմորը, որ կը տարածուէր եկեղեցիներու մէջ: Ան ճշմարիտ հոգեւոր հայր էր եւ կը պաշտպանէր իր զաւակները խեղաթիրուած կենսառճէն, որուն նպատակն էր՝ հեռացնել զանոնք Աստուծոյ կեանքէն: Յիսուս ստիպուած չէր ըլլար շտկելու զինք, ինչպէս Թիւատիրի առաջնորդներուն. փոխարէնը՝ Ան կը գովէր Յուդան:

Պօղոսը, որ նոյնպէս հոգատար հայր էր, լուռ չէր մնար, երբ եկեղեցւոյ հաւատացեալներուն միջեւ բաժանութիւններ, կռիւներ, անբարոյութիւն, դատաւարութիւններ, ազահութիւն եւ մեղսալի վարքի այլ դրսեւորումներ կային: Ան այնքա՛ն կը սիրէր զանոնք, որ չէր կրնար քայլեր չձեռնարկել այն թթխմորի դէմ, որ արագօրէն պիտի տարածուէր ամբողջ մարմինով: Յակոբոսը եւ Պետրոսը նոյն կերպով կը վարուէին:

Եթէ կարդաք Առաջին եկեղեցւոյ հայրերու ուղերձները, անոնք կը հետեւէին առաքեալներու օրինակին՝ որպէս զէնք օգտագործելով Աստուծոյ գրուած եւ քարոզուող խօսքը, որպէսզի հակառակուէին շարունակական մեղքին Աստուծոյ ժողովուրդին մէջ: Անոնք կը խօսէին՝ քանդելով այն գաղափարները եւ արդարացումները, որոնք ձեւաւորուած էին մշակոյթի կողմէն եւ հակառակ էին ողջամիտ վարդապետութեան: Անոնք կը կործանէին մշակութային կուռքերը, եւ Յեզաբէլի գործակատարները չէին վախեցնէր զանոնք:

Լռութիւնը՝ համաձայնութեան նշան

Երբ խօսքը առաջնորդներու մասին է, լռութիւնը՝ ոչ խօսքային հաղորդակցութիւն է: Այն կը նշանակէ համաձայնութիւն եւ թոյլտուութիւն, եւ կարծես կ'ըսէ. «Այն, ինչ որ դուք կ'ընէք, լաւ է»: Կայ հին լատինական ասացուածք մը. «Լռութիւնը համաձայնութեան նշան է. անհրաժեշտ էր խօսիլ, երբ տակաւին հնարաւոր էր»: Առաջին եկեղեցւոյ հայրերէն եւ

առաջնորդներին ոչ մէկը կը լռէր, երբ քրիպտոնաքարը կը սողոսկէր այն մարդոց միջեւ, որ անոնք կը սիրէին եւ որոնց համար հաշուետու էին: Անոնք կը խօսէին, քանի որ կը համարէին, որ քրիպտոնաքարը կործանարար, թունաւոր եւ մահացու էր եւ կրնար տարածուիլ թթխմորի պէս:

Յովհաննէս առաքեալը կը պնդէ. «Ամբողջ աշխարհը չարութեան մէջ է» (Ա. Յովհաննէս 5:19): Հասարակութեան մէջ գոյութիւն ունի չարիքի մշտական հոսք, որուն ամենակործանարար տեսակը *ծածուկ չարիքն* է: Այո՛, այն պահուրտած է *բարիի* դիմակին տակ: Այս խաբուսիկ հոսանքը կը կոչուի «այս աշխարհի ընթացքը» (Եփեսացիս 2.2, NKJV):

Պատկերացուցէ՛ք ասիկա հետեւեալ կերպով. գետի մէջ դուք պէտք է թիավարէք ջուրի հոսքին հակառակ, որպէսզի երթաք հոսանքն ի վեր: Այս աշխարհը հոսանք ունի, որ ուղղակիօրէն հակառակ է Աստուծոյ Թագաւորութեան, սակայն ամենավտանգաւորը այն է, որ այդ հոսանքը խորամանկ է. այն *բարութեան* դիմակ կը կրէ: Մեր կողմէն ձայն չբարձրացնելը նոյնն է, ինչ վեր բարձրացնենք մեր թիերը եւ երթանք հոսանքի ուղղութեամբ: Մեր նաւակը տակաւին կրնայ ուղղուած ըլլալ հոսանքն ի վեր. մենք տակաւին կրնանք քրիստոնէայի տեսք ունենալ եւ խօսիլ քրիստոնէայի պէս, սակայն կը վարուինք համաձայն մեր օրերու հասարակութեան չափանիշներու եւ կը կորսնցնենք մեր արդիւնաւէտութիւնը:

Վեր բարձրացնելով մեր թիերը՝ կը խուսափինք վախ պատճառող հակառակութենէն, բայց այն, ինչին մենք չենք հակառակիր, չի փոխուիր: Էտմընտ Պուրթէն գրած է. «Որպէսզի չարը յաղթէ, բաւական է, որ բարի մարդիկ ոչինչ ընեն»: Հաւատացեալներու սրտերուն եւ մտքերուն մէջ գտնուող մշակութային կուռքերը աւելի մեծ ազդեցութիւն ձեռք կը բերեն, երբ առաջնորդները կը լռեն:

Որքան խաբէութիւնը կը շատնայ, այնքան այն երեւոյթները, որ կը հանդուրժենք, թմրութիւն կը յառաջացնեն մեր մէջ: Մենք կը սկսինք համակրել եւ նոյնիսկ նմանիլ այն բանին, ինչ որ կը սպառէ մեր գերբնական ուժերը: Մենք այլեւս հակամշակոյթ չենք, այլ՝ ենթամշակոյթ: Մենք կը կրենք «քրիստոնէութեան» պիտակը, սակայն ոչ թէ *գորութեան դեսպան* ենք, այլ՝ *շփոթմունքի գործօն*: Մեզ շրջապատող աշխարհը կը հարցնէ. «Մենք կը տեսնենք ձեր եկեղեցիները, կը լսենք ձեր երաժշտութիւնը եւ ուսմունքները սիրոյ եւ շնորհքի մասին, բայց ո՞ր է ապացոյցը այն մասին, որ ձեր Ամենակարող Աստուած ձեզի հետ է»:

Պօղոսը համարձակ կը յայտարարէ, որ անոնք, որոնք կը դաւանին, որ քրիստոնէայ են, բայց կ'երթան այս աշխարհի հոսանքին հետ, իրականութեան մէջ խաչի թշնամիներ են: Այո՛, թշնամիներ:

«Վասնզի շատեր կը քալեն, որոնց համար շատ անգամ ձեզի կ'ըսէի, եւ հիմա լալով ալ կը խօսիմ, այսինքն Քրիստոսին խաչի թշնամիներուն համար: Որոնց վերջը կորուստ է, որոնց աստուածը իրենց որովայնն է, ու անոնց փառքը իրենց ամօթն է, որոնք միայն երկրաւոր բաներուն վրայ կը մտածեն: Բայց մեր քաղաքականութիւնը Երկինքն է, ուրկէ կը սպասենք Փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսին» (Փիլիպպեցիս 3.18-20):

Ուշադիր կարդացէք առաջին խօսքը: Առաջին հերթին գրուած է՝ «շատերը»: Երկրորդը՝ անոնց խօսքերը չէ, որ ցոյց կու տան, որ անոնք թշնամիներ են, քանի որ անոնք բերանացի կ'ընդունին Յիսուսը: «Կը խոստովանին, որ զԱստուած գիտեն, բայց իրենց գործերով կ'ուրանան Ձինք» (Տիտոս 1.16): Անոնք քողարկուած են Աստուածապաշտ կերպարանքով, սակայն անոնց վարքը ցոյց կու տայ, որ անոնք թշնամի են: Անոնք կ'առաջնորդուին մարմնաւոր ձգտումներով՝ կիրքով, ցանկութիւններով, կարգավիճակով, համբաւով, սեռական այլասերուածութեամբ, բամբասանքներով եւ այլ բաներով:

Պօղոս կը խօսի. ան կ'ընդդիմանայ եւ չի հանդուրժեր: Կարդացէ՛ք անոր նամակները եւ կը տեսնէք, թէ որքան յաճախ ան կը զգուշացնէ մեզ մեղսալի եւ աշխարհիկ վարքի մասին եւ կը յանդիմանէ ատոր մէջ: Բայց յիշեցէ՛ք, որ իրականութեան մէջ մեզի կը դիմէ Աստուծոյ խօսքը՝ Պօղոսին գրիչի միջոցով:

Ամիջական առերեսումը՝ Աստուծոյ խօսքը հռչակելու միջոցով, այդ ամրութիւնները քանդելու միակ միջոցն է: Եթէ ուղղակիօրէն չհակառակինք աստուծոյ Աստուծոյ խօսքով, մենք թոյլ կու տանք, որ այդ փիլիսոփայական ամրութիւնները ա՛լ աւելի ազդեցիկ դառնան թէ՛ հաւատացեալներու, թէ՛ կորսուած մարդոց սրտերուն եւ մտքերուն մէջ: Հրաժարելով խօսելէ՝ մենք դուռը կը բանանք քրիստոնաքարի ազդեցութեան համար:

Հակասական հետեւանքներ

Ինչպէ՞ս Յիսուս ամփոփեց այդ եկեղեցւոյ ուղղուած Իր ուղերձը: Անոր խօսքերը թոյլասիրտներու համար չեն: Ան պարզօրէն կ'ըսէ, որ կեղծ ուսմունքները ընդունող մարդիկ «մեծ նեղութիւններու մէջ» պիտի յայտնուին, եթէ չապաշխարեն: Ասիկա նշան պիտի ըլլայ, եւ բոլոր եկեղեցիները պիտի իմանան, որ Ան կը քննէ մեր մտքերը եւ սրտերը, եւ որ Ան իւրաքանչիւրիս պիտի տայ այն, ինչին որ արժանի ենք (տե՛ս Յայտն. 2.22,23):

Բայց ահա հրաշալի լուր մը. այն մարդոց, որոնք չեն ընդունած քրիստոնաքարը, որոնք հաստատ կերպով յարած են Անոր Հոգիին եւ Անոր Խօսքին, Յիսուս կ'ըսէ, որ անոնց իշխանութիւն պիտի տրուի ազգերուն վրայ... նոյն իշխանութիւնը, որ տրուեցաւ Յիսուսին մեր Հօրմէ:

Հետեւանքները խիստ հակասական են. ոմանց կը սպասուի խիստ պատիժ, իսկ միւսներուն՝ անասելի վարձատրութիւն: Կրնա՞նք թոյլ տալ մեզի ուշադրութիւն չդարձնելու այս հրահանգներուն, յատկապէս որ ատոնք անմիջապէս մեր յարութիւն առած Թագաւորի խօսքերն են:

գործնական քայլ

Յեզաբէլը կը ճնշէր Աստուծոյ մարգարէները՝ լռեցնելով զանոնք, եւ նոյնիսկ կը սպաննէր շատերը: Միայն մէկ մարգարէ պատրաստ էր խօսելու Տիրոջ համար, բայց տեսէք, թէ Աստուած ինչ պատրաստ է ընել այդ մէկ մարգարէին միջոցով: Ան պաշտպանեց զինք, մատակարարեց անոր եւ հաստատեց անոր ծառայութիւնը գերբնական նշաններով եւ հրաշքներով, որոնցմով մենք մինչեւ օրս կը զմայլինք:

Աստուած մինչեւ օրս կը փնտռէ այնպիսի մարդիկ, որոնք կը կանգնին ու կը խօսին ճշմարտութիւնը: Ասիկա չի նշանակեր՝ պարզապէս քննադատել մարդիկը: Մենք չենք հաշուեր ուրիշներուն մեղքերը: Սակայն, միեւնոյն ժամանակ, մենք չենք կրնար թոյլ տալ մեզի երկչոտելու եւ լռելու՝ վախճալով, որ մարդիկ մեզի պիտի անուանեն հետամնաց, անհանդուրժողական, կամ այլ կերպով կը պիտակեն մեզի:

Առաջին քայլն է՝ ականջ դնել այս զգուշացումին ձեր կեանքին մէջ: Ինչ ալ պահանջուի ատոր համար, ազատեցէ՛ք այն մեղքերէն, որոնց դուք յանձնուած էք անցեալին: Հազիւ որ ընէք ատիկա, գործի անցէք եւ ազատ արձակեցէք այլ մարդիկ՝ ջանասիրաբար զգուշացնելով զանոնք մեղքի վտանգներու մասին: Պօղոս կը գրէ. «Պատրաստ ենք վրէժ առնելու ամէն անհնազանդութենէ, որպէսզի ձեր հնազանդութիւնը կատարեալ ըլլայ» (Բ. Կորնթացիս 10.6):

Եթէ դուք չէք սիրեր առերեսում, խնդրեցէ՛ք Աստուծմէ տալ ձեզի սէր մարդոց հանդէպ, որ կը դրդէ ձեզ առերեսուելու անոնց: Ղարծուցէ՛ք ասիկա ձեր յաջորդ նպատակը, որուն պէտք է հասնիք: Եւ երբ ասիկա տեղի ունենայ, Աստուծոյ շնորհքով դուք պիտի կարենաք օգնել նաեւ այլ մարդոց հասնելու այս նպատակին:

ՍԵՐ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Այժմ կը հասնինք քրիստոնաքարը կործանելու ամենավճռական կողմին՝ այն շարժառիթին կամ ուժին, որուն միջոցով հնարաւոր է ընել ատիկա: Ամենայն հաւանականութեամբ, քրիստոնաքարը կործանող այս մեծ ուժի բացակայութեան պատճառով է, որ մենք յայտնուած ենք Աւետարանը քարոզելու եւ ծառայողական փիլիսոփայութեան ներկայ ծայրայեղութեան մէջ: Այն ուժը, որուն մասին ես կը խօսիմ, ոչ այլ ինչ է, քան *Աստուծոյ սէրը*: Պօղոսը ազդեցիկ կերպով կ'ըսէ մեզի հետեւեալը.

«Մենք չենք տատանիր, երբ մարդիկ փորձեն խաբել մեզ ճշմարտութիւն թուացող հմտօրէն կազմուած սուտերով: Փոխարէնը՝ մենք *պիտի խօսինք ճշմարտութիւնը սիրով*՝ ամէն կերպ աւելի ու աւելի աճելով Քրիստոսին նմանելու մէջ» (Եփեսացիս 4.14,15, NLT):

Կեղծ ուսմունքները՝ նման թիւատիրի մէջ եղած ուսմունքներուն, որոնց մասին Յիսուս կը խօսի, եւ այն ուսմունքներուն, որոնց մասին Պետրոսը, Յովհաննէսը եւ Պօղոսը կը գրեն իրենց նամակներուն մէջ, այնքան հմտօրէն կազմուած են, որ դիւրաբար կարելի է շփոթել ճշմարտութեան հետ: Թշնամին շատ աւելի խելացի է, քան մենք կը կարծենք: Եթէ ան կրցաւ մոլորեցնել Եւան Աստուծոյ ներկայութեամբ լեցուած եւ կատարեալ միջավայրի մէջ, որքա՛ն աւելի դիւրաբար ան կրնայ խաբել մարդիկը ներկայ աշխարհի ապականած միջավայրի մէջ: Եւ ի՞նչը կրնայ պաշտպանել մեզ կեղծ ուսմունքներու խաբէութենէն:

Պատասխանն է՝ ճշմարտութիւնը, սակայն ոչ թէ պարզապէս ճշմար-

տութիւնը, այլ՝ սիրով ըստած ճշմարտութիւնը: Ճշմարտութիւնը առանց սիրոյ կը տանի «օրէնքի տառի» ճանապարհով, որ կը սպաննէ. այն կը կոչուի *օրինապաշտութիւն*: Այն կ'աւելցնէ խաբէութիւնը եւ կ'օժանդակէ ատոր: Ճիշդ օրինապաշտութիւնն է պատճառը, որ մարդիկ սկսան անտեսել եւ նոյնիսկ բացառել սուրբգրային զգուշացումները, որոնք առանցքային նշանակութիւն ունին եկեղեցւոյ առողջ վիճակին համար:

Օրինապաշտութիւնը կը վնասէ մեզ, քանի որ այն անողորմ է, դաժան է եւ լեցուած է ատելութեամբ: Ատոր դաժանութեան հակառակելու համար մենք կը շեշտադրենք սէրը: Այնուամենայնիւ, սէրը՝ առանց ճշմարտութեան, ընդհանրապէս սէր չէ: Այն կեղծիք է՝ բաղկացած բարութենէն, կարեկցանքէն, քնքշութենէն եւ համբերութենէն, որ Աստուածային սիրոյ կերպարանք ունի: Եթէ այս առաքինութիւնները չեն համապատասխաներ ճշմարտութեան, որպէս արդիւնք՝ մենք անխուսափելիօրէն պիտի յայտնուինք խաբէութեան ճանապարհին:

Եկէք անկեղծ ըլլանք. մենք չենք խօսիր որոշ սուրբգրային ճշմարտութիւններու մասին, քանի որ կը համարենք, որ ատոնք որեւէ առնչութիւն չունին այն սիրոյ հետ, որուն մենք ի սրտէ կը ձգտինք: Ճշմարտութիւնը այն է, որ մենք կը խուսափինք մարդոց կոչ ընելէ նոյն տեղը չմնալ, այլ փոփոխութիւններ բերել կեանքին մէջ: Մենք կը համարենք, որ մարդոց ապաշխարութեան կանչելը գթասրտութեան, մեղմութեան, բարութեան եւ սիրոյ բացակայութիւն է: Սակայն, պատկերացուցէք, ես կը տեսնեմ կոյր մարդ մը, որ կը քալէ ուղիղ դէպի ժայռի եզրը, որ կրնայ իյնալ ու մահանալ: Ես կրնամ թոյլ տալ, որ այդ դժբախտ պատահարը տեղի ունենայ, քանի որ իմ միջամտութիւնը բացասական կամ անհանդուրժողական պիտի համարուի այդ մարդուն ընտրած ճանապարհին հանդէպ: Սակայն եթէ ես չկեցնեմ եւ չփոխեմ անոր ընթացքը, ան պիտի մահանայ: Եթէ ես խրախուսեմ զինք դրական ու ոգեշնչող խօսքերով, բայց ընթացքը փոխելու կոչ չընեմ, ես աւելի հաճելի պիտի դարձնեմ անոր վերջին քայլերը, բայց, միեւնոյնն է, ան պիտի իյնայ ձորը եւ պիտի մահանայ: Մի՞թէ նման դիրքորոշումը կարելի է ճշմարիտ սէր համարել:

Մեր հասարակութեան մէջ եւ բազմաթիւ հաւատացեալներու համար նման ճշմարիտ սէրը կ'ընկալուի որպէս մոլեռանդութիւն եւ ատելութիւն: Այս մտաւոր ամրութիւնը յառաջացած է բազմաթիւ հաւատացեալներու կեանքին մէջ, քանի որ անոնք կը դիտարկեն կեանքը եօթանասուն կամ ութսուն տարուան տեսանկիւնէն, ոչ թէ յաւիտենութեան: Ահա օրինակ մը այդ մասին. եթէ իմ պատկերացումը երջանկութեան մասին կը սահմանափակուի մէկ օրով, ես պիտի երթամ հարսանեկան երեկոյի եւ պի-

տի ուտեն այն ամէնը, ինչ որ դրուած է անուշեղէնի սեղանին վրայ: Ես հաճելի, երջանիկ օր պիտի անցընեմ: Այնուամենայնիւ, եթէ իմ պատկերացումը երջանկութեան մասին ընդլայնի մինչեւ վեց ամիսը, այլ կերպ պիտի վարուիմ: Ես պիտի ուտեմ միայն մէկ թխուածք, կամ, թերեւս, ոչ մէկ հատ կ'ուտեմ: Պատճառն այն է, որ ես չեմ ուզեր փորի ցաւ ունենալ յաջորդ օրը, չեմ ուզեր, որ քանի մը օրուան ընթացքին իմ կշիռքը այդ անուշեղէնէն աւելնայ մօտաւորապէս չորս քիլոկրամով, եւ չեմ ուզեր երկարատեւ առողջական խնդիրներ ձեռք բերել:

Ճշմարիտ սէրը հասկնալու համար մենք պէտք է դիտարկենք կեանքը յաւիտենական տեսանկիւնէն: Սէրը՝ միայն երկրային կեանքի տեսանկիւնէն, կ'ընդունի մարդոց այնպիսին, ինչպիսին կան, եւ կոչ չ'ընեն փոխել իրենց կեանքը: Այն պարզապէս կը ցանկայ, որ մարդիկ վայելեն իրենց մնացած քայլերը՝ մինչեւ յաւիտենական փոսը իյնալը: Այնուամենայնիւ, ճշմարիտ սէրը, որ յաւիտենական հեռանկար ունի, կ'ըսէ. «Ես այնքան կը հոգամ քու մասին, որ պատրաստ եմ անյարմարութիւն պատճառել կարճ ժամանակով, որպէսզի փրկեմ քեզ աննկարագրելի յաւիտենական տանջանքէն, ցաւէն ու տառապանքէն»:

Գոյութիւն ունի իրական դժոխք: Այն այլաբանութիւն, պատկերաւոր արտայայտութիւն կամ պատիժի ժամանակաւոր վայր չէ: Անոնք, որոնք դժոխք կ'երթան, «պիտի չարչարուին գիշեր ու ցերեկ՝ յաւիտեանս յաւիտենից» (Յայտնութիւն 20.10): Մի՞թէ մենք կրնանք անտեսել Յիսուսին խօսքերը. «Ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը...» (Մատթէոս 25.46), եւ Պօղոսին խօսքերը. «Որոնք պիտի պատժուին յաւիտենական աւերումով եւ պիտի վտարուին Տէրոջը երեսէն ու Անոր զօրութեանը փառքէն» (Բ. Թեսաղոնիկեցիս 1.9):

Յաւիտենական բառը կը նշանակէ յաւերժական. այս բառը չունի այլ սահմանում: Տառապանքը, ցաւը եւ պատիժը դժոխքի մէջ աննկարագրելի են եւ երբեք չեն վերջանար: Դժոխքը յատկապէս զարհուրելի է այն պատճառով, որ մարդը յաւիտեան բաժնուած է Տիրոջ ներկայութենէն: Այս բաժանումը, սակայն, չի վերաբերիր միայն հանդերձեալ կեանքին, այլեւ՝ այս կեանքին: Քիչ յետոյ կը խօսիմ այս մասին:

Աստուած չէ ստեղծած դժոխքը մարդոց համար, այլ՝ «սատանային եւ անոր հրեշտակներուն» (Մատթէոս 25.41): Սատանան խաբեց մարդկութիւնը՝ դարձնելով իր պատիժի մասնակիցները: Յիսուս, սերէն դրդուած, եկաւ, որպէսզի փրկէր մեզ այն ճակատագիրէն, որուն ինքներս դատապարտեցինք մեզ: Եթէ Ան նման զարմանալի փրկութիւն կատարեց, ինչպէ՞ս մենք կրնանք թեթեւօրէն վերաբերիլ այն ճանապարհին, որ Ան պատրաստեց՝ այդ զարհուրելի կործանումէն ազատելու համար:

Վերադառնանք հարսանեկան երեկոյի օրինակին: Իմ որոշումը միայն մէկ թխուածք ուտելու մասին՝ կրնայ հալածանք յառաջացնել: Միւսները կրնան ըսել. «Տէ՛, ճո՛ն, այս անուշեղէնը շատ լաւ է: Ատոնք համեղ են եւ կ'որախացնեն քեզ: Եկո՛ւր վայելենք կեանքը»:

Այնուամենայնիւ, այդ պնդումները հեռու են ճշմարտութենէն եւ կը մոլորեցնեն զիս: Իրականութեան մէջ, անոնք չեն ըսեր «եկո՛ւր վայելենք կեանքը», այլ՝ «եկո՛ւր վայելենք այս օրը»: Ճշմարտութիւնը այն է, որ ես կը վայելեմ շատ ասելին, եթէ երկարաժամկէտ հեռանկար ունենամ: Այս սկզբունքը կը վերաբերի նաեւ Աստուծոյ Թագաւորութեան:

Ձեր կարծիքով, ինչո՞ւ Պօղոս առաքեալը դիմացաւ, երբ քարկոծուեցաւ, հինգ անգամ երեսունինը մտրակի հարուած ստացաւ, երեք անգամ փայտով ծեծուեցաւ, կրեց տանջալի օրեր ու զիշերներ եւ շատ այլ նեղութիւններ: Մի՞թէ կը կարծէք, որ ան ըրաւ ասիկա, որպէսզի դառնար անուանի անձնաւորութիւն եւ համաժողովներու յայտնի խօսնակ, բազմութիւններ գրաւէր կամ հանրայայտ գրող դառնար: Ո՛չ, այլ Աստուծոյ սէրը կը ստիպէր անոր. սէրն էր, որ առաջ կը մղէր զինք: Ան կը նայէր յաւիտենական տեսանկիւնէն եւ կը սիրէր՝ առանց վախի: Ան չէր համաձայնէր հանրայայտ ըլլալ՝ ճշմարտութիւնը անտեսելու հաշուին, քանի որ կը սիրէր այն մարդիկը, որոնց քով ուղարկուած էր՝ զանոնք Քրիստոսին առաջնորդելու համար:

Ի՞նչ է ճշմարիտ սէրը

«Աստուած սէր է» (Ա. Յովհաննէս 4.8): Այնպէս չէ, որ Ան պարզապէս սէր ունի. Ան Իր էութեամբ սէր է: Այսպիսով, ինչպէ՞ս մենք պէտք է սահմանենք սէրը:

Վերջերս ես կ'աղօթէի, եւ Տէրը խօսեցաւ սրտիս. «Որդի՛ս, Իմ ժողովուրդը կեդրոնացած է սիրոյ արտաքին դրսեւորումներու վրայ, փոխարէնը անդրադառնայ ատոր առանցքային սահմանումին»:

Ես մտածեցի այն մասին, որ սէրը համբերատար է, սէրը բարի է, սէրը հպարտ չէ, սէրը կոպիտ չէ, սէրը իրենինը չի որոներ, եւ շատ այլ բաներ, որոնք գրուած են Ա. Կորնթացիս թուղթին մէջ եւ Աստուածաշունչի այլ հատուածներուն մէջ: Անկէ յետոյ Սուրբ Հոգին ցոյց տուաւ ինձի հետեւեալը. եթէ մենք փոքրիկ երեխաներուն սորվեցնէինք տարբերութիւնը տղամարդու եւ կնոջ միջեւ, ինչպէ՞ս պիտի ընէինք ասիկա: Եթէ մենք միայն ըսէինք. «Կի՛նը ունի երկու ոտք, երկու աչք, քիթ, բերան, երկու ձեռք, երկու դաստակ եւ երկու ոտնաթաթ», արդէօ՞ք մեր նկարագրութիւնը ճիշդ կ'ըլլար:

Նման ընդհանուր նկարագիր ստանալով՝ երեխան կրնայ նայիլ ունէ տղամարդու եւ ըսել. «Ան կին է»: Պատճառը այն է, որ դուք յստակօրէն չէք բացատրած տարբերութիւնը տղամարդու եւ կնոջ միջեւ: Դուք չէք ըսած. «Ահա թէ ինչով կինը կը տարբերի տղամարդէն...»:

Այս աշխարհին մէջ նոյնպէս սէր կայ: Այն նոյնպէս համբերատար է, բարի է, կոպիտ չէ, եւ շատ այլ առումներով նման է Աստուծոյ սիրոյն: Այնուամենայնիւ, հետեւեալ խօսքին մէջ գրուած է այն սահմանումը, որ ցոյց կու տայ գլխաւոր տարբերութիւնը Աստուծոյ սիրոյ եւ այս աշխարհի սիրոյ միջեւ. «Ասիկա է Աստուծոյ սէրը, որ Անոր պատուիրանները պահենք» (Ա. Յովհաննէս 5.3):

Այն պարագային, եթէ մենք ինչ-ինչ պատճառներով չենք նկատած այս անչափ կարեւոր սահմանումը անոր առաջին նամակին մէջ, Յովհաննէսը, որ յայտնի է որպէս սիրոյ առաքեալ, կը կրկնէ այն իր երկրորդ նամակին մէջ.

«Սէրը այս է, որ անոր պատուիրանքներուն համեմատ քալենք...» (Բ. Յովհաննէս 6):

Այս սահմանումը նման չէ Պօղոս առաքեալի սիրոյ նկարագրութեան Ա. Կորնթացիս թուղթին մէջ: Յովհաննէսը չի նկարագրեր սիրոյ առանձնայատկութիւնները, այլ անմիջապէս կը ներկայացնէ ատոր առանցքային սահմանումը՝ այն, ինչ որ Աստուծոյ սէրը կը տարբերի որեւէ տեսակի սէրէն: Սէրը Յիսուսին պատուիրանները պահելն է: Տէրը յստակ խօսեցաւ այս մասին Վերջին ընթրիքի ժամանակ.

«Անոնք, որոնք կ'ընդունին Իմ պատուիրանները եւ կը հնազանդին ատոնց, կը սիրեն Ձիս» (Յովհաննէս 14.21, NLT):

Այնպէս որ, եթէ ես բարի եմ, համբերատար եմ, մեղմաբարոյ եմ, կոպիտ չեմ, պարծենկոտ ու բարկացկոտ չեմ, սակայն մշտապէս կը դաւաճանեմ իմ կնոջը կամ կը կեղծեմ իմ հարկային յայտարարագիրը, ես չեմ վարուիր Աստուծոյ սիրով:

Եթէ ես բարի եմ, համբերատար եմ, մեղմաբարոյ եմ, չեմ նախանձիր, կոպիտ չեմ, պարծենկոտ ու բարկացկոտ չեմ, սակայն հաւանութիւն կու տամ սեռական անբարոյութեան, օրինակ՝ համասեռամոլութեան, որ այսօր աւելի ու աւելի կ'ընդունուի եւ կը խրախուսուի, նոյնիսկ տարբեր երկիրներու կառավարութիւններու կողմէն, կը նշանակէ՝ ես չեմ վարուիր Աստուծոյ սիրով:

Իրականութեան մէջ, ես խաբուած եմ եւ աւելի վտանգաւոր վիճակի

մէջ եմ, քան այն մարդը, որ կոպիտ, չարական, պարծենկոտ եւ բարկացկոտ է, քանի որ ան, հաւանաբար, գիտէ, որ հեռու է Աստուծմէ: Ես սխալմամբ կը կարծեմ, որ արդար դիրք ունիմ Աստուծոյ առջեւ, քանի որ ինչ որ մէկը աղօթած է ինծի հետ «մեղաւորի աղօթքը», սակայն ես այդպէս ալ չեմ ապաշխարած իմ շարունակական մեղքէն: Ուրիշ կերպով ըսելու համար՝ ես չեմ պահեր Յիսուսի պատուիրանները:

Թոյլ տուէք ինծի ընդմիջարկել եւ շատ կարեւոր պնդում մը ընել: Ես չեմ պահեր Աստուծոյ պատուիրանները՝ փրկուելու համար: Ես կը վարուիմ ատոնց մէջ, որովհետեւ փրկուած եմ, եւ որովհետեւ Անոր սէրը կը բնակի իմ մէջ: Իմ հնազանդութիւնը կ'ապացուցէ, որ ես ճշմարտապէս իմ սիրտն ու կեանքը նուիրած եմ Անոր:

Կրկին, ճշմարտութիւնը այն է, որ սիրոյ որեւէ տեսակ, որ ուղղակիօրէն կը հակասէ Աստուծոյ խօսքին եւ ճանապարհներուն, յաւիտենական սէրը չէ: Այն ժամանակաւոր է: Այդպիսի սէրը պիտի դրդէ մարդուն, որ զգայ, թէ ինքը բարի է, եւ նոյնիսկ՝ անձնագոհ, պիտի հաղորդէ անոր պատկանելիութիւն եւ պիտի դարձնէ ընդունուած, սակայն յաւիտեան չի մնար: Այն չ'առաջնորդեր դէպի յաւիտենական կեանքը: Մէկ օր այն կ'իյնայ ժայռէն դէպի կրակի լիճի յաւերժական փոսը:

Այդ պարագային, ի՞նչն է պատճառը, որ այդ սէրը, որ այդքան ճիշդ կը թուայ, ժամանակաւոր է: Ադամը եւ Եւան համարեցին, որ բարիի եւ չարի գիտութեան ծառի պտուղը բարի էր եւ իմաստուն պիտի դարձնէր զանոնք.

«Երբ կինը տեսաւ, որ ծառը բարի էր... ցանկալի՝ *իմաստուն* դարձնելու համար» (Ծննդոց 3.6, NKJV):

Ամենայն հաւանականութեամբ, սկիզբը Եւան այսպէս մտածեց. «*Ինչո՞ւ սիրող Աստուած պատուիրեց մեզի չուտել այն, ինչ որ «բարի» է մեզի համար: Ասիկա տրամաբանական չէ*»: Եւ ան որոշեց ընդունիլ այն «բարիքը» եւ «*իմաստութիւնը*», որոնք Աստուծոյ խորհուրդի մէջ չէին: Մենք կ'ուզենք ստանալ մեր «ինչու»-ներու պատասխանները, բայց եկէք շիտակ խօսինք. երբեմն Աստուած կը կամենայ, որ հնազանդ ըլլանք, նոյնիսկ՝ առանց հասկնալու: Մենք կը հաւատա՞նք, որ Ան կը սիրէ մեզ, երբ կը պատուիրէ հեռու մնալ այնպիսի բաներէ, որոնք մեզի համար բարի կը թուան: Մենք կը վստահի՞նք Անոր, թէ՞ կը դառնանք դատաւորներ, որոնք կ'ըսեն Անոր, թէ որն է բարին մեզի համար՝ ինչպէս առաջին զոյգը Եդեմի պարտէզին մէջ:

Կարելի է բերել անթիւ օրինակներ Աստուծոյ խորհուրդներու մասին, ինչպէս նաեւ՝ Անոր տուած պատուէրներու իրական պատճառներ-

րու մասին, բայց թոյլ տուէք բերել միայն մէկ օրինակ: Քրիստոսի մէջ քառասուն տարի ըլլալէն յետոյ ես այդպէս ալ չհանդիպեցայ ոեւէ մէկու մը, որ կրնար բացատրել ինձի, թէ ինչու Աստուած պատուիրեց մարգարէի մը հետեւեալը. «Վասնզի Տէրը Իր Խօսքովը ինձի այսպէս պատուիրեց ու ըսաւ. «Հաց չուտես ու ջուր չխմես ու զացած ճամբայէդ չդառնաս»» (Գ. Թագաւորաց 13.9): Այդ մարգարէն չհնազանդեցաւ *անհմաստ թուացող* պատուիրին եւ զրկուեցաւ կեանքէն անհնազանդութեան պատճառով:

Անկեղծ ըսելու համար՝ երբեմն կրնայ թուալ, թէ ճշմարիտ սէրը հակառակ է այն բանին, ինչ որ մենք սէր կը համարենք: Ինչո՞ւ Պօղոսը ըսաւ Կորնթոսի եկեղեցիին. «Ես ուրախութեամբ պիտի վատնեմ զիս եւ իմ ամէն ունեցածը ձեզի համար, թէեւ կը թուայ, թէ որքան շատ ես կը սիրեմ ձեզ, այնքան քիչ դուք կը սիրէք զիս» (Բ. Կորնթացիս 12.15, NLT): Այն, որ Կորնթոսի եկեղեցին կը կարծէր, որ Պօղոսը չէր սիրէր զանոնք, անհմաստ կը թուայ: Սակայն ես համոզուած եմ՝ ասոր ակնյայտ պատճառը այն է, որ անոնք Պօղոսը կը համարէին խիստ, օրինապաշտ առաջնորդ, որ կ'ուզէր, որ իրենք ապրէին համաձայն շարք մը կանոններու: Թերեւս անոնք արդէն սկսած էին մոլեռանդ համարել զինք, բայց բոլորովին սխալ էին: Ան կը սիրէր զանոնք *յաւիտենական սիրով*, ոչ թէ այս աշխարհի սիրով: Ան կը յանդիմանէր զանոնք ճշմարտութեամբ, կը զգուշացնէր զանոնք եւ ապաշխարութեան կը կանչէր, թէեւ անոր ունկնդիրները կրնային սէր չհամարել ատիկա: Այնուամենայնիւ, անոր խօսքերը յագեցած էին Աստուծոյ ճշմարիտ սիրով:

Խօսիլ ճշմարտութիւնը սիրով

Այս ամէնէն յետոյ եկէք խօսինք ճշմարիտ սիրոյ կարեւորութեան մասին: Վերանայինք սիրոյ նկարագրութիւնը.

Սէրը համբերատար է:

Սէրը բարի է:

Սէրը չի նախանձիր:

Սէրը չի պարծենար:

Սէրը չի հպարտանար:

Սէրը կոպիտ չէ:

Սէրը իրենինը չի փնտռեր:

Սէրը չի բարկանար:

Սէրը չի հաշուեր սխալները:

Սէրը չ'ուրախանար անարդարութեան պատճառով:

Սէրը երբեք չի յանձնուիր:

Ասիկա է սէրը, որ պահենք Անոր պատուիրանները:

Եթէ մենք կը խօսինք ճշմարտութիւնը, սակայն բարի չենք, համբերատար չենք, այլ փոխարէնը կը նախանձինք, կը պարծենանք, հպարտ ենք, կոպիտ ենք, մերը կը փնտռենք, կը բարկանանք, կը հաշուենք մեզի հանդէպ գործած սխալները, չենք ներեր, կ'ուրախանանք անարդարութեան պատճառով եւ կը յանձնուինք՝ մտածելով, որ որոշ մարդիկ չեն փոխուիր, մենք չենք պահեր Անոր պատուիրանները: Մենք կրնանք քարոզել ապաշխարութիւն, հաւատք Յիսուս Քրիստոսի հանդէպ եւ այն ամէնը, ինչ որ գրուած է Աստուածաշունչին մէջ, սակայն մենք չենք վարուիր ճշմարիտ սիրով: Մենք օրինապաշտ դարձած ենք եւ մարդոց Աստուծոյ մօտ առաջնորդելու փոխարէն՝ վնաս կը հասցնենք անոնց:

Անգամ մը երիտասարդ մը մօտեցաւ ինձի եւ ըսաւ.

- Ես կանչուած եմ միեւնոյն ծառայութեան մէջ, որ ունիք դուք: Ես կանչուած եմ շտկում բերելու Քրիստոսի մարմինին մէջ:

Երբ ան ըսաւ ինձի այդ մասին, ես հասկցայ իմ սրտին մէջ, որ անոր դրդապատճառները սխալ էին: Սուրբ Հոգին տուաւ ինձի հետեւալ խօսքերը անոր համար.

- Կուգե՞ս գիտնալ, թէ ինչպէս գործես ճշմարիտ մարգարէական ծառայութեան մէջ:

Անոր երեսը ողողեցաւ ժպիտով, եւ ան ըսաւ.

- Այո՛, շա՛տ կ'ուզեմ գիտնալ:

- Ամբողջ ընթացքին, երբ դուն կը յանդիմանես կամ կը զգուշացնես, քու սիրտը պէտք է լեցուած ըլլայ սիրով այն մարդոց հանդէպ, որոնց կը քարոզես, - ըսի ես:

Ան քանի մը վայրկեան լուռ մնաց:

- Կը կարծեմ՝ Աստուած դեռ պէտք է աշխատի ինձի հետ:

- Ես կը հպարտանամ քեզմով, - ըսի անոր: - Նման խօսքեր կրնայ ըսել միայն խոնարհ մարդը: Դուն շատ աւելի մօտ ես այդ հոգեւոր վիճակին, քան կը կարծես: Քու սիրտը զգայուն է:

Սէրը աւելի շատ հոգ կը տանի ուրիշներու մասին, քան՝ սեփական անձի: Սիրոյ հոգատարութիւնը բաւական է, որ թոյլ չտայ մարդոց վայր իյնալ ժայռէն: Սէրը կ'արտայայտէ բոլոր մեղմաբարոյ յատկանիշները, որոնց մասին գրուած է Ա. Կորնթացիս 13-րդ գլուխին մէջ, սակայն, ատոր հետ մէկտեղ, այն երբեք չի շեղիր մեր Փրկիչի եւ Աստուծոյ պատուիրաններէն:

Սէրը այնքան անհրաժեշտ է, եւ այնքան կարելոր. այն կեանքի էութիւնն է: Աղօթեցէ՛ք, որ Աստուած լեցնէ ձեր սիրտը Իր սիրով՝ Իրմով, որ դուք իրականութեան մէջ աւելի շատ հոգ տանիք այլ մարդոց մասին, քան՝ ձեր կեանքի: Գրուած է, որ Սուրբ Հոգին կը սփռէ այս սէրը մեր սրտերուն մէջ: Մենք կրնանք խնդրել Անորմէ կենսատու սէրը՝ իր խորութեամբ, երկարութեամբ եւ բարձրութեամբ:

Այնպէս որ, խնդրեցէ՛ք, կրկին խնդրեցէ՛ք, եւ շարունակեցէ՛ք խնդրել, որ Ան լեցնէ ձեր սրտերը Աստուածային, յաւիտենական սիրով:

գործնական քայլ

Մենք պէտք է ձայն բարձրացնենք այն մեղքի դէմ, որ կը ցանկապէս ներխուժել եկեղեցի, սակայն պէտք է ընենք աստիկա սիրով: Հակառակ պարագային, մեր զգուշացումները չեն տար անհրաժեշտ արդիւնքը: Աստուած շարունակ կը զգուշացնէ մեզ Իր Խօսքին միջոցով, սակայն Անոր մեծ սէրը դրդեց Անոր, որ աւելին ընէ. Ան ուղարկեց Իր Որդին՝ վճարելու բոլոր այն մեղքերուն համար, որոնց մասին Ան կը զգուշացնէր մեզ:

Մենք պէտք է ունենանք այս սէրը, երբ կը զգուշացնենք մարդիկը մեղքի դէմ: Եւ գոյութիւն ունի միայն մէկ սիրոյ աղբիւր՝ Աստուած: Աստուած սէր է: Եթէ կ'ուզենք աճիլ սիրոյ մէջ, մենք պէտք է խորացնենք մեր յարաբերութիւնները Աստուծոյ հետ:

Այնքան կարելոր է, որ մենք մշտապէս ժամանակ անցընենք Աստուծոյ հետ՝ փնտռելով Ջիւնք եւ խնդրելով, որ Ան ա՛լ աւելի լեցնէ մեզ Իր սիրով: Երբ մենք լեցուինք սիրով, այն կը քշէ մեզմէ առճակատման հետ կապուած բոլոր վախերը: Այն կը ստիպէ մեզ գործելու յանուն մեզ շրջապատող մարդոց՝ ոչ միայն մարդասիրական քայլեր ընելով, այլեւ՝ զգուշացնելով, երբ աստոր կարիքը ըլլայ: Աստուծոյ սէրը ազատ կ'արձակէ մեզ, եւ մենք պիտի կարենանք այդ ազատութիւնը այլ մարդոց տալ: Ժամանակ յատկացուցէ՛ք այսօր, որպէսզի ջանասիրաբար աղօթէք եւ խնդրեցէ՛ք Աստուծմէ լեցնել ձեզ Իր սիրով, եւ արագ մի՛ յանձնուիք այս աղօթքին մէջ:

ԿՈՐԾԱՆԵԼ ՔՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Գոյութիւն ունի երեք դիրքորոշում մեղքի վերաբերեալ, որոնք մեծ վնաս կը հասցնեն հաւատացեալներուն:

Առաջինը՝ կան հաւատացեալներ, որոնք կ'որոշեն անտեսել մեղքը՝ իրենց խստացած սրտերու պատճառով: Անոնք անզգայ են այն իրողութեան հանդէպ, որ մեղանչելով՝ ցաւ կը պատճառեն Աստուծոյ սրտին: Տէրը կը հառաչէ անոնց համար. «Մի՞թէ անոնք կ'ամչնան այս գարշելի արարքներէն: Բոլորովի՛ն. անոնք նոյնիսկ կարմրիլ չեն գիտեր» (Երեմիա 8.12, NLT): Անոնց խիղճը վնասուած է, երբեմն՝ վառած ըլլալու աստիճան:

Երկրորդը, որ նոյնքան վտանգաւոր է՝ կան հաւատացեալներ, որոնք կը հաւատան այն սուտին, որ բոլորս մեղաւոր բնութիւն ունինք: Անոնք կը հաւատան, որ Յիսուսի արեան զօրութիւնը բաւական է, որ ազատէ մեզ մեղքի պատիժէն, բայց ոչ՝ մեղքի ստրկութենէն: Անոնք կ'ընդունին այն ճշմարտութիւնը, որ մենք սուրբ դարձած ենք Քրիստոսի մէջ, սակայն կը հաւատան այն սուտին, որ սուրբ կեանք վարելը անհրաժեշտ չէ: Թիւատիրի եկեղեցիին մէջ ճիշդ նման ուսմունք կը քարոզէին: Պողոսը յատկապէս կը խօսի այս մասին՝ գրելով.

«Այսպիսով, մի՞թէ շարունակենք մեղք գործել, որպէսզի Աստուած աւելի ու աւելի յայտնէ մեզի Իր զարմանալի շնորհքը: Անշուշտ՝ ո՛չ: Քանի որ մենք մահացած ենք մեղքի համար, ինչպէ՞ս կրնանք շարունակել ապրիլ ատոր մէջ» (Հռովմայեցիս 6.1,2, NLT):

Այս երկու դիրքորոշումները կը նկարագրեն քրիպտոնաքարը՝ գիտակ-

ցուած, շարունակական մեղքը, որ կը տկարացնէ թէ՛ առանձին հաւատացեալներ, թէ՛ որեւէ եկեղեցական համայնք: Այս երկու խումբերուն մէջ եղող մարդիկ *տրուած են մեղքին*: Ղատաստանին օրը յատկապէս անոնք պիտի լսեն Յիսուսէն. «Մէկդի գացէ՛ք քովէս» (տե՛ս Մատթ. 7.20-23):

Երրորդը՝ կան մարդիկ, որոնք կը պայքարին՝ մեղքէն ազատելու համար: Անոնք կը կամենան ազատ ըլլալ, բայց մեղքը ամուր բռնած է զանոնք: Անոնք Աստուծոյ խօսքին մէջ դեռ չեն յայտնաբերած, թէ ինչպէս հաւատքով գործադրեն իրենց ազատութիւնը: Երբ կը մեղանչեն, անոնց սիրտը կը ցաւի, քանի որ կը սիրեն զԱստուած: Անոնք ճշմարտապէս կ'ապաշխարեն, բայց որոշ ժամանակ յետոյ կրկին կը մեղանչեն: Ցաւօք, այն իրողութիւններէն մէկը, որ կը պահէ զանոնք այդ ստրկութեան մէջ, մեղքի զգացումն է՝ դատապարտութեան հետ: Այն ամօթը, որ անոնք կը զգան իրենց մեղքի պատճառով, կը պահէ զանոնք այդ մեղքի մէջ:

Եթէ դուք այս երրորդ խումբին մէջ էք, կը խնդրեմ, լսեցէ՛ք ինձի: Յիսուս կ'ըսէ մեզի. «Եթէ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, յանդիմանէ զանիկա: Եթէ ապաշխարէ, ներէ անոր: Եթէ օրը եօթը անգամ քեզի դէմ մեղանչէ ու օրը եօթը անգամ դառնայ քեզի ու ըսէ. «Կ'ապաշխարեմ», պէտք է ներես անոր» (Ղուկաս 17.3,4): Մեր Տէրը կը պատուիրէ ներել այն մարդը, որ կը մեղանչէ, բայց օր մը շարունակ անկեղծօրէն կ'ապաշխարէ. մենք պէտք է ներենք այնպէս, ինչպէս որ մեր երկնային Հայրը կը ներէ մեզի (տե՛ս Եփես. 4.32): Կ'ուզեմ, որ գիտնաք. եթէ դուք բազում անգամներ մեղանչած էք, սակայն ամէն անգամ ճշմարտապէս մօտեցած էք Աստուծոյ՝ սրտի ցաւով ու ճշմարիտ ապաշխարութեամբ, դուք ներուած էք, եւ Յիսուսի արիւնը կը մաքրէ ձեզ այնպէս, ըսես դուք երբեք չէք մեղանչած: Մի՛ պատժէք ձեզ, քանի որ այդ պարագային դուք կը փոքրացնէք Յիսուսի արեան մեծութիւնը եւ կրկին կը փորձէք արդարանալ ձեր գործերով: Այդպէս վարուելով՝ դուք չէք կրնար փրկուիլ եւ ներում ստանալ: Փրկութիւնը պարզեւ է, որ Աստուած տուած է Իր շնորհքով:

Այս գլուխը ուղղուած է երրորդ դիրքորոշումը ունեցող մարդոց: Ես կ'ուզեմ պատմել ձեզի այն մասին, թէ ինչպէս Աստուծոյ խօսքը ազատեց զիս:

Ես չէի կրնար ազատիլ

Երբ տասներկու տարեկան էի, իմ ընկերներէն ոմանք ծանօթացուցին զիս պոռնոկրաֆիք ամսագրերու հետ: Մենք կը փոխանցէինք ատոնք միմիանց, եւ կարճ ժամանակ յետոյ ես կախուածութիւն ձեռք բերի:

Ամէն ինչ սկսաւ թեթեւ պոռնոկրաֆիայէն, բայց ես արագօրէն անցում կատարեցի աւելի ծանր նիւթերու: Քովս սկսաւ սեռական մտքեր,

որոնք անվերահսկելի դարձան: Դպրոցի դասերու ժամանակ ես կը նայէի աղջիկներուն եւ սեռական յարաբերութիւններ կը պատկերացնէի: Ես կլանուած էի սեռական կիրքով:

Տասնինը տարեկանին, մեր տղաներու ուսանողական հանրակացարանին մէջ տեղի ունեցող հաւաքոյթի ժամանակ, կեանքս նուիրեցի Քրիստոսին: Շատ մեղքեր անմիջապէս կորսնցուցին իրենց իշխանութիւնը իմ կեանքին մէջ. գինովութիւնը, հայիոյանքները, անպատշաճ վերաբերմունքը աղջիկներու հանդէպ, կոպտութիւնը եւ բազմաթիւ այլ մեղսալի վարքագիծեր ըսես անհետացան: Սակայն պոռնոկրաֆիան եւ կիրքը չթողեցին զիս: Ես տակաւին կապուած էի աստուծոյ եւ չէի կրնար ազատիլ: Ամէն անգամ, երբ տեղի կու տայի այդ մեղքին, արագօրէն կ'ապաշխարէի եւ անկեղծօրէն կը խնդրէի Աստուծոմէ, որ ներէ ինձի:

Մինչեւ փրկուիլը ես չէի պայքարեր իմ մէջ մոլեգնող սեռական կիրքին դէմ, այլ պարզապէս տեղի կու տայի աստոր ամէն անգամ, երբ իմ մէջ ցանկութիւն կը յառաջանար: Փրկուելէն յետոյ ես կատաղի պայքարի մէջ էի. չէի ուզեր պոռնոկրաֆիա դիտել, քանի որ գիտէի, որ աստիկա կը հակասէ Աստուածապաշտ կեանքին, բայց կը թուար՝ աստիկա աւելի զօրաւոր էր, քան իմ դիմակայելու ուժը:

1982 թուականին, երբ 23 տարեկան էի, ամուսնացայ Լիզային հետ: Ես կը կարծէի, թէ այդ կիրքը պիտի մարեր, քանի որ այժմ ես ամուսնացած էի այն աղջկան հետ, որուն մասին կ'երագէի: Բայց կիրքը չհեռացաւ. փոխարէնը՝ ամէն ինչ աւելի բարդացաւ: Ջիս կը գրաւէր իմ տեսադաշտին մէջ յայտնուող որեւէ պոռնոկրաֆիք նիւթ, ինչպէս որ մագնիսը կը քաշէ երկաթը: Աստիկա վնասակար ազդեցութիւն կը ձգէր Լիզային եւ իմ յարաբերութիւններուն վրայ՝ թէ՛ անկողինին, թէ՛ այլ բնագաւառներուն մէջ:

1983 թուականին ես ծառայութեան մէջ մտայ, սակայն տակաւին կը պայքարէի պոռնոկրաֆիայի դէմ: Ես աւելի ու աւելի ուժգին յանդիմանութիւն կը զգայի՝ գիտակցելով սխալս: Եկեղեցւոյ մէջ իմ պարտականութիւններու մէջ կը մտնէր ծառայել իմ հովիւին, անոր ընտանիքին, ինչպէս նաեւ՝ մեր հիւր-ծառայողներուն: Մեր եկեղեցին ամենաճանչցուած եկեղեցիներէն մէկն էր Ամերիկայի մէջ, եւ մենք կը հիւրընկալէինք բազմաթիւ ակնառու հովիւներ եւ քարոզիչներ: Անոնցմէ մէկը շատ յայտնի էր իր ազատագրման ծառայութեամբ: Ան քանի մը տարի ապրած էր Ասիոյ մէջ: Գոյութիւն ունին փաստագրուած պատմութիւններ այն մասին, որ անոր ծառայութեան միջոցով մարդիկ կ'ազատէին մեղքերէն եւ դեւերէն: Ատոնք բացառիկ են, իսկ երբեմն, նոյնիսկ, աներեւակայելի: Աստուած զարմանալիօրէն կը գործածէր զինք: Ան Լեպթըր Սամրալն էր:

1984 թուականի աշնան ան հերթական կարգով եկաւ մեր եկեղեցի՝

քառօրեայ սեմինար անցընելու համար, եւ ես կրկին անոր հիւրընկալն էի: Ես արդէն լաւ ծանօթ էի այդ ծառայողին անոր նախորդ այցելութիւններէն: Այս անգամ, երբ կ'ուղեկցէի անոր ինքնաշարժով, եւ մենք առանձին էինք, ես համարեցի, որ ատիկա յարմար պահ էր, որ պատմէի անոր սեռական կիրքի հետ ունեցած իմ պայքարին մասին: Ես խոնարհեցուցի ինքզինքս եւ մինչեւ վերջ անկեղծացայ, քանի որ կ'ուզէի ազատիլ ատորմէ: Լեսթըրը խստօրէն խօսեցաւ հետս՝ ճշմարիտ հաւատքի հօր պէս: Ես ուշադրութեամբ լսեցի անոր ըսած ամէն մէկ բառը, իսկ յետոյ յուսահատօրէն խնդրեցի. «Աղօթեցէ՛ք, որ ես ազատութիւն ստանամ»:

Ան շատ ազդեցիկ աղօթք մը ըրաւ, սակայն, ի գարմանս ինձի, յաջորդ շաբաթներու եւ ամիսներու ընթացքին քովս ոչինչ փոխուեցաւ: Ես կը շարունակէի պայքարիլ կիրքին դէմ:

Մօտաւորապէս ինը ամիս յետոյ ինձի առաջարկեցին բնակարան մը, ուր ես կրնայի առանձնանալ՝ ծոմի եւ աղօթքի համար: Իմ ծոմի չորրորդ օրը՝ 1985 թուականի մայիսի 6-ին (եւ երբեք չեմ մոռնար այդ ամսաթիւը), երբ խորունկ աղօթքի մէջ էի, ես լիովին ազատեցայ կիրքի հոգիէն: Սուրբ Հոգին առաջնորդեց զիս, որ իշխանութեամբ հրամայեմ կիրքին, որ հեռանայ իմ կեանքէն: Ես ըրի ատիկա, եւ այն իշխանութիւնը, որ եկաւ իմ կեանքին մէջ, աւելին էր, քան երբեք վերապրած էի: Գոհութիւն Աստուծոյ, մինչեւ օրս ես ազատ եմ ատորմէ:

Ինչո՞ւ աւելի ուշ

Քանի մը տարի այդ մեղքէն ազատ ապրելէն յետոյ զիս սկսաւ նեղացնել հարց մը, որ աղօթքով բերի Տիրոջ առջեւ: «Հայր, - հարցուցի, - ես չեմ հասկնար: Ես խոնարհեցայ Լեսթըրին՝ այդ մեծ ծառայողին առջեւ: Քանի որ շատերը ազատագրուած էին անոր ծառայութեան միջոցով, ինչո՞ւ ես ազատութիւն չստացայ այն օրը, երբ ան աղօթեց ինձի համար: Ինչո՞ւ ես ազատութիւն ստացայ միայն ինը ամիս յետոյ»:

Տէրը սկսաւ ցոյց տալ ինձի իմ կեանքը այդ ընթացքին: 1984 թուականի աշնան, երբ Լեսթըրը եկաւ քարոզելու մեր եկեղեցւոյ մէջ, ես կ'աղօթէի ամէն առաւօտ գրեթէ իննսուն վայրկան: Արդէն երկու տարի շարունակ ես կ'ընէի ատիկա: Կ'արթննայի առաւօտեան ժամը 05:00-ին, մինչեւ ժամը 05:30-ը տունէն դուրս կ'ելլէի եւ կ'աղօթէի մինչեւ 07:00-ը: Այդ ժամանակ իմ ամենաջերմեռանդ աղօթքները հետեւեալն էին. «Աստուած, գործածէ՛ զիս՝ շատերը դէպի Յիսուս առաջնորդելու համար. գործածէ՛ զիս՝ հիւանդները բժշկելու համար. գործածէ՛ զիս՝ մարդոց

ազատագրում տալու համար: Հա՛յր, գործածե՛՛ր զիս՝ ազգերու վրայ ազդեցութիւն ձգելու եւ զանոնք Յիսուսին առաջնորդելու համար»: Ես կ'աղօթեի նոյնը կրկին ու կրկին, օրըստօրէ՛ խնդրելով Աստուծո՛ւն ծառայութիւն տալ ինծի եւ բանալ այնպիսի դռներ, որոնք ոչ ոք կրնար փակել: Ես կ'աղօթեի մեծ ջերմեռանդութեամբ:

Աշնանային օր մը, իմ սովորական դարձած առաւօտեան աղօթքի մէջ էի, եւ կ'աղաղակէի նոյնը, ինչի մասին կը խնդրէի ամիսներ, եւ նոյնիսկ՝ տարիներ շարունակ: Յանկարծ, ինչ որ պահի մը ընթացքին, երբ ջերմեռանդ կը խնդրէի, Սուրբ Հոգին խօսեցաւ հետս. «Որդի՛ս, դուրս կրնաս շահիլ բազմութիւններ Յիսուսին համար, ազատագրում տալ շատերուն եւ բժշկել հիւանդները, բայց յաւիտենութիւնը անցընել դժոխքի մէջ»:

Ես ապշած էի. «Մի՞թէ ասիկա հնարաւոր է: Մի՞թէ ես իրականութեան մէջ կը լսեմ Սուրբ Հոգիին ձայնը»: Ես քիչ մը կասկածամտօրէն վերաբերուեցայ իմ լսածին, մինչեւ որ Ան կրկին խախտեց լռութիւնը՝ ըսելով. «Որդի՛ս, Յուդան ձգեց իր աշխատանքը՝ Ինծի հետեւելու համար. ան կը քարոզէր Աւետարանը, կը բժշկէր հիւանդները Իմ անունով, կ'ազատագրէր մարդիկը Իմ անունով, եւ Յուդան դժոխքի մէջ է»:

Ես մեծցած էի կաթողիկէ ընտանիքի մէջ եւ ընդամենը հինգ տարի էր, որ վերստին ծնած հաւատացեալ էի. այնպէս որ, ես լիովին անծանօթ էի այն վերապրումին, որ այժմ կը նկարագրեմ: Մարմինովս սարսուռ անցաւ. ես սկսայ դողալ, երբ իմ ներսը լսեցի Անոր խօսքերը: Ես կը ցնցուէի եւ կը վախնայի խօսելէ: Ես բոլորովին շփոթած էի, բայց, միեւնոյն ժամանակ, գիտէի, որ Աստուած կը խօսէր հետս, եւ երկիւղած էի Անոր ներկայութենէն:

Ի վերջոյ, հաւաքեցի ուժերս եւ ակնածալի կերպով հարցուցի. «Այդ պարագային, ինչի՞նչ ես պէտք է անենէն շատ ձգտիմ: Ո՞րն է ամենակարեւորը»:

Ես այնպէ՛ս յստակ լսեցի Անոր պատասխանը. «Զիս մտերմօրէն ճանչնալը»:

Այս հանդիպումէն յետոյ, ուսումնասիրելով Աստուծոյ խօսքը, ես հասկցայ, որ յատկապէս անէնէն շատ ասիկա կը ցանկային Դաւիթը, Մովսէսը, Պօղոսը եւ անոնք, որոնք իրենց կեանքին բարեյաջող աւարտը ունեցան: Պօղոսը կը պնդէ.

«Եւ իրաւ բոլոր բաներն ալ վնաս կը համարեմ իմ Տէրոջս՝ Քրիստոս Յիսուսին գերազանց գիտութեանը համար, որուն համար անէն բանէ զրկուեցայ եւ աղտեղութիւն կը համարեմ, որպէսզի Քրիստոսը շահիմ» (Փիլիպպեցիս 3.8):

Անոր նպատակը Յիսուսին մտերմօրէն ճանչնալն էր, եւ այդ ճանաչողութենէն կը բխէր անոր զօրաւոր ծառայութիւնը. Ես կը ձգտէի ծառայութեան, ոչ թէ Յիսուսին մտերմօրէն ճանչնալուն: Այդ օրը ամէն ինչ փոխուեցաւ:

Անկէ ետք իմ ամենօրեայ աղօթքները մօտաւորապէս այսպիսին էին. «Տէ՛ր, ես կ'ուզեմ ճանչնալ Քեզ այնքան, որքան մարդը կրնայ ճանչնալ: Ես կ'ուզեմ հաճեցնել Քեզ այնքան, որքան մարդը կրնայ հաճեցնել: Տո՛յց տուր Քու սիրտը, յայտնէ՛ այն, ինչ որ կարելի է Քեզի համար, եւ յայտնէ՛ այն, ինչ որ այնքան ալ կարելի է Քեզի համար: Սորվեցո՛ւր ինծի Քու ճանապարհները, եւ թող որ իմ կեանքը ուրախութիւն պարգեւէ Քեզի...»:

Ես կը շարունակէի արթննալ վաղ առաւօտեան, բայց իմ ջերմեռանդ խնդրանքները այդպիսին էին: Ես չէի հասկնար, թէ ինչ տեղի կ'ունենար, բայց յետագային Աստուած ցոյց տուաւ ատիկա ինծի:

Իմ հարցն էր. «Ինչո՞ւ ես չազատագրուեցայ, երբ Լեսթըր Սամրալը աղօթեց ինծի համար», եւ ես սկսայ հասկնալ ատոր պատասխանը: Աստուած խօսեցաւ հետս. «Երբ դուն բացիր քու սիրտը այդ աւետարանիչին, դուն կը վախնայիր, որ այդ մեղքը՝ կիրքը, թոյլ պիտի չտար քեզի մտնելու այն ծառայութեան մէջ, որուն համար, ինչպէս որ դուն գիտէիր, Ես կանչած էի քեզ: Դուն կը վախնայիր, որ այն կ'արժեզրկէր քեզ: Քու տրտմութիւնը կենդրոնացած էր քու վրայ. ատիկա այս աշխարհի տրտմութիւնն էր»:

Ան շարունակեց. «Ինը ամիս յետոյ, քանի որ դուն կ'աղաղակէիր Զիս մտերմօրէն ճանչնալու համար, քու սիրտը սկսաւ ցաւիլ այն պատճառով, որ քու մեղքով դուն ցաւ կը պատճառէիր Իմ սրտին: Դուն գիտէիր, որ Ես մահացած էի՝ քեզ այդ մեղքէն ազատելու համար, եւ քեզի համար ատելի էր մասնակցութիւն ունենալ բանի մը, ինչին պատճառով Ես խաչ բարձրացած էի: Քու տրտմութիւնը ուղղուած էր Ինծի. ատիկա Աստուծոյ ուզած կերպով տրտմութիւն էր:

Պօղոս կը գրէ Կորնթոսի եկեղեցիին.

«Արդ՝ ուրախ եմ, ոչ թէ որ տրտմեցաք, հապա որ ապաշխարութեան համար տրտմեցաք. որովհետեւ դուք Աստուծոյ ուզածին պէս տրտմեցաք, այնպէս որ բանով մըն ալ ձեզի չվնասեցի: Վասնզի *Աստուծոյ ուզածին պէս* եղած տրտմութիւնը փրկութեան համար ապաշխարութեան կ'առաջնորդէ, որ չի զոջացներ. բայց *աշխարհի տրտմութիւնը* մահ կը պատճառէ» (Բ. Կորնթացիս 7.9,10):

Այս խօսքին մէջ օգտագործուած «փրկութիւն» բառը յունարէնի մէջ պարտադիր չէ, որ նշանակէ վերստին ծնունդ: «Սոթերիա» բառը կը սահմանուի որպէս «ապահովութիւն, ազատութիւն, պահպանութիւն վտանգէն կամ կործանումէն» (*«Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան»*): Առանձնացնենք «ազատութիւն» բառը այս սահմանումէն եւ տեղաւորենք վերոյիշեալ խօսքին մէջ՝ «փրկութիւն» բառի փոխարէն. «Որովհետեւ Աստուծոյ ուզած կերպով տրտմութիւնը ապաշխարութիւն կը գործէ *ազատութեան* համար»: Ես ազատութիւն ստացայ՝ ազատագրուեցայ, եւ Աստուծոյ ուզած կերպով տրտմութիւնն էր, որ դուք բացաւ ատոր համար:

Տրտմութեան երկու տեսակ

Գոյութիւն ունի երկու տեսակի տրտմութիւն՝ Աստուածային եւ աշխարհային: Սաւուղ թագաւորի եւ Դաւիթ թագաւորի օրինակները ցոյց կու տան տարբերութիւնը այս երկուքին միջեւ: Ինչպէս նշեցինք նախորդ գլուխներէն մէկուն մէջ, Սաւուղը անհնազանդութիւն ցուցաբերեց Աստուծոյ դէմ ամադեկացիներու հետ պատերազմին մէջ: Ան չընդունեց իր անհնազանդութիւնը, երբ Սամուէլ մարգարէն մատնանշեց այն, սակայն Սամուէլը չյանձնուեցաւ: Սաւուղը մեղադրեց ժողովուրդը, եւ միայն երբ մարգարէն հաստատակամօրէն պնդեց իր ըսածը, ան, ի վերջոյ, խոստովանեցաւ. «Մեղք գործեցի»: Անմիջապէս խոստովանելէն յետոյ ան արագօրէն ըսաւ Սամուէլին. «Մեղք գործեցի. կ'աղաչե՛մ, հիմա ժողովուրդի ծերերուն արջեւ ու Իսրայէլի արջեւ զիս պատուէ՛» (Ա. Թագաւորաց 15.30): Սաւուղի տրտմութիւնը ուղղուած էր իր վրայ: Սամուէլը անչցուցած էր զինք՝ յանդիմանելով իշխաններուն եւ ժողովուրդին արջեւ: Սաւուղ կ'ուզէր վերականգնել իր պատիւը:

Ի տարբերութիւն անոր, Դաւիթ թագաւորը շատ մեծ մեղք գործեց: Ան շնացաւ մէկ ուրիշ մարդու կնոջ հետ եւ պատուիրեց այդ մարդու սպաննութիւնը՝ իր յանցանքը ծածկելու համար: Նաթան մարգարէն յանդիմանեց Դաւիթը անոր իշխաններուն եւ ժողովուրդին արջեւ: Երբ Դաւիթի մեղքը բացայայտուեցաւ, ան գետին ինկաւ եւ ըսաւ. «Մեղանշած եմ Տիրոջ դէմ» (Բ. Թագաւորաց 12.13):

Սաւուղը ըսաւ. «Մեղք գործեցի»: Դաւիթը ըսաւ. «Մեղանշած եմ Տիրոջ դէմ»: Ահա տարբերութիւնը այս պնդումներուն միջեւ: Դաւիթին սիրտը կը ցաւէր, քանի որ ան ցաւ պատճառած էր իր Սիրելիին: Անոր տրտմութիւնը կեդրոնացած չէր իր վրայ, ինչպէս Սաւուղինը: Մենք կը տեսնենք ասիկա, երբ Դաւիթը պառկեցաւ Տիրոջ արջեւ ամբողջ գիշեր եւ եօթը օր ծոմ պահեց: Ան լիովին կը զղջար Աստուծոյ դէմ գործած

արարքներուն համար: Ան պարզօրէն ցոյց տուաւ աստիկա, երբ բացականչեց.

«Միայն Քեզի դէմ մեղանչեցի եւ Քու աչքերուդ առջեւ չարութիւն ըրի, որպէսզի արդար ըլլաս խօսքերուդ մէջ ու անարատ ըլլաս դատաստանիդ մէջ» (Սաղմոս 51.4):

Այս աշխարհի տրտմութիւնը կը կեդրոնանայ մեր վրայ. «Ինչպիսի՞ հետեւանքներ ասիկա պիտի ունենայ», «Ես դատաստանի՞ պիտի ենթարկուիմ ասոր համար», «Ես պիտի որակազրկուի՞մ», «Ես պիտի կրե՞մ իմ մեղքի պատիժը», «Ի՞նչ պիտի մտածեն մարդիկ իմ մասին» եւ այլն: Աստուծոյ ուզած կերպով տրտմութիւնը կը կենդրոնանայ Յիսուսին վրայ. «Ես ցաւ պատճառեցի իմ Սիրելիի սրտին, եւ ինչ ալ Ան որոշէ, *Անոր դատաստանը արդար ու ճշմարիտ է, եւ ես կը յանձնուիմ Անոր ողորմութեան*»:

Լիակատար ազատութիւն

Այժմ ես ազատ էի, բայց դեռ մտքի նորոգման կարիք ունէի: Ինձմէ պահանջուեցաւ երկու-երեք տարի ասոր համար: Մինչեւ 1985 թուականի մայիսը, եթէ ես ինչ որ տեղ պոռնոկրաֆիք նիւթեր կը տեսնէի, չէի կրնար դիմադրել: Այժմ ես կրնամ տիրապետել ինձի եւ հեռանալ այդ նիւթերէն, բայց եթէ իմ կողքով մարմինին փակած հագուստով սիրունատես կին անցնէր, ես ստիպուած կ'ըլլայի այլ կողմ նայելու, որպէսզի իմ միտքը չթափառէր: Ասիկա այն ամբողջական ազատութիւնը չէր, որ Յիսուս տուած էր մեզի: Իմ ազատագրումը տակաւին լիարժէք չէր:

Կայ տարբերութիւն *ազատութիւն ստանալու* եւ *ազատ ըլլալու* միջեւ: Ես ազատութիւն ստացայ մայիսի 6-ին, բայց Յիսուս կ'ըսէ. «Եւ ճշմարտութիւնը կը ճանչնաք, եւ ճշմարտութիւնը ազատ կ'արծակէ ձեզ» (Յովհաննէս 8.32): Նպատակը՝ ազատ ըլլալն է, իսկ ասոր համար ճշմարտութիւնը պէտք է թափանցէ մեր էութեան մէջ:

Ես շարունակեցի մնալ Անոր խօսքին եւ աղօթքի մէջ, եւ իմ միտքը սկսաւ դիտարկել կանանց այնպէս, ինչպէս Ան կը տեսնէ զանոնք: Առաջին լուրջ փոփոխութիւնը տեղի ունեցաւ, երբ սրտիս մէջ հասկցայ, որ բոլոր կանայք *դուստրեր* են: Սուրբ Հոգին ցոյց տուաւ ինձի, որ ամէն կին ինչ որ մայրիկի եւ հայրիկի փոքրիկ աղջնակն է: Անոնք միսի կտոր չեն, ինչպէս որ ես կը դիտարկէի անոնց՝ մինչեւ ազատութիւն ստանալը:

Որոշ ժամանակ յետոյ իմ սիրտը աւելի մեծ յայտնութիւն ստացաւ:

Ինծի համար պարզ դարձաւ, որ բոլոր կանայք ստեղծուած են Աստուծոյ պատկերով, եւ որ Ան պսակած է զանոնք փառքով եւ պատիւով (տե՛ս Ծննդ. 1.26,27 եւ Սաղմ. 8.5): Կրկին, թերեւս այս յայտնութիւնը խոր չթուայ, բայց այն արմատապէս փոխեց իմ կեանքը:

Հիմա, երբ իմ առջեւ ինչ որ պոռնոկրաֆիք պատկեր կ'երեւայ, աստիկա վիրաւորական է ինծի համար: Այո՛, այն, ինչով ժամանակ մը տարուած էի, այժմ կը վանէ զիս: Հիմա, երբ իմ կողքով գրաւիչ կին մը անցնի, ես պէտք չունիմ գլուխս շրջելու, ինչպէս տարիներ առաջ՝ ազատութիւն ստանալէն յետոյ: Այժմ ես կրնամ նայիլ այդ կնոջ աչքերուն եւ ողջունել զինք՝ առանց անոր հանդէպ անպարկեշտ ցանկութիւն ունենալու:

Ես բացայատեցի Յիսուս Քրիստոսի շնորհքի զօրութիւնը: Ես կը հասկնամ, որ քրիստոնեաներու մեծ մասը կը դիտարկէ շնորհքը որպէս փրկութիւն, մեղքերու ներում եւ պարգեւ մը, որուն արժանի չէինք. ուրիշ ոչինչ: Ես հասկցայ, որ, այո՛, Աստուծոյ շնորհքը կ'ընդգրկէ այս զարմանալի յատկանիշները, բայց այն նաեւ զօրութիւն կու տայ մեզի, որ փոխուինք, որ ընենք այն, ինչին համար որ ճշմարտութիւնը կը կանչէ մեզ:

Մի՞թէ մենք կրնանք հաւատալ, որ Յիսուսին ձրիաբար տրուող պարգեւը կ'ազատէ մեզ *մեղքի յաւիտենական պատիժէն*, բայց այնքան զօրաւոր չէ, որ ազատութիւն տայ մեզի *մեղքի ստրկութենէն*: Դուք չէ՛ք կրնար համոզել զիս ատոր մէջ:

Ես գիտե՛մ: Ես վերապրա՛ծ եմ Անոր կեանք փոխող շնորհքը եւ այժմ ազատ եմ: Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ Ան ըրաւ աստիկա ինծի համար, եւ այնքա՛ն շնորհակալ եմ, որ Ան նոյնը պիտի ընէ ձեզի համար: Աստիկա պայքար էր, ոչ թէ զբօսանք բնութեան գիրկը. ինձմէ պահանջուեցաւ հաստատակամութիւն եւ ջերմեռանդ աղօթք: Ամենայն հաւանականութեամբ, նոյնը պիտի պահանջուի նաեւ ձեզմէ: Բարի լուրը այն է, որ դուք պարտութիւն չէք կրեր, որովհետեւ Աստուծոյ շնորհքը եւ սէրը չեն պարտուիր: Այնպէս որ, մնացէ՛ք Անոր շնորհքին հետ եւ ազա՛տ եղէք:

գործնական քայլ

Աստուած է ձեր Փրկիչը, եւ ուրիշը չկայ: Ո՛չ մէկ հինգ քայլէ բաղկացած ծրագիր, ո՛չ մէկ մարդկային ջանք, եւ ո՛չ մէկ կանոններու ցուցակ կրնան ազատել ձեզ մեղքի ստրկութենէն: Բայց աստիկա չի նշանակեր, որ Աստուած կ'ազատէ մեզ մեղքէն, մինչ մենք անգործութեան մատնուած ենք: Աստուած կ'ազատէ ձեզ, բայց Ձինք փնտռելը ջանքեր կը պահանջէ: Երբ փնտռենք մեր երկնային Հայրը ճիշդ դրդապատճառներով՝ Ձինք ճանչնալու, ոչ թէ Անորմէ ինչ որ բան ստանալու համար, մենք պիտի քալենք դէպի մեր ազատութիւնը:

Հարցումը հետեւեալն է. որքա՞ն կարելոր է ձեզի համար ազատութիւն ստանալը: Դուք ժամանակ պիտի յատկացնէ՞ք զԱստուած փնտռելու համար: Դուք պիտի առանձնանա՞ք ձեր առօրեայ գործերէն, եթէ ասոր կարիքը ըլլայ: Դուք պիտի շարունակէ՞ք անդադար աղաղակել, մինչեւ որ գտնէք Անոր ներկայութիւնը եւ ստանաք Անոր խոստումները: Դուք պիտի մօտենա՞ք Անոր՝ թոյլ տալով Անոր որոշելու, թէ ինչպիսին պիտի ըլլան ձեր յարաբերութիւնները: Դուք պիտի ձգտի՞ք ազատելու մեղքէն յանուն ձեր յարաբերութիւններուն, ոչ թէ այն պատճառով, որ աստիկա թոյլ չի տար ձեզի ապրիլ ձեր ուզած կերպով: Դուք պիտի խոնարհի՞ք՝ թոյլ տալով, որ նշանակուած եւ Աստուածապաշտ առաջնորդները աղօթեն ձեզի համար եւ խօսին ձեր կեանքին մէջ:

Հաշուեցէ՛ք ձեր ստրկութեան գինը, բայց նոյնպէս հաշուեցէ՛ք ձեր ազատութեան գինը: Եւ հետեւեցէ՛ք Աստուծոյ ամբողջ սրտով: Ան կը սպասէ, որ մտերմօրէն ճանչնայ ձեզ:

ՄԵՂՔ, ՈՐ ՄԵՂՔ ՉԷ

Դուք զարմացա՞ք՝ կարդալով այս գլուխի վերնագիրը:

Կռապաշտութիւնը ունի եւս մէկ կողմ, որուն մասին տակաւին չենք խօսած, եւ այն կարելի է անուանել «մեղք, որ մեղք չէ»: Մենք չենք կրնար անտեսել այն, եթէ կը ցանկանք վերջնականօրէն կործանել քրիպտոնաքարը, քանի որ այն կրնայ ամէնէն անորսալին ըլլալ: Եկէ՛ք սկսինք առակով մը:

Օր մը մարդ մը ըսաւ Յիսուսին, թէ որքան հրաշալի պիտի ըլլար խնճոյքի երթալ Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Յիսուս օգուտ քաղեց անոր դիտողութենէն եւ կարելոր ճշմարտութիւն մը յայտնեց. «Մարդ մը մեծ ընթրիք ըրաւ եւ շատերը հրաւիրեց: Եւ ընթրիքի ժամանակ իր ծառան ուղարկեց, որ հրաւիրեալներուն ըսէ. «Եկէ՛ք, որովհետեւ արդէն ամէն բան պատրաստ է»: Եւ ամէնքը սկսան մէկ-մէկ ետ քաշուիլ (կամ՝ արդարացումներ ներկայացնել)» (Ղուկաս 14.16-18): Այս առակի առանցքային միտքը արդարացումներ ներկայացնելն է:

Ձեզի հետ ատիկա երբեք պատահա՞ծ է: Դուք որեւէ բան խնդրած էք ինչ որ մէկէ մը՝ օգնել ձեզի, երեկոյթի գալ, կարելոր առաջադրանք կատարել, ինչ որ յանձնարարութիւն կամ մէկ ուրիշ բան, եւ ի պատասխան՝ թոյլ արդարացումներ կը լսէք: Ի՞նչ կը նշանակեն ատոնք: Պարզապէս այն, որ անոնց ծրագիրները աւելի կարելոր են, քան ձեր խնդրանքը: Ըստ էութեան, անոնք կ'ըսեն. «Իմ գործերը աւելի առաջնահերթ են ինծի համար, քան քուկդ»:

Յիսուսի խօսքերով՝ այդ մարդը խորոված, նրբերշիկ կամ չիփսեր չէր հիւրասիրեր: Ատիկա մեծ խնճոյք էր եւ կարելոր իրադարձութիւն:

Ան կազմակերպած էր ատիկա, որպէսզի օրհներ իր կողմէն հրաւիրուածները: Հրաւիրատուները տպուած էին, կնքուած էին եւ ուղարկուած էին անոնց, որոնք պիտի ուզէին մասնակցիլ, բայց բոլորը պատասխանեցին արդարացումներով. «Առաջինը ըսաւ. «Ես արտ մը ծախու առի ու պէտք է, որ ելլեմ տեսնեմ զանիկա. կ'աղաչեմ քեզի, զիս հրաժարուած համարէ»» (Ղուկաս 14.18):

Ես կարելոր հարցում մը պիտի տամ. մի՞թէ ազարակ գնելը մեղք է: Անշուշտ՝ ո՛չ: Եթէ այդպէս է, ես խնդիրներ պիտի ունենամ, որովհետեւ իմ կեանքին մէջ դէպք մը եղած է, երբ հողատարածք գնած եմ: Այնուամենայնիւ, երբ հողատարածք գնելը աւելի կարելոր է, քան Տիրոջ Խօսքը, ատիկա մեղք է՝ «մեղք, որ մեղք չէ»: Աւելի ճիշդ՝ ատիկա կռապաշտութիւն կամ քրիպտոնաքար է:

Տեսնենք, թէ ինչ պատասխանեց միւսը. «Միւսը ըսաւ. «Հինգ գոյգ եզ ծախու առի, կ'երթամ, որ զանոնք փորձեմ. կ'աղաչեմ քեզի, զիս հրաժարուած համարէ»» (Ղուկաս 14.19):

Կրկին, մի՞թէ եզներ գնելը կամ, ուրիշ ձեւով ըսելու համար, գործի համար անհրաժեշտ սարքաւորումներ գնելը մեղք է: Անշուշտ՝ ո՛չ. իմ կեանքի ընթացքին ես բազմաթիւ գնումներ կատարած եմ գործի համար: Այնուամենայնիւ, երբ ինչ որ բան գնելը աւելի կարելոր է, քան Տիրոջ Խօսքը, ատիկա մեղք է: Այնպէս որ, կրկին, ատիկա «մեղք է, որ մեղք չէ», իսկ աւելի ճիշդ՝ ատիկա կռապաշտութիւն կամ քրիպտոնաքար է:

Եկէք լսենք մեր վերջին հրաւիրեալը.

«Միւսը ըսաւ. «Կին առի, անոր համար չեմ կրնար գալ»»
(Ղուկաս 14.20):

Թոյլ տուէք վերջին անգամ հարցնել. մի՞թէ կին առնելը մեղք է: Եթէ այդպէս է, շատ տղամարդիկ, ներառեալ ես, խնդիրներ պիտի ունենան: Անշուշտ, ատիկա մեղք չէ: Այնուամենայնիւ, երբ ամուսնանալը աւելի կարելոր է, քան Տիրոջ Խօսքը, ատիկա մեղք է: Կրկին, ատիկա «մեղք է, որ մեղք չէ», իսկ աւելի ճիշդ՝ ատիկա կռապաշտութիւն կամ քրիպտոնաքար է:

Կը կարծեմ՝ իմաստը հասկնալի է. երբ մենք կը կարելորենք ռեւէ անձ, որեւէ առարկայ, երեւոյթ կամ գործունէութիւն աւելի, քան Տիրոջ Խօսքը, այն, ինչ որ մեղք չէ, մեղք կը դառնայ:

Իմ քրիստոնաքարը բացայայտուեցաւ

Ինչպէս արդէն ըսի, ես սիրահարուեցայ Յիսուս Քրիստոսին, երբ երկրորդ քուրսի ուսանող էի «Փուրտիու» համալսարանին մէջ: 1981 թուականին, մեր համալսարանի տղաներու հանրակացարանին մէջ ես ընդունեցի Զինք որպէս Տէր: Ես կրակով լեցուած էի Անոր հանդէպ:

Քանի մը ամիս յետոյ սկսաւ ամերիկեան ֆութպոլի (ոտնագնդակի) հերթական խաղաշրջանը: Ես արդէն երրորդ քուրս էի եւ որպէս ուսանող՝ ունէի մեր տեղական խումբի բոլոր խաղերու տոմսերը: Նախորդ երկու տարիներու ընթացքին նոյնիսկ մէկ խաղ չէի կորսնցուցած: Բայց այժմ ես այնքան ոգեւորուած էի Յիսուսով, որ օգտագործեցի ֆութպոլային խաղերու ժամանակը՝ Աստուածաշունչը ուսումնասիրելու համար: Տղաներու հանրակացարանը խաղաղ էր, քանի որ բոլորը խաղերու կ'երթային: Ատիկա աղօթքի հրաշալի ժամեր անցընելու հնարաւորութիւն էր: Ես կը վայելէի Աստուծոյ հետ անցուցած ժամանակը աւելի, քան ամերիկեան ֆութպոլը:

Ոչ ոք ըսած էր ինձի. «Դուն պէտք չէ ամերիկեան ֆութպոլի խաղերու երթաս»: Իմ մտքով նոյնիսկ չէր անցներ, որ խաղերու երթալը սխալ է: Իրականութեան մէջ, իմ ուսման վերջին տարուան ընթացքին ես գացած էի շատ խաղերու:

Անմիջապէս «Փուրտիու» համալսարանը աւարտելէն յետոյ տեղափոխուեցայ Թեքսաս նահանգի Տալլաս քաղաքը եւ քանի մը ամիս յետոյ աշխատանքի ընդունուեցայ իմ եկեղեցիին մէջ, որուն անդամ դարձած էի: Եկեղեցւոյ մեծ եւ ազդեցիկ ըլլալու պատճառով մենք աւելի քան չորս հարիւր աշխատող ունէինք:

Այդ ժամանակ Տալլասի Քոուպոյները Ֆութպոլի ազգային լիկայի լաւագոյն խումբերէն մէկն էր: Ես Քոուպոյներու մեծ համակիր չէի, քանի որ մեծցած էի Միչիկըն նահանգին մէջ, բայց ամէն երկուշաբթի կը լսէի մեր աշխատողներու գրոյցները Քոուպոյներու մասին: Անոնք զգացմունքօրէն կը քննարկէին կիրակի օրուան խաղը՝ վիճակագրական տուեալները, խաղի ուշագրաւ պահերը եւ, անշուշտ, եզրափակիչ խաղերու հնարաւոր արդիւնքները:

Հետաքրքրասիրութենէն մեկնած՝ սկսայ դիտել Քոուպոյներու խաղերը: Ես սկսայ մէկ-երկու խաղակէսէ: Ինձի հաճելի կը թուար դիտել զանոնք, քանի որ անոնց խաղը շատ տպաւորիչ էր: Ատիկա եւս մէկ առաւելութիւն կու տար ինձի. ես կրնայի լուրջ կեցուածք ընդունիլ եւ քննարկել խաղերը մեր գրասենեակի միւս աշխատողներուն հետ:

Բայց ժամանակի ընթացքին իմ հետաքրքրութիւնը Քոուպոյներու

հանդէպ անեցաւ եւ խաղերը կը դիտէի ամբողջութեամբ: Ես սկսայ բարձրաձայն խօսիլ հեռատեսիլին հետ՝ երբեմն ուրախանալով, իսկ երբեմն պոռալով խաղացողներուն վրայ: Ի վերջոյ, այն աստիճան տարուեցայ ատորմով, որ ոչ մէկ խաղ կը կորսնցնէի, եւ ոչ ալ որեւէ հատուած խաղերէ: Նոյնիսկ խաղաշրջաններու միջեւ ես եւ միւս աշխատողները կը շարունակէինք քննարկել խումբի կազմը յաջորդ խաղաշրջանին մէջ, եւ այն, թէ ինչպիսին պիտի ըլլար անոնց խաղը: Ես արդէն լիարժէք համակիր էի:

Իմ ոգեւորութեան չափ չկար, երբ սկսաւ յաջորդ խաղաշրջանը: Ամէն կիրակի՝ ծառայութենէն յետոյ, ես շտապելով տուն կ'երթայի եւ կը միացնէի հեռատեսիլը՝ նոյնիսկ առանց հագուստս փոխելու, իսկ այդ ժամանակ մենք քոստիւմ եւ փողկապ կը կրէինք: Ես չէի անջատուեր հեռատեսիլէն, թէւ անյարմար հագուստով էի եւ լոգասենեակ երթալու կարիք ունէի: Ես չէի ուզեր կորսնցնել խաղը նոյնիսկ մէկ վայրկեանով:

Խաղի կիսուն՝ ընդմիջման ժամանակ, ես իմ սենեակս կ'երթայի եւ հագուստս կը փոխէի: Եթէ Լիզան ինչ որ բանի մը մէջ օգնութեան կարիք ունենար, ան պէտք է մոռնար այդ մասին. «Սիրելի՛ս, Քոուպոյնթը՛րը կը խաղան»: Մենք կը ճաշէինք խաղի կիսուն, կամ նոյնիսկ՝ խաղէն յետոյ, բայց երբեք՝ խաղի ընթացքին:

Այդ պահուն ես արդեն գիտէի խումբի բոլոր վիճակագրական տուեալները: Ես ուշադրութեամբ կ'ուսումնասիրէի ատոնք եւ շարունակ կը մտածէի, թէ ինչպէս Քոուպոյնթերը կրնային անելի լաւ խաղալ: Աշխատավայրին մէջ ես արդէն կը վարէի բոլոր խօսակցութիւնները խաղերու մասին: Եկեղեցւոյ մէջ կային մարդիկ, որոնք անվճար տոմսեր ունէին, եւ ես մեծ պատրաստակամութեամբ կ'ընդունէի մարզադաշտ երթալու եւ խաղերը դիտելու բոլոր հրաւերները: Ես երբեք *թոյլ արդարացումներ չունէի*՝ չերթալու համար:

Եկէք անցնինք յաջորդ խաղաշրջանին: Խաղերը սկսելէն կարճ ժամանակ առաջ ես աղօթք մը ըրի, որ, իմ կարծիքով, շատ պարզ եւ անկարելոր էր: Այնուամենայնիւ, ես չէի պատկերացներ, որ այն պիտի փոխէր իմ կեանքը: Իմ աղօթքը այսպիսին էր. «Տէ՛ր, կը խնդրեմ, մաքրէ՛ իմ սիրտը: Ես կ'ուզեմ ըլլալ սուրբ եւ առանձնացած Քեզի համար. այնպէս որ, եթէ իմ կեանքին մէջ կայ այնպիսի բան, ինչ որ հաճելի չէ Քեզի, կամ անելի առաջնահերթ է Քեզմէ, բացայայտէ՛ եւ օգնէ՛ հեռացնել ատիկա»:

Խաղաշրջանը կը մօտենար ավարտին: Եզրափակիչ խաղերուն շատ քիչ ժամանակ մնացած էր: Ես կը դիտէի որոշիչ խաղերէն մէկը. Քոուպոյնթերը կը խաղային ընդդէմ Ֆիլատելֆիոյ Արծիւներու: Յաղթո-

ղը պիտի մասնակցէր եզրափակիչ խաղերուն, իսկ պարտուողը դուրս պիտի մնար: Ես չէի անջատուեր հեռատեսիլէն. ես նստած չէի բազմոցին, այլ կեցած էի հեռատեսիլի էքրանին (պատկերացոյցին) առջեւ: Վերջին խաղակէսն էր, եւ խաղի աւարտին ընդամէնը ութ վայրկեան մնացած էր: Քոուպոյները կը պարտուէին չորս միաւորով, երբ խումբը գնաց յարձակման անոնց հանրայայտ յարձակողի առաջնորդութեամբ: Ես առջեւ-ետեւ կը քալէի յարձակումներու ընթացքին՝ զայրոյթն պոռալով վատ խաղի պարագային, եւ սրտանց ուրախանալով լաւ խաղի պարագային: Խաղի անորոշ աւարտը կարծես աշխուժութիւն կը յառաջացնէր:

Յանկարծ, առանց որեւէ նախազգուշացման, Աստուծոյ Հոգին մղեց զիս աղօթքի: Այդ անսպասելի մղումը ամբողջովին համակեց զիս. «Աղօթէ՛, աղօթէ՛, աղօթէ՛»: Ատիկա բեռ էր՝ ուժգին եւ ծանր զգացում սրտիս խորքը: Ես գիտէի, որ այդպիսի մղում կը յառաջանայ, երբ Աստուծոյ Հոգին կը ցանկայ, որ առանձնանամ եւ աղօթեմ:

Ես բարձրաձայն ըսի. «Տէ՛ր, խաղի աւարտին ընդամէնը ութ վայրկեան մնացած է: Ես պիտի աղօթեմ, երբ այն աւարտի»:

Զնայած ատոր՝ մղումը չդադրեցաւ եւ չթուլցաւ:

Անցաւ քանի մը վայրկեան: Դեռեւս ցանկալով թեթեւութիւն ստանալ՝ ես բացականչեցի. «Տէ՛ր, ես հինգ ժամ կ'աղօթեմ, երբ խաղը աւարտի: Ընդամէնը վեց վայրկեան մնացած է»:

Գնդակը Քոուպոյներուն քովն էր: Ես համոզուած էի, որ անոնք պիտի յաղթէին այդ կարեւոր խաղը: Բայց եւ այնպէս, աղօթքի մղումը չէր թուլնար, այլ աւելի կը զօրանար: Ես յուսահատութիւն ապրեցայ: Զէի ուզեր ձգել խաղը եւ բարձրաձայն ըսի. «Տէ՛ր, ես կ'աղօթեմ մինչեւ օրուան վերջը, նոյնիսկ՝ ամբողջ գիշեր, եթէ կը ցանկաս»:

Ես մինչեւ վերջ դիտեցի խաղը: Քոուպոյները յաղթեցին, եւ քանի որ խոստացած էի Աստուծոյ, ես անմիջապէս մարեցի հեռատեսիլը: Բարձրացայ երկրորդ յարկ՝ իմ աշխատասենեակը, փակեցի դուռը եւ ծունկի եկայ գորգին վրայ՝ աղօթելու: Բայց աղօթքի մղումը անցած էր: Այլեւս աղօթքի բեռ չկար: Նոյնիսկ թեթեւ զգացում չկար. ես ոչինչ կը զգայի:

Փորձեցի բորբոքել այդ զգացումը: Ես փորձեցի աղօթել, բայց իմ խօսքերը չոր ու միապաղաղ էին: Շատ ժամանակ չպահանջուեցաւ՝ հասկնալու համար, թէ ինչ տեղի ունեցաւ. ես գերադասեցի խաղը Աստուծոյ խնդրանքէն:

Ես խոնարհեցայ՝ երեսս գորգին դպցնելով, եւ հառաչեցի. «Աստուած, եթէ ինչ որ մէկը հարցնէր ինձի. «Ո՞վ աւելի կարեւոր է քու կեանքին մէջ՝ Աստուած, թէ՞ Տալլասի Քոուպոյները», ես անվարան

պիտի պատասխանելի. «Անշուշտ՝ Աստուած»: Բայց հազիւ նոր ես ցոյց տուի, թէ ո՛վ աւելի կարելոր է: Դուն ունէիր իմ կարիքը, իսկ ես գերադասեցի խաղը, ոչ թէ Քեզ: Կը խնդրեմ, ներէ՛ ինձի»:

Ես անմիջապէս լսեցի սրտիս մէջ. «Որդի՛ս, Ես չեմ ուզեր հինգ ժամուան աղօթքի զոհաբերութիւն քեզմէ: Ես կը ցանկամ հնազանդութիւն»:

Կեանքի որել ոլորտ

Այսպիսի կռապաշտութիւնը կրնայ տեղ գտնել կեանքի որել բնագաւառի մէջ: Ես կը յիշեմ դէպք մը, որ տեղի ունեցաւ գրեթէ նոյն ժամանակ, ինչ նախորդ պատմութիւնը: Օր մը՝ առաւօտ կանուխ ես կը պատրաստուէի լեցնելու իմ չոր շիլան (միտով կամ իւղով եփուած բրինձի կամ ձաւարի թանձր ապուր) ափսէի մէջ: Ես կը սիրեմ շիլա ուտել առաւօտեան: Բայց այդ առաւօտ լսեցի Աստուծոյ շնչոցը. «Ես կ'ուզեմ, որ ծոմ վերցնես նախաճաշէն»:

Ես կը յիշեմ, որ կը նայէի իմ շիլային եւ այնքան կ'ուզէի ուտել: Ես ըսի. «Տէ՛ր, յաջորդ շաբաթ եռօրեայ ծոմ կը վերցնեմ». եւս մէկ *թոյլ արդարացում*՝ Անոր խնդրանքին չհնազանդելու համար: Աստուած ցոյց տուաւ ինձի, որ կերակուրը կուրք էր ինձի համար: Ես Աստուծոյ հետ հաղորդակցութեան թանկագին հնարաւորութիւններ կորսնցուցած էի, քանի որ իմ ցանկութիւնը կերակուրի հանդէպ աւելին էր, քան Անոր ներկայութիւնը եւ Խօսքը վերապրելու ձգտումը:

Նոյն կերպով, երբ ես չափէն շատ տարուեցայ կոլֆով, Սուրբ Հոգին դրդեց զիս, որ իմ կոլֆի մականներու ամբողջ հաւաքածուն նուիրեմ հովիւի մը (անոր կեանքին մէջ կոլֆը սխալ տեղ չէր):

Մէկուկէս տարի կոլֆ չխաղալէն յետոյ, արիեստավարժ կոլֆ խաղացողի մը սրտին մէջ Տէրը դրաւ, որ նուիրէ ինձի իր կոլֆի պարագաներու հաւաքածուն, որ հազարաւոր տոլարներ արժէր: Ես չէի գիտեր՝ ինչ ընել: Ատորմէ քանի մը ամիս յետոյ հովիւ մը ինձի ըսաւ, որ Աստուած դրած է իր սրտին մէջ մականներու հաւաքածու նուիրել ինձի: Ես իսկապէս շփոթեցայ:

Երբ ան գնաց, եւ ես մնացի մինակ, հարցուցի Տիրոջը. «Ի՞նչ ընեմ ամբողջ այս հաւաքածուն»:

«Կո՛լֆ խաղա», - լսեցի իմ սրտին մէջ:

«Բայց մէկուկէս տարի առաջ Դուն պատուիրեցիր, որ նուիրեմ իմ բոլոր մականները»:

Ես լսեցի, թէ ինչպէս Աստուած ըսաւ. «Կոլֆը այլեւս սխալ տեղ չէ քեզի համար: Այն դարձած է հանգիստի եւ հաճելի ժամանցի միջոց»:

Աստորմէ՛ յետոյ եւ մինչեւ օրս ես կոլֆ կը խաղամ: Աստուած հրաշալի կերպով օգտագործեց այս խաղը՝ ինծի հանգիստ եւ թարմութիւն տալու համար: Նոյնպէս, այն դարձաւ հարթակ՝ կորսուած մարդոց փրկութեան առաջնորդելու, նաեւ իմ որդիներու, այլ եկեղեցական առաջնորդներու եւ մեր ծառայութեան գործընկերներու հետ հաղորդակցելու համար: Իրականութեան մէջ, «Մեսիանձըր ինթերնեշընլ»-ը աւելի քան հինգ միլիոն տոլարի հանգանակութիւններ ստացած է միսիսի եւ աւետարանչական նախագծերու համար իմ ընկերներու եւ գործընկերներու հետ կոլֆ խաղալու շնորհիւ՝ մեր ծառայութեան «Մեսիանձըրի բաժակ» կոչուող կոլֆի մրցոյթի շրջանակներուն մէջ: Եթէ ես լիովին հրաժարէի կոլֆէն մինչեւ կեանքիս աւարտը, նման բան տեղի չէր ունենար: Կոլֆը այլեւս քրիպտոնաքար չէր ինծի համար:

Ահա թէ ինչպէս մենք կրնանք գործել այն մեղքը, որ մեղք չէ: Այն կրնայ տեղ գտնել մեր կեանքին մէջ աշխատանքի, ծառայութեան, մարզանքի, փոխյարաբերութիւններու, հաճելի ժամանցի եւ նոյնիսկ կեանքի առաջնահերթութիւններու մէջ:

Աստուած կը կամենայ, որ մենք վայելենք այս կեանքը: Իրականութեան մէջ, Պօղոս առաքեալը զարմանալի դիտարկում մը կ'ընէ.

«Աստուած, Որ առատօրէն եւ անդադար կը մատակարարէ ամէն բան մեզի համար՝ [մեր] վայելելու համար» (Ա. Տիմոթէոս 6.17, AMPC):

Ան կը կամենայ, որ մենք վերապրինք բոլոր հրաշալի օրհնութիւնները, որոնք տուած է մեզի: Ան կը ցանկանայ, որ մենք վայելենք կեանքը: Ան միայն կը խնդրէ մնալ առաջինը մեր առաջնահերթութիւններու ցուցակին մէջ, ինչ որ կը նշանակէ, որ Ինքը եւ Իր ցանկութիւնները պէտք է նախապատուութիւն ստանան ամէն անգամ, ամէն վայրի եւ ամէն իրավիճակի մէջ:

Ո՛չ մէկ թոյլ, եւ նոյնիսկ՝ հիմնաւոր արդարացում:

Մի՛ կորսնցնէք մեծ ընթրիքը

Կարդանք Յիսուսի առակի աւարտը: Մենք կարդացինք այն երեքին մասին, որոնք հրաւիրուած էին ընթրիքի, սակայն պատասխանեցին՝ արդարացումներ ներկայացնելով:

«Ծառան եկաւ ու իր տիրոջը պատմեց անոնց ըսածնե-

րը: Այն ատեն բարկացաւ տանտէրը ու ըսաւ իր ծառային. «Շուտով քաղաքին հրապարակները ու փողոցները ելի՛ր եւ աղքատներն ու պակասաւորները եւ կաղերն ու կոյրերը հոս մտցուր»: Պահ մը յետոյ ծառան եկաւ ու ըսաւ. «Տէ՛ր, եղաւ ինչ որ հրամայեցիր, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը ըսաւ ծառային. «Ելի՛ր, ճամբաներն ու ցանկերը եւ գտածներդ ստիպէ, որ հոս մտնեն, որպէսզի տունս լեցուի: Քանզի կ'ըսեմ ձեզի, այն հրաւիրուածներէն մէկն ալ Իմ ընթրիքիս համը պիտի չառնէ»» (Ղուկաս 14.21-24):

Անկասկած, այս պատմութիւնը Գառնուկի հարսանիքի ընթրիքին մասին է՝ այն խնճոյքին, որ Հայր Աստուած պիտի կազմակերպէ Իր Որդիին համար ժամանակներու աւարտին, որուն բոլորս հրաւիրուած ենք: Այնուամենայնիւ, այս պատմութեան մէջ կայ սկզբունք մը, որ կը վերաբերի մեր ներկային: Երբ Աստուած կը կանչէ մեզ ինչ որ բանի, ինչ որ կ'ընդհատէ մեր առօրեայ գործերը կամ նախասիրութիւնները, կը նշանակէ՝ կայ շատ աւելի մեծ բան, որ Ան պատրաստած է մեզի համար: Ատիկա կը կոչուի Աստուածային հանդիպում, որ կ'աւարտի մեծ ընթրիքով, եւ այդ խնճոյքի ժամանակ մենք կը ստանանք Անոր Խօսքը, իմաստութիւնը, ներկայութիւնը, մատակարարումը, խորհուրդը, զօրութիւնը եւ բազմաթիւ այլ օրհնութիւններ, որոնք միայն Ան կրնար տալ:

Ան ինչ որ բան պատրաստած էր ինձի համար Տալլասի Քուուպոյներու խաղի ընթացքին: Օր մը ես պիտի գիտնամ, թէ ինչ էր ատիկա: Համոզուած եմ՝ Ան գտաւ ինչ որ մէկուն ճանապարհներու վրայ եւ դաշտերուն մէջ, որ ստացաւ այն օրհնութիւնը, որ նախատեսուած էր ինձի համար: Ես կորսնցուցի այն:

Ես դատապարտութիւն չեմ զգար այդ պատճառով, քանի որ ներում խնդրած եմ Անորմէ, եւ Անոր ողորմութիւնը շա՛տ մեծ է: Այնուամենայնիւ, ես սորված եմ իմ գործած սխալներէն: Այլեւս չեմ ուզեր կորսնցնել որեւէ անակնկալ, որ Ան պատրաստած է ինձի համար՝ քրիպտոնաքարէն կառչելու պատճառով:

Երբ մենք կը ստանանք Աստուծոյ Խօսքը կամ իմաստութիւնը ընդունելու այս անսպասելի հրաւերները եւ մէկ կողմ կը դնենք բոլոր արդարացումները, մենք զօրութիւն կը ստանանք: Յիշեցէ՛ք՝ քրիպտոնաքարը միայն կը տկարացնէ մեզ:

Յաւոք, ոմանք կը շարունակեն կրկին ու կրկին արդարացումներ ներկայացնել: Անոնք այդպէս ալ չեն տար Անոր առաջին տեղը, եւ հնա-

րաւոր է, որ կորսնցնեն մեծ ընթրիքը: Յոյսով եմ, որ այդպէս չ'ըլլար, քանի որ Անոր տունը տեղ կայ, եւ բոլորս հրաւիրուած ենք:

Աղօթեցէ՛ք այս պարզ աղօթքը, որ ես ըրի շատ տարիներ առաջ. «Հա՛յր, ես կը խնդրեմ իմ Տէր Յիսուս Քրիստոսի անունով, մաքրէ՛ իմ սիրտը: Ես կ'ուզեմ ըլլալ սուրբ եւ առանձնացած Քեզի համար. այնպէս որ, եթէ իմ կեանքին մէջ կայ այնպիսի բան, ինչ որ հաճելի չէ Քեզի, կամ աւելի առաջնահերթ է Քեզմէ, բացայայտէ՛ եւ օգնէ՛ հեռացնել աստիկա: Ես չեմ ուզեր կորսնցնել Քու խնձոյքներէն որեւէ մէկը»:

գործնական քայլ

Յոյսով եմ՝ դուք արդէն աղօթեցիք այս գլուխի վերջաւորութեան գտնուող աղօթքը: Եթէ ըրիք աստիկա, Աստուած պիտի սկսի գործել ձեր կեանքին մէջ յաջորդ օրերու, շաբաթներու եւ ամիսներու ընթացքին, որպէսզի աւելի մօտեցնէ Իրեն, եւ այդ ընթացքին պիտի բացայայտէ այն բաները, որոնք հեռու կը պահեն ձեզ Իրմէ: Գործուն կերպով ներգրաւուեցէ՛ք ճիշդ հիմա՝ խնդրելով Աստուծմէ խօսիլ ձեզի հետ որեւէ բանի մասին ձեր կեանքին մէջ, որ արդարացում դարձած է՝ Անոր խօսքերուն չարձագանգելու համար: Գրի՛ առէք այն բաները, որոնք Ան կը յայտնէ ձեզի, եւ քանի մը վայրկեան յատկացուցէ՛ք, որ աղօթէք ատոնց համար: Խնդրեցէ՛ք Աստուծմէ յայտնել Իր կարծիքը այդ բաներուն մասին եւ գրի՛ առէք այն, ինչ որ Ան կ'ըսէ ձեզի:

Եթէ դուք չէք աղօթած այս գլուխի վերջաւորութեան գտնուող աղօթքը, ճիշդ հիմա ժամանակ յատկացուցէ՛ք եւ մէկ ուրիշ աղօթք ըրէ՛ք: Խնդրեցէ՛ք Աստուծմէ տալ ձեզի յօժար եւ խիզախ սիրտ, որպէսզի կարենաք ընել այդ աղօթքը: Գրի՛ առէք այն, ինչ որ Աստուած ցոյց կու տայ ձեր սրտին մէջ, մինչ դուք կ'աղօթէք:

ԽՆՃՈՅՔԻ ԴՈՒՌԸ

Յիսուս խիստ ուշագրաւ բան մը ըսաւ Յայտնութեան գիրքին մէջ գտնուող մէկ ուրիշ եկեղեցւոյ: Անոր խօսքերը սերտօրէն կապակցուած են այն թեմային, որ քննարկեցինք նախորդ գլուխին մէջ:

«Ահա Ես դուռն առջեւ կեցած եմ ու կը թակեմ. եթէ մէկը Իմ ձայնս լսէ ու դուռը բանայ, անոր քով պիտի մտնեմ եւ անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ՝ Ինծի հետ» (Յայտնութիւն 3.20):

Ընթրիք Յիսուսին հետ... Ասիկա հաղորդակցութեան խնճոյք է. ասիկա ընկերակցութիւն է Տիրոջ հետ: Ահա թէ ուր մենք կը ստանանք Անոր խօսքը, իմաստութիւնը, խորհուրդը, զօրութիւնը եւ Անոր ներկայութենէն բխող միւս հրաշալի օրհնութիւնները: Յոյսով եմ՝ այս ընթրիքը մեր մէջ կը յառաջացնէ Անորմէ ընդունելու քաղց, սպասում եւ ոգեւորութիւն: Ահա թէ ինչը զօրութիւն պիտի տայ մեզի: Յիսուսին պատրաստած ընթրիքը քրիստոնաքարի հակաթոյնն է: Ատիկա կարելի է համեմատել այն բանին հետ, որ Սուփըրհերոսը նոր ուժեր կը ստանայ արեւէն: Յիսուս կենդանի խօսքն է, ճշմարիտ Հացը երկինքէն, եւ Անոր ներկայութիւնը կը զօրացնէ մեզ՝ որեւէ տեսակի քրիստոնաքարի հակառակելու համար:

Հարցը հետեւեալն է. ի՞նչ դուռ Ան կը թակէ: Շատ ծառայողներ օգտագործած են այս խօսքը՝ մարդոց փրկութեան կոչ ընելու համար, եւ ատիկա հրաշալի է: Բայց մենք պէտք է յիշենք, որ Ան կը դիմէ եկեղեցիին՝ Իր հետեւորդներուն, ոչ թէ անոնց, որոնք երբեք չեն ձանջցած

Զինք: Այնուամենայնիւ, Յիսուսի կարեւորագոյն շեշտադրումը դուռը չէ, այլ՝ «Եթէ մէկը լսէ» խօսքերը:

Եթէ ես տունով մէկ բարձր հնչող երաժշտութիւն միացնեմ, եւ կարեւոր հիւր մը թակէ իմ տան դուռը եւ ձայն տայ, ես չեմ լսեր: Իմ հիւրը ստիպուած պիտի ըլլայ հեռանալու:

Այնպէս որ, գոյութիւն ունի աւելի կարեւոր հարցում մը. ի՞նչը թոյլ չի տար մեզի լսելու: Եթէ չլսենք, մենք կը կորսնցնենք խնձոյքը Անոր հետ. այնպէս որ, եկէք փնտռենք այս անչափ կարեւոր հարցումին պատասխանը:

Սրբութիւն

Երբ կը յիշատակէք «սրբութիւն» բառը ժամանակակից եկեղեցւոյ մէջ, մարդիկ յաճախ կ'ընկրկին եւ արագօրէն կը փոխեն թեման: Այս բառը գրաւիչ չէ «առաջադէմ» հաւատացեալներուն համար եւ կարծես կը սահմանափակէ անոնց կեանքը: Չափազանց յաճախ սրբութիւնը կը դիտարկուի որպէս գործերով փրկութիւնը վաստակելու հոմանիշ եւ կը համարուի օրինապաշտութիւն:

Այնուամենայնիւ, ասիկա միակ բառն է Նոր կտակարանին մէջ, որ կը նկարագրէ այն եկեղեցին, որուն համար Յիսուս պիտի վերադառնայ: Գրուած չէ, որ Ան պիտի վերադառնայ լաւ առաջնորդներ ունեցող, արդիական, հասարակութեան հետ լաւ կապեր ձեւաւորող կամ ազդեցիկ համայնք ունեցող եկեղեցւոյ համար: Բոլոր այս յատկանիշները անչափ կարեւոր են եւ կը նպաստեն եկեղեցւոյ աճին եւ յաջողութեան, բայց ասոնցմէ ոչ մէկը կը բնութագրէ Քրիստոսի հարսնցուն:

Դժբախտաբար, օրինապաշտական քարոզի պատճառով շատերը կը խուսափին սրբութեան մասին խօսելէն: Կը թուայ, թէ այսօր պէտք է լիովին անտեսել այս թեման՝ մեծ եկեղեցի կառուցելու համար: Միեւնոյն ժամանակ, քարոզիչները գիտեն, որ սրբութեան մասին գրուած է ամբողջ Նոր կտակարանին մէջ, ինչ որ կը նշանակէ, որ անհրաժեշտ է քարոզել այդ մասին: Այնպէս որ, անոնք մեղմացուցած են սրբութիւնը՝ սորվեցնելով մօտաւորապէս հետեւեալը. «Մենք չունինք անձնական պատասխանատուութիւն սրբութեան համար, քանի որ մեր սրբութիւնը Յիսուսն է, եւ այն ապահով է Քրիստոսին մէջ»: Այս վարդապետութիւնը ճիշդ է, սակայն ոչ ամբողջական, քանի որ Նոր կտակարանին մէջ գրուած է սրբութեան երկու կողմի մասին: Ժամանակակից ուսուցումներու եւ քարոզներու ճնշող մեծամասնութիւնը կը միախառնէ այս երկուքը:

Սրբութեան առաջին կողմի վերաբերեալ գրուած է հետեւեալը.

«Աստուած սիրեց մեզ եւ ընտրեց Քրիստոսին մէջ, որ ըլլանք սուրբ եւ անարատ Անոր առջեւ» (Եփեսացիս 1.4, NLT):

Նախքան յաւիտենական արժէք ունեցող որեւէ բան ընդհինք, Աստուած որոշում կայացուց: Ան ընտրեց մեզ եւ ատով իսկ յայտարարեց, որ մենք սուրբ ենք: Մենք անարատ ենք Անոր առջեւ: Խօսքը այն սրբութեան մասին է, որ կը պատկանի մեզի՝ համաձայն մեր դիրքի: Այն օրը, երբ ընդունեցինք Յիսուսը, մենք սուրբ դարձանք Աստուծոյ առջեւ եւ երբեք չենք կրնար անելի սուրբ ըլլալ: Այս պահէն քսանհինգ միլիոն տարի յետոյ դուք նոյնքան սուրբ կ'ըլլաք, որքան այն օրը, երբ ընդունեցիք Յիսուսը:

Օրինակ մը պիտի բերեմ ասոր վերաբերեալ: Ես հանդիպեցայ Լիզա Թոսքանոյին 1981 թուականի Յունիսին: Կարճ ժամանակ յետոյ սիրահարուեցայ անոր եւ որոշում կայացուցի ամուսնանալու անոր հետ: 1982 թուականի Հոկտեմբերի 2-ին ան դարձաւ իմ կինը: Այսօր՝ երեսունհինգ տարի յետոյ, ան անելի շատ իմ կինը չէ, քան այն օրը, երբ ես ամուսնացայ անոր հետ: Եւ ան անելի շատ իմ կինը պիտի չըլլայ մեր ամուսնութեան 70-ամեակին: Ան ունի ճոն Պիվիի կնոջ *դիրքը*: Ան ստիպուած չէ եղած վաստակելու ատիկա, աշխատիլ ատոր համար կամ գնել ատիկա: Ան իմ կինն է, որովհետեւ ես ընտրեցի զինք:

Որոշ առաջնորդներ կը սորվեցնեն այս սրբութեան մասին, ինչ որ ճիշդ է, սակայն կայ անելին: Թոյլ տուէք կրկին օգտագործել իմ ամուսնութեան օրինակը՝ սրբութեան միւս կողմը ցոյց տալու համար:

Մինչեւ ինձի հանդիպիլը, Լիզան սիրախաղեր կ'ընէր այն տղաներուն հետ, որոնք կը հետաքրքրէին զինք, կու տար անոնց իր հեռաձայնի թիւերը եւ կը ժամադրուէր անոնց հետ: Մեր ամուսնութենէն յետոյ ան դադրեցաւ սիրախաղեր ընելէ եւ այլ տղամարդիկ փնտռելէ: Այժմ ան կը ցուցաբերէ այնպիսի *վարք*, որ կը համապատասխանէ անոր *դիրքին*՝ որպէս իմ կին:

Կարդացէ՛ք Պետրոս առաքեալին խօսքերը.

«Այնպէս որ, դուք *պէտք է* ապրիք որպէս Աստուծոյ հնազանդ զաւակներ: Ետ մի՛ նահանջէք դէպի ձեր նախկին կեանքի ճանապարհները, որ բաւարարէք ձեր ցանկութիւնները: Այդ ժամանակ դուք չէիք գիտեր անելի լաւ կեանքի մասին: Բայց հիմա դուք *պէտք է* սուրբ ըլլաք *ձեր բոլոր գործերուն* մէջ, ինչպէս որ Աստուած, Որ ընտրեց ձեզ, Սուրբ է» (Ա. Պետրոս 1.14,15, NLT):

Ես քանի մը բառ ընդգծած եմ այս հատուածին մէջ: Առաջինը՝ ուշադրութիւն դարձուցէք «պէտք է» բառին: Այն պայմանը մեր վարքի մասին, որ Պետրոս կ'առաջադրէ, ընտրովի չէ: Երկրորդը՝ Պետրոսը չի խօսիր Քրիստոսի մէջ մեր *դիրքի* մասին, այլ՝ մեր *գործերուն*: Աստուածաշունչի Ընդլայնուած թարգմանութիւնը գեղեցիկ կերպով ցոյց կու տայ ասիկա. «Դուք անձնապէս ալ սուրբ եղէք ձեր ամբողջ *վարքով* եւ *ապրելակերպով*»: Այս սրբութիւնը կը վերաբերի մեր *վարքին*, ոչ թէ *դիրքին*: Այս իրողութիւնը նման է Լիզայի վարքի փոփոխութեան մեր ամուսնութենէն յետոյ. մեր վարքը պէտք է արտացոլէ մեր դիրքը:

Յատկապէս հոս կը սկսի մեր պայքարը: Իմ քրիստոնէական կեանքի վաղ շրջանին ես շարունակ կը փորձէի սուրբ կեանք վարել եւ շարունակ կը ծախողէի: Ես խիստ կը յուսահատէի: Սակայն բացայայտեցի Աստուծոյ շնորհքը: Ես հասկցայ, որ շնորհքը Աստուծոյ այն զօրութիւնն է, որուն արժանի չէինք, բայց տրուեցաւ մեզի, եւ որը կարողութիւն կու տայ ընելու այն, ինչ որ անկարող ենք մարդկային ուժերով: Ես չէի կրնար ազատիլ պոռնոկրաֆիայէն եւ այլ մեղսալի սովորութիւններէն, բայց երբ բացայայտեցի շնորհքը, ես կրցայ ապրիլ ազատութեան մէջ՝ հաւատալով ասոր եւ համագործակցելով ասոր հետ:

Գոյութիւն ունի ցաւալի փաստ մը: Քանի մը տարի առաջ մեր ծառայութիւնը հարցախոյզ կատարեց: Մենք այցելեցինք տարբեր հարանուանութիւններ եւ վարդապետական ուղղութիւններ ներկայացնող շարք մը եկեղեցիներ: Մեր հարցախոյզը ընդգրկեց աւելի քան հինգ հազար վերստին ծնած քրիստոնէայի ամբողջ ԱՄՆ-ով: Մենք խնդրեցինք մասնակիցներէն տալ Աստուծոյ շնորհքի երեք կամ աւելի սահմանում: Հարցախոյզին արդիւնքները ցոյց տուին, որ մասնակիցներէն գրեթէ իւրաքանչիւրը կը կապակցէր Աստուծոյ շնորհքը փրկութեան, մեղքերու ներման, Աստուծոյ սիրոյ, ինչպէս նաեւ ձրիաբար տրուող պարգեւին հետ, որուն մարդը արժանի չէ: Ասիկա շատ լաւ է: Ողբերգութիւնը այն էր, որ միայն երկու տոկոսէն պակաս հաւատացեալներ գիտէին, որ շնորհքը Աստուծոյ *զօրութիւնն* է: Աստուած Ինքը կ'ըսէ. «Իմ *շնորհքը* բաւական է քեզի համար, *որովհետեւ Իմ զօրութիւնը* կատարեալ կը դառնայ տկարութեան մէջ» (Բ. Կորնթացիս 12.9, NET): Աստուած զօրութիւն կ'անուանէ Իր շնորհքը:

Պետրոսը կը գրէ. «Թող Աստուած աւելի ու աւելի շնորհք տայ ձեզի... Իր Աստուծային զօրութեամբ Աստուած տուած է մեզի այն ամէնը, ինչին կարիքը որ մենք ունինք՝ Աստուածապաշտ կեանք վարելու համար» (Բ. Պետրոս 1.2,3, NLT): Պետրոսը կ'անուանէ Աստուծոյ շնորհքը Անոր Աստուածային զօրութիւնը, որ կարողութիւն կու տայ

ապրելու Աստուածապաշտ կամ սուրբ կեանքով:

Իրականութեան մէջ, մենք չենք կրնար որեւէ բան ստանալ Աստուծո՛մէ՝ առանց հաւատքի: Եւ մենք չենք կրնար հաւատալ այն բանին, ինչին մասին ոչինչ գիտենք: Եթէ ամերիկացի քրիստոնեաներուն միայն երկու տոկոսը գիտէ, որ շնորհքը զօրութիւն կու տայ մեզի, կը նշանակէ՝ ամերիկացի քրիստոնեաներուն իննսունութ տոկոսը կը փորձէ սուրբ կեանք վարել սեփական կարողութեամբ, ինչ որ անհնար է: Ատոր մշտապէս պիտի հետեւին յուսահատութիւնը, պարտութիւնը, ընկճուածութիւնը, դատապարտութիւնը եւ մեղքի զգացումը:

Այսպիսով, պարզ կը դառնայ, թէ ինչո՞ւ քրիստոնեայ քարոզիչները կը միաւորեն սրբութեան բոլոր կողմերը Աստուծոյ առջեւ ունեցած մեր *դիրքին* մէջ: Չափազանց շատ քրիստոնեաներ յուսալքուած են, քանի որ իրենց ուժերով չեն կրցած Աստուածապաշտ կեանք վարել: Շնորհքը միայն Աստուծոյ պատասխանը չէ՝ փրկութեան եւ ներման տեսքով, այլեւ Անոր զօրութիւնը՝ սուրբ կեանք վարելու համար: Եբրայեցիս թուղթի հեղինակը կը գրէ.

«Հետեւեցէ՛ք... սրբութեան, առանց ասոր մէ՛կը պիտի չտեսնէ՛ Տէրը: Զգուշացէ՛ք, չըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ» (Եբրայեցիս 12.14,15):

Այս հատուածը այնքա՛ն շատ բան կ'ըսէ: Առաջինը՝ «հետեւիլ» բառը յունարէնին մէջ «Տիոքօ» բառն է: Այն կը սահմանուի որպէս «հետեւիլ կամ եռանդուն կերպով հետամուտ ըլլալ, ձգտիլ ջանասիրութեամբ եւ աշխատասիրութեամբ՝ ստանալու համար» (*Նոր կտակարանի բառերու ուսումնասիրութեան ամբողջական բառարան*): Ուրիշ բառարանի մը մէջ գրուած է. «Ինչ որ բան ընել՝ մեծ ջանք գործադրելով եւ յստակ մտադրութեամբ կամ նպատակով» (*«Լուվ-Նայտայի յունարէն-անգլերէն բառարան*):

Այս երկու սահմանումները կարդալէն յետոյ մենք պէտք է հարցում մը տանք. այն սրբութիւնը, որուն մասին գրուած է այս հատուածին մէջ, կը վերաբերի մեր *դիրքի՞ն*, թէ՞ *վարքի*: Պատասխանը պարզ է. այն պէտք է որ վերաբերի մեր *վարքին*: Նայեցէք այս հարցումին հետեւեալ կերպով. Կը պատկերացնէ՞ք, թէ ինչ որ մէկը ըսէր իմ կնոջը. «Լիզա Պիվի՛ր, դուք պէտք է մեծ ջանք գործադրէք, որ ձեռք բերէք ճոն Պիվիի կնոջ դիրքը»:

Ան պիտի ծիծաղէր եւ պիտի ըսէր. «Ես արդէն անոր կինն եմ»:

Ինչ կը վերաբերի մեր *դիրքին*, մենք արդէն սուրբ ենք, եւ կարիք

չկայ, որ մեծ ջանք գործադրենք՝ ասոր հասնելու համար: Այնպէս որ, Եբրայեցի թուղթի հեղինակը պէտք է որ նկատի ունենայ մեր վարքը:

Մենք պէտք է ջանասիրաբար ձգտինք սուրբ վարքին: Եթէ ոչ, մենք «ես պիտի մնանք Աստուծոյ շնորհքէն»: Ինչպէ՞ս մենք կրնանք ետ մնալ այն ծածկոց-շնորհքէն, որուն մասին կը քարոզուի մեր օրերուն մէջ: Ատիկա անհնար է: Այնուամենայնիւ, երբ մենք կը հասկնանք, որ շնորհքը Աստուծոյ գերբնական զօրութիւնն է՝ սուրբ վարքին ձգտելու համար, մենք կրնանք հասկնալ, թէ ինչպէս հնարաւոր է ետ մնալ ասորմէ:

Եբրայեցի թուղթի հեղինակը կ'աւարտէ այս զուխը հետեւեալ խօսքերով. «Եկէք շնորհք ունենանք, որուն միջոցով կրնանք ընդունելի կերպով ծառայել Աստուծոյ» (Եբրայեցի 12.28, NKJV): Շնորհքը կը զօրացնէ մեզ՝ Աստուծոյ ընդունելի կերպով ծառայելու եւ սուրբ կեանք վարելու համար:

Այժմ՝ ամենակարեւորը: Գրուած է. «Հետեւեցէ՛ք... սրբութեան, որ առանց անոր ոչ ոք *Տէրը կը տեսնէ*» (Եբրայեցի 12.14): Ինչի՞ մասին կը գրէ այս գիրքի հեղինակը: Մի՞թէ բոլորը պիտի չտեսնեն Յիսուսը: Չէ՞ որ գրուած է. «Ահա Ան ամպերով կու գայ, ու ամէն աչք պիտի տեսնէ *Չինք*, եւ անոնք, որ խոցեցին *Չինք*» (Յայտնութիւն 1.7): Այնպէս որ, ինչպէ՞ս կրնար հոս գրուած ըլլալ. «Առանց սրբութեան մենք չենք տեսներ *Տէրը*»: Ի՞նչ կը նշանակէ աստիկա:

Տեսնել Յիսուսը

Թոյլ տուէք նկարագրել, թե ինչ կը նշանակէ «Տէրը տեսնելը»՝ այն խոստումը, որ մենք կը ստանանք սրբութեան հետեւելու հետեւանքով: Ես հիսունհինգ տարի է՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքացի եմ, եւ այդ ընթացքին մեր երկրին մէջ եղած է տասներկու նախագահ: Ես եղած եմ անոնցմէ իւրաքանչիւրի իրաւասութեան եւ ղեկավարութեան ներքոյ եւ կրած եմ անոնց որոշումներու ազդեցութիւնը: Ես յաճախ ամէն մէկուն անուանած եմ «իմ նախագահը»: Այնուամենայնիւ, երբեք անծամբ չեմ *տեսած* անոնցմէ որեւէ մէկը: Կան Միացեալ Նահանգներու քաղաքացիներ, որոնք մշտապէս *կը տեսնեն* նախագահը, քանի որ անոնք այդ մարդու ընկերներն են կամ կ'աշխատին անոր հետ: Այդ արտօնեալները մշտապէս *կը տեսնեն* զինք, եւ յաճախ հոն են, ուր որ ան *ներկայ* է:

Նոյնպէս, տարիներ շարունակ ես իմացած եմ բազմաթիւ փաստեր Միացեալ Նահանգներու նախագահներու մասին՝ անոնց համոզմունք-

ներու, որոշումներու եւ անձնական կեանքի մասին, ինչպէս նաեւ՝ այլ տեղեկութիւններ, որոնք յայտնի դարձած են հանրութեան: Այնուամենայնիւ, առիթ չեն ունեցած անձնական հաղորդակցութիւն ունենալ այդ առաջնորդներուն հետ: Այդ իսկ պատճառով, ես անտեղեակ եմ անոնց կեանքի մանրամասնութիւններէն՝ այն բաներէն, որոնք յայտնի չեն հանրութեան: Եւ, անշուշտ, ես չեմ վայելած անոնցմէ ոչ մէկուն անձնական ընկերակցութիւնը: Նմանապէս, կան քրիստոնեաներ, որոնք կը գտնուին Յիսուսի իշխանութեան ներքոյ: Քանի որ Յիսուսը անոնց Առաջնորդն է, Անոր որոշումները կ'ազդեն անոնց կեանքին վրայ: Անոնք «Տէր» կ'անուանեն Յիսուսը, սակայն չեն տեսներ Ձինք եւ չեն վայելեր Անոր ներկայութիւնը: Թերեւս դուք վիճարկէք ասիկա, բայց թոյլ տուէք մէջբերում մը ընել, որուն մէջ նոյնիմքն Յիսուսը կը հաստատէ այս ճշմարտութիւնը:

«Այն մարդը, որ ունի Իմ պատուիրանները եւ կը պահէ ատոնք, ան է, որ [իրականութեան մէջ] կը սիրէ Ձիս, եւ ան, որ [իրականութեան մէջ] կը սիրէ Ձիս, կը սիրուի Իմ Հօրմէն, եւ Ես [նոյնպէս] կը սիրեմ զինք եւ ցոյց կու տամ (կը յայտնեմ, կը դրսեւորեմ) Ձիս անոր: [Ես *պարզօրէն տեսանելի պիտի դարձնեմ* Ձիս անոր եւ իրական պիտի դարձնեմ Ձիս անոր համար]» (Յովհաննէս 14.21, AMPC):

Կարդացէ՛ք Անոր խօսքերը. «Պարզօրէն *տեսանելի* պիտի դարձնեմ Ձիս»: Յիսուսին պատուիրանները ունենալը եւ պահելը կը նշանակէ ամէն կերպով ձգտիլ սուրբ վարքին: Այն մարդիկ, որոնք այսպէս կը վարուին, *կը տեսնեն Տէրը*. Ան կը յայտնէ Ինքզինքը: Ան թոյլ կու տայ անոնց մուտք գործել Իր յայտնուած *ներկայութեան* մէջ: Այս փոխյարաբերութեան շնորհիւ, մենք կը դադրինք ընդամէնը Անոր իշխանութեան տակ ըլլալէ եւ կը բարձրանանք մեր Թագաւորին հետ ընկերութեան մակարդակին: Կրկին, Ան կ'ըսէ.

«Դուք Իմ ընկերներն էք, եթէ մշտապէս կատարէք այն բաները, որոնք Ես կը պատուիրեմ ձեզի» (Յովհաննէս 15.14, AMPC):

Ուշադրութիւն դարձուցէք «եթէ» բառին վրայ Անոր պնդումին մէջ: Մենք երգեր կ'երգենք, գիրքեր կը գրենք եւ ուղերձներ կը քարոզենք այն մասին, որ Յիսուսը մեր Ընկերն է: Բայց «եթէ» բառը կը նշանակէ, որ Անոր ընկերութիւնը *պայմանական* է: Ընկերութիւնը Յիսուսին հետ

հիմնուած է մեր սրբութեան վրայ, եւ այն մարդիկ, որոնք կը դարձնեն ասիկա առաջնահերթութիւն իրենց համար, կը բարձրանան *ժառայի* կարգավիճակէն՝ դառնալով *ընկեր*: Յիսուս կ'ըսէ այն մարդոց, որոնք հաւատարիմ մնացին Իրեն. «Այլեւս *ժառաներ* չեմ անուաներ ձեզի» (Յովհաննէս 15.15, NKJV): Այն, որ Ան կ'ըսէ «այլեւս», կը նշանակէ, որ ժամանակ մը անոնք կը համարուէին ժառաներ, ոչ թէ ընկերներ:

Իրականութեան մէջ, Աստուծոյ ծառայ ըլլալը վատ դիրք չէ, եւ անկասկած՝ ատիկա աւելի լաւ է, քան Անոր հետ բոլորովին յարաբերութիւն չունենալը: Այնուամենայնիւ, ծառան չի գիտեր Անոր գործերու դրդապատճառները, իսկ ընկերը յաճախ գիտէ:

Թերեւս դուք չհամաձայնիք. «Բայց բոլորս Աստուծոյ որդիներ եւ դուստրեր ենք»: Այո՛, բայց մենք պէտք է յիշենք այն ճշմարտութիւնը, որ Պօղոսը կ'ըսէ. «Որքան ժամանակ որ ժառանգը երեխայ է, *ժառայէն* ոչ մէկ տարբերութիւն ունի» (Գաղատացիս 4.1): Յունարէնին մէջ կ'օգտագործուի նոյն «ծառայ» բառը, որ Յիսուս օգտագործեց վերոյիշեալ խօսքին մէջ: Քանի տակաւին որդին կամ դուստրը երեխայ է, ան, որպէս կանոն, չի գիտեր Աստուծոյ դրդապատճառները, այլ պարզապէս կը տեսնէ Անոր գործերը:

Ե՛ւ ծնողին, եւ՛ երեխային համար հրաշալի է, երբ որդին կամ դուստրը դուրս կու գայ մանկութենէն՝ դառնալով ընկեր: Նոյնը ճշմարիտ է նաեւ Աստուծոյ ընտանիքին մէջ: Կը փոխուի մեր յարաբերութիւններու բնոյթը, քանի որ մեր Հայրը աւելի շատ գաղտնիքներ կը վստահի մեզի: Բայց մենք նոյնպէս կը փոխուինք: Այժմ մենք ջերմեռանդօրէն կը ձգտինք ոչ թէ պարզապէս անհնազանդ չըլլալ Անոր, այլ նաեւ յուսախափ չընել: Անկասկած՝ մենք կը ձգտինք հնազանդիլ Անոր եւ մշտապէս այդպէս պիտի վարուինք, սակայն մեր սրտի դրդապատճառը արդէն պարզապէս հնազանդիլը չէ, այլ՝ Անոր յուսախափ չընելը:

Դուռը

Այսպիսով, սրբութիւնը ինքնանպատակ չէ, ինչպէս որ օրինապաշտ մարդիկ կը պատկերեն այն: Այն ճանապարհ է դէպի ճշմարիտ մտերմութիւնը Յիսուսին հետ: Այժմ մենք կը հասկնանք, թէ որքան կարելոր է այն դուռը, որուն մասին կը խօսի Յիսուսը. այն հաւատացեալի սիրտն է: Անտեսելով սրբութիւնը՝ մենք կը զրկուինք լսելու եւ արձագանգելու կարողութենէն: Հետեւաբար, մենք կը զրկուինք Անոր հետ ընթրելու արտօնութենէն: Ասիկա կարելի է համեմատել այնպիսի իրավիճակի մը հետ, երբ տան մէջ այնքան մեծ աղմուկ է, որ չենք լսեր, երբ կարելոր

անձնաւորութիւն մը կը թակէ մեր դուռը: Շարունակ թակելէն եւ նոյնիսկ մեր անունը կանչելէն յետոյ այդ ցանկալի հիւրը, ի վերջոյ, կը հեռանայ:

Խուսափելով սորվեցնել սրբութեան մասին՝ մենք, ըստ էութեան, փակած ենք ճանապարհը դէպի մտերմութիւնը մեր Թագաւորին հետ, որ իւրաքանչիւր ճշմարիտ հաւատացեալի մեծագոյն ցանկութիւնն է: Այն դիրքորոշումը, ըստ որուն մենք սորվեցուցած ենք *ժածկող շնորհքի* մասին եւ անտեսած ենք *գորացնող շնորհքը*, փաստօրէն փակած է այդ դուռը եւ ներսէն քաշած է սողնակը: Մենք արժեզրկած ենք շնորհքը, քանի որ իրականութեան այն ե՛լ կը *ժածկէ*, ե՛լ կը *գորացնէ*: Այնուամենայնիւ, ատոր գորացնող կողմը անչափ կարեւոր է՝ մեր Տիրոջ հաղորդակցութիւնը վայելելու համար:

Լիզան եւ ես ամուսնութեան վկայական ունինք, որ տրուած է մեզի Ինտիանա նահանգի կողմէն. այնպէս որ, ըստ օրէնքի՝ մենք ամուսնացած ենք: Պատկերացուցէք, թէ ինչ պիտի կատարուի, եթէ ես պահեմ իմ ամուսնութեան վկայականը անոր առջեւ եւ յայտարարեմ. «Սիրելի՛ս, մենք ամուսնացած ենք. մենք օրէնքով կապուած ենք իրար, բայց ես յարաբերութիւններ ունիմ այլ կիներու հետ»: Ես կրնամ փաստացի ամուսնացած ըլլալ Լիզային հետ, բայց անկասկած՝ ան այլեւս չի բաժնեկցիր հետս իր սրտի ցանկութիւններով եւ գաղտնիքներով: Մտերմութիւնը մեր միջեւ կ'աւարտի: Մենք այլեւս ընկերներ չենք ըլլար, քանի որ ես պիտի կորսնցնեմ այդ արտօնութիւնը: Մի՞թէ այդ կերպով մենք հաճելի համատեղ կեանք պիտի ունենանք: Մի՞թէ ատիկա էր մեր ամուսնութեան նպատակը: Եթէ ես յամառօրէն շարունակեմ նոյն կերպով վարուիլ, ի վերջոյ, պիտի կորսնցնեմ իմ ամուսնութիւնը:

Հնարաւոր է, որ մենք խրախուսած ենք նման վերաբերմունքը մեր եկեղեցական ուսմունքներու միջոցով: Արդեօ՞ք մենք կը քարոզենք քանի մը սուրբգրային հատուած, որոնք Նոր կտակարանի միւս հատուածներէն անջատ, ցոյց կու տան, որ ամէն ինչ լաւ է՝ անկախ մեր վարքէն: Մի՞թէ մենք կրնանք անկողին մտնել այս աշխարհին հետ եւ միեւնոյն ժամանակ յայտարարել Յիսուսին. «Մենք *կրկնած ենք մեղաւորի աղօթքը*, մենք *շնորհքով փրկուած ենք* եւ կը *պատկանինք Քեզի*»: Մի՞թէ մենք կրնանք հաւատալ, որ Ան թոյլ պիտի տայ մեզի ճանչնալ Իր սրտի ծածուկ բաները:

Ես շնութիւն չեմ գործեր Լիզային դէմ, քանի որ չեմ ուզեր կորսնցնել այն յատուկ, մտերիմ եւ սքանչելի պահերը, երբ մեր զլուխները բարձերուն՝ կը նայինք միմիանց, եւ ան կը շշնջայ ինծի այնպիսի բան, որ ոչ մէկ պարագային կ'ըսէ ինչ որ մէկու մը: Ես չեմ ուզեր կորցնել այդ հաճելի յարաբերութիւնները այն ակնառու անձնաւորութեան հետ, որ իմ կիներն է:

Նոյնը կը վերաբերի Յիսուսին: Ես շնութիւն չեմ գործեր Անոր դէմ, քանի որ չեմ ուզեր կորսնցնել մեր մտերմութիւնը եւ վերջ տալ մեր ընկերութեան: Չկայ աւելի մեծ բան՝ կարգավիճակ, հարստութիւն, հաճոյք, գործունէութիւն, համբաւ, դիրք կամ մեղք, որոնք կը գերազանցեն մտերմութիւնը Յիսուսին հետ:

Ես չեմ պատկերացներ իմ կեանքը առանց Անոր խոստումին. «Ես պիտի պատմեմ քեզի ուշագրաւ գաղտնիքներ, որոնք դուն չես գիտեր» (Երեմիա 33.3, NLT): Ես չեմ պատկերացներ իմ կեանքը առանց այն զարմանալի իրողութեան, որ Ան «կը յայտնէ խոր եւ ծածուկ բաներ» (Պանիէլ 2.22, NKJV): Ես չեմ պատկերացներ իմ կեանքը առանց Յիսուսի խօսքերուն. «Այլեւս չեմ խօսիր... այլաբանօրէն, այլ՝ պարզօրէն պիտի պատմեմ ձեզի...» (Յովհաննէս 16.25, NKJV): Եւ, անշուշտ, ես չեմ պատկերացներ իմ կեանքը առանց խոստումի այն մասին, որ Անոր Հոգին ցոյց պիտի տայ մեզի գալիք բաները (տե՛ս Յովհ. 16.13):

Սրբութիւնը բացասական չէ. ընդհակառակը, այն Նոր կտակարանի ամենադրական ճշմարտութիւններէն է: Երբ իրականութեան մէջ հասկնանք սրբութեան ներուժը, մենք տանիքներէն կ'ազդարարենք այն:

գործնական քայլ

Սրբութիւնը վատ բառ չէ. այն գաղտնաբառ է: Սրբութիւնը այն միջոցն է, որուն միջոցով դուք կրնաք բանալ ձեր սրտի դուռը Աստուծոյ ծայնին համար: Առանց սրբութեան՝ դուք նոյնիսկ չէք լսեր, երբ Ան խօսի ձեզի հետ: Սրբութիւնը այնպիսի բան չէ, ինչ որ Աստուած պարզապէս կու տայ ձեզի Յիսուսին զոհի պատճառով, այլ՝ այնպիսի բան, հաճախ որուն դուք *պէտք է* ապրիք՝ ձեր մտքով, խօսքով եւ գործերով:

Այնուամենայնիւ, Աստուած չի ձգեր, որ միայնակ պայքարիք սրբութեան համար: Ահա թէ ինչու Ան շնորհք կու տայ մեզի: Անոր շնորհքը կ'ընէ աւելին, քան մեզ փրկելը, թէեւ միայն աստիկա արդէն իսկ ապշեցուցիչ է: Աստուծոյ շնորհքը կը զօրացնէ մեզ, որպէսզի սուրբ կեանք վարենք, որ կը բխի մեր ներսէն եւ լիովին կը հաճեցնէ զԱստուած:

Փնտռեցէ՛ք զԱստուած ճիշդ հիմա: Այլեւս մի՛ սպասէք. ճիշդ հիմա աղաղակեցէ՛ք Աստուծոյ խնդրելով Անոր շնորհքը: Ըսէ՛ք ձեր կեանքին մէջ այն բնագաւառին անունը, ուր ամէնէն շատ ունիք Անոր շնորհքի կարիքը, եւ խնդրեցէ՛ք Անորմէ լեցնել ձեզի Իր շնորհքով, որպէսզի յաղթահարէք այն ամէնը, ինչ որ թոյլ չի տար ձեզի լսելու Անոր ծայնը:

ԲԱՐՁՐԱՑԷ՛Ք

Ի՞նչն է պատճառը, որ սուփըրհերոսներու մասին ֆիլմերը բոլոր ժամանակներու ամենայայտնի ֆիլմերն են: Մտածեցէ՛ք այս մասին: Այս հոլիուտեան պատմութիւնները աւելի շատ սինեմա սիրողները կը գրաւեն, քան ֆիլմերը պատերազմներու, քուսպոյներու եւ լրտեսներու մասին, եւ նոյնիսկ՝ սիրային պատմութիւնները: Եւ ասիկա չի վերաբերիր միայն տղամարդոց, որովհետեւ ես մշտապէս կը հանդիպիմ կանանց, որոնք, իրենց խօսքերով, կը սիրեն այս մեծ յաջողութիւն ունեցող ֆիլմերը: Ի՞նչն է պատճառը: Մենք գիտենք, որ ստեղծուած ենք աւելիի համար, եւ սուփըրհերոսները կը նկարագրեն մեր չարտայայտուած ներքին ձգտումները:

Մտածեցէ՛ք Սուփըրհերոսի մասին: Երբ հանգամանքները անկարելի են, նեղութիւնը անյաղթահարելի է, եւ կը թուայ՝ ամէն ինչ անյոյս է, Քլարք Քենթը անմիջապէս դուրս կ'երթայ «*Տէլլի Փլանէթ*» թերթի խմբագրութենէն, կը մտնէ հեռախօսախցիկի մէջ, եւ քանի մը վայրկեան յետոյ օգնութեան կը սլանայ: Մենք կը սիրենք այն աշխուժացնող զգացումը, երբ ան պարտութեան կը մատնէ անպարտելի թուացող թշնամիները: Մենք հիացնունք կ'ապրիինք, երբ վերջ կը դրուի անարդարութեան, տուժածները ազատ կ'արձակուին, եւ հասարակութիւնը կը վերադառնայ իր առօրեայ կեանքին:

Իմաստը հետեւեալն է. մենք կ'ուրախանանք, երբ մեր սուփըրհերոսները կը յաղթեն չարը, քանի որ ատիկա կը բաւարարէ մեր ներքին ձգտումները: Մենք գիտենք, որ ամենասկիզբէն Աստուած ստեղծած էր մարդը «Աստուածանման, Աստուծոյ բնութիւնը արտացոլող» (Ծննդոց 1.27, MSG): Նոյնպէս, գրուած է. «Տէրը հզօր պատերազմող

է» (Ելից 15.3): Դուք երբեք մտածա՞ծ էք այս մասին: Ասիկա Աստուծոյ բնութեան այն կողմերէն մէկն է, որ հազուադէպ կը յիշատակուի: Այնպիսի տպաւորութիւն է, որ մենք չենք գիտեր, թէ ինչ ընենք այս ճշմարտութեան հետ: Սակայն կրկին, Եսային կը յայտարարէ.

«Տէրը հզօրի պէս պիտի ելլէ, պատերազմող մարդու պէս Իր նախանձը պիտի արթնցնէ. պիտի աղաղակէ ու բարձրաձայն պիտի գոչէ եւ Իր թշնամիներուն պիտի յաղթէ» (Եսայի 42.13):

Այն պատերազմողները, որոնք կը պայքարին անարդարութեան դէմ, հերոսներ են: Յիսուս *իրական* Սուփըրհերոս է: Ան Նուաճող եւ Յաղթող է:

Այս խօսքերը գրելէն շատ ժամանակ առաջ Յեսուն տեսաւ Ջինք: Մեր Թագաւորի ձեռքին ոչ թէ գառնուկ էր, այլ՝ սուր, եւ Ան անուանեց Իրեն «Տիրոջ զօրավարը» (Յեսու 5.14):

Այս խօսքերը գրելէն շատ ժամանակ յետոյ Յովհաննէս առաքեալը նոյնպէս տեսաւ Տէրը եւ նկարագրեց Ջինք նոյնիսկ աւելի զարմանալի կերպով. «Անոր աչքերը՝ կրակի բոցի պէս», եւ «Անոր բերանէն սրած սուր մը կ'ելլէր» (Յայտնութիւն 19.12-15):

Ան պատերազմող է: Շատերս գիտենք, որ պատերազմողը իր բնութեամբ մեղմաբարոյ, հպատակուած կամ մելամաղձոտ չէ: Ո՛չ, պատերազմողը կեդրոնացած, նպատակաւորուած եւ մոլեգին է:

Այժմ խօսինք մեր մասին: Դուք երբեք մտածա՞ծ էք այն մասին, որ Յայտնութիւն գիրքին մէջ Յիսուս բոլոր եօթը եկեղեցիներուն մօտաւորապէս կ'ըսէ հետեւեալը. «Ով որ կը յաղթէ...»: Ինչպէ՞ս կրնանք յաղթել, եթէ յաղթելու ոչինչ ունենանք: Ինչպէ՞ս կրնանք յաղթել, եթէ ոչ մէկ պայքար ըլլայ:

Շատերը այսօր կ'անտեսեն այս կոչումը: Անոնք կ'ըսեն, որ մեր ինքնութիւնը Քրիստոսին մէջ յաղթող կը դարձնէ մեզ: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ քանի որ Ան *Յաղթող* է, մենք ինքնաբերաբար յաղթող կը դառնանք Անոր մէջ: Ասիկա ճշմարիտ է, երբ խօսքը Անոր մէջ ունեցած մեր դիրքի մասին է, բայց ասիկա ամբողջական ճշմարտութիւնը չէ: Ինչո՞ւ Յիսուս ըսաւ բոլոր եօթ եկեղեցիներու հաւատացեալներուն. «Ով որ կը յաղթէ...», եթէ յաղթանակը ինքնաբերաբար կ'աւելնայ մեր փրկութեան:

Այս տիեզերքին մէջ գոյութիւն ունի իրական Լէքս Լիւթըր (Սուփըրհերոսի հակառակորդը), եւ անոր անունը սատանայ է: Ան ունի բիրաւոր զօրքեր, որոնք յիմար չեն, եւ անոնց գլխաւոր նպատակը ձեզի կանգ-

նեցնելը, սահմանափակելը եւ վերահսկելն է: Սատանան կ'աշխատի օրը 24 ժամ եւ շաբաթը 7 օր այս նպատակին համար: Սակայն ան գինաթափուած է: Ան զրկուած է իր իշխանութենէն եւ զօրութենէն ձեր եւ իմ կեանքին մէջ:

Նմանապէս, Լէքս Լիթըրը անզօր էր պողպատէ մարդուն դէմ: Այնուամենայնիւ, անոր հանձարեղ դիւային միտքը բացայայտեց եւ գործածեց քրիպտոնաքարը՝ առաւելութիւն ստանալու համար: Ատոր միջոցով ան կրցաւ սահմանափակել եւ վերահսկել Սուփրհերոսը: Նոյն կերպով, սատանան կ'օգտագործէ այն, ինչ որ դարձաւ իր կործանման պատճառը՝ հոգեւոր քրիպտոնաքարը, որպէսզի հաւասարեցնէ պայքարող ուժերը: Ան կազմեց այն, երբ օծուած քերովբէ էր Երկինքը (տե՛ս Եզեկիէլ 28.14-16): Ան փորձառաքար գիտէ, թէ ինչպէս այն պիտի տկարացնէ եւ պիտի չէզոքացնէ Աստուծոյ Թագաւորութեան զօրութիւնը մեր կեանքին մէջ:

Սատանան (իրական Լէքս Լիթըրը) գիտէ, որ եթէ մենք տեսնենք հոգեւոր քրիպտոնաքարի իրական ազդեցութիւնը, հնարաւորինս հեռու պիտի մնանք ատորմէ: Այնպէս որ, ան հմտօրէն կը քողարկէ այն: Դուք նկատա՞ծ էք, թէ ինչ կը կատարուի ձեր ներսը, երբ տեղի կու տաք ատոր: Թերեւս դուք կարճատեւ բաւականութիւն կամ հաճոյք կը վայելէք, բայց ձեզի տկարացնելու հետ մէկտեղ, այն չի տար իրական բաւականութիւն: Դուք կը կտրուիք ձեր յաղթող բնութենէն եւ կը նմանիք խոտի՝ առանց լոյսի եւ ջուրի: Դուք կը սկսիք ներքուստ թառամիլ:

Նշոյլներ

Թանկագին Աստուծոյ զաւակ, վերադարձէ՛ք ձեր ճշմարտ ինքնութեան: Դուք կանչուած էք ըլլալու իրական սուփրհերոս մեր սերունդին մէջ: Ձեր մէջ կայ այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ է յաղթելու համար: Ատիկա մտացածին չէ: Ես օրհնուած եղած եմ աշխարհով մէկ ճանապարհորդելու եւ Քրիստոսի մարմինը ամբողջական տեսնելու հնարաւորութեամբ: Ես տեսած եմ այն ամէնուն նշոյլները, ինչ որ հնարաւոր է եկեղեցական համայնքներուն եւ առանձին հաւատացեալներուն համար:

Ես կրնայի այնքան օրինակներ բերել, բայց թոյլ տուէք բորբոքել ձեր հետաքրքրութիւնը ընդամէնը քանի մը օրինակով: Ես եղած եմ աշխարհի ամենաստուար մուտուլման բնակչութիւն ունեցող երկրին մէջ եւ քանի մը անգամ քարոզած եմ աւելի քան հարիւր քառասուն հազար անդամ ունեցող եկեղեցւոյ մէջ, որուն անդամներուն կէսէն աւելին նախկին մուտուլմաններ են: Այդ եկեղեցւոյ զլխաւոր շէնքին մէջ կը տեղաւորուի

երեսունհինգ հազար մարդ, բայց անոնք, միեւնոյնն է, ստիպուած են քանի մը կիրականօրեայ հաւաքոյթներ անցընել: Եթէ ես չըլլայի հոն եւ անձամբ չտեսնէի ատիկա, թերեւս չհաւատայի: Այդ եկեղեցին իսկապէս որ պտղաբեր է, եւ այն ծաղկունք կ'ապրի դժուարին պայմաններու մէջ: Այդ եկեղեցւոյ պատերազմող հաւատացեալները հերոսներ եւ յաղթողներ են:

Այդ եկեղեցւոյ հովիւը երկրորդ որդին ծնելու պահուն ուղեղի վնասուածք ստացած էր, եւ բժիշկները ըսած էին, որ ան երբեք չի կրնար խօսիլ եւ քալել: Մասնագէտները ըսած էին այդ հովիւին եւ անոր կնոջը, որ անոնց որդին պարզապէս պառկած պիտի մնայ մինչեւ իր կարճատեւ կեանքի աւարտը:

Աստուած խօսեցաւ այդ հովիւին հետ եւ ըսաւ. «Ո՞ր եմ Ես»:

«Քու գահին վրայ՝ Երկինքը», - պատասխանեց այդ հովիւը:

«Ո՛չ, Ես կ'ապրիմ քու մէջ, - ըսաւ Տէրը: - Եւ կ'ուզեմ, որ դուն խօսիս քու որդիին ուղեղին եւ նոր ուղեղ ստեղծես, ինչպէս որ մէկ անգամ Ես խօսեցայ ու ստեղծեցի այն ամէնը, ինչ որ դուն կը տեսնես»:

Այդ հովիւը հնազանդեցաւ եւ սկսաւ ամէն օր խօսիլ իր որդիին ուղեղին Յիսուսի անունով: Ի վերջոյ, անոր որդին սկսաւ խօսիլ: Ատորմէ յետոյ Տէրը յանձնարարեց անոր ընել նոյնը անոր ոտքերուն համար: Վեց տարեկանին մէջ ան սկսաւ քալել: Ես կոլֆ խաղցած եմ անոր որդիին հետ. հիմա ան ամուսնացած է եւ երեք երեխայ ունի:

Այդ հովիւը յաղթող է, որուն քրիպտոնաքարը չի կրնար կանգնեցնել:

Վերջերս զիս երկիր մը հրաւիրած էին՝ քարոզելու եկեղեցական շարժման մը հովիւներուն եւ աւագներուն: Անոնք առաջնորդեցին զիս հաւաքոյթի վայրը, եւ ես հազիւ զսպեցի զգացումներս՝ տեսնելով 12.500 աւագներէն բաղկացած լսարանը: Անոնք կրակով լեցուած էին Տիրոջ համար, եւ անոնց եռանդը վարակիչ էր:

Յաջորդ օրը ես կը ճաշէի այդ եկեղեցական շարժման զխաւոր ծառայողներուն հետ: Իմացայ, որ անոնց ծառայութիւնը կ'ընդգրկէ աւելի քան երեք հարիւր հազար մարդ: Ես հարցուցի, թէ երբ սկսած էր անոնց շարժումը՝ մտածելով, որ, ամենայն հաւանականութեամբ, ատիկա տեղի ունեցած էր մէկ-երկու սերունդ առաջ: Անոնք ըսին, որ այն սկսած էր մէկ մարդու կողմէն, ընդամէնը տասնվեց տարի առաջ:

Ես խիստ զարմացաւ.

- Ինչպէ՞ս նման արդիւնքի հասած էք առաջին աշխարհին պատկանող երկրին մէջ, - հարցուցի ես:

Այն ծառայողը, որ ամենէն լաւ անգլերէն կը խօսէր, առանց վարանելու պատասխանեց.

- Մենք կը սորվեցնենք մեր ժողովուրդին ապրիլ յաւիտենականի համար:

Ես խօսքեր չունէի:

- Ես եղած եմ շատ ամերիկեան եկեղեցիներու մէջ, - շարունակեց ան, - եւ նկատած եմ, որ շատ ամերիկացի քրիստոնէաներ կ'ապրին 70-80 տարուան հեռանկարով: Մեր մարդիկ կ'ապրին յաւիտենութեան համար:

Այս դիրքորոշման շնորհիւ անոնք շատ աւելի իրազեկ են հոգեւոր քրիստոնաքարի մասին:

Լիզան եւ ես կը քարոզէինք Հայաստանի Երեւան մայրաքաղաքին մէջ 3.500 հովիւներու եւ առաջնորդներու: Շատ առաջնորդներ եկած էին Իրանէն: Ընդմիջումներէն մէկուն ժամանակ, երիտասարդ կին մը պատմեց մեզի, որ երկրէն կարճատեւ բացակայութեան ընթացքին Իրանի ոստիկանութիւնը արդէն զանգահարած էր իր բջջային հեռաձայնին, որպէսզի իմանար, թէ ուր է ան:

Ես առանց մտածելու հարցուցի.

- Ինչո՞ւ դուք կը վերադառնաք, եթէ ձեր կեանքին նման վտանգ կը սպառնայ:

- Ո՞վ պիտի պատմէ իրանցիներուն Յիսուսի մասին, եթէ ես չվերադառնամ, - արագօրէն պատասխանեց ան:

Անոր պատասխանը ամչցուց զիս: Ակնյայտ է, որ ան հեռու կը մնար քրիստոնաքարէն:

Տարիներ առաջ, եկեղեցի մը, երկու ամիս շարունակ ամենօրեայ հաւաքոյթներ կ'անցընէր, եւ ամէն երեկոյ այդ հաւաքոյթներուն չորս հազար մարդ կը մասնակցէր: Հազարաւոր մարդիկ կը փրկուէին, ճշմարտապէս կը բժշկուէին եւ կ'ազատագրուէին: Երեկոյ մը Յիսուսը յայտնուեցաւ հոն: Շատերը տեսան Ջինք եւ բացականչեցին: Ատիկա միայն պահ մըն էր, բայց երբ անհետացաւ, Ան ձգեց Իր ներկայութեան վկայութիւնը: Անոր դէմքը դրոշմուած էր այդ շէնքի պատին՝ 2.5 մէթր բարձրութեամբ եւ 1.8 մէթր լայնութեամբ: Այդ պատկերը քիչ մը նման էր Թուրինիան պատանքի պատկերին: Այն մնաց պատի վրայ յաջորդ տասնութ ամիսներու ընթացքին: Այն աստիճանաբար մարեց, մինչեւ լիովին անհետանալը:

Այլ երեկոյ մը շտապ օգնութեան ինքնաշարժ մը կեցաւ այդ եկեղեցւոյ շէնքի կողմնային դռներէն մէկուն քով: Շտապ օգնութեան աշխատակիցները ներս բերին պատգարակի վրայ պառկած մարդու մը:

Անոր քսանչորս ժամէն պակաս կեանք տուած էին: Աստուծոյ զօրութիւնը այնքա՛ն զօրաւոր էր, որ այդ մարդը լիովին բժշկուեցաւ եւ հաւաքոյթէն յետոյ ինքնուրոյն դուրս գլորեց իր պատգարակը:

Ես անծամբ այդ ամէնուն ականատես եղած եմ. ես ոչ միայն հոն էի ամէն երեկոյ, այլեւ այդ եկեղեցւոյ հովիւի օգնականն էի:

Ես տեսած եմ, թէ ինչպէս հրաշքով մարած է անվերահսկելի հրդեհը, որ կը մօտենար մեր ծառայութեան գրասենեակի շէնքին: Ես տեսած եմ, թէ ինչպէս փոթորիկները կեցած կամ փոխած են իրենց ուղղութիւնը, եւ ականատես եղած եմ այնպիսի հրաշքներու, որոնք անկարելի է բացատրել: Ես տեսած եմ, թէ ինչպէս խուլերը լսած են, կոյրերը՝ տեսած, եւ կաղերը՝ քալած: Ընկեր մը ունիմ, որ յարութիւն տուած է շատերուն Մեքսիքոյի եւ Կենդրոնական Ամերիկայի մէջ: Ես եղած եմ այնպիսի վայրերու մէջ, որոնց մէջ Աստուծոյ զօրութիւնը այնքան ուժգին դրսեւորուած է, որ աւելի քան ութ հազար ներկաներէն ոչ ոք կրցած է ոտքի կենալ. այդ ընթացքին հրաշքներ կը կատարուէին, եւ մարդոց կեանքերը յաւիտեան կը փոխուէին:

Թէեւ անծամբ չեմ տեսած, բայց գիտեմ քանի մը փաստացի պատմութիւններ, երբ փրկուած են ամբողջ ցեղեր կամ բնակավայրեր, եւ անոնց մշակոյթը լիովին փոխուած է: Նման իրադարձութիւնները խիստ հազուադէպ են մեր օրերուն մէջ, բայց ես կը հաւատամ, որ մենք արագօրէն կը մօտենանք այնպիսի ժամանակի, երբ ատոնք պարզ բան կ'ըլլան, նման այն բանի, ինչ որ տեղի կ'ունենար Առաջին եկեղեցւոյ, սակայն շատ աւելի մեծ ծաւալներով:

Յիսուսին հետ

Բոլոր այս մարդոց եւ անոնց փորձառութիւններուն միջեւ կայ մէկ ընդհանրութիւն, որ ունէր Առաջին եկեղեցին: Մենք այն կը տեսնենք Աւետարաններուն մէջ եւ Գործք առաքելոց գիրքին մէջ, եւ բոլորս կրնանք ունենալ այն: Այս իրողութիւնը կարելի է ամփոփել երեք բառով. *իշխանութիւն, զօրութիւն եւ համարձակութիւն*:

Մենք կը տեսնենք, որ Յիսուս կը փոխէր գիւղեր եւ քաղաքներ: Պարզապէս ինչ որ տեղ երթալով՝ Ան լիովին կը փոխէր այնտեղի մթնոլորտը: Ահա օրինակ մը: Ան ժողովարան մտաւ, եւ «մարդիկ կը զարմանային Անոր ուսմունքին պատճառով, որովհետեւ Ան կը սորվեցնէր *իրական իշխանութեամբ*՝ ի տարբերութիւն կրօնական օրէնքի ուսուցիչներուն» (Մարկոս 1.22, NLT):

Իսկ յետոյ, յանկարծակի, «մարդ մը ժողովարանին մէջ, որ բռնուած

էր չար հոգիի կողմէն, բացականչեց. «Ինչո՞ւ կը խոչընդոտես մեզ, Նազովրեցի՛ Յիսուս: Դուն եկած ես, որ կործանե՞ս մեզ»» (Խօսքեր 23,24, NLT): Սակայն Յիսուս հրամայեց. «Լռէ՛: Դո՛ւրս ելիր այդ մարդէն»: Չար հոգին ճչաց, ցնցեց այդ մարդը եւ հեռացաւ: Բոլոր ներկաները համակուեցան անկեղծ զարմանքով. բոլորը ականածանքով լեցուեցան Անոր իշխանութեան, զօրութեան եւ համարձակութեան հանդէպ: Այդ իրադարձութիւնը այնպիսի մեծ ազդեցութիւն ունեցաւ, որ յաջորդ օրը ամբողջ քաղաքը կը փնտռէր Յիսուսը (տե՛ս Խօսքեր 21-38): Ինչպէս գիտէք, Աւետարանէն կարելի է նոյնպիսի ազդեցութեան բազմաթիւ օրինակներ բերել:

Գոյութիւն ունի ապշեցուցիչ փաստ մը. Իր երկրային ծառայութեան աւարտին Յիսուս ըսաւ. «Ինչպէս Իմ Հայրը Ձիս ուղարկեց, Ես ալ ձեզի կ'ուղարկեմ» (Յովհաննէս 20.21): Եթէ ասիկա այնքան ալ չզարմացուց ձեզ, Ան պարզօրէն ըսաւ. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ Ինծի հաւատացողը, այն գործերը, որ ես կը գործեմ, ան ալ պիտի գործէ, եւ անոնցմէ ա՛լ ւաւելի մեծ բաներ պիտի գործէ» (Յովհաննէս 14.12): Նոյն գործերը, եւ նոյնիսկ ւաւելի՛ մեծ գործեր: Մի՞թէ ատիկա հնարաւոր է: Եթէ Ան այդպէս ըսաւ, անկասկած՝ ատիկա հնարաւոր է: Առաջին եկեղեցին մեծապէս վերապրեցաւ այս իրողութիւնը: Անոնք այնպիսի իշխանութիւն, զօրութիւն եւ համարձակութիւն ունէին, որ ընդամէնը քանի մը օրուան մէջ ամբողջ գիւղեր եւ քաղաքներ Յիսուսին կ'ընդունէին: Նոյնը ճշմարիտ է նաեւ մեր օրերուն մէջ տեղի ունեցող իրադարձութիւններու վերաբերեալ, որոնց ես ականատես եղած եմ կամ որոնց մասին լսած եմ:

Ինչ կը վերաբերի Առաջին եկեղեցիին, եթէ միայն դիտարկենք Երուսաղէմը, ամբողջ քաղաքին մէջ չկար նոյնիսկ մէկ մարդ, որ կրած չըլլար անոնց ազդեցութիւնը: Ընդամէնը քանի մը օրուան մէջ բոլոր քաղաքացիները արծագանգեցին տեղի ունեցածին. անոնք կա՛մ կը զարմանային գերբնական զօրութեան դրսեւորումներէն, կա՛մ կը բարկանային այն պատճառով, որ կը հռչակուէր Յիսուսին անունը, կա՛մ մուտք կը գործէին Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Եկեղեցին արագօրէն կ'աճէր, կը գործէր մեծ զօրութեամբ եւ շարք մը ականառու հրաշքներու ականատես կը դառնար: Նման իրադարձութիւններէն մէկը այն էր, որ կաղ ծնած մարդ մը, որուն ամէն օր կը տանէին հաւաքոյթներու վայրը, բժշկուեցաւ: Ան անմիջապէս սկսաւ ցատկել եւ գոչել, եւ քաղաքացիներէն շատերը, որոնք հաւաքուած էին հոն, զարմացան:

Իշխանութիւնները ձերբակալեցին Պետրոսը եւ Յովհաննէսը՝ փորձելով վերջ տալ այդ շարժման շեշտակի աճող ազդեցութեան: Անոնց

բերին Սինետրիոնի (հրէական ծերակոյտի) անդամներու առջեւ, որոնք այսպիսի հետեւութիւն ըրին.

«Իսկ անոնք, Պետրոսին եւ Յովհաննէսին համարձակութիւնը տեսնելով եւ հասկնալով, որ տգէտ ու առանց ուսման մարդիկ են, զարմացան եւ իմացան, որ անոնք *Յիսուսին հետ էին*» (Գործք 4.13):

Անոնց համարձակութիւնը գրաւեց Սինետրիոնի ուշադրութիւնը: Շատ անելի դիւրին պիտի ըլլար, եթէ Պետրոսը եւ Յովհաննէսը վախնային եւ փորձէին խաղաղ մարդիկ ձեւանալ քաղաքի ամենաազդեցիկ մարդոց առջեւ: Թերեւս անոնք խուսափէին բախումէն: Այնուամենայնիւ, անոնք հաւատարիմ մնացին մեծ վտանգի առջեւ:

Ի՞նչ համարձակութիւն եւ ուժ անոնք ունէին, եւ ուրկէ՞: Պատասխանը այն է, որ անոնք «Յիսուսին հետ էին»: Անոնք քալած էին Տիրոջ ներկայութեան մէջ եւ կը շարունակէին ընել ասիկա: Անոնք կ'ընէին նոյն գործերը, որոնք Ան կ'ընէր, որուն շնորհիւ քաղաքներ փոխուեցան: Անոնք սուրբ կեանք վարող մարդիկ էին: Առաջին եկեղեցին հեռու կը մնար քրիստոնաքարէն. անոնք որոշած էին մօտիկ ըլլալ Որդիին եւ զօրութիւն ստանալ Անորմէ: Այդ իսկ պատճառով, ունէին մեծ համարձակութիւն, իշխանութիւն եւ զօրութիւն:

Դժբախտաբար, պատմութիւնը ցոյց կու տայ, որ Կորնթոսի եկեղեցին ազդեցութիւն չձգեց իր քաղաքին վրայ, ինչպէս աշակերտները՝ Երուսաղէմի մէջ, եւ հետագային՝ Սամարիայի, Յոպպէի, Լիդիայի, Սարօնի, Անտիոքի եւ այլ վայրերու մէջ՝ Հրէաստանով եւ Ասիայով մէկ: Կորնթոսի եկեղեցին ատոր հակապատկերն էր: Անոնք տկար էին եւ զուրկ այն զօրութենէն, որ անհրաժեշտ էր՝ իրենց քաղաքը փոխելու համար: Ջարմանալին այն էր, որ Կորնթոսի եկեղեցին կը հաւատար Սուրբ Հոգիի պարգեւներուն եւ կը գործէր ատոնց մէջ: Թէեւ այդ հաւատացեալներուն միջեւ որոշ չափով հրաշքներ տեղի կ'ունենային, անոնք չունէին այն, ինչ որ անհրաժեշտ էր՝ իրենց քաղաքին վրայ ազդեցութիւն ձգելու համար:

Մենք ի՞նչ կը ցանկանք մեր սերունդին համար: Մի՞թէ հնարաւոր է եւս մէկ անգամ տեսնել, թէ ինչպէս ամբողջ քաղաքներ կը փոխուին եւ կը կրեն Աւետարանի ազդեցութիւնը: Ջիս կը հրաւիրեն շատ քաղաքներ՝ քարոզելու եւ ականատես ըլլալու բազմաթիւ մեծաքանակ եկեղեցիներու, սակայն, միեւնոյն ժամանակ, ես կը տրտմիմ այն միլիոնաւոր մարդոց համար, որոնք չեն կրած Աստուծոյ Թագաւորութեան ազդեցութիւնը: Ինչո՞ւ մենք չունինք ազդեցութիւն գիւղերու, քաղաքներու եւ

տարածաշրջաններու վրայ: Հնարաւոր է, որ քրիպտոնաքարը պարտութեան մատնած է մեզ:

Աստուած ցոյց տուած է մեր ներկայ ընթացքը Հին կտակարանի դատաւորներէն մէկուն կեանքին միջոցով: Անոր անունը Սամսոն է: Ան սիրախաղ կ'ընէր անհնազանդութեան հետ, մինչեւ որ այն սովորական դարձաւ իրեն համար: Ի վերջոյ, Սամսոնը սարսափելի գին վճարեց, քանի որ քրիպտոնաքարը խլեց իր ուժը: Ան այլեւս չէր կրնար գործածել այն գերբնական զօրութիւնը, որ նախկինին ունէր: Այնուամենայնիւ, մեծ տառապանքներէն յետոյ ան ապաշխարեց, եւ անոր ուժը վերականգնուեցաւ: Եւ վերջաւորութեան ան աւելի մեծ սխրանք գործեց, քան այն տարիներու ընթացքին, երբ տակաւին չէր կորսնցուցած այն:

Դանիէլ մարգարէն կը խօսի սերունդի մը մասին, որ կ'ապրի վերջին օրերուն մէջ եւ ետ չի մնար մէկ դժուարութեան մը պատճառով: Ան կը մարգարէանայ.

«Այն մարդիկ, որոնք կը ճանչնան իրենց Աստուածը, պիտի զօրանան, հաստատ պիտի կանգնին եւ սխրանքներ պիտի գործեն» (Դանիէլ 11.32, AMPC):

Այս բազմութեան ուժի եւ զօրութեան բանալին այն է, որ անոնք մտերմօրէն «կը ճանչնան իրենց Աստուածը»: Իսկ մտերմութեան բանալին ճշմարիտ սրբութեան ձգտիլն է:

Ամփոփիչ խօսքեր

Ահա եւ իրականութիւնը: Դուք կանչուած էք Աստուծմէ, որ ըլլաք հերոս, առաջամարտիկ, այնպիսին, որ կը յաղթ կեանքին մէջ եւ փոփոխութիւններ կը բերէ իր հաղորդակցութեան շրջանակին մէջ: Ջօրաւոր եղէք, խիզախ եղէք եւ մօտեցէ՛ք Թագաւորին, որովհետեւ Ան կը փափաքի ձեզի: Ան կ'ուզէ մօտիկ ըլլալ ձեզի եւ զօրութիւն տալ ձեզի: Ան ձեր կողմէն է: Ան կը հաւատայ ձեզի: Եւ ամենակարեւորը՝ Ան կը սիրէ ձեզ յաւիտենական սիրով:

Դուք այս երկրի իրական հերոսներէն էք: Աւելի մեծ է մեր Յաղթողը, որ ձեր ներսն է, քան այն Լէքս Լիթըրը, որ այս աշխարհին մէջն է: Ջօրութիւն ստացէք Անորմէ եւ փոխէք շատերուն կեանքերը: Դուք չէք իմանար ձեր ամբողջական ազդեցութեան մասին մինչեւ այն օրը, երբ կենաք Թագաւորի գահին առջեւ: Դուք այնքա՛ն ուրախ պիտի ըլլաք թէ՛ այդ օրը, թէ՛ հիմա, որ չպարտուեցաք քրիպտոնաքարին:

Այսպիսով, կործանեցէ՛ք քրիպտոնաքարը, ոչնչացուցէ՛ք այն, ջնջեցէ՛ք աստոր ազդեցութիւնը եւ բոլորովին տեղ մի՛ տաք աստոր ձեր կեանքին մէջ, նոյնիսկ՝ քիչ մը: Դուք ստեղծուած էք մեծ փառքի եւ զօրութեան համար: Աստուծոյ զօրաւոր՝ զաւակ, դուք կոչուում ունիք, եւ այս աշխարհը կը սպասէ, որ կատարէք այն:

գործնական քայլ

Աստուած պատերազմող է, եւ մենք ստեղծուած ենք Անոր պէս: Ասիկա է պատճառը, որ ֆիլմերը սուփըրհերոսներու մասին այդքան խորապէս կը հպին մեզի: Մենք գիտենք մեր սրտին մէջ, որ ծնած ենք մեծութեան համար:

Աստուած ստեղծած է ձեզ յատուկ այս նպատակով: Պատմութեան ընթացքին մենք կը տեսնենք վկայութիւններ այն մարդոց մասին, որոնք զարմանալի գործեր ըրին Աստուծոյ համար, քանի որ բոլորովին տեղ չտուին քրիպտոնաքարին՝ գիտակցուած մեղքին: Հաշուած օրերու ընթացքին փոխուեցան ամբողջ քաղաքներ՝ Աստուծոյ զօրութեամբ եւ Անոր ժողովուրդին համարձակութեամբ: Աստուած կը կանչէ ձեզ, որ քայլ ընէք, դառնաք Իր գործի մասնիկը եւ կրկնէք այդ սխրանքները:

Հարցուցէ՛ք Աստուծոյ, թէ ինչ պայքարի Ան կը կանչէ ձեզ: Ո՞ր քաղաքի, տարածաշրջանի եւ երկրի համար է Անոր կանչը: Գրի՛ առէք այն, ինչ որ լսեցիք Աստուծմէ, եւ աղօթեցէ՛ք, որ Ան տայ Իր շնորհքը, որպէսզի կատարէք Անոր նպատակը այդ վայրին մէջ: Եւ ուղղեցէ՛ք ձեր հայեացքը յաւիտենական վարձատրութեանը՝ խոստմանը այն ամէնուն մասին, ինչ որ դուք պիտի ստանաք, եթէ հաւատարիմ եւ յաղթական ծառայէք այս կեանքին մէջ եւ շարժիք առաջ: Աստուած կանչած է ձեզ՝ հերոս ըլլալու համար:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Եթէ դուք կը կարդաք այս գիրքը որպէս «Կործանել Քրիստոնաւարը» դասընթացքի մաս (ինչ որ հրաշալի գաղափար է), ես կ'առաջարկեմ ձեզի դիտել այս դասընթացքի ամէն մէկ ուսումնական տեսանիւթը գիրքին կից DVD սկաւառակով կամ CloudLibrary.org կայքին մէջ եւ քննարկել իւրաքանչիւր տեսանիւթի վերաբերող հարցերը ձեր փոքր խումբին մէջ: Այս ուսումնական տեսանիւթերը կը կրկնեն եւ կ'ընդլայնեն այն գլխաւոր թեմաները, որոնց կ'անդրադառնայ գիրքը. այնպէս որ, մասնակիցներու համար լաւագոյն տարբերակն է ե՛ւ դիտել ուսումնական տեսանիւթերը, ե՛ւ կարդալ գիրքը:

Այս ամէնը ձեզի՛ համար է:

Դաս 1. Մեր ներուժը

Գլուխներ 1-3-ի հիման վրայ

1. Դուք չէք ձգտիր օգտագործել այն ներուժը, որուն տեղեակ չէք: Նկատա՞ծ էք այս սկզբունքը ձեր կեանքին մէջ: Ինչպիսի՞ նոր ապրանքներ եւ սարքաւորումներ սկսած էք օգտագործել, եւ ինչպիսի՞ համոզմունքներ ընդունած էք, երբ իմացած էք, թէ ինչ առաւելութիւններ կրնաք ստանալ աւտորմէ: Որքանո՞վ այս սկզբունքը նման է այն ամէնուն, ինչ որ դուք սորվեցաք այս դասի ընթացքին:
2. Մեր ներուժը Աստուծոյ մէջ գրեթէ աներեւակայելի հնարաւորու-

թիւներ կու տայ: Արդեօ՞ք այս դասը ոգեշնչեց ձեզ, որ ուսումնասիրէք Քրիստոսի մէջ ձեր ինքնութեան ներուժը: Անուանեցէ՛ք այնպիսի բնագաւառներ, որոնց մէջ ձեր մտածելակերպը շատ սահմանափակ էր:

3. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ այսօր եկեղեցիներուն մէջ չեն սորվեցներ Քրիստոսի մէջ մեր ներուժի մասին: Ձեր կարծիքով՝ ինչպէ՞ս եկեղեցին պիտի փոխուէր, եթէ մեզի սորվեցնէին հաւատալ, որ այս ամէնը հնարաւոր է: Դուք կը փոխո՞ւիք, երբ կը մտորէք այս հնարաւորութիւններուն մասին:
4. Երբ մենք լրջօրէն չենք համապատասխանիր քրիստոնէութեան չափանիշներուն, այս աշխարհը թիւր կարծիք կ'ունենայ թէ՛ քրիստոնէութեան, թէ՛ Աստուծոյ մասին: Ինչպիսի՞ վերաբերմունք պիտի ունենար այս աշխարհը քրիստոնեաներուն հանդէպ, եթէ մենք ապրէինք ըստ մեր ներուժին: Ինչպիսի՞ վերաբերմունք պիտի ունենար այս աշխարհը Աստուծոյ հանդէպ, եթէ մենք ապրէինք ըստ մեր ներուժին:

Ղաս 2. Մէկի ուժը

Գլուխներ 4-7-ի հիման վրայ

1. Պօղոսը կը գրէ, որ քանի որ կորնթացիները չէին պատուեր Քրիստոսի մարմինը, շատերը անոնց մէջ տկար էին, հիւանդ էին եւ նոյնիսկ վաղաժամ կը մահանային: Այս խօսքը այսօր կը վերաբերի նաեւ մեզի, եւ գրուած է, որ այն կ'ազդէր *շատերուն* վրայ: Արդեօ՞ք ձեզի այլ կերպ սորվեցուցած էին եկեղեցւոյ՝ Քրիստոսի մարմինի մասին: Ինչո՞ւ կարելոր է, որ բոլոր հաւատացեալները հասկնան այս ճշմարտութիւնը այսօր:
2. Շատերը Քրիստոսի մարմինին մէջ չեն իրագործեր իրենց ներուժը, քանի որ իրենց եկեղեցիին մէջ տեղ ունի գիտակցուած մեղքը: Այնուամենայնիւ, ասիկա միակ պատճառը չէ, որուն միջոցով քրիստոնեաները կը հիւանդանան, վաղաժամ կը մահանան կամ տկար են: Ինչո՞ւ խիստ կարելոր է այս տարբերակունը ընելը: Ուրիշ ի՞նչ պատճառներով կրնան նեղութիւններ ըլլալ եկեղեցւոյ մէջ:
3. Արեւմուտքի բնակիչները խիստ անհատապաշտական մտածելակերպ ունին, սակայն մենք կը տեսնենք, որ երբ Աքարը մե-

դանչեց Աստուծոյ դէմ, տուժեց ամբողջ Իսրայէլը, քանի որ ամբողջ ժողովուրդը մէկ մարմին էր: Արդեօ՞ք այս ճշմարտութիւնը կը փոխէ այն, թէ ինչպէս կը տեսնէք ձեր դերը Քրիստոսի մարմինին մէջ:

4. Հոգեւոր քրիստոնաքարը գիտակցուած մեղքն է: Աքարը գիտէր, որ իր համար ոչինչ պէտք է վերցնէր աւարէն, եւ կորնթացիները գիտէին, որ գինովութիւնը, շատակերութիւնը եւ եսակեդրոնութիւնը հաղորդութեան ժամանակ մեղք կը համարուէին: Երկու դէպքերն ալ տկարութիւն եւ մահ յառաջացուցին այն մարդոց կեանքերուն մէջ, որոնք ներգրաւուած չէին այդ մեղքերուն մէջ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստուած այդքան լրջօրէն կը վերաբերէր մեղքին Իր մարմինին մէջ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ան կը ցանկայ, որ մենք արժեւորենք ոչ միայն առանձին հաւատացեալները, այլեւ հաւատացեալներու մարմինը՝ որպէս ամբողջութիւն:

Դաս 3. Քրիստոնաքար

Գլուխներ 8-10-ի հիման վրայ

1. Կրնա՞ք պատկերացնել, որ Ճասթինին եւ Անժելային պատմութիւնը իրականութեան մէջ տեղի ունենար: Անշուշտ՝ ո՛չ: Բայց կրնա՞ք սնանութիւններ տեսնել այն բանին մէջ, թէ ինչպէս որոշ քրիստոնեաներ կը վերաբերին իրենց եւ Աստուծոյ յարաբերութիւններուն: Ի՞նչ կարծիք պիտի ունենաք այն մարդուն մասին, որ այսպէս կը վերաբերի իր կողակիցին: Ի՞նչ կարծիք պիտի ունենաք այն մարդուն մասին, որ այսպէս կը վերաբերի Աստուծոյ:
2. Գիտակցուած մեղքը հոգեւոր քրիստոնաքար է, եւ հոգեւոր քրիստոնաքարը կռապաշտութիւն է: Ի՞նչ կը նշանակէ այն փաստը, որ բազմաթիւ մարդիկ, որոնք եկեղեցի կը յաճախեն, իրականութեան մէջ կուռքեր կը պաշտեն: Ինչպիսի՞ տեսք ունի կռապաշտութիւնը երկրի մը մէջ, ուր չկայ արծաններու եւ կուռքերու պաշտամունք:
3. Որպէս կանոն, եկեղեցիներուն մէջ գրեթէ չեն սորվեցներ կռապաշտութեան մասին: Ի՞նչ որ աւելի տպաւորեց ձեզ այս դասին մէջ, որ յատուկ կռապաշտութեան մասին է: Ի՞նչն է պատճառը, որ ճիշդ ատիկա տպաւորեց ձեզ:

4. Ամբողջ Սուրբ Գիրքին մէջ Աստուած մշտապէս հաւասարութեան նշան կը դնէ կռապաշտութեան եւ շնութեան միջեւ: Կրնա՞ք բացատրել, թէ ինչու, ձեր կարծիքով, Աստուած կ'ընէ ատիկա: Ի՞նչ կը յայտնէ ատիկա այն յարաբերութեան մասին, որ Ան կ'առաջարկէ մեզի:
5. Կռապաշտութիւնը սկիզբ կ'առնէ, երբ երկրպագութիւն կը ստանայ ստեղծուածը, ոչ թէ ստեղծողը: Ինչպէ՞ս Աստուած կ'արծագանգէ այս դիրքորոշումին: Ինչո՞ւ Աստուած կը հեռացնէ Ինքզինը այն մարդոցմէ, որոնք չեն ընտրեր Ձիւնք: Ձեր կարծիքով, ինչո՞ւ միասեռական միտումները ճշգրիտ ցուցանիչ են այն մասին, որ հասարակութիւնը կռապաշտութեան մէջ է:
6. Կռապաշտութիւնը ճանչնալու համար մենք պէտք է հասկնանք, թէ ինչ է ճշմարիտ երկրպագութիւնը: Ճշմարիտ երկրպագութիւնը կը նշանակէ հնազանդիլ Աստուծոյ պատւիրաններուն, ոչ թէ դանդաղ երգ երգել: Ինչպէ՞ս այս ճշմարտութիւնը կը փոխէ ձեր պատկերացումը քրիստոնէական կեանքի մասին: Ձեր կեանքին մէջ եղա՞ծ է այնպիսի անձնաւորութիւն, որ Աստուծոյ երկրպագող մարդուն լաւագոյն օրինակն է ձեզի համար:

Պատ 4. Ժամանակակից կռապաշտութիւն

Գլուխներ 11-14-ի հիման վրայ

1. Պատմութիւնն այն մասին, որ Սաւուրը չհնազանդեցաւ Աստուծոյ՝ չսպաննելով որոշ ամաղեկացիներ, ցոյց կու տայ եկեղեցւոյ առկայ կռապաշտութեան արմատը: Ի՞նչ կերպով Սաւուրի ազահութիւնը հաւասար է կռապաշտութեանը:
2. Սամուէլը ըսաւ Սաւուրը, որ յամառութիւնը նոյնն է, ինչ կռապաշտութիւնը: Յամառութիւնը կը նշանակէ կառչիլ մեր ցանկութիւններէն՝ անտեսելով Աստուծոյ կամքը: Եւ ինչպէս տեսանք Սաւուրի կեանքին, ատիկա դուռ բացաւ շատ աւելի մեծ մեղքերու համար: Ի՞նչ կերպով յամառութիւնը կռապաշտութիւն կը համարուի: Ինչո՞ւ այն կը տանի աւելի մեծ մեղքերու:
3. Ազահութիւնը կը տանի մեզ կռապաշտութեան եւ, իրականութեան մէջ, ինքնին կռապաշտութիւն է: Իսկ գոհունակութիւնը կը տանի Աստուածապաշտութեան: Երբ կը նայիք ձեր նպատակներուն, առաջնահերթութիւններուն եւ սովորութիւններուն, ի՞նչն

- է, ձեր կարծիքով, ասելի զօրաւոր՝ ազահուօթի՞ւնը, թե՞ գոհունակութիւնը: Ի՞նչ կրնաք ընել՝ ասելի գոհունակ դառնալու համար:
4. Թէեւ գոհունակութիւնը անհրաժեշտ է ամէն քրիստոնէայի կեանքին մէջ, մենք պէտք չէ շփոթենք այն ինքնազոհութեան հետ: Ձեր բառերով նկարագրեցէ՛ք տարբերութիւնը այս երկու դիրքորոշումներուն միջեւ: Ինչպէ՞ս կրնաք գիտնալ, որ մարդը գոհունակ է, ոչ թէ ինքնազոհ:
 5. Կայ եւս մէկ կարելոր պարզաբանում, որ պէտք է յիշենք. կռապաշտութիւնը այն չէ, որ հաւատացեալը կ'իյնայ մեղքի մէջ, այլ՝ որ ան տրուած է մեղքին: Ըստ այն ամէնուն, ինչ որ մինչեւ հիմա սորվեցաք այս դասընթացքէն, ինչպէ՞ս կը նկարագրէք տարբերութիւնը այս երկուքին միջեւ:
 6. Հասկնալով, որ միտումնաւոր գործուած մեղքը հոգեւոր քրիպտոնաքար է, մենք նոյնպէս պէտք է հասկնանք, որ Աստուած կ'առաջարկէ մեզ բոլորովին նոր կեանք նոր բնութեամբ՝ Իր բնութեամբ: Դուք կը գիտակցի՞ք, որ հնարաւոր է հակուած չըլլալ մեղքին, այլ, փոխարէնը, հակուած ըլլալ արդարութեան: Արդեօ՞ք այս գիտակցումը վստահութիւն կը ներշնչէ ձեզի այն մասին, որ նման վերափոխումը հնարաւոր է, եւ նոյնիսկ սպասելի է ձեր կեանքին մէջ:

Դաս 5. Կեղծուած Յիսուս

Գլուխներ 15-18-ի հիման վրայ

1. Աստուծոյ նպատակը ձեզ փրկելու համար՝ ձեզ դէպի Իրեն առաջնորդելն է: Ան կը կամենայ մտերմօրէն հաղորդակցիլ ձեզի հետ: Ձեզմէ կը պահանջուի մաքրուիլ այս աշխարհի ազդեցութենէն, քանի որ Ան կը ցանկայ անկեղծ յարաբերութիւններ ունենալ ձեզի հետ: Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Ինչպէ՞ս գիտնալ, որ դուք ըրած էք ասիկա:
2. Պատկերացուցէք, թէ ինչպիսի հիասթափութիւն կ'ապրի Աստուած, երբ այն ժողովուրդը, որուն Ան կը փափաքի առաջնորդել դէպի Իրեն, կը հրաժարի գալէ, նոյնիսկ այն բանէն յետոյ, երբ անոնք կը պնդեն, որ Ան փրկած է զիրենք: Ինչպէ՞ս պիտի զգայիք դուք ձեզ, եթէ ամուսնանայիք, եւ ձեր կողակիցը հրաժարէր ձեզի հետ մնալէ միեւնոյն սենեակին մէջ: Կամ՝ եթէ ան նոյնիսկ

չցանկար խօսիլ ձեզի հետ հեռաձայնով: Կամ՝ եթե ան հաղորդակցելի ձեզի հետ մէկ ուրիշ մարդու միջոցով: Ինչպիսի՞ն պիտի ըլլային ձեր յարաբերութիւնները:

3. Ահարոնը մնաց ժողովուրդին բանակատեղին. այնպէս որ, կարելի է ըսել, որ ան աւելի յարմարաւէտ կը զգար ինքզինքը ժողովուրդին հետ, քան Աստուծոյ ներկայութեան մէջ՝ լերան վրայ: Որոշ մարդիկ այսպիսին են. անոնք աւելի յարմարաւէտ կը զգան իրենց եկեղեցիին մէջ, քան Աստուծոյ ներկայութեան մէջ: Ինչպէ՞ս դուք կ'արձագանգէք, երբ կը զգաք Անոր ներկայութիւնը:
4. Իսրայէլցիները ունէին քահանայապետ, անոնք հռչակեցին, որ Եահուէիը ազատեց իրենց Եգիպտոսէն, եւ երկրպագեցին Եահուէիին ողջակէզներով եւ զոհերով՝ ամբողջ այդ ընթացքին կենդրոնանալով ոսկէ հորթին վրայ, քանի որ ժողովուրդի նպատակը իրենց ցանկութիւնները կատարելն էր: Եթէ Իսրայէլը հռչակեց այս ամէնը՝ օգտագործելով ճիշդ անուն, բայց, միեւնոյնն է, ունենալով կեղծ եւ գարշելի երկրպագութիւն, հնարապօր է, որ այսօրուան եկեղեցին կ'ընէ նոյնը: Ինչպէ՞ս աստիկա կրնար տեղի ունենալ:
5. Իսրայէլը կը հնազանդէր Աստուծոյ պատուիրաններէն մէկ քանին, բայց կ'անտեսէր միւսները: Ամբողջ աշխարհին մէջ գտնուող եկեղեցիները կ'ընեն նոյնը. անոնք կ'ընտրեն որոշ սուրբգրային հատուածներ եւ կ'անտեսեն այլ հատուածներ, որոնք կոչ կ'ընեն իրենց սուրբ կեանք վարել եւ բոլորովին նուիրուիլ Աստուծոյ: Ինչպէ՞ս գիտնալ, որ մենք կ'երկրպագենք ճշմարիտ Յիսուսին, ոչ թէ՛ կեղծուած Յիսուսի:

Պատ 6. Սկզբնակէտը

Գլուխներ 19-21-ի հիման վրայ

Ինչպէ՞ս Իսրայէլի մէջ յառաջացաւ կեղծուած *Եահուէիի* մասին գաղափարը, եւ ինչպէ՞ս կեղծուած Յիսուսին մասին գաղափարը կը յառաջանայ եկեղեցիին մէջ: Երկու պարագային ալ պատճառը հետեւեալն է. մարդոց սրտերը կը խստանան, քանի որ չկայ ճշմարիտ ապաշխարութիւն:

1. Այս դասը հանգամանալից կերպով կ'անդրադառնայ ապաշխարութեան՝ ատոր անհրաժեշտութեան, ատոր դերին Աւետարա-

- նին եւ ատոր իրական նշանակութեան: Որքանո՞վ այս տեսակէտը կը տարբերի այն բանէն, ինչ որ ձեզի նախապէս սորվեցուցած էին ապաշխարութեան մասին: Արդեօ՞ք այն կը փոխէ ձեր պատկերացումը Աւետարանի մասին: Եթէ այո, ինչպէ՞ս:
2. Բոլոր Աւետարանները կը սկսին Յովհաննէս Մկրտիչին մասին պատմութեամբ, որ կը քարոզէր ապաշխարութիւն մեղքերէն: Ասիկա կը նշանակէ, որ Յիսուսի Աւետարանը մշտապէս կը սկսի ապաշխարութենէն: Ի՞նչ կը մտածէք այս պնդումին մասին: Ինչո՞ւ ապաշխարութիւնը այդքան կարեւոր է Աւետարանին համար:
 3. Գոյութիւն չունի ճշմարիտ հաւատք Յիսուս Քրիստոսի հանդէպ՝ առանց ապաշխարելու գիտակցաբար զործուող մեղքերէն: Եթէ գիտակցաբար կը մեղանչենք եւ կը շարունակենք դաւանիլ, որ քրիստոնէայ ենք, մենք խաբուած ենք: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստուած այդքան շատ կը մտահոգուի մեր կենսառճով:
 4. Յիշեցէ՛ք պատմութիւնը Ճասթինի եւ Անժելայի մասին: Անժելայն նոյնիսկ գաղափար չունէր, որ ամուսնանալէն յետոյ պէտք է ձգէր իր զուգընկերները: Յիսուսը չճանչցող մարդիկ ո՞ր կէ կ'իմանան, որ պէտք է ապաշխարեն, եթէ չըսենք անոնց: Ի՞նչ կրնար տեղի ունենալ մեզի հետ, եթէ մենք ըսենք մարդոց, որ անոնք պէտք է դադրին մեղանչելէ: Ինչո՞ւ կարեւոր է հաշուել ամբողջ Աւետարանը քարոզելու գինը:
 5. Մենք կ'որոշուինք մեր վարքով, ոչ թէ մտադրութիւններով: Ապաշխարութիւնը կը յայտնէ Աւետարանի զօրութիւնը՝ այն, որ Աւետարանը կրնար լիովին վերափոխել մեզ: Հաշուի առնելով այս փաստը՝ մենք կրնա՞նք ըսել, որ ապաշխարութիւնը դրական եւ բարի է: Ձեր բառերով բացատրեցէ՛ք այն գաղափարը, որ Աստուծոյ կողմէն ապաշխարութեան պահանջքը իրականութեան մէջ Անոր ողորմութիւնն է մեր հանդէպ:

Դաս 7. Ճշմարտութիւն, հանդուրժողականութիւն եւ սէր

Գլուխներ 22-24-ի հիման վրայ

1. Յուդան կը կամենար գրել մեր զարմանալի փրկութեան կամ հաճելի բաներու մասին, բայց հարկադրուած էր զգուշացնել այն մարդոց մասին, որոնք կը սորվեցնէին, որ Աստուծոյ շնորհքը

թոյլ կու տայ մեղանչել: Պատահա՞ծ է, որ թոյլ տաք ձեզի անտեսել Աստուծոյ զգուշացումները եւ խօսիք միայն Աստուծոյ խօսքի հաճելի կողմերու մասին: Ինչո՞ւ կարելոր է, որ պահէք Աստուծոյ խօսքի զգուշացումները ձեր կեանքին եւ խօսքին մէջ:

2. Եկեղեցին հանդուրժողական դարձած է մեղքի հանդէպ, քանի որ մենք թիւր պատկերացում ունինք այն մասին, թէ ինչ է ճշմարիտ սէրը: Ճշմարիտ սէրը իր մէջ պէտք է կրէ ճշմարտութիւն, իսկ ճշմարտութիւնը մշտապէս յաւիտենական հեռանկար ունի: Ի՞նչ կերպով յաւիտենական հեռանկար ունենալը կը փոխէ ձեր առաջնահերթութիւնները:
3. ԶԱստուած սիրելը կը նշանակէ հնազանդիլ Անոր պատուիրաններուն: Ահա թէ որն է տարբերութիւնը քրիստոնէական սիրոյ եւ այս աշխարհի սիրոյ միջեւ: Եթէ հաշուի չառնենք Աստուծոյ պատուիրանները, կա՞ն Արդեօք տարբերութիւններ Աստուծոյ սիրոյ եւ այս աշխարհի սիրոյ միջեւ:
4. Սէրը՝ առանց Աստուծոյ ճշմարտութեան, ճշմարիտ սէր չէ. այն կեղծիք է: Մեր մշակոյթը կը հեռանայ այս սէրէն, եւ ճիշդ ասիկա է պատճառը, որ եկեղեցին կ'ընտրէ կեղծուած Յիսուսը: Արդեօ՞ք դուք կրնաք խօսիլ ճշմարտութիւնը սիրով: Ձեր կարծիքով, ինչո՞ւ շատերը յարմարաւէտ չեն զգար իրենք զիրենք՝ առերեսուելով ճշմարտութեան:

Ղա 8. Կործանել քրիպտոնաքարը

Գլուխներ 25-28-ի հիման վրայ

1. Որոշ հաւատացեալներ կ'անտեսեն մեղքը, քանի որ չեն գիտեր, որ իրենց գործած մեղքը ցաւ կը պատճառէ Աստուծոյ սրտին: Միւսները կը հաւատան այն սուտին, որ մենք բնութեամբ մեղաւորներ ենք, եւ որ Յիսուսի արեան զօրութիւնը բաւական է, որ ազատէ մեզ մեղքի պատիժէն, բայց ոչ՝ մեղքի ստրկութենէն: Այս հաւատացեալները կրած են քրիպտոնաքարի՝ գիտակցուած եւ շարունակական մեղքի ազդեցութիւնը: Արդեօ՞ք այս համոզմունքներէն որեւէ մէկը ազդեցութիւն ձգած է ձեր կեանքին մէջ: Ղուք տեսա՞ծ էք ատոնց ազդեցութիւնը այլ մարդոց կեանքին մէջ, որոնք կը դաւանին են, որ քրիստոնէայ են:
2. Հաւատացեալներու երրորդ խումբը ճշմարիտ քրիստոնէաներ են, որոնք զիտակցաբար կը մեղանչեն, սակայն անոնց համար

ասիկա մշտական պայքար է: Անոնք կ'ուզեն ազատիլ այդ վիճակէն, սակայն տակաւին չեն յայտնաբերած Աստուծոյ Խօսքին մէջ, թէ ինչպէս հաւատքով գործադրեն իրենց ազատութիւնը մեղքէն: Այն ամօթը, որ անոնք կը զգան մեղքի պատճառով, կը պահէ անոնց այդ մեղքի մէջ: Այս դասի մէջ քննարկուող ո՞ր ճշմարտութիւններով դուք պիտի բաժնեկցիք այն հաւատացեալին հետ, որ նման վիճակի մէջ է:

3. Այս դասին մէջ ես կը վկայեմ, թէ ինչպէս Աստուած ազատեց զիս կիրքէն եւ պոռնոկրաֆիայէն: Ի՞նչը ամէնէն շատ ոգեշնչեց ձեզ այս վկայութեան մէջ եւ ինչո՞ւ: Ի՞նչը մարտահրաւէր նետեց ձեզի եւ ինչո՞ւ:
4. Ազատութիւնը մեղքէն՝ կը բխի Աստուծոյ ուզած կերպով տրտմութենէն, ոչ թէ՝ այս աշխարհի տրտմութենէն: Աստուծոյ ուզած կերպով տրտմութիւնը կը գիտակցի այն, որ մեր մեղքը ցաւ կը պատճառէ Աստուծոյ, իսկ այս աշխարհի տրտմութիւնը միայն մտահոգուած է, թէ ինչպէս մեր մեղքը պիտի ազդէ մեր կեանքին եւ ապագային վրայ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստուած մեղքէն ազատելու շնորհք կու տայ միայն մէկ տեսակի տրտմութեան պարագային, եւ ոչ՝ միւսի: Ինչպէ՞ս կրնաք տարբերել տրտմութեան այս երկու տեսակները ձեր կեանքին մէջ:
5. Պատմութիւնները սուփըրհերոսներու մասին կը բորբոքեն մեր երեւակայութիւնը, քանի որ ատոնք կը հպին այն փափաքին, որը կայ ամէն մարդու սրտին մէջ: Առաջին եկեղեցւոյ հաւատացեալները իրենց օրերու սուփըրհերոսներն էին: Ինչպէ՞ս մենք կրնանք դառնալ մեր օրերու սուփըրհերոսները: Ի՞նչ ձեւով ասիկա պիտի փոխէ այս աշխարհի կարծիքը Աստուծոյ մասին:
6. Աստուած պատերազմող է, եւ մենք ստեղծուած ենք՝ ըլլալու Անոր պէս: Յայտնութիւն գիրքի բոլոր եօթը եկեղեցիներուն Յիսուս յաղթելու կոչ ըրաւ, ինչ որ կը նշանակէ, որ մենք կանչուած ենք յաղթելու համար, եւ որ կայ թշնամի, որուն պէտք է պարտութեան մատնենք: Աստուած կոչ կ'ընէ ձեզի յաղթող ըլլալ: Մտորեցէ՛ք այս գիրքի ամբողջական ուղերձին մասին: Կրնա՞ք ըսել, որ այս գիրքը փոխեց ձեր պատկերացումը այն մասին, թէ ինչը դուք պէտք է յաղթէք այս կեանքին մէջ: Ի՞նչ ձեւով ասիկա փոխեց ձեր տեսակէտը այլ հաւատացեալներու, ամբողջ եկեղեցիին մէջ եւ ձեր վերաբերեալ:

Յաւելուած

ՓՐԿՈՒԹԻՒՆ ԲՈՒՆՈՒՄ ՀԱՄԱՐ

«Վասնզի, եթէ քու բերանովդ Յիսուսը Տէր խոստովանիս ու սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած Զինք մեռելներէն յարուցանեց՝ պիտի փրկուիս. (Վասնզի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու համար ու բերնով կը խոստովանի փրկուելու համար:

Հռովմայեցիս 10.9,10

Աստուած կը ցանկայ, որ դուք լիարժէք կեանք ունենաք: Ան ի սրտէ մտահոգուած է ձեզմով եւ կը ցանկայ, որ կատարէք Իր ծրագիրը ձեր կեանքին համար: Այնուամենայնիւ, կայ միայն մէկ ճանապարհ դէպի ձեր նախասահմանութիւնը. դուք պէտք է ընդունիք փրկութիւնը Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսի միջոցով:

Յիսուսի մահուան եւ յարութեան շնորհիւ Աստուած ճանապարհ պատրաստեց, որպէսզի դուք մուտք գործէք Իր Թագաւորութեան մէջ՝ որպէս Իր սիրելի որդի կամ դուստր: Յիսուսի գոհը խաչին վրայ՝ ծրիաբար պարզեւած է ձեզի յաւիտենական եւ առատ կեանք: Փրկութիւնը Աստուծոյ պարգեւն է ձեզի. դուք չէք կրնար որեւէ բան ընել, որ շահիք փրկութիւնը կամ արժանանաք ատոր:

Այս թանկ պարգեւը ստանալու համար, առաջին հերթին պէտք է խոստովանիք ձեր Արարիչէն անկախ ապրելու մեղքը, քանի որ ասիկա ձեր գործած բոլոր մեղքերու արմատն է: Ապաշխարութիւնը փրկութիւն ստանալու խիստ կարեւոր պայմանն է: Պետրոսը պարզօրէն նշեց ասիկա Գործք առաքելոց գիրքին մէջ այն օրը, երբ հինգ հազար մարդ փրկութիւն ստացաւ. «Ուրեմն, զոջացէ՛ք եւ ե՛տ դարձէք, որ ձեր մեղքե-

րը ջնջուին» (Գործք 3.19): Աստուածաշունչը կը յայտնէ, որ մեզմէ ամէն մէկը ծնած է որպէս մեղքի ստրուկ: Այս ստրկութիւնը սկիզբ առած է Ադամի մեղքէն, որ առաջինը գիտակցաբար անհնազանդ եղաւ Աստուծոյ: Ապաշխարելով՝ դուք որոշում կը կայացնէք այլեւս չհնազանդիլ ձեր անձին եւ սատանային, որ սուտի հայրն է, այլ հնազանդիլ ձեր նոր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին, Որ տուած է Իր կեանքը ձեզի համար:

Դուք պէտք է յանձնէք Յիսուսին ձեր կեանքի իշխանութիւնը: Յիսուսին որպէս Տէր ընդունիլը կը նշանակէ, որ դուք թոյլ կու տաք Անոր դեկավարել ձեր ամբողջ կեանքը (հոգին, անձը եւ մարմինը) եւ այն ամէնը, ինչ որ կը պատկանի ձեզի. Ան բացարձակ իշխանութիւն կը ստանայ ձեր կեանքին մէջ: Այն պահուն, երբ ընէք ասիկա, Աստուած պիտի ազատէ ձեզ խաւարէն եւ պիտի տեղափոխէ Իր Թագաւորութեան լոյսին եւ փառքին մէջ: Պարզ ըսելու համար՝ դուք անցում պիտի կատարէք խաւարէն դէպի լոյսը եւ պիտի դառնաք Անոր զաւակը:

Եթէ կ'ուզէք փրկութիւն ստանալ Յիսուսի միջոցով, կրկնեցէ՛ք այս աղօթքը.


«Երկնային Աստուած, ես կը գիտակցիմ, որ մեղաւոր եմ եւ իյնկած եմ Քու արդարութեան չափանիշէն: Ես արժանի եմ յաւիտեան դատապարտուելու իմ մեղքերու համար: Շնորհակալութիւն, որ չես ձգեր զիս այս վիճակին մէջ, քանի որ կը հաւատամ, որ Դուն ուղարկեցիր Յիսուս Քրիստոսը՝ Քու միածին Որդին, Որ ծնաւ Կոյս Մարիամէն, որպէսզի մահանար ինձի համար եւ կրէր իմ դատավճիռը խաչին վրայ: Ես կը հաւատամ, որ Ան յարութիւն առաւ երրորդ օրը եւ այժմ նստած է Քու աջ կողմը՝ որպէս իմ Տէր եւ Փրկիչ: Այսօր ես կ'ապաշխարեմ Քեզմէ անկախ ըլլալէն եւ յաւիտեան կը յանձնեմ իմ կեանքը Յիսուսի իշխանութեան:

Յիսուս, ես կը դաւանիմ, որ Դուն իմ Տէրն ու Փրկիչն ես: Եկո՛ւր իմ կեանքի մէջ Քու Հոգիով եւ դարձո՛ւր Ձիս Աստուծոյ զաւակ: Ես կ'ուրանամ խաւարի գործերը, որոնց ժամանակ մը կը յարէի, եւ այսօրունէ այլեւս չեմ ապրիր ինձի համար: Քու շնորհքով ես կ'ապրում Քեզի համար, քանի որ Դուն տուած ես Քու կեանքը ինձի համար, որպէսզի ես յաւիտեան ապրիմ:

Շնորհակալութիւն, Տէ՛ր: Այժմ իմ կեանքը լիովին Քու ձեռքերուն մէջ է, եւ համաձայն Քու Խօսքին՝ ես երբեք չեմ ամչնար, Յիսուսի անունով: Ամէ՛ն»:

Բարի գալու՛ստ Աստուծոյ ընտանիք: Ես կը խրախուսեմ ձեզ պատմելու այս հրաշալի լուրը մէկ ուրիշ հաւատացեալի: Նոյնպէս կարելոր է, որ դուք միանաք որեւէ տեղական եկեղեցւոյ մէջ, որ կը հաւատայ Աստուածաշունչին, եւ հաղորդակցեցէք այլ մարդոց հետ, որոնք պիտի խրախուսեն ձեզ հաւատքի մէջ:

Դուք հազիւ նոր ոտք դրիք ամենազարմանալի ճանապարհին: Կը մաղթեմ ձեզի առատ յայտնութիւններ, շնորհք եւ ընկերութիւն Աստուծոյ հետ ձեր կեանքին մէջ:



«Մեսինձըր ինթերնեշնլ»
 ծառայութեան նպատակն է՝ օգնել
 անհատներուն, ընտանիքներուն,
 եկեղեցիներուն եւ ազգերուն
 գիտակցելու եւ վերապրելու Աստուծոյ
 Խօսքի վերափոխող զօրութիւնը:

Շնորհիւ այս գիտակցման՝
 պիտի փոխուին թէ՛ մարդիկ, թէ՛
 ամբողջական բնակավայրեր, եւ
 հասարակութիւնը գործուն կերպով
 պիտի պայքարի այս աշխարհը
 կեղեքող անարդարութեան դէմ:

CloudLibrary.org կայքը առցանց
 հարթակ է, որ առիթ կու տայ ամբողջ
 աշխարհի տարածքին գտնուող
 հովիւներուն եւ առաջնորդներուն իրենց
 լեզուներով անվճար թուայնացուած
 ուսումնական նիւթեր ստանալ:

Այցելեցէ՛ք CloudLibrary.org կայքը եւ
 օգտուեցէ՛ք Ճոն եւ Լիզա Պիվիրներու
 շարք մը այլ նիւթերէն, աւելի քան 90
 լեզուներով:


**Ելեկտրոնային գիրքեր, օտիոյ եւ
 վիտիոյ ուսուցումներ, օտիոյ գիրքեր,
 Աստուածաշունչեր...**

**Կ'ուզէք աւելի՞ն:
 Տեսաձրեցէ՛ք պատկերակը.**



**CLOUD
 LIBRARY**





Կեանք, որ նշանակութիւն ունի այսօր եւ յաւիտեան

Օր մը դուք Աստուծոյ առջեւ պիտի կանգնիք եւ ձեր կեանքին համար հաշիւ պիտի տաք:

Դուք գիտե՞ք, որ այս կեանքին մէջ ձեր գործերը պիտի որոշեն, թէ դուք ինչպէ՛ս պիտի անցընէք յաւիտեանութիւնը:

Աստուած կ'ուզէ, որ բացայայտէք ձեր կոչումը. Ան չի փորձեր պահել այն ձեզմէ: Իրականութեան մէջ, Ան կը փափաքի, որ ձեր կեանքը նպատակաւորաբար եւ իմաստալից ըլլայ, իսկ աստիկա տեղի կ'ունենայ, երբ դուք գիտնաք, թէ ինչո՛ւ եկած էք այս աշխարհ:

Կեանքը մեր վերջին շունչէն յետոյ սոսկ հանգրուան մը չէ, այլ՝ շատ աւելին: Մի՛ սպասէք այնքան, որ արդէն ուշ ըլլայ: Բացայայտեցէ՛ք այն ընթացքը, որ Աստուած որոշած է ձեզի համար, եւ թող ձեր կեանքը նշանակութիւն ունենայ այսօր եւ յաւիտեան:

Այս գիրքը, նաեւ ճոճ եւ Լիզա Պիվիրներու բազմաթիւ այլ ուսմունքներ, կրնաք ներբեռնել՝ այցելելով «Մեսիմճըր ինթերնեշնլ» ծառայութեան անվճար համացանցային կայքը.



CloudLibrary.org

Դուք կրնաք դիտել եւ ներբեռնել լրացուցիչ միւլթիմեդիա բազմաթիւ այլ լեզուներով YouTube.com, Youku.com եւ միւլթիմեդիա տարածող այլ կայքերէն:

ԻՆՉՊԷՍ ՍՈՒՓՈՐՄԵՆՏԱՆ, որ կրնայ ցատկել որեւէ արգելքի վրայէն եւ կրնայ յաղթել բոլոր թշնամիներուն՝ Քրիստոսի հետեւորդները նոյնպէս կեանքի դժուարութիւնները յաղթահարելու գերբնական կարողութիւն ունին: Այնուամենայնիւ, ե՛ւ Սուփըրհերոսը, ե՛ւ մենք խնդիր մը ունինք. գոյութիւն ունի քրիստոնաքար, որ կը խլէ մեր ուժերը:

Անշուշտ, Սուփըրհերոսը եւ քրիստոնաքարը յօրինուած են: Բայց հոգեւոր քրիստոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը կը պատասխանէ այն հարցումին, թէ ինչո՛ւ մեզմէ շատերը չեն կրնար վերապրիլ այն աստուածային զօրութիւնը, որ ակնյայտօրէն կը դրսեւորուէր առաջին դարուն ապրող քրիստոնէաներու կեանքին մէջ:

,Կործանել քրիստոնաքարը գիրքին մէջ ճոն Պիվիրը ցոյց կու տայ, թէ ի՛նչ է քրիստոնաքարը, ինչպիսի՛ սպառնալիք կը ներկայացնէ այն մեր համայնքներուն մէջ, եւ ինչպէ՛ս կարելի է ազատիլ ատոր կապանքներէն:



ճոն Պիվիրը եւ անոր կիներ՝ Լիզան, «Մեսինճըր Ինթերնեշընլ» ծառայութեան հիմնադիրներն են: Ճոնը քարոզիչ է, նաեւ՝ հանրաճանաչ գրող: Առանց փոխգիշման՝ ան համարձակօրէն եւ ջերմեռանդօրէն կը քարոզէ ճշմարտութիւնը: Ան կ'ուզէ սատարել տեղական եկեղեցիներուն եւ ապահովել առաջնորդներուն քրիստոնէական միւթերով՝ անկախ անոնց բնակութեան վայրէն, լեզուէն կամ միջակայ վիճակէն: Մինչեւ օրս անոր միւթերը թարգմանուած են անլի քան 90 լեզուներով, եւ միլիոնաւոր օրինակներով բաժնուած են ամբողջ աշխարհի տարածքին գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն:



Ներբեռնեցէ՛ք այս եւ այլ
միւթեր հետեւեալ կայքէն.
CloudLibrary.org



Այս գիրքը նուէր է հեղինակին կողմէն
եւ վաճառքի ենթակայ չէ:

Կը վախճաքը անի՛ն:
Տեսաձեռք քառակրկանը:

